17428

Իմ թանկագին հարգելի
Կարապետին Աւրոմեան(?)
Նուիրում եմ այս գիրը
որպէս յիշատակ յաւիտենական:

Ձեր անկեղծութեամբ(?) հայրապետերորդի(?) Երէցեանց:

ԹԻՖԼԻՍ 1903

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

№118

**ՅՈՒՂԱԲԵՐ**

**ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ**

Ի 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

# ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ

# ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅՐ ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՓԱՓԱԶԵԱՆՑ
Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ ԲԱՐԵՑԻՇԱՏԱԿ ՏԵԱՌՆ ՄԽԻԹԱՐԱՅ
ՄԵԾԻ ԱԲԲԱՅԻ

ՆՊԱՍՏԻՒՔ ԲԱՐԵԽՆԴԻՐ ԱԶՆՈՒԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՈՒՍՈՒՓԵԱՆՑ ԶՄԻՒՌՆԱՑՒՈՅ ԲՆԱԿԵԼՈՅ Ի ԹՐԵՍՏ

ՀՐԱՄԱՆԱՒ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏՆ. ՏՆ. ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՈՄԱԼԵԱՆՑ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՅԻ



Ի ՎԷՆԷՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄՀԳ 1824

Որպէս լինի նաւորդին,
Եւ զանազան վտանգաց
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
Եւ [illegible] վտանգեալ.
[illegible]
[illegible]:

Թուին. 1884. Մարտի.
[illegible] Յարութիւնեան [illegible]:

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի կենցաղօգուտ երկասիրութիւնս մարդկային ընկերութեան՝ պանծալի և արժանայարգ պատուոյ վիճակեալ գործառնութիւն վաճառականութեան՝ թէպէտև յոգունս ունի իւր մատղիրս և անձանձրոյթ հետամուտս իբր աղնուականի և արդասաւոր իրողութեան, սակայն կարի սակաւուց ումանց է ժամանել 'ի փափաքելին նպատակ կարծեցեալ արդասեաց. առ որոյ ստացումն՝ ոչ միայն ջանից և քրտնաջան աշխատութեանց պէտք են, այլև բազմամեայ մտադրութեան յուսումն և 'ի վարժութիւն կարևորացն առ նոյն երկասիրութիւն: Որ որչափ օգտակար՝ դիւրին և ախորժական թուի գործս, այնչափ առաւել դժուարին է գործադրութիւնն, և երկբայելի կատարածն. սորին սակս տեսանեմք՝ զի առ հասարակ յամենայն ազգս և 'ի քաղաքս չէ՛ք յոլովագոյն քան զվաճառականս, և չէ՛ք քան զնոսին առաւել հոգածս 'ի սրտի, և վշտակիրս 'ի մարմնի:

Մարդկային բնաւորութեան կարի քաղցր և ցանկալի է շահն, ըստ որում վկայեցին իմաստունք. և ահա այն իսկ է որ յորդորէ զմարդիկ հետամուտս լինել տուրևառութեան. սակայն չէ՛ ամենեցուն գիտելն և գտանել զհետս ցանկացեալ շահուն՝ յորմէ յորդորին լինել 'ի խնդիր: Զէ՛ բաւական ճոխութիւնն ընչս և 'ի դրամս, այլ պէտք և ճարտարահնար խելամտութիւն՝ եթէ զիա՛րդ վարելի իցեն դրամք և ստացուածք, 'ի շահել նոքօք և մնալ անվնաս: Օգուտք տուրևառութեանց որչափ առաւել բազմաբեղունք կարծին առ 'ի մարդկանէ, այնչափ առաւել բազմավտանգք են և անստոյգք. արդ զօրօրինակ շահք յորդորեն զմարդիկ 'ի մտադրութիւն գործոյս, նոյնպէս և վտանգք կորստեան ունին առնել զնոսին զգուշաւորս, զի մի՛ անխորհուրդ ձեռնամուխ լինիցին 'ի գործ. այլ բազում զգուշութեամբ և արթուն մտօք կանխաքննին լինելով ոչ միայն առնելի գործոյն, այլև հնարաւոր հետևութեանց՝ որպէս և անակնկալ պատահարաց ձեռնարկելի տուրևառութեանն, որով մարթասցին պտուղս քաղել յաշխատութենէն, և նախապատրաստ գտանիլ դարմանոյ անկարծելի վնասուց:

'Ի նոյն զգուշաւոր արթնութիւն յորդորէ և ազնուականութիւն վի-

ճակի վաճառականութեան, որ մի է 'ի փառաւոր գործառնութեանց անտի քաղաքական կենաց, զորոյ զյարգ պատուականութեանն գիտելով չափ թագաւորեալ ազանց՝ անդստին 'ի սկզբանէ և այսր մեծապէս խնամ կալան պայծառութեան սորա [1] ձեռնտու լինելով և խնամակալ յաջողութեան և ապահովութեան կենցաղօգուտ իրողութեանս, յորմէ ճոխութիւնք և փառք պարծանաց թագաւորութեան։ Զի վաճառականութեան է բարգաւաճ ընծայել և առաւելուլ զոյժ և զստացուածս տէրութեանց, 'ի ժողովուրդս նոցա իբր 'ի գանձատունս ամբարելով զառատութիւն ընչից, որոյ վայելք և ժառանգութիւն՝ հիմն է և նախապատճառ հանգստեան կենաց, և խաղաղութեան քաղաքի։ Վասն որոյ վաճառականութիւնն առիթ է շինութեան և բարեկարգութեան քաղաքացեաց· հրահանգութիւն մարդկային բարուց· ուսումն ընտանութեան և քաղցրահամբոյր կենակցութեան ընդ ամենեսին· յորդոր նախանձու 'ի ստացումն կարևոր ներվարժութեանց։ Նորանոր ազնուատոհմութեանց ծնող և հիմնարկու· նսեմացեալ ճարտարամտութեանց արտափայլիչ, և արդիւնագործ կարողութեանց հոգւոյն 'ի հանդէս վերբերիչ։ Այսպիսի և այսքան բարեաց թէպէտ առիթ և գործունեայ է արուեստ վաճառականութեան, սակայն չպակասին և ստգտանք՝ որք 'ի կարծիս պարսաւադէտ մտաց թերևս անգոսնելի երևեցուսցեն զգործս տուրևառութեան· իբր թելադիր ագահութեան համարելով զայն, կամ թէ առիթ շռայլութեան և ունայնասիրութեան մարդկան· բայց չի՛ք և ոչ մի արուեստ պիտանի 'ի կենցաղումս, զոր թերութիւնք ախտաւոր կենաց չառնուցուն 'ի կիր 'ի չարաչար պէտս· այլ ո՛չ նոքիմբ պարսաւելի լինին գովելի արդիւնք ճարտարութեան արուեստից· մանաւանդ որոց միանգամ կարի յոյժ պիտանացուք իցեն բազմակարօտ բնութեանս· յորոց սակի համարելի է և գործառնութիւնս տուրևառութեան։

Իսկ թէ զիա՞րդ սկիզբն կալաւ վաճառականութիւն, և որո՞վ կարգաւ 'ի զարգացումն եկն, համառօտ բանիւ կարգեսցուք յառաջիկայդ։

Ապաքէն չի՛ք երկբայութիւն՝ թէ 'ի նախածնունդ գործառնութեանց անտի՝ որք սկիզբն կալան յաշխարհի 'ի կենցաղական ընկերութեան, հնագոյնն և կարևորագոյնն յամենեսին 'ի նոսա՝ տուրևառութիւնն իցէ· իբր գիւտ և հնարք բնութեանս 'ի հայթհայթել զպէտս մարդկային կարօտու-

(1) 'Ի Գաղղիա կրկին հրամանագրովք երկուց համանուն թագաւորացն Լուդովիկոսի երեքտասաներորդի և չորեքտասաներորդի՝ թոյլ տուեալ էր ազնուականաց պարապել 'ի տուրևառութիւն, անկորուստ պահելով և զպատիւ ազնուատոհմութեան. մինչև 'ի քաղաքական և յարքունի գործակալութեան անդ ձեռնհաս լինել և վաճառականութեան։ Նոյնպէս է և յԱնգղիա, ուր զորդիս իշխանաւորաց 'ի տիս մանկութեան տուեալ են վարժել յուսմունս տուրևառութեանց, իբր 'ի գործ ամենայնիւ կարևոր և վայելչական վիճակի նոցա։ Իսկ յԻտալիա բազում իշխանապետք քաղաքաց և գաւառաց միտ դնեն այսմ գործառնութեան, պատճառս առթելով օգտի և ճոխութեան հպատակաց իւրեանց։ Զնոյն է տեսանել և յարևելեան թագաւորսն և 'ի կուսակալս Ասիոյ և Ափրիկէի։

թեան. զոր յետ ժամանակաց առաւելութեամբ ճոխացուցին ընդարձակելով զսահման գործառնութեանն՝ ախորժ վայելից կենաց, նորասիրութիւն, փափաք պերճութեան և համբաւ ընչաւէտութեան, մինչև ածեալ հասուցին յայն սահման և 'ի վիճակ, զոր այսօր է տեսանել ամենայն ուրեք։ Նախնի տուրևառութիւնն՝ հնարեալն 'ի պէտս կարօտութեան կենաց, այն էր՝ զի երկրագործք զարմտիս անդոց և զագարակաց բերեանց մատուցանէին հովուաց, և 'ի նոցանէ փոխանակութեամբ առնուին զարջառս և զոչխարս՝ որպիսի լինի մինչև ցայսօր ժամանակի ընդ ամենայն կողմն աշխարհի, մանաւանդ 'ի հեռաւոր ծագս սահմանայն Ափրիկոյ և Ամերիկոյ. զորս 'ի դէպ է յաւէտ փոխանակութիւն՝ քան վաճառումն և գնոց ստացումն անուանել. զի զոր ունի ոք ընծեռէ այլում, և 'ի նմանէ ընդունի զայն՝ որում ինքն կարօտի. և այս կարգ փոխանակութեան պահեցաւ 'ի նախնի դարս ժամանակաց, յորում մարդիկ առաւելապէս բնական՝ քան քաղաքական օրինօք վարէին։

Իսկ տուրևառութիւնն 'ի գին դրամոց (1) ոսկւոյ և արծաթոյ՝ թէ յորում ժամանակի սկզբնաւորեալ իցէ, չէ յայտ։ Օրինակ դրամոցին տուրևառութեան նախ առաջին գտանեմք 'ի սուրբ գիրս (Ծննդ. իգ.) ուր ըստ պատմելոյ Մովսէսի՝ Աբրահամ նահապետ խորհելով ագարակ ստանալ՝ յորում կամէր թաղել զՍառրա, փոխանակեաց ընդ այնր զչորեքհարիւր սատեր արծաթոյ՝ ըստ սովորական կշռոյ վաճառականաց, հատուցանելով զայն իբր գին արժէից այնր ագարակի։ Արտաքոյ սուրբ գրոց՝ հեթանոս պատմաբանք թէպէտ սկսեալ ասեն յԻտալիա 'ի ժամանակս թագաւորութեան Սատուրնոսի և Յանոսի, սակայն նսեմ և անստոյգ զրոյցք են։

Այս ինչ ևեթ հաւաստի է, զի Եգիպտացիք, Փիւնիկեցիք, և Կարթագինեցիք եղեն առաջինք 'ի սկզբնաւորութիւն վաճառականութեան. և զի երկիր բնակութեան նոցա ծովասահման էր, ձեռնարկին 'ի նաւական ուղևորութիւնս վասն տուրևառութեան ընդ հեռաւոր գաւառաց. յօրինակէ անտի նոցա ուսեալ և յորդորեալ այլոց ազգաց՝ հետամուտ եղեն ծաղկեցուցանել հետզհետէ։ Սոյին նախանձաւոր գտաւ և Սողոմոն արքայ, որոյ միաբանեալ ընդ Քիրամայ թագաւորին Տիւրոսի՝ արար նաւս, և ամ ըստ ամէ առաքէր զնոսին 'ի Սոփեր և յԱրաբիա, յորոց բերէին զզանազան վաճառս, զոսկի և զարծաթ. որով անձուկ սահման տէրութեանն Հրէաստանի այնչափ առաւելաւ 'ի ճոխութիւն, մինչև առ շատութեան ոսկւոյ՝ արծաթն յոչինչ համարեալ էր յաւուրս Սողոմոնի. որպէս վկայեն գիրք սուրբք. (Գ. Թագ. Ժ. 21։)

(1) Նախնի դրամք սովորաբար մաշկեղէնք՝ փայտաշէնք և երկաթիք էին. ըստ որում և ցարդ իսկ երևի յԱփրիկէ և 'ի Հնդիկս. ուր սովորութիւն է ևս հատորով աղի, կամ խեցեօք ծովային ժժմանց, և նշաճաւոր առնել զտուրևառս, մանաւանդ 'ի վաճառս համեմից։

Առ ժամանակօք Ասիական տէրութեանց՝ նախ քան զելս Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, որպէս և յետ այնր յաւուրս յաջորդաց նորա, գործառնութիւն տուրևառութեան նոյնօրինակ ծաղկեալ կայր 'ի բազում տեղիս՝ ըստ խաղաղութեանն յոր վայելէին ժողովուրդք արքայանիստ քաղաքաց, սակայն պակասեցաւ տևողութիւնն 'ի պատճառս անընդհատ պատերազմաց, որք կարի խոչընդոտն են և խափանարարք այսպիսում գործառնութեան. մինչև զօրացեալ Հռոմայեցւոց՝ բռնացան 'ի վերայ ամենայն թագաւորութեանց, և տիրելով առ հասարակ Եւրոպեան և Ասիական կողմանց՝ վերստին ձեռնարկին բարեզարդութեան սորա, 'ի բազում քաղաքս հաստատելով զընկերութիւնս վաճառականութեան, կանգնելով վաճառատեղիս և ժողովարանս 'ի դաշնադրութիւն տուրևառութեանց. պաշտպան և ձեռնտու լինելով որոց միանգամ յօժարէինն պարապել 'ի կենցաղօգուտ գործառնութիւնս, համարելով զայս առիթ օգտի հասարակաց և պատճառ ճոխութեան հպատակելոց։ Սակայն տեղի ետուն և այն ամենայն բարեկարգութիւնք 'ի պակասել տէրութեան Հռոմայեցւոց՝ և ընդ նոյն փոխանակել ազանց բարբարոսաց, որով անշքացեալ նուազեցաւ վաճառականութիւնն ընդ բազում ամս մինչև ցեօթներորդ դար յետ Ք՛՛ի. յորում ժամանակի 'ի հանդարտիլ աւերած խռովութեանց յարևմուտս, վերստին սկսան ձեռնամուխ լինել վաճառականութեան. որում նախ առաջին մատչիլ եղեն բնակիչք ծովեզերեայ սահմանացն Իտալիոյ՝ Պիզացիք, Փլորենտացիք, Գենուացիք, և առաւել քան զամենեսին Վենետիկեցիք, որոց առ ձեռն ունելով զյաջողութիւն նաւուց և զվարժութիւն ծովային ուղևորութեանց՝ սփռեցան ընդ ամենայն արևելեան նաւահանգիստս, և մանաւանդ յԵգիպտոս. յորոց հաւաքեալ զզանազան վաճառս բազմատեսակ նիւթոց՝ ածէին յԻտալիա, և անտի ցրուէին ընդ ամենայն կողմանս Եւրոպիոյ, զոր և անխափան եդին 'ի գործ իբր ամս չորեքհարիւր, և լցան բազմապատիկ ճոխութեամբ։

Առիթ մեծութեան Իտալացւոց՝ եղև ոչ միայն անխոնջ աշխատասիրութիւն նոցա 'ի բերել զվաճառս, այլև տքնիլն յուսումն համարակալութեան, զոր և 'ի շրջանս չորեքհարիւր ամաց առ սակաւ սակաւ ընծայեցին 'ի լոյս. որով արդի հաշուեմատեանն վաճառականութեան ստացաւ զանուն Իտալական, զի յԻտալիա սկիզըն կալաւ՝ և աճեալ ծաղկեցաւ 'ի կատարեալ ուսումն, առանց որոյ կայր և անպտուղ է վաճառականութիւն։

Յօրինակ անտի Իտալացւոց յորդորեալ և բնակչաց ծովեզերեայ քաղաքացն առ Պալդիկ ծովուն, 'ի վախճան երկոտասաներորդ դարուն սկսան տուրևառս առնել ընդ մերձակայ գաւառս իւրեանց. և զի բազմօրինակ վիշտս և վտանգս կրէին 'ի հինից և յաւազակաց ծովու, վասն որոյ եօթանասուն և երկու քաղաքք միացան 'ի դաշնակցութիւն պաշտպանութեան միմեանց, և

յապահովելով զընթացս ծովային ուղևորութեան՝ ծաղկեցուցին զվաճառականութիւն հիւսիսակողմանցն Եւրոպիոյ մինչև ցվեշտասաներորդ դար։ Դաշնակցութիւն քաղաքացս ցորչափ հաստատուն էր՝ աննենգ և աննախանձ ձեռնտուութեամբ միմեանց՝ ամենայն ճոխութիւն և բազմադիմի հարստութիւն յաջողեալ էր 'ի նոսա. բայց 'ի մտանել գժտութեան, նախանձու և ատելութեան, ոչ ևս տևեցին 'ի միութեան ջանիցն՝ որով առաջինք նոքա զօրացեալ էին։ Յայս թուլութեան և սրտաբեկութեան մասամբ ևեթ առիթ եղև նորագիւտ ուղևորութիւնն 'ի Հնդիկս, զոր յամին 1600, զառաջինն ճանապարհորդեցին Լուսիտանացիք դիմելով 'ի գլուխ Բարեյուսոյ, և անտի ընդ ծովեզերս Ափրիկոյ, Արաբիոյ և արևելեան Հնդկաց. յորոց սկիզբն եառ նոր և ճոխ վաճառականութեան՝ խափանելով զընթացս տուրևառութեան Իտալացւոց և դաշնակցաց Պալդիկ ծովուն, և 'ի նմին վայրկենին իբր հարիւրամեայ ժամանակս։ Այսին նախանձաւոր գտեալ Հոլանդացւոց՝ հնարեցան յինքեանս կորզել զաղբիւրս ճոխութեան Լուսիտանացւոց. վասն որոյ 'ի սկիզբն եօթնևտասներորդ դարուն դիմելով 'ի Հնդիկս տիրեցին բազում կղզեաց և ծովեզերեայ սահմանաց այնր կողման. բայց և նոցա կարի սակաւատև եղև վայելումն, զի Անգղիացիք, Գաղղիացիք, Դանիք և Ամերիկեցիք շարժեալք յօրինակէ անտի Հոլանդացւոց՝ փութացան սփռիլ ընդ ամենայն կողմն Հնդկաց և Ափրիկոյ՝ ստանալով անդ իւրեանց տունս բնակութեան, և պարապելով 'ի շահավաճառութիւն առաւել քան զՀոլանդացիս. սակայն յետնոց ազգացս՝ բաց յԱնգղիացւոց, չեղև գտանել զնոյն յաջողութիւն շահու՝ զոր միանգամ յառաջին ժամանակն գտին Հոլանդացիք։

'Ի յաճախել ծովային ուղևորութեանց յանծանօթ երկիրս, և 'ի գտանել Սպանիացւոց զնոր աշխարհն Ամերիկա, յայտնեցան նոր ամբարք բազմահարուստ վաճառականութեան վասն Եւրոպիոյ, որով նախ առաջին ճոխացան երկոքին ականաւոր քաղաքք Սպանիոյ. այն է՝ Գատիքս, և Սևիլլիա։ Գիւտ նորոյ աշխարհի չեղև երբէք առիթ վնասու նախնի վաճառականութեան Եւրոպիոյ, զոր վարէին յարևելեան Հնդիկս. այլ մանաւանդ յաւել զօգուտ տուրևառութեան, յաճախելով զնիւթ հարստութեան նորանոր մթերից. յորոց յորդորեցան բազումք ընդ ծով և ընդ ցամաք պարապել վաճառաշահութեան այնոցիկ կողմանց. և զի կարի գժուարին էր յայնժամ նաւարկութիւնն 'ի Պալդիկ ծովէ անտի 'ի Միջերկրականն, հարաւային և հիւսիսարնակ վաճառականք տեսեալ զյարմարութիւն դրից Փլանտրից, զմտաւորութիւն սահմանաց նորա, և զլաւութիւն ձեռագործաց այնր երկրի՝ ուստի ամ ըստ ամէ սովոր էին գնալ և առնուլ զպէտս վաճառացն, միաբան խորհրդով հաստատեցին կանգնել մթերանոցս 'ի Պրուճէս և յԱնվէրսա քաղաքս Փլանտրացւոց. զի վաճառքն բերեալք 'ի հարաւային և 'ի հիւսիսային

կողմանց նորոյ աշխարհի՝ հաւաքեցին 'ի նոսա, և 'ի նոցունց սփռեցին ընդ ամենայն ծագս Եւրոպիոյ և Ասիոյ։ Յետոյ 'ի բաժանիլ սահմանացն Փլանտրիոյ և 'ի հաստատիլ հասարակապետութեանն Հոլանդացւոց, տեսեալ վաճառականաց զխնամս պաշտպանութեան Հոլանդիոյ, զոր ունէր 'ի պայծառութիւն կենցաղօգուտ գործառնութեանս տուրևառութեան, և զպատիւ զոր ցուցանէր առ ճարտարահնար արուեստաւորս, սկսան անդր հաւաքիլ 'ի հեռաւոր աշխարհաց, (որպէս և յաղագս Հայոց բազում ազգ ականաւորք ճոխութեամբ դիմեցին անդր), որով խափանեցաւ վաճառականութիւնն Անվէրսա քաղաքի, և ծաղկեցաւ Հոլանդիա. բայց եղև կարի սակաւատև՝ զի Անգղիացիք դուն գործեալ գերազանցել քան զՀոլանդացիս՝ եթէ ձեռագործօք և եթէ նաւավարութեամբ, և պատրաստութեամբ նաւահանգստից, ընդ ձեռամբ իւրեանց գրաւեցին զաղբերակունս շահու հասարակաց, վասն որոյ այժմեան բազմաճոխ վաճառականութիւնն է 'ի ձեռս նոցա։

## ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳՈՐԾՈՅՍ

Վաճառականութիւնն՝ որպէս յայտ է ամենեցուն, կարէ լինել ընդ ծով և ընդ ցամաք, ընդ մօտաւոր քաղաքս և ընդ հեռաւոր աշխարհս, բազմագումար ստացմամբ և վաճառմամբ գոյից, կամ մանրամասն տուրևառութեամբ 'ի կրպակս։ Որով օրինակաւ և լինիցի, անկ է վաճառականին ուշադրութիւն կարևոր 'ի գործել զամենայնն գիտութեամբ, և ոչ ըստ դիպուածոյ. որով միայն հնար է ըստ կարի հասու լինել գաղտնի սկզբանց օգտի և վնասու տուրևառութեանն զոր առնէ։ Գործառնութիւնս կարօտի տքնութեան, և անխոնջ աշխատասիրութեան 'ի խորհիլ զլինելիսն, 'ի քննել զեղեալսն, 'ի յիշատակել զանցեալսն և 'ի հանճարել զելս դժուարութեանց և զանկարծելի վնասուց և անյաջողութեանց, որք անպակաս են յընթացս այսր գործառնութեան. մինչև 'ի դէպ վարկան ոմանք ընդ հարկաւոր ձիրս վաճառականին յաւելուլ և զհոգի գուշակութեան կամ յառաջատեսութեան. և զի չէ՛ հնար ամենեցուն վիճակիլ այնպիսում ձրից, 'ի լնուլ զթերին այսր կատարելութեան՝ քաջավարժք յարուեստիս հոգացան գտանել հնարս՝ և դարման դիւրացուցիչ գործադրութեան նմին զուսումն հաշուեմատենից, որով թերին մարդկային տկարութեան կատարելագործի, և 'ի ձեռն կանոնաւոր կարգաց համարակալութեան դիւրին լինի զանցեալսն յիշատակել, զառաջիկայ եղեալսն զննել, և ապագայից լինել կանխատես։

Այսմ դարմանոյ ըստ որում կանխեցաք ասել, նախ առաջին խնամակալք եղեն Իտալացի վաճառականք. որոց ընդ երկար ամս վայելեալ 'ի քաղցրահամ

շահաւէտութիւնս վաստակոց բազմահարուստ տուրեւառութեան Եւրոպիոյ, յօժարեցան թողուլ յետնոց շաւիղ անսայթաք, ընդ որ մարթասցին անվտանգ ուղեւորիլ և յառաջադիմել։ Զկարեւորութիւն ուսմանս ծանուցեալ Եւրոպեան ազանց առ հասարակ՝ ոչ միայն մտադիւր ընկալան զայն յԻտալացւոց, այլ և գուն գործեցին լինել հանդիսացուցիչ նմին յիւրաքանչիւր լեզուս՝ զանազան գրոց 'ի լոյս ընծայմամբ. յորոց անձկանօք ուսան, և ցարդ ևս ճըգնին ուսանել բազումք յարեւելեայց, որք միանգամ փափաքին պարապել 'ի նոյն գործառնութիւն։

'Ի սոյն սակի են և մեր ազգայինք, որոց հանճարամիտ բնաւորութիւն կարի յարմարական է 'ի գործս տուրեւառութեան, (որպէս յայտ է յամենայն տեղիս, և վկայեալ յազգաց օտարաց). այլ առ պակասութեան կանոնաց և ուսուցչի կարգաւորեալ հաշուեմատենից, ծանր աշխատութեամբ տքնին ուսանել յօտար լեզուս, և անդէտ գոլով հաշուեբառից հայկական լեզուիս, ստիպին վարել զօտարաձայն հնչմունս ազգացն, յորոց միջի բնակեն. ոմանք զՊարսկականն, և այլք զԻտալականն կամ զԱնգղիականն, վասն որոյ հաշուեմատեանք նոցա համարին տոմսակ խառնակութեան լեզուաց, անիմանալի և անօգուտ՝ որոց կամեսցին առաջնորդիլ նոքօք յուսումն արուեստիս։ Այն և այլք՝ որք ինքնահնար հաշուեմատեանս հանճարեն առանց կարգի և կանոնի՝ զոր նոցա միայնոյ է գիտելի և հասու լինել. գիտութիւն անպէտ և աշխատութիւն անպտուղ, որ չէ ամրացեալ 'ի հաստատուն և 'ի բացայայտ հիմունս կանոնաւոր գիտութեան. որով սակս մնասին քան շահին 'ի տուրեւառութենէ. ըստ որում տեսանեմք անպակաս, զի յազգի մերում ընդ ամենայն տեղիս թէպէտ բազում են վաճառականք, բայց սակաւուց է կենօք չափ վայելել յարդիւնս վաստակոց։

Արդէն արժանի կարեկցութեան վիճակ ազգայնոցս յօժարեցոյց զմեզ լինել ձեռնտու բարեխնդիր ջանից նոցա. և զի այս ուսումն ամենայնիւ նոր է և անծանօթ առ յոլովագոյնսն 'ի նոցանէ, կամեցաք դիւրընտել կարգաւորութեամբ յօրինել զայն, 'ի բազմաթիւ օրինակագրաց անտի Իտալացւոց զպարզն և զկատարեալն ընտրելով մեզ առաջնորդ գործոյս, այն է Նիկողայոս Անաստասեան՝ որ յաւուրս մեր ընծայեաց 'ի լոյս զգործս իւր կրկնահատոր տպագրութեամբ 'ի Վենետիկ, յամին 1803։ Ընդ բացայայտութեան բանիցն ջանացաք յաւելուլ և զնորանոր ծանօթութիւնս իրաց, որոց գիտութիւն թէպէտ առ Եւրոպեան վաճառականս քաջայայտ է և աներկբայելի, սակայն առ ազգս արեւելեան կողմանց տակաւին չև է ծանուցեալ։

Զօրինակ շարագրութեանն ըստ տանելոյ նորութեան ուսմանս՝ միտ եդաք այնպէս յարմարել, զի և անդէտք արուեստիս ինքնաջան ընթերցմամբ մարթասցեն հասու լինել կանոնացն՝ և վարել զնոսին ըստ պէտս։

Զբովանդակութիւն գործոյս բաժանեմք 'ի հինգ հատուածս բանից, յորոց առաջինն է յայտարարութիւն զինչութեան Կրկնագիր ամուսնեալ Հաշուեմատենին. ուր յաւելումք, թէ մասունք նորա, որք են Օրհաշիւ և Մայրհաշիւ մատեանք՝ զիա՞րդ կարգաւորելի իցեն, և որո՞վ օրինակաւ վարելի 'ի գործ:

Երկրորդ մասին գրոյս հանդերձեալ եմք աւանդել զկարգ և զօրինակ քէշտակագրութեան դրամագլխոց, 'ի կամել ուրուք սկզբնաւորել զհաշուեմատեան տուրևառութեան:

Երրորդ մասին ունիմք առաջի առնել զզանազան դիպուածս տուրևառութեան, և բացայայտել զեղանակն 'ի կարգի դնելոյ զնոսին և նշանակելոյ 'ի հաշուեմատենի: Այս մասն գրոյս բովանդակեմք և զայլ ամենայն կարևոր տեղեկութիւնս առ վիճակ տուրևառութեան՝ որք պիտանի են վաճառականաց:

'Ի չորրորդ մասին ունիմք աւանդել զկանոնս և զօրինակ Կշռահաշուի, որ ամբստամբ սովոր է լինել 'ի Հաշուեմատեանս՝ առ 'ի գիտել և ստուգել զօգուտ և զվնաս տուրևառութեան, փակելով զհաշուեմատեանսն և փոխադրելով զնոսին 'ի նոր հաշիւ:

'Ի հինգերորդ մասին յայտ արասցուք՝ թէ զիա՞րդ կարգաւորելի իցեն հաշուեմատեանք, յորժամ հաշուընկեր վաճառականք կամիցին զատանիլ յընկերութենէ միմեանց: Այս յետին մասն գրոյս 'ի դէպ վարկաք յաւելուլ 'ի վերջոյ զյայտարարութիւն իրաց ինչ կարևորաց առ 'ի պէտս դիւրութեան և անսխալ կիրառութեան հաշուեմատենից, որպիսի են գործածութիւնք Օժանդակագրոց, և օրինակ ուղղագրութեան Կրփպակաց 'ի հաշուեմատեանս:

Զլխաւոր ուսումն համարակալութեան թէպէտ մարթ է ուսանել 'ի գրոց աստի, սակայն գտանին և այլ հմտութիւնք կարևորք պարապելոցն 'ի տուրևառութիւն, առ 'ի կարող լինելոյ աչալուրջ մտօք բազմարդիւն գործել զերկս աշխատութեան իւրեանց: Իսկ թէ ո՞յք իցեն և ո՞րպիսիք, համառօտ բանիւ կարգեսցուք յառաջիկայդ:

## ՑՈՒՑԱԿ ՊԻՏԱՆԻ ՈՒՍՄԱՆՑ ՎԱՃԱՌԱԿԱՆԻՆ

ա. Պարտ է վաճառականին լինել քաջավարժ 'ի գրութիւնս զանազան մուրհակաց և դաշնագրութեանց, որք ստէպ հանդիպին 'ի տուրևառս, 'ի գնելն և 'ի վաճառել, 'ի տուչութիւնս և յընդունելութիւնս դրամոց, 'ի գաշինս ապահովագրութեանց, 'ի յղելն և 'ի քարշել զփոխանակագիրս: Մնա-

գամայն լինել յաջողակ 'ի նամակագրութիւն՝ բացայայտ բանիւ և կարգաւոր շարամանութեամբ, առ որ խնդրի վարժութիւն և աչալրջութիւն։

է. Հարկ է լինել հմուտ և հրահանգեալ՝ առանց երկբայութեան ճանաչելոյ զգրամս այլ և այլ տէրութեանց, գիտել զգրոշմն, զչափ ներքին արժէից, և զաճումն գնոյ նոցա յընթացս տուրևառութեան. միանգամայն և զհամեմատութիւն նոցին ընդ միմեանս։

ը. Խնդրի հմտութիւն չափուց և կշռոց, որք վարին 'ի զանազան գաւառս, և թէ զի՞նչ ինչ խտիր և զանազանութիւն իցէ 'ի նոսա, որովք մարթասցի վաճառականն իմանալ զչափն կամ զկշիռս, որք կարեն ծագիլ 'ի նոցանէ 'ի գնելն և 'ի վաճառել։

թ. Կարևոր է քաջ տեղեկութիւն, եթէ զի՞նչ ինչ բերք արմտեաց և ձեռագործք արհեստի գտանիցին յիւրաքանչիւր աշխարհս և 'ի քաղաքս, և թէ ո՞րպիսի իցեն հանգամանք վաճառացն՝ ըստ նիւթոյն, ըստ ազնուութեան և ըստ գործուածոյն, առ 'ի կարող լինելոյ ընտրել զլաւն 'ի գնել անդ և 'ի վաճառել։ Ընդ սմին պարտի գիտել թէ ո՞ր աղխամաղխք յո՞ր քաղաքս առաւել ընտիրք իցեն և շահաւէտք 'ի գնել. զի մի՛ անգիտութեամբ ձեռնամուխ լինիցի 'ի տուրևառութիւն իրաց ինչ՝ յորմէ վնասեսցի։

ժ. 'Ի վաճառականն խնդրի հմտութիւն ամենայն հանդերձանիւթ իրաց, եթէ՛ ասուեք իցեն, եթէ մետաքսեայք, կամ կտաւք, և կամ բամբակեայք։ Նաև ևս թէ ծրարք կամ պուրակք նոցին ո՞րչափ երկայնութիւնս ունիցին, և ո՞րչափ ինչ լայնութիւն։ Նաև թէ քաղաքքն, յորս լինին ձեռակերտքս՝ զի՞նչ կարգս և օրէնս ունիցին 'ի կազմելն և 'ի վաճառել։ Նաև թէ յո՞ր ամիս և 'ի ժամանակս տարւոյն առաւել դիւրագինք իցեն, և ե՞րբ թանկագինք։ Միանգամայն կարևոր է գիտելն թէ ներկք իւրաքանչիւր նիւթոյն զիա՞րդ կազմին և պատրաստին, և թէ ո՞ր 'ի նոցանէ ընտիր է և լաւներկ, և ո՞րն անպիտան և խաբէական։

ի. Պահանջին քաղաքական ծանօթութիւնք պատշաճեալք առ վիճակ տուրևառութեան, թէ զի՞նչ և ո՞րպիսի վաճառաց կարօտութիւն կամ առատութիւն կայցէ յայլ և այլ քաղաքս, և թէ ո՞ր տեսակք իրաց առաւելապէս արգոյք իցեն, և որո՛վ ճանապարհաւ ածելն կամ յուղարկել զվաճառս՝ շահաւորագոյն իցէ։ Ընդ սմին 'ի կարևոր ուսանելեաց անտի է և այն, թէ վաճառք զիա՞րդ ուղևորելի իցեն այլուր, եթէ ընդ ծով եթէ ընդ ցամաք, զի՞նչ զգուշութիւն և դաշն պիտի ընդ բեռնատարս և ընդ նաւապետս, զի վաճառքն ապահով և անվնաս հասցեն 'ի դէմ եղեալ տեղիս։

լ. Ընդ հմտութիւնս վաճառելի և գնելի իրաց օրէն է տեղեակ լինել և արտաքին հանգամանաց նոցա, թէ զիա՞րդ զետեղելիք իցեն 'ի մթերանոցս, ո՞րպիսի զգուշութիւն պիտի յանձնաս պահպանութիւն վաճառաց, որո՛վ կարգաւ և ձևով ծրարելիք և դասաւորելիք իցեն առ միմեանս։

Է. Եթէ վաճառականն յօժարեսցի լինել տէր նաւուց, հարկ է նմա գիտել թէ զի՞նչ ինչ կարեւոր իցէ առ կազմութիւն նաւու եւ 'ի նորոգութիւն, եւ թէ զի՞նչ իցեն արժէք տախտակաց, գերանաց, պարանաց, չուանաց, երկաթեղինաց, կտաւեղինաց, եւ այլոց կարեւորաց 'ի պէտս նաւուն։ Նմինգունայն խնդրի տեղեկութիւն սովորական վարձուց նաւապետին, նաւաստեաց եւ ծառայից, եւ թէ զիա՞րդ լինի դաշնադրութիւն ընդ նոսա։

Ը. Բաց 'ի նախագրելոցդ անկ է վաճառականին քաջահմուտ լինել օրինաց եւ կարգաւորութեան իւրաքանչիւր քաղաքաց, թէ զի՞նչ ինչ վաճառք արգելեալ իցեն 'ի մուծանել անդր, կամ հանել 'ի դուրս. եւ թէ ո՞ր քաղաք կամ տէրութիւն զի՞նչ մաքս առնու 'ի մտիցն եւ յելից անտի վաճառաց, կամ որպիսի կանոնք եւ օրէնք սահմանեալ իցեն սակս սոյին իրաց, եւ հետզհետէ սովոր են կարգադրել. որոց կանխածանօթ գոլով վաճառականին՝ կարասցէ 'ի կարգի դնել զվաճառս իւր, եւ անվնաս մնալով շահել 'ի տուրեւառութենէ։ Յայսոսիկ տեղեկութիւնս իրաց՝ պատշաճի եւ գիտել թէ յո՞ր քաղաքս եւ 'ի նաւահանգիստս նստին հիւպատոսք, զի՞նչ իրաւունք իցեն նոցա, եւ զի՞նչ բաժք վաճառացն՝ որք անկ են նոցին, օրինօք սահմանեալք եւ կամ 'ի սովորութենէ մուծեալք։

Թ. Ընդ նախակարգեալ ուսմունս կարեւորաց՝ պանծալի պսակ եւ վայելչութիւն համարի վաճառականին՝ գիտութիւն զանազան լեզուաց, մանաւանդ ազգացն եւ աշխարհաց, ընդ որս կամիցի առնել զտուրեւառութիւն։ Եւրոպեան վաճառականութիւնն կարօտի չորից լեզուաց. զի Իտալականն եւ Գաղղիականն իբր հասարակաց են եւ գործածականք յարեւելեան եւ յարեւմտեան եզերս միջերկրական ծովու։ Սպանիական կամ Լուսիտանական լեզուն սովորական է առ ծովեզերս Ափրիկոյ, մինչեւ ցգլուխ Բարեյուսոյ եւ ցՀնդիկս։ Նոյնպէս եւ լեզու Գերմանացւոց անխտիր վարի առհասարակ ընդ ամենայն հիւսիսակողմն Եւրոպիոյ։ Իսկ վասն արեւելեան վաճառականութեան պիտանի է լեզու Թուրքաց, Պարսից եւ Արաբացւոց՝ որք սովորականք են յԱսիա եւ յԱրաբիա՝ սկսեալ յԵգիպտոսէ մինչեւ ցՀնդիկս։

'Ի նկատել աչալրջութեան հետաքննին եղելոց յուսումն վաճառականութեան՝ զննի գրոցս յաւելցուք նախ զզանազան օրինակս օրհաշիւ մատենի, եւ ապա զցուցակ համբաւաւոր քաղաքացն, յորս առ մեօք ծաղկեալ է վաճառականութիւն։ Ասասցուք ինչ ինչ եւ յաղագս կշռոց եւ չափուց՝ որպէս եւ արդի դրամոց այլեայլ տէրութեանց Եւրոպիոյ։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՑԱՆԿ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍԱՆՑ ԵՒ ՆԻՒԹՈՑ ԱՌԱՋԻԿԱՅ ՄԱՏԵՆԻՍ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Նախաշաւիղ ուսմանց Հաշուեմատենի ։


Համարակալութիւնն զի՞նչ է, և առ ի՞նչ կրկնագիր անուանի . . . . . . . 1

Մասունք Համարակալութեան ո՞յք իցեն և քանի՞ք . . . . . . . . . . 3

Օրհաշիւ . . . . . . . . . . . 3

Մայրհաշիւ . . . . . . . . . . . 4

Կարգ և կանոնք Օրհաշիւ մատենին . . 4

Կարգ և կանոնք Մայրհաշիւ մատենին . 9

Դրամագումարք Օրհաշուին նշանակեալքն 'ի յիշատակագրութիւնս և յարտաքին գաւազանս՝ պարտին լինել նոյնարժէք . . . . . . . . 23

Ցուցակ և Արժէք դրամոց . . ծդ։ 23

Կանոնք ընդհանրականք 'ի պէտս տուրևառ գիտուածոց . . . . . . . . 24


## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Օտարազան օրինակք հիմնարկութեան հաշուեմատենի ։


Կարգ Հաշուեմատենի՝ յորժամ ոք կամիցի միայնակ պարապիլ 'ի տուրևառութիւն . . . . . . . . . . 27

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս ուրուք՝ որ կամիցի միայնակ պարապել 'ի տուրևառութիւն, ունելով 'ի ձեռին Դրամագլուխս ողջս և Պահանջս Թերայոյս. . . . . . . 33

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս առանձնաւորի ուրուք, որոյ դրամագլուխն նուազ գոլով և անբաւական 'ի տուրևառութիւն, սկիզբն առնէ ձեռնտուութեամբ այլոց . . 34

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս այնոցիկ՝ որք կամիցին ընկերութեամբ պարապիլ 'ի տուրևառութիւն, և դրամագլուխք նոցա չիցեն համաչափք միմեանց. . . . . . . . . . 42

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս այնպիսում ընկերութեան՝ յորում մին 'ի հաշուընկերաց ունելով պահանջս 'ի վերայ ուրուք, դնէ և զայն իբր մասն դրամագլխոյ իւրոյ. ընդունելով զհաւանութիւն ընկերացն՝ զի թէ պահանջքն անկորզելի մնասցեն՝ հասարակաց համարեսցի վնասն . . . 48

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս երկուց հաշուընկերաց՝ յորոց մին դնէ դրամ և վաճառս, իսկ միւսն առանց ինչ դրամագլխոյ լինի գործադիր տուրևառութեան . . . . . . 52

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս այնոցիկ՝ որոց կամելով 'ի տար աշխարհ ձեռնարկել տուրևառութեան, առաքեն զդրամագլուխս իւրեանց յայլեայլ քաղաքս, յորոց մարթասցին յետոյ հասուցանել յայն տեղի, ուրանօր կամիցին հաստատել զընկերութիւն տուրևառութեանն . . . 53

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս այնր, որ 'ի հաշուընկերաց իւրոց առաքեսցի այլուր 'ի տուրևառութիւն սակս օգտի ընկերութեան . . . . 67

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի պէտս ուրուք՝ որ ընդ հեռաւորնակս վաճառականութիւն առնելով, զտուրևառս ընկերութեանն յիւրում քաղաքի ինքըն կատարեսցէ . . . . . . . 70


## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Տեղեկութիւն Դրամոց, և ընդունելութիւնն յամենէ՝ զիարդ նշանակելի իցէ 'ի Հաշուեմատենի ։


Յաղագս Դրամարկեղ . . . . . . 71

Տալ ումեք զպատրաստական դրամ, կամ առաքել զայն առ հեռաւոր ոք . . . . . . . . ճժա. ճժբ։

Առնուլ յումեքէ զպատրաստական դրամ, կամ ընդունել զառաքեալսն 'ի հեռաւորաց. . . . ճժգ. ճժդ։

Յաղագս Սեղանոյ փոխանակութեան. . 76

փոխանցել ումեք դրամ 'ի Սեղանոյ փոխանակութեան . . . . . ճիա։

Ընդունել յումեքէ դրամ 'ի նոյն Սեղանոյ . . . . . . . . . ՃԻԶ։
Յաղագս Գրամաթղթոց Սեղանոյ փոխանակութեան . . . . . . . . . 81
Հաստուցանել ումեք դրամ 'ի ձեռն Գրամաթղթոց . . . . . ՃԻԸ։
Ընդունել յումեքէ դրամ 'ի ձեռն Գրամաթղթոց . . . . . ՃԻԹ։
Յաղագս Ֆիօրին անուանեալ Գրամաթղթոց . . . . . . . . . . . 81
Հաստուցանել ումեք Գրամաթուղթս Ֆիօրինի . . . . . . . ՃԼԱ։
Ընդունել յայլմէ Գրամաթուղթս Ֆիօրինի . . . . . . . . ՃԼԲ։
Յաղագս Փոխանակագրոց . . . . . . 82
Յաղագս գիպուածոց քարշեալ փոխանակագրոց . . . . . . . . . . 84
Առնուլ դրամ յումեքէ 'ի ձեռն քարշեալ փոխանակագրոց . . . ՃԼԸ։
Յաղագս գիպուածոց փոխանակագիրս յղելոյ . . . . . . . . . . 85
Առաքել դրամ առ այլ ոք 'ի ձեռն յղեալ փոխանակագրոց . . ՃԽ։
Յաղագս գիպուածոց վաճառելոյ և փոխանցելոյ զփոխանակագիրս . . . 86
Օրինակ փոխանակագիրս քարշելոյ, յղելոյ, վաճառելոյ և փոխանցելոյ . . 87
Հաստուցանել զդրամ փոխանակագրոց քարշելոց յումեքէ . . . . ՃԽԴ։
Ընդունել յումեքէ զյղեալ փոխանակագիր . . . . . . . . ՃԽԵ։
Ստանալ զփոխանակագիր փոխանցեալ կամ վաճառեալ յումեքէ . . ՃԽԶ։

## ԶԱՆԱԶԱՆ ՕՐԻՆԱԿՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆՑ

Գնուածք վաճառոյ և հատուցումն գնոյ նորին չափոք նշանակելի իցեն 'ի հաշուեմատենի ։

Յաղագս պարզ գնուածոց . . . . . 89
Գնոյ առնուլ զվաճառս պատրաստական դրամովք . . . . . . ՃԾԱ։
Գնոյ առնուլ 'ի ձեռն Սեղանոյ փոխանակութեան . . . . . . ՃԾԲ։
'Ի ձեռն Գրամաթղթոց . . . ՃԾԳ։
'Ի ձեռն փոխանակագրոց . . . ՃԾԴ։
Փոխանակութբ այլոց մթերից . ՃԾԵ։
Հաշուելով 'ի վճարումն կամ 'ի նուազումն պարտեաց վաճառողին. ՃԾԶ։
Գնաչափ հատուցանելոյ յետ ժամանակաց ինչ . . . . . . . . ՃԾԷ։
Յաղագս խառն գնուածոց . . . . . . 91
Գնոյ առնուլ զմթերս վաճառաց՝ հատուցանելով զգինն ըստ մասին պատրաստական դրամ, և զ̄ մասին զարժէս ինչ Սեղանոյ փոխանակութե. ՃԾԹ։
Այլ օրինակ հատուցման՝ ըստ մասին արժէիւք Սեղանոյ փոխանակութեան, ըստ մասին պատրաստական դրամով, և ըստ մասին վճարելի յետ ժամանակաց. . . . . . . . . ՃԿ։
Այլ օրինակ հատուցման ըստ մասին Սեղանով փոխանակութեան, ըստ մասին պատրաստական դրամով, ըստ մասին Գրամաթղթով, ըստ մասին փոխանակութեամբ այլոց մթերից, և ըստ մասին անապայման ժամանակաւ . . . . . . . . . ՃԿԴ։
Այլ օրինակ հատուցման գնոյ առելոց՝ ըստ մասին պատրաստական դրամով, ըստ մասին Սեղանով փոխանակութեան, ըստ մասին Գրամաթղթով, ըստ մասին Փոխանակագրով, ըստ մասին փոխանակութեամբ այլ մթերից, ըստ մասին համարելով 'ի հաշիւ պարտեաց վաճառողին, և զ̄ մասին անապայման ժամանակաւ. ՃԿԵ։

Եթէ գնուածք վաճառոյն լինիցին 'ի հեռաւոր քաղաքաց, չափոք նշանակելի իցեն 'ի հաշուեմատենի ։

Օրինակ տուրևառութեանց որք լինին քաղաքէ 'ի քաղաք . . . . . . . 114
Յաղագս պարզ գնուածոց քաղաքէ 'ի քաղաք . . . . . . . . . . . 114
Յանձնել ումեք զգնուած վաճառաց՝ առաքելով առ նա զպատրաստական դրամ . . . . . . . . ՃՁԵ։
Յղելով զփոխանակագիրս . . ՃՁԶ։
Վճարելով քարշեալ փոխանակագրոյն . . . . . . . . ՃՁԷ։
Ազդելով գործակալին առաքել զքարշեալ փոխանակագիր 'ի վերայ ուրուք յայլում քաղաքի . . . . . ՃՁԸ։
Հաշուելով 'ի պարտիս գործակալին յանձնարարութեանն. . . . ՃՁԹ։
Խոստանալով նմին՝ զի 'ի ժամանել յանձնեալ վաճառացն 'ի ձեռս իւր, յետ ամսոց ինչ հատուսցէ նմա զգինն . . . . . . . . . ՃՂ։
Յաղագս խառն գնուածոց որք լինին քաղաքէ 'ի քաղաք . . . . . . . . 115

Յանձնարարութիւն գնուածոյ վաճառաց՝ առաքելով առ գործակալն ըղպատրաստական դրամս և զփոխանակագիրս, միանգամայն ցուցանելով նմա և զոր՝ յորմէ առցէ զպակասեալ դրամն 'ի պէտս գնուածոյ յանձնարարութեանն . . . . . . . Ճղա։
Այլ օրինակ յանձնարարութե վաճառաց առաքելով առ գործակալն ըղպատրաստական դրամս և զփոխանակագիրս. միանգամայն հրաման տալով առնելոյ զքարշեալ փոխանակագիր առ ինքն և առ այլ ոք. ևս և ազդելով գործակալին՝ զի առցէ դրամս և 'ի վաճառակցէ իւրմէ։ Ընդ սոսին յօժարեսցի և զմասն ինչ 'ի գնոյ անտի վաճառացն համարել 'ի հաշիւ հատուցման պարտեացն, զոր ունիցի գործակալն յանձնարարութեանց։ Իսկ եթէ մնասցեն այլ դրամք հատուցանելիք, վճարեսցէ յետ ժամանելոյ վաճառացն 'ի ձեռս իւր. . . Ճղբ։

Վաճառական Մթերից ըստ որում նշանակելի իցեն 'ի Հաշուեմատեանն։

Յաղագս պարզ վաճառմանց . . . . 104
Վաճառել զմթերս պատրաստ դրամովք. . . . . . . . . Ճհբ։
Արժէիւք սեղանոյ փոխանակութե. Ճհգ։
Դրամաթղթովք. . . . . Ճհգ։
Փոխանակագրովք . . . . Ճհգ։
Փոխանակութե այլոց մթերից . Ճհգ։
Վաճառել զմթերս, զոր գնողն ընդունի 'ի նուազել զպահանջս իւր, կամ 'ի բոլորական վճար պահանջից. Ճհգ։
Վաճառել զմթերս դաշամբ յետ ժամանակաց ընդունելոյ զգինսն . Ճհդ։
Յաղագս խառն վաճառմանց . . . . 105
Վաճառել զմթերս և ընդունել ըզգինն՝ ըստ մասին դրամ պատրաստական, և ըստ մասին արժէք ինչ Սեղանոյ փոխանակութեան . . Ճհէ։
Այլ օրինակ վաճառման և ընդունելոյ զգինսն ըստ մասին դրամով, ըստ մասին Սեղանով փոխանակութե, և ըստ մասին ամսապայման ժամանակաւ. Ճհթ։
Այլ օրինակ վաճառման և ընդունելոյ զգինսն՝ ըստ մասին դրամ, ըստ մասին արժէք ինչ 'ի Սեղանոյ փոխանակութեան, ըստ մասին Դրամաթուղթ, ըստ մասին փոխանակագիր, ըստ մասին այլ մթերք փոխանակաւ, ըստ մասին հաշուելով 'ի վճար պարտեաց՝ և ըստ մասին ժամանակաւ վճարելի. Ճձ։
Յաղագս մթերից յուղարկելոց յայլ քաղաք 'ի վաճառումն . . . . . . 116
Յաղագս մթերից գնոյ առելոց ընդ ձեռն ուրուք 'ի հեռաւոր քաղաքի, և վերըստին վաճառելոց 'ի նմին քաղաքի . . 117

Վաճառական մթերից 'ի յանձնարարութենէ հեռաւորաց՝ ըստ որում նշանակելի 'ի Հաշուեմատեանն։

Օրինակ պարզ վաճառմանց յերկիր հեռաւոր և ընդ ձեռն օտարի . . . 125
Օրինակ վաճառելոյ զմթերս՝ զորս 'ի հեռաւոր քաղաքաց առաքեալ իցեն ումեք . . . . . . . . . Մլ։
Վաճառել պատրաստ դրամովք . Մլա։
Փոխանակութեամբ. . . . . Մլբ։
Ամսապայման ժամանակաւ. . . Մլգ։
Օրինակ խառն վաճառման մթերից՝ յուղարկելոց քաղաքէ 'ի քաղաք . . . 133
Ըստ մասին պատրաստ դրամով և ըստ մասին փոխանակութեամբ. . Մլդ։
Այլ օրինակ վաճառման՝ ըստ մասին դրամով, ըստ մասին փոխանակութեամբ, և ըստ մասին ամսապայման ժամանակաւ հատուցման . . Մլե։

Յուղարկութիւն վաճառաց 'ի հեռաւոր երկիր՝ ըստ յանձնարարութեան այլոց։

Օրինակ յուղարկելոյ վաճառամթերս 'ի յանձնարարութենէ այլոց . . . . 140
Յուղարկել առ հեռաւորնակ ոք զմթերս ինչ վաճառաց՝ որ իցէ սեփական ստացուած առաքողին . . . . . Մխա։
Յուղարկել զզանազան մթերս յանձնարարութեանց՝ զորս ոք գնոյ առեալ իցէ յայլոց. . . . . . . Մխդ։
Յաղագս հաշուի հաղորդակցութեան . . 151
Յուղարկել զմթերս առ հեռաւոր ոք, և լինել բաժանակից շահու առաքեալ մթերիցն . . . . . Մխը. Մծա։
Այլ օրինակ . . . . . . . Մծդ։
Յաղագս շահուց և վնասուց 'ի տուրևառութենէ . . . . . . . . . 117
Յաղագս Ապահովագրութեանց. . . . 119
Ապահովել տալ զվաճառամթերս այլոց . 120
Ապահովիչ լինել վաճառամթերից այլոց . 121

Յաղագս Հասից . . . . . . . . . . 122
Յաղագս Ոսկւոց Տուրևառութեան . . 123
Յաղագս Տնական Ոսկւոց . . . . . . 124
Յաղագս Թոշակաւոր Ոստառայից . . . 124
Յաղագս Վճարից . . . . . . . . 153
Յաղագս Բաշխից . . . . . . . . 153
Յաղագս Շահատուութեանց և Շահա‑ռութեանց . . . . . . . . . 154
Յաղագս Շահարժէից . . . . . . . 155
Բաժանմն գիտելիք յաղագս Դրամից . . 156
Յաղագս Տանց բնակութեան . . . . . 157
Յաղագս Նաւուց . . . . . . . . 158
Յաղագս Հաշուեդարձից. . . . . . 158
Յաղագս փոխադրութեան Հաշուեմա‑սանց. . . . . . . . . . . 158
Յաղագս կանոնաց փակելոյ զՀաշուեմա‑տեանս . . . . . . . . . . 161
Յաղագս Ներքնահաշուի մթերից . . . 162
Յաղագս Հաւաքական Հաշուեմասանց . 162
Յաղագս Մանրհաշիւ դիտողութեանց . 163
Յաղագս Ընթադրական Հաշուեմասանց. 164
Յաղագս Արկնարժէք Հաշուից . . . . 165
Յաղագս Թերայոյս Պահանջից . . . . 166

## ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Մանրհաշիւ Մատեանն չորք կարգաւորեալ ըստ 'ի ձեւ Հաշուեկշռոյ ։

Յաղագս Կշռոյ . . . . . . . . . 167
Օրինակ կշռոյ Հաշուեմատենի 'ի պէտս ուրուք որ առանձինն պարապի 'ի տուրևառութիւն ։ Եւ և օրինակ Մանրհաշուի . . . . . . . 167. 169
Օրինակ կշռահաշուի վաճառականաց ընկե‑րաց . . . . . . . . . . . . 248
Օրինակ կշռոյ Հաշուեմատենի ուրուք՝ որոյ Հաշուընկերք գոլով 'ի հեռաւոր երկիր, անդ վարեն զգլխաւոր Դրա‑մարկղն և զՀաշուեմատեան ընկե‑րութեան, յորում նշանակեալ կան դրամագլուխք իւրաքանչիւրոցն . . 248

## ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Զանազան օրինակք բաժանելոյ վաճառականաց ընկե‑րութեան շահս ։

Օրինակ զատանելոյ ընկերութեան վա‑ճառակցաց, յորում բաժանելով զմթերսն, զդրամս, զպարտիս և զպա‑հանջսն, իւրաքանչիւրն յընկերաց առ‑նու զիւր բաժին 'ի լրումն դրամագլը‑խոյն եդելոյ . . . . . . . . . 250
Օրինակ զատանելոյ ընկերութեան, յո‑րում բաժանելով զդրամսն և եթ կամիցին միումն 'ի Հաշուընկերաց յանձնել զվաճառելի մթերսն, զկոր‑զել պահանջից և զվճարումն պար‑տեաց. այսու դաշամբ՝ զի յետ աւար‑տելոյ զամենայն՝ ցուցցէ նոցա զհա‑շիւսն, և վճարեսցէ իւրաքանչիւրումն զիւր բաժին, կամ զպակասեալն առ‑նուցու 'ի նոցանէ առ փակելոյ զհա‑շիւս կրկնատումար մատենի ընկերու‑թեան . . . . . . . . . . . 251
Օրինակ զատանելոյ ընկերութեան, յո‑րում մին և եթ 'ի Հաշուընկերացն կամեսցի անջատիլ՝ մնալով այլոցն 'ի նմին ընկերութեան . . . . . . 252
Օրինակ զատանելոյ ընկերութեան, յո‑րում մին 'ի Հաշուընկերաց և եթ կամելով բաժանիլ, յանձն առնու կո‑րուսանել և զմասն ինչ 'ի դրամագլը‑խոյ իւրմէ՝ միայն թէ տացին նմա մա‑քուր դրամք . . . . . . . . . 252
Յաղագս մատենից՝ որք կարևոր են վա‑ճառականաց առ բարւոք վարելոյ զՀաշուեմատեանս իւրեանց . . . 253
Կիրառութիւն առաջին մատենից . . . 254
Կիրառութիւն երկրորդ մատենից . . . 256
Յաղագս Վրիպակաց՝ որք սովոր են սպըր‑դիլ 'ի Հաշուեմատեանս . . . . 259
Ուղղագրութիւն յայտնի վրիպակաց . . 259
Ուղղագրութիւն անյայտ վրիպակաց . . 260
Վերջաբան . . . . . . . . . . 262
Զանազան օրինակք Օրհաշիւ Մատե‑նից ։
Օրինակ . Ա . . . . . . . . . 265
Օրինակ . Բ . . . . . . . . . 269
Օրինակ . Գ . . . . . . . . . 272
Օրինակ . Դ . . . . . . . . . 273

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

Օրինակք զանազան դաշանց . . . . 275
Երևելի Քաղաքք տուրևառութեանց . 280
Յաղագս Կշռոց . . . . . . . . . 287
Յաղագս Չափուց . . . . . . . . 291
Չափք կտաւանիւթ վաճառուց. . . . 291
Չափք հեղանիւթոց . . . . . . . 292
Չափք արմտեաց . . . . . . . . 294
Դրամք երևելի իշխանութեանց . . . 296

# ՑՈՒՑԱԿ ՍԵՓԱԿԱՆ ԲԱՌԻՑ ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐԻՍ

## ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԻՏԱԼԵՐԷՆ


Ապահովագիր . . . . . Ասսիգուռաթօռէ . մգ. 119
Ապահովագրութիւն . . . Սիգուռթա . . . մգ. 119
Արգելան կամ Արգելանոց . Գօնթումաչիա . . 127
Արժէք, կամ Արժէ . . . Վալուտա. Վէտի :
Աւարտեալ կամ փակեալ հա-
շիւ, որ և Հաշուեփակ . . Սալտօ տէլլա փառ-
թիթա . . . . մ. 118

Բաշխ . . . . . . . . Պօնիֆիգացիօնէ . մծէ. 153
Բեռն . . . . . . . . Գօլլօ . . . . 143
Բեռնագիր . . . . . . Փօլիցցա տի գարի-
գօ . . . . . 143

Գին . . . . . . . . . Փռէցցօ. Վէտի :

Գործակից . . . . . . . Կօմանտիթօ . . մը. 120
Գերհաշիւ . . . . . . . – Գօնթօ . . . խէ. 18
Դրամ . . . . . . . . . Մօնէթա . . . մկդ. 156
Դրամագիր . . . . . . Չէտօլա. Պիլիէթ-
Դրամաթուղթ . . . . . . թօ . . . . . ձկէ. 81
Դրամագլուխ . . . . . Գափիթալէ . . . ծէ. 27
Դրամաշահք . . . . . . Աճճիօ տէլլա մօ-
նէթա . . . . մկա. 155
Դրամարկղ . . . . . . . Գասսա . . . . ձժա. 71

Ընթագրական հաշուեմատ: Փառթիթա տի Սօս-
փէնսիօնէ . . մձզ. 164

Ընդունելութիւն . . . . Ակցէթթացիօնէ . ձխզ. 87

Թերայոյս Պահանջք . . . Գռէտիթի տի տուպ-
պիա էսիճիպիլիթա. մձզ. 33. 166
Թոշակաւոր ծառայ . . . Սալարիաթօ . . . մկը. 124

Իրաւաբողոք . . . . . . Փրօթէսթօ . . . ձկզ. 83

Լար . . . . . . . . . Լէգգա . . . . . դ. 2
Լիրա . . . . . . . . . Լիրա . . ծը. ձէ. 32. 77

Խախք Տուրևառութեան . Ռօթթուռա տէլ Նէկօ-
ցիօ . . . . . մժթ. 123
Ծրար . . . . . . . . . Փէցցա . . . . խը. 18

Կիսագրութիւն հաշուետու-
մարի . . . . . . . . . Փառթիտա սէմ-
փլիչէ . . . . յկ. 260
Կշիռ . . . . . . . . . Պիլանչիօ . . . մկէ. 167
Կոյտ վաճառաց . . . . . Մօնթէ . . . . դ. 2
Կրկնատումար . . . . . Ռագիօնէրիա Տօփ-
փիա . . . . . ա. 1
Կրկնարժէք . . . . . . Վալուտա Տօփփիա . մձը. 165

Հաշիւ . . . . . . . . Գօնթօ :
Հաշիւ Հաղորդակցութեան . Գօնթօ ին Փառթէ-
ցիփացիօնէ . . մծա. 151
Հաշիւ Պայմանափակ . . . Գօնթօ Սօսփէսօ . . մը. 120
Հաշուեգիր, որ և Հաշուե-
մատեան, կամ Հաշուե-
տումար . . . . . . } Լիպրօ տէի Գօնթի :

Հաշուեգարձ . . . . . . Ճիրօ տի Փառթիթա. մհա. 158
Հաշուեմատ . . . . . . . Փառթիթա . . . . խթ. 9
Հաշուեցուցակ . . . . . Գօնթի Գօռէնթի . . յլա. 255
Հաշուեփակ . . . . . . Սալտօ տի Գօն-
թօ . . . . . . մձ. 161
Հաս . . . . . . . . . Փռօֆիթթի . մժզ. 119. 122
Հաւաքական հաշուեմատ . Փառթիթա Գօլլէթ-
թիվա . . . . մձբ. 162

Մայրհաշիւ . . . . . . Մաէսթրօ . . . թ. 3
Մանրհաշիւ Դիտողութիւն . Փառթիթա Ռաքքօլ-
թիվա . . . մձգ. 163
Մատեան Աշխատաւորաց . Լիպրօ տէ Լավօ-
ռանթի . . . յխէ. 258
Մատեան Ապահովագրու-
թեան . . . . . . . . Լիպրօ Սիգուռ-
թա . . . . . . յլէ. 256
Մատեան Գնուածոց . . . Լիպրօ Գօմփէռէ . յլբ. 255
Մատեան Դրամարկեղ . . Լիպրօ Գասսա . . յխթ. 254
Մատեան Ծախուց Տուրևա-
ռութեան . . . . . . . Լիպրօ Ըսփէզէ տէլ
Նէկօցիօ . . . յլզ. 256
Մատեան Մթերանոցի . . Լիպրօ Մակացցի-
նօ . . . . . . յլը. 256
Մատեան Մնացորդաց . . Լիպրօ Ռէսթի . . յխ. 257
Մատեան Ցանձնարարու-
թեանց . . . . . . . . Լիպրօ Ֆաթթու-
ռէ . . . . . յլդ. 255
Մատեան Պայմանաժամուց . Լիպրօ Ըսգատէն-
զէ . . . . . . յլթ. 257
Մատեան Սեղանոյ փոխանա-
կութեան . . . . . . Լիպրօ Պանգօ . . յլ. 254
Մատեան վաճառմանց . . Լիպրօ Վէնտիթէ . յլա. 255
Մատեան Տնական ծախուց . Լիպրօ Ըսփէզէ տի
Գազա . . . յլզ. 256
Մատեան Ցանկի . . . . Լիպրօ Ալֆապէ-
թօ . . . . . յխբ. 257
Մատեան փոխանակագրոց . Լիպրօ Գամպիալի
կամ Թրաթթէ,
և Ռիմէսսէ . . յխա. 257
Մատեան Քաղուածոյ Նա-
մակաց . . . . . . . Լիպրօ Գօփիալէթ-
թէրէ . . . . յլդ. 255
Մթերանոց . . . . . . . Մակացցինօ . . դ. 2
Մթերք, որ և Կոյտ Վա-
ճառաց . . . . . . . Մօնթէ . . . . 2
Միջնորդ հրապարակական . Սէնսալէ փուպ-
պլիգօ . . . . մդ. 119
Միջնորդչեայ . . . . . Սէնսալէրիա . . . մդ. 119

Յանգ, որ և Պայմանաժամ . Ըսգատէնզա . . յծը. 253
Յանձնարարութիւն . . . Գօմմիսսիօնէ . . . ձձգ. 114
Յիշատակագրութիւն . . . Ռէճիսթրօ . . . ժէ. 5
Յիշատակարան . . . . . Մէմօռիալէ . . . յխդ. 258
Յուղարկութիւն վաճառաց . Ըսփէտիցիօնէ . . մխ. 140

Նամակ փոխանակութեան . Լէթթէռա տի Գամ-
պիօ . . . . . ձկդ. 82
Նաւողչեայ . . . . . . . Նօլօ . . . . . . մհ. 158
Ներքնահաշիւ . . . . . Փառթիթա Ինթէռ-
նա . . . . . . մձա. 162

Շահ . . . . . . . . Ութիլէ ։ Փռօ . . 117
Շահառութիւն, Շահաստութիւն . . . } [illegible] . . . 154
Շահաւէտ . . . . . . . Աթթիվօ . . . 32
Շահարժէք, որ և Դրամաշահք . . . Աճճիօ տէլլա վալութա . . . 155

Պահանջք . . . . . . Գռէտիթօ . . . 4
Պայմանաժամ . . . . . Ըսգատէնցա . . 257
Պայմանաւոր (հաշիւ) . . Սօսփէզօ . . . 120
Պատճէնամատեան . . . . . Գօփփիա Լէթթէռէ . . 256
Պարտապան . . . . . . Տէպիթօռէ . . . 5
Պարտատէր . . . . . . Գռէտիթօռէ . . 5
Պարտիք . . . . . . . Տէպիթօ . . . . 4

Սեղան փոխանակութեան . Պանգօ ճիռօ . . 76
Սեղանաւոր . . . . . . Պանքիէռէ . . . 76
Սնտկապետ . . . . . . Գասսիէռէ . . . 71
Սնտուկ, որ և Դրամարկղ . Գասսա . . . . 71
Ստորագրութիւն . . . . Սօթթօսգռիցիօնէ . 87

Վարձ . . . . . . . . Փռէմիօ . . . . 119
Վարձ նաւու, որ և Նաւլ . . . } Նօլօ . . . . 158
Վաճառք, որ և Ալխամաղիք . . . Մէռգանցիա, Մէռճէ։
Վճարք . . . . . . . Բակամէնթօ . . . 153
Վնաս, որ և Տոյժ կամ Տուգանք . . . Տաննօ . . . . 117

Վնասաւէտ . . . . . . Փասսիվօ . . . . 32
Տարա . . . . . . . . Թառա . . . . . 154
Տուգանք . . . . . . . Տաննօ . . . . 119
Տուրեւառութիւն . . . . Գօմմէռչիօ ։
Պարզ . . . . . . . Սէմփլիչէ . . } 2
Խառն . . . . . . . Գօմփօսթօ . . }
Տրցակ . . . . . . . Ֆիլցա . . . . 255

Յանկ . . . . . . . . Ինտիչէ . . . . 257
Ցուցակ . . . . . . . Ինվէնթառիօ . . 258

Փող . . . . . . . . Փէգունիա . . . 154
Փոխարկրական . . . . . [illegible] . . 161
Փոխագրութիւն հաշուեմատեանց . . . } Թռասփօռթօ տի Գօնթի . . 158
Փոխանակագիր . . . . . Գամպիալէ։ Լէթթէռա տի Գամպիօ։ Փօլիցցա տի Գամպիօ . . . 82
Փոխանակագիր՝ Քարշեալ . Թռաթթա . . . 83
Ցղեալ . . . . . . Ռիմէսսա . . . 83
Փոխանցեալ . . . . . Ճիռաթա . . . 83
Վաճառեալ . . . . . Վէնտիթա . . . 83
Փոխարինութիւն . . . . [illegible] . . . 82

Օժանդակագիրք . . . . Լիպռի Աուսիլիառի . . . 3
Օրհաշիւ . . . . . . . Ճիօռնալէ . . . 3

Ֆիօրին . . . . . . . Ֆիօռինօ . . . 81


## ՑՈՒՑԱԿ ՆԱԽԱԿԱՐԳԵԱԼ ԲԱՌԻՑ

### ԻՏԱԼԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ


Աթթիվօ (ըսթաթօ) . . Շահաւէտ (վիճակ և ստացուածք) . 32
Աճճիօ տէլլա վալութա . Շահարժէք կամ Դրամաշահք . . . 155
Աջջէթթացիօնէ . . . . Ընդունելութիւն . 87
Ասսիգուռացիօնէ . . . . Ապահովագիր . . 119

Գամպիալէ . . . . . . Փոխանակագիր . . 82
Թռաթթա . . . . . Քարշեալ . . . 83
Ռիմէսսա . . . . . Ցղեալ . . . . 83
Ճիռաթա . . . . . Փոխանցեալ . . . 83
Վէնտիթա . . . . . Վաճառեալ . . . 83
Գասսա . . . . . . . Դրամարկղ. Սնտուկ . 71
Գասսիէռէ . . . . . . Սնտկապետ . . . 71
Գափիթալէ . . . . . . Դրամագլուխ . . 27
Գամպիօ . . . . . . . [illegible] . . . 143
Գռէտիթօ . . . . . . Պահանջք . . . 4
տի փօգա ըսփէռանցա . Թերայոյս . . . 33
Գռէտիթօռէ . . . . . Պարտատէր . . . 5
Գօլլօ . . . . . . . . Բեռն . . . . 145
Գօմմիսսիօնէ . . . . . Յանձնարարութիւն . 114
Գօմմիսսիօնառիօ . . . . Կատարիչ յանձնարարութեանց . . . 114
Գօնթումաճիա . . . . . Արգելան . . . 127
Գօնթօ . . . . . . . . Հաշիւ ։
ա Գօնթօ . . . . . . Դէպհաշիւ . . . 18
Գօնթօ Գօռռէնթէ . . . Հաշուեցոյց ։
Գօնթօ ին փառթէջիփացիօնէ . . . Հաշիւ Հաղորդակցութեան . . . 151
Գօնթօ Սօսփէզօ . . . . Հաշիւ Պայմանաւոր . . . 120
Գօփփիա Գօնթի . . . . Հաշուեցոյց . . 255
Գօփփիա Լէթթէռէ . . . Պատճէնամատեան . . 256

Ըսգառթաֆաճիօ . . . . Պիտոյ հարկանցի գրատետր . . 258
Ըսգռիթթուռա տօփփիա . Կրկնապատիկ, և Համարակալութիւն կրկնակի . 1
Ըսգուառչիօ . . . . . . Պիտոյ . . . . 258
Ըսգօնթօ . . . . . . . Վճարք . . . . 153
Ըսփէզէ տէլ Նէկօցիօ . . Ծախք վաճառատան . . . . 123
Տի Գասա . . . . . Տնական ծախք . . 124
Ըսփէտիցիօնէ . . . . . Յղարկութիւն կշռոյ . . . 140

Ըսթաթօ (Աթթիկօ). . . . [illegible] . . . . 32
(Փասսիկօ). . . . Վիրգիլեայ . . . 32
Ժնոռա . . . . . . . . Տորքուաթ Տասսոյ [illegible] . . . 154
Թուքիդիդէ և Ոփիմէսսէ . . [illegible] . . 83
Թուսսփօնթօ ով փառթի_թա . . . . . . . . [illegible] . . 158

Ինվէնթառիօ . . . . . . [illegible] ([illegible]) . . . . 28 : 258
Ինտիջէ . . . . . . . . [illegible] . . . . 257

Լածծառէթթօ . . . . . Աբգեւոն . . . 127
Լէթթէռա ով զամմկիօ . . [illegible] . . 82
Լիպպոա . . . . . . . . [illegible] . . . . 2
Լիպոփ Աուգիլիանի . . . [illegible] . 3
Լիպոօ Ալֆաբէթօ . . . [illegible] . 257
Գառթէճճիօ . . . . [illegible] . . . . 255
Գանտա . . . . . . [illegible] . . 254
Գոմփէոէ . . . . . [illegible] . . . 255
Ըսպառէնցէ . . . . [illegible] . 257
Ըսփէզէ ով Գանզա . . [illegible] . 256
Ըսփէզէ ոէլ Նէկկօցիօ . [illegible] . 256
Թուքիդիդէ և Ոփիմէսսէ. [illegible] . 257
Լավօռանթի . . . . [illegible] . 258
Մակածծինի . . . . [illegible] } . 256
Նումէռի . . . . . . [illegible] }
Պանցօ . . . . . . [illegible] . . . 254
Ռէսթի . . . . . . [illegible] . . 257
Սիգուռթա . . . . [illegible] . 256
Վէնտիթէ . . . . . [illegible] . . . 255
Ֆաթթուռէ . . . . [illegible] . 255
Լիռա . . . . . . . . [illegible] ([illegible]) . 32

Կառանթինօ . . . . . [illegible] . . . 120

Ղիռօ ով փառթիթա . . [illegible] . . 158
Ճիօռնալէ . . . . . . [illegible] . . . 3

Մայէսթրօ . . . . . . [illegible] . . 3
Մակածծինօ . . . . . [illegible] . . . 2
Մէթաֆօռիգա . . . . [illegible] . . 161
Մէմօռիալէ . . . . . [illegible] . . 258
Մէռգանցիա . . . . . [illegible] . . 2
Մէռջէ . . . . . . . . [illegible]
Մօնէթա . . . . . . . [illegible] . . . . 156
Մօնթէ . . . . . . . . [illegible] . . . 2

Նօլօ . . . . . . . . . [illegible] . . . 158

Ոփէնսօ. . . . . . . . [illegible] . . . . 154
Ոփէօլա . . . . . . . [illegible] . . . 81

Պալլա. . . . . . . . . [illegible] : 144

Պակաթթինօ. . . . . . ([illegible]) . . 77
Պանցօ ճիռօ. . . . . [illegible] . . 27. 76
Պանգիէռէ . . . . . . [illegible] . . . 76
Պիլանջիօ . . . . . . [illegible] . . . 167
Պիլիէթթօ ով պանցօ . . [illegible] . . 81
Պօնիֆիգացիօնէ . . . . [illegible] . . . 153

Ռէճիսթռօ. . . . . . . [illegible] . 5
ա Ռէսփիռօ . . . . . . [illegible]
Ռիզամփիօ . . . . . . . [illegible] . 82

Սալուոխմթօ . . . . . [illegible] . . . 124
Սալթօ (ով զօնթի . ով փառթիթա). . . . . . . [illegible] . . . 161
Սէնսալէ . . . . . . . . [illegible] . . . 119
Սէնսէռիա . . . . . . [illegible] . . 119
Սիգուռթա . . . . . . [illegible] . 119
Սօթթօսգռիցիօնէ . . . . [illegible] . 87
Սօլդօ . . . . . . . . . [illegible] . 77

Վալութա . . . . . }
Վալօռէ . . . . . . } [illegible]
Վալութա Տօփփիա . . . [illegible] . . . 165

Տանթօ. . . . . . . . . [illegible] . . . 119
Տէպիթօ . . . . . . . . [illegible] . . . . 4
Տէպիթօռէ . . . . . . . [illegible] . . . 5
Տուգաթօ. . . . . . . . ([illegible]) . . 77

Փառթիթա . . . . . . . [illegible] . . 9
Փառթիթա Գօլլէթթիվա . [illegible] . . 162
Ինթէռնա . . . . . [illegible] . . 162
Ին օփփիա վալութա . [illegible] . . . 165
Ըսփէգուլաթիվա . . [illegible] . . 163
ով Սուփփօզիցիօնէ . . [illegible] . . 164
Փասսիվօ . . . . . . . . [illegible] . . 32
Փէցցա . . . . . . . . . [illegible] . 18
Փունթուալէ ըսզուիթթու_ռա . . . . . . . . [illegible] . . . 260
Փռէմիօ . . . . . . . . [illegible] . . . . 119
Փռէսթանցա. . . . . . [illegible] . . . . 154
Փռօ. . . . . . . . . . . [illegible] . . . . 117
Փռօթէսթօ . . . . . . [illegible] . . 83
Փռօվվիգիօնէ. . . . . [illegible] . . . . 119. 122
Փօլիցցա ով Գամփիօ . . [illegible] . . 82
ով Գառիգօ . . . . [illegible] . . 143
ով Սիգուռթա . . . [illegible] . 119

Քուառանթինա . . . . Աբգեւոն . . . 127
Քուառէնօ . . . . . . [illegible] . . 3

Ֆաթթուռա . . . . . [illegible] . . . 255
Ֆիլզա . . . . . . . . [illegible] . . 255
Ֆիօռինօ . . . . . . . [illegible] . . . . 81

Ի ՍԱՏԱՐ ԳՈՐԾՈՑՍ

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ի Ր

ՇԱՀԱՎԱՃԱՌ ՍՈՐԻՆ ԳՐՈՑ ԶԱՐԳԱՍԻՍ
ՆՈՔԱ ՄԻԱՅՆ ԱԽՈՐԺԱԿԱՒ ՃԱՇԱԿԵՆ՝
ՈՐՔ 'Ի ՔՈՅԻՆ ՎԵՐԱՄԲԱՐՁԵԱԼ ՅԱՐԺԱՆԻՍ·
ԲԱՐԵԱՑ ՕՃԱՆ ՄԱՐԴԿԱՆ ԱԶԳԻ ՊԱՐԳԵՒԵՆ։
ՔՈ ԳԵՂԵՑԻԿ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՍԻՐՏ ԱԶԳԱՍԷՐ,
ՀՆԱՐՍ ԻՄԱՑԱՆ 'Ի ԳԻՒՏ ԳԱՆՁՈՒՆ ԱՆՆԻԱԶ·
ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ ԿԱՐՕՏ ԱԶԳԻԴ ՀՈՐԴԵՑԵՐ·
ԳԻՏԵԼ՝ ՈՒՍՏԻ՞ ԲԽԷ ՈՍԿԻՆ ՀԱՆԱՊԱԶ։
ԱՐՁԱՆ ԿԱՑՑԷ ԴԱ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅԱՇԽԱՐՀԻ·
ՅՈՍԿԻ ԴՐՈՇՄԵԱԼ ԶԱՆՈՒՆ ՔՈՅԻՆ ՅԻՇԱՏԱԿ,
ԳԻՏԵՄ՝ ԴՈՎԱՒ ՅՈԳՈՒՆՑ 'Ի ՍԻՐՏ ՎԱՌԵՍՑԻ՝
ԸԶՔԵԶ ԿԱՆԳՆԵԼ ԱՆԴՈՒԼ ՃԳԱՆՑ ՆՊԱՏԱԿ։



# ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՅՆ Է

## ՈՒՍՈՒՄՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԿՐԿՆԱԳԻՐ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

*Համարակալութիւնն զինչ է, և առ ինչ կրկնագիր անուանի։*

ա. ԱՐՈՒԵՍՏ Համարակալութեան՝ զոր Իտալացիք Բարթիթա Տօփփիա, կամ Տօփփիա Ռէճիսթրացիօնէ անուանեն, է կարգաւորեալ և կանոնաւոր դասաւորութիւն հաշուի և համարոյ ամենայն տնտեսական և տուրևառ գործառնութեանց։ Կարգ և դասաւորութիւն գրուածոց հաշուեմատեանին պարտի հիմնիլ 'ի հաստատուն, 'ի բանաւոր և 'ի ճշմարիտ կանոնս յիշատակագրութեանց, որովք միայն կարէ լինել անվրէպ հաւաստարկութիւն 'ի հաշուետումարս։ Հաստատուն կոչի կարգն, զի ոչ ըստ կամս այլայլի։ Բանաւոր ասի, զի կապակցութիւն դասաւորութեան նորա կարօտի աչալուրջ ուշադրութեան մտաց։ Իսկ ճշմարիտ, զի ունի անմասն լինել 'ի ստութենէ, որ չկարէ միաբանիլ ընդ նմա։ Կոչի Կրկնագիր, զի յիշատակագրութիւնք ամենայն տուրևառ գործողութեանց նշանակելի են 'ի նմա յերկուս տեղիս՝ ըստ կրկնակի փոփոխութեանց, որք հարկաւ զհետ գան յամենայն ենթակս տուրևառութեանց։ Կրկնակի փոփոխութիւնք անուանին՝ տուչութիւնք իրաց և ընդունելութիւնք դրամոց. կամ ընդհակառակն՝ ընդունելութիւնք իրաց և տուչութիւնք դրամոց, որով լինին տուրևառք. որք որչափ չնչինք և դիւրագինք իցեն՝ միշտ 'ի ներքս ածեն զայսոսիկ կրկին փոփոխութիւնս տրոց և առից, որում զհետ գան կրկին յիշատակագրութիւնք 'ի հաշուետումարսն, վասն որոյ և կոչի Կրկնագիր. զի մի և նոյն գործողութիւն ըստ այլևայլ հայեցուածոյ նշանակելի է 'ի զանազան տեղիս։

բ. Կրկնատեսակ փոփոխութիւնքս սովոր են լինել ոչ միայն 'ի տուրևառս, այլև յամենայն սեռս մարդկային գործողութեանց։ Օրինակ՝ ելեալ ուրուք 'ի տանէ, գնայ յեկեղեցի կամ 'ի շուկայ. ահա յայսմ գործողութեան լինին կրկին փոփոխութիւնք. մի՝ զի մեկնելովն 'ի տանէ, պակասի անտի՝ ուր էրն. և երկրորդ՝ գնալովն յեկեղեցի կամ 'ի շուկայն, տեղին այն ստանայ զեկեալն անդր, զոր յառաջն ոչ ունէր։ Դարձեալ՝ Պետրոս գնոյ առնու զմատանի՝ հատուցանելով դրամս փոխան մատանւոյն. արդ՝ եթէ հայեսցի 'ի քսակն, տեսանէ զայն պակասեալ յայնչափ դրամոց, որչափ ինչ վճարեաց վասն մատանւոյն. իսկ եթէ հայեսցի յիւր ձեռն, գտանէ զայն մատանեալ՝ և զինքն տէր մատանւոյն, որ յառաջն ոչ էր։ Սմին նման՝ 'ի բերանոյ լի կարասոյ եթէ անօթով ինչ հանցի գինի, յայտ է թէ կարասն պակասի 'ի գինւոյն, և անօթն՝ որ յառաջն դատարկ էր, լցեալ լինի գինւով։

գ. Ի բացայայտ օրինակաց աստի մարթ է դիւրաւ գուշակել և զայլս, որք սովոր են դիպել յամենայն մարդկային գործողութիւնս, և 'ի նոյունց անտի աներկմիտ իմաստասիրել, եթէ նոյն դիպուած է և 'ի գործս տուրևառութեան. յայն սակս իբր առած է յայսմ արուեստի համարակալութեան, թէ զինչ և իցէ գործառնութիւն գնելոյ կամ վաճառելոյ, փոխատուութեան կամ փոխառութեան, և այլն. հարկաւ 'ի մէջ բերէ զկրկնակի փոփոխութիւնս առից և տրոց, զորս պարտ է որոշ և առանձին յիշատակագրութեամբք նշանակել 'ի զանազան տեղիս հաշուետումարին, որով լինի Կրկնագրութիւն։

դ. Առ դիւրահաս խելամտութիւն նորավարժից յաւելցուք և զօրինակս ինչ 'ի տուրևառողութեանց։ Դիցուք թէ գնոյ առեր 1000, լիտր գահվէ, որոյ արժէքն եղև 3000, դահեկան։ Յայս դիպուած հաշուետումարդ պարտի յայտ առնել քեզ, թէ 'ի պատճառս գահվէին՝ զոր

ստացար, պակասեցան 'ի դրամարկղէդ 3000, դահեկանք. և թէ 'ի մթերանոցդ [1] ամբարեցան 1000, լիտր [2] ղահվէ, որք յառաջ քան զստացուածդ չկային անդ:

Դարձեալ՝ դիցուք թէ վաճառեցեր զտասն ծրարս հնդիկ կտաւոյ, և առեր զգինն 2000, դահեկան: Հաշուետումարդ պարտի ծանուցանել քեզ, թէ 'ի դրամարկղդ բաց 'ի նախնական դրամոց անտի՝ յաւելան այլ ևս 2000, դահեկանք, 'ի պատճառս վաճառման կտաւոցն. և թէ 'ի մթերից կտաւոցն պակասեցան տասն ծրարք. որոց տիրացաւ գնողն՝ կամ վճարող դրամոցն:

Դարձեալ՝ դիցուք թէ ետուր ումեք 500, դահեկանս 'ի գնել ինչ ինչ վասն քո. յայս դիպուած հաշուետումարդ ունի ծանուցանել քեզ՝ թէ 'ի դրամարկղէդ պակասեցուցեր 500, դահեկանս, և թէ ունիս պահանջս 'ի մարդոյն, որում ետուր զ500, դահեկանսն:

Է. Տուրևառք ստէպ են լինել կրկնօրինակ, այսինքն՝ պարզ [1] և խառն: Պարզ կոչի, յորժամ տուրևառութիւնն 'ի միատեսակ իրս է, և լինի պատրաստական դրամովք. յառնուլ անդ զիրն, վճարի և գինն լոկ դրամով: Իսկ խառն ասի, յորժամ զինչ ստացեալ կամ վաճառեալ իրաց հատուցանին ըստ մասին դրամովք, ըստ մասին փոխանակութեամբ այլոց իրաց, և ըստ մասին ամսապայման դաշամբ 'ի վճարումն:

'Ի պարզ տուրևառս որովհետև տուչութիւնք իրաց և ընդունելութիւնք դրամոցն կատարին միակ գործողութեամբ, ըստ ասացելոցս 'ի վերոյ (ա) 'ի մէջ բերեն զկրկին փոփոխութիւնս ևեթ. բայց 'ի խառն տուրևառս որովհետև մնանին այլևայլ մասունք գործողութեանց, ըստ շատութեան մասանցն բազմանան և փոփոխութիւնք. զի իւրաքանչիւր մասն համարի առանձին գործողութիւն, և իւրաքանչիւր գործողութիւն 'ի ներքս ածէ զկրկին փոփոխութիւնս: Վասն որոյ կանոն է արուեստի համարակալութեան, զամենայն խառն տուրևառս զատանել և որոշել 'ի մասունսն՝ յորոց խառնեալ կամ բաղադրեալ իցեն:

Ը. Յասացելոցս յայտ է՝ թէ խառն տուրևառք կարեն ըստ դէպս իրաց բովանդակել յինքեանս զչորս, կամ զվեց, կամ զութ, կամ զտասն մասունս, վասն որոյ և նոյնաչափ փոփոխութեանց ներքոյ անկանիլ: Արդ՝ զայն ամենայն փոփոխութիւնս պարտ է 'ի հաշուետումարն յայնչափ տեղիս նշանակել, որչափ իցեն մասունք գործողութեանցն և փոփոխութեանց յառաջ եկեալք 'ի տուրևառութենէն: Օրօրինակ՝ դիցուք թէ գնոյ առեր 1200, լիտր ղահվէ, որոյ գինն եղև 3000, դահեկան. 'ի վճարել զայդ գումար՝ ետուր զկէսն արծաթադրամ 1500, դահեկան. իսկ վասն մնացեալ կիսոյն, որ է 1500, դահեկան, փոխանակեցեր շաքար ըստ արժողութեանն: Տուրևառութիւնս խառնեալ է յերկուց, մի՝ զի գնելովդ տիրացար մթերից ղահվէին, զոր չունէիր. և երկրորդ՝ զի փոխան այնր վճարեցեր զկրկնատեսակ իրս, այսինքն՝ զդրամ և զշաքար: Արդ՝ որովհետև իւրաքանչիւրն 'ի սոցանէ ունի զկրկին փոփոխութիւնս, պարտ է 'ի հաշուետումարն նշանակել 'ի չորս տեղիս, որովք խելամուտ լինիս՝ ա, թէ 'ի դրամարկղէդ պակասեալ է 1500, դահեկան: բ. թէ 'ի մթերանոցդ ամբարեցան 600, լիտր ղահվէ փոխան տուեալ դրամոցդ: գ. թէ 'ի մթերիցդ պակասի այնչափ շաքար, որոյ արժէքն էր 1500, դահեկան: դ. թէ ստացար 600, լիտր ղահվէ փոխան արժէից շաքարին:

Օգտակար չորեքկին յիշատակագրութեանցս դիւրաւ ծանիցես՝ ածեալ զմտաւ, թէ 3000, դահեկանքն՝ արժէք 1200, լիտր ղահվէին, ուստի վճարեցան: Ոչ մարթ ասել, թէ բովանդակն վճարեալ իցէ 'ի դրամարկղէն, զի անտի ելին միայն դահեկանք 1500, և ոչ 3000: Ոչ հնար ևս ասել՝ թէ ըստ բոլորին վճարեցաւ փոխանակութեամբ շաքարի. զի փոխանակեալ շաքարն էր 1500, դահեկանի: Այս հարկ է հաշուետումարիդ ծանուցանել քեզ ոչ միայն զստացուածդ ղահվէին, և զպակասիլն 'ի դրամարկղէդ 1500, դահեկանաց, որպէս և 'ի մթերիցդ 1500, դահեկան արժողութեամբ շաքարին, այլև յայտ առնել՝ թէ տուչութիւն դրամոցն և շաքարին յայն սակս եղև, զի կարասցես գնոյ առնուլ զղահվէն. վասն որոյ տիրանալդ մթերից ղահվէին յառաջ եկն յերկուց իրաց. այսինքն՝ 'ի դրամոց և 'ի շաքարէն, որովք ստացար զղահվէն. նմին իրի պարտ է զամբողջ գումար 1200, լիտր ղահվէին բաժանել յերկուս, որոյ մի բաժինն՝ լիտր 600, համարելի է 'ի հաշիւ 1500, դահեկան դրամոցն զոր ետուր. իսկ երկրորդ բաժինն համարելի է 'ի հաշիւ 1500, դահեկան արժէից փոխանակեալ շաքարին:

Զ. (1) ՄԹԵՐԱՆՈՑ: Իտալ. Magazzino. Մակազինօ: Գաղղ. Ամպար: Յորում շտեմարանին մթերք վաճառաց 'ի տուրևառութիւն: Յիտալական հաշուեմատեանս սովորութիւն է զիւրաքանչիւր կոյտս վաճառաց Մոնթէ անուանել, որ է դէզ կամ շեղջ և գումար վաճառուելի իրաց. զոր մեք կոչեսցուք Մթերս:

(2) ԼԻՏՐ: Իտ. Libbra. Լիպրա: Կշռանուն է երկատեսակ չափուց. մին համեմատի 96, և միւսն՝ 144, դրամկշռոց կամ Տրամոյ: Կայ և երրորդ մի, որ է 6, Հօխայ, այսինքն՝ 2400, Տրամք:

Է. (1) ՊԱՐԶ: Իտ. Semplice. Սէմփլիչէ: ԽԱՌՆ. Composto. Գոմփօսթօ:

Է. Յաւելցուք և զայլ օրինակ եռամասնեայ խառն տուրևառից, յորում իւրաքանչիւր մասունք՝ որովհետև կրկնակ փոփոխութիւնս 'ի մէջ բերեն (ա). Նմին իրի հարկ է 'ի հաշուետումարն նշանակել զայնոսիկ 'ի վեց տեղիս: Օրօրինակ՝ եղեալ թէ գնոյն 1200, լիտր ղահվէն, զոր ստացեալ էիր 'ի գին 3000, դահեկանաց, նովին գնով վաճառեցեր ումեք. և որ էառն զայն, կամեցաւ վճարել քեզ ըստ մասին դրամ, ըստ մասին մեղրամոմ, և ըստ մասին կտաւ: Տուրևառքս նշանակելի են 'ի վեց տեղիս հաշուետումարին. զի պարտ է յիշատակագրել՝ ա, թէ 'ի դրամարկղդ եմուտ դահեկան, 1000: բ. թէ փոխան ընկալեալ դրամոցդ պակասեցաւ 'ի մթերանոցէդ 400, լիտր ղահվէ: գ. թէ ետուր այնչափ մեղրամոմ, որոյ արժէքն է 1000, դահեկան: դ. 'ի պատճառս արժեից մեղրամոմոյն պակասեցան 'ի մթերանոցէդ 400, լիտր ղահվէ: ե. ստացար զայնչափ կտաւս, որոյ արժէքն է 1000, դահեկան: զ. 'ի պատճառս գնոյ կտաւոյն պակասեցան 'ի մթերանոցէդ 400, լիտր ղահվէ: Վեցեքին յիշատակագրութիւնքս նշանակեալք յայլևայլ տեղիս՝ ոչ զայլ ինչ յայտ առնեն, բայց եթէ զի վաճառեալ ես ումեք 1200, լիտր ղահվէ, որոյ արժէքն դահեկան՝ 3000, վճարեալ է քեզ եռատեսակ իրօք. այսինքն՝ դրամով, մեղրամոմով և կտաւով. զիւրաքանչիւրսն համարելով միօրինակ հազարական դահեկան արժողութեամբ գնոյ:

Ը. Յառաջագիր բանիցս և յօրինակաց մարթ է հասու լինել զինչութեան Կրկնագիր անուանեալ Հաշուետումարին. միանգամայն իմանալ և զկարևորութիւն որոշակի յայտարարութեամբ յիշատակագրութեան մասանցն, յորոց խառնեալ իցեն տուրևառք. բաժանելով զմասունսն, և նշանակելով յիւրաքանչիւր պատշաճեալ տեղիս. զորոց զլիագոյն տեղեկութիւնսն օրինակօք հանդերձ տեսցես զկնի:

Մատեանք Համարակալութեան ոյք իցեն և քանիք:

Թ. [redacted]ատորք գրոց, զոր համարակալք սովոր են վարել 'ի գործ, կոչին Հաշուեմատեանք կամ Հաշուետումարք. և զի այսպիսի մատեանք բազմատեսակք են ըստ զանազան պիտոյ վաճառականութեան, նմին իրի սովորաբար բաժանին յերկուս. այսինքն 'ի գլխաւորս և յերկրորդականս: Գլխաւորք անուանին երկոքին սոքա, Օրհաշիւ [1] և Մայրհաշիւ. յորս կարգաւորաբար բովանդակին ամենայն տուրևառք վաճառականին: Իսկ երկրորդականք, կամ այլով անուամբ՝ Օժանդակագիրք [2] կոչին չորեքտասան հատորք մատենից, որք կարգեալ են 'ի նպաստել գլխաւորաց. իբր զի յիւրաքանչիւրսն 'ի նոցանէ նշանակին մասնական հատուածք տուրևառութեանն, յորոց ընդունին և զանունսն. որք են՝ ա. Գիրք դրամարկղի: բ. Գիրք սեղանոյ փոխանակութեան: գ. Գիրք վաճառուց: դ. Գիրք գնուածոց: ե. Գիրք յանձնարարութեանց: զ. Գիրք քաղուածոյ նամակաց: է. Գիրք ապահովութեան: ը. Գիրք անական ծախուց: թ. Գիրք տուրևառութեան ծախուց: ժ. Գիրք մթերանոցի: ժա. Գիրք պայմանաժամուց: ժբ. Գիրք մնացորդաց: ժգ. Գիրք փոխանակագրոց: ժդ. Գիրք ցանկի: Զսոցանէ ունիմք աւանդել որոշակի 'ի հինգերորդ մասին գործոյս (յԻԸ), ուր մանրամասնաբար յայտ արասցուք՝ թէ զինչ իցեն և յինչ պէտս վարելիք 'ի գործ: Իսկ 'ի ժամու աստ դիցուք ուսուցանել զգլխաւորսն, որք են Օրհաշիւ և Մայրհաշիւ. զի սոքօք եւեթ հաշուեմատեանն անուանի Կրկնատումար, և առանց սոցա կոյր է վաճառականութիւնն:

## ՕՐՀԱՇԻՒ

Ժ. [redacted]աշուեմատեանն՝ յորում նշանակին ամենայն տուրևառ գործառնութիւնք, որք դիպին օրըստօրէ, կոչի Օրհաշիւ. այսինքն՝ հաշիւ աւուց և որոց աւուրն: Զկարգաւորութիւն մատենիս, թէ զիարդ և որով օրինակաւ յիշատակագրելի իցեն 'ի նմա տուրևառք, ունիմք աւանդել զկնի (ԺԴ). բայց աստանօր յուշ առնեմք ուսանողաց զայս կանոն ընդհանրական, զի յիշատակագրութիւնք մատենիս պարտին լինել պարզք, որոշք, բացայայտք և ճշմարիտք, առանց երկբայնութեան և նուազ կամ պատրուակեալ խօսից. զի հիմն մատենիս ճշմարտութիւնն է, յոր հաստատելի են ամենայն գործառնութիւնք, և հաշիւք վաճառականին: Եթէ տուրևա-

Ը. (1) ՕՐՀԱՇԻՒ. Իտ. Giornale. Ճիօռնալէ. այսինքն՝ Օրական: Տճ. Րուզնամէ: ՄԱՅՐՀԱՇԻՒ: Իտ. Maestro. Մայէսթռօ. կամ Mastro. Մասթռօ. այն է՝ վարժապետ կամ ուսուցիչ և առաջնորդ: Եւս և Quaderno. Գուատէռնօ. որ է Տետրակ: Տճ. Անա տէֆթէր:

(2) ՕԺԱՆԴԱԿԱԳԻՐՔ: Իտ. Libri Ausiliarj. Լիպրի Աուզիլիարի: Օժանդական անուանս չորեքտասան գրոց տեսցես 'ի թիւն (յԻԸ):

ութիւնն պարզ իցէ (Ն), միով եւեթ բանիւ նշանակելի է. իսկ եթէ խառն, պարտ է զատել զամենայն մասունս, եւ մի առ մի նշանակել զնոսին, զի որոշագրութիւն մատենիս դիւրին գործէ եւ զփոխադրութիւնն 'ի Մայրհաշւին ։

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

ժա. Այս մատեան բովանդակիչ առ հասարակ ամենայն տուրեւառութեանց՝ ունի լինել առաջնորդ եւ վարժապետ վաճառականին 'ի ցուցանել նմա իբր 'ի հայելւոջ զամենայն պարտիս եւ զպահանջմունս (1), զոր ունի. զչափ եւ զօրպիսութիւն մթերեալ ընչիցն, զշահ եւ զվնաս առ 'ի նոցանէ, որպէս եւ զայլս ամենայն՝ որով վաճառականն պարապի 'ի տուրեւառս ։ Կոչի Մայրհաշիւ, զի զհամօրէն ցանկցիր հաշուոյ օրական մատենին մայրաբար յինքն ժողովէ եւ զետեղէ յիւրաքանչիւր պատշաճեալ տեղիս. յորոց բովանդակութենէն 'ի յայտ գան օգուտք եւ վնասք տուրեւառութեանն, որպէս տեսցի զկնի ։

ժբ. Չափ մեծութեան, այսինքն՝ դրից լայնութեան, երկայնութեան եւ թանձրութեան երկոցունց մատենիցս, թէպէտ պարտի լինել հաւասար եւ համեմատ միմեանց, զի երկոքին միօրինակ եւ հաւասարաչափ գրուածովք յառաջասցին, եւ միահետ աւարտեսցին. բայց քանզի յիշատակագրութիւնք օրհաշուին սովորաբար համառօտագիծ լինին քան զմայրհաշուին, նմին իրի զթղթաթերթս օրհաշւի մատենին հնար է փոքր մի սակաւաթիւս առնել քան զմայրհաշուին ։ 'Ի բազմակուտակ տուրեւառութիւնս ականաւոր վաճառականաց սովորութիւն է զամբողջ թերթ լայնարձակ թղթոյ կրկնածալ առնելով գրահատորս կազմել. իսկ 'ի մանր տուրեւառութեան շատ է եւ քառածալն ։

ժգ. Յարտաքին երեսս կամ 'ի կողս այսոցիկ հաշուեմատենից մակագրելի են անուանք իւրաքանչիւրոց, միոյն՝ ՕՐՀԱՇԻՒ, եւ երկրորդին՝ ՄԱՅՐՀԱՇԻՒ. ապա ընդ նոքօք նշանակելի են եւ կրկին սկզբնատառք անուան եւ մականուան վաճառականին, որում անկ իցեն հաշուեմատեանքն ։ Օրինակ՝ եղեալ թէ վաճառատէրն կոչի Վահրամ Սեդի. 'ի ներքոյ Օրհաշւի եւ Մայրհաշւի բառիցն պարտ է գծագրել խորագիր՝ Վ. Ս. որով ճանաչի թէ նորա են հաշուեմատեանքն ։

Եթէ դիպեսցի միումն 'ի հաշուետումարացս ծայր 'ի ծայր գրութեամբ աւարտիլ նախ քան զմիւսն, պարտ է եւ զանկատարն զայն փակել եւ աւարտել 'ի տեղւոջն՝ ուրանօր եւ ժամանեալ իցէ, թողլով դատարկ զմնացեալ թուղթսն ։ Ապա յարտաքին կողս հաշուեմատենիցն այնոցիկ առընթեր անուանց երկաքանչիւրոցն՝ պիտի յաւելուլ զթուանշանս Ա. եւ Ա. որով երկոքին հատորքն նոյնագիր թուանշանաւ դրոշմեալք, որոշեսցին յայլոց հատորոց՝ որք ամ ըստ ամէ 'ի տեւել տուրեւառութեանն կարեն յաւելուլ ։ Նոյն պարտ է առնել եւ 'ի յաջորդ հատորս՝ հետզհետէ նշանակելով ըստ կարգի թուանշանացն՝ Բ. Բ ։ Գ. Գ ։ Դ. Դ. եւ այլն. որովք յայտնի լինին՝ թէ ո՞ք յօրհաշւի մատենիցն ընդ որո՞յ 'ի մայրհաշւի հատորոց համաձայնք իցեն եւ կցորդակիցք, առ 'ի դիւրաւ եւ անաշխատ գտանել զխնդրելիսն ։

## Կարգ եւ Կանոն Օրհաշւի Մատենին ։

ժդ. Ի ճակատ՝ կամ 'ի գլուխ ամենայն երեսաց այսր հաշուեմատենի մակագրելի է բառս ՕՐՀԱՇԻՒ. եւ 'ի ներքոյ նորա նշանակելի է տարին եւ անուն քաղաքին՝ յորում լինի օրհաշիւն ։ 'Ի ձախակողմն իւրաքանչիւր երեսաց վերուստ 'ի վայր ձգելի են գիծք, որով եղանին լուսանցք յեզր թղթոյն. յորս նշանակելի են թղթահամարք մայրհաշւի մատենին, զորմէ ասասցուք զկնի (իբ) ։ Նոյն գծաձգութիւն պարտ է առնել եւ յաջակողմն երեսաց թղթոյն, վերուստ 'ի խոնարհ ձգելով զերկուս գիծս, որով եղանին կրկին դաւազանք, մին լայն, եւ միւսն նեղ եւ անձուկ 'ի պէտս դրամագրութեանց՝ յորոց 'ի լայնն նշանակելի են դահեկանք կամ ղշ, որ է ղուրուշ. իսկ 'ի նեղն՝ մանրափողք կամ ստակք (2) ։

ժա. (1) ՊԱՐՏԻՔ ։ Հյ. Տալիք ։ Իտ. Debito. Տէպիթօ ։ Թճկ. Պօրճ ։ ՊԱՀԱՆՋՔ ։ Հյ. Առնելիք ։ Իտ. Credito. Գրէտիթօ ։ Թճկ. Գալայ ։

ժդ. (2) Ոմանք 'ի վաճառականաց յաջակողմեան դաւազանս դրամափողոց մերձ դնեն եւ զդաւազան թղթահամարոյ Մայրհաշուին (իբ). իսկ 'ի ձախակողմն երեսաց յաւելուն զերիս այլ դաւազանս. յորոց յառաջինն նշանակեն զհաստատութիւն յիշատակագրութեանց այնր երեսին. յերկրորդն կարգեն զամսանունն եւ զամսաթիւ. իսկ յերրորդն ըստ պատշաճի յիշատակագրութեանց նշանակեն առընթեր զերկոսին բառս, Պարտիք եւ Պահանջք. զորոց զօրինակն տեսցես 'ի վերջ գրոցս. Օրինակ. Բ ։

ԺԵ. Յետ գծագրելոյ զգաւազանսն պարտ է 'ի միջավայրն երեսաց նշանակել նախ զամսաթիւն, և ապա զանուն ամսոյն. յետոյ 'ի յաջորդ տողն արձանագրելի է յիշատակագրութիւնն (1) տուրևառ գործողութեանց աւուրն. զորոյ զկարգ և զկանոն ունիս տեսանել զկնի: Ամենայն յիշատակագրութիւնք զատանելի են 'ի միմեանց ուղղաձիգ գծիւ, թէև համգիպեալ իցեն 'ի միում աւուր: Ամսաթիւն՝ այսինքն օր ամսոյն, յայնժամ եւեթ կրկնելի է, յորժամ փոխի պատկեր աւուրն:

ԺԶ. Ասացաւ վերագոյնդ (ԺԳ), թէ 'ի ձախատ ամենայն երեսաց մակագրելի է տարին և անուն քաղաքին. վասն զի կարէ համգիպել՝ թէ 'ի խնդրել ուրուք իմանալ զտուրևառութիւն ինչ, զոր բազում ամօք յառաջ արարեալ իցէ ընդ ումեք, անաշխատ գտանէ զայն 'ի բազմամեայ համարս՝ հայելով միայն 'ի ձախատ երեսացն. ցանտ է՝ թէ գիտասցէ զտարին տուրևառութեան: Իսկ զամսաթիւն չէ պարտ դնել 'ի ձախատու ընդ տարւոյն. զի հնար է՝ թէ 'ի մի Թղթերես երբեմն բովանդակեսցին յիշատակագրութիւնք բազմօրեայք, և երբեմն ամսօրեայք. Թող և զայն՝ զի մարթ է եւս պատահել, թէ յաճախութիւնք միօրեայ յիշատակագրութեանց կարօտասցին կրկին երեսայ՝ ոչ կարելով ամփոփել 'ի մի երես:

ԺԷ. Զթղթերեսս Օրհաշուին չէ պարտ թերատ յիշատակագրութեամբ աւարտել, զկէսն 'ի միում՝, և զկէսն 'ի յաջորդ երեսն գրելով. այլ զամբողջ բանն առանց բաժանելոյ նշանակել պիտի 'ի միասին: Իսկ եթէ տողքն չիցեն բաւականք ընդունելոյ զամբողջ յիշատակագրութիւնն, բաւ եւս է պարապ թողուլ զայնս և անցանել 'ի յաջորդ երեսն, զի թերակատար յիշատակագրութիւնք սովոր են լինել առիթք շփոթութեանց, մանաւանդ թէ յոլովակի և պատճառ սպրդելոյ անկարծելի վրիպակաց:

ԺԸ. Ի տեղեկութիւն կարգի և կանոնաց՝ զոր պարտ է գիտել 'ի յիշատակագրութիւնս օրհաշուին, գիտասջիք աստանօր զուսումն ինչ կարեւոր: Յինչ և իցէ տեսակս տուրևառութեանց, եթէ վաճառել իցէ, եթէ գնոյ առնուլ, կամ փոխանակել, կամ փոխատու լինել ումեք, կամ վճարել զպարտիս, և կամ ընդունել յումեքէ զպահանջս, վաճառականն չառնէ զայլ ինչ, բայց եթէ բառնալ զմթերսն 'ի տեղւոջէ իմեքէ՝ և դնել յայլ տեղի: Արդ՝ այն մթերքն կարեն լինել դրամք և կամ աղխամաղխք, զոր 'ի պատճառս տուրևառութեան սովոր են մարդիկ փոխանակել միմեանց: Օրինակ՝ եդեալ թէ ետուր ումեք 1000, դահեկանս, և փոխան դրամոյն ընկալար 'ի նմանէ զգահլէ. յայսմ տուրևառութեան բարձեր 'ի դրամարկեղէ 1000, դահեկան, և զնոյն արժողութիւն զետեղեցեր 'ի մթերս գահլէի: Յետոյ համարեա թէ զնոյն գահլէ փոխանակեցեր ընդ մեղրամոմոյ. այսուհետ փոխանակութեամբ բարձեր 'ի մթերոց գահլէին զարժողութիւն 1000 դահեկանի, և եդիր 'ի մթերս մեղրամոմոյ: Դարձեալ՝ դիցուք թէ փոխատու եղեր Սահրամայ 800, դահեկանս. տուչութեամբ դրամոցս ել 'ի դրամարկեղէդ դահեկան 800, և եմուտ 'ի դրամարկղն Սահրամայ: Ըստ այսոցիկ են և այլ ամենայն գործառնութիւնք տուրևառութեանց. վասն որոյ պարտ է ուսանողաց իբր կանոն հաստատուն դնել 'ի միտ, թէ այն տեղի կամ պահարան՝ յորմէ բառնի ինչ, եթէ դրամք իցեն և եթէ մթերք, միշտ համարելի է Պարտատէր (2). իսկ այն՝ յորում զետեղի, Պարտապան (3):

ԺԹ. Ի հաշուեառումս՝ եթէ անուն ուրուք դնիցի յուղղական կամ 'ի բացառական հոլով, այսպէս. Մուշեղ, կամ 'ի Մուշեղայ: Արամ, կամ յԱրամայ: Դրամարկղ, կամ 'ի Դրամարկեղէ: Մթերք Գահլէի, Մեղրամոմոյ, կամ 'ի մթերոց և այլն. պարտ է իմանալ զպարտապան լինելն նոցա: Իսկ յորժամ դիցի 'ի տրական հոլով՝ այսպէս. Առ Մուշեղ, կամ Մուշեղայ: Առ Դրամարկղն. կամ Դրամարկեղ: Առ Մթերս գահլէի, և այլն. պարտ է իմանալ զպարտատէրն: Զեղանակ կիրառութեան և զպատճառ հոլովման բառիցս ուսանիցեսջիք յետոյ (ԼԸ. ԼԹ.) 'ի խօսիլն յաղագս կանոնաց Մայրհաշուին:

Ի. Յաճախ սովորութիւն է վաճառականաց 'ի յիշատակագրութիւնս հաշուեմատենից նախ առաջին յիշել զանուն պարտապանին. և յետ նորա կարգել զպարտատէրն: Օրինակ՝ եդեալ թէ հանեն 'ի դրամարկեղէ 200, դահեկանք, և տուան 'ի ձեռս Մուշեղայ. պարտ է նախ զՄուշեղ պարտապան առնել, և ապա զԴրամարկղն պարտատէր. վասն որոյ յՕրհաշուին յիշատակագրելի է այսպէս. * Մուշեղ (կամ 'ի Մուշեղայ) ‖ Առ Դրամարկղն (կամ Դրամարկեղ) դահեկանք, 200 |: Այսու կարգաւ՝ նախ պարտապան լինի Մուշեղ, և ապա պարտատէր լինի Դրամարկղն: Նաև որպէս զի որոշ և անշփոթ երևեսցի պարտապանն և պարտատէր, օրէն է

ԺԵ. (1) ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ: Իտ. Registro. Փռ. Գօլալպ հոլնձի: Թուքինթաօ: Փռ. Գայտ:

ԺԸ. (2) ՊԱՐՏԱՏԷՐ: Իտ. Creditore. Գաւէտիթօռէ:

(3) ՊԱՐՏԱՊԱՆ: Իտ. Debitore. Տէպիթօռէ: Փռ. Պօրճլու:

ընդ մէջ երկոցունցն յաւելուլ զզուգագիծ այսպիսի ‖ . ըստ որում եդաք վերագոյնդ , և զոր ու-նիմք վարել յընթացս հաշուեմատենիս ։

ժա . Ի յիշատակագրութիւնս օրհաշուին յետ նշանակելոյ զպարտապանն և զպարտատէր, անընդմիջապէս կարգելի է և գումար դրամոյն . զկնի այնր պարտ է համառօտ բանիւ յաւելուլ և զպատճառ տուրևառութեանն . հուսկ յետոյ նոյն գումար դրամոյ կրկնելի է 'ի գաւազանն , որ 'ի նոյն պէտս գծագրեալ կայ ( ժդ ) ։ Օրինակի վասն՝ դիցուք զյառաջագիր դիպուածն , յորում յանձնեցաք 'ի ձեռս Մուշեղայ 200 , դահեկանք , 'ի վճար պահանջից նորա ։ * Մուշեղ ‖ Առ Դրամարկղն ղշ , 200 . որ այսօր հատուցաւ նմին առ 'ի լրումն պահանջից նորա . . . . ղշ , 200 | ։ Յիշատակագրութիւնս յայտ առնէ , թէ Մուշեղ պարտապան է , և Դրամարկղն պարտատէր . զի վճարեալ դրամն ելեալ է յարկեղէն , և յանձնեալ է 'ի ձեռս Մուշեղայ ( ժդ ) ։

ժբ . Ի նախասացելոցս յայտ է՝ թէ ամենայն յիշատակագրութիւնք օրհաշուին ունին պարագրել զպարտապանն և զպարտատէր . և զի երկոքին սոքա զատաբար և առանձին առանձին փոխադրելի են 'ի Մայրհաշիւն . պարտապանն 'ի մի երես թղթոյ , և պարտատէրն 'ի միւս հանդիպակողմն նորին (որպէս ունիմք ասել զկնի՝ լե . լզ ) , վասն որոյ հարկ է առ իւրաքանչիւր յիշատակագրութիւնս Օրհաշուին նշանակել զթղթահամարս երեսաց Մայրհաշուին , ուրանօր փոխադրելիք իցեն հաշիւք եթէ պարտապանին , և եթէ պարտատեառն ։ Թղթահամարքս նշանակելի են 'ի ձախակողմեան լուսանցս երեսացն ( ժդ ) առընթեր իւրաքանչիւր յիշատակագրութեանց . զերեսաթիւ պարտապանին դնելով 'ի վեր , և զպարտատեառնն 'ի խոնարհ՝ այսպէս . . . . } 1/2 հանդերձ բաժանարար միջնագծիւն , որ ձգելի է ըստ չափու լայնութեան լուսանցիցն ։ Յերկոցունց թուանշանաց աստի՝ վերադիրն ունի ցուցանել զթղթերեսս պարտապանին . իսկ ստորինն զթիւ երեսաց պարտատեառն ։

ժգ . Ի փոխադրել անդ զմի մասն յիշատակագրութեան Օրհաշուին 'ի Մայրհաշիւն , պարտ է զեղեալ փոխադրութիւնն յայտ առնել նշանագծով ինչ , որով որոշեսցի փոխադրեալ մասն 'ի չփոխադրելոց անտի , որք տակաւին տանելի իցեն 'ի Մայրհաշիւն ։ Այսպիսի նշանագիծ մարթ է լինել ուղղաձիգ նշանս — , որ գծելի է 'ի ձախակողմն վերադիր պարտացուցակ թուոյն , և յաջակողմն կոյս ստորին պահանջացուցակ թուանշանին . որով յայտնի լինի ևս՝ թէ պարտապանն և պարտատէր յոր կողմն երեսաց գրեալ կայցեն ։ Զայսոսիկ լաւ ևս իմասցի ոք 'ի կանոնագրութիւնս Մայրհաշուին , զոր հանդերձեալ եմք առնել զկնի . առ ժամն 'ի բացայայտութիւն նախաւանդեալ կանոնաց օրհաշուին՝ կարգեսցուք զառաջարկութիւնս ինչ տուրևառ դիպուածոց . և յետոյ դիցուք զօրինակ դասաւորութեան նոցա 'ի մատեան օրհաշուին ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՏՈՒՐԵՒԱՌ ԴԻՊՈՒԱԾՈՑ

4 . Յունվարի . 1820 .

Ա . Վճարեցի Հեթմոյ Կլայեցւոյ դրամս ղշ , 1200 . 'ի նուազել զնախնի պահանջս նորա ։

---

12 . Փետրվարի ։

Բ . Վաճառեցի Նազարայ Մոկացւոյ 1000 , լիտր դահճէ . որոյ բոլորագումար արժէիցն է ղշ , 12600 ։ 'Ի գումարէ աստի վճարեաց ինձ դրամս՝ ղշ , 6600 ։ Իսկ վասն մնացեալ 6000 , ղշիցն ետ ինձ 900 , կանգուն Կտաւ՝ ըստ դաշնագրութեանս ։

---

18 . Նորին ։

Գ . Վաճառեցի Ատոմայ Պնուենեան 1500 , լիտր Շաքար . բոլորագումար արժէիցն է ղշ , 3000 ։ 'Ի գումարէ աստի զմի բաժինն հատոյց ինձ արծաթադրամ՝ ղշ , 1000 ։ Վասն երկրորդ բաժնին ետ ինձ 150 , լիտր Մեղրամոմ . իսկ զմնացեալ երրորդ բաժինն հատոյց 40 , լիտր Մետաքսիւ՝ ըստ դաշնագրութեան մերում ։

(1) ՕՐՀԱՇԻՒ

1820. Զմիւռնիա ։

| | | ղշ | փր |
|---|---|---|---|
| | 4. Յունվարի ։ | | |
| 2/1 | Հեթում Կլայեցի ։ Առ Գրամարկղն ղշ, 1200. որ վճարեցաւ ՚ի նուազել զպահանջս նորա . . . . . . . . . . . . . . . . | 1200 | — |
| | 12. Փետրվարի ։ | | |
| 1/3 | Գրամարկղ ։ Առ Մթերս Գահվէի՝ ղշ, 6600. զի վաճառեցաւ Բաղդասարայ Մոկացւոյ 1000, լիտր գահվէ՝ ՚ի գին 12600 ղշից. զոր ՚ի վճարել՝ ըստ մասին ետ ինձ դրամ 6600, ղշ ։ Իսկ վասն մնացեալ 6000, ղշից ետ ինձ 900, կանգուն Կտաւ . . . . . . . . . | 6600 | — |
| 4/3 | Մթերք Կտաւոյ ։ Առ Մթերս Գահվէի՝ ղշ, 6000. որ է գին 900, կանգուն Կտաւոյն, զոր Բաղդասար Մոկացի ետ ինձ ՚ի վճարել զմնացեալ գին գահվէի. . . . . . . . . . . . . . . | 6000 | — |
| | 18. Նորին ։ | | |
| 1/5 | Գրամարկղ ։ Առ Մթերս Շաքարի ղշ, 1000. զի վաճառեցաւ Առամայ Գնունեան՝ 1500, լիտր շաքար, ՚ի գին 3000, ղշից. յորոյ մի մասն վճարեցաւ ինձ դրամ՝ ղշ, 1000 ։ Վասն երկրորդ բաժնին տուան ինձ 150, լիտր մեղրամոմ ։ Իսկ վասն երրորդին ընկալայ 40, լիտր մետաքս . . . . . . . . . . . . . . . . . . | 1000 | — |
| 6/5 | Մթերք Մեղրամոմոյ ։ Առ Նախագրեալն՝ ղշ, 1000. որ է գին 150, լիտր մեղրամոմոյ, զոր փոխանակեցի ընդ շաքարին՝ ըստ վերոգրելոցդ. | 1000 | — |
| 7/5 | Մթերք Մետաքսի ։ Առ Նախագրեալն՝ ղշ, 1000. որ է գին 40, լիտր մետաքսին փոխանակելոյ ընդ շաքարի, ըստ վերոգրելոցդ . . | 1000 | — |

իզ. ՚Ի նախակարգեալ Օրհաշուիս առընթեր յիշատակագրութեանց թէպէտ նշանակեալ կան թղթահամարք Մայրհաշուին, բայց չէր եդեալ առ նոսա փոքրիկ նշանագիծն, զոր կանխեցաք վերագոյնդ (իզ). զի այնպէս համարին՝ որպէս թէ տակաւին չեն փոխադրեալք ՚ի Մայրհաշիւն. վասն որոյ և զանց արարաք ՚ի ժամուս մինչև ցկարգել զեղանակ փոխադրութեան ։ Այսանօր յաւուր նորավարժից կամելով բացայայտել զկարգ և զպատճառ վերոգրեալ յիշատակագրութեանց օրհաշուին, մի առ մի մեկնաբանեսցուք յառաջիկայդ ։

ին. Առաջին գիպուած առաջարկութեանն յայտ առնէ զհատուցումն ինչ 1200, ղշ դրամոց՝ առ Հեթում Կլայեցի ՚ի պակասեցուցանել զգումար պահանջիցն զոր ունի ։ Գործողութիւնս հատուցման դասելի է ՚ի կարգս պարզ տուրևառութեանց (Ե), որք ՚ի ներքս ածեն զերկին փոփոխութիւնս ևեթ (ա). մի՝ զի հանաւ ՚ի Գրամարկղէ 1200, ղշ, և երկրորդ՝ զի տուաւ ՚ի ձեռս Հեթմայ Կլայեցւոյ. վասն որոյ պարտապան գրելի է Հեթում, որ եառ զդրամսն.

և պարտատէր Դրամարկղն, ուստի բարձեալ եղև դրամն (ժը̃)։ Այս սակս յիշատակագրեցաւ յՕրհաշուին 'ի 4. Յունվարի. * Հեթում Կլայեցի ‖ Առ Դրամարկղն ղր̃, 1200. որ վճարեցաւ 'ի նուազել զպահանջս նորա ... ղր̃, 1200, —‖։ 'Ի ձեռն այսր յիշատակագրութեան ոչ միայն Հեթում Կլայեցի պարտապան լինի, և Դրամարկղն պարտատէր 1200, ղր̃ի, այլև 'ի յայտ գայ պատճառ հատուցմանն, որ է նուազել զգումար պահանջից նորա, և ոչ զողջոյն պահանջման վճարել։

ԻԷ. Յերկրորդ դիպուածն առաջարկի՝ թէ 'ի 1820, 'ի փետրվարի, 12, եղեալ է վաճառումն 1000, լիտր գահվէի, 'ի գին 12600, ղր̃ դրամոց՝ առ Բաղդասար Մոկացի. իսկ նա ըստ մասին վճարեալ է դրամ 6600, ղր̃. և ըստ մասին տուեալ է 900, կանգուն կտաւ փոխան 6000, ղր̃ մնացեալ դրամոցն։ Արդ՝ եթէ տուրևառս լինէր լոկ տուչութեամբ դրամոց, կամ փոխանակութեամբ կտաւոց, յայտ է՝ թէ դասելի էր 'ի կարգս պարզ տուրևառութեան. և 'ի մէջ բերէր զերկու փոփոխութիւնս ևեթ. այսինքն՝ զտուչութիւն 1000, լիտր գահվէին և զընդունելութիւն կամ լոկ դրամոց, և կամ լոկ կտաւոյն. բայց քանզի վաճառեալ գահվէն փոխանակեալ է կրկնատեսակ իրօք, որք ունին ընուլ զտեղի բոլորագումար գնոյ գահվէին, վասն որոյ տուրևառս համարի խառն՝ բովանդակելով յինքն զերկուս պարզ մասունս. մի՝ զի 'ի մթերից վաճառողին պակասի այնչափ կշիռ գահվէից, որոյ արժէքն հաւասարի 6600, ղր̃ դրամոց. և այն արժէք մտեալ է 'ի դրամարկղն։ Երկրորդ՝ զի 'ի նոյն մթերից վաճառողին դարձեալ պակասին այնչափ կշիռք գահվէից, որոց արժէք հաւասարին 6000, ղր̃ դրամոց. և փոխան դրամոցս ընկալեալ են 900, կանգուն կտաւք։ Արդ՝ որովհետև կրկին մասունք են 'ի տուրևառութեանս, վասն որոյ կրկնակի յիշատակագրութեան կարօտի. և 'ի լինել կրկին յիշատակագրութեանց, հարկաւ պէտ գան քառեակ փոփոխութիւնք (ա̃). Նմին իրի 'ի յիշատակագրութիւնս օրհաշուին նշանակելի են երկու պարտապանք, և երկու պարտատեարք։ Դրամարկղն լինի պարտապան վասն ընկալեալ դրամոց. և Մթերք գահվէին պարտատէր վասն այնր արժէից գահվէին՝ որ եմուտ 'ի դրամարկղն։ Նոյնպէս Մթերք կտաւոյն լինի պարտապան, և Մթերք գահվէին պարտատէր վասն մնացեալ մասին արժէից նորա (ժը̃)։ Սորին սակս առաջին յիշատակագրութիւն այսր տուրևառութեան կարգեցաւ յօրհաշուին՝ այսպէս. * 12. փետրվարի։ Դրամարկղ ‖ Առ Մթերս Գահվէի ղր̃, 6600։ Որ յայտ առնէ՝ թէ Դրամարկղն պարտապան է, և Մթերք Գահվէի պարտատէր (ժթ̃). զի եդան 'ի Դրամարկղն դահեկանք, 6600. և բարձան 'ի Մթերից գահվէին այնչափ լտերք, որոց արժէք հաւասարին դրամոց մտելոց 'ի դրամարկղն։ Իսկ յետին բանք յիշատակագրութեան՝ թէ * վաճառեցաւ Բաղդասարայ Մոկացւոյ 1000, լիտր, և այլն ‖, են կարևոր գիտելիք, որք յայտ առնեն զպատճառ պարտեաց և պահանջից տուրևառութեանն (իա̃). Նորին աղագաւ մանրամասն բանիւք գրեալ կայ, զի յայտնեսցի՝ թէ խառն տուրևառք են։

Երկրորդ յիշատակագրութիւն օրհաշուին առ նոյն դիպուած տուրևառութեան կարգեցաւ այսպէս. * Մթերք Կտաւոյ ‖ Առ Մթերս Գահվէի ղր̃, 6000, և այլն ‖։ Որ յայտ առնէ՝ թէ Մթերք կտաւոյ պարտապան է առ նոյն մթերս գահվէի. զի 'ի մթերանոցէ անտի գահվէին բարձան 6000, ղր̃ դրամոց արժողութիւնք, և եդան 'ի մթերանոց կտաւոյ (ժը̃). վասն որոյ մթերք կտաւոյ լինի պարտապան, և մթերք գահվէի պարտատէր։ Յասացելոցս յայտ է՝ թէ յայսմ տուրևառութեան փակին երկու պարտապանք. այսինքն՝ Դրամարկղ և Մթերք Կտաւոյ. իսկ պարտատէր՝ միայնակ Մթերք Գահվէի, որ ունի զերկու պահանջս, զմին 'ի Դրամարկղէ, և զերկրորդն 'ի Մթերից Կտաւոյն։

ԻԸ. Յերրորդ դիպուածն առաջի դնի՝ թէ 'ի 1820, 'ի փետրվարի 18, վաճառեալ է 1500, լիտր շաքար՝ 'ի գին 3000, ղր̃ դրամոց։ Եւ թէ 'ի հատուցանել զայդ գումար դրամոց եռամամն փոխարինութեամբ, զմին 'ի մասանց վճարեալ է դրամ 1000, ղր̃. և փոխան երկրորդ բաժնին տուեալ է 150, լիտր Մեղրամոմ. իսկ վասն երրորդին փոխանակեալ է 40, լիտր Մետաքս։ 'Ի տուրևառս յայս քանզի փակին երրեակ այլևայլ մասունք, նմին իրի կարօտին և երրեակ յիշատակագրութեանց (գ̃), և նոցունց հարկաւ պէտ գան վեցեակ փոփոխութիւնք (զ̃) բացայայտելիք 'ի յիշատակագրութիւնս։ Յայն սակս յառաջին հատուած յիշատակագրութեան օրհաշուին եդեալ կայ. * 18. Նորին. (այն է փետրվարի) Դրամարկղ ‖ Առ Մթերս Շաքարի ղր̃, 1000, և այլն ‖, որ յայտ առնէ՝ թէ Դրամարկղն պարտապան է վասն յինքն ընկալեալ դրամոց. և թէ Մթերք Շաքարին պարտատէր է, զի պակասեցաւ 'ի նմանէ գումար կշռոց ըստ չափու արժողութեան նոյն դրամոց (ժը̃)։ Յերկրորդ հատուած յիշատակագրութեան նշանակեալ կայ. * Մթերք Մեղրամոմոյ ‖ Առ Նախագրեալն (այսինքն՝ առ մթերս շաքարի) ղր̃, 1000, և այլն ‖. որ յայտ առնէ՝ թէ Մթերք Մեղրամոմոյ պարտապան է. և Մթերք Շաքարի պար-

տանէր. զի 'ի շաքարէն փոխադրեցաւ 'ի մեղրամոմն։ Յերրորդ հատուածն նշանակեալ կայ.
* Մթերք Մետաքսի || Առ Նախադրեալն, (այսինքն՝ առ մթերս շաքարի) ԴԾ, 1000. և այլն |.
որ յայտ առնէ՝ թէ Մթերք Մետաքսի պարտական է, և Մթերք Շաքարին պարտատէր 1000,
ԴԾ դրամոց. որպէս յայտ է 'ի վերոյգրելոցդ։

## Կարգ և Կանոն Մայրհաշուի Մատենին։

ԻԸ. Զյիշատակագրութիւնս օրհաշուին յետ 'ի կարգի դնելոյ ըստ նախագրեալ կանոնաց, պարտ է մի առ մի փոխադրել զնոսին յիւրաքանչիւր որոշեալ տեղիս Մայրհաշուին։ Յիշատակագրութիւնք մատենիս ըստ ամենայն մասանց պարտին նոյն լինել ընդ յիշատակագրութիւնս օրհաշուին, այլ ոչ նովին կարգաւ դասաւորելիք. և զորօրինակ համօրէն յիշատակագրութիւնք օրհաշուին փակեն յինքեանս զպարտական և զպարտատէր (ԻԷ), նոյնպէս և 'ի մայրհաշւին առանց այլայլութեան նշանակելի են նոյն պարտիք և նոյն պահանջք, որ ինչ միանգամ գրեալ կայցէ յօրհաշուին։

ԻԹ. Զինչ և իցէ առանձնական անուն, եթէ մարդոյ՝ և թէ մթերից կամ կալուածոց, որ 'ի մատեան օրհաշուին նշանակեալ կայ իբր պարտական կամ պարտատէր, հարկ է զի և 'ի մատեան մայրհաշուին ունիցի զորոշ և զառանձնական տեղի՝ կրկին երեսօք. յորոց 'ի միումն գրեսցին պարտիք, և 'ի միւսումն պահանջք նորա։ Երկոքին երեսքն միանգամայն առեալք՝ բովանդակիչք հաշուի իւրաքանչիւրոյն առանձին, սովոր են անուանել Հաշուեմասն [1]. այսինքն՝ բաժին կամ հատուած հաշուի միոյ ուրուք։

Լ. Երկոքին երեսքն՝ յորս գրելի են պարտիք և պահանջք ուրուք, պարտին ունել զզանազան գաւազանս 'ի նշանակել զտարին և զամսաթիւսն. զգումար դահեկանաց և զմանրափողոց։ Վասն որոյ 'ի ձախակողմն առ հասարակ ամենայն երեսաց վերուստ 'ի վայր գծելի է լայն գաւազան իբր լուսանցք, յորում նշանակեսցի ամն և ամսաթիւն. զի յայս մատեան թուականք տարւոյն և ամսոյն զետեղելիք են առընթեր յիշատակագրութեանց, և ոչ 'ի միջավայր երեսացն՝ ըստ որում աւանդեցաւ վասն օրհաշուին (ԺԵ), զորոյ զպատճառն ծանիցես զկնի (ԼԳ)։ Իսկ յաջակողմն կոյս նոցին երեսաց գծելի են չորք գաւազանք անձկագոյնք քան զձախակողմեանն. յորոց 'ի մին գրելի են Մանրափողք կամ [illegible]. յերկրորդն Դահեկանք կամ ԴԾք. յերրորդն Թղթահամարք մայրհաշուին, և 'ի չորրորդն Թղթահամարք օրհաշուին։ Իսկ յայն երեսս ուրանօր գրելի իցեն մթերք ստացուածոց, պարտ է յաւելուլ և զհինգերորդ գաւազան առընթեր գաւազանի օրհաշուին, յորում նշանակեսցին Կշիռք կամ Չափք մթերից. որպէս ունիս տեսանել յիւրում տեղւոջ (ԽԹ)։

ԼԱ. Կարէ պատահել, զի վաճառական ոք արասցէ տուրևառս ընդ ումեք օտարականի, և հարկին ստիպեսցէ հատուցանել զպարտիս՝ կամ ընդունել պահանջս օտարազգի դրամովք [1]։ Յայսպիսի դիպուածս պարտ է 'ի Մայրհաշւին յաւելուլ և զայլ գաւազան մի առընթեր դահեկանաց կամ ԴԾից, ուր նշանակեսցին գումարք այնպիսի դրամոց, որոց յիշատակագրութիւնն 'ի հաշուետումարս կարևոր է վաճառականին. ըստ որում հանդերձեալ եմք ասել յերրորդ մասին առաջիկայ գործոյս (ՃԸ)։

ԼԲ. Ի ձախակողմեան վերնածայս երեսաց մայրհաշուին՝ մերձ 'ի լուսանցսն պարտ է նախ խոշորագիր գրոշմել զանուն առն կամ զմթերից, որոց հաշիւքն ունին նշանակիլ յերկոսին երեսս յայնոսիկ. զորօրինակ՝ ՀԵԹՈՒՄ ԿԼԱՅԵՑԻ. ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ. և այլն։ Յետոյ 'ի նոյն երես 'ի գլուխ գաւազանացն դահեկանաց և մանրափողոց՝ մակագրելի է բառս ՊԱՐՏԻՔ. և ապա 'ի միւս երեսն հանդիպակողման, այն է՝ յաջակողմն կոյս 'ի գլուխ գաւազանացն մակագրելի է բառս ՊԱՀԱՆՋՔ։ Ի մակագրութենէ բառիցս ինքնին 'ի յայտ գայ, նախ՝ թէ հաշիւք երկոցունց երեսացն այնոցիկ են միոյ ուրուք կամ մթերից, որոց անունն նշանակեալ կայ 'ի վերին ծագ երեսացն. և երկրորդ՝ թէ 'ի ձախակողմեան երեսն գրելի են միայն պարտիք. իսկ յաջակողմն՝ միայն պահանջք։

ԻԹ. (1) ՀԱՇՈՒԵՄԱՍՆ։ Իտալ. Partita. Փառթիթա։ Գաղ. Գըթա։

ԼԱ. (1) Օտարազգի դրամք կոչին, որք ոչ են սեփական տէրութեան և քաղաքին, յորում բնակի վաճառականն. զի իւրաքանչիւր թագաւորութիւն ունի զիւր առանձին դրամս՝ որովք վարին ժողովուրդք այնր թագաւորութեան։ Բայց կան և դրամք ինչ արտաքին տէրութեանց, որք սովոր են յամենայն տեղիս վարիլ 'ի տուրևառս. զորոց զցուցակն գտցես 'ի վերջ գրոցս։

Մակագրեալ անուամբս ՀԵԹՈՒՄ ԿԼԱՅԵՑԻ. կամ ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ, և այլն. Եթէ նշանակեսցին առանց յաւելուածոյ անուան քաղաքի կամ այլոց բառից, յայտ առնեն՝ թէ Հեթում 'ի նմին քաղաքի է, յորում լինի հաշուետումարն. նոյնպէս և Մթերք գահվէին՝ նորին իսկ վաճառականի է, որոյ է և հաշուետումարն։ Իսկ եթէ համարեսցի՝ թէ Հեթում բնակի 'ի Նիկոմիդիա, և Մթերք գահվէին իցեն Գեղամայ Տարոնացւոյ, յայնժամ զառաջինն պարտ է նշանակել այսպէս. * ՀԵԹՈՒՄ ԿԼԱՅԵՑԻ 'Ի ՆԻԿՈՄԻԴԻԱ |. Իսկ զերկրորդն այսպէս. * ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ ԳԵՂԱՄԱՅ ՏԱՐՈՆԱՑԻՈՅ |. զորոց զպէսպէս օրինակս ունիս տեսանել յերկրորդ և յերրորդ մասին առաջիկայ գործոյս։

ԼԵ. Բազում 'ի վաճառականաց զթուական տարւոյն և զամսոյն փոխանակ դնելոյ 'ի լուսանցսն (Ը), սովոր են մակագրել 'ի ճակատ Մայրհաշուին՝ ըստ այսմ կարգի, զոր վերագոյնդ աւանդեցաք յաղագս Օրհաշուի Մատենին (ԺԶ). սակայն 'ի կրկնութենէ թուականաց, զոր հարկաւ պարտ է առնել յիւրաքանչիւր յիշատակագրութիւնս, լինի վայրապար կորուստ անգիր տողից. և երեսք Մայրհաշուին սակաւ բանս բովանդակեն։ Նա և այլք՝ որք զթուական տարւոյն ևեթ դնեն 'ի ճակատու, իսկ զամսաթիւն 'ի լուսանցս։ Կան և այլ մանր պէսպիսութիւնք 'ի գործածութեան հաշուեմատենից առ իւրաքանչիւր վաճառականս, որպիսի է և այն՝ զի մակագրութիւնք անուանց հաշուեմասինն դնին 'ի ճակատու ընդ մէջ երկուց երեսացն, և ոչ 'ի վերնածայր ձախակողման երեսին, ըստ որում աւանդեցաք վերագոյնդ (ԼԶ)։ Բայց այսպիսի զանազանութիւնք ոչինչ փոխեն կարգի և կանոնացն, որք պահելի են 'ի հաշուետումարս։

ԼԶ. 'Ի մատեան Մայրհաշուին որովհետև երկոքին երեսք սեփականեալ են միում ումեք՝ կամ մարդոյ, և կամ մթերից (ԻԹ). վասն որոյ հարկ է և երկոցունց երեսաց ունել զմի և զնոյն թղթահամարս. որք և նշանակելի են 'ի վերին ծագս թղթերեսաց. որովք ընդ բանիլ մատենին՝ ակներև 'ի յայտ գայ, թէ բովանդակ գրեալքն յայն երկոսին երեսս՝ անկ են միում ումեք, որ մակագրեալ կայ 'ի վերին կողմն։

ԼԷ. Զյիշատակագրութիւնս Օրհաշուին կամելով փոխադրել 'ի Մայրհաշիւն, պահելի է այս կարգ։ Դիցուք թէ յօրհաշուի մատենին՝ յերես, 1. 'ի 4, Յունվարի գրեալ կայ. * Հեթում Կլայեցի || Առ Դրամարկղն ՌՄ, 1200. որ վճարեցաւ 'ի նուաղել զպահանջս նորա . . . ՌՄ, 1200 |։ Յիշատակագրութիւնս յայտ առնէ՝ թէ Հեթում պարտական է, և Դրամարկղն պարտատէր 1200, ՌՄից, որք բարձեալ են 'ի Դրամարկղէն, և տուեալք 'ի ձեռս Հեթմոյ (ԺԹ)։ Արդ՝ պարտ է նախ 'ի մատեան Մայրհաշուին գտանել զհաշուեմասն Հեթմոյ, (զոր համարեսցուք՝ թէ զետեղեալ կայ յերես, 2.) ուր 'ի ձախակողման վերնածագն գրեալ կայ անունն * ՀԵԹՈՒՄ ԿԼԱՅԵՑԻ |, և հանդէպ նորուն 'ի գլուխ գաւազանացն՝ բառս ՊԱՐՏԻՔ, ըստ ասացելոյս 'ի վերոյ (ԼԶ)։ 'Ի գտանել անդ զհաշուեմասն Հեթմոյ, դնելի է 'ի լուսանցսն նախ՝ թուական տարւոյն և ամսաթիւն. յետոյ 'ի բաց թողեալ զանունն ևեթ, (որ նշանակեալ կայ 'ի ճակատու), մնացեալ մասն այնր յիշատակագրութեան գաղափարելի է 'ի տեղւոջն՝ այսպէս. * Առ Դրամարկղն ՌՄ, 1200, որ վճարեցաւ և այլն |։ Յաւարտել ամբողջ յիշատակագրութեանն՝ ընդ առաջ ելանէ նախ գաւազանն, որ 'ի պէտս թղթահամարոյ Օրհաշուին (Ը). և զի յիշատակագրութիւնս գրեալ կայ անդ յառաջին երեսն, վասն որոյ նշանակելի է թիւս՝ 1. որով 'ի յայտ գայ՝ թէ այն բանք գտանին 'ի նոյն երես Օրհաշուին։ Յետ այնր ընդ առաջ ելանէ երկրորդ գաւազանն, որ 'ի պէտս թղթահամարոյ Մայրհաշուին (Ը). յայն գաւազան նշանակելի է թղթահամար Դրամարկղի, որում պարտական է Հեթում. և համարեսցուք՝ թէ հաշուեմասն Դրամարկղի գրեալ կայցէ յառաջին երես Մայրհաշուին, վասն որոյ նշանակելի է 'ի գաւազանն յայն՝ թիւս 1. որով յայտնի լինի թղթահամար և հաշուեմասն Դրամարկղի։ Յետ սորա յաջորդեն գաւազանք դահեկանաց և մանրափողոց, յորս նշանակելի են վճարեալ դրամքն որ է ՌՄ, 1200. —։

Արդ՝ համարեա՛ թէ յիշատակագրութիւնս ըստ կարգի նախագրելոյն նշանակեալ կայցէ 'ի ձախակողման երես՝ 2, հաշուեմասին Հեթմոյ. 'ի մի հայեցուած աչաց հասու լինի ոք, թէ զիարդ Հեթում պարտական իցէ 1200, դահեկանաց. քանզի 'ի վերին ճակատու գրեալ կայ ՀԵԹՈՒՄ ԿԼԱՅԵՑԻ. և հանդէպ նմին՝ ՊԱՐՏԻՔ. յետ որոյ 'ի յաջորդ տողն տեսանի գրեալ. * 1820. Յունվար, 4. Առ Դրամարկղն ՌՄ, 1200, որ վճարեցաւ 'ի նուաղել զպահանջս նորա |։ Յաւարտել յիշատակագրութեանս գտանես զթղթահամար Օրհաշուին, 1. ապա զՄայրհաշուին, 1. որ է թղթերես Դրամարկղի. և յետ այնր զգումար դրամոյն, ՌՄ, 1200։

Յետ կատարելոյ զփոխադրութիւն պարտեացն Հեթմոյ, դարձ անդրէն 'ի մատեան Օրհաշուին առ նոյն յիշատակագրութիւն Հեթմոյ. և անդ 'ի ձախակողմն պարտացուցակ թուականին

որ եդեալ կայ 'ի լուսանցսն առ 'ի յայտնել զհաշուեմանն Հեթմոյ, ձգեալ զնշանագիծն փոքրիկ, զորմէ կանխեցաք յառաջագոյն (ԻԳ). 'ի ձեռն այնր նշանագծի յայտնի լինի, թէ յիշատակագրութիւն Հեթմոյ փոխագրեալ է 'ի Մայրհաշիւն. և թէ պարտիք նորա գրեալ կան 'ի ձախակողման երեսն:

ԼԶ. Ի ձեռն նախագրեալ կանոնիս լինի միայն փոխագրութիւն պարտեացն Հեթմոյ. այլ ոչ պահանջից Դրամարկեղ. վասն որոյ պարտ է վերստին դառնալ 'ի Մայրհաշիւն յերես, 1. (ուր համարեցաք զետեղեալ զհաշուեմանն Դրամարկեղ, ԼԵ). և անդ յաջակողման երեսն, ուր գրեալ կայ ՊԱՀԱՆՋՔ, գնելի է 'ի լուսանցսն նախ՝ Ամսաթիւն. և ապա համդէպ նորուն յիշատակագրելի են բանք Օրհաշուին այսպէս. *'Ի Հեթմոյ Կլայեցւոյ ՊԴ, 1200, որ վճարեցաւ 'ի նուազել զպահանջս նորա|: Յետ գրելոյ զայս՝ նշանակելի են և թղթահամարք յիւրաքանչիւր գաւազանն՝ Օրհաշուին, 1. և Մայրհաշուին՝ երես, 2. (ուր համարեցաք զետեղեալ զհաշուեմանն Հեթմոյ, ԼԵ). յետոյ պարտ է նշանակել և զդրամն յիւրեանց գաւազանս: Ապա դառնալի է վերստին յօրհաշիւ մատեանն 'ի գնել զփոքր նշանագիծն առընթեր պահանջացուցակ թուոյն՝ որ 'ի լուսանցս օրհաշուին (ԻԳ). գծելով զայն յաջակողմնկոյս. որով ծանուցի թէ և պահանջք Դրամարկեղ փոխագրեալ են 'ի Մայրհաշիւն:

Արդ յիշատակագրութիւնս փոխագրեալ յաջակողման երես, 1. յայտ առնէ՝ թէ 'ի 4. Յունվար ամսոյ, 1820. Դրամարկղն պահանջս ունի 'ի Հեթմոյ Կլայեցւոյ դահեկանս, 1200. զի տուեալ է 'ի նուազել զհաշիւ պահանջից նորա. և թէ հաշուեմանն Հեթմոյ գրեալ կայ յերես, 2:

ԼԷ. Ասացաւ վերագոյնդ (ԻԹ) թէ յիշատակագրեալքն յՕրհաշուին, եթէ մարդիկ, և եթէ մթերք, որք իբր պարտապանք կամ պարտատեարք նշանակեալ իցեն 'ի նմա, պարտին 'ի Մայրհաշիւն ունել զիւրեանց առանձնական հաշուեմանն կրկին երեսօք. բայց մարթ է պատահել, զի տուրևառութիւնն ընդ ումեք՝ իցէ 'ի մանունս, և հաշիւքն համառօտք 'ի սակաւ տողս բովանդակեալք. յայնժամ չէ օրէն զամբողջ երկոսին երեսս թղթոյն սեփականել նմա՝ և անգիր թողուլ, այլ մարթ է զետեղել 'ի նմա և զհաշիւ այլոյ ուրուք կամ զմթերից, ձգելով նախ բաժանարար գիծս ծագէ 'ի ծագ ընդ մէջ երեսացն՝ իբր խտրոց և անջրպետ 'ի հատուածել զվերին հաշուեմանն 'ի ստորնոյն. և յետոյ ընդ գծիւն նշանակել զանուն գրելի իրացն (ԼԸ). որպէս և 'ի գլուխ գաւազանացն դրամոց, զերկոսին բառս՝ պարտիք և պահանջք, բաց 'ի թղթահամարոյն՝ որ կարէ վարիլ և 'ի պէտս ստորադիր հաշուեմանսն:

ԼԸ. Յիշատակագրութիւնք Օրհաշուին՝ որք պարագրեն յինքեանս զպարտապան և զպարտատէր (ԻԸ), 'ի փոխագրել իւրեանց 'ի Մայրհաշիւն, ունին մնալ նոյն վիճակաւ և յերկաքանչիւր երեսս Մայրհաշուին. իբր զի 'ի կողմն պարտեաց նշանակելի են ամբողջ բանք յիշատակագրութեանց Օրհաշուին, բաց 'ի մակագրեալ անուանէ անտի մարդոյ կամ մթերից, որ եդեալ կայցէ 'ի վերին ճակատու. և զի 'ի գլուխ գաւազանացն ևս գրեալ կայ ՊԱՐՏԻՔ, ինքնին ցուցանէ՝ թէ վերին մակագրեալ անունն՝ պարտիս ունի, կամ պարտապան է այնմ, որ գրեալ կայ 'ի ներքոյ. յայս սակս անուանք պարտակողման յիշատակագրութեանց հարկաւ նշանակելի են 'ի տրական հոլով: Զնոյն կարգ պարտ է պահել և 'ի կողմն պահանջից. միայն անուանք նշանակելիք 'ի յիշատակագրութիւնս պահանջակողման՝ փոխելի են 'ի բացառական հոլով. որով 'ի յայտ գայ՝ թէ մակագրեալ անունն՝ պահանջս ունի 'ի ներքոյգրեալ անուանէն:

ԼԹ. Ասացաք կանխաւ (ԺԹ), թէ բացառական հոլովն յայտ առնէ զպարտիս՝ իսկ տրականն զպահանջս: Եւ դարձեալ կանոնագրեցաք վերագոյնդ (ԼԸ), թէ 'ի ձախակողման երես Մայրհաշուին, ուր նշանակեալ կայ Պարտիք, յիշատակագրելի անուանք պարտին լինել 'ի տրական հոլով. իսկ յաջակողման երես, որ է Պահանջիցն, 'ի բացառական հոլով: Վասն զի երկոքին երեսքն սեփականեալ գոլով միում անձին կամ մթերից, երբ 'ի ձախակողմն գրեալ կայ բառս ՊԱՐՏԻՔ, հարկաւ պէտք են յայտնել 'ի յիշատակագրութեանն՝ թէ որո՞ւմ ումեք պարտիցի. վասն որոյ գնելի է 'ի տրական հոլով՝ այսպէս: Առ Հեթում: Առ Դրամարկղն: Առ Մթերս Դահվէի, և այլն. որ է ասել՝ թէ մակագրեալ անուն մարդոյ կամ մթերից՝ պարտիս ունի այսմ, այնմ, և այլն: Նոյնպէս և յաջակողման երեսն՝ քանզի գրեալ կայ ՊԱՀԱՆՋՔ, հարկ է 'ի ստորին յիշատակագրութեան յայտնել՝ թէ ուստի՞ և յորո՞ց ունիցի պահանջս. վասն որոյ նշանակելի է 'ի բացառական հոլով՝ այսպէս. 'Ի Հեթմոյ: 'Ի Դրամարկեղէ: 'Ի Մթերից դահվէին, և այլն. որ է ասել՝ թէ մակագրեալ անունն՝ պահանջս ունի 'ի սմանէ, 'ի նմանէ:

Խ. Յիշատակագրութիւնք Մայրհաշուին եթէ կարգաւորեսցին ըստ նախասահմանեալ կանոնացս, անշփոթ և ակներև 'ի յայտ գան պարտիք և պահանջք իւրաքանչիւրոցն: Զորօրինակ՝

կամելով իմանալ զհաշիւ ուրուք, բաց զհաշուեմատեան անուան նորա, և հայեցեալ 'ի պարտակողմն երեսն՝ գաղափարեսցես անտի զգումար պարտեացն. յետոյ հայեցեալ և 'ի պահանջակողմն հանդիպակաց՝ առցես և զգումար պահանջիցն. ապա յերկոցունց գումարաց անտի զփոքրն հանցես 'ի մեծէն, և որ ինչ մնայ՝ այն է պարտիք և կամ պահանջք հաշուեմատենին։ Եթէ 'ի ձախակողմեան երեսն իցէ մեծ գումարն, պարտիք կոչի. իսկ եթէ յաջակողմեանն՝ պահանջք։

Արդ՝ որովհետև տարակոյսք և քննութիւնք 'ի Մայրհաշիւս՝ առաւելապէս սովոր են լինել 'ի վերայ դրամաթիւ գումարաց, և դուն ուրեք 'ի վերայ բանից յիշատակագրութեան. վասն որոյ կարևոր արթնութեան և զգաստութեան պէտք են 'ի փոխագրելն զգումարս Օրհաշուին 'ի Մայրհաշիւն. բայց զբանս ընդարձակ յիշատակագրութեանց նորա՝ մարթ է ամփոփել 'ի սակաւ տողս Մայրհաշուին առ չկորուսանելոյ վայրապար զգատարկ տեղիս. սակայն և այնմ ամփոփման պարտ է լինել չափաւոր, զի մի՛ սակս կարի համառօտութեան նսեմ և անիմանալի մնասցեն իմաստք բանիցն, յորմէ ստիպեսցին փոյթ ընդ փոյթ դիմել յՕրհաշիւն, ըստ որում սովորութիւն է բազմաց։

խա. Յորժամ թուական տարւոյն դնի առընթեր միում 'ի յիշատակագրութեանց մայրհաշուին, չէ պարտ 'ի նոյն երես կրկնել զայն մինչև ցաւարտ տարւոյն կամ երեսացն. այլ ընդ նովին թուականաւ հետզհետէ նշանակելի են ամիսքն և ամսաթիւք։ Նոյնպէս չէ օրէն կրկնել և զամիսն՝ որպէս և զամսաթիւն, եթէ յետագայ յիշատակագրութիւնք կցորդակիցք իցեն նախընթացից. և կամ 'ի նմին ամսեան և 'ի նոյն աւուր իրագործեալք։ Սակայն եթէ ամիսն նոյն իցէ և պատկեր աւուրն այլ, պէտք են նշանակել միայն զամսաթիւն։

խբ. 'Ի յիշատակագրութիւնս Օրհաշուին ստէպ պատահէ, զի անուն ուրուք կամ ձեռից պատճառաւ յիշատակութեան 'ի վերին հատուածի, ոչ կրկնի ստորև. այլ սովորութիւն է կոչումն առնել՝ այսպէս. * 'ի Նախագրելոյն (կամ) Առ Նախագրեալն|։ Այսպիսի բառք խնդրեն զուշադրութիւն 'ի փոխագրել անդ զյիշատակագրութիւնս օրհաշուին 'ի մայրհաշիւն. զի եթէ յարմարին նախընթաց բանից մայրհաշուին, մարթ է գաղափարել զնոսին որպէս և են. ապա թէ ոչ՝ պարտ է բացայայտ գրել զանունն, զի աներկբայ լինիցի՝ թէ որոյ իցեն պարտիքն և կամ պահանջք։ Այսմ ընդհակառակ՝ եթէ յօրհաշիւ մատենին յանուանէ նշանակեալ կայցէ պարտապան ոք կամ պարտատէր, և հարկն ստիպեսցէ 'ի յետին տող երեսաց մայրհաշուին համառօտել զյիշատակագրութիւնն զայն, պարտ է հայիլ՝ զի թէ նոյն անուն գրեալ կայցէ 'ի վերին տող, մարթ է համառօտութեան աղագաւ դնել * 'Ի Միևնոյն (կամ) Առ Միևնն|. թէպէտև չիցէ այնպէս գրեալ յօրհաշուին։

խգ. 'Ի հմտութիւն ուսման նորավարժից պատշաճ համարիմ դնել աստանօր զկանոն ինչ ընդհանրական՝ իբր առած մնատելի, որ սովոր է վարիլ և յայլ գիտութիւնս։ 'Ի հաշուետումար մատեանս զինչ և իցէ պարտիք և պահանջք հաշուեմատեանց, եթէ մարդոյ՝ և թէ ձեռից, պարտին մնալ միշտ նոյն, թէև յաւելցի 'ի նոսա այլ գումար. միայն թէ վերայաւելուածն լինիցի ոչ միայն 'ի պարտակողմն, այլև 'ի պահանջակողմն։ Օրինակ՝ եդեալ թէ բոլորագումար պարտիք Պետրոսի՝ իցեն 8000, դահեկանք. նոյնպէս և պահանջքն դահեկանք, 8000. յորոց յայտ է՝ թէ պարտիքն հաւասար են պահանջից. և չիք 'ի նոսա առաւելութիւն կամ նուազութիւն։ Արդ՝ եթէ յայն երկոսին գումարսն յաւելուցումք զերկուս այլ հաւասարաչափ գումարս 1200, դահեկանաց, երկոքին ևս մնան դարձեալ հաւասարագումարք. զի 'ի վերայ 8000, դահեկանաց յաւելեալ 1200, դահեկանք, լինին 9200։

Առ օրինակ։ Դիցուք թէ պարտիք Սմբատայ ժամանեն 'ի դահեկանս, 9000, իսկ պահանջքն 5000. եթէ զպահանջսն հանցուք 'ի պարտեաց, Սմբատ մնայ պարտապան 4000, դահեկանաց։ Արդ՝ 'ի վերայ նախկին պարտեաց և պահանջից Սմբատայ եթէ յաւելուցումք զհաւասարաչափ գումար ինչ 3000, դահեկանաց, յայնժամ պարտիքն ժամանեն 'ի գումար՝ 12000. իսկ պահանջքն 'ի դահեկանս, 8000։ Զայսոսիկ յետին գումարս եթէ հանցուք 'ի միմեանց, Սմբատ մնայ դարձեալ պարտապան 4000, դահեկանաց, որպէս յառաջն։ Դիտելիքս պիտանի են յոյժ և 'ի բազում դիպուածս կարևորք 'ի ստուգել զհաւաստին, և 'ի զատել զվրիպակն 'ի ստոյ։

խդ. 'Ի նախակարգեալ կանոնադրութիւնս (իէ և լը) յայտ արարաք, թէ առհասարակ յամենայն յիշատակագրութիւնս օրհաշուին անպատճառ ունին մտանել պարտապանն և պարտատէր, և թէ սորին վասն յիշատակագրութիւնք օրհաշուին 'ի փոխագրել իւրեանց 'ի մայրհաշիւն, լինին կրկնագիր. այսինքն՝ նոյն գումար դրամոց կրկնի յերկուս տեղիս. նախ՝ 'ի պարտիս այնր անձին՝ կամ ձեռից, որ պարտապանն է. և երկրորդ 'ի պահանջս այնր՝ որ պարտատէրն է և պահանջօղ դրամոց։ Նա և հա այս իսկ է պատճառն՝ զի 'ի հաւաքել զամ-

Նոյն գումարս պարտակողմանց՝ հարկաւ եղանի, համեմատ և հաւասար համօրէն գումարի պահանջակողմանց ։

Խն․ Բովանդակութիւն կանխագիր կանոնացդ՝ թէ զիարդ օրէն իցէ վարել 'ի մատեան Մայրհաշուին, հարկ համարիմ կրկնել աստանօր զնոյն օրինակն, զոր վերագոյնդ կարգեցաք վասն օրհաշուի մատենին ․ առ 'ի յետոյ փոխադրել զնոսին 'ի Մայրհաշիւն, որպէս զի նորավարժք կարասցեն անխռով խելամուտ լինել կարգի երկոցունց, և ուսանել զեղանակ փոխադրութեան 'ի միոյ մատենէ 'ի միւսն (*) ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՏՈՒՐԵՒԱՌ ԴԻՊՈՒԱԾՈՑ

4 ․ Յունվարի ․ 1820 ։

Ա ․ Վաճառեցի Հեթմոյ Կլայեցւոյ դրամս ղշ, 1200 ․ 'ի նուազել զնախնի պահանջն նորա ։

---

12 ․ Փետրվարի ։

Բ ․ Վաճառեցի Բաղդասարայ Մոկացւոյ 1000, լիտր դահլէ ․ որոյ բոլորագումար արժէիցն է ղշ, 12600 ։ 'Ի գումարէ աստի վճարեաց ինձ դրամս՝ ղշ, 6600 ։ Իսկ վասն մնացեալ 6000, ղշիցն ետ ինձ 900, կանգուն Կտաւ՝ ըստ դաշնադրութեանս ։

---

18 ․ Նորին ։

Գ ․ Վաճառեցի Ռոստոմայ Գնունեան 1500, լիտր Շաքար ․ որոյ բոլորագումար արժէիցն է ղշ, 3000 ։ 'Ի գումարէ աստի զմի բաժինն հատոյց ինձ արծաթադրամ՝ ղշ, 1000 ։ Վասն երկրորդ բաժնին ետ ինձ 150, լիտր Մեղրամոմ ․ իսկ զմնացեալ երրորդ բաժինն հատոյց 40, լիտր Մետաքսիւ՝ ըստ դաշնադրութեան մերում ։

---

Խն․ (*) Յայտ առնեմք ընթերցողաց՝ զի յառաջիկայ օրինակս Մայրհաշուին առ հարկի ստիպմամբ խոտորել 'ի կանոնէ անտի, զոր աւանդեցաք (ԻԹ), թէ իւրաքանչիւր հաշուեմատունք եթէ անձանց՝ և եթէ մթերից պարտին ունել զկրկին երեսս, յորոց 'ի միումն գրեսցին պարտիք, և 'ի միւսումն պահանջք ։ Զի առ խորշելոյ յընդվայր զատարկութենէ թղթերեսոց բաժանեմք զնոսին գծիւք և թղթահամարովք ․ յորոց ծանիցեն ընթերցողք թէ պարփակեալքն ընդ մէջ երկուց գծից համարելի են կրկին ամբողջ երեսք ․ ըստ որում յայտ առնեն թղթահամարք նոյին նշանակեալք 'ի վերնանկիւնս երեսացն ։

Եւ ևս ծանիցեն նորավարժք, զի յետ կարգելի առաջարկութեանց՝ թէպէտ օրէն էր անընդմիջաբար շարադասել զհատուած օրհաշուի մատենին ըստ յառաջընթաց օրինակին, (զոր տուաք յերես 7) ․ սակայն առ անձկութեան տեղւոյն ստիպիմք փոխադրել զնոսին 'ի յաջորդ երեսս, և միանգամայն փոխանակ միահետ յաջորդելոյ 'ի մի երես, բաժանեմք յերկուս հանդիպակաց երեսս՝ հանդերձ առանձին թղթահամարովք ․ և ընդ նորոք կարգեմք զՄայրհաշիւն՝ թանձրագիծ խորոյս անջրպետելով զնոսին 'ի վերին օրինակէ անտի օրհաշուին ։

(1) ՕՐՀԱՇԻՒ

1820 . 'Ի Զմիւռնիա .

4 . Յունվարի . | ղշ | աքչէ
---|---|---

—2 / 1— Հեթում Կլայեցի || Առ Դրամարկղն ղշ , 1200 . որ վճարեցաւ 'ի նուաղել զպահանջս նորա . . . . . . . . . . . . . . . . 1200 —

12 . փետրվարի .

—1 / 3— Դրամարկղ || Առ Մթերս Գահվէի ղշ , 6600 . զի վաճառեցաւ Բաղարատայ Սոկացւոյ 1000 , լիտր գահվէ 'ի գին 12600 դահեկանաց . զորս 'ի վճարել ըստ մասին ետ ինձ դրամս ղշ , 6600 . Իսկ վասն մնացեալ 6000 , ղշից ետ ինձ կտաւս 900 , կանգուն . . . . . . 6600 —

—4 / 3— Մթերք Կտաւոյ || Առ Նախագրեալն ղշ , 6000 . որ է արժէք 900 , կանգուն Կտաւոյն , զոր Բաղարատ Սոկացի ետ ինձ 'ի վճարել զմնացեալ գին գահվէին՝ որպէս յայտ է 'ի վերոյգրելոցդ . . . 6000 —

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| 1 | ԴՐԱՄԱՐԿՂ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | աքչէ |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | |
| փետրվ՞. 12 | Առ Մթերս Գահվէի ղշ, 6600 , վաճառք փոխանակութեամբ . . . . . . . . . . . . . . . . | 1 | 3 | 6600 | — |
| 18 | Առ Մթերս Շաքարի ղշ , 1000 . նոյնպէս . . . . . . . | 2 | 5 | 1000 | — |

| 2 | ՀԵԹՈՒՄ ԿԼԱՅԵՑԻ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | աքչէ |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | |
| Յունվ՞. 4 | Առ Դրամարկղն՝ ղշ , 1200 , որք տուան նմա 'ի նուաղել զպահանջմն . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | 1200 | — |

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՒՂԱԲԵՐ ... 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 Թ.



# ՕՐԱՀԱՇԻՒ

## 1820. Ի Զմիւռնիա.

| | 18. փետրվարի. | ղշ | արճ |
|---|---|---|---|
| 1 / 5 | Դրամարկղ ‖ Առ Մեթեոս Շաքարի ղշ, 1000. զի վաճառեցաւ Ստամպ Պօռտեան՝ 1500, լիտր շաքար, 'ի գին 3000, դահեկանաց. յորոց մի մասն վճարեցաւ ինձ դրամ՝ ղշ, 1000: Սասն երկրորդ բաժինն տուան ինձ 150, լիտր մեղրամոմ: Իսկ վասն երրորդին ընկալայ 40, լիտր մետաքս. . . . . . . . . . . . . . . . . | 1000 | — |
| 6 / 5 | Մեթերք Մեղրամոմոյ ‖ Առ Նախադրեալն՝ ղշ, 1000. որ է գին 150, լիտր մեղրամոմոյ, զոր փոխանակեցի ընդ շաքարին՝ ըստ վերոյգրելոյդ. | 1000 | — |
| 7 / 5 | Մեթերք Մետաքսի ‖ Առ Նախադրեալն՝ ղշ, 1000. որ է գին 40, լիտր մետաքսին փոխանակելոյ ընդ շաքարի, ըստ վերոյգրելոյդ . . | 1000 | — |

# ՄԱՅՐԱՀԱՇԻՒ

| | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ղշ | արճ | 1 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունվ. 4 | Ի Հեթմոյ Կլայեցւոյ՝ ղշ, 1200. զի դերհաշիւ վճարեցաւ նմա . . . . . . . . . . . . . . . . | 1 | 2 | 1200 | — | |

| | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ղշ | արճ | 2 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

3

| | ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ | | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ ղ̅ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|

4

| | ՄԹԵՐՔ ԿՏԱՒՈՑ | ԿԱՆ″ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ ղ̅ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 փետր″. 12 | Առ Մթերս Գահվէի ղ̅, 6000, փոխանակութեամբ. | 900 | 1 | 3 | 6000 | — |

5

| | ՄԹԵՐՔ ՇԱՔԱՐԻ | | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ ղ̅ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|

6

| | ՄԹԵՐՔ ՄԵՂՐԱՄՈՄՈՑ | ԼԻՏՐ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ ղ̅ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 փետր″. 18 | Առ Մթերս Շաքարի ղ̅, 1000. փոխանակութեամբ. | 150 | 3 | 5 | 1000 | — |

7

| | ՄԹԵՐՔ ՄԵՏԱՔՍԻ | ԼԻՏՐ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ ղ̅ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 փետր″. 18 | Առ Մթերս Շաքարի ղ̅, 1000, փոխանակութեամբ. | 40 | 2 | 5 | 1000 | |

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 3 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | ղշ | փրէ | |
| փետր″. 12 | 'Ի Դրամարկեղէ ղշ, 6600, զի վաճառեցան. . . . | 500 | 1 | 1 | 6600 | — | |
| | 'Ի Մ'Թերից Կոստայ՝ ղշ, 6000, նոյնպէս . . . . . | 500 | 1 | 4 | 6000 | — | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 4 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ղշ | փրէ | |

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 5 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | ղշ | փրէ | |
| փետր″. 18 | 'Ի Դրամարկեղէն՝ ղշ, 1000. զի վաճառեցաւ . . . | 500 | 2 | 1 | 1000 | — | |
| | 'Ի Մ'Թերից Մ'եղրամոնյ՝ ղշ, 1000. նոյնպէս . . . | 500 | 2 | 6 | 1000 | — | |
| | 'Ի Մ'Թերից Մ'եսաքսին՝ ղշ, 1000. նոյնպէս . . . | 500 | 2 | 7 | 1000 | — | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ղշ | փրէ | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ղշ | փրէ | |

խզ. Առ բարւոք խելամտութիւն կարգի և կանոնաց յառաջագիր մայրհաշուիս, բերցուք 'ի մէջ զառաջին յիշատակագրութիւն օրհաշուին, և տեսցուք թէ զիա՞րդ և որո՞վ կարգաւ փոխադրեալ կայ 'ի Մայրհաշւին։ Առաջին յիշատակագրութիւն Օրհաշուին է. * Յունվարի, 4. 'Ի Հեթմոյ Կլայեցւոյ ‖ Առ Գրամարկղն՝ ղ͞ր, 1200, զի վճարեցաւ նմա 'ի նուազել զպահանջս նորա |։ Արդ՝ չէք երկբայութիւն՝ թէ 'ի ձեռն յիշատակագրութեանս Հեթում Կլայեցի լեալ է պարտապան առ Գրամարկղն (ժ͞թ. ͞ի. լ͞է). վասն որոյ բացցես զմատեան Մայրհաշուին, և առցես 'ի քննութիւն զհաշուեմատն Հեթմոյ, որ զետեղեալ կայ 'ի Թղթահամարն՝ 2։ Ուր տեսանես՝ զի 'ի ձախակողման երեսն, այն է պարտակողմն, խոշորագիր դրոշմեալ կայ՝ ՀԵԹՈՒՄ ԿԼԱՅԵՑԻ, և հանդէպ նորուն 'ի գլուխ զաւազանաց՝ նոյնպէս խոշորագիր եդեալ կայ բառս ՊԱՐՏԻՔ։ Տես արդ՝ թէ նախագրեալ յիշատակագրութիւն Օրհաշուին զիա՛րդ փոխադրեալ կայ 'ի նմա։ Գտանես նախ 'ի ձախակողման լուսանցսն նշանակեալ զտարին՝ 1820. և զամսաթիւն Յունվար՝ 4. և ապա առընթեր նմին՝ այսպէս. * Առ Գրամարկղն՝ ղ͞ր 1200, որք տուան նմա 'ի նուազել զպահանջս նորա |. յետոյ 'ի զաւազան դահեկանաց վերստին նշանակեալ կայ՝ ղ͞ր, 1200. —։ Արդ՝ քանզի յայս երես Մայրհաշուին յիշատակագրելի են ամենայն պարտիք Հեթմոյ, (որպէս յայտ է 'ի խոշորագիր մակագրութենէ անուան նորա և պարտեաց). նմին իրի՝ աւելորդ է 'ի յիշատակագրութեան դնել զանունն և զպարտապանն լինել. այլ շատ է՝ թէ բանք յիշատակագրութեանն յայտնեսցեն զանուն պարտատեառն կամ զմթերից, առ որս իցեն իւր պարտիք. սորին վասն մերձ առ ամսաթիւն սկզբնաւորեալ կայ. * Առ Գրամարկղն՝ ղ͞ր, 1200 |։ Նա որպէս զի յայտ լիցի՝ թէ առ ինձ վճարեալ իցեն դրամքն, յաւելեալ կայ և պատճառն. * զի վճարեցաւ 'ի նուազել զպահանջս նորա |։ Յետ որոյ ընդ առաջ ելանեն զաւազանք թղթահամարոյ. նախ՝ Օրհաշուին, 1. յորում գրեալ կայ այն յիշատակագրութիւն. ապա՝ Մայրհաշուին, 1. զի յայն երես զետեղեալ կայ հաշուեմատն Գրամարկղին, որում պարտապան է Հեթում Կլայեցի։ Յետոյ տեսանես և 'ի զաւազան դահեկանաց վերստին նշանակեալ՝ ղ͞ր, 1200. —։ Յայս յետին զաւազան կարգ ըստ կարգէ դասաւորելով դրամոցն՝ հուսկ ուրեմն եթէ հաւաքեսցես 'ի մի, ելանէ գումար բովանդակ պարտեացն Հեթմոյ (͞ի)։ Յասացելոցս յայտ է՝ թէ զիա՛րդ նախագրեալ օրինակ Մայրհաշուին կարգաւորեալ է ըստ կանխաւանդ կանոնաց. յորում երևին պարտիք Հեթմոյ, և պատճառ պարտապան լինելոյն. տեսանի և անուն պարտատեառն, և թէ հաշուեմատն նորա յոր երես գտանի։

խէ. Մատիցուք արդ 'ի տեսանել և զպահանջս Գրամարկղին, որոյ հաշուեմատն ըստ նախագրելոցս զետեղեալ կայ յերես, 1. որպէս յայտ է 'ի թղթահամարոց անտի նշանակելոց՝ թէ յՕրհաշիւ մատեանն, և թէ 'ի Մայրհաշւին առ հաշուեմատին Հեթմոյ։ Նա զի նշանակեալ յիշատակագրութիւնն պատշաճի առ պահանջս Գրամարկղին, ուստի հայելի է յաջակողման երես Մայրհաշուին. ուր 'ի գլուխ զաւազանայն գրեալ կայ խոշորագիր բառս ՊԱՀԱՆՋՔ. որ է ասել՝ պահանջելի գումարք Գրամարկղին. զի նորա են կրկին երեսք այսր հաշուեմատին։ Արդ հայեսցես 'ի լուսանցսն՝ ուր նշանակեալ կան տարին, 1820. և ամսաթիւն Յունվար, 4. և առ նմին գրեալ կայ՝ * 'ի Հեթմոյ Կլայեցւոյ՝ ղ͞ր, 1200. զի գերհաշիւ (1) վճարեցաւ նմա . . . 1. 2. . . 1200. —|։ 'Ի ձեռն յիշատակագրութեանս յայտնի լինի՝ թէ Գրամարկղն պահանջս ունի 'ի Հեթմոյ. քանզի երևին 'ի նմա թուական տարւոյն, ամսաթիւն, անուն պարտապանին, թղթահամարք և գումար դրամոյն, որք բաւական են 'ի յայտնել՝ թէ Գրամարկղն պարտատէր է, և հաշուեմատն պարտապանին՝ որ է Հեթում, զետեղեալ կայ յերես, 2։

խը. Տեսցուք և զյիշատակագրութիւնն որ յաղագս Մթերից Կտաւոյ, նշանակեալ 'ի 4 թղթահամար Մայրհաշուին. ուր 'ի ձախակողման երես պարտուցն գրեալ կայ. * 1820. փետրվար, 12. Առ Մթերս Գահվէի՝ ղ͞ր, 6000. փոխանակութեամբ՝ կանգուն, 900 . . . 1. 2. . ղ͞ր, 6000. —|։ Յիշատակագրութիւնս յայտ առնէ՝ թէ Մթերք Կտաւոյ պարտապան է առ Մթերս Գահվէի ղ͞ր, 6000. և թէ Կտաւն փոխանակեալ ընդ գահվէի, է 900, կանգուն. (1) որպէս եդեալ կայ և 'ի զաւազանին մթերաչափուց (͞Հ)։ Զոր ասացաք վասն մթերից կտաւոյ, զնոյն պա՛րտ է իմանալ և վասն Շաքարի, Մեղրամոմոյ, Մետաքսի, և այլոց մթերից. զի յամենեսին

խէ. (1) ԳԵՐՀԱՇԻՒ կոչեմք զըստմասնեայ հատուցումն, որ լինի 'ի հաշիւ բազմաթիւ պարտուց՝ և 'ի նուազել զգումար պահանջից պարտատեառն։ Իտ. A Conto. ա Գոնթօ։ Թրք. Աւէլ հիսապ։

խը. (1) 'Ի մթերս կտաւոյ օրինակի վասն եգաք զկանգնաչափն. որ սովոր է վարել 'ի մանրավաճառ կրպակաւորս եւեթ։ Քանզի 'ի բազմակոյտ տուրևառս փոխան կանգնոյ սովորութիւն է վարել Հատուածս կամ Ծրարս. այն է ըստ տաճկաց. Թօփ. զոր Իտալացիք կոչեն Pezza. Փէցցա։

առ հասարակ պահելի են նոյն կարգք և կանոնք, ըստ որում ունիս տեսանել և յօրինակդ որ զկնի ։

ԽԹ. Ի վարժութիւն նորուսումն համբակաց յաւելցուք յառաջիկայդ և զայլ օրինակ, յորում գտցի և նոր ինչ կարևոր ուսանելի ։ Դիցուք թէ 'ի 12. Յունվարի, 1820. վաճառեցեր Տիգրանայ Նոփեցւոյ՝ 1000, լիտր Պղնձի՝ 'ի գին 3000, դահեկանաց. զոր նա ինքն Տիգրան յետ վեց ամսոց ունի վճարել քեզ ընտիր դրամովք ։ Իսկ դարձեալ՝ 'ի 14, նորին ամսոյ՝ Արշակ Կեղեցի 'ի յանձնարարութենէ քումմէ տուեալ է 'ի ձեռս Սիսակայ արծաթադրամ դահեկանս՝ 1500 ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՏՈՒՐԵՒԱՌ ԴԻՊՈՒԱԾՈՑ

12. Յունվարի. 1820.

Ա. Վաճառեցի Տիգրանայ Նոփեցւոյ՝ 1000, լիտր Պղնձի, 'ի գին 3000, դահեկանաց. զոր յետ վեց ամսոց ունի վճարել ինձ ընտիր դրամովք ։

14. Նորին ։

Բ. Արշակ Կեղեցի ծանոյց ինձ եթէ ըստ յանձնարարութեանս առ նա՝ տուեալ է 'ի ձեռս Սիսակայ՝ դահեկանս, 1500. — ։

(1)

## ՕՐՀԱՇԻՒ

1820. 'Ի Կարին ։

| | | Դ | |
|---|---|---|---|
| | 12. Յունվարի ։ | | |
| —1 / 2— | Տիգրան Նոփեցի ‖ Առ Մթերս Պղնձի՝ Դ, 3000. զի վաճառեցաւ նմին 1000, լիտր Պղնձի, զոր յետ վեց ամսոց ունի վճարել ընտիր դրամովք . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| | 14. Յունվարի ։ | | |
| —3 / 4— | Սիսակ ‖ Առ Արշակ Կեղեցի՝ Դ, 1500. զոր Արշակ տուեալ է 'ի ձեռս Սիսակայ ըստ յանձնարարութեանս իմոյ. . . . . . . | 1500 | — |

| | ՏԻԳՐԱՆ ԾՈՓԵՑԻ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| I | | | | ℔ | փրէ |
| 1820 Յունվ. 12 | Առ Մթերս գանձին ℔ 3000. վճարելի յետ վեց ամսոց . | 1 | 2 | 3000 | — |

| | ՄԹԵՐՔ ԳԱՆՁԻՆ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 2 | | | | ℔ | փրէ |

| | ՍԻՍԱԿ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 3 | | | | ℔ | փրէ |
| 1820 Յունվ. 14 | Առ Արշակ Կեղեցի ℔, 1500. զորս առեալ է ՚ի նմանէ . | 1 | 4 | 1500 | — |

| | ԱՐՇԱԿ ԿԵՂԵՑԻ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 4 | | | | ℔ | փրէ |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ֆ | փէ | 1 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ֆ | փէ | 2 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունվ. 12 | Ի Տիգրանայ Յովսեփեցւոյ՝ ֆ 3000, զի վաճառեցաւ նմին . . . . . . . . . . . . . . . . | 1000 | 1 | 1 | 3000 | — | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ֆ | փէ | 3 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ֆ | փէ | 4 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունվ. 14 | Ի Սիսակայ՝ ֆ, 1500. որք տուան նմա . . . . . . . | 1 | 3 | 1500 | — | |

Ծ. Առաջարկութիւն առաջին դիպուածոյն, յորում նշանակի վաճառումն գահվէին 3000, դահեկանաւ և վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն, դասելի է ընդ պարզ տուրեւառս (ա), որք 'ի ներքս ածեն զերկուս փոփոխութիւնս ևեթ. վասն որոյ 'ի մատեան օրհաշուին՝ Տիգրան Ծոփեցի որում յանձնեցաւ գահվէն, նշանակելի է պարտապան. իսկ մթերք գահվէին, ուստի հանաւ վաճառեալ գահվէն՝ յիշատակագրելի է պարտատէր (ժը): Զայդ կանոն և զկարգ անփոփոխ պահելով, կարես աներկմիտ իմանալ և զպատճառն, թէ ընդէր յերկրորդ առաջարկութեան Արշակ Կեղեցի, որ քոյին յանձնարարութեամբ տուեալ է Միսակայ՝ 1500, դահեկանս, լինիցի պարտատէր, և Միսակ՝ պարտապան. վասն զի 1500, դահեկանն ելեալ է յԱրշակայ, և անցեալ 'ի Միսակ:

ԾԱ. Ի նախակարգեալ կրկին առաջարկութիւնս դիպուածոց նորավարժք կարեն երկմտիլ նախ՝ թէ Տիգրան Ծոփեցի, որ յետ վեց ամսոց ունի վճարել զդրամսն 3000, դահեկանաց, զիարդ 'ի մատեան Մայրհաշուին յիշատակագրի պարտապան առ մթերս գահվէին, և ոչ առ վաճառականն՝ յորմէ ընկալաւ զգահվէն: Երկրորդ՝ թէ ընդէր Միսակ պարտապան գրի առ Արշակ Կեղեցի, և ոչ առ դրամատէր վաճառականն՝ որոյ են այն դրամք. զի Արշակ չունի մասն 'ի դրամոց անտի, այլ տուեալ է զայն 'ի յանձնարարութենէ այլոյ ուրուք:

Ի լուծանել զայսոսիկ երկբայութիւնս նորավարժից, դիցուք աստանօր զուսումն ինչ կարեւոր: Ի մատեան Մայրհաշուին ամենայն պարտիք և պահանջք նշանակեալք 'ի հաշուեմատունս՝ առհասարակ են նորին իսկ վաճառականի, որ վարէ զայն հաշուեմատեան. վասն որոյ յիշատակագրութիւնք զինչ և իցէ անուամբք նշանակեալք՝ եթէ մարդոյ և թէ մթերից, միշտ համարելի են՝ թէ նոյն վաճառականն 'ի ձեռն սորա և նորա ունի պարտիս և պահանջս ընդ ումեք. սորին վասն ոչ յիշատակի անուն վաճառականին, այլ միայն մթերից և կամ միջամուխ անձանց: Այս կարգ հաշուեմատենից է արուեստահնար դասաւորութիւն ինչ 'ի համառօտել զընդվայր յիշատակագրութիւնս, զորս հարկաւ պարտ էր առնել՝ եթէ յամենայն պարտիս և 'ի պահանջս յիշատակեալ լինէր անուն վաճառատեառն. զի տէր դրամոցն հաղորդակից գոլով յամենայն հաշիւս, հարկ էր մտանել և յամենայն հաշուեմատունս. վասն որոյ կարօտէր և ինքն առանձնական հաշուեմատենի, յոր ուղղեսցին և առաքեսցին այլ հաշիւք:

Ի ստուգութիւն ասացելոցս՝ առցուք 'ի մէջ զնախագրեալ օրինակ Տիգրանայ Ծոփեցւոյ (ծ), որոյ պարզատեսակ տուրեւառքն՝ նշանակելի յերկուս տեղիս ըստ կրկին փոփոխութեանց զոր 'ի ներքս ածէ, կարօտէր չորից յիշատակագրութեանց՝ եթէ հարկ լինէր յիշել զանուն վաճառատեառն: Զի նախ առաջին օրէն էր պարտապան առնել զվաճառականն կամ զտէր գահվէին, որ եբարձ 'ի մթերանոցէ 1000, լիտր գահվէ: Երկրորդ՝ օրէն էր պարտատէր առնել զմթերս գահվէին, յորմէ բարձաւ 1000, լիտր գահվէ (ժը): Երրորդ՝ պիտէր պարտապան գրել զՏիգրան Ծոփեցի, որ գնոյ առ զգահվէն: Չորրորդ՝ պարտատէր գրելի էր վաճառականն կամ տէր գահվէին՝ յորմէ պակասեցաւ գահվէն: Արդ՝ 'ի կարճել զայսոսիկ աւելորդ կրկնութիւնս, ոչ յիշատակագրի անուն և հաշուեմատն վաճառականին, զի ինքնին յայտ է՝ թէ յայնմ տուրեւառութեան պարտապանն և պարտատէր՝ նոյն ինքն վաճառականն է. ուստի և համառօտութեան աղագաւ դնի՝ թէ պարտիքն՝ Տիգրանայ են. իսկ պահանջքն՝ մթերից գահվէին:

Զնոյն պարտ է իմանալ և 'ի վերայ երկրորդ առաջարկութեան դիպուածոյն. իբրզի կամելով նշանակել և զանուն դրամատեառն, պարտ էր նախ՝ պարտապան գրել զնա, և պարտատէր՝ զԱրշակ Կեղեցի: Յետոյ պարտապան գրելի էր զՄիսակ, և պարտատէր՝ զվաճառականն կամ զդրամատէր: Արդ՝ զայսոսիկ ճապաղ և ցիրուցան յիշատակագրութիւնս համառօտել կամելով վաճառականաց, հնարեցին զայդ կանոն, որով պահանջք կամ պարտիք միայն նշանակին յայլոյ վերայ: Վասն որոյ յորժամ նորավարժ ոք 'ի հաշուեմատեանս տեսանէ զպարտիս ինչ վաճառականին՝ կամ զպահանջսն յօտարի անուն, կամ յանուն մթերից նշանակեալ, պարտի դուշակել թէ 'ի կարճել զաշխատութիւնն՝ համառօտագրութեամբ եդեալ է այնպէս. և 'ի մտի պահել զնախաւանդեալ կանոնն, որ իբր առած է համարակալաց՝ թէ 'ի հաշուեմատեանս ո և իցէ անձինք կամ մթերք պարտապան և պարտատէր կեղծեսցին միմեանց. ամենեքին առ հասարակ համարելի են պարտապանք և պարտատեարք առ վաճառականն, որոյ են տուրեւառքն:

Դրամագամարք օրհաշուին՝ նշանակեալք 'ի յիշատակագրութեան և յարտաքին գաւազանս, պարտին լինել նոյնարժէք :

ԾԷ. Մայրհաշիւ մատեանն զայնպիսի սերտ կապակցութիւն ունի ընդ Օրհաշիւ մատենին, մինչև ուղղութիւն և վրիպակք նորա կախեալ կան զմանէ. նորին վասն կարևոր ուշադրութեան կարօտին յիշատակագրութիւնք Օրհաշուին, մանաւանդ դրամագումարքն՝ զոր սովորութիւն է կրկնաբար նշանակել, նախ՝ 'ի ներքս առընթեր պարտատեառն, և յետոյ՝ 'ի գաւազանս դրամոց (ԻԱ). զի երկոքին գումարքն պարտին լինել միշտ նոյնատեսակ դրամարժէիւք. ապա թէ ոչ՝ լինի պատճառ շփոթութեան Մայրհաշիւ գրոցն : Օրինակ՝ եղեալ թէ վաճառեցան 1000, լիտր գահլէ՝ 'ի գին 800, Արծուադրոշմ (1) դահեկանաց : Այլ և երկոտասան հատուածածրարք չուխայից՝ 'ի գին 6000, Առիւծադրոշմ անուանեալ դահեկանաց՝ կամ ղշից : Յայսոսիկ վաճառադիպուածս Դրամարկղն ունի լինել պարտապան երկուց պարտեաց. մի՝ առ մթերս գահլէին, և միւս՝ առ մթերս չուխային (ԺԷ) : Արդ՝ եթէ 'ի մատեան Օրհաշուին յիշատակագրեսցի առաջինն արծուադրոշմ դահեկանաւ 800, իսկ երկրորդն ղշիւ, 6000. և այնպէս փոխադրեսցի 'ի Մայրհաշիւն առ պարտիս Դրամարկեղ, լինի վրիպակ մեծ. զի երկոքին դրամքն անհաւասար գոլով արժէիւք, չկարեն հաւաքիլ 'ի մի գումար. և եթէ առանց ուշադրութեան ժողովեսցին 'ի մի, ծագի խառնակութիւն 'ի հաշիւս :

Առ խորշելոյ յայսպիսի վրիպակաց պէտք են զգուշաւոր մտադրութեան. զի գումարքն նշանակեալք 'ի գաւազանս դրամոցն՝ լինիցին միշտ նոյնատեսակ արժէիւք. իսկ նշանակեալքն 'ի յիշատակագրութեան կարեն լինել ըստ կամս զինչ և իցէ դրամովք : Քանզի ուղղութիւնք և վրիպակք հաշուետումարաց գան 'ի ծանօթութիւն 'ի ձեռն գումարաց նշանակելոց յարտաքին գաւազանս. վասն որոյ և կարևորք անուանին. իսկ ներքին գումարքն նպաստամատոյցք են 'ի տեղեկութիւն եղեալ տուրևառութեանն. ուստի և օգտակարք կոչին :

ԾԸ. Իսկ թէ զո՞ր տեսակ դրամոց պարտ իցէ վարել 'ի ներքս, և զո՞ր տեսակ յարտաքին գաւազանս՝ գիտելի է : Ամենայն տէրութիւնք և գաւառք ունին զիւրեանց սեփական դրամս՝ որովք վարին բնակիչք տեղեացն. սակայն են և տեսակք դրամոց ինչ, որք սովոր են վարիլ յամենայն գաւառս. որպիսի են ոսկեդրամք և արծաթադրամք եւրոպական տէրութեանց. զորոց զցուցակն և զարժէս ըստ արդի փոխանակութեան՝ (1) որ վարի յայս ամ, 1820, տեսցես 'ի ծանօթութեանս :

Արդ՝ 'ի հաշուեմատեանս պարտ է վաճառականին վարել զայն տեսակ դրամոց, որ սովորական իցէ քաղաքին և գաւառին՝ յորում բնակի. իսկ զհաշիւս օտարազգի դրամոց՝ որք կարեն դիպիլ 'ի տուրևառս, պիտոյ է յարմարել և վերածել 'ի սովորական դրամ տեղւոյն, և այնպէս անցուցանել 'ի մատեան Օրհաշուին. բայց յիշատակագրելի են և օտարազգի դրամքն առ 'ի գիտութիւն հանգամանաց եղեալ տուրևառութեանն : Օրինակ՝ եղեալ թէ 'ի Պօլիս, (ուր սովորական դրամք են ղուռուշք և մանրափողք). դէպ լիցի ումեք վաճառել զքսան ծրարս Հնդիկ կտաւոյ. առ մի ծրար՝ 10, ոսկի վենետիկեան. (կամ 20. արծաթադրամ Սիւնադրոշմ). պարտ է նախ՝ զայսոսիկ դրամս վերածել 'ի ղշ, և ապա 'ի մատեան Օրհաշուին յիշատակագրել այսպէս. * վաճառեցի 20. ծրարս Հնդկակտաւոյ. առ մի ծրար՝ 10, ոսկի վենետիկեան. (կամ 20. Սիւնադրոշմ արծաթի), որոց արժէք ըստ փոխանակութեան (2) աւուրս՝ առ մի ոսկի՝ 15, ղշ. 110. մնկ. (կամ առ մի սիւնադրոշմ, 6. ղշ 90 :) բոլորագումարն առնէ ղշ, 3009. մնկ. 40. (կամ 2700 ղշ) :

ԾԷ. (1) ԱՐԾՈՒԱԴՐՈՇՄ դահեկան, որ է դրամ Գերմանիոյ, և արժէք նորա ըստ ընթացից փոխանակութեան աւուրս՝ 6. ղշ. և 60, մանրափող : Իտ. Aquilone. Աքվիլօնէ : Տճկ. Գարագուշ, զոր ռամիկք Գարագուրուշ անուանեն :

ԱՌԻՒԾԱԴՐՈՇՄ, որ երբեմն դրամ էր վենետիկոյ. իսկ 'ի ժամուս այսպէս անուանի արծաթադրամն տաճկաց, որ ունի զարժողութիւն 120. մանրափողոյ նորա : Տճկ. Ասլանլը. կամ ղշ :

ԾԸ. (1). (2) 'Ի փոխանակութիւնս դրամոց սովորական ինչ է յամենայն տեղիս, մանաւանդ առ Սեղանաւորս առաւելուլ զգինս քան զներքնարժէք իւրաքանչիւր դրամոյ. վասն որոյ չէ հնար 'ի գիրս որոշել զգին հաստատուն, որ յետ ամսոյ և ամսոյ ինչ չունիցի փոփոխութիւն. մանաւանդ յարևելեան կողմանս, նմին իւր զոր ունիմք կարգել աստանօր՝ է ըստ արժէիցն որ վարի յայս ամ. սորին վասն ասացաւ *ըստ արդի փոխանակութեան (կամ) ըստ փոխանակութեան աւուրս ||. որ ըստ իտալացւոց. ասի Al Cambio d'oggi. կամ al Corso del Cambio :

### Կանոնք ընդհանրականք 'ի դէպս տարբերաց դիպուածոց ։

ծզ . Ամենայն գիտութիւնք ունին զիւրեանց կանոնս ինչ իբր հիմունս, յորոց վերայ հաստատի ուսումն վարդապետութեան նոցա . և քանզի արուեստ համարակալութեան է գիտութիւն ինչ, որում ուղղին և կարգաւորին հաշիւք տուրևառութեանց, ունի և սա զիւր առանձն և կանոնս՝ իբր լուսատու և առաջնորդս 'ի պարզել և 'ի հարթել զդժուարակնճիռն դիպուածս վաճառականութեան ։ Կանոնք սորա թէպէտև աւանդեցան ուրեք ուրեք 'ի նախագրեալ վարդապետութիւնդ, սակայն 'ի դիւրութիւն ընթերցողաց հաւաքեցուք աստանօր զամենեսին . զի նորավարժք ունիցին ակներև՝ իբր գործիս առձեռնպատրաստս 'ի վարել զնոսին ըստ պէտս դիպուածոց ։

ԿԱՆՈՆ . 1 . Ամենայն տուրևառք՝ որչափ և պարզք իցեն, միշտ և անպակաս կրկին փոփոխութեանց պատճառք են ( ա . բ ) ։

ԿԱՆՈՆ . 2 . Նոյն տուրևառք բաժանելի են յայն մասունս, յորոց միանգամ խառնեալք կամ բաղադրեալք իցեն ( Է ) ։

ԿԱՆՈՆ . 3 . Ամենայն մասունք նոյն տուրևառից՝ կրկնակի փոփոխութեանց պատճառք են (ա). և զի կարէ պատահել՝ թէ տուրևառութիւն ինչ ունիցի զբազմաթիւ մասունս, նմին իրի ըստ թուոյ մասանցն կրկնելի են և փոփոխութիւնք՝ միշտ զուգաթիւք . այսինքն՝ չորս . վեց . ութ . տասն, և այլն ( Ղ ) ։

ԿԱՆՈՆ . 4 . Ամենայն անձինք՝ կամ տեղիք և մթերանոցք, որոց յանձն լինի՝ կամ ուրանօր զետեղին իրք ինչ, եթէ դրամք իցեն, և թէ մթերք կամ աղխամաղխք, համարելի են պարտապանք . իսկ յորոց միանգամ բառնին՝ համարելի են պարտատեարք ( ժը ) ։

ԿԱՆՈՆ . 5 . Պարտիք և Պահանջք՝ եթէ մարդոյ և թէ մթերից, ունին մնալ միշտ նոյն, թէև յաւելցի 'ի նոսա գումար ինչ հաւասարաչափ ( խզ ) ։

ԿԱՆՈՆ . 6 . Եթէ գումարք համօրէն պարտեաց ժողովեսցին 'ի մի, պարտին համեմատել և հաւասարել գումարի համօրէն պահանջից ( խզ ) ։

ԿԱՆՈՆ . 7 . 'Ի հաշուեմատեանս զինչ և իցէ բազմութիւնք՝ եթէ անձանց և թէ մթերից երևեսցին միմեանց պարտապանք և պարտատեարք . ամենեքին առ հասարակ են պարտապանք և պարտատեարք առ վաճառականն՝ որ վարէ զհաշուեմատեանսն զայնոսիկ ( ծա ) ։

## ՈՍԿԵԴՐԱՄՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աւստրիոյ ։ | Կայսերական ոսկի պարզ ։ Արծիւ երկգլխի թագաւորդ ։ իտ . Zecchino Semplice Imperiale ։ Արժէքն ֆիորին . 4 . և 30, Գաւառնթան . | ղշ | 15 ։ | 83 |
| | Նորին ամբողջ Սօվանա անուանեալ ։ Ֆիորին 13 ։ 20 . . . | ղշ | 46 ։ | 85 |
| | Կիսաչափն՝ Ֆիորին . 6 ։ 40 . | ղշ | 23 ։ | 42 |
| Իտալիոյ և Գաղղիոյն ։ | Ոսկի՝ 40 . իտալական լիրա, կամ որ նոյն է ֆռանգ, փէցցօ՝ անուանեալ ։ իտ . Pezzo da 40, Lire . Արժէքն . . . . . . . . . . | ղշ | 53 ։ | 40 |
| | Կիսաչափ նորին, 20 . լիրա իտ˝ . | ղշ | 26 ։ | 80 |
| Միլանի . | Կրկնակի Տօփփիա անուանեալ ։ իտ . Doppia . . . . . . . . | ղշ | 26 ։ | 40 |
| | Նորին՝ հասարակ . Ձեքքինօ անուանեալ ։ իտ . Zecchino . . . . | ղշ | 15 ։ | 90 |
| Վենետիկոյ ։ | Ոսկի ։ ... Եալորդ անուանեալ ։ իտ . Zecchino . . . . . . . | ղշ | 15 ։ | 110 |
| Պարմայի ։ | Կրկնակի Տօփփիա անուանեալ . իտ . Doppia . . . . . . . | ղշ | 22 ։ | 75 |
| | Նորին՝ հասարակ ։ իտ . Zecchino . | ղշ | 15 ։ | 65 |
| Ֆրանսայ ։ | Կրկնակի Լուիճի Տօփփիօ անուանեալ ։ իտ . Luigi Doppio . . | ղշ | 62 ։ | 110 |
| | Կիսաչափ նորին ։ իտ . Luigi Semplice . . . . . . . . . | ղշ | 31 ։ | 55 |

Կամելով կնքել զառաջին մասն ներվարժութեան նախաշաւիղ ուսմանց հաշուեմատենին, շատ համարիմ զկանխաւգիր աւանդեալ կանոնս. որովք կարեն նորավարժք իմանալ և 'ի միտ առնուլ զդիւրութիւն հաշուեգրոց, զկարգ և զյեղանակ յիշատակագրելոյ զգիպուածս տուրեւառութեան, և թէ զիարդ օրէն իցէ 'ի մատեան օրհաշուին դասաւորել զիրսն՝ պարտապան կամ պարտատէր առնել զոք կամ զմթերս վաճառաց, և զի յիշատակագրութիւնք օրհաշուին որպէս և որով կարգաւ փոխադրելիք իցեն 'ի մայրհաշիւն. քանզի 'ի սոսին իբր 'ի վերայ հիմանց հաստատեալ կան ընթացք ուղղութեան ամենայն հաշուեմատենից. իսկ վրիպակք սովոր են 'ի ներքս մտանել առ թերութեան կարգի յիշատակագրութեան բանիցն. զի թէ ոչ ըստ պատշաճի դասաւորեսցին, վեր 'ի վայր լինին ամենայն հաշիւք, և հաշուեմատեանն համարի անելանելի լաբիւ-

| | | | |
|---|---|---|---|
| Փառմայի: | Կրկնոսկի նորատիպ՝ Տօփփիա անուանեալ: Իտ. Doppia Nuova . ՂՇ | 28 : | 60 |
| Ճէնօվայի: | Կրկնոսկի՝ 96. լիրա Ճէնօվայի. Տօփփիա անուանեալ: Իտ. Doppia da 96 . . . . . . . . . . . . ՂՇ | 105 : | — |
| | Կէս նորին և քառորդն, նմին համեմատութեամբ: | | |
| Սավոյիայի: | Կրկնոսկի նոր՝ 'ի 1787, ամ։ և այսր Տօփփիա նուօվա անուանեալ: Իտ. Doppia nuova . . . . . . ՂՇ | 37 : | 90 |
| Ֆիրէնցայի: | Ոսկի հատարան՝ Ձէքքինօ անուանեալ: Իտ. Zecchino . . . . ՂՇ | 15 : | 100 |
| Հռովմայ: | Կրկնոսկի՝ Տօփփիա անուանեալ. Իտ. Doppia . . . . . . . ՂՇ | 22 : | 25 |
| | Ոսկի հատարան՝ Ձէքքինօ անուանեալ: Իտ. Zecchino . . . . ՂՇ | 15 : | 80 |
| Գերմանիոյ: | Ոսկի Ունգարեան. Պաւիէռայի և Սալիսպուրկի: Գաղ. Մաճառ: Իտ. O'ngaro di Baviera, e Salisburgo . ՂՇ | 15 : | 15 |
| | Այլ ոսկի Ունգարեան, իշխանազանց անուանեալ: Գաղ. Պաճախ: Իտ. O'ngaro de' Principi . . . ՂՇ | 15 : | 15 |
| Փռուսիոյ: | Ոսկի Ֆէտէրիկեան: Իտ. Federico di Prussia . . . . . . . . ՂՇ | 27 : | 40 |

## ԱՐԾԱԹԱԴՐԱՄՔ

| | | | |
|---|---|---|---|
| Աւստրիոյ: | Դահեկանք Տի Գօնվէնցիօնէ անուանեալք: Իտ. Talleri di Convenzione: Արժէքն՝ 2. Ֆիօրին . ՂՇ | 6 : | 60 |
| | Ֆիօրին: Դրամանուն է լոկ, և Դրամաթուղթ: Արժէքն՝ 60. Գառանթան . . . . . . . . . . . ՂՇ | 3 : | 55 |
| | Կայ նորա կէսն, և կիսոյ կէսն, և երրորդ մասն, և վեցերորդն. համեմատարժէք ընդ վերնոյն: | | |
| Իտալիոյ, և Գաղղիոյ: | Դահեկան 5. լիրա, կամ որ նոյն է 5. ֆռանգ: Իտ. Pezzo da 5. Lire . ՂՇ | 6 : | 80 |
| | Նոյնն, 2. լիրա կամ ֆռանգ. ՂՇ | 2 : | 80 |
| | Նոյնն, 1. լիրա . . . . . . ՂՇ | 1 : | 40 |
| | Կայ սորա կէսն, և կիսոյ կէսն, և երրեակ մասն՝ համեմատարժէք նմին: | | |
| Միլանոյ: | Դահեկան՝ Վահան անուանեալ: Իտ. Scudo . . . . . . . . ՂՇ | 6 : | 15 |
| | Նոյնն՝ Լիրա անուանեալ. որ է կրկնատեսակ՝ հին և նոր . . . ՂՇ | 1 : | 3 |
| Պօլօնիոյ: | Դահեկան՝ Վահան Տիրամօր անուանեալ: Իտ. Scudo della Madonna . . . . . . . . . ՂՇ | 7 : | 15 |
| | Նոյնն՝ 10. փաւլի. . . . . ՂՇ | 7 : | 9 |
| | Այլ դրամ՝ Թէստօն անուանեալ. ՂՇ | 2 : | 14 |
| Մօտէնայի: | Դահեկան՝ Վահան անուանեալ: Իտ. Scudo . . . . . . . . . ՂՇ | 7 : | 31 |
| | Նոյնն՝ այլադրոշմ . . . . . ՂՇ | 7 : | 66 |
| Վէնէտիկոյ: | Դահեկան՝ Տուգաթօ անուանեալ խաչակնիք և առիւծադրոշմ: Իտ. Ducato, կամ Scudo della Croce . ՂՇ | 8 : | 90 |
| | Նորին՝ այլ. Ճիւսթինա անուանեալ: Իտ. Giustina . . . . . . . . ՂՇ | 7 : | 93 |
| Գաղղիոյ: | Դահեկան՝ Վահան Ֆրանսիոյ անուանեալ: Իտ. Scudo di Francia. ՂՇ | 7 : | 85 |
| | Կէս նորին . . . . . . . . ՂՇ | 3 : | 102 |
| Սավոյիայի: | Դահեկան՝ Նոր վահան անուանեալ: Իտ. Scudo nuovo . . . . . ՂՇ | 9 : | 36 |
| Ճէնօվայի: | Դահեկան՝ Վահան անուանեալ: Իտ. Scudo nuovo . . . . . . ՂՇ | 9 : | 21 |
| Փառմայի: | Դահեկան՝ Տուգաթօ անուանեալ: Իտ. Ducato . . . . . . . ՂՇ | 6 : | 75 |
| Ֆիրէնցայի. | Դահեկան՝ Ֆռանչէսգօնէ անուանեալ: Իտ. Francescone . . . ՂՇ | 7 : | 60 |
| Հռովմայ: | Դահեկան՝ Վահան անուանեալ: Իտ. Scudo. . . . . . . . . ՂՇ | 6 : | 116 |
| Ֆիանտրիոյ: | Դահեկան՝ վահան եռապսակ և խաչադրոշմ: Իտ. Scudo delle Corone, կամ Crocione . . . . . . ՂՇ | 7 : | 60 |
| Պաւիէռայի: | Դահեկան՝ Գռօչիօնէ անուանեալ: Իտ. Crocione . . . . . . ՂՇ | 7 : | 60 |
| Սպանիոյ: | Դահեկան՝ սիւնադրոշմ: Գաղ. Տիրէկլի: Իտ. Pezza nuova կամ Colonnato . . . . . . . . ՂՇ | 6 : | 90 |

Զատուցեալդոյն գիտելիս՝ որ յաղագս դրամոց և փոխարկելեաց այլեայլ տէրութեանց եւրոպիոյ գոյես 'ի վերջ գրոցս, ուր յաւելումք և զպատկերս նախակարգեալ դրամոց հանդերձ յօյատարարութեամբ կշռոյ ծանրութեան և յարգի նոցա:

բնութոս, որոց կամիցին կարգաւորել զայն ։ Վասն որոյ յորդորեմք զուսումնասէր նորավարժս աշակերտս մեր մտօք ուշադիր լինել և խելամուտ նախասացելոցն, զի դիւրաբար առցեն 'ի միտ և զհետևեալն յառաջիկայ երկրորդ մասին, որք են զանազան օրինակք սկզբնաւորելոյ զհաշուեմատեան տուրևառութեան ։

Իսկ տեղեաւս ծանիցեն նորավարժք, զի քաջակարգ և ուղիղ համարակալութեան ընթացակից լինել ունի և անձանձրոյթ հետազօտութիւն յիշատակագրեալ դիպուածոց, որպէս և անյապաղ արձանագրութիւն զինչ և իցէ մանր և թեթև կարծեցեալ իրաց, որոց հաշիւք նշանակեալ կայցեն 'ի մատեանս վաճառականին ։ Ի գործս տուրևառութեան ոչինչ իրագործութիւն համարելի է չնչին և դուզնաքեայ, զի յանհոգութենէ անտի մերթ է սկիզբն առնուլ ծանր վնասուց, կամ լինել առիթ կորստեան ցանկացեալ օգտի. քանզի յաջողութիւնք իրաց՝ որպէս և ձախորդութիւնք անգիտելիք են 'ի մարդկանէ. և դոյզն առիթք պատճառս տան մեծագունից՝ եթէ ոք անզգուշի միտ դնել հանդերձելոց, և անհոգասցի իւրոց գործառնութեանց ։ Հաշուեմատեանք գործիք են կարևորք 'ի պէտս տուրևառութեան, իբր ղեկ նաւու և ուղեցոյց 'ի դժուարակոխ շաւիղս. անպտուղ մնան արուեստք՝ եթէ անգործ մնասցեն գործիք պիտանիք ։ Ոչ թէ հմուտ նաւապետի ավեր է երբեմն պատահել նաւաբեկութեան, քանի առաւել այնմ՝ որ անկիրթն իցէ արուեստի նաւուղղութեան ։ Ոչ ամենայն գործք վաճառականութեան յաջողադէպք են, այլ ճարտար վաճառականի է և զանյաջող ընթացս տուրևառութեան վարել յօգուտ, ըստ քաջավարժ ղեկավարաց ուղղելով զընթացսն ըստ հողմոյն փոփոխութեան, որով թէ ոչ շահեսցին դիմելով յառաջ, գէթ մնան անվնասք յալեկոծ վտանգից ։



# ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Զոր միանգամ աւանդեցաքն 'ի նախընթաց մասին, տեղեկութիւնք էին յուսումն կարգի և ընդհանրական կանոնաց Օրհաշիւ և Մայրհաշիւ գրոց, թէ զիարդ և որով օրինակաւ նշանակելի իցեն թուականք տարւոյն, ամսաթիւք, գումարք դրամոց, և յիշատակագրութիւնք պարտեաց և պահանջից նոցա։ Իսկ յառաջիկայ մասին որոշակի ունիմք յայտ առնել զգլխաւորութիւն Օրհաշիւ մատենին, և զկարգ դասաւորութեան նորայն, զոր պարտ է պահել 'ի յիշատակագրութիւնս նորա. որովք հաշուեմատեանն տիրաբար լինի Կրկնագիր կամ Կրկնատումար։ Արդ՝ քանզի ըստ բազմօրինակ վիճակի վաճառականութեան՝ բազմադիմի կարեն լինել և դասաւորութիւնք յիշատակագրութեանց, նմին իրի սկիզբն արասցուք 'ի պարզ տուրևառութեանց անտի, զոր վաճառական ոք առանձինն և անընկեր ձեռնամուխ լինի գործել։

Կարգ հաշուեմատենից՝ յորժամ ոք կամի միայնոյ պարապիլ 'ի տուրևառութիւն։

ԾԶ. Ի հաշուեմատեանս՝ որովհետև մին 'ի դժուարագոյն աշխատութեանց է կարգաւորութիւն Դրամագլխոյ (1). մանաւանդ երբ բաժանեալ իցեն այնոքիկ 'ի զանազան ստացուածս. վասն որոյ յայս մասն գրոցս առաւելապէս միտ դիցուք բացայայտել զայնպիսի դիպուածս, որք ունիցին հաղորդակցութիւն ընդ Դրամագլուխս վաճառականին։ Այլ զոր միանգամ հանդերձեալ եմք դնել աստանօր 'ի պէտս առանձին մարդոյ, հնար է մերձեցուցանել զայն և 'ի դիպուածս տուրևառութեան բազում հաշուընկեր վաճառակաց։

ԾԷ. Դիցուք թէ վաճառական ոք յետ բազմամեայ խառնիխուռն տուրևառութեան առանց հաշուեմատենից, փափաքեսցի դնել 'ի կարգի զիւր վաճառականութիւն, և վարել զկարգաւորեալ հաշուետումար. հայելով 'ի ստացուածս իւր, տեսանէ՝ զի ունի դրամս յարկեղ. կայ նորա և այլ դրամագլուխ 'ի Պանգօ (1) անուանեալ սեղան փոխանակութեան. ունի և զմթերս վաճառելիս. բայց կան նորա և պարտիք, որպէս և պահանջք յայլոց։ Զայս ամենայն՝ թէ զիարդ պարտ իցէ 'ի կարգի դնել, ցուցցուք յառաջիկայդ։

ԾԶ. (1) ԴՐԱՄԱԳԼՈՒԽ։ Թճ. Սէրմայէ։ Իտ. Capitale։ Գափիթալ։

ԾԷ. (1) ՊԱՆԳՕ. կամ ՊԱՆԳՕ ՃԻՐՕ։ Իտ. Banco Giro կամ Baucch և Bencch. որ է Սեղան դրամափոխութեան կամ փոխանակութեան։ Այսպէս անուանի յամենայն եւրոպականաց տունն գանձու, ուր պահին և փոխանակին դրամք վաճառականաց. զորոյ զկարգն տեղեկութիւնն գտցես 'ի Թիւն (ՃԺը).

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

## 4. Յունվարի. 1820։

*Ցուցակ գոյից և ստացուածոց իմոց (Ա. Ա.) որ այսօր սկզբնաւորեմ զառաջիկայ հաշուեմատեանս վաճառականութեան։*

| | | ղրշ | փր. |
|---|---|---|---|
| Ա. | Ի դրամարկեղ ունիմ պատրաստական դրամ . . . . . . . . . . ղրշ | 123420 | — |
| Բ. | Ի Սեղան փոխանակութեան ունիմ լիրա, 1000. որ է . . . . . . . ղրշ | 96000 | — |
| Գ. | Նաւ մի նոր՝ Արտաշէս անուն, որոյ արժէքն է . . . . . . . . . . ղրշ | 30276 | — |
| Դ. | Տուն բնակութեան, որոյ արժէքն է . . . . . . . . . . . . . . ղրշ | 27276 | — |
| Ե. | Կրպակ և Մթերանոց քարաշէն, որոց արժէքն է . . . . . . . . ղրշ | 18721 | — |
| Զ. | Խոջիկ Վազգէնն պարտական է ինձ . . . . . . . . . . . . . ղրշ | 13418 | 16 |
| Է. | Ունիմ մթերս Մետաքսի՝ լիտր, 7242. որոց արժէքն է . . . . . . . ղրշ | 217270 | — |
| Ը. | Պարտական եմ Գևղամ փառնակայ . . . . . . . . . . . . . ղրշ | 7592 | — |

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | ԴՐԱՄԱՐԿՂ | | | ղրշ | փր. |
| 1820 Յունվ. 4 | Առ Դրամագլուխն՝ ղրշ 123420. որք այսօր եղան ՚ի նմա . | 1 | 2 | 123420 | — |
| 2 | ԴՐԱՄԱԳԼՈՒԽ | | | ղրշ | փր. |
| 1820 Յունվ. 4 | Առ Գևղամ փառնակ՝ ղրշ, 7592. զոր պարտիմ նմա. . . | 1 | 9 | 7592 | — |

# ՕՐԱՀԱՇԻՒ

## 1820. Ի Զմիւռնիա.

| | 4. Յունվարի. | ղշ | փրէ |
|---|---|---|---|
| 1/2 | Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխն՝ ղշ, 123420. զոր ունիմ 'ի նմա. ղշ | 123420 | — |
| 3/2 | Սեղան փոխանակութեան ‖ Առ նոյն Դրամագլուխն՝ ղշ, 96000, որ է արժէք 1000, լիրայից, զորս ունիմ 'ի նմա. առ մի լիրա ղշ, 96. բոլորագումարն . . . . . . . . . . . . . . . . ղշ | 96000 | — |
| 4/2 | Նաւն Աբրաշէս ‖ Առ Նախագրեալն՝ ղշ, 30276. որ է արժէք նորա. ղշ | 30276 | — |
| 5/2 | Բնակարան ‖ Առ նախագրեալն՝ ղշ, 27276. որ է արժէք նորա.. ղշ | 27276 | — |
| 6/2 | Կրպակ և մթերանոց ‖ Առ նախագրեալն՝ ղշ, 18721. որ է արժէք նոցին . . . . . . . . . . . . . . . . . ղշ | 18721 | — |
| 7/2 | Թոդիկ Մագգէն ‖ Առ նախագրեալն՝ 13418, 16. զոր ինձ պարտի. ղշ | 13418 | 16 |
| 8/2 | Մթերք մետաքսի ‖ Առ նախագրեալն՝ ղշ, 217270. որ է գին՝ 7242, լտեր . . . . . . . . . . . . . . . . . ղշ | 217270 | — |
| 2/9 | Դրամագլուխ ‖ Առ Գեղամ փառնակ՝ ղշ, 7592. զոր պարտիմ նմա. ղշ | 7592 | — |

# ՄԱՑՐԱՀԱՇԻՒ

| | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 1 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 2 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունվ. 4 | Ի Դրամարկղէ՝ ղշ, 123420, որք այսօր եղան 'ի նմա․․ . | 1 | 1 | 123420 | — | |
| | Ի Սեղանոյ փոխանակութեան՝ ղշ, 96000. զի կան 'ի նմա 1000, լիրայք . . . . . . . . . . . . . . | 1 | 3 | 96000 | — | |
| | Ի Նաւէն Աբրաշէս անուն՝ ղշ, 30276. որ է արժէքն . . | 1 | 4 | 30276 | — | |
| | Ի Բնակարանէն՝ ղշ, 27276. որ է արժէքն . . . . . . | 1 | 5 | 27276 | — | |
| | Ի Կրպակէ և 'ի մթերանոցէ՝ ղշ, 18721. որ է արժէք նոցին. | 1 | 6 | 18721 | — | |
| | Ի Թոդիկ Մագգէնէ՝ ղշ, 13418, 16. զոր ինձ պարտի. . | 1 | 7 | 13418 | 16 | |
| | Ի Մթերից Մետաքսին՝ ղշ, 217270. որ է արժէքն. . . | 1 | 8 | 217270 | — | |

# ՄԱՅՐԱՀԱՇԻՒ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ<br>ղշ | փրէ |
| 1820<br>Յունվ. 4 | Առ Դրամագլուխն՝ ղշ, 96000. զոր ունիմ 'ի նմա. որ է լիրա . . . . . . . . . . . . . | 1000 | 1 | 2 | 96000 | — |
| 4 | ՆԱՒԻՆ ԱՐՏԱՇԷՍ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ<br>ղշ | փրէ |
| 1820<br>Յունվ. 4 | Առ Դրամագլուխն՝ ղշ, 30276. որ է արժէք նորա . . . | | 1 | 2 | 30276 | — |
| 5 | ԲՆԱԿԱՐԱՆ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ<br>ղշ | փրէ |
| 1820<br>Յունվ. 4 | Առ Դրամագլուխն՝ ղշ, 27276. որ է արժէքն . . . . . | | 1 | 2 | 27276 | — |
| 6 | ԿՐՊԱԿ ԵՒ ՄԹԵՐԱՆՈՑ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ<br>ղշ | փրէ |
| 1820<br>Յունվ. 4 | Առ Դրամագլուխն՝ ղշ, 18721, որ է արժէքն . . . . . | | 1 | 2 | 18721 | — |
| 7 | ԹՈԴԻԿ ՎԱՋԳԷՆ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ<br>ղշ | փրէ |
| 1820<br>Յունվ. 4 | Առ Դրամագլուխն՝ ղշ, 13418, 16. զոր պարտի. . . . | | 1 | 2 | 13418 | 16 |
| 8 | ՄԹԵՐՔ ՄԵՏԱՔՍԻ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ<br>ղշ | փրէ |
| 1820<br>Յունվ. 4 | Առ Դրամագլուխն՝ ղշ, 217270. որ է արժէքն. . . | 7242 | 1 | 2 | 217270 | — |
| 9 | ԳԵՂԱՄ ՓԱՌՆԱԿ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ<br>ղշ | փրէ |

| | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ՂԾ | ուպէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3 |
| | | | | | | 4 |
| | | | | | | 5 |
| | | | | | | 6 |
| | | | | | | 7 |
| | | | | | | 8 |
| 1820 Յունիս. 4 | Ի Դրամարկղոյն ՂԾ, 7592. զոր պարտիմ նմա . . . . . | 1 | 2 | 7592 | — | 9 |

ծէ. Նախկին առաջարկութիւնն քանզի յայտ առնէ՝ թէ վաճառականն սկզբնաւորէ զտուրեւառութիւն, 123420, դահեկան՝ պատրաստական դրամովք, ուստի հարկ է սակս այնր գումարի դրամոց նշանակել զպարտապան ոք եւ զպարտատէր ։ Պարտապան գրելի է Դրամարկղն՝ որ լինի ընկալօղ դրամոցն. իսկ պարտատէր՝ Դրամագլուխ վաճառականին. զի դրամն՝ որ դնի յարկեղ, մասն է դրամագլխոյն՝ իբր մասնատեալ 'ի նմանէ (ծդ. 4) ։ Այս կանոն եթէ անխոտոր պահեսցես, դիւրաբար իմասցիս՝ թէ զիարդ առաջարկութիւնս * 'ի Դրամարկեղ ունիմ պատրաստական դրամս ղր̅, 123420 |, ըստ կարգի եդեալ կայ յՕրհաշուին. * Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխն՝ ղր̅, 123420, զոր ունիմ 'ի նմա | ։ Այսու յիշատակագրութեամբ պարտապան լինի Դրամարկղն՝ յոր եդան դրամքն. եւ պարտատէր Դրամագլուխն, յորմէ մասնատեալ է այն գումար դրամոց (ժը) ։

ծը. Երկրորդ առաջարկութիւնն յայտ առնէ, թէ նոյն վաճառական ունի եւ 'ի Սեղան փոխանակութեան՝ 1000, լիրա (1). որոց արժէքն՝ առ մի լիրա, 96, ղր̅, հաշուելով, բոլորագումարն առնէ ղր̅, 96000 ։ Սակս այսր գումարի պարտ է առնել զնոյն յիշատակագրութիւն, որինչ միանգամ եղեւ վասն նախկին առաջարկութեան ։ Իսկ քանզի Սեղան փոխանակութեան անուանեալն՝ համարի երկրորդ դրամարկղ վաճառականին, վասն որոյ որպէս յառաջնումն Դրամարկղն եղեւ պարտապան եւ Դրամագլուխն պարտատէր, նոյնպէս եւ 'ի սմա Սեղան փոխանակութեան նշանակելի է պարտապան, եւ Դրամագլուխն պարտատէր (ծդ. 4). ուստի եւ առաջարկութիւնն՝ թէ * 'ի Սեղան փոխանակութեան ունիմ լիրա՝ 1000. որ է ղր̅, 96000 |. ըստ կարգի եդեալ կայ յՕրհաշուին՝ այսպէս, * Սեղան փոխանակութեան ‖ Առ Դրամագլուխն՝ ղր̅, 96000. որ է արժէք 1000, լիրա դրամոցն, զոր ունիմ 'ի նմա. առ մի լիրա ղր̅, 96, բոլորագումարն առնէ ղր̅, 96000 | ։

ծթ. Երրորդ առաջարկութիւնն յայտ առնէ՝ թէ վաճառականն ունի զնաւ մի արժողութեամբ 30276, դահեկանաց ։ Այսմ նաւու անկ է ունել զիւր առանձին հաշուեմատն (խթ), զի է 'ի կարգս այնպիսի իրաց, յորմէ մարթ է քաղել զօգուտ կամ զվնաս. վասն որոյ զայն նաւ համարելով իբր մթերք ինչ վաճառաց, նշանակելի է պարտապան. իսկ զԴրամագլուխն՝ պարտատէր ըստ օրինակի նախագրելոցն. սորին վասն եդեալ կայ յՕրհաշուին. * Նաւն Արտաշէս ‖ Առ Դրամագլուխն՝ ղր̅, 30276, որ է գին եւ արժէք նորին | ։

'Ի վերայ յիշատակագրութեանս մարթ է նորավարժի ումեք երկմտիլ, թէ զիարդ նաւն լինիցի պարտապան առ Դրամագլուխն, եւ ոչ առ Դրամարկղն. համարելով զայն շինեալ 'ի դրամոց արկեղն. սակայն 'ի բացայայտութիւն ասացելոցս դիցուք աստանօր տեղեկութիւն ինչ, որ պիտանացու է ոչ միայն 'ի խելամտութիւն իրացս, այլ եւ 'ի լուծումն այլոց նման դժուարութեանց ։ Արդ՝ գիտել պարտ է, զի նախագրեալ առաջարկութիւնն է 'ի վերայ այնպիսւոյ ուրուք, որոյ հաշուեմատեանքն եւ Դրամարկղն միանգամայն 'ի նմին աւուր սկզբնաւորին. արդ՝ զորօրինակ Դրամարկղն չկարէ լինել պարտապան դրամոցն՝ որք չեւ իցեն արկեալ 'ի նա, նոյնպէս եւ ոչ լինել պարտատէր այնպիսում ստացուածոյ, որ յառաջ քան զհիմնարկութիւն հաշուեմատենին. զի վաճառականն յաւուր սկզբնաւորութեան մատենին ունէր զայն նաւ իբր մասն դրամագլխոյ իւրոյ. վասն որոյ անկ է նաւուն լինել պարտապան առ Դրամագլուխն, եւ ոչ առ Դրամարկղն, որ եւ այն սկզբնաւորի 'ի նմին աւուր, ընդունելով յինքն՝ դահեկանս, 123420. եւ 'ի գումարէ աստի չբառնի բնաւ եւ ոչ մանրափող մի 'ի պէտս այնր նաւուն ։ Բայց յետ առ անգամ մի յիշատակագրութեան ամենայն դրամագլխոց եւ սկզբնաւորութեան հաշուեմատենին՝ եթէ վաճառականն կամեսցի գնոյ առնուլ՝ կամ շինել տալ զայլ նաւ, պարտ է յայնժամ զերկրորդ նաւն պարտապան գրել առ Դրամարկղն, յորմէ ելանեն դրամք գնոյ կամ շինութեան այնր նաւուն ։ Յասացելոցս 'ի միտ առցես զայս կանոն՝ թէ 'ի կամիլ ուրուք սկզբնաւորել զհաշուեմատեան տուրեւառութեանց, նախ առաջին պարտ է զամենայն պարտապանս եւ զամենայն պարտատէրս հիմնել 'ի Դրամագլուխն. որով միայն յերեւան ելանեն ստացուածք եւ պարտիք վաճառականին. զի պարտապանքն նշանակեալք 'ի հաշուետումարս՝ միշտ համարին շահաւէտք (1), իսկ պարտատեարքն՝ վնասաւէտք. որպէս ունիս տեսանել յօրինակդ հետզհետէ ։

ծը. (1) ԼԻՐԱ. Իտ. Lira ։ Դրամանուն է, զոր սովոր են վարել 'ի Սեղանս փոխանակութեան. որոյ գինն եւ չափ արժէից բացայայտեսցին 'ի Թիւն (ծէ), եւ 'ի ծանօթութիւնս նորա ։

ծթ. (1) ՇԱՀԱՒԷՏՔ ։ Այսպէս կոչին ամենայն պարտակողմանք հաշուեմատենից, յորս նշանակին, եւ յորոց 'ի յայտ գան օգուտք տուրեւառութեանց վաճառականին, զոր Իտալացիք սովոր են անուանել՝ Attivo. Աթթիվօ. այսինքն՝ Ներգործական ։

ՎՆԱՍԱՒԷՏՔ կոչին ամենայն պահանջակողմանք, յորս նշանակին պարտիք կամ վնասք վաճառականին ։ Իտալացիք՝ Passivo, փասսիվօ՝ անուանեն. այն է Կրաւորական ։

Ի. Զորրորդ առաջարկութիւնն կարի հլաւոր է և իբր նոյն ընդ նախագրելոյն. իբրզի նոյն վաճառական ունի և զտուն ինչ բնակութեան՝ արժողութեամբ գնոյ 27276, դահեկանաց. վասն որոյ զոր միանգամ ասացաքն 'ի վերայ Արտաշէս Լուսուն, զնոյն խորհելով և սակս բնակարանին, կարգաւորաբար եդեալ կայ յՕրհաշուեն, * Բնակարան ‖ Առ Դրամագլուխն՝ դհ 27276. որ է գին նորա |:

ԻԱ. Հինգերորդ առաջարկութիւնն որ վասն Կրպակին և Մթերանոցին՝ քանզի նոյնավիճակ է ընդ նախագրելոյն, նովին կանոնաւ և ըստ նոյին սակի նշանակեալ կայ յՕրհաշուեն, * Կրպակ և Մթերանոց ‖ Առ Դրամագլուխն՝ դհ, 18721. որ է գին նոցա |:

ԻԲ. Վեցերորդ առաջարկութիւնն յայտ առնէ, թէ Խոջիկ Վազգէն պարտական է առ Դրամագլուխ վաճառականին՝ դահեկանս, 13418 : 16 : Ի նախագրելոյս յայտնի է, թէ Խոջիկ Վազգէնն ունի լինել պարտական, և Դրամագլուխ վաճառականին պարտատէր. սորին վասն նշանակեալ կայ յՕրհաշուեն. * Խոջիկ Վազգէն ‖ Առ Դրամագլուխն՝ դհ, 13418 : 16. զոր ինձ պարտի |:

ԻԳ. Եօթներորդ առաջարկութիւնն յայտ առնէ՝ թէ վաճառականն ունի 7242, լիտր Մետաքս՝ արժողութեամբ գնոյ 217270, դահեկանաց : Արդ՝ քանզի և սա իբրև զայլսն մասն է դրամագլխոյ վաճառականին, նորին աղագաւ օրէն է ըստ նոյն կանոնի զՄթերս Մետաքսին նշանակել պարտական, և զԴրամագլուխն պարտատէր : Վասն որոյ առաջարկութիւնն՝ թէ * Ունիմ Մթերս Մետաքսի՝ լիտր, 7242. որոյ արժէքն է դհ, 217270 |. ըստ կարգի եդեալ կայ յՕրհաշուեն. * Մթերք Մետաքսի ‖ Առ Դրամագլուխն՝ դհ, 217270. որ է գին՝ 7242, լտեր |: Այսուիկ յիշատակագրութեամբ մթերք մետաքսին լինի պարտական, և դրամագլուխն պարտատէր այնց դրամոց, որք տուեալ են վասն մետաքսի :

ԻԴ. Ութերորդ՝ որ և յետին առաջարկութիւնն յայտ առնէ՝ թէ նոյն վաճառական ունի և զպարտիս ինչ՝ 7592, դահեկանաց առ Գեղամ փառնակ : Այս գումար դրամոց քանզի եկեալ է 'ի դուրս յարկեղէ անտի փառնակայ, և խառնեալ ընդ դրամագլխոյ վաճառականին, սորին վասն պարտական առնելով զԴրամագլուխն, նշանակեալ կայ յՕրհաշուեն. * Դրամագլուխ ‖ Առ Գեղամ փառնակ՝ դհ, 7592. զոր պարտիմ նմա | (ծդ. 4) : Յայսմ առաջարկութեան հնար է նորավարժից վերստին երկմտել, թէ զիարդ պարտական նշանակիցի Դրամագլուխն և ոչ Դրամարկղն, յոր եդեալ կան դրամք՝ առաւել քան զայդ պարտիս վաճառականին. որով և կարծել թէ դրամք փառնակայ մնացեալ իցեն 'ի դրամարկղն : Արդ՝ 'ի լուծանել զերկբայութիւնս՝ թէպէտև բաւական համարին նախասացեալքն յաղագս Արտաշէս Լուսուն (ծթ). սակայն 'ի հանդուցանել զմիտս նորուսումն համբակաց, ունիմք վերստին այլով օրինակաւ պարզել զայն 'ի թիւն (իզ, և իթ) :

ԻԵ. Յետ ուշադիր մտօք հասու լինելոյ նախագրելոցդ, դարձցիս անդրէն 'ի քննութիւն նախակարգեալ Մայրհաշուեն, տեսանել՝ թէ յիշատակագրութիւնք Օրհաշուեն զիարդ սփռեալ կան յիւրաքանչիւր տեղիս : Գտանես անդ, զի Դրամագլուխ վաճառականին յեօթն տեղիս նշանակի պարտատէր. և 'ի միում տեղւոջ եւեթ պարտական : Պահանջք վաճառականին նշանակեալ կան 'ի պարտակողմն հաշուեմատից մթերից և անձանցն, որք զդրամս նորա գրաւեալ ունին, և են պարտականք նմին. որպիսի է Դրամարկղ. Սեղան փոխանակութեան. Լուսն. Բնակարանն. Կրպակ և Մթերանոց. Խոջիկ Վազգէն. և Մթերք Մետաքսի : Իսկ իւր պարտիքն՝ է մի միայն 'ի պահանջակողմն հաշուեմատին Գեղամ փառնակայ, որ է պարտատէր դրամոցն, զոր տուեալ է նմա :

Կարգ և օրինակ հաշուեմատենի 'ի դէպս տուրեւառի՝ որ լինիցի մինչև պարապել 'ի վաճառականութիւն, առնելով 'ի յետին դրամագլուխս ողջս, և պահանջս Թերայոյս (1) :

ԻԶ. Դիցուք թէ վաճառական ոք փոփոխելով սկզբնաւորել զհաշուեմատեան տուրեւառութեան, տեսանէ՝ զի մասն ինչ ստացուածոց իւրոց գոլով դրամագլուխ ողջ և հաստատ, ժամանէ 'ի գումար՝ 40000, դհից. և միւս մասն՝ որ է 12000, դհ, լինելով պահանջ 'ի Բարկենէ,

ԻԶ. (1) ԹԵՐԱՅՈՅՍ : Այսպէս կոչին պահանջքն դժուարակորզելիք 'ի անանկացեալ պարտականաց : Զայսպիսի պահանջս Իտալացիք անուանեն. Di poca speranza. տի փոգա սփէռանցա : Այն է՝ սակաւայոյս :

կարի դժուարակորզելի է 'ի պատճառս անանկութեան նորա ։ Յայսպիսի դիպուածս դիտել պարտ է նախ՝ զի առ բարւոք կարգաւորութիւն հաշուեմատենին հարկ է նշանակել 'ի նմա զամենայն վիճակս ստացուածոյ , և զամենայն պահանջման՝ թէպէտև անյուսալիս 'ի կորզել ․ քանզի հնար է թէ ժամանակաւ վճարեսցին՝ կամ ըստ մասին , և կամ ըստ բոլորին ( որպէս սովոր է պատահել ) , յայնժամ կարասցէ վաճառականն յանդիման պահանջիցն յիշատակագրել զառեալն ։ Երկրորդ դիտելի է՝ զի 'ի հաշուեառումսն՝ եթէ այսոցիկ թերայոյս պահանջից պարտատէր նշանակեսցի բովանդակ Գրամագլուխն՝ ըստ նախասացելոցս ( կը ) , կարծիս տայ թէ հաշուեմատեանն սկզբնաւորիցի 52000 , ֆղ , ողջ և աներկբայելի դրամովք , որ է սուտ ․ զի հաւաստի Գրամագլուխն է 40000 , ֆղ ևեթ , զոր արկ 'ի Գրամարկղն ․ իսկ 12000 , ֆղքն դժուարակորզելի լինելով՝ տկարապէս չհամարին Գրամագլուխք ․ վասն որոյ և անպատշաճ է խառնել զնոսին ընդ հաւաստի դրամս ։ Նորին աղագաւ 'ի հիմնելն զհաշուեմատեանն՝ պարտ է զատել զայնոսիկ յերկուս Գրամագլուխս առանձին հաշուեմատեամբք ․ յորոց 'ի միումն նշանակելի են ողջ և հաւաստի դրամքն՝ 40000 , ֆղից , իսկ 'ի միւսն՝ թերայոյս և երկբայելի դրամքն 12000 , ֆղից ․ որպէս տեսցի յօրինակ Մայրհաշուին , զոր ունիմք դնել յետ ( մդ ) թուոյն ։ Այլև յայսպիսի դիպուածս ուրանօր երբէք յիշատակեսցի անուն անանկացեալ Բարկէնին՝ եթէ յՕրհաշուին և թէ 'ի Մայրհաշուին , պարտ է զանանկութիւն նորա յայտնի նշանակել բառիւս Թերայոյս ․ զորոյ զպատճառն ծանուսցուք յիւրում տեղւոջ ( մդ ) ։

կէ ․ Նոյն կարգ և կանոն պահելի է 'ի հիմնարկութիւնս հաշուեմատենից՝ եթէ ունիցի ոք զայսպիսի դժուարակորզելի պահանջս յայլևայլ անանկացեալ անձանց ։ Զօրօրինակ՝ եղեալ թէ ունիցիս պահանջս 10000 , դահեկանաց 'ի Գուրգէնոյ ։ Նաև 8000 , դահեկանս յՍտոմայ ։ Նաև և 6000 , դահեկանս յԵրուանդայ , որք միօրինակ անձեռնհաս իցեն վճարել քեզ զպարտիս իւրեանց ։ Պարտ է 'ի հաշուեմատենին կարգել նախ՝ զառանձին հաշուեմատն իւր ընդ անուամբս * ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԹԵՐԱՅՈՅՍ | ․ և ապա որոշելի է իւրաքանչիւր պարտապանաց զիւր հաշուեմատն ( իթ ) առ որս ուղղեսցին յիշատակագրութիւնք վասն նոցա նշանակելիք յՕրհաշուին ․ ուր զառաջնոյն յիշատակագրելի է այսպէս ․ * Գուրգէն թերայոյս պարտապան ‖ Առ Գրամագլուխն թերայոյս՝ ֆղ, 10000 ․ որ է ամբողջ պարտիք նորա , զոր իբր անկորզելի համարիմ ․․․․ ֆղ, 10000 | ։ Վասն երկրորդին նշանակելի է այսպէս ․ * Ստոմ թերայոյս պարտապան ‖ Առ Գրամագլուխն թերայոյս՝ ֆղ , 8000 , որ է ամբողջ պարտիքն իբր անկորզելի ըստ նախընթացին , ֆղ ․ 8000 | ։ Իսկ վասն երրորդին այսպէս ․ * Երուանդ թերայոյս պարտապան ‖ Առ Գրամագլուխն թերայոյս՝ ֆղ , 6000 ․ ամբողջ պարտիք նորա ըստ նախագրելոյն ․ ․ ֆղ , 6000 | ։ Զայսոսիկ յիշատակագրութիւնս 'ի փոխադրել անդ յՕրհաշուէ 'ի Մայրհաշուին , պարտ է զպահանջս թերայոյս դրամագլխոյն նշանակել առ իւրաքանչիւր պարտիսն Գուրգէնոյ , Ստոմայ և Երուանդայ ։ Իսկ յետ ժամանակաց՝ եթէ ոք 'ի սոցանէ վճարեսցէ զիւր պարտիս , կամ ըստ մասին և կամ ըստ բոլորին , յայնժամ պարտ է զյիշատակագրութիւնսն յարմարել ըստ օրինակին , զոր ունիմք աւանդել 'ի խօսիլն յաղագս Թերայոյս Պահանջից ( մդ ) ։

Կարգ և օրէնք Հաշուեմատենից 'ի դէպս առանձնաւորի ուրուք , որոյ Գրամագլուխն նուազ գոլով և անբաւական 'ի վաճառականութիւն , օժանդակի առնէ ընկերակցութեամբ այլոց ։

կը ․ Դիցուք թէ այր ոք ունելով իւր սեփական դրամս՝ 6200 , ֆղ ևեթ , ընկալեալ իցէ և 'ի Կաղմոս իշխանէն դրամս 'ի փոխ ֆղ, 60000 ։ Նաև 'ի Կամսարայ Սահակեայ զնոյ առեալ է 5000 , լիտր զահլէ , 'ի գին 20000 , դահեկանաց , զորս ունի վճարել յետ վեց ամսոց ։ Զվիճակ այսր դիպուածոյ մարթ է կրկին օրինակաւ կարգաւորել 'ի հաշուեմատենին , զոր ցուցցուք յառաջիկայդ ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԸՍՏ ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿԻՆ

4 · Յունվարի · 1820 ։

Ա· Այսօր եդի 'ի Գրամարկղն՝ ղշ, 66200, 'ի սկզբնաւորութիւն տուրեւառութեան ։

---

Բ· Առնիմ պարտիս առ Կադմոս իշխանն՝ ղշ, 60000 · զոր ետ ինձ 'ի փոխ, դաշամբ շահաւէտար լինելոյ նմա ամ ըստ ամէ՝ ղշ, 6, առ % այսինքն՝ առ հարիւր ։

---

Գ· Առնիմ 'ի մթերանոցն 5000, լիտր Գահուէ · որոյ բոլորագումար արժէիցն է՝ ղշ, 20000 ։

---

Դ· Առնիմ պարտիս առ Կամար Մսեցի՝ ղշ, 20000 · որ է գին 5000, լիտր գահուէին, զոր առի 'ի նմանէ, դաշամբ վճարելոյ զգինն յետ վեց ամսոց ։

---

(1)

## ՕՐՀԱՇԻՒ

1820 · 'Ի Զմիւռնիա ։

| | 4 · Յունվարի ։ | ղշ | փր |
|---|---|---|---|
| 1 / 2 | Գրամարկղ ‖ Առ Գրամագլուխն՝ ղշ, 66200 · որ այսօր եդաւ 'ի նմա 'ի սկզբնաւորութիւն տուրեւառութեան . . . . . . . . . | 66200 | — |
| 2 / 3 | Գրամագլուխ ‖ Առ Կադմոս իշխան՝ ղշ, 60000 · զոր ետ ինձ փոխ շահաւէտր պայմանաւ ղշ, 6 · առ % այսինքն՝ հարիւր 'ի տարւոջ · և զգլուխն ունիմ վճարել նմա առ սակաւ սակաւ . . . . . . | 60000 | — |
| 4 / 2 | Մթերք Գահուէի ‖ Առ Գրամագլուխն՝ ղշ, 20000, որ է գին 5000, լիտր գահուէին զոր ունիմ 'ի մթերանոցն . . . . . . . . | 20000 | — |
| 2 / 5 | Գրամագլուխ ‖ Առ Կամար Մսեցի՝ ղշ, 20000, զի վաճառեաց ինձ 5000, լիտր գահուէ՝ վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն . . . . | 20000 | — |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | ԴՐԱՄԱՐԿՂ | | | ՊՂ | փրէ |
| 1820 Յուն՝. 4 | Առ Դրամագլուխն՝ ՊՂ, 66200. որք եղան 'ի նմա . . . | 1 | 2 | 66200 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 2 | ԴՐԱՄԱԳԼՈՒԽ | | | ՊՂ | փրէ |
| 1820 Յուն՝. 4 | Առ Կադմոս իշխանն՝ ՊՂ, 60000, զոր ետ ինձ 'ի փոխ . . . | 1 | 3 | 60000 | — |
| | Առ Կամսար Սսեցի՝ ՊՂ, 20000, զոր պարտիմ նմա . . . | 1 | 5 | 20000 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 3 | ԿԱԴՄՈՍ ԻՇԽԱՆ | | | ՊՂ | փրէ |

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ | | | | ՊՂ | փրէ |
| 1820 Յուն՝. 4 | Առ Դրամագլուխն՝ ՊՂ, 20000, գին գահվէին . . . | 5000 | 1 | 2 | 20000 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 5 | ԿԱՄՍԱՐ ՍՍԵՑԻ | | | ՊՂ | փրէ |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | I |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ղր | փր | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 2 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ղր | փր | |
| 1820 Յունվ. | 4 | 'Ի Դրամարկեղէ՝ ղր, 66200 . որ այսօր եդաւ 'ի նմա . . | 1 | 1 | 66200 | — | |
| | | 'Ի Մ՝Թերից գանձկէին՝ ղր, 20000 . որ է գին նորա . . . | 1 | 4 | 20000 | — | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 3 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ղր | փր | |
| 1820 Յունվ. | 4 | 'Ի Դրամագլխոյն՝ ղր, 60000, զոր ետ ինձ 'ի փոխ. . . . | 1 | 2 | 60000 | — | |

| | | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ղր | փր | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 5 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ղր | փր | |
| 1820 Յունվ. | 4 | 'Ի Դրամագլխոյն՝ ղր, 20000 . վճարելի յետ վեց ամսոց . | 1 | 2 | 20000 | — | |

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԸՍՏ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿԻՆ

4. Յունվարի. 1820 ։

Ա. Այսօր սկզբնաւորելով 'ի տուրեւառութիւն՝ եդի 'ի Դրամարկղն ղշ, 6200. որք են իմ սեփական ստացուածք ։

---

Բ. Եդի 'ի Դրամարկղն՝ ղշ, 60000. զոր Կադմոս Իշխան ետ ինձ 'ի փոխ, դաշամբ շահավճար լինելոյ նմա 'ի տարւոջ ղշ, 6, առ % այսինքն՝ առ հարիւր ։

---

Գ. Կամսար Սսեցի վաճառեաց ինձ 5000, լիտր գահվէ, 'ի գին 20000, ղշից, զոր յետ վեց ամսոյ ունիմ վճարել նմա ։

---

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| 1 | ԴՐԱՄԱՐԿՂ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | ղշ | փրէ |
| Յունվ". 4 | Առ Դրամագլուխն՝ ղշ, 6200. որք եդան 'ի նմա. . . . | 1 | 2 | 6200 | — |
| | Առ Կադմոս Իշխան՝ ղշ, 60000. զոր ետ ինձ 'ի փոխ. . . | 1 | 4 | 60000 | — |

| 2 | ԴՐԱՄԱԳԼՈՒԽ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | ղշ | փրէ |
| Յունվ". 4 | | | | | |

| 3 | ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | ղշ | փրէ |
| Յունվ". 4 | Առ Կամսար Սսեցի՝ ղշ, 20000, զի վաճառեաց ինձ. | 5000 | 1 | 5 | 20000 | — |

| 4 | ԿԱԴՄՈՍ ԻՇԽԱՆ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ղշ | փրէ |

| 5 | ԿԱՄՍԱՐ ՍՍԵՑԻ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ղշ | փրէ |

# ՕՐՀԱՇԻՒ

1820. Ի Զմիւռնիա:

| | 4. Յունվարի: | ղշ | փէ |
|---|---|---|---|
| —1 / 2— | Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխն՝ ղշ, 6200. որ եդաւ 'ի պէտս տուրեւառութեան. . . . . . . . . . . . . . . . . . . | 6200 | — |
| —1 / 4— | Նորին ‖ Առ Կարապետ Իշխան՝ ղշ, 60000, որ ետ ինձ 'ի փոխ. շահու ղշ, 6. առ % այսինքն՝ առ հարիւր. . . . . . . . . . . | 60000 | — |
| —3 / 5— | Մթերք Գահվէի ‖ Առ Կամառ Մուսէյի՝ ղշ, 20000. որ է գին 5000, լիտր գահվէին. վճարելի յետ վեց ամսոյ. . . . . . . | 20000 | — |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փէ | 1 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փէ | 2 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունվ. 4 | 'Ի Դրամարկեղէ՝ ղշ, 6200. որք այսօր եդան 'ի նմա. . . | 1 | 1 | 6200 | — | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փէ | 3 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փէ | 4 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունվ. 4 | 'Ի Դրամարկեղէ՝ ղշ, 60000, զոր ետ ինձ փոխ շահավճար պայմանաւ. . . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | 60000 | — | |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փէ | 5 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունվ. 4 | 'Ի Մթերից գահվէին՝ ղշ, 20000. վճարելի յետ վեց ամսոյ. . . . . . . . . . . . . . | 1 | 3 | 20000 | — | |

ԿԹ. Ի նախակարգեալ յառաջնում օրինակի վաճառականն կամեցաւ զամենայն դրամն 66200, դահեկանաց՝ համարել իբր իւր սեփական ստացուածս. նմին իրի պարտ էր զայն գումար քովանդակապէս դնել 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Դրամագլխոյն (ԾԷ). ըստ որում եղեալ կայ յՕրհաշուէն. * Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխն ղ̃ղ, 66200. որ այսօր եդաւ 'ի նմա 'ի սկզբնաւորութիւն տուրևառութեան |: Արդ՝ 'ի դնել անդ միանգամ զԴրամագլուխն պարտատէր 66200, ղ̃ղից. հարկ էր յետոյ հանել 'ի գումարէ անտի զ60000, դահեկանս, որք չէինն իւր սեփականք, և նշանակել 'ի պահանջս այնր անձին, որոյ էին դրամքն. սոյին սակս եղեալ կայ երկրորդ յիշատակագրութիւն Օրհաշուէն. * Դրամագլուխ ‖ Առ Կաղմոս Իշխան՝ ղ̃ղ, 60000, զոր ետ ինձ 'ի փոխ. պայմանաւ շահավճար լինելոյ նմին ղ̃ղ, 6. առ հարիւրն 'ի տարւոջ. իսկ զգլուխն ունիմ վճարել նմա առ սակաւ սակաւ |:

Հ. Արդ՝ հայեաց և յառաջարկութիւնս երկրորդ օրինակին՝ որ սակս սոյին իրաց. ուր տեսանես, զի նոյն վաճառական Թէպէտ եղեալ է 'ի Դրամարկղն ղ̃ղ, 66200, սակայն յայտ առնելով Թէ 6200, դահեկանքն իցեն իւր սեփականք. իսկ 60000, ղ̃ղքն Կաղմոս Իշխանին: 'Ի դնելն այսպէս՝ օրէն էր զգումար 6200, դահեկանացն՝ որք են սեփական դրամք վաճառականին, նշանակել նախ 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Դրամագլխոյն (ԾԷ). յետոյ և զգումար 60000, դահեկանաց նշանակել 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Կաղմոս Իշխանին՝ յորմէ ընկալեալ է զայն 'ի փոխ (ԿԴ): Ահա յայտնիկ կանոնս հիմնելով զառաջարկութիւնս՝ նշանակեալ կան յիշատակագրութիւնք Օրհաշուէն. * Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխն՝ ղ̃ղ, 6200. որ այսօր եդաւ 'ի նմա 'ի պէտս տուրևառութեան |: Որպէս և յաջորդն, * Դրամարկղ ‖ Առ Կաղմոս Իշխան՝ ղ̃ղ, 60000. զոր ետ ինձ 'ի փոխ. պայմանաւ շահավճար լինելոյ նմա ղ̃ղ, 6. առ հարիւր 'ի տարւոջն |:

ՀԱ. 'Ի ձեռն յիշատակագրութեանց առաջին օրինակին Դրամարկղն լինի պարտապան 66200, դահեկանաց. իսկ երկրորդիւն լինի պարտապան երկուց պարտեաց, որք նոյնպէս հաւասարին 66200, դահեկանաց: Յառաջնում օրինակի Դրամագլուխն Թէպէտև լինի պարտատէր 66200, դահեկանաց, բայց քանզի ունի զպարտիս 60000, դահեկանաց, պահանջք նորա մնան դարձեալ 6200, դահեկանք ևեթ: Իսկ յերկրորդումն՝ Դրամագլուխն նոյնպէս լինի պարտատէր 6200, դահեկանաց: Յառաջնում օրինակի՝ որպէս և յերկրորդումն Կաղմոս Իշխանն միօրինակ լինի պարտատէր 60000, դահեկանաց:

ՀԲ. Ածցուք արդ 'ի քննութիւն և զառաջարկութիւնս՝ որ 'ի վերայ Սթերից Գաւհլէնն: Յառաջնում օրինակի քանզի համարեցաւ՝ Թէ 5000, լիտր գաւհլէն նորին իսկ վաճառականին է. վասն որոյ հարկ էր զգինս նորա դնել 'ի պարտիս Սթերից Գաւհլէնն, և 'ի պահանջս Դրամագլխոյն (ԿԴ), ըստ որում երևի 'ի յիշատակագրութենէ անտի Օրհաշուէն. * Սթերք Գաւհլէի ‖ Առ Դրամագլուխն՝ ղ̃ղ, 20000. որ է գին 5000, լիտր գաւհլէնն, զոր ունիմ 'ի մԹերանոցին |: Իսկ քանզի յիշատակագրութեամբս ընծային Դրամագլխոյ այնպիսի պահանջք, զորմէ և ինքն իսկ վաճառականն վկայէ՝ Թէ չէին իւր սեփական ստացուածք, նմին իրի յաւելեալ կայ զկնի և այլ յիշատակագրութիւն այսպէս. * Դրամագլուխ ‖ Առ Կամսար Սսեղի՝ ղ̃ղ, 20000, զի վաճառեաց ինձ 5000, լիտր գաւհլէ՝ վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն |. որով բառնի Դրամագլուխն լինի պարտապան, և եղծանի պարտատէրութիւնն, որ նշանակեցաւ յառաջ. և փոխան նորա Կամսար Սսեղի լինի պարտատէր 20000, ղ̃ղիցն, որք տիրապէս նորա են:

ՀԳ. Յերկրորդ օրինակին՝ քանզի գիտէ վաճառականն, Թէ գին գաւհլէնն ոչ է իւր, այլ Կամսարայ Սսեղւոյ. սոյին վասն նշանակեալ կայ յառաջարկութեան, եԹէ * Կամսար Սսեղի վաճառեաց ինձ 5000, լիտր գաւհլէ՝ 'ի գին 20000, դահեկանաց, զորս յետ վեց ամսոց ունիմ վճարել նմա |: Այսու բանիւ աներկմիտ գուշակի, Թէ 20000, դահեկանքն նշանակելի են 'ի պարտիս Սթերից Գաւհլէնն, և 'ի պահանջս Կամսարայ Սսեղւոյ (ԾԳ. Կ). նորին վասն եդեալ կայ յՕրհաշուէն. * Սթերք Գաւհլէի ‖ Առ Կամսար Սսեղի՝ ղ̃ղ, 20000. որ է գին 5000, լիտր գաւհլէնն, զոր վաճառեաց ինձ, վճարելի յետ վեց ամսոց |:

ՀԴ. 'Ի ձեռն յիշատակագրութեանց առաջին օրինակին Սթերք Գաւհլէնն լինի պարտապան 20000, ղ̃ղի. նոյն պարտիք ելանեն և 'ի յիշատակագրութեանց երկրորդ օրինակին: Առաջին օրինակաւ Դրամագլուխն լինի պարտատէր 20000, դահեկանաց. և յետոյ սակս նոյն գումարի դրամոց լինելով պարտապան, եղծանին պահանջք և պարտատէրութիւն նորա: Իսկ երկրորդում օրինակի՝ որպէս և յերկրորդումն Կամսար Սսեղի միօրինակ լինի պարտատէր 20000, դահեկանաց:

ՀԵ. Առ բարւոք խելամտութիւն նախագրելոցս հայեաց վերստին 'ի կրկնօրինակ Մայրհաշուեան՝ զոր կարգեցաք վերագոյնդ, թէ յիւրաքանչիւր հաշուեմատեան զինչ են գումարք դրամոց նշանակեալ կայցեն. և թէ յիշատակագրեալ անձինք և մթերք որչափ են դրամոց պարտապանք և պարտատեարք իցեն. զորոց զպարտիսն եթէ գումարեսցես 'ի մի, հաւասարեն պահանջից իւրեանց: Յառաջնում օրինակին Դրամարկղն պարտապան է 66200, դահեկանաց. նոյնպէս է և յերկրորդումն: Յառաջնում օրինակին Դրամագլուխն պարտատէր է 6200, դահեկանաց. նոյնպէս է և յերկրորդումն: Յառաջնում օրինակին Մթերք Գահվէի պարտապան է 20000, դահեկանաց. նոյնպէս է և յերկրորդումն: Յառաջնում օրինակին Կադմոս իշխանն պարտատէր է 60000, դահեկանաց. նոյնաչափ են և յերկրորդումն պահանջք նորա: Յառաջնում օրինակին Կամսար Մսեցի պահանջս ունի 20000, դահեկանաց, և յերկրորդումն նոյնաթիւ գումարի դրամոց է պարտատէր:

ՀԶ. Երկոքին օրինակքս այլևայլ կարգաւ զնոյն գործ կատարեն. սակայն մարթ է նորավարժից երկմտել 'ի տեսանել անդ՝ թէ յառաջնում օրինակի Կամսար Մսեցի նշանակեալ կայ պարտատէր, որ 'ի Դրամագլխոյն ունի պահանջս 20000, դահեկանաց. իսկ յերկրորդումն՝ նոյն պահանջք Կամսարայ նշանակին լինել 'ի Մթերից Գահվէին: Այլ պարտ է գիտել՝ զի Կամսար Մսեցի տիրապէս ունի պահանջս 'ի վաճառականէն. վասն որոյ այն պահանջք՝ եթէ 'ի Դրամագլխոյն նշանակեսցին, և թէ 'ի Մթերից գահվէին, մի և նոյն է. զի երկոքին ևս անկ են վաճառականին ըստ նախաւանդեալ կանոնիս, թէ եղեալքն 'ի հաշուետումարս՝ ամենեքին առ հասարակ պարտապանք և պարտատեարք համարելի են նմին իսկ վաճառականին, որ վարէ զայն հաշուեմատեան (ծէ. 7): Զոր աւելիս վասն Կամսարայ Մսեցւոյ, պարտ է իմանալ և վասն այլոց ամենեցուն:

ՀԷ. Ասացաք վերագոյնդ՝ թէ երկոքին օրինակք հաշուեմատենից այլևայլ կարգաւ զնոյն գործ կատարեն. բայց թէ որ 'ի նոցանէ առաւել ընտրելի իցէ և արժանի կիրառութեան, տեսցուք աստանօր: Երկրորդ օրինակն թէպէտ զամենայն ինչ ըստ կանոնի նշանակէ, և համառօտագոյն է քան զառաջինն, սակայն կարգ և դասաւորութիւն առաջնոյն ընտրելագոյն և առաւել ապահով է քան զերկրորդին. զի 'ի նմա դիւրաբար ուղղին և կարգաւորին ամենայն դժուարութիւնք, առ որս միանգամ անկարանայ երկրորդն, զոր յայտ արասցուք առաջիկայ օրինակաւս:

Եդեալ թէ Փառնակ Մարեցի անստացուած գոլով ընկալաւ փոխ 'ի Ներսէհէ դրամ՝ 10000, դահեկանաց, և նորօք գնոյ եառ զմթերս Մեղրամոմոյ: Արդ 'ի կամիլ նորա սկզբնաւորել զիւր հաշուեմատեան տուրևառութեան, զառաջինն չգտանէ այլ ինչ վասն յիշատակագրութեան, բայց եթէ՝ զի ունի Մեղրամոմ, որոյ գինն է 10000, դահեկան. գիտէ ևս՝ զի ինքն պարտապան է առ Ներսէհ՝ 10000, դահեկան: Արդ՝ 'ի նշանակել զայսոսիկ ըստ կարգի առաջին օրինակին, պարտ է յՕրհաշիւ մատենին առնել զերկին յիշատակագրութիւնս, յորոց 'ի միումն օրէն է զՄթերս Մեղրամոմոյ պարտապան գրել 10000, դահեկանաց, պարտատէր առնելով զԴրամագլուխն: Իսկ 'ի միւսումն՝ պարտապան գրելի է Դրամագլուխն, և պարտատէր զՆերսէհ (ՀԳ): Այլ 'ի կամիլ ուրուք զայդ դիպուած կարգաւորել ըստ երկրորդ օրինակին, ընդ առաջ ելանէ դժուարութիւնս. զի 'ի սկզբնաւորութեան հաշուեմատենին որովհետև 'ի փոխ առեալ դրամքն ոչ են 'ի Դրամարկղն, այլ 'ի Մթերս Մեղրամոմոյ, չէ մարթ ոչ զԴրամարկղն և ոչ զՄեղրամոմն պարտապան առնել առ Ներսէհ. զի դրամարկղն դատարկ գոլով 'ի դրամոց՝ անկարանայ լինել պարտապան. իսկ Մեղրամոմն՝ քանզի չունի պատշաճողութիւն ինչ ընդ Ներսէհի, որ չէ վաճառեալ զայն. վասն որոյ և չկարէ գրել պարտապան նմին: Այս հարկ է ըստ կարգի առաջին օրինակին համարել, թէ դրամքն 10000, դահեկանաց, յաւուր սկզբնաւորութեան հաշուեմատենին եղեալ իցեն 'ի դրամարկղ, և թէ 'ի նմին աւուր նովին դրամովք գնոյ առեալ իցէ Մեղրամոմն: Այսպիսի հնարկութեամբ պարտ է նախ առաջին զդրամն՝ 10000, դահեկանաց նշանակել 'ի պարտիս Դրամարկղոյ՝ պարտատէր առնելով զՆերսէհ (ծէ. 4). և ապա նովին կանոնաւ զպարտիս 10000, դահեկանաց՝ պէտք են նշանակել 'ի վերայ Մթերից Մեղրամոմոյ՝ պարտատէր առնելով զԴրամարկղն. որպէս թէ 'ի նմանէ ելեալ իցեն դրամք Մեղրամոմոյն:

Զկարգ լաւութեան առաջին օրինակին մարթ է իմանալ և 'ի դիւրութենէն, որով փոյթ և անաշխատ կարգաւորի հաշուեմատեանն. չնա է վաճառականին համարել եւեթ, թէ ամենայն դրամք և մթերք գտեալք 'ի տուրևառութեան՝ իւրքն են. վասն որոյ 'ի սկզբնաւորութեան հաշուեմատենին օրէն է զպարտիսն դնել 'ի վերայ Դրամարկղոյ և Մթերիցն գտելոց 'ի ձեռս իւր, պարտատէր առնելով զԴրամագլուխն. յետոյ պարտապան գրելի է Դրամագլուխն 'ի փոխ առեալ դրամոցն, և մթերից գնոյ առելոց. պարտատէր առնելով զնոսին՝ յորոց միանգամ ընկալեալ իցեն:

Կարգ և օրինակ Հաշուեմատենի 'ի դէպս այնոցիկ, որք խառնեն ընկերութեամբ դրամագլուխ 'ի վաճառականութիւն. և Դրամագլուխք նոցա չիցեն համաչափ միմեանց:

հը. Ընկերութիւն վաճառականութեան որովհետև կարէ լինել բազմապատիկ յեղանակաւ, նմին իրի և կարգաւորութիւնք հաշուեմատենից մարթին լինել բազմօրինակք ըստ յօգնադէմ դաշանց միաբանեալ ընկերացն. բայց քանզի անհնար է յառաջիկայ գործս բովանդակել զամենայն տեսակս հաշուընկերութեան, վասն որոյ կարգեսցուք աստանօր զգլխաւորսն և եթ, յորոց կարեն աշակերտք ընթերցասէրք գուշակել և խելամուտ լինել կարգի և կանոնացն, զորս օրէն իցէ պահել և յայլ դիպուածս անփոփոխ մնացեալս 'ի մէնջ:

Դնիցուք թէ Ղազարոս, Տիգրան և Մուշեղ զանազան դրամագլխովք և պէսպիսացեալ շահաբաժնիւ միաբանեցան առնել զտուրևառութիւն յօգուտ ընկերութեան իւրեանց: Որոյ միաբանութեան առաջարկութիւնք հիմնեալ են այսպէս:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

7. Մարտի. 1820:

Մեք Ղազարոս, Տիգրան և Մուշեղ հաստատեցաք զմիաբան ընկերութիւն տուրևառութեան՝ յօգուտ հաշուընկերութեանս. որպէս յայտ է 'ի թղթոյ անտի դաշնադրութեան մերոյ: Զդրամագլուխս իւրաքանչիւր ընկերաց առանձինն նշանակեմք աստանօր. ըստ որոյ բաժանելի են 'ի մեզ և շահքն կամ վնասք, զոր յաջողեսցէ տէր:

Դրամագլուխ Ղազարու:

Ա. Դրամ պատրաստական. ՂՂ, 62320:
Բ. Զուխայ՝ 370, Հատուածածրար. որ եղաւ յընկերութեան՝ 'ի գին 14500, դահեկանաց:
Գ. Պահվլէ 5600, լիտր, եղաւ յընկերութիւն՝ 'ի գին 16800, դահեկանաց:

---

Դրամագլուխ Տիգրանայ:

Դ. Դրամ պատրաստական. ՂՂ, 30000:
Ե. Հաշուեմատն մի 'ի Մեղան փոխանակութեան, լիրա, 100. եղաւ յընկերութիւն՝ 'ի հաշիւ 9600, դահեկանաց:
Զ. Որձիւ անուամբ փոքր նաւ մի եղաւ յընկերութիւն, 'ի հաշիւ 31000, դահեկանաց:

---

Դրամագլուխ Մուշեղայ:

Է. Դրամ պատրաստական. ՂՂ, 23000:
Ը. Պահվլէ 2800, լիտր, եղաւ յընկերութիւն՝ 'ի հաշիւ 8400, դահեկանաց:
Թ. Շաքար 2600, լիտր, եղաւ յընկերութիւն՝ 'ի հաշիւ 7800, դահեկանաց:
Ժ. Հաշուեմատն մի 'ի Մեղան փոխանակութեան՝ լիրա, 80. եղաւ յընկերութիւն՝ 'ի հաշիւ 7680, դահեկանաց:

---

# ՕՐՀԱՇԻՒ

1820. Ի Զմիւռնիա:

7. Մարտի:

| | | ղր. | փրէ |
|---|---|---|---|
| 4 / 1 | Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխն Մաղաքեայ՝ ղր. 62320. զոր նա ինքն այսօր եդ յընկերութիւն դրամ պատրաստական . . . . | 62320 | — |
| 5 / 1 | Մթերք Չուխայի ‖ Առ Նախագրեալն՝ ղր. 14500, որ է գին 370, ծրար չուխայիցն՝ զոր եդ այսօր յընկերութեան. և 'ի համակամ հաւանութենէ ընկերացն ընկալեալ եղև նովին գնով. . . . . . . | 14500 | — |
| 6 / 1 | Մթերք Գահվէի ‖ Առ Նախագրեալն՝ ղր. 16800. որ է գին 5600, լտր գահվէին, զոր եդ այսօր յընկերութեան, և 'ի համակամ հաւանութենէ ընկերացն ընկալեալ եղև նովին գնով. . . . . . . | 16800 | — |
| 4 / 2 | Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխ Տիգրանայ՝ ղր. 30000. զոր եդ այսօր յընկերութեան՝ ընտիր և պատրաստական դրամովք. . . . | 30000 | — |
| 7 / 2 | Սեղան փոխանակութեան ‖ Առ Նախագրեալն՝ ղր. 9600. վասն 100, լիրայի Սեղանոյն, զոր եդ այսօր յընկերութեան, և նովին հաշուիւ ընկալեալ եղև 'ի համակամ հաւանութենէ ընկերացն. . . . | 9600 | — |
| 8 / 2 | Արծուանուն Նաւն ‖ Առ Նախագրեալն՝ ղր. 31000. զոր հաշուեալ 'ի գին նաւուն, ընկալեալ եղև յընկերութեան. . . . . . | 31000 | — |
| 4 / 3 | Դրամարկղ ‖ Առ Դրամագլուխ Մուշեղայ՝ ղր. 23000. զոր այսօր եդ յընկերութեան՝ ընտիր և պատրաստական դրամովք. . . | 23000 | — |
| 6 / 3 | Մթերք Գահվէի ‖ Առ Նախագրեալն՝ ղր. 8400. որ է գին 2800, լտր գահվէին, զոր այսօր եդ յընկերութեան, և 'ի համակամ հաւանութենէ ընկերացն ընկալեալ եղև նովին գնով. . . . . . . | 8400 | — |
| 9 / 3 | Մթերք Շաքարի ‖ Առ Նախագրեալն՝ ղր. 7800. որ է գին՝ 2600, լտր շաքարի, զոր այսօր եդ յընկերութեան, և նովին գնով ընկալեալ եղև 'ի նոյն, համականութեամբ ընկերացն . . . . . | 7800 | — |
| 7 / 3 | Սեղան փոխանակութեան ‖ Առ Նախագրեալն՝ ղր. 7680. վասն 80, լիրայի Սեղանոյն, զոր եդ այսօր յընկերութեան, և նովին հաշուիւ ընկալեալ եղև 'ի համակամ հաւանութենէ ընկերացն. . . . . | 7680 | — |

ՃԺԱ. Գրամարկղ (1) վաճառականաց՝ այն է զանձատեղի դրամոց, համարեալ է մին 'ի գլխաւոր մասանց հաշուեմատենին. որում անկ է միշտ ունել զիւր առանձին հաշուեմատն. զի 'ի նմա հաւաքեսցին, եւ 'ի նմանէ ելցեն ամենայն դրամք տուրեւառութեան։ Յայս սակս արժան է մեզ նախ առաջին կարգել զդիպուածս, որք ունիցին կապակցութիւն ընդ Գրամարկեղ. որպիսի են դրամն տալ ումեք կամ առաքել, կամ առնուլ եւ ընդունել յումեքէ, կամ վճարել զպարտիս, եւ կամ դերհաշիւ դրամս անցուցանել առ ոք. որովք Գրամարկղն սովոր է լինել պարտապան կամ պարտատէր։ Զօրօրինակ՝ եդեալ թէ ետուր ցՄակլիս 6000, դահեկանս. արդ՝ քանզի

ՃԺԱ. (1) ԴՐԱՄԱՐԿՂ. այն է Սնդուկ։ թճ. Սանտըգ։ Իտ. Cassa. Գասսա։ Ոմանք յարգի մատենագրաց փոխանակ անկենդան Սնդկին յօժարեցան Սնդկապետի անուամբ նշանակել զայս հաշուեմատն. Իտ. Cassiere. Գասիէռ. եւ թճ. Սանտըգտար կոչելով։ Բայց զոր եդաքն, նախնին եւ ընդունելի սովորութիւն է իտալական հաշուեմատենից. ըստ որոյ ընտրելագոյն համարեցաք կարգել։

դրամքս հանեմ 'ի Դրամարկեղէն, և տուան 'ի ձեռս Ակակիոսի, հարկ է 'ի հաշուեմատենին պարտապան նշանակել զԱկակիոս, և պարտատէր զԴրամարկղն, յորմէ ելին տուեալ դրամքն. ( ծն . 4 ) :

ՃԺԷ . Յայս գիտուած 'ի նշանակել մեր 'ի յաջորդ օրինակդ զպարտիս Ակակիոսի 6000, դահեկան 'ի պահանջս Դրամարկեղ, հնար է թէ շփոթեսցին նորավարժք՝ տեսեալ թէ չէք ինչ դրամ 'ի պարտիս նորին Դրամարկեղ, և իբր դատարկ համարելով զայն, երկմտեսցին՝ թէ զիարդ լինիցի պարտատէր առանց դրամոց : Այսմ վերստին յիշեցուցանեմք զնախագրեալ ազդարարութիւնս ( ՃԺ ) . թէ զոր ուսուցաք 'ի նախընթաց մասին, զանց առնեմք կրկնել 'ի տեղւոջս . և քանզի կամիմք պարտապան առնելոյ զԴրամարկղն՝ աւանդեալ կան 'ի թիւն ( ծն ), կարէ ամենայն ոք իմանալ և գուշակել, թէ յայսպիսի օրինակս ըստելեայն իմանի, եթէ կայցէ 'ի Դրամարկղն այնչափ գումար դրամոց, որ բաւական է 'ի մատակարարել այլոց : Բայց 'ի վերայ այսր ամենայնի կամելով մեր բառնալ զշփոթս երկմտութեան նորավարժից, յաւելումք 'ի պարտիս Դրամարկեղ զգումար ինչ փակագծիւ, այսպէս ( Համարեալ . . . . դհ՛ . 50000 ) : Բաւ ամին օրինակի արասցուք և յայլ հաշուեմատունս, ուր հարկն պահանջեսցէ . որով բառնին դըժուարութիւնք և երկմտութիւնք ընթերցողաց :

ՃԺԸ . Յետ ծանուցանելոյ զկարևոր նախադիտելիսդ՝ կարգեսցուք զառաջարկութիւնս ինչ դրամատութեան և առաքելոյ այլուր զդրամ . առ 'ի ցուցանել յետոյ զկարգ յիշատակագրութեան այնպիսեացն 'ի հաշուեմատենի :

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

12 . Մայիսի . 1822 :

Ա . Տուի Ակակիոսի՝ դհ՛, 6000 . 'ի նուազել զպահանջս նորա :

---

14 . Նորին :

Բ . Տուի Մարոսի՝ դհ՛, 8600, կանխիկ . վասն տուրևառութեանցն զոր ունիմ առնել ընդ նմա :

---

21 . Նորին :

Գ . Առաքեցի 'ի Զմիւռնիա առ Բարկէն՝ դհ՛, 3642 . յանձնելով նմին պահել առ իւր վասն կարգադրութեանն՝ զոր ունիմ առնել նմա :

---

25 . Նորին :

Դ . Առաքեցի յԵւդոկիա առ Հեթում՝ դհ՛, 2630 . 'ի նուազել զպահանջս նորա :

---

26 . Նորին :

Ե . Տուի Աողկայ՝ դհ՛, 3621 . ըստ կարգադրութեան Եւդոկիացի Մարգանայ :

---

28 . Նորին :

Զ . Առաքեցի յԵւդոկիա առ Ապիրատ՝ դհ՛, 3560 . յանձնելով նմա՝ զի անցուսցէ զայն 'ի Կարին 'ի ձեռս Երուանդայ :

---

(1)

# ՕՐՀԱՇԻՒ

1820. Ի Պօլիս:

| | 12. Մայիսի: | ղր | փրէ |
|---|---|---|---|
| —2 / 1— | Ակակիոս ‖ Առ Պռամարկըն՝ ղր, 6000. որք տուան նմին 'ի նուաճել զպահանջս նորա . . . . . . . . . . . . . . . . . | 6000 | — |
| | 14. Նորին: | | |
| —3 / 1— | Սարոս ‖ Առ Նախագրեալն՝ ղր, 8600. որք կանխիկ տուան նմա սակս տուրևառութեանցն, զոր ունիմ առնել ընդ նմա . . . . . | 8600 | — |
| | 21. Նորին: | | |
| —4 / 1— | Բարեկէն ‖ Առ Նախագրեալն՝ ղր, 3642. զոր առաքեցի 'ի Օձուռնիա պահել առ իւր վասն յանձնելի և կարգադրելի իրացս . . . . | 3642 | — |
| | 25. Նորին: | | |
| —5 / 1— | Հեթում ‖ Առ Նախագրեալն՝ ղր, 2630, զոր առաքեցի Ակնուղուկիա 'ի նուաճել զպահանջս նորա . . . . . . . . . . . . . | 2630 | — |
| | 26. Նորին: | | |
| —6 / 1— | Սարգան ‖ Առ Նախագրեալն՝ ղր, 3621. զոր հաշուեթեամբն նորա ետու Սողկոյ . . . . . . . . . . . . . . . . . . | 3621 | — |
| | 28. Նորին: | | |
| —7 / 1— | Նորանդ ‖ Առ Նախագրեալն՝ ղր, 3560. զոր առաքեցի առ Նոդոկիայի Սպիրտան անցուցանել 'ի Կարին 'ի ձեռս Նորանդայ . . | 3560 | — |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| I | ԴՐԱՄԱՐԿՂ. | | | | |
| | (Համարեալ ֆռ) . . . . . . . . . . . . . . . | | | ֆռ 50000 | սնթ — |
| 2 | ԱԿԱԿԻՈՍ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
| 1820 Մայիս. 12 | Առ. Դրամարկղն՝ ֆռ, 6000. որք տուան նմա 'ի նուաղել զպահանջմն . . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | ֆռ 6000 | սնթ — |
| 3 | ՎԱՐՈՍ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
| 1820 Մայիս. 14 | Առ. Դրամարկղն՝ ֆռ, 8600. որք կանխիկ տուան նմա . . | 1 | 1 | ֆռ 8600 | սնթ — |
| 4 | ԲԱԲԿԷՆ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
| 1820 Մայիս. 21 | Առ. Դրամարկղն՝ ֆռ, 3642. առաքեցաւ առ նա 'ի պահել վասն իւր. . . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | ֆռ 3642 | սնթ — |
| 5 | ՀԵԹՈՒՄ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
| 1820 Մայիս. 25 | Առ. Դրամարկղն՝ ֆռ, 2630. առաքեցաւ առ նա 'ի նուաղել զպահանջմն . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | ֆռ 2630 | սնթ — |
| 6 | ՎԱՐԴԱՆ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
| 1820 Մայիս. 26 | Առ. Դրամարկղն՝ ֆռ, 3621. զոր բանիւ նորա ետու Սողկայ. . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | ֆռ 3621 | սնթ — |
| 7 | ԵՐՈՒԱՆԴ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
| 1820 Մայիս. 28 | Առ. Դրամարկղն՝ ֆռ, 3560. զոր ընդ Եւդոկիա առաքեցի առ նա. . . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | ֆռ 3560 | սնթ — |

# ՄԱՏՐՀԱՇԻՒ

| | | | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղ̃շ. | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | | | 1 |
| Մայիս. | 12 | Յակակիոսէ՝ ղ̃շ, 6000. որք տուան նմա 'ի նուազել զպահանջման. | 1 | 2 | 6000 | — | |
| | 14 | 'Ի Մարոսէ՝ ղ̃շ, 8600. կանխիկ տուեալ 'ի ձեռս նորա. | 1 | 3 | 8600 | — | |
| | 21 | 'Ի Ռաբկենէ՝ ղ̃շ, 3642. առաքեցաւ առ նա. | 1 | 4 | 3642 | — | |
| | 25 | 'Ի Հեթմոյ՝ ղ̃շ, 2630. առաքեցաւ առ նա 'ի նուազել զպահանջման. | 1 | 5 | 2630 | — | |
| | 26 | 'Ի Մարդանայ՝ ղ̃շ, 3621. վճարեցաւ 'ի հաճութենէ նորա. | 1 | 6 | 3621 | — | |
| | 28 | Յերուանդայ՝ ղ̃շ, 3560. որք ընդ Նուզոկլիս առաքեցան առ նա. | 1 | 7 | 3560 | — | |

| | | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղ̃շ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2 |
| | (Համարեալ ղ̃շս). | | | 10000 | — | |

| | | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղ̃շ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3 |

| | | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղ̃շ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4 |

| | | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղ̃շ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 5 |
| | (Համարեալ ղ̃շս). | | | 10000 | — | |

| | | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղ̃շ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 6 |

| | | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղ̃շ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 7 |

ՃԺԴ. Արդ բարւոք խելամտութիւն կարգի նախագրեալ առաջարկութեանց, ուշադրութեան պէտք են՝ առ 'ի քննել, թէ տուչութիւն դրամոյն կամ առաքել զդրամ ումեք, յինչ պէտս եղեալ իցէ. մերթ եթէ 'ի պատճառս պարտեաց կամ պահանջից՝ զոր ունի ընդ ումեք, թէ 'ի պէտս այլոյ ուրուք արտաքնոյ: Զի եթէ ընդ մէջ երկուց է տուչութիւնն և ընդունելութիւն դրամոյն, պարտ է յայնժամ զերկոսին գնոսա առնել միմեանց պարտապան կամ պարտատէր. (Ծն. Կ): Իսկ եթէ իցէ 'ի պատճառս այլոյ ուրուք երրորդի, յայնժամ պարտիքն անկանին 'ի վերայ յետնոյն: Սորին վասն 'ի չորեսին նախընթաց առաջարկութիւնն պարտապան նշանակեցան նոքա՝ առ որս տուան դրամքն. իսկ յերկոսին յետինն պարտապան գրեցան՝ որոց վասն եղև տուչութիւն դրամոց:

ՃԺԵ. Ասացեալքս երևին որոշակի 'ի յիշատակագրութիւնս օրհաշուին. և բացայայտագոյն ևս 'ի կարգս փոխագրութեանց Մայրհաշուին: Յորս մարթ է տեսանել և զայն, զոր կանխեցաքն 'ի թիւ (ՃԺԲ), թէ զնորդ Դրամարկղն առանց նախեղակ դրամոց գտաւ ձեռնհաս վճարելոյ զայնչափ դրամս. զի փակադծիւ համարեցաք՝ թէ 'ի պարտիս նորա կայցեն 50000, դահեկանք: Որպէս և 'ի հաշուեմատեանս Ակիլլեայ և Հեթմոյ, առ որս վճարեցան դրամք՝ 'ի նուազել զպահանջս նոցա. որոց 'ի պահանջականին փակադծիւ յաւելաք՝ 10000, դահեկանս, համարելով զնոսին իբր պարտատեարս այնչափ դրամոց:

ՃԺԶ. Նախաւանդեալ կանոնք դրամատուութեան կամ յուղարկելոյ դրամս առ հեռաւորնակ ոք, կարեն առաջնորդել և 'ի դիպուածս ընդունելութեան դրամոց, կամ ընդ ձեռն այլոյ ուրուք յինքն ձգելոյ զդրամս. պահելով զնոյն կարգ՝ զոր յուշ արարաք վերագոյնդ (ՃԺԴ). այսինքն՝ ուշադիր մտօք քննել, թէ ընկալեալ դրամքն որում ումեք պատշաճիցեն. որպէս զի ընդունող դրամոյն նշանակեսցի պարտապան, իսկ տուողն պարտատէր (Ծն. Կ):

ՃԺԷ. Ի վարժութիւն նորուսումն համբակաց յաւելցուք և զօրինակս ինչ վասն ընդունելութեան դրամոց: Եդեալ թէ Ա. Արգար ետ ինձ դշ, 6580. 'ի նուազել զիւր պարտիս: Բ. Յորդանան ետ ինձ կանխիկ՝ դշ, 9800. վասն տուրևառութեանց ինչ, զոր ունիմք առնել ընդ նմա: Գ. Կամսար 'ի Տրապիզոնէ առաքեաց ինձ՝ դշ, 3642. 'ի պահել առ իս վասն իւրոց յանձնելի իրաց: Դ. Մասակ 'ի Զմիւռնիոյ առաքեաց ինձ՝ դշ, 3621. 'ի հաշիւ Մահմայ Մերատայեցւոյ: Յայտնի է դիպուածս՝ առաջին օրինակն որովհետև յայտ առնէ զտուրևառութիւն ինչ ընդ իս և ընդ Արգար, նմին իրի ընկալեալ դրամքն նշանակելի են 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Արգարայ: Երկրորդ օրինակն ևս նոյնաձև է ընդ առաջնոյն, զի յայտ առնէ զայնպիսի իրողութիւն, որ կատարելի է ընդ իս և ընդ Յորդանան. վասն որոյ իբրև զառաջինն պարտապան լինի Դրամարկղն, և պարտատէր Յորդանան: Նոյնպէս է և երրորդ օրինակն. զի պատճառ առաքելոյ Կամսարայ զդրամսն՝ տուրևառութիւնն է, զոր ունիմք առնել ընդ նմա. վասն որոյ առաքեալ դրամքն նշանակելի են 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Կամսարայ: Իսկ 'ի չորրորդ օրինակին՝ որովհետև տուրևառութիւն իմ ընդ Մահմայ Մերատայեցւոյ է, և ոչ ընդ Մասակայ. վասն որոյ դրամքն հասեալք առ իս ընդ ձեռն Մասակայ, նշանակելի են 'ի պահանջս Մահմայ, և 'ի պարտիս Դրամարկեղ:

## Յաղագս Սեղանոյ փոխանակութեան:

ՃԺԸ. Սեղան փոխանակութեան [1] ասի ընկերական դրամարկղ վաճառականաց, որ է իբր գանձատուն դրամոց նոցա՝ աւանդեալ 'ի ձեռս արքունի պաշտօնատարաց 'ի պահպանութիւն: Այս Սեղան կամ գանձատուն նախ առաջին կանգնեցաւ 'ի Վենետիկ, յամի Տն, 1585. յորմէ գաղափարեցաւ յետոյ յԱմստերտամ, 'ի Համպուրկ, 'ի Լոնտոն և 'ի Փարիզ յականաւոր քաղաքս Եւրոպիոյ. զի բազմահարուստ վաճառականութիւն ժամանակին, և ճոխութիւն դրամոյն հարկեցոյց զվաճառականս հնարել զայն գանձարան, յորում մարթասցին աներկիւղ և անվտանգ պահպանել զդրամս իւրեանց. միանգամայն և յաւելս տուրևառութեան բազմակոյս վա-

ՃԺԸ. (1) ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ: Իտալացիք՝ Banco Giro. Պանգօ Ճիռօ, անուանեն: Պանգօ կոչի սեղանն, յորոյ վերայ սովորութիւն է թուել զդրամս. և Ճիռօ ասի փոխանակումն կամ շրջան դրամոյն, որ լինի յայն սեղան: Յորմէ և 'ի մեզ Սեղանաւոր անուանի լումայափոխն, այն է (Սարաֆ), որ տայ և առնու, կամ փոխանակէ զդրամս. զոր յոյնք Դռափեզիդիս կոչեն. և Իտալացիք Banchiere. Պանքիէռէ:

ձառայ՝ փոխանակ ժամանակաձառ լինելոյ 'ի թուել զդրամս ; համառօտագիծ նամակաւ կամ մուրհակաւ՝ զինչ և իցէ բազմաթիւ գումար 'ի վճարումն պարտուց՝ փոխանցեսցեն 'ի միմեանս ։ Յայս Սեղանն՝ իւրաքանչիւր վաճառականք, որք միանգամ ունէին 'ի նմա դրամս յաւանդ և 'ի պահեստ, նշանակեալ կային պարտատեարք դրամոց իւրեանց, զորս ըստ պիտոյին և ըստ հաձոյից կարէին առնուլ անտի, կամ փոխանցել յայլս տուրևառութեան աղագաւ, և կամ փոխանակել ընդ այլ դրամոց վաճառելով այլում զիւր դրամագլուխ ։ Իսկ կարգ փոխանակութեան կամ շրջանի դրամոցն էր, զի դրամատէրք որք 'ի կամին անցուցանել ումեք գումարս ինչ 'ի դրամոց իւրոց, համառօտ գրով յայտ առնէր արքունի համարակալաց տեղւոյն, զի 'ի հաշուէ անտի դրամագլխոյ իւրոյ անցուսցեն զայն գումար 'ի հաշիւ անձինն, որում վճարելի իցէ դրամն. որով ընդունող դրամոյն լինէր տէր այնմ գումարի, մինչև կարէր հանել զայն 'ի գանձատանէ, կամ վաճառել և կամ անդրէն փոխանցել յայլոց վերայ ։

ՃԺԸ. Յառաջին ժամանակս՝ մանաւանդ 'ի սկզբնաւորութեան այսր Սեղանոյ փոխանակութեան, մինչդեռ աշխարհս 'ի խաղաղութեան էր, բազումք 'ի մեծատանց զդրամս իւրեանց փափաքէին զետեղել 'ի նմա, ոչ միայն 'ի պահպանութիւն, այլև 'ի պտղաբերութիւն. քանզի ընկերութիւնն այն վաճառականաց սովոր է ընդունիլ և զդրամս 'ի փոխ շահավճար պայմանաւ, ոչ էր 'ի նմա վտանգ կորստեան և մնասու. այլ կարող էին ամբաստան առնուլ զշահն և վայելել. որպէս և 'ի խնդրելն հանել զգումար ինչ 'ի դրամոց անտի իւրեանց՝ անպատձառ լինէր վճարումն առանց զեղչելոյ. սակայն 'ի յետին դարս 'ի փոփոխութենէ քաղաքական վիճակաց՝ այլայլեցաւ և կարգ այսր Սեղանոյ. որով նուազեցաւ յարգն և նուաղեցաւ ընկերութիւնն ։ Բայց քանզի և յարդ իսկ գտանին տուրևառք, զորս հարկն ստիպէ առնել 'ի ձեռն նոյն Սեղանոյ փոխանակութեան, նմին իրի յուսումն համբակաց կարգեցուք զօրինակ յիշատակագրութեան նոցին 'ի հաշուեմատեանս ։

ՃԺԹ. Սեղանք փոխանակութեան իւրաքանչիւր քաղաքաց ունէին զիւրեանց սեփական դրամս, որոց անուանք և արժէք պէսպիսեան 'ի միմեանց ։ 'Ի Վենետիկ սովորութիւն էր սեղանաւորաց վարել զերիս տեսակս դրամանուան. այսինքն՝ Լիրա, Սօլտօ, (1) և Պակաթթինօ կամ Կռօսօ ։ Լիրա անուանելով խմանոյն 96, արծաթի դրամս. որոց իւրաքանչիւրքն արժէին 20, մանրափող ։ Սօլտօ առեալ խմանոյն 4, արծաթադրամ քսաննոցս, և 16, մանրափող ։ Իսկ Պակաթթինօ կոչէր՝ 8, մանրափողն ։ Բայց 'ի սոցանէ սովորութիւն էր 'ի հաշիւս համարակալաց տեղւոյն վարել և զանունս Տուգաթօ (2). որոյ արժէքն փոքր էր քան զԼիրայի. զի 10, Տուգաթք համարէին մի Լիրա. վասն որոյ Տուգաթն համարեալ լինէր 9, քսաննոց, և 12, մանրափող ։

ՃԻ. Յետ աւանդելոյ փոքր 'ի շատէ զտեղեկութիւնս յաղագս Սեղանոյ փոխանակութեան, կարգեցուք յառաջիկայդ զօրինակս ինչ փոխանցելոյ ումեք զդրամս 'ի Սեղանոյ անտի փոխանակութեան ։ Օրինակ՝ եղեալ թէ, 'ի 18. Մարտի. 1820. ետուր գրել 'ի Սեղանն փոխանցելով 'ի Սմբատ Լիրայս՝ 100. 'ի հաշիւ պահանջից նորա ։ Եւ 'ի 20, նորին ամսոյ՝ ետուր գրել 'ի Սեղանն փոխանցելով 'ի Վահան Լիրայս՝ 50. ըստ յանձնարարութեան Խուրէնի Մշեցւոյ ։ Դարձեալ 'ի 28, նորին ամսոյ՝ գրեցեր 'ի նոյն, փոխանցելով 'ի Յակոբ Լիրայս 200. որոյ փոխարէն հատոյց քեզ դահեկանս, (1) 18000, ԴՀ ։ Առաջարկութիւնք դիպուածոցս նշանակելի են այսպէս ։

ՃԺԹ. (1) ԼԻՐԱ և ՍՕԼՏՕ ։ Անուանք են իրական դրամոց. առաջինն արծաթի, և երկրորդն պղնձի ։ Արժէք Լիրային է քսան Սօլտօ, կամ մանրափող. որ սովորական դրամ է 'ի տուրևառութիւնս և անուանի Լիրա ֆիօռէնթինէ ։ Սակայն 'ի հաշիւս սեղանոյ փոխանակութեան երկոքին սոքա համարին անդոյ և մտացածին դրամանուանք, որոց արժէք թէպէտ և սահմանեալ են 'ի գործածութենէ սեղանաւորաց, բայց սովոր են աճել կամ նուազիլ ըստ ընթացից տուրևառութեան ժամանակին ։

(2) ՏՈՒԳԱԹՕ ։ Ducato ։ Անուն է արծաթի իրական դրամոյ, որ 'ի տուրևառս արժէ ութ քսաննոց. սակայն վարի և իբր անդոյ դրամանուն, որոյ արժէք 'ի տուրևառս համարի վեց քսաննոց և երկու մանրափող, և անուանի Տուգաթօ ֆիօռէնթինէ ։ Իսկ 'ի սեղանս փոխանակութեան՝ ինն քսաննոց և 12, մանրափող. և կոչի Տուգաթօ տի գամպօ ։

ՃԻ. (1) Դրամանուանք և արժէք նոցին վարեալք 'ի Սեղանս փոխանակութեանց Եւրոպիոյ, անծանօթ գոլով մերազգի վաճառականաց, յառաջիկայ գործս մեր խորհեցաք ԴՀիւ բացայայտել. թէպէտև արժէք նոցին ոչ է նոյն ընդ ԴՀի. զի վախճան գործոյս է առ ժամս ուսուցանել զկարգ և զկանոն յիշատակագրելոյ զնոսին 'ի հաշուեմատեանս ։ Իսկ թէ զինչ դրամք իցեն, և արժէք նոցա զինչ համեմատիցին ընդ դրամս արևելեան ազգաց, մանաւոր գրոց և առանձին աշխատութեան պէտք են. զոր թողումք 'ի ջանս երկասիրութեան այլոց ։ Բայց 'ի հաշել զհետազննութիւն նորավարժից՝ 'ի վերջ գրոցս ունիմք յաւելուլ զամփոփական դրամս ծանօթ թագաւորութեանց Եւրոպիոյ՝ համեմատութեամբ ընդ գաղղիական Ֆրանգի, յորոց մարթ է նոցա առնուլ զոյգն տեղեկութիւն ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

18 · Մարտի · 1820 ։

Ա · Գրեցի 'ի Սեղան փոխանակութեան Լիրա , 100 , փոխանցելով 'ի Սմբատ , զկուրաքանչիւր լիրայս հաշուելով 90 , ղշ , ըստ ընթացից արժողութեան աւուրս , գումար բոլորին առնէ 9000 , ղշ ։ Դրամքս հատուցան նմին 'ի նուաղել զգումար պահանջից նորա ։

20 · Նորին ։

Բ · Գրեցի 'ի Սեղան փոխանակութեան Լիրայս 50 , փոխանցելով 'ի Վահան ըստ յանձնարարութեան Ռուբէնի Մշեցւոյ · զկուրաքանչիւր լիրայս հաշուելով 88 , ղշ , ըստ արժողութեան աւուրս · բոլորագումարն առնէ ղշ , 4400 ։

28 · Նորին ։

Գ · Գրեցի 'ի Սեղան փոխանակութեան Լիրայս՝ 200 , փոխանցելով 'ի Յուսիկ · որ և առժամայն հատոյց ինձ փոխարէն ղշս , 18000 ։

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՍՄԲԱՏ | | | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | | | ղշ | փրէ |
| Մարտ · 18 | Առ Սեղան փոխանակութեան՝ ղշ , 9000 · որք փոխանցին 'ի նուաղել զպահանջս նորա . . . . . . . . . . | | | | 1 | 4 | 9000 | — |
| 2 | ՌՈՒԲԷՆ ՄՇԵՑԻ | | | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | | | ղշ | փրէ |
| Մարտ · 20 | Առ Սեղան փոխանակութեան՝ ղշ , 4400 · զոր բանիւ նորա եսու փոխանցել 'ի Վահան . . . . . . . . . | | | | 1 | 4 | 4400 | — |
| 3 | ԴՐԱՄԱՐԿՂ | | | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | | | ղշ | փրէ |
| Մարտ · 28 | Առ Սեղան փոխանակութեան՝ ղշ , 18000 · զին փոխառեալ 200 , լիրայից . . . . . . . . . . . . . . | | | | 1 | 4 | 18000 | — |
| 4 | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐ | ՍՈԼՏՈ | ԴԷՆԱՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | | | | | | | ղշ | փրէ |
| | (Համարեալ թէ ունի) . . . . . . | 500 | — | — | — | — | 45000 | — |

(1) ՕՐՀԱՇԻՒ

1820. Ի Պօլիս:

| | | ղշ | փրէ |
|---|---|---|---|
| | 18. Մարտի: | | |
| 1 / 4 | Սմբատ ‖ Տր. Սեղան փոխանակութեան՝ ղշ, 9000, որ է արժէք 100, լիրայի փոխանցելոյ 'ի նա, առ նուազումն պահանջից նորա . . | 9000 | — |
| | 20. Նորին: | | |
| 2 / 4 | Ռուբէն Մշեցի ‖ Տր. Նախագրեալն՝ ղշ, 4400. արժէք 50, լիրային, զոր 'ի յանձնարարութենէ նորա ետու փոխանցել 'ի Մ̀ահան. | 4400 | — |
| | 28. Նորին: | | |
| 3 / 4 | Դրամարկղ ‖ Տր. Նախագրեալն՝ ղշ, 18000. զոր ետ ինձ Յուսիկ 'ի վճար արժէից 200, լիրային, զոր այսօր գրեցի յանուն նորա 'ի Սեղան փոխանակութեան . . . . . . . . . . . . . . . | 18000 | — |

ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | (Համարեալ թէ ունի ղշ). . . . . . . . . . . . . | — | — | 10000 | | 1 |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2 |

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3 |

| | | ԼԻՐԱ | [illegible] | [illegible] | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | | | | | 4 |
| Մարտ. 18 | Ի Սմբատայ՝ ղշ, 9000. արժէք լիրայից . | 100 | — | — | 1 | 1 | 9000 | — | |
| 20 | Ի Ռուբէնէ Մշեցւոյ՝ ղշ, 4400. նոյնպէս. | 50 | — | — | 1 | 2 | 4400 | — | |
| 28 | Ի Դրամարկղէ՝ ղշ, 18000. նոյնպէս. . | 200 | — | — | 1 | 3 | 18000 | — | |

Ճիբ. Ի նախկին առաջարկութեան նշանակեցաւ՝ թէ Սմբատ ընկալեալ իցէ յինէն 100, Լիրայս Սեղանոյ փոխանակութեան, 'ի նուազել զպահանջս իւր. և քանզի պատճառ տուչութեան և ընդունելութեան դրամոցս՝ տուրևառութիւնն էր ընդ իս և ընդ Սմբատ, նմին իրի 'ի հաշուեմատենին Սմբատ յիշատակագրեցաւ պարտապան, և Սեղանն փոխանակութեան պարտատէր (ծր. 4)։

Ճիգ. Յերկրորդ առաջարկութեան համարեցաք, թէ 'ի յանձնարարութենէ Մշեցի Մուրէնին ես ինքն փոխանցեցի 'ի Սահան՝ 50, Լիրայս Սեղանոյ փոխանակութեան. և քանզի պատճառ փոխանցելոյ դրամոցս ոչ էր տուրևառութիւնն իմ ընդ Սահանայ, այլ ընդ Մուրէնի Մշեցւոյ. որոյ յանձնարարութեամբն ետու Սահանայ. սորին սակս 'ի հաշուեմատենին Մուրէն գրեցաւ պարտապան, և Սեղան փոխանակութեան պարտատէր։

Ճիդ. Յերրորդ առաջարկութենէ անտի երևի, թէ ես ինքն ետու գրել 'ի Սեղան փոխանակութեան 200, Լիրայս փոխանցելով 'ի Յուսիկ. և նա առժամայն հատոյց ինձ փոխարէն զգինն՝ 18000, ղշ։ Այս առաջարկութիւն՝ թէպէտ 'ի վերին երեսս թուի լինել պարզ տուրևառութիւն (Է), սակայն խառն է, վասն որոյ և կրկնամասն. մի՝ զի գրեցաւ 'ի Սեղան փոխանակութեան 200, լիրա, փոխանցելով 'ի Յուսիկ. և երկրորդ՝ զի վճարեցան ինձ 'ի նմանէ՝ 18000, ղշք։ Արդ՝ 'ի զատանել երկոցունց մասանցս (ծր. 2), հարկ էր զայն գումար 18000, դաշնեկանաց նշանակել նախ 'ի պարտիս Յուսկան և 'ի պահանջս Սեղանոյ փոխանակութեան (ծր. 4). ապա զնոյն գումար օրէն էր վերստին նշանակել 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Յուսկան։ Բայց յայսմ տուչութեան և ընդունելութեան դրամոց՝ հաշուեմասն Յուսկան լինի պարտապան և պարտատէր միաչափ դրամոց, որք առժամայն հաւասարին միմեանց. նմին իրի առանց նշանակելոյ զհաշուեմասն Յուսկան, (համարելով թէ վճարեալ իցէ զպարտսն, և ընկալեալ զպահանջսն), համառօտութեան աղագաւ պարտապան նշանակեցաւ Դրամարկղն, յոր եմուտ 18000, ղշ. և պարտատէր Սեղանն փոխանակութեան, յորմէ բարձաւ գումարն 200, լիրայից։

Ճիե. Ի հաշուեմատեանս կարևոր է նշանակել ոչ միայն զարժէք դրամոց կամ լիրայից Սեղանոյ փոխանակութեան, այլև զթիւս նոցա. որպէս է տեսանել 'ի նախակարգեալ օրինակդ. յորում առընթեր գաւազանի դաշնեկանաց նշանակեալ կան և թիւք Լիրայից՝ որպէս և մանրափողոյ. որք լինին պիտանացու 'ի բազում դիպուածս տուրևառութեանց, մանաւանդ 'ի մատեանս Մայրհաշուին. ըստ որում հանդերձեալ եմք ասել 'ի կանոնս Կրկնարժէք հաշուից. (մծը)։

Ճիզ. Զոր միանգամ աւանդեցաք վերադոյնդ՝ նպաստէ այնոցիկ, որք կամիցին դրամս փոխանցել յայլս 'ի Սեղանոյ փոխանակութեան, գրել տալով զանուանս նոցա 'ի նոյն Սեղան. իսկ եթէ կամեսցի ոք դրամս առնուլ անտի՝ գոլով ինքն կանխաւ յանուանէ նշանակեալ 'ի նմա, պարտ է յայնժամ պահել զայն կանոն, որ աւանդեցաւ յաղագս Դրամարկեղ 'ի թիւն (ճժէ). իբր զի պարտապան գրելի է Սեղանն փոխանակութեան. և պարտատէր անձն այն, որոյ վասն առեալ լինի դրամն։ Օրօրինակ, դիցուք թէ՝ ա. Աշոտ գրեալ իցէ զիս 'ի Սեղան փոխանակութեան վասն 100, Լիրայից, զոր ես յանձն առի ընդունել 'ի հաշիւ 9000, ղշից, առ նուազելոյ զպահանջս իւր։ բ. Արշաւիր 'ի յանձնարարութենէ Սաղարշայ Տարօնացւոյ գրեալ իցէ զիս 'ի նոյն Սեղան վասն 50, Լիրայից. հաշուելով զմին 88, ղշ։ գ. Հմայեակ գրեալ իցէ զիս վասն 200, Լիրայից՝ իբր վաճառելով ինձ զնաւն. և ես անյապաղ ըստ դաշնագրութեանս մերում վճարեալ իցեմ նմա զարժէսն 18000, ղշ։ Արդ՝ յառաջին դիպուածն Սեղան փոխանակութեան նշանակելի է պարտապան. իսկ Աշոտ պարտատէր։ Նոյնպէս և յերկրորդն՝ Սեղան փոխանակութեան գրելի է պարտապան. և Սաղարշ պարտատէր։ Իսկ յերրորդն թէպէտ նմանապէս Սեղան փոխանակութեան նշանակելի է պարտապան. բայց Դրամարկղն ունի լինել պարտատէր։

## Յաղագս Դրամաթղթոյ Սեղանոյ փոխանակութեան ։

ՃԺԷ. Դրամաթուղթք [1] անուանին համառօտագիր թղթաթերթք ինչ համազօրք դրամոց, զորս արքունի հրովարտակաւ և ատենական օրինօք հանդիսացուցին ընկերութիւնք վաճառականաց Սեղանոյ փոխանակութեան, առ 'ի դիւրութիւն դրամաշրջանացն՝ որք սովոր են լինել 'ի նմա։ Դրամաթուղթքս էին դրանշանեալք զանազան գումարաւ դրամանուանց Սեղանոյ փոխանակութեան, զորս տային և առնուին վաճառականք համազօր արժէիւք արծաթադրամոց. ստացողն այսպիսի դրամաթղթոյ լինէր պարտատէր 'ի Սեղան փոխանակութեան, մինչև ձեռնհաս լինել վաճառելոյ զայն այլում՝ կամ փոխանցելոյ յոք. նոյնպէս և որ ընդունէր զայն յումեքէ. կարող էր համարձակ և անվտանգ առնուլ նովաւ զդրամն 'ի Սեղանոյ անտի փոխանակութեան ։

ՃԺԸ. 'Ի հաշուեմատեանս պարտ է կարգել զառանձին հաշուեմատեան վասն այսպիսի Դրամաթղթոց՝ մակագրութեամբս, ԴՐԱՄԱԹՈՒՂԹՔ ՍԵՂԱՆՈՅ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ. յորում նշանակելի են ամենայն վճարք և տուչութիւնք դրամոց, որք լինին նովօք. պահելով զնոյն կանոնս յիշատակագրութեան, զոր աւանդեցաք յաղագս Դրամարկեղ (ՃԺԲ. ՃԺԳ. ՃԺԴ)։ Օրինակ՝ եղեալ թէ Ա. Նստուր Սմբատայ զԴրամաթուղթ 100, լիրայից, փոխան 8500, դահեկանաց 'ի նուազել զպահանջս նորա։ Բ. Նստուր Մահանայ զԴրամաթուղթ 50, լիրայից ըստ յանձնարարութեան Յուսէփի Մշեցւոյ. հաշուելով զլիրաքանչիւրն 80, դհ. ըստ ընթացից արժողութեան աւուրն, որոյ բովանդակութիւնն առնէ դհ, 4000։ Գ. Նստուր Յուսկան զԴրամաթուղթ 200, լիրայից. որոց փոխարէն ըստ դաշնագրութեանդ ետ քեզ դհս, 17500։ Արդ՝ յերեսին յայսոսիկ դիպուածս պարտ է զհաշուեմատեան Դրամաթղթոց առնել պարտատէր. իսկ զանձինն՝ յորոց ձեռս ետուր զԴրամաթուղթսն, պարտապանս. վասն որոյ յառաջնումն պարտապան լինի Սմբատ. յերկրորդումն Յուսէփն Մշեցի. և յերրորդումն Յուսիկ։

ՃԺԹ. Նախընթաց կանոնն պահելի է 'ի դիպուածս տուչութեան Դրամաթղթոց. իսկ յորժամ ընդունիցի ոք յումեքէ զայնպիսի թուղթս փոխան արծաթադրամոց, պարտ է յայնժամ 'ի հաշուեմատենին պարտապան գրել զհաշուեմատեան Դրամաթղթոց. և պարտատէր զայն տեղին, յորոց ելեալ իցեն արժէք նոցին (ծն. 4)։ Օրինակ՝ եղեալ թէ Ա. Մուշեղ ետ ինձ Դրամաթուղթ 100, Լիրայից, զոր ես ընկալայ 'ի հաշիւ 8900, դահեկանաց՝ 'ի նուազել զպահանջս իմ։ Բ. Տիգրան ետ ինձ Դրամաթուղթ 50, լիրայից 'ի հաշիւ Արշակայ. որոյ բովանդակութիւնն եղև դհ, 4400։ Գ. Հրահատ վաճառեաց ինձ զԴրամաթուղթ 200, Լիրայից. որոց փոխարէն ըստ դաշնագրութեան մերում անյապաղ վճարեցի 17500, դահեկանս։ Յայսոսիկ երեսին դիպուածս միօրինակ պարտապան գրելի է Հաշուեմատեան Դրամաթղթոց. իսկ պարտատէր՝ յառաջնումն լինի Մուշեղ. յերկրորդն Արշակ. և յերրորդն Դրամարկղն, յորմէ հանաւ արժէք 200, լիրա Դրամաթղթոց։

## Յաղագս Ֆիորին անուանեալ Դրամաթղթոյ ։

ՃԻ. Բաց 'ի Դրամաթղթոց Սեղանոյ փոխանակութեան կայ և այլ Դրամաթուղթ Ֆիորին [1] անուանեալ, որ առաւելապէս վարի 'ի Գերմանիա. և է թղթաթերթ ինչ բազմանշան տպագրեալ 'ի տէրութենէ, և ընկալեալ ընդ համօրէն սահմանս կայսերութեան՝ իբր դրամ ինչ թեթևաբեռն և դիւրագործածելի 'ի տուրևառութիւնս։ Դրամաթուղթս յարգի էր յոյժ և համազօր իսկական դրամոց ցորչափ աշխարհս 'ի խաղաղութեան էր. սակայն 'ի

ՃԺԷ. (1) ԴՐԱՄԱԹՈՒՂԹ։ Իտ. Cedola կամ ըստ լատինականին Schedula, ըսքէտուլա. 'ի յունական բառէս ըսխէտիօն, որ նշանակէ զփոքրիկ թերթ թղթոյ։ Կոչի և Polizza կամ Biglietto di Banco, Պիլիէթթօ տի Պանգօ. որ է գիր կամ մուրհակ սեղանոյ փոխանակութեան։ Կարէ և անուանիլ Դրամագիր, ըստ որում թուղթն այն՝ համազօր է դրամոց։

ՃԻ. (1) ՖԻՈՐԻՆ։ Իտ. Fiorino. Ֆիօռինօ։ Յառաջին դարս անուն էր սա ոսկի, արծաթի, և պղնձի դրամոց, առեալ զկոչումն 'ի Ֆիորենցիա քաղաքէ, ուր զառաջինն՝ յամի տն իբր 1251, եղև դրամահատութիւնս։ Կամ ըստ այլոց՝ ընկալաւ զանունս 'ի շուշանածաղիկ դրոշուածոյ անտի քանդակելոյ 'ի նմա։ Բայց 'ի ժամուս առ մեզ Ֆիորին կոչեցեալն անդոյ և լոկ դրամանուն է, զոր լումայափոխք և վաճառականք Գերմանիոյ որպէս և 'ի սահմանակից գաւառս նորա, սովոր են վարել 'ի հաշիւս տուրևառութեանց և 'ի հաշուեմատեանս. զորոյ զարժէսն տես 'ի թիւն (ծն. 'ի ծանօթութեան)։

ժամուս չունի զնոյն յարգ և զառաջին արժողութիւն. բայց քանզի տակաւին սովոր է վարիլ 'ի տուրեւառս, նմին իրի հարկ է վաճառականաց 'ի հաշուեմատեանս կարգել վասն նորա զառանձին հաշուեմամն՝ մակագրութեամբս այսուիկ, ԳՐԱՄԱԹՈՒՂԹՔ ՖԻՕՐԻՆԻ. յորում նշանակեսցին տուչութիւնք և ընդունելութիւնք դրամոց, որք լինին 'ի ձեռն Գրամաթղթոց ֆիօրինի. պահելով զնոյն կարգ և կանոն՝ զոր աւանդեցաք վերագոյն յաղագս Գրամաթղթոց Սեղանոյ փոխանակութեան (ձիը). ըստ որում ունիս տեսանել և 'ի յետագայ օրինակդ:

ձլա. Դնիցուք թէ = . Ետուր Սմբատայ Գրամաթուղթս 1000 ֆիօրինի 'ի հաշիւ պահանջից նորա. առ մի ֆիօրին հաշուելով ղշս, 4. բոլորագումարն առնէ ղշ, 4000: Բ. 'Ի յանձնարարութենէ Սնեցի Ոսկէնին ետուր Սահակայ Գրամաթուղթս 500, ֆիօրինի, առ մի ֆիօրին հաշուելով ղշս, 3½. բոլորագումարն առնէ ղշ, 1750: Գ. Ետուր Յուսկան զԳրամաթուղթ 2000, ֆիօրինի. որոց փոխարէն վճարեաց քեզ ղշս, 9100: Յայսոսիկ երեսին դիպուածս միօրինակ պարտատէր նշանակելի է հաշիւ Գրամաթղթոց ֆիօրինի. իսկ պարտապան՝ յառաջնումն Սմբատ. յերկրորդին Ոսկէն Սնեցի. և յերրորդն Գրամարկղ:

ձլբ. Ի բերել առթին եթէ դու ինքն առնուցուս յումեքէ զԳրամաթուղթս ֆիօրինի, պիտոյ է յայնժամ պահել զկանոնն, զոր աւանդեցաք (ձիթ) վասն ընդունելութեան դրամաթղթոց Սեղանոյ փոխանակութեան. իբր զի՝ պարտապան նշանակելի է Հաշիւ Գրամաթղթոց ֆիօրինի. և պարտատէր Գրամարկղն՝ կամ այն Մթերք ստացուածոց, յորոց ելեալ իցեն արժէք ընկալեալ Գրամաթղթոցդ (ծր. 4): Օրօրինակ՝ դիցուք թէ = . Մուշեղ 'ի նուազել զպարտիս իւր՝ տուեալ իցէ քեզ Գրամաթուղթս 1000, ֆիօրինի. զոր դու ինքն ընկալար փոխան 3000, ղշից: Բ. Տիգրան տուեալ իցէ քեզ Գրամաթուղթս 500, ֆիօրինի 'ի հաշիւ Արշակայ, որոյ բոլորագումար արժէիցն արար ղշս, 1500: Գ. Հրահատ տուեալ իցէ քեզ Գրամաթուղթս 2000, ֆիօրինի, և փոխան նոցին ընկալեալ իցէ 'ի քէն ղշս, 6000: Արդ՝ յերեսին յայսոսիկ դիպուածս միօրինակ պարտապան նշանակելի է Հաշիւ Գրամաթղթոց ֆիօրինի. իսկ պարտատէր՝ յառաջնումն Մուշեղ. յերկրորդումն Արշակ. և յերրորդումն Գրամարկղն՝ ըստ ասացելոցս 'ի վերոյ:

## Յաղագս Փոխանակագրոց:

ձլգ. Փոխանակագիր [1] կոչի համառօտագիծ նամակն գրեալ յումեքէ առ այլ ոք, յորում կարգադրի գումար ինչ դրամոց վճարելի ուրեք: 'Ի ձեռն նամակագրոյս լինի փոխանակութեամբ իբր փոխագրութիւն դրամոց տեղւոջէ 'ի տեղի. և այն նամակ համարի որպէս պայմանագիր վաճառելոյ և գնելոյ. զի դրամն տուեալ 'ի ձեռս այնր որ գրէ զփոխանակագիրն, համարի գին վաճառման փոխանակելի դրամոցն. իսկ վճարումն կամ ընդունելութիւն դրամոց 'ի պայմանեալ տեղւոջ, է նոյն իսկ վաճառեալ դրամն:

Փոխանակութիւնս անծանօթ էր վաճառականութեան նախնի դարուց. այլ գիւտ է սա հանճարոյ 'ի հրէից անտի տարագրելոցն 'ի Գաղղիոյ յերկոտասաներորդ դարուն. որոց ապաստանեալ 'ի կողմանս Լոմպարտիոյ՝ խորհեցան հնարս փոխագրելոյ անդր զճոխութիւն և զստացուածս իւրեանց, զորս թողեալ էին 'ի ձեռս հաւատարիմ բարեկամաց իւրեանց 'ի Գաղղիա, գրելով առ նոսա նամակս կարճառօտ՝ ամփոփ և որոշանշան բանիւք. որպէս է տեսանել յարդի փոխանակագիրս. զորս և առաքէին 'ի ձեռն ուղևորաց և վաճառականաց: Զայս գիւտ հրէից՝ առ նովին ժամանակօք առեալ եւս ծաղկեցուցին Ղիբելլեանք. որոց արտաքսեալք յիտալիոյ՝ մեկուսացան յԱմստերտամ քաղաք. ուր սկսան վարել զնոյն շաւիղ, զոր կալան հրէայք յազատութիւն ստացուածոց իւրեանց: 'Ի սոցանէ ուսեալ Հոլանդացւոց սկիզբն արարին տուրեւառութեան այսպիսի թղթոց, գնելով և վաճառելով զայնս. և 'ի նոցանէ ծաւալեցաւ ընդ բովանդակ Եւրոպիա: Յայս կենցաղօգուտ հնարս ճարտարութեան հրէից՝ ասի յաւելեալ 'ի Ղիբելլեանց և գիւտ փոխարինութեան [2] նամակացս, եթէ դիպուածով իւիք փոխանակագիրք մնասցեն անվճարք. իբրզի՝ սոքա եղեն առաջինք, որք 'ի տալ իւրեանց զնամակ փոխանակութեան խոստացան հատուցանել

ձլգ. (1) ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ: Իտ. Lettera di Cambio. Լէթթէռա տի Գամպիօ. այսինքն՝ Նամակ փոխանակութեան. կամ ըստ նախնի անուանն Polizza di Cambio. Փօլիցցա տի Գամպիօ. յորմէ և առ արևելեան ազգս սովորութիւն է զփոխանակագիրն Փօլիս անուանել: Բայց ըստ արդի հասարակ գործածութեան՝ կոչի լոկ Cambiale, Գամպիալէ:

(2) ՓՈԽԱՐԻՆՈՒԹԻՒՆ: Իտ. Ricambio. Ռիգամպիօ. այն է վերահատուցումն:

Եւ վասն իմ վճարեցի ըստ կարգադրութեան Սմբատայ Դփնեցւոյ, յորմէ ընկալայ զարժէսն:

Արգրամեւ

---

Առաջին

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 22 Մայիսի 1820: Դր 1063 ճռ. մին 40 փարայ:

Յերեսներորդ. աւուր ի տեսութենէս. վճարեսջիք վասն այսր Առաջնորդեան փոխանակագրոյս (մի անգամ և ոչ) ըստ կարգադրութեան Տն. Աւգուստեայ Կարճեցւոյ զգումար ղրուշի

Դր Հազար վաթսուն և երեք, և տ. մին քառասնական փարայ արծաթութեան:

Որոյ փոխարէնն ընկալայ Տետ. յդեղէն. և անցուցէք ի հաշիւ ըստ ծանուցանելոյս. Ողջ լեր:

Սուքեր Սանթիկոնեան:

Առ Տն. Արշակ Գևեկեան

Յերուսաղէմ

Ընկալայ ի 25 Յունիսի

Արշակ Գևեկեան

Թիւ 25

փոխարէն պշաչ դրամոցն , զմնաս , և զծախսն , եթէ փոխանակագիրք իւրեանց լինիցին անընդունելիք և մնասցեն անգործունեայք . չկարելով առնուլ զդրամն 'ի նոցանէ , յորոց վճարելի իցեն 'ի նշանակեալ տեղւոջ , և 'ի պայմանեալ ժամանակի ։ Այսպիսի փոխարինութիւնք ունին զտեղի , երբ փոխանակագիրն մնալով անվճար՝ հարկ լինի իրաւաբողոքս [3] առնել ընդդէմ նմին , որ ոչն կամիցի վճարել ։

'Ի փոխանակագիրս կարևորք են երեքին պայմանքս . Նախ՝ զի իցեն գրեալք առ հեռաւորս , այսինքն՝ քաղաքէ 'ի քաղաք ։ Երկրորդ՝ զի յայտնեսցին 'ի նոսա բաժանորդք . այսինքն՝ անձն , որ տայ զփոխանակագիրն . և նա՝ որում տուեալ լինի մատուցանել առ վճարողն . ևս և անձն վճարող , առ որ ուղղին փոխանակագիրք ։ Երրորդ՝ զի բացայայտ յիշատակելի է 'ի նոսա , թէ սկզբնագրիչ փոխանակագրոցն ընկալեալ իցէ զարժէսն նոցին՝ դրամովք կամ վաճառուք և կամ այլովք փոխանակագրովք . ապա թէ ոչ՝ առանց յիշատակութեան այսոցիկ՝ ոչ ասի փոխանակագիր ։ Միանգամայն որոշելի է 'ի նմա և ժամանակ ինչ սահմանաւոր , որոյ 'ի լրմանն կարասցէ հատուցանել անձն այն , առ որ ուղղի փոխանակագիրն ։ Պայման ժամանակին թէպէտ սովորաբար նշանակի ամսօրեայ միջոց , կամ երեսուն և մի օր . սակայն կարէ լինել առաւել և նուազ քան զամիսն , ըստ դաշնադրութեանն՝ որ լինի 'ի մէջ ընդունողին և սկզբնագրչի փոխանակագրոյն . մինչև 'ի սովորական գործառնութիւնս հնար է նշանակել և առ օրին վճարելի ։ Ընդպատել ուսման նորավարժ համբակաց տացուք և զօրինակ ինչ փոխանակագրոյ . յորում կարեն տեսանել և իմանալ զկարգ և զեղանակ գրութեանն , որ պահելի է 'ի նոյն ։ Տե՛ս 'ի տախտակն ։

Փոխանակագիրք ըստ պէտս կիրառութեան սովոր են քառօրինակ անուանիլ . այսինքն՝ Քարշեալ , Յղեալ , փոխանցեալ և Վաճառեալ [4] ։

Ճդ . Քարշեալ ասի փոխանակագիրն , յորժամ ունելով ուրուք դրամս 'ի հեռաւոր երկիր առ ումեմն , կամիցի առնուլ կամ քարշել զայն 'ի նմանէ , գրէ առ նա զփոխանակագիրն՝ կարգադրելով 'ի նմա , զի յետ ( այսչափ կամ այնչափ ) աւուրց 'ի տեսութենէ այսր փոխանակագրոյ՝ զ'ի նմա նշանակեալ գումարն հատուսցէ այնմ , որ մատուցանէ առ նա զայն փոխանակագիր ։ Օրինակ , եդեալ թէ 'ի Պօլիս Մուշեղ Մամիկոնեան ունիցի Լիւոռնիա քաղաք առ Արշակայ Պանելեան 1063 , դահեկանս . և կամի քարշել զայնս 'ի Պօլիս . գրէ զփոխանակագիրն և գըտեալ զՏիգրան Կարենեցի , որ յանձն առնու 'ի Պօլիս փութով վճարել նմա զայն գումար 1063 , դահեկանաց , առնու զդրամն և տայ 'ի ձեռս նորա զայն փոխանակագիր . իսկ Տիգրան 'ի ձեռն այնր գրոյ առնու զդրամն յԱրշակայ 'ի քաղաքն Լիւոռնիա ։

Ճե . Յղեալ ասի փոխանակագիրն , յորժամ կամելով ուրուք դրամս անցուցանել 'ի հեռաւոր երկիր , զայն դրամ տայ 'ի ձեռս վաճառականի ուրուք , և առեալ 'ի նմանէ զփոխանակագիր , առաքէ յայն երկիր 'ի վերայ ուրուք ընդունիլ զդրամն 'ի նմանէ , յորմէ վճարելի իցէ ։ Օրինակ , դիցուք թէ՝ Արշակ կամիցի 'ի Պօլսոյ՝ 1000 , դահեկանս առաքել առ Տիգրան 'ի Զմիւռնիա . զառաքելի դրամն զայնոսիկ յանձնէ 'ի ձեռս այնպիսւոյ առն , որ 'ի Զմիւռնիա ունիցի իւր ընկեր , կամ դրամս առ ումեք . և ընկալեալ 'ի նմանէ զփոխանակագիր 1000 , դահեկանաց՝ առաքէ զայն առ Տիգրան . զի նովաւ գնացեալ Տիգրանայ առցէ զդրամն 'ի մարդոյն , որոյ անունն նշանակեալ կայ 'ի փոխանակագրին ։

Ճզ . Փոխանցեալ և Վաճառեալ ասի փոխանակագիրն , յորժամ ունելով ոք 'ի ձեռին զփոխանակագիր ինչ վճարելի յումեքէ , դարձուցանէ զայն յայլոյ վերայ . և կամ վաճառէ ումեք , զի նա գնացեալ առցէ զդրամն ։ Օրինակ՝ դիցուք թէ 'ի ձեռին Վահրամայ գտանի փոխանակագիր ինչ 1000 , դահեկանաց . զոր ինքն թէպէտ կարէ առնուլ 'ի պայմանեալ ժամանակին . բայց ոչ կամելով սպասել , տայ զփոխանակագիրն 'ի ձեռս Բաբկենի՝ կամ 'ի տեղի պարտուց , և կամ վաճառէ զայն առ 'ի ընդունիլ փութով զդրամն . յայնժամ Բաբկէն՝ որ վճարեաց ըզդրամն , լինի տէր փոխանակագրոյն և 'ի նմա նշանակեալ դրամոցն , մինչև կարել ինքնին առնուլ զդրամն , կամ անդրէն վաճառել զայն , և կամ փոխանցել 'ի վերայ այլոյ ուրուք . ըստ որում սովոր է բազում անգամ պատահել 'ի փոխանակագիրս , որք յածելով քաղաքէ 'ի քաղաք և ձեռաց 'ի ձեռս փոխանցեալ , անագան ուրեմն ժամանեն առ նա , յորոյ անուն գրեալ կայ հատուցումն վճարելի դրամոց ։

Իսկ թէ զկարգ և զոճ օրինակաւ լինի փոխանցումն կամ վաճառումն փոխանակագրոց , զի-

(3) ԻՐԱՒԱԲՈՂՈՔ . որ է բողոքումն յիրաւունս և յատեան դատաստանի . զոր Խտալացիք անուանեն Protesto . փռօթէսթօ ։

(4) ՔԱՐՇԵԱԼ ։ Իտ . Tratta . Թռաթթա ։ ՅՂԵԱԼ ։ Rimessa . Ռիմէսսա ։ ՓՈԽԱՆՑԵԱԼ ։ Girata . Ճիրաթա ։ ՎԱՃԱՌԵԱԼ ։ Venduta . Վէնտութա ։

տելի է. զի տէր փոխանակագրոյն 'ի կամին վաճառել զայն կամ փոխանցել յայլոյ վերայ, պարտի իւրով ստորագրութեամբ նշանակել 'ի թիկանց կուսէ փոխանակագրոյն, այսպէս. * Վասն իմ վճարեսցի ըստ կարգադրութեան (սորա կամ նորա) | դնելով զանուն ընդունողին: Օրինակի վասն դիցուք զնախագրեալ փոխանակագիրն (ՃԼԴ), զոր Մուշեղ Մամիկոնեան արար 'ի վերայ Արշակայ Գնէլեան Ղեւոնդիա. որ վճարելի է 'ի ձեռս Տիգրանայ Կարնեցւոյ: Արդ՝ համարեալ թէ Տիգրան փոխանակ ինքնին ընդունելոյ զդրամսն 'ի ձեռաց Արշակայ, կամեցաւ փոխանցել զայն կամ վաճառել Սմբատայ Գնունեցւոյ. վասն որոյ պարտ է 'ի թիկունս փոխանակագրոյն նշանակել այսպէս. * Եւ վասն իմ վճարեսցի ըստ կարգադրութեան Սմբատայ Գնունեցւոյ, յորմէ ընկալայ զարժէքն | : Եւ ապա ստորագրել զիւր անունն, Տիգրան. ըստ որում տեսանես յօրինակդ 'ի տախտակին:

ՃԼԷ. Զոր ինչ մինչդամ տեղեկութիւնս աւանդեցաք յաղագս փոխանակագրոց՝ թէպէտ արտաքոյ էին ուսմանց հաշուեմատենին. սակայն յօժարեցաք համառօտիւ տեղեակս առնել զնորավարժսն, որոց կարեւոր է հմտութիւն այսպիսի իրաց: Արդ սկիզբն արասցուք յայտ առնել, թէ 'ի գիտել առթին՝ յորժամ վաճառականն 'ի տեղի դրամոց առնուցու կամ տացէ ումեք փոխանակագիրս, զիարդ եւ ուրանօր պարտ իցէ նշանակել 'ի հաշուեմատենին:

### Յաղագս Գնդաւածոյ Արարչական Փոխանակագրոյ:

ՃԼԸ. Դիցուք թէ՝ դու ինքն արարեր զփոխանակագիր ինչ 8000, դահեկանաց 'ի քարշել զդրամսն, զոր ունիս 'ի Զմիւռնիա առ Սահանայ. եւ զայս գումար դրամոց յօժարի Տիգրան վճարել քեզ աստ 'ի քաղաքիս: Արդ՝ յայտ է նախ՝ թէ այսպիսի փոխանակագիր կարէ լինել 'ի պատճառս հաշուի տուրեւառութեանդ զոր ունիս ընդ Սահանայ. եւ կամ 'ի հաշիւ այլոյ ուրուք: Եւ երկրորդ՝ զի 'ի յանձնելդ քո զայն փոխանակագիր 'ի ձեռս Տիգրանայ, հնար է թէ միայն հաճութեամբ յօժարեսցիս ընդունել 'ի նմանէ՝ կամ զդրամսն, կամ փոխան դրամոցն յանձն առնուլ համազօր արժէնիւք գրել 'ի Սեղան փոխանակութեան. կամ 'ի փոխարէն դրամոցն ընդունել 'ի նմանէ զՇաքար. կամ սպասել առ ժամանակ մի ցվճարումն դրամոց. եւ կամ համարել զայն 'ի հաշիւ պարտուցդ՝ զոր ունիս առ նա: Ըստ այսոցիկ այլեւայլ պայմանաց պէսպիսանան եւ յիշատակագրութիւնք 'ի հաշուեմատենին. քանզի Տիգրան ընդունելով զփոխանակագիրդ՝ եթէ առօրին վճարեսցէ քեզ զդրամսն 8000, դահեկանաց, պարտ է զայն գումար նշանակել 'ի պահանջս Տիգրանայ՝ եւ 'ի պարտիս Դրամարկեղ: Եթէ զգումար ինչ զուգաչափ դրամոցն գրեսցէ յանուն քո 'ի Սեղան փոխանակութեան. յայնժամ դրամքն 8000, դահեկանաց նշանակելիք են 'ի պարտիս նորին Սեղանոյ: Եթէ փոխան դրամոցն տացէ քեզ Շաքար կամ զայլ ինչ մթերս. նշանակելի է 'ի պարտիս այնր մթերից: Իսկ եթէ կամեսցի յետ ամսոց ինչ վճարել. եւ կամ պահել առ իւր 'ի հաշիւ պարտուցդ քոց, յայնժամ պարտ է զայն գումար նշանակել 'ի պարտիս նորին իսկ Տիգրանայ: Յայսոսիկ դիպուածս Սահան՝ յորոյ վերայ եղեւ փոխանակագիրն, նշանակելի է պարտատէր՝ եթէ քարշեալ դրամքն իցեն վասն հաշուի նորա. իսկ եթէ իցէ վասն այլոյ ուրուք, նա ինքն լինի պարտատէր. յորոյ անուն գրեցաւ վճարումն փոխանակագրոյն (ծդ. 4):

ՃԼԹ. Եթէ դիպուածով իւիք Սահան՝ որ 'ի Զմիւռնիա, չկամեսցի ընդունել եւ վճարել զքարշեալ փոխանակագիրդ՝ 8000, դահեկանաց, յայնժամ Տիգրան ստիպի անդրէն 'ի քեզ դարձուցանել զանվճար փոխանակագիրն զայն. եւ դու ինքն լինիս պարտական հատուցանելոյ՝ ոչ միայն զգումար 8000, դահեկանացն, այլեւ զծախս աւուրց անպտղութեան դրամոցն, եւ զծախսն եղեալս նորին պատճառաւ (ՃԼԴ): Արդ՝ համարելով թէ 'ի դառնալն առ քեզ փոխանակագրոյն՝ համդերձ ամենայն ծախիւքն ժամանեալ իցէ 'ի գումար՝ 8200, դահեկանաց: Զայսոսիկ դրամս ըստ նախագրեալ օրինակի ընդունելութեանդ՝ մարթ է քեզ առօրին հատուցանել Տիգրանայ. կամ գրել զնա 'ի Սեղան փոխանակութեան. կամ փոխարէն տալ նմա զմթերս ինչ վաճառաց. կամ յետ ժամանակաց ինչ վճարել զդրամսն, եւ կամ նշանակել զայնս 'ի հաշիւ պարտուցն զոր ունի առ քեզ: Յայսոսիկ դիպուածս՝ Սահան նշանակելի է պարտական, եթէ փոխանակագիրն իցէ յիւր հաշիւ. իսկ եթէ իցէ վասն այլոյ ուրուք, զնա գրելի է պարտական: Ապա թէ զդրամսն 8200, դահեկանաց առօրին վճարեսցես Տիգրանայ, Դրամարկղն նշանակելի է պարտատէր. կամ թէ հարկ լիցի գրել զՏիգրան 'ի Սեղան փոխանակութեան, նոյն իսկ Սեղանն լինի պարտատէր: Եւ եթէ փոխան դրամոց տայցես նմա մթերք վաճառաց. նոքին իսկ վաճառքն լինին պարտա-

տեարք ։ Իսկ եթէ Տիգրան հաճեսցի յետ ամսոց ինչ ընդունիլ զդրամսն, կամ յօժարեսցի թողուլ 'ի հաշիւ պարտուց իւրոց, յայնժամ ինքն Տիգրան լինի պարտատէր (ծք. 4)։

### Յաղագս Դիւրադարձոյ փոխանակագրաց յղելոյ ։

Ձև. Օրէնք տուրևառութեան ուսուցանեն, թէ 'ի դիպուածս անընդունելի լինելոյ յղեալ փոխանակագրոյն, և անվճար յետս դառնալոյ անդրէն առ տուողն, տուիչն նա ինքն հատուցանել ոչ միայն զդրամսն, այլև զծախս ծագեալ յանվճար մնալոյն ։ Բայց կարէ և պատահել. զի այնմ հատուցման պարտական լիցի անձն այն, առ որ առաքի փոխանակագիրն ։ Օրօրինակ՝ եղեալ թէ դու ինքն յղեցեր 'ի Զմիւռնիա առ Մուշեղ զփոխանակագիր մի 8000, դահեկանաց, զոր գնոյ առեր յԱրշամայ ։ Արդ՝ 'ի հաշուեմատենիդ Մուշեղ նշանակելի է պարտական, և Դրամարկղն պարտատէր, եթէ 'ի դրամարկեղէ անտի վճարեալ իցես զգումար 8000, դահեկանացն ։ Բայց թէ տուեալ իցես 'ի Սեղանոյ փոխանակութեան. նոյն Սեղանն գրելի է պարտատէր ։ Իսկ եթէ փոխան դրամոց տուեալ իցես մթերս վաճառաց, նոքին իսկ մթերքն նշանակելի են պարտատեարք ։ Այսպէս դիցուք թէ Արշամ զայն փոխանակագիր տուեալ իցէ քեզ այսու պայմանաւ, զի փոքր փոքր յետ ամսոց ինչ վճարեսցես նմա զդրամսն, կամ գրեսցես 'ի հաշիւ պարտուցն, զոր ունիցի առ քեզ. յայնժամ պարտ է զնոյն ինքն զԱրշամ նշանակել պարտատէր (ծք. 4) ։ Արդ թէ և պարտատէր առնել զՀաշուեմատն փոխանակագրոց, եթէ այն փոխանակագիր 8000, դահեկանաց 'ի վաղուց կայցէ առ քեզ, և անցեալ իցէ 'ի նոյն Հաշուեմատն ։

Դնեսցուք արդ՝ 'ի դիպուած անվճար մնալոյ փոխանակագրոյն, և համարեսցուք թէ Մուշեղ 'ի Զմիւռնիա անկարացի վճարել զյղեալ փոխանակագիրդ, հարկաւ յետս դառնայ առ քեզ հանդերձ իրաւաբողոք դատակնքով (Ձևդ) և այլ ծախիւք 'ի նոյն պէտս, զոր դիցուք լեալ 30, դդ ։ Յայս դիպուած պարտ է և քեզ անդրէն դարձուցանել առ Արշամ, յորմէ գնոյ առեալ իցես զփոխանակագիրն, և տալ նմա վճարել ոչ միայն զդրամսն 8000, դահեկանաց, և զ30, դդ ծախսն իրաւաբողոք ատենին, այլև զամենայն վնասս ծագեալս յանվճար մնալոյ փոխանակագրոյն. զորս համարեսցուք իբր 100, դդ ։

Արդ՝ դիցուք թէ զանվճար փոխանակագիրն դարձուցեր յետս առ Արշամ. և նա առօրին հատոյց քեզ զբովանդակ գումարն 8130, դահեկանաց ։ Զայսոսիկ դրամս կամելով քո նշանակել 'ի հաշուեմատենիդ, հարկ է յուշ առնել, թէ այն փոխանակագիր յինչ պէտս յղեցաւ առ Մուշեղ. եթէ իցէ վասն իրաց նորին իսկ Մուշեղայ, պարտ է զայն գումար 8130, դահեկանաց նշանակել 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Մուշեղայ (ծք. 4) ։ Իսկ եթէ իցէ այն վասն քոյոց իրողութեանցդ, յայնժամ պարտ է զայն բաժանել յերկուս (ծք. 2). և առնել զերկեսին յիշատակագրութիւնս. նախ՝ զատելի է գումարն 8030, դահեկանաց, և նշանակելի 'ի պարտիս Դրամարկեղ և 'ի պահանջս Մուշեղայ (ծք. 4). որպէս զի տուլաւ ընծեսցին ոչ միայն պարտիք Մուշեղայ, զոր նշանակեալ էիր 'ի յղել անդ առ նա զփոխանակագիրն, այլև նա ինքն Մուշեղ լիցի պարտատէր 30, դահեկանացն, զոր ծախեալ է յիրաւաբողոք ատենի ։ Երկրորդ յիշատակագրութիւնն ունի լինել վասն մնացեալ 100, դահեկանաց, զորս առանձինն նշանակելի է դարձեալ 'ի պարտիս Դրամարկեղ. և 'ի պահանջս Հաշուեմատենին Շահուց ։ Իսկ թէ զինչ իցէ հաշուեմատն շահուց՝ ասասցուք զկնի (Ձևդ) ։

Ձևա. Ի տեղեկութիւն համեմատ յաւելցի աստանօր և զայն դիպուած, որ կարէ պատահել. զի նոյն փոխանակագիր տուեալն ցքեզ յԱրշամայ՝ իսպառ մնացէ անվճար. ոչ 'ի Զմիւռնիա և ոչ 'ի քաղաքիդ հատուցին քեզ դրամքն ։ Յայսպիսի դիպուածս անկ է առնել զմտաւ, թէ յոր պէտս եղեալ իցէ փոխանակագիրն այն. մրգեօք վասն իրաց Մուշեղայ՝ թէ 'ի պէտս քո (Ձև) ։ Եթէ իցէ վասն Մուշեղայ, չէ օրէն 'ի հաշուեմատենին այլայլել զպարտիս նորա, որ նշանակեալ կայ պարտական. այլ ունի մնալ որպէս գրեցան 'ի սկզբան 'ի յղելն առ նա զփոխանակագիրն, մինչև ցնոր կարգադրութիւն, զոր արասցէ Մուշեղ 'ի Զմիւռնիոյ ։ Իսկ եթէ իցէ 'ի պէտս քո. և քեզ անկասոր բովանդակ գումար՝ 8130, դահեկանաց հանդերձ ամենայն ծախիւքն, յայնժամ պարտ է զայն գումար բաժանել յերկուս, և առնել զերկեսին յիշատակագրութիւնս (ծք. 2) ։ Առաջին յիշատակագրութեամբ զգումար 8030, դահեկանաց պիտոյ է նշանակել 'ի պարտիս Արշամայ՝ պարտատէր առնելով զՄուշեղ (ծք. 4) ։ Իսկ երկրորդ յիշատակագրութեամբ զգումար 100, դահեկանացն պիտի նշանակել դարձեալ 'ի պարտիս Արշամայ՝ բայց

պարտատէր գրելով զհաշուեմանն Մահուց (ՃՂԸ)։ Ի ձեռն երկոցունց յիշատակագրութեանցս ոչ միայն եղծանին պարտիք 8000, դահեկանացն, զոր նշանակեալ էիր 'ի վերայ Մուշեղայ՝ 'ի յղելն առ նա զփոխանակագիրն, այլև լինի նա պարտատէր 30, դահեկանացն, զորս ծախեալ է վասն իրաւաբողոք առնելոյ։ Նոյնպէս և հաշուեմանն շահուցդ լինի պարտատէր 100, դահեկանաց, որք անկ են քեզ։ Իսկ Ռըշամ մնայ պարտապան ամբողջ գումարի 8130, դահեկանաց փոխանակագրոյն, զորս ոչ կարաց վճարել։

## Յաղագս Դիպուածոց վաճառելոյ և փոխանցելոյ փոխանակագրաց։

ՃԽԷ. Ի վաճառել կամ 'ի փոխանցել յայլս զփոխանակագիր, հարկ է՝ զի կամ սեփական դրամովք ստացեալ ունիցի ոք զայն, կամ յայլմէ ումեքէ յղեալ իցէ առ նա. և կամ ունելով ուրեք դրամս՝ ինքնին կամիցի քարշել զփոխանակագիրն։ Արդ՝ այսպիսի դիպուածք թէ զիարդ նշանակելի իցեն 'ի հաշուեմատենի, կարգեսցուք յառաջիկայդ։

Դիցուք թէ զփոխանակագիր մի 5000, դահեկանաց փոխանցեցեր 'ի Սմբատ. և նա յընդունելն 'ի քէն զայն փոխանակագիր, եթէ ոչ հատուցէ քեզ զդրամսն, պարտապան նշանակելի է նա ինքն Սմբատ. իսկ եթէ հատուցէ կամ զդրամսն, և կամ փոխան դրամոց զմթերս ինչ վաճառաց համազօր արժէիւք, յայնժամ զԴրամարկղն՝ կամ զայն մթերսն նշանակելի է պարտապան դրամոց փոխանակագրոյն։ Յայս դիպուած՝ եթէ զայն փոխանակագիր առօրին գնոյ առեալ իցես յայլոց, և զդրամսն 5000, դահեկանաց վճարեալ 'ի դրամարկեղէդ, յայնժամ օրէն է զԴրամարկղն նշանակել պարտատէր։ Ապա թէ զփոխանակագիրն զայն ամօք յառաջ գնոյ առեալ և նշանակեալ իցես 'ի պարտիս հաշուեմանն փոխանակագրոց, 'ի վաճառելդ զայն՝ պարտատէր նշանակելի է նոյն հաշուեմանն։ Իսկ եթէ վաճառելի փոխանակագիրդ եկեալ իցէ առ քեզ յՌշոտոյ, կամ դու ինքն ունիս ուղղել զքարշեալ փոխանակագիր 'ի վերայ նորա, յայնժամ Ռշոտ նշանակելի է պարտատէր (ծԷ. 4)։

ՃԽԸ. Եթէ Սմբատ անկարասցի առնուլ զդրամս փոխանակագրոյն, որ 'ի քէն վաճառեցաւ կամ փոխանցեցաւ նմա, պարտ է քննել՝ թէ այդ վնաս որո՞ւմ ումեք անկ իցէ. քեզ թէ Սմբատայ (ՃԽ). զի եթէ Սմբատայ անկաւոր իցէ, չէ օրէն այլայլել զնախանշանակեալ յիշատակագրութիւնս հաշուեմատենին. քանզի Սմբատ չկարէ պահանջել ինչ 'ի քէն։ Իսկ եթէ վնասն քեզ անկանի, 'ի դարձուցանել յետս Սմբատայ զայն փոխանակագիր, պարտապան ես հատուցանել նմա ոչ միայն զընկալեալ դրամսդ 5000, դահեկանաց, այլև զծախսն իրաւաբողոք առնելոյ, (զոր համարեսցուք իբր 20, դահեկան)։ Վասն որոյ պարտ է քեզ 'ի հաշուեմատենիդ նշանակել զՍմբատ՝ պարտատէր 5020, դահեկանաց. և որովհետև ամենայն պարտատէր ունի լինել կցորդակից ընդ ումեք պարտապանի (ծԷ. 1), յայս դիպուած՝ պարտապան նշանակելի է Դրամարկղն, եթէ զյետադարձ փոխանակագիրն 'ի Սմբատայ՝ անդրէն դարձուցեալ առ առաջին տէրն, ընկալցիս 'ի նմանէ զդրամսն։ Իսկ եթէ զայն փոխանակագիր ունէիր կանխաւ 'ի ձեռին, և նշանակեալ կայր 'ի Հաշուեմանն փոխանակագրոցդ, յայնժամ օրէն է զնոյն հաշուեմանն առնել պարտապան այնմ գումարի։ Արդ է ևս հանդիպել, զի այն փոխանակագիր եկեալ իցէ առ քեզ յՌշոտոյ՝ կամ յայլմէ ումեքէ, և վնասն անկանիցի նմա, սակայն չկարէ փութով վճարել. յայնժամ նա ինքն Ռշոտ, կամ որ առաքեացն առ քեզ զայն փոխանակագիր, նշանակելի է պարտապան։ Դու ևս եդեալ թէ ամենայն վնասք այնր փոխանակագրոյ ժամանիցեն 'ի գումար 100, դահեկանաց, զորս ունիս պահանջել 'ի նմանէ՝ որ վաճառեացն կամ փոխանցեաց 'ի քեզ զփոխանակագիրն. և եթէ վճարեսցէ փութով, պարտիքն նշանակելի են 'ի վերայ այնր մթերից՝ որով վճարեցաւ, պարտատէր առնելով զՀաշուեմանն Մահուց (ՃՂԸ)։ Իսկ եթէ յապաղեսցի վճարումնն. պարտապան նշանակելի է նա, որ ունի վճարել, և պարտատէր՝ նոյն հաշուեմանն շահուց (ծԷ. 4)։

## Օրինակք փոխանակագրոյ տալոյ, առնլոյ, վճարելոյ և փոխանցելոյ։

ձխդ. Դիցուք թէ Հրահատ Օձիւնեցի ուղղեաց առ քեզ զփոխանակագիր քարշեալ 7500, դահեկանաց, զի վճարեսցես զայն 'ի քանիերորդ աւուր տեսութեանդ։ Զայն փոխանակագիր ունելով 'ի ձեռին Բարգէն՝ մատուցանէ առ քեզ յընդունելութիւն [1] և 'ի ստորագրութիւն անուանդ։ Արդ յայն միջոց սահմանեալ ժամանակի մինչև ցօր վճարմանդ՝ չէ օրէն առնել յիշատակագրութիւն ինչ 'ի հաշուեմատենիդ. իսկ յորժամ վճարեսցես, պարտապան գրելի է կամ Հրահատ Օձիւնեցի՝ եթէ փոխանակագիրն իցէ 'ի հաշիւ նորա. և կամ անձն այն՝ որոյ վասն քարշեալ է փոխանակագիրն։ Յայսմ հատուցման պարտատէր լինի Դրամարկղն՝ կամ այն Մթերք, յորոց ելեալ իցեն արժէք փոխանակագրոյն (ծր. 4)։ Եթէ դիպեսցի իրաւացի պատճառաւ ինք հրաժարիլ 'ի վճարելոյ զփոխանակագիրն. և Բարգէն այլով ճանապարհաւ առցէ զդրամսն 'ի Հրահատայ Օձիւնեցւոյ, յայնժամ ազատ մնալով քո 'ի նոյն գործառնութենէ, ոչինչ անկ է նշանակել 'ի հաշուեմատենիդ։

ձխե. Դիցուք թէ Արշակ Տարօնացի յիւր հաշիւ յղեաց առ քեզ զփոխանակագիր մի 10000, դահեկանաց, զորս ունի վճարել Կամսար։ Արդ՝ 'ի ժամանել փոխանակագրոյս 'ի ձեռս քո չէ օրէն յիշատակագրութիւն ինչ առնել 'ի հաշուեմատենիդ մինչև ցժամանակ ընդունելոյ կամ զդրամսն, և կամ զմթերս ինչ համաչափ դրամոյն. և յորժամ վճարեսցեն քեզ, պարտապան նշանակելի է իրն, որով վճարեցաւ փոխանակագիրն. իսկ պարտատէր լինի Արշակ Տարօնացի։ Բայց եղեալ թէ Կամսար չեղև ձեռնհաս վճարելոյ, և դու ինքն սակս իրաւաբողոք առնելոյ ծախեցեր 12 դահեկանս. 'ի դարձուցանել քո յետս առ Արշակ զայն փոխանակագիր, անկ է քեզ զ12, դահեկանսն ևեթ նշանակել 'ի պարտիս Արշակայ, պարտատէր առնելով զԴրամարկղդ (ծր. 4)։

ձխզ. Աւելի է երբեմն պատահել, զի այսպիսի փոխանակագիր նախ քան զպայմանաժամ վճարմանն՝ վաճառեսցի ումեք կամ փոխանցեսցի յայլոյ վերայ։ Օրօրինակ եղեալ թէ զնոյն փոխանակագիր՝ 10000 դահեկանաց վաճառեցեր Համազասպայ, զի նա ինքն 'ի պայմանեալ ժամուն երթեալ առցէ զդրամսն 'ի Կամսարայ։ Արդ՝ յաւուր վաճառմանդ պարտատէր նշանակելի է Արշակ Տարօնացի. իսկ Համազասպ լինի պարտապան, եթէ զայն փոխանակագիր ընկալցի 'ի հաշիւ պահանջից իւրոց, կամ խոստանայցէ յետ աւուրց ինչ վճարել զդրամսն։ Ապա թէ առօրին վճարեսցէ, պարտապան գրելի է Դրամարկղն կամ Մթերքն, որովք վճարեցաւ (ծր. 4)։

Բայց դիցուք թէ Համազասպ՝ որ գնոյ առ զփոխանակագիրն, անձեռնհաս լեալ կորզելոյ զդրամսն 'ի ձեռաց Կամսարայ, դարձուցէ յետս առ քեզ՝ հանդերձ իրաւաբողոք ծախուքն իւր 16, դահեկանաց. յայնժամ անկ է քեզ՝ կամ առօրին և կամ յետ աւուրց ինչ հատուցանել նմա զդրամսն ամբողջ փոխանակագրոյն և ծախուցն գմ, 10016. և զայն փոխանակագիր առաքել յետս անդրէն առ Արշակ Տարօնացի։ Յայս դիպուած՝ 'ի հաշուեմատենիդ եթէ կամեսցիս զայն գումար 10016, դահեկանաց նշանակել 'ի պարտիս Արշակայ, հարկ է պարտատէր առնել զՀամազասպ. միայն թէ առօրին չիցես վճարեալ նմա զդրամսն. իսկ եթէ վճարեալ իցես, յայնժամ պարտատէր նշանակելի է Դրամարկղն կամ Մթերք, յորոց վճարեցան դրամք Համազասպայ. (ծր. 4)։

ձխէ. Դիցուք թէ նախագրեալ փոխանակագիրդ՝ 10000, դահեկանաց, զոր Արշակ յղեաց առ քեզ 'ի Տարօնէ, և ունի վճարել 'ի Կամսարայ. գոլով 'ի հաշիւ տուրևառութեանցդ քոց. ամենայն վնասք քեզ են անկ, եթէ փոխանակագիրն անվճար մնասցէ 'ի Կամսարայ։ Յայս դիպուած՝ յընդունիլ քո զփոխանակագիրն, համարելով զայն իբր մթերս ինչ վաճառաց. օրէն է զդրամս 10000, դահեկանացն նշանակել 'ի պարտիս Հաշուեմատեան փոխանակագրոց, պարտատէր առնելով զԱրշակ Տարօնացի։ Իսկ յորժամ ընկալցիս զդրամսն 'ի Կամսարայ, նշանակել ունիս զայն 'ի պարտիս Դրամարկեղ, կամ այնր մթերից, որով վճարեցան քեզ 10000, դահեկանքն. պարտատէր առնելով զՀաշուեմատեան փոխանակագրոցդ (ծր. 4)։ Ապա եթէ Կամսար չկամեսցի վճարել քեզ զփոխանակագիրն, և դու ստիպեսցիս առնել ծախս վասն իրաւաբողոք առնելի,

ձխդ. (1) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ կոչի հաճութիւն և հաւանութիւն 'ի հատուցանել զառաջարկեալ փոխանակագիրն, զոր Իտալացիք անուանեն Accettazione. Աջջէթթացիոնէ։ Զայդ հաւանութիւն սովորութիւն է բացայայտել բառիւս՝ Ընդունիմ. գրելով առընթեր և զամսաթիւն տեսութեան. յետ որոյ լինի և Ստորագրութիւն անուան ընդունողին, զոր Իտալացիք կոչեն Sottoscrizione. Սոթթոսգրիցիոնէ։ Տե՛ս 'ի ներքոյ։

յայնժամ օրէն է և զծախսդ նշանակել 'ի պարտիս Հաշուեմասին փոխանակագրոյդ, պարտատէր առնելով զԴրամարկղն, յորմէ ելին դրամք ծախուցն։

Կամ այլազդ ևս՝ դիցուք թէ Արշակ Տարոնացի զայն փոխանակագիր առեալ իցէ 'ի Խորենայ Տարոնացւոյ. յայնժամ օրէն է զփոխանակագիրն դարձուցանել յետս առ Արշակ, զի պահանջեսցէ 'ի Խորենայ՝ ոչ միայն զդրամն 10000, դահեկանաց, այլև զամենայն ծախսն և զվնաս՝ իբր 216, դահեկանաց, 'ի պատճառս անվճար մնալոյ փոխանակագրոյն։ Արդ՝ յետ դարձուցանելոյ զփոխանակագիրն առ Արշակ, և ծանուցանելոյ նմա զեղեալսն, սպասել պիտի մինչև եկեսցէ պատասխանի յԱրշակայ. և ապա յիմանալդ թէ Արշակ առեալ իցէ 'ի Խորենայ զբովանդակ գումար 10216, դահեկանաց, օրէն է յայնժամ պարտական գրել զԱրշակ, և պարտատէր զՀաշուեմասն փոխանակագրոյ։ Իսկ եթէ անկարացեալ իցէ կորզել զդրամսն 'ի Խորենայ, յայնժամ նա ինքն Խորէն լինի պարտական, և Հաշուեմասն փոխանակագրոյ պարտատէր, որպէս և յայտ է։

ճխը. Ի վաճառելն զփոխանակագիր կամ 'ի փոխանցել յայլոյ վերայ՝ մեծապէս արթնութեան և քննութեան պէտք են, թէ ով ոք իցէ վաճառողն կամ փոխանցողն. և յինչ պէտս վաճառի. և թէ վտանգ կորստեան որում ումեք անկ իցէ. որպէսզի վճարեալ դրամքն անկորուստ մնասցեն։ Օրինակ՝ եղեալ թէ Մխիթար կամեցաւ փոխանցել 'ի քեզ զփոխանակագիր մի 8000, դահեկանաց՝ յիւր վերայ ընդունելով զվտանգ կորստեան. և զայն փոխանակագիր ունի վճարել քեզ Խոսրով։ Արդ՝ եթէ յընդունիլդ 'ի Մխիթարայ զփոխանակագիրն, հատուցես նմա զարժէսն՝ դրամովք և կամ այլով մթերիւք, 'ի հաշուեմատենիդ պարտական նշանակեսջիր զՀաշուեմասն փոխանակագրոյդ, պարտատէր առնելով զԴրամարկղն, կամ զայն Մթերսն՝ յորոց ելեալ իցեն արժէք փոխանակագրոյն։ Ապա եթէ Մխիթար 'ի տալն ցքեզ զփոխանակագիրն՝ չիցէ առեալ զարժէսն, յայնժամ անկ է քեզ 'ի կորզել զդրամսն՝ պարտական նշանակել զԴրամարկղն կամ զՄթերսն՝ որով վճարեցաւ փոխանակագիրն. և պարտատէր զՄխիթար։ Երկոցունց օրինակաց յառաջնումն դիպուածի եթէ Խոսրով հրաժարեսցի վճարել զփոխանակագիրն, և դու դարձուցես զայն յետս առ Մխիթար, օրէն է պարտատէր նշանակել զՀաշուեմասն փոխանակագրոյ՝ պարտական առնելով զՄխիթար՝ թէ չկամեսցի փութով հատուցանել քեզ զդրամն 8000, դահեկանաց, որպէս և զայլ ծախսն 'ի պատճառս անվճար մնալոյն. իսկ եթէ առօրին վճարեսցէ, պարտական նշանակելի է տուեալն՝ որով վճարեցաւ։ Յերկրորդում դիպուածի 'ի դարձուցանել զփոխանակագիրն յետս առ Մխիթար, չէ օրէն 'ի հաշուեմատենիդ առնել յիշատակագրութիւնս ինչ, բայց եթէ սակս ծախուց իրաւաբողոք առնելոյդ. և այն՝ եթէ չիցես փութով ընկալեալ 'ի նմանէ. և վասն ծախուցդ զՄխիթար ունիս նշանակել պարտական. և զԴրամարկղն պարտատէր, յորմէ ելին դրամքն։

ճխթ. Դիցուք թէ զնոյն փոխանակագիր 8000, դահեկանաց կամեցաւ Մխիթար փոխանցել 'ի քեզ, այսու դաշամբ՝ զի վտանգ կորստեանն լիցի 'ի վերայ քո, եթէ անկարասցիս կորզել զայն 'ի Խոսրովայ. յայնժամ պարտ է ըստ ասացելոցս վերագոյնդ՝ (ճխէ) զայն փոխանակագիր համարելով իբրև զմթերս ինչ վաճառաց՝ նշանակել 'ի պարտիս հաշուեմասին փոխանակագրոյ, պարտատէր առնելով զՄխիթար՝ եթէ առօրին ոչ վճարեսցես նմա զգումար 8000, դահեկանաց. իսկ եթէ վճարեսցես, պարտատէր նշանակելի է Դրամարկղն կամ Մթերքն՝ յորոց վճարեցան (ծն. 4)։ Ապա 'ի ժամանել աւուրն՝ յորում ունի վճարել Խոսրով, և առցես 'ի նմանէ դրամքն՝ կամ փոխան դրամոց Մթերք ինչ, յայնժամ պարտական նշանակելի են ընկալեալքն, և պարտատէր Հաշուեմասն փոխանակագրոյ. իսկ եթէ լիցին անկորզելիք, պարտական լինի Խոսրով, և պարտատէր նոյն Հաշուեմասն փոխանակագրոյ (ծն. 4)։

# ԶԱՆԱԶԱՆ ՕՐԻՆԱԿՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆՑ

Տուրեւառութիւնք սովոր են լինել գնելով կամ վաճառելով. իսկ գնելն որպէս և վաճառել կարեն լինել կրկնօրինակ, այսինքն՝ Պարզ և Խառն (Ե)։ Երկոքին սոքա՝ թէ զիարդ ունին նշանակիլ 'ի հաշուեմատենին, որոց 'ի միմեանց կարգեսցուք յառաջիկայդ։

## Յաղագս Պարզ Գնուածոց։

ՃԾ. Պարզ կոչի տուրեւառութիւնն. եթէ որ 'ի գնելն զվաճառս ինչ՝ անդէն առ նմին հատուցէ զգինն միատեսակ փոխարինօք. այսինքն՝ կամ լոկ Դրամովք, կամ 'ի ձեռն Սեղանոյ փոխանակութեան (ՃԺԷ), կամ Դրամաթղթովք (ՃԻԵ. ՃԼ). և կամ Փոխանակագրովք (ՃԼԴ). որք առհասարակ համարին դրամք պատրաստականք։ Մարթ է եւս փոխան դրամոյ հատուցանել զմթերս ինչ վաճառաց, կամ զգնեալսն համարել 'ի հաշիւ պահանջիցն՝ զոր ունիցի 'ի վաճառողէն. կամ գնողն խոստասցի յետ ամսոց ինչ վճարել զարժէսն գնոյ առելոց։ Ըստ այսոցիկ հանգամանաց կարգեմք յառաջիկայդ զօրինակ յիշատակագրութեան, զոր պարտ է պահել 'ի հաշուեմատենին։

ՃԾԱ. Եթէ գնուածն լինիցի պատրաստական դրամովք, կարգադրելի է այսպէս։ Օրինակ՝ եղեալ թէ գնոյ առեր 'ի Սմբատայ 500, լիտր Գահվէ. զորոյ զգինն փութով վճարեցեր նմին պատրաստական դրամս՝ 2300, դահեկանաց։ Յայս դիպուած յայտ է թէ Մթերք Գահվէին լինի պարտապան. և Դրամարկղն՝ յորմէ վճարեցան դրամքն՝ լինի պարտատէր (ԾԴ. 4)։ Օրինակս կարէ և այլազգ յիշատակագրիլ, թէպէտ և չէ գործածելի։ Այսինքն՝ զգնոյ առեալ գահվէդ, (զորոյ զգինն եթէ ունիցիս վճարել յետ աւուրց), մարթ է առօրին պարտապան նշանակել, պարտատէր առնելով զՍմբատ, յետոյ 'ի վճարելն նմա զդրամսն 2300, դահեկանաց՝ կարէ Սմբատ նշանակիլ պարտապան. և Դրամարկղն՝ յորմէ վճարեցաւ, պարտատէր։ Սակայն այսու օրինակաւ բազմանան անօգուտ յիշատակագրութիւնք, և հարկ լինի յետոյ յաւելուլ զհաշուեմատն Սմբատայ. որ թէ իցէ լոկ վասն այսր տուրեւառութեան՝ չունելով զայլ ինչ հաշիւ ընդ նմա, լինի աւելորդ ծանրաբեռնութիւն հաշուեմատենին. քանզի այն հաշիւք որք միով գործառնութեամբ դադարին, չունին պէտս մասնաւոր հաշուեմատին։ Սորին սակս զսակաւօրեայ պահանջս Սմբատայ յոչինչ գրելով, պահելի է կարգն զոր նախ աւանդեցաք. պարտապան առնելով զՄթերս Գահվէի, և պարտատէր զԴրամարկղն։

'Ի նախագրեալ դիպուածդ՝ այնպէս համարեցաւ, որպէս թէ 'ի նմին աւուր՝ յորում գնոյ առեր զգահվէն, վճարեալ իցեն և դրամքն. սակայն 'ի բազմակոյս տուրեւառութիւնս վաճառաց անհնար է առնել զայդ, թէպէտև առօրին դաշնագրեալ իցեն վճարքն. քանզի հասարակ սովորութիւն է վաճառականաց՝ յետ քանի մի աւուրց ընդունելութեան մթերոցն հատուցանել զդրամսն։ Արդ՝ համարեալ զայս իբր հաւաստի սովորութիւն, տեսցուք թէ յիշատակագրութիւնք հաշուեմատենին՝ արդեօք նշանակելի իցեն յաւուր ընդունելութեան վաճառացն, թէ յաւուր վճարման դրամոց։ Եթէ նշանակեսցին յաւուր ընդունելութեան Մթերոցն, ընդառաջ ելանէ դժուարութիւնս, զի 'ի պարտապան առնել զՄթերսն, պարտատէր նշանակելի է Դրամարկղն և կամ վաճառողն։ Անմարթ է Դրամարկեղ պարտատէր լինել, զի դրամքն տակաւին չեն ելեալ 'ի նմանէ. թող և զայն, զի հնար է թէ առաջին նշանակեալքն անկցին 'ի մոռաց, և յետ աւուրց ինչ 'ի վճարել զդրամսն, վերստին յիշատակագրեսցի նոյն հատուցումն, որով վրիպակ մեծ սպրդի 'ի հաշուեմատեանն։ Իսկ եթէ վաճառողն նշանակեսցի պարտատէր, լինի նոյն դիպուած զոր արդ կանխեցաք վասն Սմբատայ, թէ 'ի հաշուեմատենին յաճախեն անօգուտ և աւելորդ յիշատակագրութիւնք։ Վասն որոյ ընտրելագոյն է յընդունելութեան վաճառացն չառնել ինչ յիշատակագրութիւն մինչև ցվճարումն դրամոց. յետ որոյ պարտապան նշանակելի են գնոյ առեալ Մթերքն, պարտատէր առնելով զԴրամարկղն. և 'ի նմին յիշատակագրութեան նշանակելի է և ամսաթիւն ընդունելութեան Մթերոց. ըստ որում ունիս տեսանել 'ի յետագայ օրինակդ.

Օրհաշուից։

ՃԾԲ. Եթէ Գնուածն լինիցի 'ի ձեռն Սեղանոյ փոխանակութեան, որ համարի երկրորդ Դրամարկղ վաճառականին (ՃԺ), յայնժամ պահելի է այս կարգ։ Օրինակ՝ եղեալ թէ գնոյ առեր 4200, լիտր Մեղրամոմ՝ 'ի գումար դրամոյ 9600, դահեկանաց, և դաշնագրեցար հա-

տուցանել զայն 100, լիրայիւ Սեղանոյ փոխանակութեան, օրէն է զՄթերս Մեղրամոմոյն պարտական նշանակել 9600, դահեկանացն, պարտատէր առնելով զՍեղան փոխանակութեան, յորմէ վճարեցաւ։ Օրինակս նման է նախընթաց դիպուածոյն (ՃԾԱ), վասն որոյ և նոյնակարգ ընդ նմա։

ՃԾԳ. Եթէ գնուածն լինիցի Գրամաթղթովք Սեղանոյ փոխանակութեան (ՃԻԷ), կամ Փիօրինի (ՃԼ). որոց երկոքին ևս համարին դրամարկեղք վաճառականին, և ունին զիւրեանց առանձին հաշուեմատունս, պահելի է այս կարգ։ Օրինակ՝ եդեալ թէ գնոյ առեր զերկոտասան ծրարս Չուխայի՝ 'ի գումար դրամոյ 9600, դահեկանաց, և ունիս փութով վճարել զայն Գրամաթղթով 100, լիրայից, օրէն է պարտական նշանակել զՄթերս Չուխային, պարտատէր առնելով զհաշուեմատն Գրամաթղթոց։ Իսկ եթէ վճարելի Գրամաթուղթդ Փիօրինի է, զնորին հաշուեմատն արասցես պարտատէր 9600, դահեկանաց (ծդ. 4)։

ՃԾԴ. Եթէ գնուածն լինիցի փոխանակագրովք, պահելի է այս կարգ։ Օրօրինակ՝ եդեալ թէ գնոյ առեր յԱրշակայ 4500, լիտր Մեղրամոմ, որոյ 'ի հատուցումն ետուր 'ի ձեռս նորա զփոխանակագիր մի 9400, դահեկանաց, զոր ուղղեցեր 'ի վերայ Աշոտոյ, կամ թէ 'ի նմանէ յղեալ էր առ քեզ փոխանակագիրն։ Յայս դիպուած օրէն է պարտական նշանակել զՄթերսն Մեղրամոմոյ. և պարտատէր զԱշոտ (ՃԽԶ)։ Իսկ եթէ 'ի վճարելն զգինս Մեղրամոմոյն՝ տայցես Արշակայ զայնպիսի փոխանակագիր, որ կանխաւ նշանակեալ իցէ 'ի հաշուեմատին փոխանակագրոցդ, յայնժամ 'ի գրելդ պարտական զՄթերս Մեղրամոմոյն, օրէն է պարտատէր առնել զհաշուեմատն փոխանակագրոցդ (ՃԽԶ)։

ՃԾԵ. Եթէ գնուածն լինիցի փոփոխութեամբ, այսինքն՝ տալով մթերս փոխանակ մթերոց, ըստ որում 'ի տուրևառութիւնս սովոր է սոէպ հանդիպել, յայնժամ պահելի է այս կարգ։ Օրօրինակ՝ եդեալ թէ գնոյ առեր 2500, լիտր Մետաքս, որոյ բոլորագումար դրամոյն եղև 75000, դահեկան. և փոխանակ այնր մթերոց ետուր զհարիւր ծրարս Չուխայից 'ի գին նոյնաչափ դրամոց։ Այսու փոխանակութեամբ ոչինչ այլ գործես, բայց եթէ բառնալ 'ի մթերոց Չուխային զդրամն 75000, դահեկանաց. և դնել 'ի մթերս Մետաքսի. վասն որոյ Մթերք Չուխային նշանակելի են պարտատէր, իսկ Մթերք Մետաքսին պարտական 75000, դահեկանաց. (ծդ. 4)։

ՃԾԶ. Եթէ գնուածն լինիցի 'ի պատճառս կորզելոյ կամ նուազելոյ զգումար պահանջիցն, զոր ունի ոք 'ի վաճառողէն, յայնժամ պահելի է այս կանոն։ Օրօրինակ՝ եդեալ թէ Բիւրատ ունիցի քեզ պարտս 10000, դահեկանաց. իսկ դու կամելով կորզել 'ի նմանէ զբամբակն, զոր ունի 'ի ձեռին, և արժէք նորա իցեն 5600, դահեկանք. միակամ հաւանութեամբ երկոցունցդ գնոյ առեր զայն. ընդունելով իբր վճարք մասին պարտուց 10000, դահեկանացն։ Յայս դիպուած յիշատակագրել կամելով 'ի հաշուեմատենին, 'ի նմին աւուր՝ յորում Բիւրատ յանձնէ զբամբակն 'ի ձեռս քո, զնոյն Մթերս Բամբակին ունիս նշանակել պարտական 5600, դահեկանաց, պարտատէր առնելով զԲիւրատ, որովհետև այն մթերք ելանեն 'ի մթերանոցէ նորա, և մտանեն 'ի քո մթերանոց (ծդ. 4)։ 'Ի յիշատակագրելն ըստ ասացելումս՝ վճարեալ համարին 5600, դահեկանք 'ի 10000, դահեկան պարտուցն Բիւրատայ, և մնան պահանջք 4400, դահեկանաց։ Իսկ եթէ զյանձնեալ բամբակն կամեսցիս համարել 'ի հատուցումն ամբողջ 10000, դահեկան պարտուց նորա, յայնժամ 'ի նոյն յիշատակագրութեան հաւասարելի են պարտիք և պահանջք Բիւրատայ, որով փակի և աւարտի հաշուեմատն։

ՃԾԷ. Եթէ գնուածն լինիցի այսու դաշամբ, զի արժէք գնոյ առեալ մթերոցն՝ հատուսցին յետ ամսոց ինչ. յայնժամ պահելի է այս կանոն։ Օրօրինակ՝ եդեալ թէ գնոյ առեր 'ի Վահրամայ զերկոտասան ծրարս չուխայի՝ 'ի գին 10000, դահեկանաց. որոց փոխան յետ վեց ամսոց ունիս տալ նմա 3800, լիտր գահվէ՝ նոյնարժէք գնով 10000, դահեկանաց։ Դիպուածս թէպէտև մարթի յիշատակագրել ըստ նախաւանդեալ կանոնաց, սակայն յաւուել վարժութիւն համբակաց որոշակի կարգեսցուք յառաջիկայդ։ Յընդունիլ անդ զչուխայն 'ի ձեռաց Վահրամայ, օրէն է զնոյն մթերս չուխայի նշանակել պարտական 10000, դահեկանաց, պարտատէր առնելով զՎահրամ. քանզի գնոյ առեալդ՝ 'ի նորին մթերանոցէ եմուտ 'ի քո մթերանոց (ծդ. 4). վասն որոյ պարտ է յՕրհաշուին նշանակել այսպէս. * Մթերք Չուխայի || Առ Վահրամ՝ դղ 10000. վասն 12, ծրար չուխայից՝ զոր այսօր գնոյ առի 'ի նմանէ. և յետ վեց ամսոց ունիմ փոխան վճարել 3800, լիտր Գահվէ նոյնարժէք գնով 10000, դղից՝ ըստ որում դաշնագրեցաք|։ Յիշատակագրութիւնս ոչ միայն կարգաւորաբար բացայայտէ զդիպուածն. այլև ցուցանէ՝ թէ յետ վեց ամսոց վճարելի է Գահվէիւ, և ոչ այլ իրօք։ Իսկ յետ պայմանեալ ամսոց վեցից 'ի յանձնելդ նմա

զԳահլէն, հարկ է զգրամն 10000 դահեկանացն նշանակել 'ի պարտս Սահրամայ և 'ի պահանջս Գահլէին (ծդ. 4). որով պարտք և պահանջք Սահրամայ հաւասարին միմեանց, և Մթերք Գահլէին լինի պարտատէր ։ Զոր ասացաքն վասն Գահլէի՝ պարտ է իմանալ և յաղագս Դրամարկեղ, որպէս և Սեղանոյ փոխանակութեան, Դրամաթղթոց, և այլ զինչ և իցէ իրաց, որովք դիպեսցի հատուցումն առնել վաճառաց գնոյ առելոց ։ Յասացելոցս մարթ է հասու լինել՝ թէ յորժամ Մթերք ինչ գնոյ առեալ լինին պայմանաւ յետ ժամանակաց վճարելոյ, օրէն է միշտ զգնեալսն պարտապան նշանակել առօրին. և զվաճառօղն պարտատէր. իսկ 'ի ժամանել աւուր հատուցմանն և 'ի վճարելն՝ պարտապան նշանակելի է վաճառօղն, և պարտատէր Դրամարկղն կամ Մթերք և այլք իրք, յորոց վճարեցան արժէք գնոյ առելոց ։

## Յաղագս Խառն Գնուածոց ։

ճծը. Զոր միանգամ 'ի նախընթաց կանոնադրութիւնսն աւանդեցաք յաղագս պարզ գնուածոց, կարեն լինել նպաստամատոյցք 'ի խելամտութիւն և առաջիկայ կանոնացս խառն գնուածոց ։ Խառն կոչին (Է. Զ. Է.) տուրևառք՝ յորժամ արժէք վաճառացն գնոյ առելոց վճարին այլևայլ իրօք. այսինքն՝ կէս մի դրամովք, կէս մի դրամաթղթովք, կէս մի փոխարինութեամբ այլոց Մթերից, և կէս մի ամսապայման գաշամբ 'ի վճարումն ։ Ի բացայայտութիւն գնուածոցս կարգեսցուք օրինակս ինչ, յայտ առնելով՝ թէ զիարդ նշանակելի իցեն 'ի հաշուեմատեանսն ։ Զի որովհետև վախճան երկասիրութեանս է վարժել զանհմուտս արհեստի համարակալութեան և հաշուեմատենի, չհամարիմք աւելորդ զյաճախութիւն օրինակաց՝ ըստ այլևայլ գլխոց՝ զանազան կարգաւ և դասաւորութեամբ, որով կանոնքն դիւրըմբռնելի լինին և եղանակ գործադրութեանն աներկմտելի ։

ճծթ. Դիցուք թէ գնոյ առեր՝ 4600, լտր Մեղրամոմ, 'ի գին 6200, դահեկանաց, զորս անյապաղ ունիս վճարել՝ ըստ կիսոյն պատրաստական դրամովք, և ըստ կիսոյն Սեղանով փոխանակութեան ։ Այս դիպուած դիւրին է և անաշխատ 'ի կարգաւորութիւն, եթէ բաժանեսցի 'ի մասունսն, յորոց խառնեալ է (ծդ. 2. 3). և զի յայտ է թէ ունի զերկուս մասունս, ապա բաժանելի է յերկուս յիշատակագրութիւնս. զի չէ օրէն միով բանիւ նշանակել, թէ գնոյ առի 4600, լտր Մեղրամոմ 'ի գին 6200, դահեկանաց, որք վճարելի են դրամովք և Սեղանով փոխանակութեան. այլ պարտ է բաժանել զՄթերս մեղրամոմոյն, և նախ առաջին յիշատակագրել՝ թէ գնեցաւ 2300, լտր Մեղրամոմ՝ արժողութեամբ 3100, դահեկանաց, զորս պարտ է պատրաստական դրամովք անյապաղ վճարել ։ Ապա վերստին յիշատակագրելի է թէ գնեցաւ 2300, լտր Մեղրամոմ՝ 'ի գին 3100, դահեկանաց, որք փութով վճարելի են 'ի Սեղանոյ փոխանակութեան ։ Արդ՝ յետ զայսօրինակ բաժանելոյ պարտ է զՄթերս Մեղրամոմոյն նշանակել պարտապան 3100, դահեկանաց, պարտատէր առնելով զԴրամարկղն (ճծ) ։ Ապա վերստին զնոյն Մթերս Մեղրամոմոյ օրէն է նոյնպէս պարտապան նշանակել 3100, դահեկանաց՝ պարտատէր առնելով զՍեղան փոխանակութեան (ճծբ) ։ Այսու օրինակաւ ոչ միայն անշփոթ պահի կարգ հաշուեմատենին, այլև 'ի յայտ գայ՝ թէ պարտիք 4600, լտր Մթերից Մեղրամոմոյ, իցեն 6200, դահեկանք, յորոց 3100, դհկքն են պահանջք Դրամարկեղ, յորմէ ելին պատրաստական դրամք. և մնացեալ 3100, դհկք են պահանջք Սեղանոյ փոխանակութեան, յորմէ վճարեցան ։

Եթէ դիպեսցի՝ զի փոխանակ հաւասարաբաժին հատուցման՝ կէս մի 'ի Դրամարկեղէ, և կէս մի 'ի Սեղանոյ փոխանակութեան, կրկին մասունք հատուցին 'ի Դրամարկեղէ և մի մասն 'ի Սեղանոյ փոխանակութեան, յայնժամ պարտ է զկշիռ և զարժէս Մթերից Մեղրամոմոյ բաժանել յերիս հաւասար մասունս. յորոց երկուք ընծայելի են Դրամարկեղ, և մին Սեղանոյ փոխանակութեան ։

## Ի.Ը. Օրինակ ։

շհ. Գիտեմք թէ Բարեկէն վաճառեաց ինձ զերկոտասան կարաս Ձիթոյ՝ 'ի գին 21000, դահեկանաց. և զայս գումար դրամոց ունիմ վճարել նմա ըստ մասին 'ի Սեղանոյ փոխանակութեան, ըստ մասին 'ի Դրամարկեղէ պատրաստական դրամովք, և զերրորդ մասն զկնի վեց ամսոց՝ նոյնպէս 'ի Դրամարկեղէ ։ Այս դիպուած 'ի պատճառս երրորդ մասին, որ է 7000, դհ, վճարելի յետ վեց ամսոց, կարէ կրկին օրինակաւ կարգաւորիլ 'ի հաշուեմատենի. որպէս ունիս տեսանել յառաջիկայդ ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

20. Հոկտեմբերի. 1820.

Ա. Գնոյ առի 'ի Բարեկէնէ 12, կարաս Ձէթ՝ 'ի գին 21000, դահեկանաց. զորոց զմի մասն փութով ունիմ վճարել նմա՝ պատրաստական դրամով. վասն երկրորդ մասին ըստ դաշնադրութեանս փոխանցել առ նա 'ի Սեղանոյ փոխանակութեան վերայս 75. իսկ մնացեալ երրորդ մասն վճարելի է յետ վեց ամսոց ։

---

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| 1 | ԴՐԱՄԱՐԿՂ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ դհ | փրէ |
|---|---|---|---|---|---|
| | (Համարելով թէ ունի դհս) . . . . . . . . . . | — | — | 10000 | — |

| 2 | ՄԹԵՐՔ ՁԻԹՈՅ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ դհ | փրէ |
|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". 20 | Առ Դրամարկղ՝ դհ, 7000. գնեցաւ պատրաստ դրամով . . | 1 | 1 | 7000 | — |
| | Առ Սեղան փոխանակութեան՝ դհ, 7000. որով գնեցաւ . . | 1 | 3 | 7000 | — |
| | Առ Բարեկէն՝ դհ, 7000. վճարելի յետ վեց ամսոց . . . | 1 | 4 | 7000 | — |

| 3 | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ դհ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| | (Համարելով թէ ունիցի վերայս) . . . . . . | 100 | — | — | 9600 | — |

| 4 | ԲԱՐԵԿԷՆ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ դհ | փրէ |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

(1) ՕՐՀԱՇԻՒ

1820. 'Ի Պօլիս։

| | 20. Հոկտեմբերի։ | ղշ | փրէ |
|---|---|---|---|
| —2 / 1— | Մթերք Ձիթոյ ‖ Առ Դրամարկղն՝ ղշ, 7000. որ է գին 4, կարաս ձիթոյ, զոր գնեցի 'ի Բաբկենէ՝ վճարելով նմա պատրաստական դրամ . . . . . . . . . . . . . . . . . . . . | 7000 | — |
| —2 / 3— | Նոյնն ‖ Առ Սեղան փոխանակութեան ղշ, 7000. գին 4, կարաս ձիթոյ, զոր առի 'ի Բաբկենէ փոխանցելով նմին 75, լիրայս Սեղանոյ փոխանակութեան . . . . . . . . . . . . . . . . | 7000 | — |
| —2 / 4— | Նոյնն ‖ Առ Բաբկէն՝ ղշ, 7000. գին 4, կարաս ձիթոյ, զոր առի 'ի նմանէ, և յետ վեց ամսոյ ունիմ վճարել նմա ընտիր դրամովք. | 7000 | — |

ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | | | | Պահանջք ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 20 | 'Ի Մթերից Ձիթոյ՝ ղշ, 7000. որք վճարեցան 'ի նմանէ. | | 1 | 2 | 7000 | — | I |

| | | | Օ | Մ | Պահանջք ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 2 |

| | | | Լիրա | Օ | Մ | Պահանջք ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 20 | 'Ի Մթերից Ձիթոյ՝ ղշ, 7000. որ է լիրա . . . . | 75 | 1 | 2 | 7000 | — | 3 |

| | | | Օ | Մ | Պահանջք ղշ | փրէ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 20 | 'Ի Մթերից Ձիթոյ՝ ղշ, 7000. կարասքն զորս՝ վճարելք յետ վեց ամսոյ . . . . . . . . . . . . | 1 | 2 | 7000 | — | 4 |

ՃԿԱ. Յախակարգեալ օրինակդ գոլով խառն տուրևառութիւն՝ բաժանեցաւ յերիս մասունս ըստ առաջարկութեան դիպուածոյն. վասն որոյ և համարեցաւ թէ չորեքին կարասքն գնոյ առեալք իցեն պատրաստական դրամովք 7000, դահեկանաց. չորեքին ևս վճարեալք իցեն սեղանով փոխանակութեան 'ի գին 7000, դահեկանաց. իսկ մնացեալ չորեցունց կարասից արժէքն, որ է 7000, դահեկան. զկնի վեց ամսոց վճարելիք են ընտիր դրամովք: Արդ՝ 'ի կարգելն զայս օրինակ՝ հարկ էր Մթերից Ձիթոյ պարտական գրել 7000, դահեկանաց առ Դրամարկղն. և 7000, դահեկանաց առ Սեղան փոխանակութեան, որպէս և 7000, առ Բարեկէն վաճառող մթերից (ՃԾ. ՃԾԱ. ՃԾԲ. և ՃԾԷ):

## Նոյն Դիպուած Այլ Կերպիւ:

20. Հոկտեմբերի. 1820:

Ա. Այսօր գնոյ առի 'ի Բարեկէնէ զերկոտասան կարաս Ձիթոյ՝ արժողութեամբ 21000, դահեկանաց, զորոց զմի մասն առօրին վճարեցի պատրաստական դրամովք. զերկրորդ մասն հատուցի 'ի ձեռն 75, լիրայից Սեղանոյ փոխանակութեան, յոր գրեցի զանուն նորա ըստ դաշնադրութեան մերում. իսկ զմնացեալ զերրորդ մասն զկնի վեց ամսոց ունիմ վճարել ընտիր դրամովք:

---

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | Լիրա | Օ | Մ | Պարտիք | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | ԴՐԱՄԱՐԿՂ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | | | | | | ԴԿ | |
| | | (Համարելով թէ ունիցի ԴԿ). | | — | — | 10000 | — |
| 2 | | ՄԹԵՐՔ ՁԻԹՈՅ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | 1820 | | | | | ԴԿ | |
| | Հոկտ. 20 | Առ Բարեկէն՝ ԴԿ, 21000. զի վաճառեաց ինձ 12, կարաս ձիթոյ. | | 1 | 4 | 21000 | — |
| 3 | | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | | | | | | ԴԿ | |
| | | (Համարելով թէ ունիցի լիրայս). | 100 | — | — | 9600 | — |
| 4 | | ԲԱՐԵԿԷՆ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | 1820 | | | | | ԴԿ | |
| | Հոկտ. 20 | Առ Դրամարկղն՝ ԴԿ, 7000. զի վճարեցաւ նմա վասն միոյ մասին վաճառեալ ձիթոյ. | | 1 | 1 | 7000 | — |
| | | Առ Սեղան փոխանակութեան ԴԿ, 7000. յոր գրեցաւ վասն երկրորդ մասին գնոյ վաճառեալ ձիթոյն. | | 1 | 3 | 7000 | — |

(1) ## ՕՐՀԱՇԻՒ

1820. 'Ի Պօլիս.

20. Հոկտեմբերի.

| | | ՂՂ | փէ |
|---|---|---|---|
| 2 / 4 | Մթերք Ձիթոյ ‖ Առ Բաւրկէն՝ ՂՂ, 21000. վասն 12, կարաս ձիթոյ զոր վաճառեաց ինձ՝ դաշամբ զմի մասն առօրին վճարելոյ պատրաստ դրամովք. զերկրորդ մասն 'ի ձեռն Սեղանոյ փոխանակութեան. և զերրորդն զկնի վեց ամսոյ ընտիր դրամովք. . . . . | 21000 | — |
| 4 / 1 | Բաւրկէն ‖ Առ Կրամարկըն՝ ՂՂ, 7000. զի վճարեցաւ նմա մասն մի յարժէից ձիթոյն՝ զոր վաճառեաց ինձ ըստ նախագրելոյդ. . . . | 7000 | — |
| 4 / 3 | Նոյնն ‖ Առ Սեղան փոխանակութեան՝ ՂՂ, 7000. արժէք 75, լիրայից, որք գրեցան յանուն նորա 'ի նոյն Սեղան վասն երկրորդ մասին ձիթոյ, զոր վաճառեաց ինձ ըստ նախագրելոյդ. . . . . . | 7000 | — |

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՂ | փէ | 1 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". 20 | 'Ի Բաւրկէնէ՝ ՂՂ, 7000. որ դերհաշիւ վճարեցաւ նմա. . | | 1 | 4 | 7000 | — | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՂ | փէ | 2 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

| | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՂ | փէ | 3 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". 20 | 'Ի Բաւրկէնէ՝ ՂՂ, 7000. որ է լիրա. . . . . . | 75 | 1 | 4 | 7000 | — | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՂ | փէ | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". 20 | 'Ի Մթերից Ձիթոյ՝ ՂՂ, 21000. վասն 12 կարաս ձիթոյ, զոր վաճառեաց ինձ. . . . . . . . . . . . | | 1 | 2 | 21000 | — | |

ՃԿԲ. Կարգաւորութիւն յետին օրինակիդ բարւոք ճանաչի, յորժամ ածցես զմտաւ՝ թէ 'ի գնել անդ զձէթն անհնար է միանգամայն առօրին վճարել զգրամսն՝ թէ 'ի Դրամարկեղէ և թէ 'ի Սեղանոյ փոխանակութեան, այլ վճարելի են միմեանց զկնի. վասն որոյ զիւրաքանչիւրն առանձին առանձին առեալ յիշատակագրելի է նախ՝ Բարեկէն վաճառեաց ինձ զերկոտասան կարասս ձիթոյ, 'ի գին՝ 21000, դահեկանաց, ըստ դաշանցն՝ որք գրեցան վերագոյնդ։ Երկրորդ՝ թէ վճարեցի նմա 7000, դահեկանս 'ի նուազել զպարտիս այնր ձիթոյ։ Երրորդ՝ թէ գրեցի զնա 'ի Սեղան փոխանակութեան վասն 75, լիրայից որ առնէ դշ, 7000, նոյնպէս 'ի նուազել զպարտիս ձիթոյ։ Արդ՝ 'ի դնել զդիպուածն յայսմիկ բացորոշ կարգի, անաշխատ հասու լինիս՝ թէ ընդէր նախառաջին Մթերք Ձիթոյ նշանակեալ կան պարտապան, և Բարեկէն պարտատէր։ Ապա՝ Բարեկէն պարտապան, և Դրամարկղն պարտատէր։ Իսկ յետոյ Բարեկէն վերստին պարտապան, և Սեղան փոխանակութեան պարտատէր (ծէ. 4)։

ՃԿԳ. Յերկոսին նախակարգեալ օրինակդ միապէս Բարեկէն լինի պարտատէր 7000, դահեկանաց։ Մթերք Ձիթոյ պարտապան 21000, դահեկանաց։ Դրամարկղն պարտատէր 7000, դահեկանաց. որպէս և Սեղան փոխանակութեան նոյնպէս պարտատէր 7000, դահեկանաց։ Բայց 'ի Մայրհաշիւ առաջին օրինակին Բարեկէն նշանակեալ կայ պարտատէր 4, կարաս Ձիթոյ, որք դեռ չեն վճարեալք. իսկ յերկրորդ օրինակին թէպէտ ըստ խմբ երևի իբր ամբողջ վճարեալ արժէից ձիթոյն, սակայն այլուստ 'ի յայտ գայ՝ թէ կրկին մասունքն ևեթ իցեն վճարեալք։

## Առ Օրինակ։

ՃԿԴ. Հնար է և գնոյ առնուլ վաճառս ինչ այսու դաշամբ, զի գին նորա ըստ մասին հատուցի պատրաստ դրամով. ըստ մասին Սեղանով փոխանակութեան. ըստ մասին Դրամաթղթով. ըստ մասին զայլ մթերս փոխարինելով. և ըստ մասին յետ ժամանակաց վճարելով։ Օրինակ՝ դիցուք թէ Աշոտ Տարոնացի վաճառեալ իցէ քեզ 1000, լիտր Պահվէ 'ի գին 10000, դահեկանաց. զորոյ զմի մասն առօրին ունիս վճարել 'ի Դրամարկեղէ. զերկրորդ մասն 21, լիրայիւ Սեղանոյ փոխանակութեան. զերրորդ մասն 420, ֆիօրինի Դրամաթղթով. զչորրորդ մասն երկու ծրար Ձուխայիւ. և զմնացեալ հինգերորդ մասն զկնի վեց ամսոց ընտիր դրամով։ Արդ՝ այս դիպուած՝ գոլով խառն տուրևառք, մարթի կարգաւորել ըստ նախագրեալ կրկին օրինակաց (ՃԿ). այսինքն՝ կամ բաժանելով 'ի պարզ մասունս իւր, և կամ զիւրաքանչիւր հատուածն զատաբար նշանակելով. վասն որոյ յուշ ածեալ զոր աւանդեցաքն կանխաւ, օրէն է զՄթերս գնոյ առեալ Պահվէին նշանակել պարտապան առ Դրամարկղն՝ 2000, դահեկանաց. առ Սեղան փոխանակութեան՝ 2000, դահեկանաց. առ Դրամաթուղթս ֆիօրինի՝ 2000, դահեկանաց. առ Մթերս Ձուխայի՝ 2000, դահեկանաց. և առ Աշոտ Տարոնացի՝ 2000, դահեկանաց։ Սակայն կամելով կարգաւորել ըստ երկրորդ օրինակին, պարտ է նախ՝ զՄթերս Պահվէին նշանակել պարտապան ամբողջ գումարի 10000, դահեկանաց, պարտատէր առնելով զԱշոտ Տարոնացի. յետոյ հարկ է զնոյն Աշոտ պարտապան գրել առ Դրամարկղն վասն 2000, նմին վճարեալ դահեկանաց. առ Սեղան փոխանակութեան վասն 21, լիրայից, որ է 2000, դահեկան. առ Դրամաթուղթս ֆիօրինի վասն 2000, դահեկանաց. առ Մթերս Ձուխայի վասն 2000, դահեկանաց։

## Առ Օրինակ։

ՃԿԵ. Դնիցուք և զդիպուած ինչ առաւել բազմապայման, որ կարէ պատահել 'ի գնուածս վաճառաց. իբր զի՝ կամելով ուրուք գնոյ առնուլ մթերս ինչ. մարթի գնել յայսմիկ դաշն, զի արժէք գնելոյն հատուցին ըստ մասին արծաթադրամով. ըստ մասին Սեղանով փոխանակութեան. ըստ մասին դրամաթղթով. ըստ մասին կրկնատեսակ փոխանակագրովք. ըստ մասին փոխարինութեամբ այլոց մթերից. ըստ մասին համարելով 'ի հաշիւ պահանջին, զոր ունիցի 'ի վաճառողէն. և զմնացեալ մասն վճարել յետ ամսոց։ Եւթն են մասունք այսր դիպուածոյ, զոր 'ի բացայայտ խելամտութիւն դեռավարժից կարգեսցուք առանձին օրինակաւ հաշուեմատենի։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

15. Հոկտեմբերի. 1820։

Ա. Ի 5, ամսոյս գնոյ առի 'ի Սմբատայ 800, լիտր Որդան կարմիր, որոյ բոլորագումար դրամոցն է 24000, դահեկան։ Զայդ գումար վճարեցի ըստ հետեւեալ դաշանցս։ ա. Յերեկեան աւուր ետու նմա զարծաթադրամն ղշ, 3000։ բ. Ի նոյն աւուր գրեցի զնա 'ի Սեղան փոխանակութեան, փոխանցելով նմին 35, լիրայս Սեղանոյ, որք առնեն ղշս 3000։ գ. Ի նմին աւուր ետու նմա Դրամաթուղթս 35, լիրայից Սեղանոյ, որք նոյնպէս առնեն ղշս, 3000։ դ. Ի նոյն աւուր փոխանցեցի 'ի նա զփոխանակագիր մի 3000, ղշից զոր ունէի առ իս։ ե. Այսօր ետու նմա և զայլ փոխանակագիր 3000, ղշից, զոր ուղղեցի 'ի վերայ Համազասպայ 'ի Զմիւռնիա։ զ. Այսօր ետու նմա 1200, լիտր Գահվէ, 'ի գին 3000, ղշից։ է. Այսմ տուրեւառութեան 3000, ղշք եւ համարելի են 'ի հաշիւ պարտեացն, զոր ունի առ իս։ ը. Զմնացեալ 3000, ղշն ունիմ վճարել նմա ընտիր դրամովք զկնի երկուց ամսոց։

(1) **ՕՐՀԱՇԻՒ**

1820. Ի Պոլիս։

| | 15. Հոկտեմբերի։ | ղշ | փր |
|---|---|---|---|
| 2/1 | Որդան կարմիր ‖ Առ Դրամարկղն՝ ղշ, 3000. արժէք 100, լտեր, զոր գնոյ առի 'ի Սմբատայ 'ի 5, ամսոյս, և երէկ վճարեցի նմա արծաթադրամ. . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/3 | Նոյն Մթերք ‖ Առ Սեղան փոխանակութեան՝ ղշ, 3000. վասն 100, լտերն զոր վաճառեաց ինձ ըստ վերոյգրելոյդ. և երէկ վճարեցաւ 35, լիրայիւ Սեղանոյ. . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/4 | Նոյնն ‖ Առ Դրամաթուղթս՝ ղշ, 3000. վասն 100, լտերն զոր Սմբատ վաճառեաց ինձ, և երէկ վճարեցաւ նմա դրամաթղթով 35, լիրայից. . . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/5 | Նոյնն ‖ Առ Փոխանակագիրս՝ ղշ, 3000. վասն 100, լտերն, զոր վաճառեաց ինձ ըստ նախագրելոյդ, և վճարեցաւ երէկ փոխանցելով 'ի նա զփոխանակագիր. . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/6 | Նոյնն ‖ Առ Համազասպ Զմիւռնացի՝ ղշ, 3000, զոր այսօր ուղղեցի առ նա՝ վճարել զգին 100, լտերն, զոր 'ի 5, ամսոյս վաճառեաց ինձ Սմբատ. . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/7 | Նոյնն ‖ Առ Մթերս Գահվէի՝ ղշ, 3000. արժէք 1200, լիտր գահվէին, զոր այսօր ետու Սմբատայ 'ի վճարել զգին 100, լտեր որդան կարմրոյ. . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/8 | Նոյնն ‖ Առ Սմբատ՝ ղշ, 3000. վասն 100, լտերն զոր վաճառեաց ինձ, և զգին նորա համարեցաք 'ի հաշիւ պարտեացն, զոր ունէր առ իս. | 3000 | — |
| 2/8 | Նոյնն ‖ Առ Նախագրեալն՝ ղշ, 3000. վասն 100, լտերն, զոր վաճառեաց ինձ 'ի 5, ամսոյս. և ունիմ վճարել նմա յետ երկուց ամսոց՝ ընտիր դրամովք. . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |

| | | | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | ԴՐԱՄԱՐԿՂ | | | | | |
| | | ( Համարելով թէ ունիցի ղշս ) . . . . . . . . . | | — | — | 10000 | — |
| 2 | | ՄԹԵՐՔ ՈՐԴԱՆ ԿԱՐՄՐՈՅ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
| | 1820 Հոկտ. 15 | Առ Դրամարկղն՝ ղշ, 3000, գնեցաւ պատրաստական դրամով . . . . . . . . . . . . | 100 | 1 | 1 | 3000 | — |
| | | Առ Սեղան փոխանակութեան՝ ղշ, 3000. վճարեցաւ նովաւ . . . . . . . . . . . . | 100 | 1 | 3 | 3000 | — |
| | | Առ Դրամաթուղթս՝ ղշ, 3000, գնեցաւ նոքօք . . . | 100 | 1 | 4 | 3000 | — |
| | | Առ Փոխանակագիրս՝ ղշ, 3000. փոխանցեցաւ 'ի նա . | 100 | 1 | 5 | 3000 | — |
| | | Առ Համազասպ՝ ղշ, 3000, 'ի ձեռն քարշեալ փոխանակագրոյ . . . . . . . . . . . . . . | 100 | 1 | 6 | 3000 | — |
| | | Առ Մթերս Պաշտէլի՝ ղշ, 3000. փոխանակութեամբ . | 100 | 1 | 7 | 3000 | — |
| | | Առ Սմբատ՝ ղշ, 3000. համարեցաւ 'ի հաշիւ պարտուցն . . . . . . . . . . . . . . | 100 | 1 | 8 | 3000 | — |
| | | Առ Նոյնն՝ ղշ, 3000. վճարելի յետ երկուց ամսոց . | 100 | 1 | 8 | 3000 | — |
| 3 | | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
| | | ( Համարելով թէ ունիցի լիրայս ) . . . . . . | 110 | — | — | 10000 | — |
| 4 | | ԴՐԱՄԱԹՈՒՂԹ ՍԵՂ. ՓՈԽ. | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
| | | ( Համարելով թէ ունիցի լիրայս ) . . . . . . | 110 | — | — | 10000 | — |
| 5 | | ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
| | | ( Համարելով թէ ունիցի ղշս ) . | | — | — | 10000 | — |
| 6 | | ՀԱՄԱԶԱՍՊ ՃՄԻԽՈՆԱՑԻ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
| | | ( Համարելով թէ ունիցի ղշս ) . . . . . . . . . | | — | — | 10000 | — |
| 7 | | ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
| | | ( Համարելով թէ ունիցի լտերս ) . . . . . . | 4300 | — | — | 10000 | — |
| 8 | | ՍՄԲԱՏ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փր. |
| | | ( Համարելով թէ ունիցի ղշս ) . . . . . . . . . | | — | — | 10000 | — |

# ՄԱՑՐՀԱՇԻՒ

| | | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՊԾ | պէ 1 |
| 1820 Հոկտ". | 15 | Ի Մ'Թերից Որդան կարմրոյ ՊԾ, 3000. վճարեցաւ վասն նորա. . . . . . . . . . . . . . . . . . . | | 1 | 2 | 3000 | — |
| | | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 2 |
| | | | | | | ՊԾ | պէ |
| | | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 3 |
| | | | | | | ՊԾ | պէ |
| 1820 Հոկտ". | 15 | Ի Մ'Թերից Որդան կարմրոյ՝ ՊԾ, 3000. զի վճարեցաւ. . . . . . . . . . . . . . | 35 | 1 | 2 | 3000 | — |
| | | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 4 |
| | | | | | | ՊԾ | պէ |
| 1820 Հոկտ". | 15 | Ի Մ'Թերից Որդան կարմրոյ՝ ՊԾ, 3000. զի վճարեցաւ. . . . . . . . . . . . . . | 35 | 1 | 2 | 3000 | — |
| | | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 5 |
| | | | | | | ՊԾ | պէ |
| 1820 Հոկտ". | 15 | Ի Մ'Թերից Որդան կարմրոյ՝ ՊԾ, 3000. տուաւ վասն նորա. | | 1 | 2 | 3000 | — |
| | | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 6 |
| | | | | | | ՊԾ | պէ |
| 1820 Հոկտ". | 15 | Ի Մ'Թերից Որդան կարմրոյ՝ ՊԾ, 3000. գնեցաւ քարշեալ փոխանակագրով. . . . . . . . . . . . . | | 1 | 2 | 3000 | — |
| | | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 7 |
| | | | | | | ՊԾ | պէ |
| 1820 Հոկտ". | 15 | Ի Մ'Թերից Որդան կարմրոյ՝ ՊԾ, 3000. փոխանակեցաւ ընդ նմա. . . . . . . . . . . | 1200 | 1 | 2 | 3000 | — |
| | | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 8 |
| | | | | | | ՊԾ | պէ |
| 1820 Հոկտ". | 15 | Ի Մ'Թերից Որդան կարմրոյ՝ ՊԾ, 3000. համարեցաւ 'ի հաշիւ պարտուցն. . . . . . . . . . . . | | 1 | 2 | 3000 | — |
| | | Ի Նմանէ՝ ՊԾ, 3000. վճարելի յետ երկուց ամսոց. . . | | 1 | 2 | 3000 | — |

13*

ՃԿԶ. ՚Ի նախագրեալ օրինակի որովհետև գլխաւորն բաժանեցաւ 'ի պարզ մասունս իւր, նմին իրի պահեցան կանոնքն աւանդեալք վերագոյն (ՃԾ. ՃԾԱ. ՃԾԲ. ՃԾԳ. ՃԾԴ. ՃԾԵ. ՃԾԶ. ՃԾԷ). սորին սակս առհասարակ յամենայն հաշուեմասունս պարտական գրեցաւ Մ՝Թերք Որդան կարմրոյ, և պարտատեարք եղեն Դրամարկղ, Մեղան փոխանակութեան, Դրամաթուղթք, Փոխանակագիրք, Համազասպ, Մ՝Թերք Գռահլեի, և Սմբատ:

ՃԿԷ. Դիտելի. Ի տեղեաւս ծանիցեն նորավարժք, զի 'ի նախընթաց Օրհաշուին երկոքին յետին յիշատակագրութիւնք համանմանք միմեանց և հաւասարագումարք ըստ պարտեացն և պահանջից, կարեն ևս միով բանիւ յիշատակագրիլ այսպէս. * Ի Սմբատ ղրշ, 6000, վասն 200, լտեր Որդան կարմրոյ՝ զոր վաճառեաց ինձ. որոյ կէսն համարելի է 'ի հաշիւ պարտուցն, և կէսն յետ երկուց ամսոց վճարելի է նմա ընտիր դրամով:

Նոյն Դիտուած Ըստ Կարգաւ:

15. Հոկտեմբերի: 1820:

Ա. ՚Ի 5, ամսոյս առի 'ի Սմբատայ՝ 800, լտերս Որդան կարմրոյ 'ի գին 24000, դահեկանաց՝ ընդ պայմանօքս, ա. Երէկ վճարեցի նմա 'ի Դրամարկղէ ղրշ, 3000: բ. Երէկ գրեցի զնա 'ի Մեղան փոխանակութեան վասն 35, լիրայից, որ է ղրշ, 3000: գ. Երէկ ետու նմա Դրամաթուղթս 35, լիրայից Մեղանոյ, որ է նոյնպէս ղրշ, 3000: դ. Երէկ փոխանցեցի 'ի նա զփոխանակագիր մի 3000, ղրշից, զոր ունէի առ իս: ե. Այսօր ետու նմա զայլ փոխանակագիր, 3000, ղրշից, զոր ուղղեմ 'ի վերայ Համազասպայ Օմիւռնացւոյ: զ. Այսօր ետու նմա 1200, լիտր Գռահլէ՝ 'ի գին 3000, ղրշից: է. Ընդ այսոսիկ 3000, ղրշք ևս համարելի են 'ի հաշիւ պարտուցն, զոր ունի առ իս: ը. Իսկ զմնացեալ 3000, ղրշն ընտիր դրամով ունիմ վճարել նմա զկնի երկուց ամսոց:

## ՄԱՅՐ ՀԱՇԻՒ

| | ՄԹԵՐՔ ՈՐԴԱՆ ԿԱՐՄՐՈՅ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղրշ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| 1<br>1820<br>Հոկտ". 15 | Ի Սմբատ՝ ղրշ, 24000, որ վաճառեաց ինձ լտերս. | 800 | 1 | 2 | 24000 | — |

| | ՍՄԲԱՏ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղրշ | փրէ |
|---|---|---|---|---|---|
| 2<br>1820<br>Հոկտ". 15 | (Համարելով՝ թէ ունիցի ղրշս). . . . . . . . . | — | — | 10000 | — |
| | Ի Դրամարկղն՝ ղրշ, 3000. զոր երեկ տուան նմա վասն Որդան կարմրոյ. . . . . . . . . . . . . . . | 1 | 3 | 3000 | — |
| | Ի Մեղան փոխանակութեան՝ ղրշ, 3000. յոր երեկ գրեցաւ վասն նորին. . . . . . . . . . . . . . | 1 | 4 | 3000 | — |
| | Ի Դրամաթուղթս Մեղանոյ՝ ղրշ, 3000, զոր երեկ տուան նմա. . . . . . . . . . . . . . . . | 1 | 5 | 3000 | — |
| | Ի փոխանակագիրս՝ ղրշ, 3000, որ երէկ փոխանցեցաւ 'ի նա. | 1 | 6 | 3000 | — |
| | Ի Համազասպ Օմիւռնացի՝ ղրշ, 3000. փոխանակագիրն տուեալ նմա այսօր. . . . . . . . . . . . . . . | 1 | 7 | 3000 | — |
| | Ի Մ՝Թերս Գռահլեի՝ ղրշ, 3000. որ այսօր յանձնեցաւ 'ի ձեռս նորա. . . . . . . . . . . . . . . . | 1 | 8 | 3000 | — |

(1)

# ՕՐՀԱՇԻՒ

1820 . 'Ի Պօլիս ։

15 . Հոկտեմբերի ։

| | | ղշ | փրէ |
|---|---|---|---|
| 1/2 | Ամթերք Որդան կարմրոյ ‖ Առ Սմբատ՝ ղշ, 24000 . արժէք 800, լտերց որդան կարմրոյ՝ զոր 'ի 5, ամսոյս վաճառեաց ինձ . հատուցանելի զանազան պայմանօք . . . . . . . . . . . . . . . . | 24000 | — |
| 2/3 | Սմբատ ‖ Առ Գրամարկղն՝ ղշ, 3000 . որք դերհաշիւ վճարեցան նմա երէկ . . . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/4 | Նոյնն ‖ Առ Սեղան փոխանակութեան՝ ղշ, 3000 . որք դերհաշիւ գրեցան նմա երէկ 35, լիրայիւ . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/5 | Նոյնն ‖ Առ Գրամանթուղթս՝ ղշ, 3000 . որք դերհաշիւ տուան նմա երէկ 35, լիրայիւ Սեղանոյ . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/6 | Նոյնն ‖ Առ Փոխանակագիրս՝ ղշ, 3000, որք երէկ դերհաշիւ փոխանցեցան 'ի նա . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/7 | Նոյնն ‖ Առ Համազասպ՝ ղշ, 3000, փոխանակագիր քարշեալ, զոր ուղղեցի այսօր 'ի վերայ Համազասպայ 'ի Զմիւռնիա, դերհաշիւ վճարելի Սմբատայ . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 2/8 | Նոյնն ‖ Առ Ամթերս Գահվէի՝ ղշ, 3000 . վասն 1200, լտր Գահվէին, զոր դերհաշիւ ետու նմա այսօր . . . . . . . . . . | 3000 | — |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 1 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 2 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 15 | 'Ի Ամթերից Որդան կարմրոյ՝ ղշ, 24000 . զոր վաճառեաց ինձ . . . . . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | 24000 | — | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | ԴՐԱՄԱՐԿՂ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | (Համարելով՝ թէ ունի ՊԾս) . . . . . . . . . . . | | — | — | ՊԾ 10000 | փէ — |
| 4 | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | (Համարելով՝ թէ ունիցի լիրայս) . . . . . . | 110 | — | — | ՊԾ 10000 | փէ — |
| 5 | ԴՐԱՄԱԹՈՒՂԹՔ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | (Համարելով՝ թէ ունիցի լիրայս) . . . . . . | 110 | — | — | ՊԾ 10000 | փէ — |
| 6 | ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐՔ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | (Համարելով՝ թէ ունիցի ՊԾս) . . . . . . . . . . | | — | — | ՊԾ 10000 | փէ |
| 7 | ՀԱՄԱԶԱՍՊ ԶՄԻՒՌՆԱՑԻ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | (Համարելով՝ թէ ունիցի ՊԾս) . . . . . . . . . | | — | — | ՊԾ 10000 | փէ — |
| 8 | ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| | (Համարելով՝ թէ ունիցի լտերս) . . . . . . | 4300 | — | — | ՊԾ 10000 | փէ — |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՇ | փէ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 15 | 'Ի Սմբատայ՝ ՂՇ, 3000. որք երէկ տուան նմա. . . . | 1 | 2 | 3000 | — | 3 |

| | | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՇ | փէ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 15 | 'Ի Սմբատայ՝ ՂՇ, 3000. որ է լիրա. . . . . . . | 35 | 1 | 2 | 3000 | — | 4 |

| | | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՇ | փէ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 15 | 'Ի Սմբատայ՝ ՂՇ, 3000. զի տուան նմա Դրամա-թուղթք Սեղանոյ փոխանակ". . . . . . . | 35 | 1 | 2 | 3000 | — | 5 |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՇ | փէ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 15 | 'Ի Սմբատայ՝ ՂՇ, 3000. փոխանակագիր փոխանցեալ 'ի նա երէկ. . . . . . . . . . . . . . . . | 1 | 2 | 3000 | — | 6 |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՇ | փէ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 15 | 'Ի Սմբատայ՝ ՂՇ, 3000. փոխանակագիր քարշեալ. . . | 1 | 2 | 3000 | — | 7 |

| | | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ՂՇ | փէ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Հոկտ". | 15 | 'Ի Սմբատայ՝ ՂՇ, 3000. գահվէ յանձնեալ 'ի ձեռս նորա. . . . . . . . . . . . . . . | 1200 | 1 | 2 | 3000 | — | 8 |

ՅԿԸ. Յերկրորդ օրինակէ աստի ակներեւ տեսանի՝ թէ զիա՞րդ իւրաքանչիւր հատուածք դիպուածոյն միանգամայն առեալք, նախ առաջին նշանակեալ կան պարտապանք առ Մթերս Որդան կարմրոյ, պարտատէր լինելով Սմբատայ։ Իսկ ապա Սմբատ նշանակեալ կայ պարտապան առ Գրամարկղն՝ 3000, ֆրն։ Առ Սեղան փոխանակութեան՝ 3000, ֆրն։ Առ Գրամաթուղթս՝ 3000, ֆրն։ Առ փոխանակագիրս՝ 3000, ֆրն։ Առ Համազամ՝ 3000, ֆրն։ Իսկ առ Մթերս Գահվէի՝ 3000, ֆրն (ծր. 4)։

ՅԿԹ. Եթէ զերկոսին զնախագրեալ օրինակդ համեմատեսցես ընդ միմեանս, ելանեն ամենայնիւ համազօրք եւ նմանք միմեանց, ոչինչ վնասելով պէսպիսութեանն որ տեսանի 'ի նոսա. զի յառաջնումն Գրամարկղն, որպէս եւ այլք եղեալ են պարտատեարք կամ պահանջողք 'ի Մթերեց Որդան կարմրոյ. իսկ յերկրորդումն՝ 'ի Սմբատայ (ծր. 7)։ Եթէ ուշադիր մտօք հայեսցիս 'ի կարգս յիշատակագրութեանց երկոցունց օրինակացս, յետինն ընտրելագոյն է քան զառաջինն։

## Յաղագս Գործ Վաճառմանց։

ՅՀ. Ի նախընթաց կանոնադրութիւնսդ յայտ արարաք զօրինակ յիշատակագրութեան գնոյ առեալ մթերից, եւ զի 'ի վաճառականութեան անխտիր սովոր են լինել գնմունք եւ վաճառմունք, վասն որոյ ասասցուք եւ յաղագս վաճառմանց՝ թէ զիա՞րդ յիշատակագրելի իցեն մթերքն, յորժամ վաճառին կամ պատրաստական դրամովք, կամ համարելով 'ի հաշիւ պարտեաց, եւ կամ ժամապայման հատուցմամբ։

ՅՀԱ. Յայտնի է ամենեցուն՝ թէ Գնել կամ Գնոյ առնուլ՝ ասի, յորժամ ոք դրամս հատուցանէ. եւ նոցին փոխարէն մթերս ընդունի։ Իսկ Վաճառել կոչի, եթէ ոք մթերս տացէ, եւ փոխարէն դրամս ընկալցի։ Այսոցիկ տուրեւառ գործողութեանց հարկաւ զհետ գան շահիլ կամ վնասիլ, եւ կամ առանց շահու եւ վնասու դրամս ընդ մթերից փոխանակել. երեքին սոքա թէպէտ զուգընթացք են յամենայն տուրեւառս, եւ կարօտք առանձին ուշադրութեան վաճառականին, սակայն 'ի կարգաւորութիւնս հաշուեմատենից ոչինչ նոր փոփոխութիւն 'ի ներքս ածեն, բայց 'ի համառօտ յիշատակագրութենէ ինչ, զոր պարտ է յաւելուլ 'ի պատճառս եղեալ շահուն կամ վնասուն, ըստ որում հանդերձեալ եմք աւանդել յիւրում տեղւոջ (ՅՂԸ). ուր տացին եւ այլ կարեւոր տեղեկութիւնք սակս սոցին իրաց։ Յայսմ վայրի կարգեսցուք միայն զօրինակ դասաւորութեան վաճառադիպուածոց 'ի հաշուեմատեանս, առանց յիշ ածելոյ զշահ կամ զվնաս՝ որ լինի 'ի վաճառմանէ։

ՅՀԲ. Դիցուք թէ վաճառեցեր Աշոտայ 600, լիտր Շաքար՝ 'ի գին 8500, արծաթադրամ դահեկանաց։ Ի նմին աւուր՝ յորում զդրամսն հատուցանէ քեզ, օրէն է պարտապան նշանակել զԳրամարկղն, պարտատէր առնելով զՄթերս Շաքարին (ծր. 4)։

ՅՀԳ. Եթէ փոխան արծաթադրամոց տացէ քեզ զարժէս ինչ 'ի Սեղանոյ փոխանակութեան, կամ զԳրամաթուղթ, կամ զփոխանակագիր ինչ, կամ զայլ մթերս վաճառաց, զընկալեալդ 'ի նմանէ, որ զինչ եւ իցէ, օրէն է միշտ նշանակել պարտապան. իսկ զտուեալդ նմին՝ պարտատէր։ Օրօրինակ՝ եդեալ թէ վաճառեցեր Մուշեղայ՝ 1000, կանգուն Կտաւ՝ 'ի գին, 6000, դահեկանաց. զայդ գումար դրամոց եթէ հատուսցէ քեզ 'ի Սեղանոյ փոխանակութեան, կամ փոխանակագրով, կամ այլով մթերիւք ինչ, զտուեալն 'ի նմանէ նշանակեսցես պարտապան, իսկ զՄթերս վաճառեալ Կտաւոյն պարտատէր (ծր. 4)։

ՅՀԴ. Եթէ վաճառեսցին մթերք ինչ, զոր գնողն կամիցի առնուլ 'ի հաշիւ պահանջիցն առ 'ի քէն, պահելի է այս կանոն։ Օրօրինակ՝ դիցուք թէ Արշակ ունելով պահանջս 2500, դահեկանաց, շատացի 'ի վճարումն պարտուցդ, եթէ տացես նմա 1000, լիտր Մեղրամոմ։ Յայս դիպուած՝ 'ի յանձնելդ զմեղրամոմն 'ի ձեռս Արշակայ, օրէն է զայն 2500, դահեկանն նշանակել 'ի պարտիս Արշակայ, եւ 'ի պահանջս Մթերից Մեղրամոմոյ։ Պատճառ յիշատակագրութեանս յայտ անուի է, զի եթէ փոխան մեղրամոմոյ առեալ էիր նմա զարծաթադրամս, հարկ լինէր յայնժամ պարտապան նշանակել զԱրշակ առ Գրամարկղն. (յորմէ բարձան դրամք 'ի վճարել Արշակայ), եւ զԳրամարկղն պարտատէր 2500, դահեկանաց. նոյնպէս յայս դիպուած՝ փոխան դրամոցն վճարեցաւ մեղրամոմ՝ հաւասարարժէք 2500, դահեկանաց. եւ զի այն մթերք բարձան 'ի Մթերանոցէդ, եւ եդան 'ի Մթերանոց Արշակայ, նմին իրի Մեղրամոմն լինի պարտատէր, եւ Արշակ պարտապան։

ՅՀԵ. Ի նախագրեալ դիպուածդ համարեցաւ՝ թէ արժէք փոխանակեալ մեղրամոմոյն հաւասարք իցեն գումարի պահանջիցն Արշակայ, որով պարտիք եւ պահանջք հաշուեմատին նորա

հաւասարին միմեանց ։ Սակայն եղեալ թէ մեղրամամն սակաւարժէք իցէ քան զգումար պահանջիցն, յայնժամ Արշակ լինի տակաւին պարտատէր առաւելեալ դրամոցն ։ Իսկ եթէ մեղրամամն աւելի իցէ քան զպահանջսն, յայնժամ Արշակ պարտական մնայ վերյաւելեալ դրամոյն ։

ՃՀԶ. Եթէ վաճառեսցին մթերք այսու պայմանաւ, զի գին նորա հատուսցի յետ ամսոց. յայնժամ պահելի է այս կանոն ։ Օրինակ՝ դիցուք թէ վաճառեցեր Հեթմոյ 340, լիտր Մետաքս 'ի գին 10000, դահեկանաց, զորս ունի յետ վեց ամսոց վճարել քեզ ընտիր դրամով ։ 'Ի յանձնելդ զմետաքսն 'ի ձեռս Հեթմոյ՝ օրէն է զդրամն 10000, դահեկանացն նշանակել 'ի պարտիս նորին Հեթմոյ, և 'ի պահանջս Մետաքսին. յիշատակագրելով 'ի մատեան Օրհաշուին՝ այսպէս. * Հեթում Ն Ռ. Մթերս Մետաքսի [?], 10000. զի վաճառեցաւ նմա 340, լիտր Մետաքս, դաշամբ վճարելոյ զգին վեց ամսոց ընտիր դրամովք | ։ Ապա 'ի լրանալ պայմանեալ ժամանակին, և 'ի հատուցանել Հեթմոյ զիւր պարտիս, զընկալեալ դրամսն օրէն է նշանակել 'ի պարտիս Դրամարկղ, և 'ի պահանջս Հեթմոյ, որով հաւասարեալ աւարտի հաշուեմատն Հեթմոյ ։ Յայսպիսի ժամապայման տուրևառս՝ եթէ կանուխ, և թէ անագան վճարեսցին դրամք, միշտ և անխափան պահելի են նոյն կանոնք. որովհետև վաճառեալ մթերքն ելեալ են 'ի Մթերանոցէ վաճառողին, և անցեալք 'ի ձեռս գնողին. թէպէտ և դրամքն չիցեն մտեալք 'ի Դրամարկղ վաճառողին ։ Վասն որոյ զինչ և իցէ մթերք 'ի վաճառելն միշտ նշանակելի են պարտատեարք. և գնողն պարտական. իսկ 'ի ժամու վճարման՝ վճարողն ունի լինել պարտատէր. և ընդունող արժէկոյն պարտական ։

## Յաղագս Խառն Վաճառմանց ։

ՃՀԷ. Խառն կոչի վաճառումն՝ յորժամ վաճառելով ուրուք մթերս ինչ, զգինս նորա առնուցու ըստ մասին դրամ, և ըստ մասին արժէք ինչ Սեղանոյ փոխանակութեան և կամ զայլ ինչ մթերս ։ Օրինակ՝ եղեալ թէ երէկ վաճառեցեր Սանատրկոյ զվեց կարաս Ձիթոյ՝ 'ի գին 12000, դահեկանաց, և ընկալար 'ի նմանէ ըստ կիսոյն արծաթադրամս, և ըստ կիսոյն 64, լերայս Սեղանոյ փոխանակութեան ։ Արդ՝ զայս դիպուած բաժանելով 'ի պարզ մասունս իւր, համարելի է՝ թէ երեք կարասք ձիթոյ վաճառեցան 6000, դահեկանաց, զորս առօրին վճարեաց ընտիր դրամով. իսկ մնացեալ երեքին կարասք վաճառեցան նոյնպէս 6000, դահեկանաց, որք անցին առ քեզ 'ի Սեղանոյ փոխանակութեան (ծր. 4) ։ Յետ զայսօրինակ բաժանելոյ զդիպուածն, նշանակելի է Դրամարկղն պարտական 6000, դահեկանացն՝ զորս ինքն ընկալաւ, պարտատէր առնելով զՄթերս Ձիթոյ. նոյնպէս և Սեղան փոխանակութեան նշանակելի է պարտական 6000, դահեկանաց, պարտատէր լինելով վերստին նոյն Մթերից Ձիթոյ. (ՃՀԸ) ։

ՃՀԸ. Եթէ կամեսցի ոք զայդ դիպուած այլով կարգաւ դասաւորել 'ի հաշուեմատենի. մարթ է զհատուածս բանից դիպուածոյն զատաբար առեալ, նախ առաջին պարտական նշանակել զՍանատրուկ ամբողջ գումարի 12000, դահեկանաց, պարտատէր առնելով զՄթերս Ձիթոյ ։ Յետոյ նշանակելի է Դրամարկղն պարտական 6000, դահեկանաց, պարտատէր առնելով զՍանատրուկ ։ Իսկ ապա Սեղանն փոխանակութեան նշանակելի է պարտական 6000, դահեկանաց, պարտատէր առնելով վերստին զՍանատրուկ (ծր. 4) ։ Բայց քանզի յայսպիսի վաճառմունս, որք լինին պատրաստ դրամովք՝ հաշուեմատն գնողին ընդ սկսանելն և դադարի (ՃԾ). վասն որոյ ոչ է հարկ 'ի Մայրհաշուին սահմանել զառանձին երեսս և մանրամասն նշանակել ։

ՃՀԹ. Հնար է թէ լինիցի և վաճառումն մթերից այսու դաշամբ, զի դրամք արժէկից նորա ըստ մասին արծաթով վճարեսցին առժամայն. ըստ մասին 'ի ձեռն Սեղանոյ փոխանակութեան. և ըստ մասին յետ ամսոց ինչ ։ Օրինակ՝ եղեալ թէ վաճառեցեր Գեղամայ զերկոտասան ծրարս Չուխայից, 'ի գին 15000, դահեկանաց, զորոյ զմի մասն առօրին ունի վճարել ընտիր դրամովք. զերկրորդ մասն 58, լերայիւ Սեղանոյ փոխանակութեան, իսկ զերրորդ մասն զկնի վեց ամսոց՝ նոյնպէս ընտիր դրամովք ։ Դիպուածս կրկնօրինակ կարէ յիշատակագրիլ. այսինքն՝ կամ բաժանելով 'ի պարզ մասունս իւր, և կամ զիւրաքանչիւր հատուածս բանիցն զատաբար առնելով ։ Եթէ կամեսցիս բաժանել 'ի մասունս, պարտ է համարիլ, թէ չորեքին ծրարք Չուխայի վաճառեալ իցեն պատրաստական դրամովք. չորեքին 'ի ձեռն Սեղանոյ փոխանակութեան. և չորեքին վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն (ծր. 2). վասն որոյ նախ առաջին՝ Դրամարկղն նշանա-

կելի է պարտապան 5000, դահեկանաց, պարտատէր գրելով զՄ՛թէոս Ջուխային։ Երկրորդ՝ պարտապան նշանակելի է Սեղան փոխանակութեան 5000, դահեկանաց, և պարտատէր՝ նոյն Մ՛թէոս Ջուխային։ Երրորդ՝ պարտապան գրելի է Դեղամ վասն 5000, վճարելի դահեկանաց, պարտատէր առնելով զնոյն իսկ զՄ՛թէոս Ջուխային (ՃՀԷ․ ՃՀԸ․ ՃՀԹ)։ Ապա թէ կամեսցիս զիւրաքանչիւր հատուածս բանիցն զատաբար առնուլ, օրէն է նախ՝ զԴեղամ նշանակել պարտապան ամբողջ գումարի 15000, դահեկանաց, պարտատէր առնելով զՄ՛թէոս Ջուխային․ յետոյ պարտապան գրելի է Դրամարկղն 5000, դահեկանաց, և պարտատէր զԴեղամ․ հուսկ յետոյ Սեղան փոխանակութեան նշանակելի է պարտապան 5000, դահեկանաց, պարտատէր առնելով վերստին զԴեղամ (ԾԳ․ 4)։ Յետինս այս առաւել բացորոշ գոլով՝ ընտրելագոյն է քան զառաջինն։

## Առ Օրինակ։

ՃՁ․ Ի լուծանել զամենայն դժուարութիւն և զերկմտութիւնս նորավարժից դիցուք աստանօր զգլխաւոր ինչ բազմախուռն պայմանօք կուտակեալ, զոր և պարզեսցուք կրկին օրինակաւ, առ 'ի լինել կանոն կարգաւորութեան հաշուեմատենից՝ թէ ուրեք երբեք դիպեսցին խառն տուրևառք վաճառմանց։

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

18․ Դեկտեմբերի․ 1820․

Ա․ Ի 16․ ամսոյս վաճառեցի Արշամայ 700, լիտր Որդան կարմիր՝ 'ի գին 21000, դահեկանաց, զորս և հատոյց ինձ ըստ առաջիկայ պայմանացս։ Բ․ Երէկ վճարեաց ինձ 'ի Դրամարկեղէ դհ, 3000։ Գ․ Երէկ գրեաց զիս 'ի Սեղան փոխանակութեան վասն 35, լիրայից․ որ է դհ, 3000։ Դ․ Երէկ ետ ինձ Դրամաթուղթս 35, լիրայից Սեղանոյ փոխանակութեան․ որ է դհ, 3000։ Ե․ Երէկ փոխանցեաց յիս զփոխանակագիր մի 3000, դհից։ Զ․ Այսօր ետ ինձ 1000, լիտր Դահվէ, զոր ընկալայ ես 'ի գին 3000, դհից։ Է․ Ընդ այսուիկ՝ 3000, դհք 'ի գնոյ անտի վաճառեալ Որդանին համարելի են 'ի վճար պարտեացս՝ զոր ունիմ նմին Արշամայ։ Ը․ Իսկ զմնացեալ 3000, դհն՝ ընտիր դրամով ունի հատուցանել ինձ յամսեանն Մայիսի յաջորդ տարւոյ։

### ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ | | | | | |
| | (Համարելով՝ թէ ունիցի լոտեր) . . . . . . | 800 | — | — | դհ 22500 | փող — |

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻԻԴԱԲԵՐ ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻՆ

1820. 'Ի Պօլիս։

| | 18. Դեկտեմբերի։ | ղրշ | փրէ |
|---|---|---|---|
| 2 / 1 | Դրամարկղ ‖ Առ Մ'Թերս Սրդան կարմրոյ՝ ղրշ, 3000. գին 100, լտերն, որ 'ի 16. ամսոյս վաճառեցաւ Առշամայ, որ և երէկ վճարեաց ինձ արծաթադրամ . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 3 / 1 | Սեղան փոխանակութեան ‖ Առ Նախագրեանն՝ ղրշ, 3000. գին 100, լտերն որ վաճառեցաւ. և երէկ հատոյց ինձ 35, վերայն Սեղանոյ . . . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 4 / 1 | Դրամաթուղթք՝ ‖ Առ Նախագրեանն՝ ղրշ, 3000. գին 100, լտերն՝ որ վաճառեցաւ, և երէկ հատոյց ինձ դրամաթղթով 35, վերայի Սեղանոյ . . . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 5 / 1 | Փոխանակագիրք ‖ Առ Նախագրեանն՝ ղրշ, 3000. գին 100, լտերն որ վաճառեցաւ, և երէկ հատոյց ինձ փոխանակագրով . . . . . | 3000 | — |
| 6 / 1 | Մ'Թերք Գահվէի ‖ Առ Նախագրեանն՝ ղրշ, 3000. զի այսօր փոխան 100, լտեր Սրդան կարմրոյ ետ ինձ Առշամ 1000, լիտր գահվէ . . . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 7 / 1 | Առշամ ‖ Առ Նախագրեանն՝ ղրշ, 3000. որ է գին 100, լտերն վաճառելոյ նմա 'ի 16, ամսոյս, և համարեցաւ 'ի հաշիւ պահանջիցն զոր ունէր յինէն . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| 7 / 1 | Նոյնն ‖ Առ Նախագրեանն՝ ղրշ, 3000. գին 100, լտերն որ 'ի նմին աւուր վաճառեցաւ նմա. և վճարելի է 'ի կէս ամսեան Մայիսի հետեւեալ տարւոյ . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ԴԱՀԱՆՋՔ ղրշ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | | |
| Դեկտ". 18 | 'Ի Դրամարկեղէ՝ ղրշ, 3000. վաճառեալ արծաթադրամով . . . . . . . . . . . . . . | 100 | 1 | 2 | 3000 | — |
| | 'Ի Սեղանոյ փոխանակութեան՝ ղրշ, 3000. վաճառեալ Սեղ". փոխան" . . . . . . . . . | 100 | 1 | 3 | 3000 | — |
| | 'Ի Դրամաթղթոյ՝ ղրշ, 3000, վաճառեալ նոյնա . . | 100 | 1 | 4 | 3000 | — |
| | 'Ի Փոխանակագրոյ՝ ղրշ, 3000, վաճառեալ նոյնա . | 100 | 1 | 5 | 3000 | — |
| | 'Ի Մ'Թերից Գահվէի՝ ղրշ, 3000. վաճառեալ փոխանակութեամբ . . . . . . . . . . . . | 100 | 1 | 6 | 3000 | — |
| | Յառշամայ՝ ղրշ, 3000. համարեալ 'ի հաշիւ պահանջիցն . . . . . . . . . . . . | 100 | 1 | 7 | 3000 | — |
| | 'Ի Նմանէ՝ ղրշ, 3000. վաճառեալ դաշամբ վճարելոյ յետ ամսոց . . . . . . . . . . . . . | 100 | 1 | 7 | 3000 | — |

I

| | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | ԴՐԱՄԱՐԿՂ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 Դեկտ". 18 | Առ Մ'Թերս Որդան կարմրոյ ԼԴ, 3000. որ վաճառեցաւ. | | 1 | 1 | ԼԴ 3000 | — |
| 3 | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 Դեկտ". 18 | Առ Մ'Թերս Որդան կարմրոյ՝ ԼԴ, 3000. որ է լիրա. | 35 | 1 | 1 | ԼԴ 3000 | — |
| 4 | ԴՐԱՄԱԹՈՒՂԹՔ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 Դեկտ". 18 | Առ Մ'Թերս Որդան կարմրոյ՝ ԼԴ, 3000. վաճառեալ լիրայիւ. . . . . . . . . . . . . . | 35 | 1 | 1 | ԼԴ 3000 | — |
| 5 | ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐՔ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 Դեկտ". 18 | Առ Մ'Թերս Որդան կարմրոյ՝ ԼԴ, 3000. վաճառեալ նովաւ. | | 1 | 1 | ԼԴ 3000 | — |
| 6 | ՄԹԵՐՔ ԳԱՀՎԷԻ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 Դեկտ". 18 | Առ Մ'Թերս Որդան կարմրոյ՝ ԼԴ, 3000. փոխանակեցան լտերք. . . . . . . . . . . . . | 1200 | 1 | 1 | ԼԴ 3000 | — |
| 7 | ԱՐՇԱՄ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 Դեկտ". 18 | Առ Մ'Թերս Որդան կարմրոյ՝ ԼԴ, 3000. վաճառեցաւ 'ի հաշիւ պահանջից նորա. . . . . . . . . . . . . | | 1 | 1 | ԼԴ 3000 | — |
| | Առ 'Նորին՝ ԼԴ, 3000. վճարելի 'ի նմանէ յետ ամսոյ . . | | 1 | 1 | 3000 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ<br>ղշ | ուէ 2 |
| | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ<br>ղշ | ուէ 3 |
| | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ<br>ղշ | ուէ 4 |
| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ<br>ղշ | ուէ 5 |
| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ<br>ղշ | ուէ 6 |
| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ<br>ղշ | ուէ 7 |
| | *(Համարելով թէ ունիցի ղշս)* . . . . . . . . . | | — | — | 10000 | |

ճծա. Ի նախակարգեալ օրինակդ ըստ որում տեսանես, դիպուած վաճառման Որդան կարմ-րոյ բաժանեալ է յեօթանեսին 'ի պարզ մատեան իւր (ծր. 2), համարելով թէ 100, լիտրն վա-ճառեալ իցէ առձեռն դրամով։ 100, լիտրն Սեղանով փոխանակութեան։ 100, լիտրն Գրամա-թղթով։ 100, լիտրն փոխանակագրով։ 100, լիտրն փոխանակութեամբ Գաւհէի։ 100, լիտրն գրելով 'ի հաշիւ պահանջից։ և 100, լիտրն հնգամենայ պայմանաւ 'ի վճարումն. սորին սակս Մթերք Որդան կարմրոյ յամենայնի նշանակեցաւ պարտատէր. իսկ այլքն՝ յորոց վճարեցան ար-ժէք նորա, պարտապանք (ճհբ — ճհէ)։

## Նոր Գիրդուած Տարեն Կարգաւ։

18. Դեկտեմբերի. 1820։

Ա. Ի 16, ամսոյս վաճառեցի Տ. Բշտամայ 700, լիտր Որդան կարմիր՝ 'ի գին 21000, դահեկանաց՝ զոր հատոյց ինձ ըստ առաջիկայ օրինակիս. ա. Նորեկ վճարեաց ինձ պատրաստական դրամս դհ, 3000։ բ. Նորեկ գրեաց զիս 'ի Սեղան փոխանակութեան վասն 35, լիրայից, զորս ընկա-լայ 'ի հաշիւ 3000, դհից։ գ. Նորեկ ետ ինձ Գրամաթուղթս 35, լիրայից Սեղանոյ, նոյնպէս 'ի հաշիւ 3000, դհից։ դ. Նորեկ փոխանցեաց յիս զփոխանակագիր մի 3000, դհից։ ե. Տ. Յա-սոր ետ ինձ Գաւհէ 1000, լիտր, զոր ընկալայ 'ի գին 3000, դհից։ զ. Ընդ այսոսիկ՝ 3000, դհք ևս համարեցան 'ի հաշիւ պարտեացս, զոր ունիմ նմին Տ. Բշտամայ։ է. Մնացեալ 3000, դհմն ունի վճարել ինձ ընտիր դրամով՝ յամսեանն Մայիսի յետագայ տարւոյս։

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| I | ԱՐԾԱԹ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | դհ | ստկ |
| Դեկտ. 18 | Առ Մթերս Որդան կարմրոյ՝ դհ, 21000. վաճառեալ նմին. | 1 | 2 | 21000 | — |

| 2 | ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | դհ | ստկ |
| | (Համարելով թէ ունիցի լտերս) . . . . . . . | 800 | — | — | 22500 | — |

(1) **ՕՐՀԱՇԻՒ**

1820. 'Ի Պօլիս։

| | 18. Դեկտեմբերի։ | ղշ | փրէ |
|---|---|---|---|
| —1 / 2— | Արշամ ‖ Առ Ս՛Թերս Որդան կարմրոյ՝ ղշ, 21000. համօրէն արժէք 700, լտերց, որք վաճառեցան 'ի 16. ամսոյ, վճարելիք ըստ դաշնադրութեանն. . . . . . . . . . . . . . . . . | 21000 | — |
| —3 / 1— | Դրամարկղ ‖ Առ Արշամ՝ ղշ, 3000. որք վճարեցան ինձ երէկ. | 3000 | — |
| —4 / 1— | Սեղան փոխանակութեան ‖ Առ Նոյնն՝ ղշ, 3000, երէկ գրեցան ինձ 35, լիրայք. . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| —5 / 1— | Դրամաթուղթք ‖ Առ Նոյնն՝ ղշ, 3000. երէկ վճարեցան ինձ նովաւ 35, լիրայք. . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| —6 / 1— | Փոխանակագիրք ‖ Առ Նոյնն՝ ղշ, 3000. որ յիս փոխանցեցաւ 'ի ձեռն փոխանակագրոյ. . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| —7 / 1— | Ս՛Թերք Գահլէի ‖ Առ Նոյնն՝ ղշ, 3000. փոխանակեցաւ ինձ 1000, լիտր գահլէ վասն Որդան կարմրոյ. . . . . . . . . | 3000 | — |

**ՄԱՅՐՀԱՇԻՒ**

| | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|---|
| 1820 Դեկտ". 18 | (Համարելով թէ ունիցի ղշս). . . . . . . . . . | — | — | 10000 | — |
| | 'Ի Դրամարկեղէ՝ ղշ, 3000. վճարեցաւ ինձ 'ի հաշիւ Որդան կարմրոյ. . . . . . . . . . . . . . . | 1 | 3 | 3000 | — |
| | 'Ի Սեղանոյ փոխանակութեան՝ ղշ, 3000. գրեցաւ ինձ 'ի նոյն հաշիւ. . . . . . . . . . . . . . . . | 1 | 4 | 3000 | — |
| | 'Ի Դրամաթղթոց՝ ղշ, 3000. տուան ինձ նոյնպէս. . . | 1 | 5 | 3000 | — |
| | 'Ի Փոխանակագրոց՝ ղշ, 3000. փոխանցեցաւ յիս նոյնպէս. | 1 | 6 | 3000 | — |
| | 'Ի Ս՛Թերից Գահլէին՝ ղշ, 3000. յանձնեցաւ ինձ գահլէ նոյնպէս. . . . . . . . . . . . . . . . | 1 | 7 | 3000 | — |

1

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 Դեկտ". 18 | Յարշամայ ղշ, 21000. զի վաճառեցան նմա լտերք. | 700 | 1 | 1 | 21000 | — |

2

| | | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | ԴՐԱՄԱՐԿՂ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | ՂՇ | առէ |
| Դեկտ". 18 | Առ Արշամ՝ ՂՇ, 3000. վճարեալ ինձ առ 'ի նմանէ . . . | | 1 | 1 | 3000 | — |
| 4 | ՍԵՂԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | ՂՇ | առէ |
| Դեկտ". 18 | Առ Արշամ՝ ՂՇ, 3000. որ գրեաց զիս 'ի նոյն վասն լիրայից . . . . . . . . . . . . . . | 35 | 1 | 1 | 3000 | — |
| 5 | ԴՐԱՄԱԹՈՒՂԹՔ | ԼԻՐԱ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | ՂՇ | առէ |
| Դեկտ". 18 | Առ Արշամ՝ ՂՇ, 3000. զի ետ ինձ դրամաթուղթս լիրայից . . . . . . . . . . . . . . | 35 | 1 | 1 | 3000 | — |
| 6 | ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐՔ | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | ՂՇ | առէ |
| Դեկտ". 18 | Առ Արշամ՝ ՂՇ, 3000. որ յիմ վերայ դարձոյց զփոխանակագիր . . . . . . . . . . . . . . . . . | | 1 | 1 | 3000 | — |
| 7 | ՄԹԵՐՔ ԴԱՀՎԷԻ | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
| 1820 | | | | | ՂՇ | առէ |
| Դեկտ". 18 | Առ Արշամ՝ ՂՇ, 3000. ետ ինձ գահվէ լտերս . . | 1000 | 1 | 1 | 3000 | — |

| | ԼԻՐԱ | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ [illegible] | [illegible] | 3 |
| | ԼԻՐԱ | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ [illegible] | [illegible] | 4 |
| | ԼԻՐԱ | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ [illegible] | [illegible] | 5 |
| | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ [illegible] | [illegible] | 6 |
| | ԼԻՏՐ | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ [illegible] | [illegible] | 7 |

ՃԾԲ. Ի նախագրեալ օրինակդ երեւի՝ թէ վաճառումն որով կարգաւ լեալ իցէ, նովին կարգաւ եւ դասաւորեալ է 'ի հաշուեմատենի. վասն որոյ նախ առաջին՝ Ռուբշամ նշանակեալ կայ պարտապան 21000, դահեկանաց՝ գնոյ Որդանն. պարտատէր լինելով նորին իսկ Մթերից Որդան կարմրոյն: Յետոյ պարտապան նշանակեալ կան Պրամարկղն, Մեղան փոխանակութեան, Պրամաթուղթք, փոխանակագիրք, և Մթերք Պուահլեի. պարտատէր լինելով Ռուբշամայ 'ի պատճառս յանձնեալ իրացն, որովք հատոյց զգինս Որդան կարմրոյն (ծր. 4):

ՃԾԳ. Եթէ զերկոսին զնախակարգեալ օրինակդ համեմատեսցես ընդ միմեանս, ամենայնիւ նոյն և նման գտցես զգործս նոցա, զի յերկոսին միօրինակ նոյն պարտապանք են և նոյն պարտատեարք՝ թէպէտ և այլով կարգաւ դասաւորեալք (ծր. 7). յորոց մարթ է եւ հասու լինել, թէ յետինն ընտրելագոյն է քան զառաջինն:

## ՕՐԻՆԱԿՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆՑ ՈՐՔ ԼԻՆԻՆ ՔԱՂԱՔԷ Ի ՔԱՂԱՔ

ՃԾԴ. Օրէնք են հաշուեմատենից բովանդակել զամենայն յեղանակս տուրեւառութեանց, և զի վաճառականք ոչ միայն 'ի մօտոյ ընդ մերձաւորս, այլև 'ի բացուստ ընդ հեռաւորս սովոր են առնել տուրեւառս. վասն որոյ յետ կարգելոյ զօրինակ գնուածոց և վաճառմանց՝ որք լինին 'ի նմին քաղաքի, յայտ արասցուք և զօրինակն՝ որ պահելի է 'ի տուրեւառութիւնս հեռաւոր քաղաքաց ընդ բացական անձինս: Արդ՝ այսպիսի տուրեւառք կարեն լինել՝ կամ տալով զյանձնարարութիւն [1] առ այլս, և կամ կատարելով զյանձնարարութիւնս այլոց. և զի սոքա զանազան գործողութիւնք են, կարօտին այլևայլ կարգի յիշատակագրութեանց. վասն որոյ խօսեսցուք նախ յաղագս կանոնաց՝ որք հային 'ի յանձնարարութիւնսն եղեալս առ այլ ոք հեռաւոր, թէ զիարդ յանձնողն ունիցի յիշատակագրել 'ի հաշուեմատենի, յորժամ դրամս կամ մթերս առաքէ ուրեք, զի անդ գնոյ առցին վաճառք, կամ փոխանակեսցին ընդ մթերս այլոց վաճառաց: Եւ ապա կարգեսցուք զկանոնսն՝ որք պատշաճին առ գործադիրս յանձնարարութեանց (ձլ):

### Յաղագս Պարզ Գնառածոյ քաղաքէ 'ի քաղաք:

ՃԾԵ. Եդեալ թէ կամիցիս գնոյ առնուլ Մետաքսս 'ի Պրուսա քաղաքէ, և անդր առ Ռուշտ բարեկամ քո առաքես դրամս 30000, դահեկանաց, զի գնելով նորա զխնդրեալդ, փութով յուղարկեսցէ առ քեզ 'ի Պոլիս: Այսպիսի տուրեւառք, որք լինին դրամս առաքելով և զմթերս բերել տալով, կարօտին կրկին յիշատակագրութեանց, զորս պարտ է առնել յայլևայլ ժամանակս. այսինքն՝ նախ յառաքելդ զդրամ, օրէն է պարտապան նշանակել զՌուշտ, և պարտատէր զՊրամարկղն (ծր. 4). յետոյ 'ի ժամանել Մետաքսին 'ի ձեռս քո, զնոյն իսկ զմթերս մետաքսին նշանակեա պարտապան վճարեալ դրամոցդ. պարտատէր առնելով զՌուշտ: Եթէ Մետաքսն՝ յուղարկեալ առ քեզ յՌուշտոյ, հաւասարեսցի դրամոցդ յղելոց առնա՝ աւարտի հաշիւն, զի համեմատին պարտիք ընդ պահանջից. իսկ եթէ աւելի իցէ և կամ պակաս քան զառաքեալ 30000, ՃԸ դրամոցդ, յայնժամ Ռուշտ պարտապան կամ պարտատէր նշանակելի է վերայաւելեալ դրամոց:

ՃԾԶ. Հնար է թէ փոխանակ 30000, պատրաստական դրամոց առաքեսցես առ Ռուշտ զփոխանակագիր 30000, դահեկանաց. յայնժամ պարտապան նշանակելի է Ռուշտ, և պարտատէր՝ կամ Պրամարկղն, և կամ Մթերքն՝ յորոց ելեալ իցեն արժէք փոխանակագրոյն (ձխ): Յետոյ 'ի ժամանել Մետաքսին 'ի ձեռս քո՝ նոյն իսկ Մետաքսն նշանակելի է պարտապան, և Ռուշտ պարտատէր (ծր. 4):

ՃԾԷ. Մարթ է եւ հանդիպիլ՝ թէ փոխանակ դրամս կամ փոխանակագիրս յղելոյ առ Ռուշտ, յանձնեսցես նմա առաքել առ քեզ զխնդրեալ Մետաքսդ, և յետոյ ուղղել 'ի վերայ քո զփոխանակագիր մի քարշեալ՝ ըստ չափու ծախեալ դրամոցն: Յայս դիպուած՝ որովհետև 'ի ժամ

[1] ՃԾԴ. (1) ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ: Իտ. Commissione. Գոմմիսսիոնէ. որոյ գործադիրն կոչի առ նոսա Commissionario. Գոմմիսսիոնարիօ. որ է կատարիչ յանձնարարութեանց: Այժմ գործառնութեան զհետ գայ Յաւգարկութիւն յանձնեալ վաճառաց, զոր խոսլոյեր Ըօժէթէօնէ անուանեն. և զի կան 'ի նմա ինչ ինչ կարևոր ուսանելիք, առասցուք ուրոյն 'ի թիւն (ճխ):

յանձնարարութեանդ ոչ դրամս ինչ տաս 'ի ձեռս, և ոչ լինիս տէր Մետաքսին, չէ օրէն 'ի հաշուեմատենին նշանակել ինչ, մինչև ոչ հատուցես զքարշեալ փոխանակագիր նորա. և յորժամ վճարեսցես, յայնժամ Աշոտ նշանակելի է պարտական տուեալ դրամոց, պարտատէր առնելով կամ զԴրամարկղն, և կամ զայն Մթերսն՝ յորոց վճարեցան դրամք փոխանակագրոյն (ՃԽԶ)։ Իսկ յետ այնորիկ 'ի ժամանել Մետաքսին 'ի ձեռս քո, զգումար արժէից նորա հարկ է դնել 'ի պարտիս նորին իսկ Մետաքսի, և 'ի պահանջս Աշոտայ։ Իսկ եթէ դրամք փոխանակագրոյն տակաւին անվճար գոլով՝ ժամանեսցէ Մետաքսն 'ի ձեռս քո. յայնժամ ոչ լինի այլ փոփոխութիւն՝ բաց յետևառաջութենէ յիշատակագրութեանց. զի նախ՝ պարտական նշանակելի են Մթերք Մետաքսին պարտատէր լինելով Աշոտայ. և յետոյ պարտական գրելի է Աշոտ, և պարտատէր Դրամարկղն կամ այն Մթերք՝ յորոց ելեալ իցեն դրամք փոխանակագրոյն ըստ ասացելոյս վերագոյնդ։

ՃՁԷ. Հնար է ևս գիտել, զի յանձնեսցես ումեք առաքել առ քեզ զմթերս ինչ, ցուցանելով նմա զոմն յայլում քաղաքի. առ որ կարասցէ ուղղել զփոխանակագիր քարշեալ ըստ չափու պիտոյից դրամոցն՝ զոր ունիցի վասն յանձնարարութեանդ։ Օրինակ՝ դիցուք թէ գրեցեր առ Թոռնիկ 'ի Պրուսա, զի վասն քո ուղղեսցէ զփոխանակագիր քարշեալ՝ 30000, դահեկանաց 'ի վերայ Բարկէնի 'ի Զմիւռնիա. և նովին դրամովք գնոյ առեալ զՄետաքս, փութով յուղարկեսցէ առ քեզ։ Յետ առնելոյ զայդ յանձնարարութիւն. պարտ է մնալ պատասխանւոյ 'ի Թոռնիկայ՝ մինչև ծանիցի, թէ քարշեալ փոխանակագիրն 30000, դահեկանաց վճարեալ իցէ 'ի Բարկէնէ. և ապա օրէն է զԹոռնիկն նշանակել պարտական 30000, դահեկանաց՝ պարտատէր առնելով զԲարկէնն։ Իսկ 'ի հասանել Մետաքսին 'ի ձեռս քո, պիտոյ է առնել և զայլ յիշատակագրութիւն. որով 30000, դահեկանքն գրեսցին 'ի պարտիս Մթերից Մետաքսին, և 'ի պահանջս Թոռնիկայ։

ՃՁԸ. Դարձեալ՝ հնար է թէ ունելով ուրուք պահանջս յումեքէ 'ի հեռաւոր քաղաքի, յանձնեսցէ նմին առաքել առ ինքն զվաճառս ինչ 'ի հատուցումն պարտեաց։ Օրինակ՝ եղեալ թէ 'ի Վենետիկ Բագարատ պարտական իցէ քեզ 50000, դահեկանաց, գրեցեր առ նա զի փոխան դրամոցս յուղարկեսցէ քեզ 60, ծրարս ծանրագին Դիպակի՝ 'ի վճար պարտուց իւրոց։ Յայս դիպուած՝ որովհետև դրամքն 'ի վաղուց կան առ նմա, հարկաւ համարին ևս յիշատակագրեալք 'ի հաշուեմատենին, վասն որոյ 'ի յանձնելդ զայն առ Բագարատ՝ չէ պարտ նշանակել ինչ մինչև յանձնեալքդ ժամանեսցեն 'ի ձեռս քո. և ապա զՄթերս Դիպակացն գրելի է պարտական 50000, դահեկանաց, և զԲագարատ պարտատէր (Ձև. 4)։

ՃՂ. Նոյն ևս հնար է լինել յանձնարարութեան՝ խոստումն առնելով, զի յետ հասանելոյ մթերիցն 'ի ձեռս, հատուսցին դրամքն որով օրինակաւ և կամք իցեն առաքողին։ Օրինակ՝ եղեալ թէ յանձնեցեր Հեթմոյ 'ի Մարսիլիա՝ առաքել առ քեզ 30, ծրարս Դիպակի ծանրագնոյ, խոստանալով նմին՝ զի եթէ առաքեսցէ զխնդրեալդ, յօրէ անտի ժամանելոյ իւրացն 'ի ձեռս քո մինչև ցվեց ամիս հատուսցես նմա 25000, դահեկան ըստ հաշուին ցուցելոյ 'ի նմանէ։ Արդ՝ եթէ այսու դաշամբ յուղարկեսցէ առ քեզ զ30, ծրարս Դիպակացն, յաւուր ընդունելութեանդ հարկ է 'ի հաշուեմատենիդ պարտական նշանակել զՄթերս Դիպակին 25000, դահեկանաց, պարտատէր առնելով զՀեթում (Ձև. 4)։

## Յաղագս Խառն Գործածոյ Քաղաքէ 'ի Քաղաք։

ՃՂԱ. Խառն կոչին յանձնարարութիւնք մթերից՝ որք լինին ումեք, առաքելով առ նա ըստ մասին դրամ, և ըստ մասին փոխանակագիր. իսկ եթէ անբաւական իցեն առաքեալքն, պիտի ցուցանել նմա և զայլ ոք, յորմէ կարասցէ առնուլ զպակասեալն՝ և կատարել զյանձնարարութիւնն։ Օրինակ՝ եղեալ թէ գրեցեր 'ի Քիոս առ Փառնակ առաքել առ քեզ զզանազան Դիպակս, որոց վասն յղեցեր առ նա պատրաստական դրամս 10000, դահեկանաց. և զփոխանակագիր մի 10000 դահեկանաց. ետուր ևս զհրաման, զի 'ի պակասել դրամոցն՝ առցէ և 'ի Գուրգենայ դահեկանս 10000։ Արդ՝ 'ի յիշատակագրութիւնս այսոցիկ երրեակ իրողութեանց՝ օրէն է միշտ զՓառնակ նշանակել պարտական. իսկ պարտատէր՝ յառաջնումն լինի Դրամարկղն, յորմէ բարձան 10000, դահեկանքն յղեալք առ նա. յերկրորդումն՝ լինին Մթերքն, յորոց ելեալ իցեն դրամք փոխանակագրոյն. իսկ յերրորդումն լինի Գուրգէն (ՃՁԵ. ՃՁԶ. ՃՁԸ)։ Յետ յիշատակագրութեանցս 'ի ժամանել Դիպակացն 'ի ձեռս քո, զնոյն իսկ

զՄթերս Գնպակին նշանակելի է պարտապան 30000, դահեկանաց, որ է բոլորագումար արժէք նոցին, պարտատէր առնելով զփառանակ (ծդ. 4) ։

ճղբ. Բան զնախագրեալդ խառնագոյն լինի, եթէ յանձնելով ումեք գնոյ առնուլ զՄթերս ինչ, առաքեսցին առ նա այլևայլ տեսակք իրաց ։ Օրինակ՝ դիցուք թէ կամելով գնոյ առնուլ 'ի Պրուսայէ 2000, լիտր Մետաքս, յանձնեսցես Վահրամայ՝ զի գնեսցէ զայն վասն քո, յոյր սակս և առաքեսցես առ նա, նախ՝ պատրաստական դրամս 3000, դահեկանաց ։ Երկրորդ՝ յղեսցես զփոխանակագիր 4200, դահեկանաց ։ Երրորդ՝ ծանուցես նմա, թէ վասն այսոցիկ յանձնարարութեանց վճարեալ ես փոխանակագրոյն քարշելոյ 'ի նմանէ՝ 2500, դահեկան ։ Չորրորդ՝ գրեսցես առ նա, զի ուղղեսցէ զփոխանակագիր քարշեալ՝ 4000, դահեկանաց 'ի վերայ Բարկենի 'ի Զմիւռնիա ։ Հինգերորդ՝ ազդեսցես նմա, զի և 'ի Մուրէնէ Պրուսացւոյ առցէ 2300, դահեկան ։ Վեցերորդ՝ ծանուցես նմին, զի 5000, դահեկանք 'ի գնոյ անտի Մետաքսին համարեսցին 'ի հաշիւ պարտուցն, զոր ունի առ քեզ ։ Եօթներորդ՝ դաշնադրեսցիս ընդ նմա՝ զմնացեալ 4000, դահեկանսն հատուցանել նմին զկնի ութ ամսոց ։

Զայս դիպուած բաժանելով 'ի պարզ մասունս իւր, յամենայնի պարտապան նշանակելի է Վահրամ վասն դրամոցն անցելոց 'ի ձեռս նորա ․ իսկ պարտատէրք լինին՝ յառաջնումն Դրամարկղն, յերկրորդումն՝ այն մթերք, յորմէ եղեալ իցեն արժէք փոխանակագրոյն ․ նոյնպէս և յերրորդումն՝ յորոց իրաց վճարեալք իցեն դրամք փոխանակագրոյն քարշելոյ 'ի նմանէ ․ 'ի չորրորդումն՝ Բարկէն Զմիւռնացի ․ 'ի հինգերորդումն՝ Մուրէն (ճձե. ճձզ. ճձէ) ․ 'ի վեցերորդին և յեօթներորդին չէ պարտ առնել զյիշատակագրութիւն ինչ (ճձը. ճղ) ։ Այլ 'ի ժամանել Մետաքսին 'ի ձեռս քո, զբովանդակ արժէս այնր մթերից նշանակել պիտի 'ի պարտիս նոյն Մթերից Մետաքսին, և 'ի պահանջս Վահրամայ (ծդ. 4) ։

## Յաղագս Մթերից յառաջիկայ յաւելուածոյ 'ի վաճառսն ։

ճղգ. Դիցուք թէ 'ի Մթերանոցդ ունիցիս տասն հազար լիտր Շաքարս, որք 'ի վաղուց հետէ մնացեալ իցեն անվաճառք, և կամելով վաճառել՝ առաքես 'ի մթերից անտի 8000, լտերս 'ի Զմիւռնիա առ Հեթում, զի 'ի ձեռն նորա վաճառեսցի անդ ։ Յայս դիպուած՝ որովհետև 'ի վաճառմանէ անտի կարէ լինել շահ կամ վնաս, վասն որոյ պարտ է 'ի հաշուեմատենին նշանակել զառանձին հաշուեմատ ինչ այսպիսի վերնագրով․ ՄԹԵՐՔ ՇԱՔԱՐԻ ԱՌ ՀԵԹՄՈՅ 'Ի ԶՄԻՒՌՆԻԱ ։ 'Ի պարտակողմն այսր հաշուեմատին նշանակելի են արժէք 8000, լտերց յուղարկեալ շաքարիդ՝ իբր պարտիք նոյն մթերից․ պարտատէր առնելով զՄթերս տասն հազար լտերց Շաքարին, որ կայ առ քեզ (ծդ. 4) ։ Յետոյ 'ի ծանուցանել Հեթմոյ զվաճառումն այնր շաքարի՝ կամ ըստ մասին, և կամ ըստ բոլորին, յայնժամ օրէն է զվաճառեալն զայն նախ՝ պարտապան նշանակել վասն ծախուցն եղելոց 'ի պատճառս նորա, պարտատէր առնելով զՀեթում, որ արար զծախսն ․ ապա պարտապան նշանակելի է Հեթում վասն դրամոց վաճառեալ շաքարին, յորում նոյն իսկ Մթերք Շաքարին պարտատէր լինին այնչափ դրամոց, որչափ ինչ գնոյ վաճառեալք իցեն (ծդ. 4) ։ Բայց մերթ է և առանց կրկնաբանութեան համառօտել զյիշատակագրութիւնն՝ այսպէս ․ 'ի դրամոց անտի վաճառեալ շաքարին հան նախ զծախսն Հեթմոյ, և ապա զմնացեալ դրամսն միով բանիւ նշանակեա 'ի պարտիս Հեթմոյ, և 'ի պահանջս նոյն Մթերից Շաքարին ։

ճղդ. Զնախագրեալ կանոնդ եթէ ըստ կարգի առնուցուս 'ի միտ, դիւրաբար լուծանես զամենայն դիպուած այսպիսի տուրևառութեանց ։ Օրինակ՝ եդեալ թէ 'ի Դրամարկղդ ունելով 1000, Վենետիկեան ոսկիս, առաքես զայնս առ Հեթում 'ի Զմիւռնիա, ակնունելով զի անդ եթէ փոխանակեսցին ընդ արծաթադրամոց, կարի շահաբերք լինին ։ Արդ՝ զայն յուղարկեալ 1000, ոսկիսն համարելի է իբր մթերս ինչ վաճառաց, ուստի և 'ի հաշուեմատենին կարգելի է առանձին հաշուեմատ այսպիսի վերնագրով․ ՄԹԵՐՔ Ռ ՀԱՏԻՒ ՎԵՆԵՏԻԿԵԱՆ ՈՍԿՒՈՅ ԱՌ ՀԵԹՄՈՅ 'Ի ԶՄԻՒՌՆԻԱ ։ 'Ի յիշատակագրութիւնս այսր հաշուեմատին պահելի են նոյն կանոնք, զորս ուսանդեցաք վերագոյնդ վասն վաճառման շաքարին (ճղգ) ։

ճղե. Կարգեսցուք և զայլ օրինակ առ 'ի վարժութիւն համբակաց ։ Դիցուք թէ լսելով քո՝ զի վաճառք Գահվէի Թանկագին են յոյժ 'ի Թեսաղոնիկէ, առեալ 'ի Պօլսոյ 1000, լիտր գահվէ, առաքես անդր 'ի ձեռս Բագարատայ վաճառել զայնոսիկ վասն քո ։ Յայս դիպուած օրէն է, զի նախ 'ի հաշուեմատենիդ պարտապան նշանակեսցի հաշուեմատն մակագրեալ ՄԹԵՐՔ

ԳԱՀՎԷԻ ԱՌ ԲԱԳԱՐԱՏԱՑ 'Ի ԹԵՍԱՂՈՆԻԿԷ. պարտատէր լինելով Մ'թերանոցիդ՝ կամ այնր տեղւոյ, ուստի եղեալ իցեն արժէք յուղարկեալ գահվէին (ՃԾ. և այլն. ՃԾԸ, և այլն)։ Ապա 'ի ծանուցանել Բագարատայ զվաճառումն գահվէին, պարտ է նախ 'ի գումարէ անտի դրամոյն հանել զծախսն, զոր արարեալ իցէ նա ինքն Բագարատ, և ապա զմնացեալն նշանակել ամբողջ 'ի պարտիս նորին իսկ Բագարատայ, և 'ի պահանջս * Մ'թերից Գահվէին, որ առ Բագարատայ 'ի Թեսաղոնիկէ | (Ճղզ)։

Ճղզ. Այլ օրինակ։ Դիցուք թէ գնոյ առեր 2000, Ոսկիս, և առաքեցեր առ Բագարատ 'ի Թեսաղոնիկէ՝ վաճառել զայնս կամ փոխանակել ընդ այլ դրամոց։ Յառաքել անդ զոսկիսն նշանակեա 'ի հաշուեմատենիդ զառանձին հաշուեմասն՝ դնելով վերնագիր այսպիսի. ՄԹԵՐՔ ԻՄ ՀԱՃԻ ՈՍԿԻՈՑ ԱՌ ԲԱԳԱՐԱՏԱՑ 'Ի ԹԵՍԱՂՈՆԻԿԷ. և 'ի պարտիս այնր հաշուեմասին նշանակելի են արժէք 2000, ոսկւոյն. պարտատէր առնելով զԴրամարկղն կամ զՄ'թերսն, յորոց վճարեալ իցես զդրամս արժէից նոցին (ԾԷ. 4)։ Իսկ 'ի լսել անդ՝ թէ վաճառեալ իցեն կամ փոխանակեալ ընդ այսչափ դրամոց, 'ի նոյն գումարէ հանելով զծախսն եղեալս 'ի ձեռն Բագարատայ, զմնացեալն նշանակեսջիր 'ի պարտիս նորին Բագարատայ, և 'ի պահանջս * Մ'թերից Ոսկւոյն եղելոյ առ Բագարատայ |։

Յաղագս Մթերից գնոյ առելոց ընդ ձեռն այլոյ 'ի հեռաւոր քաղաքի, և վերստին վաճառելոց 'ի նմին քաղաքի։

Ճղէ. Դիցուք թէ յանձնեցեր 'ի Պրուսա քաղաք առ Գուրգէն գնոյ առնուլ վասն քո 1000, լտերս Մետաքսի, և պահել առ իւր մինչև 'ի բարձրանալ արժէից նորա. և ապա ծանրագին վաճառել զայն։ Յանձնարարութիւնս կարէ լինել առաքելով դրամս առ Գուրգէն. կամ զգինս ստանալի մետաքսին համարելով 'ի հաշիւ պարտուցն, զոր ունիցի առ քեզ. և կամ խոստանալով վճարել զդրամսն յետ քանի մի ամսոց։ Եթէ առաքեսցես զդրամսն, պարտապան գրելի է Գուրգէն, և պարտատէր Դրամարկղն, կամ Մ'թերքն՝ յորոց եղեալ իցեն առաքեալ դրամքն (ՃԾԵ—ՃԾԸ)։ Եթէ համարեսցիս 'ի հաշիւ պարտուցն՝ զոր ունի, կամ խոստասցիս վճարել յետ ամսոց, յայնժամ չէ օրէն առնել յիշատակագրութիւն ինչ՝ ըստ ասացելոցս վերագոյնդ (ՃԾԹ. Ճղ)։ Իսկ յորժամ Գուրգէն ծանուսցէ քեզ՝ թէ գնոյ առեալ իցէ զմետաքսն զոր յանձնեցեր նմին, յայնժամ արժէք նորա նշանակելի են 'ի պարտիս հաշուեմասին մակագրելոյ ՄԹԵՐՔ ՄԵՏԱՔՍԻ ԱՌ ԳՈՒՐԳԷՆԱՅ 'Ի ՊՐՈՒՍԱ. պարտատէր առնելով զնոյն ինքն զԳուրգէն։ Ապա 'ի վաճառել նորա զնոյն Մետաքսն, կամ ըստ բոլորին և կամ ըստ մասին, 'ի գումարէ անտի դրամոց հան նախ զծախսն Գուրգէնայ, և զմնացեալն դիր 'ի պարտիս նորին Գուրգէնայ, և 'ի պահանջս * Մ'թերից Մետաքսին առ Գուրգէնայ 'ի Պրուսա |, ըստ կանխագրելոցս (Ճղզ)։

Յաղագս Շահոյ (1) և Վնասոյ 'ի վաճառականութեան։

Ճղը. Վաճառականն եթէ զգնոյ առեալ մթերսն վաճառեսցէ նովին արժէիւք, որով եկաւ, ոչ առաւելու և ոչ նուազէ զիւր ստացուածս և զճոխութիւն. իսկ եթէ վաճառեսցէ աւելի կամ պակաս գնով քան զոր ստացեալ իցէ, գործէ զզգալի այլայլութիւն 'ի ստացուածս իւր։ Օրինակ՝ եղեալ թէ ունիցիս մթերս գահվէի 1000, դահեկանաց, եթէ նովին գնով փոխանակեսցես զայն ընդ շաքարի, մթերս ընդ մթերից դնելով՝ լինիս միօրինակ տէր 1000, դահեկանաց։ Նոյնպէս և եթէ զշաքարն վաճառեսցես 'ի գին 1000, դահեկանաց, զստացեալ մթերսդ փոխանակես ընդ դրամոյ, և մնաս նոյնօրինակ տէր 1000, դահեկանաց։ Արդ առ ձեռնհաս լինելոյ առաւելուլ զդրամդ 1000, դահեկանացն զոր ունիս 'ի մթերս շաքարին, պարտ է վաճառել զայն 1200, դահեկանաւ։

Ճղթ. Ի վաճառելդ զմթերս ինչ, և 'ի նշանակել զկարևոր յիշատակագրութիւնս, որ վասն վաճառմանն և ծախուց եղելոց 'ի պատճառս նորա (ՃԺԹ), պարտ է հայիլ 'ի հաշուեմասն նոյն մթերից՝ թէ յինչ գումար ժամանեն պարտք և պահանջք նորա. զի եթէ գումարք երկո-

Ճղը. (1) ՇԱՀ կամ Օգուտ։ Իտ. Utile. Ու'թիլէ։ Տճկ. Ֆայտա, և Գազանճ։

ՎՆԱՍ կամ Տոյժ. և Տուգանք։ Իտ. Danno. Տաննօ։ Տճկ. Զարար, կամ Զիյան. և Աֆէթ։

ցունցն հաւասարք իցեն միմեանց, գիտասջիր թէ վաճառեալ մթերքդ ոչինչ շահ և վնաս գործեալ են քեզ. այլ առեալ ես զտուեալդ միայն, և ոչ աւելի կամ պակաս։ Այլ եթէ պահանջքն առաւելուցուն քան զպարտիս, յայտ է թէ վաճառումն շահաբեր լեալ է, զի առեալքդ աւելի են քան զտուեալդ։ Իսկ եթէ պարտիքն առաւելուցուն քան զպահանջսն, ունիս իմանալ թէ վնասակիր ես 'ի վաճառմանն. զի տուեալքդ աւելի են քան զառեալսն։

ՃԲ. Ի սպառիլ մթերից ինչ՝ եթէ չիցէ այլ 'ի վաճառել, զկշռատակագրութիւնս նորա փոխադրելով 'ի Մայրհաշիւն՝ պարտ է գումարել զհաշիւս երկոցունց երեսացն առանձին, և 'ի տեսանել անդ թէ երկոքին գումարքն՝ որք են պարտեաց և պահանջից, հաւասարք իցեն միմեանց, նշանակեսջիր զնոսին առ ոտս իւրաքանչիւր գաւազանացն, և 'ի ներքոյ գումարացն այնոցիկ ձգեսցես զզուգագիծ այսպիսի ═══ . որով սովորութիւն է յայտնել զաւարտումն և զփակիլ այնր հաշուեմասին (ՃԱ)։ Իսկ եթէ մին յերկոցունց գումարացն առաւելուցու քան զմիւսն, յայնժամ չէ մարթ փակել զայն հաշիւ՝ մինչև գտցին հնարք հաւասարելոյ զերկոսին գումարսն ընդ միմեանս։ Իսկ թէ զիարդ հաւասարելի իցեն՝ ասասցուք յառաջիկայդ։

Օրինակ՝ եդեալ թէ պարտք վաճառեալ Մթերից Զուխայիդ ժամանեն 'ի գումար 10000, դահեկանաց. իսկ պահանջքն 'ի դահեկանս 15000։ Յերկոցունց գումարաց աստի յայտ է՝ թէ Մթերք Զուխային գնոյ առեալք իցեն 10000, դահեկանաց և վաճառեալք 15000, դահեկանաց. յորմէ գուշակի՝ թէ շահեալ իցես 5000, դահեկանս։ Իսկ որովհետև համարիմք թէ չունելով զայլ չուխայ 'ի վաճառել՝ կամիս փակել և աւարտել զհաշուեմասն նորա. զոր 'ի կատարել օրէն է նախ՝ զգումար պարտեացն հաւասարել գումարի պահանջիցն, և լինի՝ եթէ 'ի գումար պարտեացն յաւելուցուս զդրամն 5000, դահեկանաց, պարտապան առնելով զնոյն ինքն զՄթերս Զուխային. և ապա խնդրելի է պարտատէր ոք, որում մթերք չուխային լիցին պարտապան. զոր և մարթ է գտանել այսպէս։ Գիտես հաւաստեաւ՝ թէ 'ի մթերից չուխային շահեալ ես 5000, դահեկանս, յորմէ անկ է քեզ իմաստասիրել, թէ բաց 'ի 10000, դահեկանաց, զոր ունէիր 'ի մթերս չուխային, վաճառելով զայնս՝ ստացեալ ես և զայլ 5000, դահեկանս. արդ՝ որպէսզի յայտնի լիցի՝ թէ տիրացեալ ես առաւելագոյն դրամոց քան զոր ունէիր յառաջագոյն, պարտ է զայն շահեալ դրամն յաւելուլ 'ի Դրամագլուխդ, որով հաշուեմասն դրամագլխոյդ լինի պարտատէր այնց դրամոց. վասն որոյ 'ի փակել զհաշուեմասն չուխային՝ զայն շահ 5000, դահեկանացն, զոր եդիր 'ի պարտիս նոյն մթերից չուխային, ունիս նշանակել 'ի պահանջս դրամագլխոյդ, պարտատէր առնելով զնա։

Զայսպիսի շահս՝ որք լինին 'ի վաճառմանէ մթերից, առ 'ի հեշտհետէ անցուցանել 'ի հաշիւ Դրամագլխոյդ, կարևոր է 'ի հաշուեմատենին կարգել զառանձին հաշուեմասն ինչ այսու մակագրութեամբ ՇԱՀԻՑ ՎԱՃԱՌՄԱՆՑ. ընդ որով նշանակելի են շահք կամ վնասք 'ի վաճառելոյ զինչ և իցէ մթերից։ Այս հաշուեմասն՝ ոչ միայն նոյն համարի ընդ Դրամագլխոյն, այլև ունի զայս առաւելութիւն, զի հայելով յայն՝ իմանաս բովանդակապէս զշահ կամ զվնաս եղեալս 'ի վաճառմանէ մթերից. և յետոյ 'ի ժամ Հաշուեկշռոյ դիւրաւ և անաշխատ կարես հաւաքել զեղեալ շահսն և զվնասս 'ի տուրևառութենէն։ Արդ՝ գիտելով զայսոսիկ՝ 'ի կամիլդ զշահ 5000, դահեկանաց վաճառեալ չուխային անցուցանել յայս հաշուեմասն, օրէն է նշանակել այսպէս.

* Մթերք Զուխայի ‖ Առ Հաշիւ Վաճառմանց՝ դհ, 5000, շահ 'ի նոյն մթերսն |։

ՃԳ. Ընդ հակառակս նախագրելոցդ՝ դիցուք թէ յետ վաճառելոյ զմթերս չուխային, հաշիւ արարեալ գտեր՝ զի պարտիք նորա ժամանեն 'ի 15000, դահեկան, իսկ պահանջքն 'ի 10000. յորմէ ունիս գուշակել, եթէ մթերք չուխային, զորս գնոյ առեր 15000, դահեկանաց, վաճառեալ են ցածագին՝ 10000, դահեկանաւ. վասն որոյ վնաս ունիս 5000, դահեկանաց։ Յայս դիպուած՝ 'ի կամիլն աւարտել և փակել զհաշուեմասն չուխային, պարտ է ըստ նախակարգեալ կանոնին՝ զնոյն մթերսն պարտատէր առնել 5000, դահեկանաց, պարտապան դրելով զհաշուեմասն վաճառմանց, և նշանակել այսպէս. * Հաշիւ Վաճառմանց ‖ Առ Մթերս Զուխայի՝ դհ, 5000. կորուստ 'ի նոյն մթերսն |։ Եթէ 'ի հաշուեմատենիդ նշանակեալ իցես և զկանգունս կամ զծրարս չուխային, պարտ է և զնոսին հաւասարել ընդ միմեանս 'ի կշռատակագրութիւնս պարտեաց և պահանջից նորա։

ՃԴ. Ի նախագրելոյդ յայտ է՝ թէ չէ օրէն փակել և աւարտել զհաշուեմասն, մինչև իցեն իսպառ վաճառեալ մթերքն բովանդակեալք 'ի նմա. վասն որոյ այն հաշուեմասունք՝ որոց մթերք ըստ մասին ևեթ իցեն վաճառեալք, ոչ կարեն փակիլ. այլ սպասել պիտի մինչև ցիսպառ վաճառումն։ Կանոնքս վարելի են ոչ միայն 'ի վերայ մթերից՝ որք կային առ վաճառականին, այլև 'ի վերայ եղելոցն 'ի հեռաւոր երկիր։

## Յաղագս Ապահովագրութեանց ։

մգ . Ապահովագրութիւնն (1) է դաշնագրութիւն ինչ՝ որով ոք յանձն ընդունի զվտանգ վաճառամթերից ուրուք յուղարկելոց ընդ ծով, խոստանալով վճարել զկորուստ և զվնաս որք կարեն դիպել 'ի ճանապարհի՝ յերեսաց աւեկոծութեան կամ 'ի նաւաբեկութենէ, կամ 'ի հինից, 'ի հրդեհէ, 'ի պատերազմաց, և յայլ զինչ և իցէ փորձանաց ։ 'Ի փոխարէն այսր խոստման լինի և դաշնադիր հատուցումն ինչ, զոր վաճառականն յուղարկու մթերից պարտի տալ խոստացողին . և այն հատուցումն ոչ է միշտ միօրինակ, այլ փոփոխի ըստ վաճառացն, ըստ հանգամանաց ժամանակին, որպիսութեան նաւուն և երկայնութեան ճանապարհին, զորս մարթ է ուսանել 'ի սովորութենէ քաղաքաց և գաւառաց ։

Քաղաքական դաշնագրութիւնս ասի հնարեալ 'ի հրէից անտի տարագրելոցն 'ի Գաղղիոյ յերկոտասաներորդ դարուն . որոց կամեցեալ դիւրացուցանել զանվտանգ փոխադրութիւն ստացուածոցն՝ զոր ունէին 'ի Գաղղիա, խորհեցան 'ի ձեռն այսպիսի դաշնադիր խոստմանց յորդորել զվաճառականսն 'ի գործադրութիւն այսմ հնարից ապահովութեան . որ 'ի ժամուս առ մեզ համարեալ է ընդ կենցաղօգուտ արուեստս մարդկային ընկերութեան ։ Այլք համարին զսա լինել գիւտ և ճարտարութիւն վաճառականացն Մարսիլիոյ, որք նախ առաջին եղեն ձեռնամուխք յայս տեսակ տուրևառութեան . յորոց և ծաւալեցաւ ընդ ամենայն Եւրոպիա . սակայն քան զայլ ազգս կարի համբաւաւորք եղեն Հոլանդացի վաճառականք յԱմստրտամ քաղաքի՝ մինչև հաւատարմութիւն խոստման նոցա և ճոխութիւնք ընչիցն յորդորէին առհասարակ զամենեսին 'ի հեռաւոր աշխարհաց դիմել անդր 'ի պէտս ապահովագրութեան յուղարկելի վաճառաց ։

'Ի ձեռն այսր դաշնագրութեան կարէ ոք լինել ապահովագիր մթերից այլոց, կարէ և զիւր մթերսն ապահովագրել տալ այլում . միայն թէ այսպիսի դաշնագրութիւնք պարտին լինել 'ի ձեռն հրապարակական Միջնորդի (2), որ 'ի սոյն պէտս կարգեալ իցէ և ծանուցեալ 'ի հաւանութենէ հասարակաց . զի նորա է անկ գրութիւն պայմանաց՝ ապահովութեան, որով դաշնագրութիւնն լինի հաստատուն և ընդունելի ։ Յայսմ դաշնագրութեան փոխարինութիւնն որ լինի առ խոստումն ապահովագրին՝ կոչի Վարձք (3) . զոր սովորութիւն է տալ 'ի ձեռս միջնորդին . յորմէ առնու յետոյ ապահովագիրն ։ Իսկ հատուցումն վնասուց՝ զոր ապահովացուցիչն պարտի առնել 'ի վտանգս կորստեան մթերից, կոչի Տուգանք (4) . զոր նա ինքն ապահովագիրն ունի անձամբ վճարել 'ի ձեռս այնր, զորոյ զմթերսն ապահովագրեալ իցէ . և այդ հատուցումն սովորաբար լինի յետ վեց ամսոց զկնի փորձանաց ։ 'Ի դաշնագրութեանս Միջնորդն ևս ունի զիւր վարձս աշխատութեան . զոր Հաս (5) անուանեմք, և է 40, մանրափող՝ առ հարիւր դահեկան, զոր ապահովագիրն պարտի տալ նմա ։

Դաշնագրութիւն ապահովագրութեան կարէ լինել անխտիր 'ի վերայ ներքին և իսկական արժէից յուղարկելի վաճառացն, և կամ 'ի վերայ զինչ և իցէ գնոյ, զոր կամիցի վաճառատէրն առաջի առնել ։ Եթէ աճեցուսցէ զգինն, առաւելուն և վարձք ապահովագրին . իսկ եթէ պակասեցուսցէ, 'ի կորնչել մթերիցն՝ պակաս առնու և զարժէսն ։ Ընդ այսոսիկ պարտ է գիտել և զայս, որ է մի 'ի գլխաւոր պայմանաց ապահովագրութեան, զի վարձք ապահովագրին վճարելի են անպատճառ, թէև կորիցեն յուղարկեալ մթերքն ։ Օրինակ՝ եդեալ թէ ետուր ապահովագրել զվաճառամթերս ինչ 'ի գին 1000, դահեկանաց՝ խոստանալով վարձս երկու դահեկան առ հարիւր ։ Եթէ յուղարկեալդ հասցէ անվնաս յիւր տեղի, ապահովագիրն առնու 'ի քէն զիւր վարձս 20, դահեկանաց ըստ դաշնագրութեանն . իսկ եթէ վտանգեալ կորիցեն մթերքն 'ի ճանապարհի, նոյնպէս առնու նա զիւր վարձսն 20, դահեկանաց, բայց պարտական է հատուցանել քեզ զգինս մթերիցն՝ 1000, դահեկան . զոր 'ի վճարելն՝ այնուհետև ինքն լինի տէր վտանգաւորեալ վաճառամթերիցն, զորս թէ կարասցէ զերծուցանել, իւր լինի ամենայն ։

Ծն. (1) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ։ Իտ. Sicurtà . Սիգուրթա . զոր նախնիք կոչէին Polizza di Sicurtà . այն է խոստումն ապահովութեան . զի բառդ փօլիցցա ծագի 'ի լատինական բառէ անտի Pollicitatio . փօլլիչիթածիօ, որ է խոստումն, ըստ որում և ապահովագրութիւնն է դաշնագրութիւն ինչ եղեալ 'ի ձեռն խոստմանութեան ։ Դաշնագիրն խոստման, որ ստանձնէ զապահովութիւն վաճառաց, առ Իտալացիս կոչի Assicuratore . Ասիգուրաթօրէ . որ է Ապահովիչ կամ Ապահովագիր ։

(2) ՄԻՋՆՈՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ։ Իտ. Sensale Publico . Սէնսալէ փուպլիգօ ։ Թճ. Թէլլալ ։

(3) ՎԱՐՁՔ ։ Իտ. Premio . Փրէմիօ ։ Թճ. Հագ ։

(4) ՏՈՒԳԱՆՔ ։ Իտ. Danno . Տաննօ ։ Թճ. Ճիւգամ ։

(5) ՀԱՍ ։ Իտ. Provvisione . Փռօվվիզիօնէ . զորմէ տես զկնի 'ի թիւն (մժղ) ։

Յետ ծանուցանելոյ փոքր 'ի շատէ զնախակարգեալ տեղեկութիւնսդ յուսումն նորավարժից, սկիզբն արասցուք յայտ առնել, թէ 'ի կամիլ ուրուք ապահովագրել տալ այլում զմթերս իւր՝ կամ զբարեկամի ուրուք, զիարդ ունիցի յիշատակագրել 'ի հաշուեմատենի: Նոյնպէս և ապահովագիրն՝ որ վարէ զհաշուեմատեան, որով օրինակաւ նշանակելոց իցէ զապահովագրեալ մթերսն:

ժդ. Դնիցուք թէ 'ի ձեռն Սմբատայ Միջնորդի ետուր ապահովագրել զչորս ծրարս չուխայից յուղարկելիս յԱղէքսանդրիա: Արժէք չորեցունց ծրարիցն գոլով 10000, դահեկան, խոստացար վճարել վարձ՝ երկու առ հարիւր. որոց բոլորագումարն լինի դահեկան, 200: Զայդ 200, ՊԸ ունիս նշանակել 'ի պարտիս Մթերից Չուխային, և 'ի պահանջս Սմբատայ, պարտատէր առնելով զնա ինքն զՍմբատ (ծդ. 4):

ժե. Հնար է թէ ոք յուսով առաւելագոյն օգտի՝ զյուղարկելի մթերսն ոչ տացէ ապահովագրել 'ի նմին քաղաքի՝ յորում բնակիցի. այլ յանձնեսցէ ումեք բարեկամի իւրում բնակելոյ յայլում քաղաքի, զի անդ ապահովագրել տացէ զյուղարկելի վաճառամթերսն. խոստանալով նմին և զմասն ինչ 'ի հարիւրոյ վասն աշխատութեան նորա: Յայսպիսի դիպուածս յետ ընդունելոյ զպատասխանի 'ի բարեկամէն, և իմանալոյ՝ թէ կատարեալ իցեն խնդիրք իւր, պարտ է նշանակել 'ի հաշուեմատենին ոչ միայն զվարձս ապահովագրութեան, այլև զխոստացեալ հասն՝ որ անկանի իւրում բարեկամին. պարտապան առնելով զյուղարկելի մթերսն. և պարտատէր զբարեկամն՝ որում յանձնեալ իցէ զայն աշխատութիւն:

ժզ. Եթէ դիպեսցին փորձանք և կորուստ ապահովագրեալ մթերիցն, հարկ է թողուլ զայն 'ի վերայ ապահովագրին (ժդ). զնա ինքն նշանակելով պարտապան. և զարժէս կորուսեալ մթերիցն՝ որոց եղև ապահովացուցիչ, գրելի է պարտատէր (ծդ. 4):

## Ապահովագրել տալ վաճառամթերս այլոց:

ժէ. Յորժամ ոք 'ի յանձնարարութենէ ապահովագրել տայ զվաճառամթերս ուրուք, զվարձս ապահովագրութեանն ունի նշանակել 'ի պարտիս յանձնողին, և 'ի պահանջս Միջնորդին: Սակայն՝ եթէ յուղարկեալ մթերքն իցեն վաճառելիք ձեռամբ ապահովագրել տուողին, յայնժամ՝ թէպէտ պարտատէր նշանակելի է Միջնորդն. բայց պարտապան լինին նոյն իսկ Մթերքն:

ժը. Յապահովագրութիւնս որք լինին 'ի յանձնարարութենէ այլոց, եթէ յուղարկեալ վաճառամթերքն վտանգեսցին, և ապահովագիրն սնանկացեալ՝ անձեռնհաս լիցի վճարել զտուգանսն, յայտ է թէ վնասն հասանէ այնմ, որոյ յանձնարարութեամբ եղեալ իցէ ապահովագրութիւնն: Օրինակ՝ եդեալ թէ յանձնարարութեամբ բարեկամին քո փառնակայ՝ ապահովագրել ետուր Արշակայ զվաճառամթերս ինչ յուղարկելիս ընդ ծով: Արդ եթէ 'ի ճանապարհի վտանգեսցին մթերքն, որովհետև տուգանքն անկանին 'ի վերայ Արշակայ՝ որ է ապահովագիր մթերիցն, օրէն է նշանակել զայն 'ի պարտիս նորին Արշակայ, և 'ի պահանջս փառնակայ: Բայց քանզի այսպիսի յիշատակագրութիւն 'ի քում հաշուեմատենի սովոր է յայտ առնել, թէ մին 'ի նոցունց պարտապան է քեզ, և միւսն պարտատէր (ծդ. 7), վասն որոյ հարկ է ծանուցանել և զայն, թէ դու չես ձեռնհաս վճարելոյ փառնակայ, եթէ ոչ առնուցուս զայն յԱրշակայ: Արդ 'ի բացայայտել զայս իմաստ, օրէն է 'ի հաշուեմատենիդ կարգել զայլ հաշուեմատն ինչ այսպիսի մակագրութեամբ. ԱՐՇԱԿ ԴԱՇՆԱԿԻՑ [1] ՓԱՌՆԱԿԱՅ. և 'ի պարտիս այսր հաշուեմատին նշանակելի է գումար եղեալ տուգանացն: Նաև 'ի սմանէ պարտ է կարգել և զայլ հաշուեմատն յանուն փառնակայ, այսպէս. ՓԱՌՆԱԿ ՀԱՇԻՒ ՊԱՅՄԱՆԱՒՈՐ [2]. և 'ի պահանջս այսր հաշուեմատին նշանակելի է գումար համդիպեալ վնասուն: Պայմանաւոր հաշիւն՝ որ եդաւ յանուն փառնակայ, յայտ առնէ՝ թէ պահանջք նորա 'ի վտանգի են և երկբայականք: Իսկ նախընթաց հաշուեմատն յանուն Արշակայ *Դաշնակից փառնակայ | ցուցանէ, թէ երկբայական

ծն. (1) ԴԱՇՆԱԿԻՑ. Այսպէս կոչեմք զկցորդութիւն պարտատեառն ընդ պարտապանին. որոյ պարտիք և պահանջք սահմանեալ իցեն ժամանակաւ, քան զոր յառաջ չէ օրէն պահանջել. որպիսի են տուգանք ապահովութեան որ ունի վերջանալ ժամանակ 'ի վճարումն: Իտալացիք զայսպիսի դաշնագիր պայմանս ընդ մէջ երկուց՝ բացայայտեն բառիւս՝ Garantito. Կառանթիթօ, այն է երաշխաւորեալ:

(2) ՀԱՇԻՒ ՊԱՅՄԱՆԱՒՈՐ. զոր իտալացիք կոչեն Conto Sospeso, Գօնթօ Սօսփէզօ. այն է՝ 'ի կախ թողեալ իրր անհաւաստի:

լինել այնր պահանջից յայնժամ 'ի յայտ գայ, յորժամ 'ի լրմանալ պայմանեալ ժամու դաշնագրութեանն անկարացի Արշակ վճարել զտուգանն : Արդ՝ յետ վերջանալոյ ժամանակի եթէ Արշակ վճարեսցէ զտուգանն կորուսեալ մթերից, յայնժամ գումար վճարեալ դրամոցն նշանակելի է 'ի պարտիս Դրամարկեղ, կամ այնր Մթերից, որով վճարեալ իցեն տուգանքն, պարտատէր առնելով զհաշուեմանն մակագրեալ* Արշակ Դաշնակից փոխանակայ | : Իսկ որովհետև հատուցմամբ տուգանացս կենդանացան և երկրայական պահանջք փոխանակայ, նմին իրի նոյն գումար ընկալեալ դրամոց նշանակելի է և 'ի պարտիս այնր հաշուեմանսին մակագրելոյ. * փոխանակ Հաշիւ Պայմանափակ | . պարտատէր առնելով զնոյն ինքն զփոխանակ : Յետոյն յիշատակագրութեամբս առանց ինչ փոփոխութեան հաշուեմանսին փոխանակայ՝ պարզի երկրայութիւնն, և որ անհաւաստին էր՝ լինի հաւաստի : Բայց եղեալ թէ Արշակ վճարեսցէ զմասն ինչ եւեթ այնր տուգանաց, և ոչ զբովանդակն, մարթ է նոյնպէս առնել զնախագրեալ յիշատակագրութիւնն: Իսկ եթէ իսպառ անկարացի վճարել, յայնժամ քանզի պակասի նիւթ յիշատակագրութեան, հարկ է թէ հաշուեմանն * Արշակ Դաշնակից փոխանակայ |, մնասցէ միշտ պարտապան. որպէս և միւս հաշուեմանն * փոխանակ Հաշիւ Պայմանափակ |, լիցի միշտ պարտատէր :

իթ. Եթէ նախայիշատակեալ վաճառամթերքն յուղարկեալք առ քեզ՝ ունէին վաճառիլ ընդ ձեռն քո, յայնժամ զվարձս ապահովագրութեանն օրէն էր նշանակել 'ի պարտիս այնր մթերից ըստ կանխագրելոցս (իէ), և փակել զհաշուեմանն. յայտ առնելով կարճառօտ բանիւս, թէ վտանգաւորեալ մթերիցս կորեան 'ի ծովու : Նոյնպէս և 'ի հաշուեմանն փոխանակայ պարտապան գրելի է նոյն ինքն փոխանակ. պարտատէր առնելով զմթերսն կորուսեալս. որով և փակելի է նոյն հաշուեմանն :

## Ապահովագիր լինել վաճառամթերից այլոց :

իժ. Նախակարգեալ կանոնագրութիւնք՝ նոցա են անկաւորք, որք զվաճառս՝ իւրեանց ապահովագրել տան այլում. իսկ եթէ կամիցի ոք ինքն լինել ապահովագիր մթերից այլոց, յայնժամ պահելի է այս կարգ : Դիցուք թէ 'ի ձեռն Սմբատայ Միջնորդի ետուր ապահովագրութիւն 10, ծրար Ձուխայից, զոր Բաբկէն 'ի Պօլսոյ ունի յուղարկել 'ի Թեսաղոնիկէ : Բոլորական արժէք Ձուխայիցն իցեն 9000, դահեկանք. իսկ դաշնագրութիւն վարձուցն 3, առ %. որոյ բոլորագումարն առնէ 270, դահեկան : Արդ՝ քանզի վարձքս 270, դահեկանաց տուեր են յանձնիլ 'ի ձեռս Միջնորդին (իգ). վասն որոյ 'ի հաշուեմատենիդ զՄիջնորդն Սմբատ ունիս նշանակել պարտապան 270, դահեկանաց. և որովհետև ամենայն պարտապան կցորդակից է ընդ ումեք պարտատեառն. յայսմ գործառնութեան ածեալ զմիտ՝ թէ պատճառ ապահովագիր լինելոյդ է շահն, որով կամիս առաւելուլ զգումար դրամագլխոյդ. ուստի և Դրամագլուխդ ունի լինել պարտատէր : Սորին սակս օրէն է 'ի հաշուեմատենիդ կարգել զառանձին հաշուեմանն ինչ մակագրութեամբս, ՀԱՇԻՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆՑ. որ է ասել, հատուած ինչ հաշուի դրամագլխոյ, որ 'ի պատճառս ապահովելոյ զմթերս այլոց՝ կարէ աճիլ և կամ նուազել. և զայդ հաշուեմանն օրէն է առնել պարտատէր :

մժա. Ընդունեցաք վերագոյնդ (իգ), թէ Միջնորդն ունի զիւր Հասս յապահովագրէն 40, մանրափող առ %, դահեկան. վասն որոյ 'ի նախընթաց դիպուածդ մի համարեսցիս եթէ 270, դահեկանքն 'ի վարձ ապահովագրութեան՝ ամբողջ քո իցեն, զի 'ի նոյն դրամոց ունիս և միջնորդին վճարել 30, դահեկան. զորս պարտ է յայտ առնել 'ի հաշուեմատենիդ, թէ 'ի գումարէ անտի 270, դահեկանաց՝ 30, դահեկանն միջնորդչեայ է Սմբատայ. որ և դիւրաբար յայտնի լինի, եթէ զՀաշիւ Ապահովագրութեանդ նշանակեսցես պարտապան 30, դահեկանաց, պարտատէր առնելով զՍմբատ :

մժբ. Եթէ բարեկամ ոք յանձնեսցէ քեզ ապահովագրել տալ զիւր յուղարկելի մթերսն, և դու ինքն կամեսցիս լինել ապահովագիր այնմ, յայնժամ սակս վարձուց ապահովագրութեանն օրէն է զբարեկամդ նշանակել պարտապան, և զՀաշիւ Ապահովագրութեանդ պարտատէր : Սակայն եթէ ապահովագրեալ մթերքն ունիցին ժամանել առ քեզ, և ընդ քո ձեռն վաճառիլ, յայնժամ օրէն է զնոյն մթերսն գրել պարտապան վարձուց ապահովագրութեանն. պարտատէր առնելով զՀաշիւդ Ապահովագրութեան :

մժգ. Մարթ է ևս հանդիպել, զի զապահովագրելի վաճառամթերս ուրուք ըստ մասին դու ինքն ապահովագրեսցես, և ըստ մասին այլում տացես ապահովագրել : Յայն դիպուած փոխա-

նակ կրկին պարտիս նշանակելոյ 'ի վերայ յանձնողին, և զերկուս պարտատեարս առնելոյ՝ կարես միով յիշատակագրութեամբ զյանձնողն նշանակել պարտական ամբողջ գումարի վարձագրամացն, պարտատէր առնելով զՀաշիւ Ապահովագրութեան. և յետոյ զնոյն հաշուեմասն ապահովագրութեան նշանակել պարտական վասն այնր մասին, զոր այլում տուեալ ես ապահովագրել. պարտատէր առնելով զՄիջնորդն, 'ի ձեռն որոյ լեալ իցէ ապահովագրութիւնն։ Այս շաւիղ դիւրին և համառօտ՝ սովորական է առ վաճառականս։

մծդ. Եթէ վտանգեսցին վաճառամթերքն՝ որոց ապահովագիր եղեալ իցես դու, օրէն է վասն գնոյ կորուսեալ մթերիցն պարտական նշանակել զՀաշիւ Ապահովագրութեան, պարտատէր առնելով զյուղարկուն վաճառամթերից։

մծե. Եթէ նաւն համգերձ ապահովագրեալ վաճառաբեռամբք վտանգեալ իցէ յայնպիսի տեղւոջ, ուր հնարաւոր է զերծուցանել զմթերսն. յայնժամ պարտ է 'ի հաշուեմատենին կարգել զառանձին հաշուեմասն ինչ այսպիսի մակագրութեամբ. ՀԱՇԻՒ ԾՈՎԱԶԵՐԾ ՄԹԵՐԻՑ. և 'ի պարտիս այսր հաշուեմասին նշանակելի են այն ամենայն ծախք, որք լինին 'ի պատճառս զերծուցանելոյ զվաճառամթերսն. պարտատէր առնելով զԴրամարկղն, յորմէ ելանեն դրամք ծախուցն (ծզ. 4)։ Յետոյ 'ի վաճառելդ հետզհետէ զզերծուցեալ մթերսն, և 'ի հաւաքել զդրամսն, պարտական նշանակելի է Դրամարկղդ՝ կամ այն մթերք, ընդ որոց փոխանակեալ իցես զզերծուցեալսն, պարտատէր առնելով զնոյն իսկ զՀաշիւ ծովազերծ մթերից։ Իսկ 'ի կատարել վաճառման ամենայնի, պարտ է փակել զհաշուեմասն զայն։ Օրինակի վասն՝ դիցուք թէ պարտիք այնր հաշուեմասին ծովազերծ մթերից ժամանեն 'ի գումար 2800, դահեկանաց. իսկ պահանջքն 9800, դահեկանաց. արդ՝ 'ի հաւասարել զգումարս երկոցունց ընդ միմեանս, հարկ է յաւելուլ 'ի պարտիս նորա 7000, դահեկանս. որք են տուգանքն՝ զորս կրեալ ես յապահովագրեալ մթերից անտի։ Այժմ տուգանաց 7000, դահեկանին՝ պարտատէր նշանակելի է Հաշիւդ Ապահովագրութեան։

## Յաղագս Հասից։

մծզ. Սովորութիւն հասարակաց է 'ի տուրևառս, զի թէ ոք 'ի յանձնարարութենէ այլոյ ուրուք ձեռնամուխ լինիցի յաշխատութիւն գործոց ինչ տուրևառութեան, իբր միջնորդ կամ սակաւոր, իբր գործակալ, իբր կատարիչ յանձնարարութեանց, չափին նմա փոխարէնք 'ի վարձ աշխատութեանն, զոր իտալացիք փռօվիզիօնէ անուանեն, և մեք Հաս կոչեմք. այն է՝ բաժին և մասն ինչ, որ հասանէ աշխատողին կամ լինի նմա անկ 'ի պատճառս ծառայութեան։ Ի սովորութենէ վաճառականաց՝ արժանաւոր հասից համարին ծառայութիւնքս. եթէ ոք վաճառամթերս ինչ գնոյ առնուցու վասն այլոյ ուրուք՝ կամ վաճառեսցէ. կամ 'ի յանձնարարութենէ այլոյ՝ մթերս յուղարկեսցէ ուրեք, և կամ տացէ ապահովել զմթերսն. կամ 'ի ձեռն ուրուք քարշեսցէ կամ յղեսցէ զփոխանակագիրս։ Տուչութիւնք Հասից մարթին լինել դաշնագրութեամբ 'ի վերայ թուոյ վաճառաբեռանց, կամ դրամադաշամբք. խոստանալով դրամս ինչ առ բեռնագլուխ, և մասն մի 'ի հարիւրոց. զորս օրէն է ուսանել 'ի սովորութենէ և յօրինաց իւրաքանչիւր քաղաքի և գաւառի։

մծէ. Ի ձեռնամուխ լինել ուրուք յայնպիսի գործառնութիւնս, յորոց քաղեսցէ իւր զօգուտս Հասից, հարկ է նմա 'ի հաշուեմատենի իւրում կարգել զառանձին հաշուեմասն՝ այսպիսի մակագրութեամբ. ՀԱՇԻՒ ՀԱՍԻՑ. որ համարի դրամագլուխ ինչ աճելի կամ նուազելի 'ի ձեռն հասից. և զայն հաշուեմասն օրէն է առնել պարտատէր դրամոցն, զորս շահի ոք 'ի ձեռն ծառայութեան՝ որ 'ի յանձնարարութենէ այլոց. պարտական առնելով զյանձնողսն այնր ծառայութեան. և կամ զմթերսն, եթէ իցեն վաճառելիք ձեռամբ իւրով. ըստ որում ունիս տեսանել զկնի (մլզ)։

մծը. Եթէ ոք 'ի բարեկամացդ յանձնարարութեամբ քով վաճառեսցէ զմթերս ինչ, զոր յուղարկեալ իցես առ նա, 'ի հաշուեմատենիդ չէ օրէն նշանակել ինչ վասն Հասից, զի այսպիսի ծախք սովորաբար բովանդակին ընդ այլ ծախս եղեալս սակս մթերիցն յուղարկելոց 'ի վաճառումն (ճղզ)։ Նոյնպէս և յայլ դիպուածս, յորս պատահեսցի վճարել հաս վասն մթերից ինչ, չէ օրէն պարտական գրել զհաշուեմասն Հասից, այլ զայն մթերսն, որոց վասն տուեալ իցես զհաս. պարտատէր առնելով զբարեկամդ, որ կատարեալ իցէ զայն ծառայութիւն։

## Յաղագս Ծախուց (1) Տուրևառութեան ։

ճժը. Ի տուրևառս մանրամասն ծախք, որք օրըստօրէ առնեն դրամովք սովոր են լինել 'ի պէտս դարբնի, հիւսան, կշռոյ, բեռնակրաց, նաւակի, թղթաբերաց և այլոց սոյին նմանեաց, ամենքին առհասարակ ունին վերագրել գնոյ վաճառամթերիցն, որոց վասն եղեալ իցեն ։ Զօրօրինակ՝ եդեալ թէ 'ի գնելն կամ 'ի վաճառել զբեռինս ինչ դահլէի, եռուր բեռնակրաց դահեկանս 80. 'ի չնուութիւն արկեղացն՝ դահեկանս 40. 'ի կշռել զբեռինսն՝ դահեկանս 20 ։ Արդ՝ զգումար 140, դահեկան ծախուցս հարկ է յաւելուլ 'ի վերայ նախկին գնոյ դահլէին, և զնոյն մթերմն նշանակել պարտապան դրամոցն՝ զորս ծախեալ ես 'ի պատճառս նոցին մթերից, պարտատէր առնելով զԴրամարկղդ, յորմէ ելեալ են դրամք ծախուցդ (ծր. 4) ։ Զայդ կանոն պարտ է և ս պահել, յորժամ 'ի հեռաւորնակ բարեկամացդ ոք առնիցէ քեզ յանձնարարութիւն 'ի գնել, կամ 'ի վաճառել զմթերս ինչ, (միայն թէ յանձնեալ մթերքն չիցեն յուղարկելիք այլուր), զի յայնժամ սակս ծախուցն եղելոց 'ի պատճառս այնր մթերից՝ Դրամարկղն գրելի է պարտատէր, և բարեկամդ պարտապան. զի չէ հարկ կարգել զառանձին հաշուեմասն վասն այնպիսի յուղարկելի մթերից ։

ճժթ. Մանր ծախք տուրևառութեան խնդրեն զորոշ և զմանրամասն յիշատակագրութիւնս, բայց քանզի դժուարին է վաճառատեան միտ դնել ամենայն մանր դիպուածոց, որք սակս պատահեն, վասն որոյ 'ի թեթևացուցանել զայսպիսի աշխատութիւնս՝ սովորութիւն է վաճառականաց յանձնել միում ումեք 'ի հաւատարիմ գործակալացն զհոգս այսպիսի ծախուց. տալով 'ի ձեռս նորա գումարս քանի մի հարիւր՝ կամ հազար դահեկանաց, զորս վարեսցէ 'ի պէտս առօրեայ ծախուց. և միանգամ յեօթնեկի՝ կամ յամսոյ ամիս տացէ զհաշիւ ծախուցն եղելոց ընդ իւր ձեռն ։ Արդ՝ 'ի տալ անդ զդրամն 'ի ձեռս գործակալին, պարտապան նշանակելի է նոյն ինքն գործակալն, և պարտատէր Դրամարկղն (ծր. 4). յետոյ պարտ է 'ի Հաշուեմատենին կարգել զառանձին հաշուեմասն ինչ այսպիսի վերնագրով, ԾԱԽՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆ. և 'ի պարտիս այսր հաշուեմասին նշանակելի են հաշիւք ծախուցն, զորս առաջի առնէ գործակալն. պարտատէր գրելով զնոյն հաշուետու գործակալ (ծր. 4) ։ 'Ի ձեռն այսոցիկ յիշատակագրութեանց ամենայն ծանրութիւնք թէպէտև բարդին 'ի վերայ ծախուց Տուրևառութեան. սակայն յետոյ 'ի կամիլն զատանել զնոսին, և զծախս իւրաքանչիւր վաճառամթերիցն՝ որոց վասն եղեալ իցեն՝ յաւելուլ 'ի նոսա, չէ պարտ 'ի Հաշուեմատենին փակել զհաշուեմասունս զինչ և իցէ մթերից՝ մինչև նոյն մթերք գրեսցին պարտապանք ծախուցն եղելոց 'ի պատճառս նոցա. և յայնժամ հաշիւ ծախուց Տուրևառութեանն նշանակելի է պարտատէր, որով թեթևանան ծախք և ծանրութիւնք այսր հաշուեմասին ։

ճի. Եթէ լինիցին ծախք 'ի պատճառս յուղարկելի վաճառամթերից բարեկամի ուրուք, պարտ է զեղեալ ծախսն նշանակել 'ի պարտիս բարեկամիդ, և 'ի պահանջս հաշուեմասին Ծախուց Տուրևառութեան. ըստ ասացելոցս վերագոյնդ (ճժը) ։ Նոյնպէս օրէն է պարտատէր առնել զհաշուեմասն Ծախուց Տուրևառութեան, եթէ 'ի հաշիւ այլոց ընդունիցի ոք կամ առաքեսցէ զծրարս նամակաց. պարտապան գրելով զայն անձինս, որոց վասն եղեալ իցեն ծախքն ։ Ընդ հակառակս այսմ՝ եթէ այլ ոք ծանուցէ քեզ զպարտիսդ, զոր ունիս նմա 'ի պատճառս ծախուցն, զոր արարեալ իցէ վասն քո. յայնժամ օրէն է 'ի հաշուեմատենիդ պարտատէր նշանակել զբարեկամդ, և պարտապան զհաշուեմասնդ Ծախուց Տուրևառութեան ։

ճիա. Եթէ ոք 'ի բարեկամացդ վաճառամթերս ինչ առաքեսցէ առ քեզ 'ի վաճառել յիւր հաշիւ, կամ յուղարկել այլուր, և մթերքն առ ժամանակ ինչ կացցեն մնասցեն 'ի մթերանոցդ, սովորութիւն հասարակաց ուսուցանէ դնել ծախս ինչ 'ի վերայ այնր մթերից առ 'ի վարձ մթերանոցիդ. վասն որոյ յայսպիսի դիպուածս պարտատէր նշանակելի է Հաշիւ Ծախուց Տուրևառութեան. պարտապան գրելով վարձուց մթերանոցիդ զնոյն մթերսն, եթէ վաճառելիք իցեն ընդ քո ձեռն. ապա թէ լոկ յուղարկելիք այլուր, յայնժամ զբարեկամդ կամ զառաքող մթերիցն գրեսջիր պարտապան ։

(1) ԾԱԽՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆ ։ Իտ. Spese del Negozio. Ըսփէզէ տել Նէկօցիօ ։ Թճկ. Ալըշ վէրիշ Հարճը. կամ Տիւքեան հարճը ։ Այսպիսի ծախք որովհետև անպակաս են յամենայն տուրևառիկ գործողութիւնս, հարկ է վաճառականին ունել և զառանձին մատեան վասն սոյին իրաց, ըստ որում հանդերձեալ եմք յիշեցուցանել 'ի կարգս Օժանդակագրոց՝ թիւ (յիէ) ։

միգ. Յուղարկել քո մթերս ինչ առ այլ ոք, զի վաճառեսցէ կամ առաքեսցէ այլուր. և 'ի կատարել նորա զայն յանձնարարութիւն, եթէ խնդրեսցէ 'ի քէն վարձս մթերանոցի, և կամ զայլ ծախս. օրէն է քեզ 'ի հաշուեմատենիդ պարտապան նշանակել զայն մթերսն, որոց վասն եղեալ իցեն ծախքն. պարտատէր առնելով զբարեկամդ, որ վասն քո արարեալ իցէ զայնոսիկ ծախս։

միդ. Ծախք՝ որք լինին յաղագս Մաքսի և Միջնորդի, որովհետև սովոր են երբեմն փութով և երբեմն անագան վճարիլ, առ խորշելոյ 'ի շփոթութենէ՝ չէ օրէն նշանակել զայնոսիկ 'ի հաշուեմատեան Ծախուց Տուրևառութեան. այլ յիշատակագրելի են առ իւրաքանչիւր մթերս, որոց վասն վճարեալք իցեն. պարտապան առնելով զնոյն մթերսն, և պարտատէր զԳրամարկղն, եթէ փութով իցեն վճարեալք. ապա թէ ոչ՝ զՄաքսատունն և զՄիջնորդն։

## Յաղագս Տնական Ծախուց։

միե. Հաշուեմատեան վաճառականին ունի բովանդակել յինքն ոչ միայն զծախս տուրևառութեանն, այլև զհաշիւ առտնին ծախուց, որով 'ի յայտ գայ՝ թէ զինչ շահք կամ վնասք լինին 'ի տուրևառութենէն, և որչափ ինչ ծախին 'ի պէտս ապրուստի տանն։ Բայց քանզի առօրեայ ծախուց մանրամասն յիշատակագրութիւնք դժուարին են, և ծանրաբեռն 'ի նշանակել մի ըստ միոջէ 'ի հաշուեմատենին. վասն որոյ անկ է վաճառականին՝ յանձնել 'ի ձեռս միումն 'ի հաւատարիմ ծառայից զգումար ինչ դրամոց, զոր վարեսցէ 'ի պէտս ծախուց տանն, և յամսոյ ամիս առեալ 'ի նմանէ զհաշիւ եղեալ ծախուցն՝ անցուսցէ 'ի հաշուեմատեանն։ Արդ՝ դրամքն տուեալք 'ի ձեռս ծառային՝ նշանակելի են 'ի պարտիս նորին ծառայի, և 'ի պահանջս Գրամարկեղ՝ ուստի սովոր են ելանել այն դրամք (ծդ. 4)։ Ապա յընդունիլ անդ զհաշիւ ծախուցն 'ի ծառայէն, կարգելի է զառանձին հաշուեմատն ինչ այսու վերնագրով, ՏՆԱԿԱՆ ԾԱԽՔ. և 'ի պարտիս այսր հաշուեմատին նշանակելի են գումարք ծախուցն, պարտատէր առնելով զծառայն, ընդ որոյ ձեռն եղեալ իցեն ծախքն։

միզ. Եթէ տուն բնակութեան վաճառականին վարձուք իցէ, և վարձքն պայմանեալ ժամանակաւ միօրինակ հատուցանելի, մարթ է ծառային վճարել և զայն, նշանակելով ընդ այլ ծախս տնական պիտոյից. (ըստ որում նոյն է անկ վճարելն զվարձս խանութի և մթերանոցի. միը)։ Իսկ եթէ տէր բնակարանին ունիցի սովորութիւն ապաժամ պահանջելոյ զդրամս վարձուց տանն, յայնժամ օրէն է կարգել զառանձին հաշուեմատն ինչ, յորում նշանակեսցին տուեալքն հետզհետէ, և որով 'ի յայտ գայցեն պարտիք կամ պահանջք վարձուց տանն, յետոյ 'ի գլուխ տարւոյն հաշիւ արարեալ, եթէ տեսցէ զպարտիսն հաւասարեալ պահանջից, պարտապան նշանակելի է Հաշիւն Տնական Ծախուց. պարտատէր առնելով զտէր բնակարանին։

միէ. Ի նոյն հաշուեմատն առտնին ծախուց նշանակելի են և այն ամենայն դրամք՝ զորս վաճառատէրն առնու 'ի դրամարկեղէ, և ըստ կամս իւր ծախէ. որոց վասն Հաշիւ Տնական Ծախուց գրելի է պարտապան, և Գրամարկղն՝ յորմէ ելանեն այն դրամք, պարտատէր։

## Յաղագս Թոշակաւոր (1) Ծառայից։

միը. Սպասաւորք կամ պաշտօնեայք թոշակընկալ կոչին, յորժամ տարեկան վարձուք ծառայեն ումեք 'ի գործս տուրևառութեան և 'ի սպասաւորութիւնս տան։ Վասն այսպիսի ծառայից օրէն է 'ի հաշուեմատեանս կարգել զառանձին հաշուեմատեանս ընդ անուամբ իւրաքանչիւրոցն, յորս որոշակի նշանակեսցին պարտիք և պահանջք նոցա։ Եթէ ումեք 'ի ծառայից տացես դրամս, օրէն է նշանակել զայն 'ի պարտիս այնր ծառային, և 'ի պահանջս Գրամարկեղ, յորմէ ելին դրամքն. և քանզի ծառայն ընդունող դրամոց՝ ըստ յառաջել ամսոյն լինի պարտատէր վասն վարձուց աշխատութեանն, նմին իրի կարևոր է 'ի գլուխ տարւոյն հանդէպ պահանջից նորա նշանակել պարտապան զհաշուեմատեանս Տուրևառութեան որպէս և զՏնական ծախուց, որոց իւրաքանչիւրն համարին դրամագլուխք, և 'ի նոյնանէ ունին ելանել այն ծախք (մի.

միը. (1) ԹՈՇԱԿԱՒՈՐ կամ Թոշակընկալ։ Իտ. Salariato. Սալարիաթօ։ Վիճակ ծառայութեանս ազնուագոյն է քան զվարձկանաց, որք օրըստօրէ սպասեն առնուլ զվարձս աշխատութեանց։

ճիէ) ։ Այսպիսի ուշադրութեան պէտք են 'ի նշանակելն, զի վարձք պաշտօնէից տուրևառութեանն գրեսցին 'ի հաշուեման ծախուց նորա, որպէս և ծառայից տանն՝ 'ի հաշուեման Տնական ծախուց ։

ճիթ. Օրինակ՝ դիցուք թէ յամին 1820. յառաջին աւուր Յունիսի՝ վարձու կալար զՄաժակ 'ի ծառայութիւն տուրևառութեանդ, դաշնադրեալ ընդ նմա 300, դահեկանս յամսոյ ամիս ։ Նոյնպէս և յառաջին աւուր Հոկտեմբերի վարձեցեր զՄեղրիկ 'ի սպասաւորութիւն տանդ, դաշնադրութեամբ 100, դահեկանաց յամսոյ ամիս ։ Արդ՝ զտուեալս երկոցունց ծառայելոց ամիս յամսոյ ունիս նշանակել 'ի պարտիս նոցա, և 'ի պահանջս դրամարկեղ, ըստ որում ուսանեցաք կանխաւ. ապա 'ի լրանալ ամին, և 'ի ժամանել ցյետին օր Դեկտեմբեր ամսոյ նորին տարւոյ, օրէն է նշանակել զՄաժակ պարտատէր 1800, դահեկանաց վասն վեցամսեայ աշխատութեան նորա. պարտական առնելով նմին զհաշուեման ծախուց Տուրևառութեան ։ Նոյնպէս և զՄեղրիկն վասն երեքամսեայ վարձուց աշխատութեանն նշանակել պարտատէր 300, դահեկանաց. պարտական գրելով զհաշուեման Տնական ծախուց ։ Իսկ այսուհետև 'ի յաջորդ տարւոյն, զի եթէ զամն ողջոյն ծառայեսցեն, 'ի Դեկտ. 31. զՄաժակ նշանակեսջիր պարտատէր 3600, դահեկանաց վասն երկոտասանամսեայ վարձուց աշխատութեանն. պարտական առնելով զհաշուեման Ծախուց Տուրևառութեան ։ Նոյնպէս և զՄեղրիկն պարտատէր 1200, դահեկանաց վասն երկոտասանամսեայ վարձուց, պարտական գրելով նմին զհաշիւ Տնական ծախուց ։

## Օրինակ Պարզ Միաձանանց յերկիր հեռաւոր և ընդ յետն օտարի ։

ճլ. Ի տուրևառս սովորական է վաճառականաց յուղարկել մթերս յերկիր բացական՝ յանձնելով միումանց 'ի վաճառողին ։ Արդ այսպիսի վաճառամթերք սովոր են ըստ դէպս իրաց երբեմն վաճառիլ պատրաստական դրամովք, երբեմն փոխանակութեամբ այլոց մթերից. և երբեմն ամսապայման ժամանակաւ 'ի հատուցումն դրամոց ։ Յայսոսիկ դիպուածս վաճառողն մթերից թէ զիարդ ունիցի կարգաւորել զիւր հաշուեմատեան, տեսցուք յառաջիկայդ ։

ճլա. Դիցուք թէ Յուսիկ Զմիւռնացի յուղարկեաց առ քեզ զերկոտասան բեռինս Մետաքսի վաճառել յիւր հաշիւ. և 'ի ժամանել բեռանցն՝ առօրին վաճառեցեր Նորուաղայ պատրաստական դրամովք 150000, դահեկանաց ։ Յայտ է ամենեցուն՝ թէ 'ի վաճառման մթերիցն սովոր են լինել և անխուսափելի ծախք 'ի զանազան պէտս, այն է՝ Ապահովագրութեան, Նաւու, Մաքսի, Միջնորդի, Բեռնակրաց, վարձուց մթերանոցի, և այլն ։ Արդ՝ եթէ զայսոսիկ ծախս առհասարակ խառնեսցես յառանձնական հաշուեմատեն Յուսկան, զոր կանխաւ ունիցիս 'ի հաշուեմատենիդ, կարէն լինել առիթ շփոթութեան այլոց հաշուից նորա. վասն որոյ ընտրելագոյն է զատել 'ի նոցանէ զմթերման մետաքսի, և կարգել վասն նորա զմանաւոր հաշուեման ինչ մակագրութեամբս. ՄԹԵՐՔ ՄԵՏԱՔՍԻ ՅՈՒՍԿԱՆ ԶՄԻՒՌՆԱՑԻՈՅ. յորոյ 'ի պարտին նշանակելի են եղեալ ծախքն. և նախ առաջին օրէն է զնոյն մթերման նշանակել պարտական ծախուց Ապահովագրութեան, Մաքսի, Նաւողէսի, Միջնորդի, Բեռնակրաց, վարձուց մթերանոցի և այլոց. առ իւրաքանչիւր յիշատակագրութեամբ այսոցիկ ծախուց պարտատէր նշանակելով զայն տեղեաց կամ զազգերականս, յորոց վճարեալ իցեն դրամք ծախուցն (ճդ. ճէ. ճժէ. ճժթ) ։ Յետոյ վերստին զնոյն մթերման նշանակեսցես պարտատէր 150000, դահեկանացն, զորս ընկալար 'ի վաճառելդ, և այնմ գումարի դրամոց պարտական գրելի է Դրամարկղն, յորում զետեղեցան ընկալեալ դրամքն (ծդ. 4) ։ Իսկ քանզի վաճառելովդ ողջոյն զՄետաքսն չմնայ այլ 'ի վաճառել, վասն որոյ փակելի է այն նոր հաշուեման, քննելով նախ՝ թէ Մթերքն Մետաքսի Յուսկանն Զմիւռնացւոյ՝ որչափ ինչ պարտիս ունիցին, զոր և հանեալ 'ի պահանջից նորա, զմնացեալն օրէն է դնել 'ի ներքոյ գումարի պարտեացն՝ պարտատէր առնելով զՅուսիկ ։ Օրինակ՝ պահանջք Մետաքսին էին 150000, դահեկանք. իսկ պարտիքն 'ի պատճառս ծախուց, համարեսցուք թէ իցեն 3300, դահեկանք, արդ՝ եթէ զպարտիսն հանցուք 'ի պահանջից, մնան 146700, դահեկանք. զայդ գումար դնելով 'ի ներքոյ գումարի պարտեացն, հաւասարի ընդ պահանջիցն և աւարտի հաշիւն (ճբ) ։ Յետոյ առեալ լոկ զգումարն 146700, դահեկանաց տարջիր յառանձնական հաշուեման Յուսկան, և միով յիշատակագրութեամբ նշանակեսջիր զայն 'ի նմա, որով կատարի հաշիւն առանց ինչ շփոթութեան ։

ճլբ. Նախակարգեալ դիպուածդ յայտ առնէ, թէ յուղարկեալ մթերք Յուսկան վաճառելի էին պատրաստական դրամովք, վասն որոյ և ըստ այնմ կարգաւորեցան 'ի հաշուեմատե-

նին . բայց համարեալ թէ չիցեն դրամովք վաճառելի , այլ փոխանակելի ընդ այլ մթերս . յայնժամ օրէն է պահել զայս կարգ ։

Դնիցուք թէ Սահան յուղարկեաց առ քեզ 'ի Թեսաղոնիկոյ զքսան Հիւրձս Բամբակի փոխանակել զայն ընդ այլ մթերից . և դու ինքն փոխանակեցեր զնոսին ընդ հնգետասան ծրարի Զուխայից , որոց բոլորագումար արժէք ժամանեն 'ի դրամս 18800 , դահեկանաց ։ Արդ՝ 'ի փոխանակել անդ զբամբակամթերսն , օրէն է 'ի հաշուեմատենիդ կարգել զառանձին հաշուեմանս ինչ մակագրութեամբս . ՄԹԵՐՔ ԲԱՄԲԱԿԻ ՎԱՃԱՌԱՑ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՈՑ ( մէտ ) . և 'ի պարտիս այնր հաշուեմանսին նշանակելի են ծախքն եղեալք 'ի պատճառս այնր մթերից . պարտատէր առնելով զայն աղբերակունս , յորոց ելեալ իցեն ծախեալ դրամքն ։ Յետոյ կարգելի է և այլ նոր հաշուեմանս այսպիսի մակագրութեամբ . ՄԹԵՐՔ ԶՈՒԽԱՅԻ ՎԱՃԱՌԱՑ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՈՑ , և 'ի պարտիս այսր հաշուեմանսին նշանակելի են գումարք դրամոց 18800 , դահեկանաց՝ պարտատէր առնելով զնախընթաց հաշուեմանս բամբակամթերից ( ծդ . 4 ) ։ Յետ նշանակելոյ զայս՝ օրէն է փակել զհաշուեմանս Մթերից Բամբակին , համասարելով զպարտիսն ընդ պահանջից նորա , և զնոյն հաշուեմանս պարտապան գրել վասն յաւելեալ դրամոցն՝ պարտատէր առնելով զՍահան Թեսաղոնիկեցի՝ յիւրում առանձնական հաշուի , ըստ ասացելոցս վերագոյնդ . ( մէ ) ։ Իսկ հաշուեմանս Մթերից Զուխային ունի մնալ որպէս և էրն մինչև վաճառեսցի կամ յուղարկեսցի առ Սահան 'ի Թեսաղոնիկէ ։ Եթէ 'ի բերել առթին պատրաստական դրամովք վաճառեսցին նոյն չուխայք , պարտ է պահել զայն կանոնն , զորս աւանդեցաք վերագոյնդ ( մէտ ) վասն ծախուց և վաճառմանն , որպէս և 'ի փակել զհաշուեմանս ։ Իսկ եթէ յուղարկեսցին առ Սահան 'ի Թեսաղոնիկէ , օրէն է յայնժամ զՄթերս Զուխային պարտապան առնել եղեալ ծախուցն . և պարտատէր զայնոսիկ , յորոց ելեալ իցեն դրամք ծախուց . յետ որոյ 'ի կամիլն փակել և զայն հաշուեմանս , պարտ է զՍահան նշանակել պարտապան ամբողջ գումարի արժէից չուխային , պարտատէր առնելով զնոյն իսկ զՄթերսն Զուխային ։

մէդ . Արժան է և՛ս հանդիպիլ, զի առ քեզ յուղարկեալ մթերքն վաճառեսցին ումեք ամսապայման ժամանակաւ 'ի վճարումն գնոց ։ Այսպիսի դիպուածս թէ զինչ յիշատակագրութիւնք նշանակելի իցեն , և զիարդ կարգաւորելիք 'ի հաշուեմատենին՝ ասասցուք մանրամասն դիպուածով 'ի վարժութիւն համբակաց ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

12 . Մարտի . 1820 ։

Ա . Սաղարշակ գրեաց առ իս 'ի Զմիւռնիոյ ապահովել զհարիւր Հիւրձ բեռինս Բամբակի արժէիւք 80000 , դահեկանաց , զորս յուղարկէ առ իս 'ի ձեռն Ֆուաթի նաւապետին , զի վաճառեսցից յիւր հաշիւ ։ Զապահովագրութիւն Բամբակամթերիցս ետու առնել ձեռամբ Սմբատայ Միջնորդի , խոստանալով վարձս 2 առ % . որոց բոլորագումարն լինի 1600 , դհ ։

20 . Մայիսի ։

Բ . Վճարեցի 1217 , դահեկանս 'ի մաքս 100 , Հիւրձից Բամբակի, դհ . Ց . Փ . Ֆծ . 1—100 . զորս Սաղարշակ առաքեաց առ իս 'ի Զմիւռնիոյ վաճառել յիւր հաշիւ ։

18 . Հոկտեմբերի ։

Գ . Վաճառեցի Բողկայ զհարիւր Հիւրձսն Բամբակին Սաղարշակայ Զմիւռնացւոյ , որոց բոլորագումար արժէիցն եղեն 92400 , դահեկանք . զորս ունի վճարել յետ ամսոց վեցից ։

25 . Նորին ։

Դ . Վճարեցի Մարինոսին՝ 924, դահեկանս՝ միջնորդչեայ 'ի վաճառման բամբակամթերիցն ։

## ԱՌ ԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

26. Հոկտեմբերի։

Ե. Ծախք՝ որք եղեն յաղագս Բամբակամթերից Վաղարշակայ։

| | |
|---|---|
| Նաւողչեայ փուսթի նաւապետին . . . . . . | 2800 : — |
| Վասն քառասնօրեայ Արգելանին (1) . . . . . | 882 : — |
| Վասն կշռելոյ . . . . . . . . . . . . . . | 150 : — |
| Վասն բեռնակրաց . . . . . . . . . . . . | 28 : — |
| Վարձք մթերանոցի . . . . . . . . . . . . | 400 : — |
| | 4260 : — |

27. Նորին։

Զ. Իրաւունք Հասից՝ 2 առ %, 'ի վաճառման Բամբակամթերից Վաղարշակայ ֆռ̃, 1848։

(1)

## ՕՐՀԱՇԻՒ

1820. 'Ի Վենետիկ։

| | 12. Մարտի։ | ֆռ̃ | ստ̃ |
|---|---|---|---|
| —1 / 2— | Բամբակամթերք Վաղարշակայ ‖ Տ. Սմբատ՝ ֆռ̃, 1600, 'ի պատճառս Ապահովագրութեանն որ եղև ձեռամբ նորա՝ վասն 100, Քուրձ Բամբակաբեռանց, զորս Վաղարշակ յուղարկեաց առ իս 'ի Օձմիւռնիոյ ընդ փուսթի նաւապետին։ Արժէք մթերիցս գոլով 80000, դահեկան, վարձք ապահովագրութեանն 2 առ %, բոլորագումարն առնէ. | 1600 | — |
| | 20. Մայիսի։ | | |
| —1 / 3— | Նախագրեալն ‖ Տ. Դրամարկղն՝ ֆռ̃, 1217. Մաքս 100, բամբակաբեռանցն . . . . . . . . . . . . . . . . . . | 1217 | — |
| | 18. Հոկտեմբերի։ | | |
| —4 / 1— | Ասողիկ դաշնակից Վաղարշակայ ‖ Տ. Բամբակամթերս Վաղարշակայ ֆռ̃, 92400. գին 100, քուրձ բամբակաց որք վաճառեցան Ասողկայ, դաշամբ վճարելոյ զայն յետ վեց ամսոց. . . . . . | 92400 | — |
| | 25. Նորին։ | | |
| —1 / 3— | Բամբակամթերք Վաղարշակայ ‖ Տ. Դրամարկղն՝ ֆռ̃, 924. վճարեցաւ Մարինոսին 'ի միջնորդչեայ վաճառման մթերիցն . . . | 924 | — |

Ե. (1) ԱՐԳԵԼԱՆ կամ Արգելանոց, որ է փակարան և տեղի զգուշութեան 'ի պատճառս տարափոխիկ հիւանդութեանց և ժանտախտի։ Զայս զգուշութիւն իտալացիք կոչեն Contumacia, Գօնթումաչիա. այն է՝ խիստ և ամբափակ պահպանութիւն և զգուշաւորութիւն. այլ սովորաբար անուանի Quarantina. Քուարանթինա. որ է՝ քառասնեակ, առեալ զանունն 'ի քառասնօրեայ զգուշութենէն, որ լինի անձանց եկաւորաց՝ որպէս և վաճառաց յուղարկելոց 'ի սահմանաց անտի՝ յորս չիցէ զգուշութիւն ժանտախտի։

Այս տեղի առ Վենետիկեցիս կոչի և Lazzaretto. Լածծարէթթօ. յանուն եկեղեցւոյն՝ որ երբեմն նուիրեալ էր 'ի պատիւ Տիրամօր յիշատակաւ բնակութեանն, զոր կալաւ 'ի Նազարէթ քաղաք. յորմէ զանուն եկեղեցւոյն սեփականեցին ոչ միայն կղզւոյն, այլև այնմ զգուշութեան և արգելանին, որ նախ առաջին որպէս ասի, սկսաւ 'ի Վենետիկ՝ յամի տն̃, 1418. և 'ի նմանէ գաղափարեցան այլ արգելանք Եւրոպիոյ. որք և նովին անուամբ սովորեցան կոչիլ Լածծարէթթօ։

(2)

## ՕՐՀԱՇԻՒ

### 1820. Ի Վենետիկ։

| | | ղշ | փրէ |
|---|---|---|---|
| | 26. Հոկտեմբերի։ | | |
| | Բամբակամթերք Վաղարշակայ ‖ Առ Հաշիւս Յովսէփայ Տուրեւառութեան՝ ղշ, 4260. ըստ առաջիկայ ցուցակիս։ | | |
| | Նաւողչեայ Փուսթի նաւապետին . . . . . ղշ, 2800 ։ — | | |
| —1 | Յախք քառամսօրեայ արգելմանցն . . . . 882 ։ — | | |
| 5— | Վասն կշռելոյ . . . . . . . . . . . 150 ։ — | 4260 | — |
| | Բեռնակրաց . . . . . . . . . . 28 ։ — | | |
| | Վարձք մթերանոցի . . . . . . . . . 400 ։ — | | |
| | 27. Նորին։ | | |
| —1 | Նախագրեալն ‖ Առ Մթերս Հասից՝ ղշ, 1848. վարձ աշխատութեանս 'ի վաճառել զհարիւր քուրձ բամբակաբեռնին . . . . | | |
| 6— | | 1848 | — |

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| 1 | | ՄԹԵՐՔ ԲԱՄԲԱԿԻ ՎԱՂԱՐՇԱԿԱՑ ԶՄԻՒՌՆԱՑԻՈՑ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | | |
| Մարտ. | 12 | Առ Սմիթա՝ ղշ, 1600. վասն ապահովագրութեանն եղելոյ 'ի ձեռն նորա . . . . . . . . . . . . . . | 1 | 2 | 1600 | — |
| Մայիս. | 20 | Առ Դրամարկղն՝ ղշ, 1217. վասն վճարեալ Մաքսի . . | 1 | 3 | 1217 | — |
| Հոկտ". | 25 | Առ Նոյնն՝ ղշ, 924. միջնորդչեայ վճարեալ Մարինոսի . . | 1 | 3 | 924 | — |
| | 26 | Առ Յովսէփ Տուրեւառութեան՝ ղշ, 4260. որպէս յայտ է յօրհաշուին . . . . . . . . . . . . . . | 2 | 5 | 4260 | — |
| | 27 | Առ Հաշիւ Հասից՝ ղշ, 1848, որ է Հաս վաճառմանս . . | 2 | 6 | 1848 | — |
| | 28 | Առ Վաղարշակ Հաշիւ Պայմանափակ՝ ղշ, 92400. առ'ի ընդունիլ . . . . . . . . . . . . . . . | 3 | 8 | 92400 | — |
| | | | | | 102249 | — |

| 2 | ՍՄԲԱՏ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

| 3 | ԴՐԱՄԱՐԿՂ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|---|
| | (Համարեալ թէ ունիցի ղշ) . . . . . . . . . . | — | — | 10000 | — |

1820. Ի Վենետիկ։

28. Հոկտեմբերի։

| | | ֆլ | գշ |
|---|---|---|---|
| —7 / 1— | Վաղարշակ ∥ Առ Ապրանքամթերս իւր ֆլ, 9849. որ է գումար համօրէն ծախուց այնր ամթերից . . . . . . . . . . . . . | 9849 | — |
| —1 / 8— | Ապրանքամթերք Վաղարշակայ ∥ Առ նոյն ինքն Վաղարշակ՝ պայմանափակ հաշուով ֆլ, 92400. զոր յետ վեց ամսոց ունիմ տանուլ յՄոսկվայ. որ է գին 100 քուրձ բամբակաբեռանց վաճառելոց նմին իսկ Մոսկվայ . . . . . . . . . . . . . . . . | 92400 | — |

## ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ֆլ | գշ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | | 1 |
| Հոկտ. | 18 | Յասողկայ դաշնակից եղելոց է Վաղարշակայ՝ ֆլ, 92400. | 1 | 4 | 92400 | — |
| | 28 | Ի Վաղարշակայ՝ ֆլ, 9849. վասն եղեալ ծախուցն. . . | 3 | 7 | 9849 | — |
| | | | | | 102249 | — |

| | | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ֆլ | գշ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | | 2 |
| Մարտ. | 12 | Ի Մթերից Ապրանքին Վաղարշակայ՝ ֆլ, 1600. . . . | 1 | 1 | 1600 | — |

| | | | Օ | Մ | ԳԱՀԱՆՋՔ ֆլ | գշ |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | | 3 |
| Մայիս. | 20 | Ի Ապրանքամթերից Վաղարշակայ՝ ֆլ, 1217. . . . | 1 | 1 | 1217 | — |
| Հոկտ. | 25 | Ի Նաւնէ՝ ֆլ, 924. Մնջնորդէեայ Մարինոսին. . . . | 1 | 1 | 924 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 4 | ԱՄՈՂՋԻԿ ԴԱՇՆԱԿԻՑ ՎԱՂԱՐՇԱԿԱՅ ԶՄԻՒՌՆԱՑԻՈՑ | | | Ֆ | պէ |
| 1820 Հոկտ. 18 | Ըստ Խամբակամթերս Վաղարշակայ՝ Ֆ, 92400 . . . . | 3 | 1 | 92400 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 5 | ԾԱԽՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆ | | | Ֆ | պէ |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 6 | ՀԱՇԻՒ ՀԱՍԻՑ | | | Ֆ | պէ |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 7 | ՎԱՂԱՐՇԱԿ ԶՄԻՒՌՆԱՑԻ | | | Ֆ | պէ |
| 1820 Հոկտ. 18 | Ըստ Խամբակամթերս իւր՝ Ֆ, 9849 . . . . . . . . | 3 | 1 | 9849 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 8 | ՎԱՂԱՐՇԱԿ ԶՄԻՒՌՆԱՑԻ՝ ՀԱՇԻՒ ԳԱՑՄԱՆԱՓԱԿ | | | Ֆ | պէ |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ղռ̅ | փրէ | 4 |
| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 5 |
| 1820 Հոկտ. | 26 | 'Ի Նամբակամթերիցն Մաղարշակայ՝ ղռ̅, 4260 . . . . | 2 | 1 | 4260 | — | |
| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 6 |
| 1820 Հոկտ. | 27 | 'Ի Նամբակամթերից Մաղարշակայ՝ ղռ̅, 1848 . . . . | 2 | 1 | 1848 | — | |
| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 7 |
| | | | | | ղռ̅ | փրէ | |
| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | | 8 |
| 1820 Հոկտ. | 28 | 'Ի Նամբակամթերից՝ որ է նորին Մաղարշակայ՝ ղռ̅, 92400 . | 3 | 1 | 92400 | — | |

մդ. Մատիցուք արդ 'ի քննութիւն նախակարգեալ դիպուածոյ ամսապայման տուրևառութեանս, թէ զիարդ և որով կարգաւ դասաւորեալ կան յիշատակագրութիւնք 'ի մատեան Մայրհաշուին ։ Որ տեսանես, զի նախ առաջին * Բամբակամթերք Վաղարշակայ | պարտապան գրեցան ծախուցն, որք եղեն 'ի պատճառս նոյն մթերից, պարտատէր լինելով հաշուեմատեանցն Ապահովագրութեան, Մաքսի, Միջնորդի, Նաւուց տուրևառութեան, և Հասից (մդ. մե. մժը. մժէ)։ Յետոյ նոյն Բամբակամթերք Վաղարշակայ նշանակեցան պարտատէր 92400, դահեկանաց, պարտապան լինելով Ասողկայ. յորոյ վերայ յաւելու և բառդ * Դաշնակից ընդ Վաղարշակայ |. զորոյ զնորհուրդն յայտ արասցուք յառաջիկայդ ։

մե. Ընդ յիշատակագրութիւնս Օրհաշուին 'ի 28. Հոկտեմբերի նշանակեալ կան կրկին յայտարարութիւնք, որք թէպէտ չունին պատշաճողութիւնս ինչ ընդ նախընթաց յիշատակագրութիւնս դիպուածոյն. բայց եղան 'ի ցուցանել նորավարժից՝ թէ յորժամ հարկ լինիցի փակել զհաշուեմատեան վաճառեալ մթերից ինչ, զիարդ զատելի իցեն ողջ դրամքն, և փոխադրելիք յուրեանց տեղիս ։ Զօրինակ՝ կամելով փակել զնոյն հաշուեմատեան բամբակամթերից, հայեսջիր նախ 'ի Մայրհաշիւն, թէ 'ի յիշատակագրութիւնս նորա կայցեն բանք ինչ յայտարարք պայմանաց՝ իբր դաշն այսպէս կամ այնպէս վճարելոյ. և գտանես 'ի 18, Հոկտեմբերի. զի նոյն Մթերք Բամբակին ունին պահանջս՝ 92400, դահեկանաց յԱսողկայ * Դաշնակից եղելոյ ընդ Վաղարշակայ |։ Այս յետին հատուած բանի վասն Ասողկայ, յայտ առնէ, թէ դու ինքն անպարտ լինիս 'ի վճարել Վաղարշակայ, եթէ Ասողիկ դիպուածով ինչ մնանկացեալ անձեռնհաս լիցի ըստ ժամանակին վճարելոյ զդրամսն. զի գնոյ առնուլն Ասողկայ՝ այսու դաշամբ էր, թէ դրամքն վճարեսցին յետ ամսոց վեցից. որում և ինքն Վաղարշակ գտաւ հաճ և հաւան. վասն որոյ նմա անկանին տուգանքն, և ոչ քեզ, զի հաճութեամբ նորա գործեցաւ ։ Այլ դարձեալ 'ի նոյն ամսոյ 'ի 28. Հոկտեմբերի գտանես և զայլ յիշատակագրութիւն ինչ, յորում նշանակին համօրէն ծախքն եղեալք 'ի պատճառս այնր Բամբակամթերից՝ դահեկանս 9849, զորս Վաղարշակ հարկաւ ունի վճարել քեզ ։ Արդ՝ 'ի զատել զայդ գումար 9849, դահեկանաց 'ի մթերից անտի բամբակին, որ անպատճառ վճարելին է 'ի Վաղարշակայ, և վասն պահանջից նորա 92400, դահեկանաց, որոց ընդունելութիւնն երկբայական է և ընդ կասկածանօք վասն պայմանեալ ժամանակին, եղան կրկին յիշատակագրութիւնք. յորոց առաջինն նշանակելի է 'ի պարտիս առանձնական հաշուեմատենին Վաղարշակայ, իսկ երկրորդն 'ի պահանջս միւս հաշուեմատենի նորա, որ է * Վաղարշակ Զմիւռնացի՝ Հաշիւ Պայմանափակ |։ Ահա այս է պատճառն, վասն որոյ յՕրհաշուին յիշատակագրեցաւ նախ՝ * Վաղարշակ ‖ Առ Բամբակամթերս իւր՝ դհ, 9849. որ է գումար համօրէն ծախուց այնր մթերից |։ Այլ զկնի նորա յիշատակագրեցաւ՝ * Բամբակամթերք Վաղարշակայ ‖ Առ նոյն ինքն Վաղարշակ պայմանափակ հաշուով՝ դհ, 92400. զոր յետ վեց ամսոց ունիմ առնուլ յԱսողկայ. որ է գին 100, Բուրձ Բամբակաբեռանց վաճառելոց նմին իսկ Ասողկայ |։

մզ. Արդ՝ 'ի հասանել պայմանեալ ժամուն, եթէ Ասողիկ հատուցէ քեզ զգումար 92400, դահեկանացն ըստ բոլորին՝ կամ ըստ մասին, յայնժամ օրէն է նախ՝ պարտապան նշանակել ըզԴրամարկղն վասն ընկալեալ դրամոցդ, պարտատէր առնելով զԱսողիկ (ծդ. 4)։ Յետոյ քանզի ընկալեալ դրամքն զերծան 'ի վտանգէ, վասն որոյ այն հատուած բանի, որ նշանակեալ կայր վասն Ասողկայ, թէ * Դաշնակից է ընդ Վաղարշակայ |. ունի յուշ առնել քեզ, թէ Պայմանափակ Հաշիւ Վաղարշակայ նշանակելի է պարտապան այնմ գումարի դրամոցն, զոր ընկալեր յԱսողկայ. պարտատէր առնելով զառանձնական հաշուեմատեան Վաղարշակայ Զմիւռնացւոյ. որպէս զի աներկբայելի լինիցին պահանջք նորա, որք յառաջն ընդ կասկածանօք էին (մը)։ Արդ՝ 'ի հատուցանել Ասողկայ զդրամսն 'ի ձեռս քո, պարտ է յՕրհաշուին նշանակել այսպէս. * Դրամարկղ ‖ Առ Ասողիկ Դաշնակից եղելոյ ընդ Վաղարշակայ՝ դհ, 92400. զոր ետ ինձ 'ի հատուցումն պարտեաց իւրոց |։ Յետ նշանակելոյ զայդ՝ յիշատակագրելի է և այս. * Վաղարշակ Հաշիւ Պայմանափակ ‖ Առ նոյն ինքն Վաղարշակ՝ դհ, 92400. զորս հատոյց ինձ Ասողիկ Դաշնակից Վաղարշակայ, որպէս յայտ է 'ի նախագրելոցդ |։

Օրինակ խառն վճարման (ՃԼԷ . ՃԼԸ) Մթերից յուղարկելոյ տեղւոջէ 'ի տեղի :

ՃԼԷ . Գիտցուք թէ Ստամ Պրուսացի յուղարկեալ իցէ առ քեզ զերկոտասան բեռինս Մետաքսի 'ի վաճառել յիւր հաշիւ . իսկ դու զամենայնն միանգամայն վաճառեալ իցես 90000 , դահեկանաց . այսու դաշնադրութեամբ՝ զի զգնողն զկէս այնր գումարի առօրին հատուսցէ պատրաստական դրամովք . և փոխան մնացեալ կիսոյն , որ է 45000 , դահեկան , տացէ քեզ վաճառամթերս Չուխայի : Այս դիպուած օրէն է նախ վասն համօրէն ծախուցն եղելոց 'ի պատճառս Մետաքսին՝ պարտական նշանակել զհաշուեմատեան մակագրեալ . ՄԹԵՐՔ ՄԵՏԱՔՍԻ ԱՏՈՄԱՑ ՊՐՈՒՍԱՑՒՈՑ . պարտատէր առնելով զտեղին , յորոց վճարեալ իցեն դրամք ծախուցն : Յետոյ պարտ է վասն ընկալեալ դրամոցդ 45000 , դահեկանաց պարտական նշանակել զՍրամարկղն , պարտատէր առնելով զնոյն Մթերս Մետաքսի : Յետ այնորիկ կարգելով զայլ հաշուեմատեան մակագրութեամբս ՄԹԵՐՔ ՉՈՒԽԱՅԻ ԱՏՈՄԱՑ ՊՐՈՒՍԱՑՒՈՑ , 'ի պարտիս սորա նշանակեսցես զարժէս ընկալեալ չուխայիդ , և 'ի պահանջս նոյն Մթերից Մետաքսին : Ապա հարկ է փակել զառաջին հաշուեմատեան Մթերից Մետաքսին , զատելով զօգուտն 'ի ծախուց , և նշանակելով զայն 'ի պարտիս մետաքսին , և 'ի պահանջս Ստամոյ ( ՃԻ . ՃԼԲ ) :

Նոր Օրինակ :

ՃԼԸ . Գիտցուք թէ Հմայեակ Զմիւռնացի յուղարկեալ իցէ առ իս զՄետաքսամթերս 'ի վաճառել յիւր հաշիւ . յանձնելով զի վաճառեսցես զմի մասն պատրաստական դրամով , զերկրորդ մասն փոխանակութեամբ ընդ Որդան կարմրոյ , և զերրորդ մասն ժամապայման դաշամբ ընդունելոյ զդրամն զկնի վեց ամսոց : Առ դիւրահաս լինելոյ առաջարկեալ օրինակիդ՝ կարգեսցուք զայն 'ի ձև հաշուեմատենի :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

12 . Մարտի . 1820 :

Ա . Հմայեակ գրեաց առ իս 'ի Զմիւռնիոյ ապահովագրել տալ զինն բեռինս Մետաքսի արժողութեամբ 60000 , դահեկանաց , զոր յուղարկէ ընդ Տօմմինիքօ նաւապետին ՂՇ . Հ . Ձ : ԹՁ . 1—9 : և յանձնէ ինձ վաճառել զայնս յիւր հաշիւ : Ապահովագրութիւնն եղև 'ի ձեռն Սմբատայ միջնորդի դաշամբ վարձուց 2 առ % . որոյ բոլորագումարն առնէ ղշ , 1200 :

---

20 . Մայիսի :

Բ . Վճարեցի Մաքս 917 , ղշ , վասն ինն Մետաքսաբեռանց . զորս Հմայեակ առաքեաց առ իս 'ի Զմիւռնիոյ վաճառել յիւր հաշիւ :

---

18 . Հոկտեմբերի :

Գ . Վաճառեցի Խորէնայ զինն Մետաքսաբեռինս Հմայեկայ 'ի գին 66000 , դահեկանաց , զորոյ զմի մասն ունի փութապէս վճարել ընտիր դրամովք . զերկրորդ մասն Որդան կարմրով ըստ հաշուի 40 , դահեկանաց առ մի լիտր . իսկ զմնացեալ երրորդ մասն ունի վճարել զկնի վեց ամսոց ընտիր դրամովք :

---

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

19. Հոկտեմբերի ։

Դ. Խորէն հատոյց ինձ ղրշ, 22000. վասն Մետաքսամթերիցն Հմայեկայ ։

---

Ե. Խորէն ետ ինձ 550, լոր Որդան կարմիր 'ի հաշիւ Մետաքսամթերիցն Հմայեկայ, զորս ընկալայ ես 'ի գին 22000, դահեկանայ ։

---

24. Նորին ։

Զ. Վճարեցի Մարինոսին ղրշ, 660, 'ի միջնորդչէայ վաճառման Մետաքսաբեռանցն ։

---

25. Նորին ։

Է. Ծախք, որք եղեն վասն Մետաքսաբեռանցն Հմայեկայ ։

| | | |
|---|---|---|
| Վարձք նաւու Տօմէնիգօ նաւապետին . . . | ղրշ 270 ։ — | |
| Վասն քառամնօրեայ Արդեւանին . . . . . . . | 289 ։ — | |
| Վասն կշռելոյ զբեռինսն . . . . . . . . . . | 13 ։ 110 | |
| Վասն բեռնակրաց . . . . . . . . . . . . | 6 ։ — | |
| Վարձք մթերանոցի . . . . . . . . . . . | 50 ։ — | |
| | 628 ։ 110 | |

---

26. Նորին ։

Ը. Իրաւունք Հասիցս՝ 2 առ %, 'ի վերայ գնոյ վաճառման, ղրշ, 1320 ։

---

(1) ՕՐԱՀԱՇԻՒ

1820. Ի Վենետիկ ։

| | | ղրշ | փրկ |
|---|---|---|---|
| | 12. Մարտի ։ | | |
| —1<br>2— | Մթերք Մետաքսին Հմայեկայ ‖ Առ Սմբատ՝ ղրշ, 1200. զի 'ի ձեռն նորա եղև Ապահովագրութիւնն ինն Մետաքսաբեռանց. զոր Հմայեակ յուղարկեաց առ իս 'ի Օմիւռնիոյ ընդ Տօմէնիգօ նաւապետին ։ Արժողութիւն բեռանցն եղաւ 60000, ղրշ. որոյ վարձք ապահովութեանն 2. առ %, առնեն գումար . . . . . . . . | 1200 | — |
| | 20. Մայիսի ։ | | |
| —1<br>3— | Նոյնն ‖ Առ Դրամարկղ՝ ղրշ; 917. զի վասն Մետաքսաբեռանցն Հմայեկայ վճարեցաւ Մաքս . . . . . . . . . . . . . | 917 | — |

1820. Ի Վենետիկ:

18. Դեկտեմբերի:

| | | ղշ | փր |
|---|---|---|---|
| 4/1 | Խորէն Դաշնակից Հմայեկայ ‖ Առ Մետաքսամթերս Հմայեկայ՝ ղշ, 66000. զի ինձ բերին մետաքսի վաճառեցան նմին Խորենայ, որ և ունի վճարել զմի մասն պատրաստական դրամովք. զերկրորդ մասն Որդան կարմրով՝ ի գին 40, դահեկանաց առ մի լիտր, զոր փութով ունի յանձնել ինձ. իսկ զերրորդ մասն հանդերձեալ է վճարել ընտիր դրամովք զկնի վեց ամսոց . . . . . . . . . . . . . . | 66000 | — |
| | 19. Նորին: | | |
| 3/4 | Դրամարկղ ‖ Առ Խորէն դաշնակից Հմայեկայ՝ ղշ, 22000. զոր հատոյց ինձ Խորէն ըստ դաշնագրութեանս մերում. . . . . . | 22000 | — |
| 5/4 | Մթերք Որդան կարմրոյ Հմայեկայ ‖ Առ Նոյնն՝ ղշ, 22000. որ է գին 550, լիտր Որդան կարմրոյն, զոր ետ ինձ Խորէն՝ ըստ դաշնագրութեանս . . . . . . . . . . . . . . . . . . | 22000 | — |
| | 24. Նորին: | | |
| 1/3 | Մթերք Մետաքսին Հմայեկայ ‖ Առ Դրամարկղն՝ ղշ, 660. որք տուան Մարինոսին միջնորդչէայ վասն վաճառման մետաքսամթերցն. | 660 | — |
| | 25. Նորին: | | |
| 1/6 | Մթերք Մետաքսի ‖ Առ Ծախս Տուրեւառ". ղշ. 628. 110:<br>Վարձք նաւու Տոմէնիգօ նաւապետին . . . . ղշ, 270 : —<br>Վասն քառասնօրեայ Արգելանոցին . . . . 289 : —<br>Վասն Կշռելոյ . . . . . . . . . . . . 13 : 110<br>Վասն Բեռնակրաց . . . . . . . . . . . 6 : —<br>Վարձք Մթերանոցի . . . . . . . . . . 50 : — | 628 | 110 |
| | 26. Նորին: | | |
| 1/7 | Նոյնն ‖ Առ Հաշիւս Հասից՝ ղշ, 1320. որ է իմ հաս 2 առ %. | 1320 | — |
| | 27. Նորին: | | |
| 1/8 | Մթերք Մետաքսի ‖ Առ Հմայեակ հաշիւ Պայմանաժամի՝ ղշ, 22000, որ յետ վեց ամսոց վճարելին է ի Խորենայ ընտիր դրամովք. | 22000 | — |
| 1/9 | Նոյնն ‖ Առ Հմայեակ՝ ղշ, 39274. 10. մաքուր ի ծախուց, զոր հաւաքեցի ի մետաքսամթերից վաճառելոց յիւր հաշիւ. . . . . | 39274 | 10 |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| I<br>1820 | ՄԹԵՐՔ ՄԵՏԱՔՍԻ ՀՄԱՅԵԿԱՅ ԶՄԻՒՌՆԱՑԻՈՅ | | | ղշ | փրէ |
| Մարտ. 12 | Առ Սմբատ՝ ղշ, 1200. սակս Ապահովագրութեանն եղելոյ 'ի ձեռն նորա . . . . . . . . . . . . . . | 1 | 2 | 1200 | — |
| Մայիս. 20 | Առ Դրամարկղն՝ ղշ, 917. վասն վճարեալ Մաքսի . . . | 1 | 3 | 917 | — |
| Հոկտ". 24 | Առ Նաւին՝ ղշ, 660. միջնորդչեայ Մարինոսին . . . . | 2 | 3 | 660 | — |
| 25 | Առ Օտարս Տուրեւառութեան՝ ղշ, 628. 110. որպէս յայտ է յօրհաշիւն . . . . . . . . . . . . . | 2 | 6 | 628 | 110 |
| 26 | Առ Հաշիւ Հասից՝ ղշ, 1320. որ է իմ Հասս ըստ գնոյ վաճառմանն . . . . . . . . . . . . . . . | 2 | 7 | 1320 | — |
| 27 | Առ Պայմանափակ Հաշիւ Հմայեկայ՝ ղշ, 22000, որ տակաւին վճարելին է . . . . . . . . . . . . | 2 | 8 | 22000 | — |
| | Առ Հաշիւ Հմայեկայ՝ ղշ, 39274. 10. ողջ դրամք՝ մաքուր 'ի ծախուց . . . . . . . . . . . . . | 2 | 9 | 39274 | 10 |
| | | | | 66000 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 2 | ՍՄԲԱՏ | | | ղշ | փրէ |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 3<br>1820 | ԴՐԱՄԱՐԿՂ | | | ղշ | փրէ |
| | (Համարեալ թէ ունիցի ղշս) . . . . . . . . . . | — | — | 10000 | — |
| Հոկտ". 19 | Առ Խորէն դաշնակից Հմայեկայ՝ ղշ, 22000 . . . . . | 1 | 4 | 22000 | — |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 4<br>1820 | ԽՈՐԷՆ ԴԱՇՆԱԿԻՑ ՀՄԱՅԵԿԱՅ | | | ղշ | փրէ |
| Հոկտ". 18 | Առ Մետաքսամթերս Հմայեկայ՝ ղշ, 66000 . . . . . | 1 | 1 | 66000 | — |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 1 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | դ̃ղ | |
| Հոկտ. | 18 | 'Ի Խորէնայ դաշնակից եղելոյ ընդ Հմայեկայ' դ̃ղ, 66000. | 1 | 4 | 66000 | — |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 2 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | դ̃ղ | |
| Մարտ. | 12 | 'Ի Մետաքսամթերից Հմայեկայ' դ̃ղ, 1200. . . . . | 1 | 1 | 1200 | — |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 3 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | դ̃ղ | |
| Մայիս. | 20 | 'Ի Մետաքսամթերից Հմայեկայ' դ̃ղ, 917. վճարեցաւ մաքս. | 1 | 1 | 917 | — |
| Հոկտ. | 24 | 'Ի Նմանէ' դ̃ղ, 660, վճարեցաւ միջնորդչէայ. . . . . | 1 | 1 | 660 | — |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ | 4 |
|---|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | դ̃ղ | |
| Հոկտ. | 19 | 'Ի Դրամարկեղէ' դ̃ղ, 22000. որք վճարեցան ինձ դերհաշիւ. | 1 | 3 | 22000 | — |
| | | 'Ի Մթերից Որդան կարմրոյ. որ է Հմայեկայ' դ̃ղ, 22000. | 1 | 5 | 22000 | — |

| | | ԼԻՏՐ | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | ՄԹԵՐՔ ՈՐԴԱՆ ԿԱՐՄՐՈՅ ԶՄԻՒՌՆԱՑԻ ՀՄԱՅԵԿԱՑ | | | | ԹԾ | Փէ |
| 1820 Հոկտ․ 19 | Ըստ Խօրէն դաշնակից Հմայեկայ՝ ԹԾ, 22000 . . . | 550 | 1 | 4 | 22000 | — |

| | | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 6 | ԾԱԽՔ ՏՈՒՐՔԵՒԱՌՈՒԹԵԱՆ | | | ԹԾ | Փէ |

| | | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 7 | ՀԱՇԻՒ ՀԱՍԻՑ | | | ԹԾ | Փէ |

| | | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 8 | ՊԱՅՄԱՆԱՓԱԿ ՀԱՇԻՒ ՀՄԱՅԵԿԱՑ | | | ԹԾ | Փէ |

| | | Օ | Մ | ԳԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 9 | ՀՄԱՅԵԱԿ | | | ԹԾ | Փէ |

| | | | ԼԻՏՐ | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղ̃ր | փ̃է | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | 5 |
| | | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղ̃ր | փ̃է | 6 |
| 1820 Հոկտ". | 25 | Ի Մետաքսամթերից Հմայեկայ՝ ղ̃ր, 628. 110. . . . . | | 2 | 1 | 628 | 110 | |
| | | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղ̃ր | փ̃է | 7 |
| 1820 Հոկտ". | 26 | Ի Մետաքսամթերից Հմայեկայ՝ ղ̃ր, 1320. . . . . . | | 2 | 1 | 1320 | — | |
| | | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղ̃ր | փ̃է | 8 |
| 1820 Հոկտ". | 27 | Ի Մետաքսամթերից իւրոյ՝ ղ̃ր, 22000. . . . . . | | 2 | 1 | 22000 | — | |
| | | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղ̃ր | փ̃է | 9 |
| 1820 Հոկտ". | 27 | Ի Մետաքսամթերից իւրոյ՝ ղ̃ր, 39274. 10. . . . . | | 2 | 1 | 39274 | 10 | |

մլթ. Ըստ յառաջագիր կանոնացն սահմ աւանդելոյ 'ի բազում տեղիս, ՄԹԵՐՔ ՄԵՏԱՔՍԻՆ ՀՄԱՅԵԿԱՑ նշանակեցաւ նախ՝ պարտական ծախուցն եղելոց. և յետոյ եղև պարտատէր դրամոյ վաճառեալ մթերիցն, նոյնպէս և Խորէն գրեցաւ նախ պարտական գնոյ առեալ մթերիցն, և ապա պարտատէր վճարեալ դրամոցն, և տուեալ Սրգան կարմրոյն (մլէ)։ Ըսցուք արդ 'ի քննութիւն զերկուսին յետին յիշատակագրութիւնս Օրհաշուին՝ զեղեալսն խորհրդով 'ի փակել զհաշուեմատն վաճառեալ Մետաքսից. ուր տեսանեմք՝ զի 'ի 18. Հոկտեմբերի նշանակեալ կայ, թէ Խորէն, որ պարտական է այնմ մթերից, ունի զմնակագրութիւնս * Պատնակից Հմայեկայ |. վասն որոյ պարտ է նախ առաջին հայիլ 'ի հաշուեմատն Խորէնայ, թէ արդեօք իցէ՞ վճարեալ դրամս ինչ 'ի նուազել զիւր պարտսն, և գտանես անդ՝ զի վճարելով նորա զերկուսին բաժինսն, մնայ տակաւին երրորդ մասն պարտուց, այն է 22000, դահեկան. որով խելամուտ լինիս, թէ 'ի փակել զհաշուեմատն Մետաքսին, կարևոր է զայն գումար 22000, դահեկանաց փոխադրել 'ի Պայմանաւոր Հաշիւ Հմայեկայ (մլը). և յետոյ զերկրորդ գումարն 39274, դհ. և 10. սատ. որք են ողջ դրամք մաքուր 'ի ծախուց. տանիլ յառանձնական հաշուեմատն նորին Հմայեկայ (մլա)։

## Օրինակ Յուղարկելոյ (1) Վաճառամթերս 'ի Յանձնարարութենէ այլոց։

մխ. Սովոր հանդիպի՝ զի վաճառականք հեռաւոր քաղաքաց յանձնարարութիւնս առնեն միմեանց, գնել և յուղարկել զվաճառամթերս։ Ըստ այսպիսի յանձնարարութեանց 'ի կատարելն յումեքէ, թէ զիարդ յիշատակագրելիք իցեն 'ի հաշուեմատեանն՝ կարգեսցուք յառաջիկայդ. առ որ իբր նախաշաւիղ յայտ առնեմք աստանօր. զի թէ ոք 'ի բարեկամացդ խնդրեսցէ 'ի քէն վաճառամթերս ինչ յուղարկել առ նա, քննեսցես նախ՝ թէ դու ինքն ունիցիս զայն մթերսն, և կամիցիս վաճառել նմին, ապա թէ ոչ՝ հարկ է գնել յօտարաց և յուղարկել առ բարեկամդ։ Եթէ զոր ունիսդ կամեսցիս յուղարկել, պահելի է կարգն վաճառելոյ զմթերս, զոր աւանդեմք 'ի յաջորդ հատուածդ (մխա). իսկ եթէ յօտարաց գնոյ առեալ՝ կամեսցիս յուղարկել, յայնժամ պահելի է կարգ յանձնարարութեանցն, զոր աւանդեսցուք զկնի 'ի թիւս (մխգ), հանդերձ օրինակաւ։

մխա. 'Ի խնդրել բարեկամիդ վաճառամթերս ինչ, զոր կամիցիս յուղարկել 'ի քոյոցդ. կարգեսցես 'ի հաշուեմատեանին զառանձնական հաշուեմատն յանուն բարեկամիդ. յորում նշանակեսցին հաշիւք յուղարկեալ մթերիցդ։ Զորօրինակ՝ դիցուք թէ Վահրամ Թեսաղոնիկեցի գրեալ իցէ առ քեզ յուղարկել առ նա 'ի մթերից անտի գահվէին զոր ունիսդ, 3000, լիտր։ Ըստ մի լիտր հաշուելով դահեկանս 5, ըստ համակամ դաշնադրութեան ձերոյ. բոլորագումար դրամոցն առնէ դահեկանս 15000։ Արդ՝ 'ի դնելդ յուղի զբեռինս գահվէին, օրէն է նախ՝ զՎահրամ նշանակել պարտական 15000, դահեկանաց. պարտատէր առնելով զմթերս գահվէիդ (ծդ. 4)։ Յետոյ՝ եթէ ծախք յուղարկեալ բեռանցն 'ի վերայ քո իցեն, զնոյն Մթերսդ Գահվէի նշանակեսցես պարտական եղեալ ծախուցն, պարտատէր առնելով զայն տեղին՝ յորոց ելեալ իցեն դրամք ծախուցդ. իսկ եթէ այն ծախք անկ իցեն Վահրամայ. օրէն է յայնժամ պարտական նշանակել զՎահրամ, և պարտատէր զտեղին՝ յորոց ծախեալ իցեն դրամքն (մդ.. մծգ.. մծթ. և այլն)։ Յետ նշանակելոյ զայսօրիկ յիշատակագրութիւնս, պարտ է սպասել մինչև Վահրամ հատուսցէ քեզ զդրամս գահվէին, և յայնժամ պարտատէր նշանակելի է Վահրամ, և պարտական Դրամարկղն կամ այն մթերք, որով եղեալ իցէ քեզ հատուցումն վճարելի դրամոց. (ծդ. 4)։

մխբ. Եթէ Վահրամ Թեսաղոնիկեցի բաց 'ի մթերից գահվէին՝ խնդրեսցէ ևս 'ի Շաքարէ անտի զոր ունիսդ, պարտ է յայնժամ զատել զհաշուեմատն նորա 'ի հաշուեմատնէ անտի գահվէին, և վարիլ նովին կանոնաւ, զոր արդ աւանդեցաք։ Զայս կանոն պարտ է պահել միշտ, թէպէտև յանձնեալ մթերքն լինիցին բազմատեսակք. միայն թէ իցեն մթերք վաճառելիք առ 'ի քէն. իսկ եթէ լինիցին գնելիք յօտարաց, պահելի է կարգս առաջիկայ։

մխ. (1) Յուղարկութիւն վաճառամթերից 'ի խնդրոյ այլոց՝ բազմազբաղ գործառնութիւն է առ վաճառականս, զոր Իտալացիք կոչեն Spedizione. Ըսփէտիցիոնէ. որոյ գործադիրն կամ յուղարկուն վաճառոց անուանի Spedizioniere, Ըսփէտիցիոնիէրէ. Գործառնութիւնս թէպէտ սովորական է ամենայն վաճառականաց, սակայն են և առանձնական մարդիկ, որք որոշաբար 'ի նոյն գործս պարապին. բաւական համարելով զօգուտն որ 'ի նոցանէն քաղի. չատ է թէ իցէ գործունեայ և հաւատարիմ յիւրում ծառայութեան։

մնչ․ Գիտեմք թէ 'ի քանի մի բարեկամացդ բնակելոց յայլեւայլ քաղաքս, հասին առ քեզ զանազան յանձնարարութիւնք վաճառամթերից յուղարկել առ նոսա․ և դու ինքն յօժարելով հանել զկամս ամենեցուն, յանձն առեր կատարել զխնդիրսն՝ գնելով զմթերսն և յուղարկելով առ նոսա։ Արդ բացայայտութիւն դիպուածոցս կարեւոր համարիմ առանձին օրինակաւ կարգել զայնս 'ի ձև հաշուեմատենի, որով երևեսցին թէ զիարդ յԱրհաշիւ և 'ի Մայրհաշիւ մատեանս որոշաբար յիշատակագրելիք իցեն գնոյ առեալքն, որպէս և ծախք 'ի նոյին սակս։

## Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

14․ Մարտի․ 1820։

Ա․ Գնոյ առի յՄարշալայ 500, լիտր Պղինձ, 2000, դահեկանաւ։ Նաև 10, Տակառս Բուեռայ՝ 1800, դահեկանաւ, որոց բովանդակութիւն առնէ՝ 3800, դահեկան, զորս առօրին վճարեցի պատրաստական դրամովք։ Մթերքս յանձնեցան ինձ 'ի Գեղամայ Կրետացւոյ, առ որ ունիմ յուղարկել փութով։

---

17․ Նորին։

Բ․ Գնոյ առի յԱհրուազայ վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն, 400, Պրակս բնտիր թղթոյ․ որոց բովանդակութիւն եղև 3200, դահեկան։ Յանձնեալ էր ինձ 'ի Գեղամայ Կրետացւոյ յուղարկել առ ինքն փութով։

---

20․ Նորին։

Գ․ Գնոյ առի յՄնխիբաղայ վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն դրամոց, 15, Ծրարս Չուխայից, որոց բովանդակութիւն արար դահեկան 3000։ 'Ի ծրարից աստի 10, յանձնեալ էին ինձ 'ի Գեղամայ Կրետացւոյ․ և մնացեալ 5, յԱրտաշիսէ Կիպրացւոյ։

---

28․ Նորին։

Դ․ Գնոյ առի յՄտոմայ 200, լիտր Համեմ (այն է պահարեղէն)․ որոյ բովանդակութիւն արար դահեկան 4800․ վճարելի զկնի վեց ամսոց։ Մթերքս յանձնեցան ինձ յԱրտաշիսէ Կիպրացւոյ։

---

18․ Մայիսի։

Ե․ Եդի 'ի նաւն Կոստիօ նաւապետին զվեշտասան բեռինս մթերից յուղարկելիս 'ի Կրետէ․ ԳԿ․ Գ․ Կ։ թ․ 1—16․ զորս յանձնեալ էր ինձ Գեղամ Կրետացի։ Ծախք մթերիցս եղեն։

| | | |
|---|---|---|
| Վարձք նաւու Կոստիօ նաւապետին . . . . | դհ․ | 160 ։ — |
| Արկեղք 'ի զետեղել զմթերսն . . . . . . | | 128 ։ — |
| Բեռնակիր, նաւակ, և այլն . . . . . . . | | 48 ։ — |
| | | 336 ։ — |

---

19․ Նորին։

Զ․ Մասս նախայիշատակեալ մթերիցն, զոր յուղարկեցի առ Գեղամ Կրետացի, որպէս յայտ է 'ի վերոգրելոցդ՝ դհ, 100։

---

26․ Մայիսի․ 1820։

Է․ Եղան 'ի նաւ Ադոլֆօ նաւապետին վեց բեռինք վաճառամթերից ՂՇ․ Ա․ Կ ։ թի․ 1—6․ զորս յանձնեալ էր ինձ Արտաշէս Կիպրացի ։ Զվարձս նաւուն ունի վճարել նա ինքն Արտաշէս, իսկ այլ ծախք, որք ընդ իմ ձեռն եղեն ։

| | |
|---|---|
| Արկեղք 'ի զետեղել զմթերսն . . . . . . . | ՂՇ․ 48 ։ — |
| Բեռնակիր, նաւակ, և այլն . . . . . . . . . | 36 ։ — |
| | 84 ։ — |

27․ Նորին ։

Ը․ Մաքս նախանշանակեալ մթերիցն յուղարկելոց առ Արտաշէս Կիպրացի, ՂՇ․ 60 ։

29․ Նորին ։

Թ․ (*) Արժէք և ծախք գնոյ առեալ մթերիցն վասն Գեղամայ Կրետացւոյ․ զոր 'ի 18, ամսոյս յուղարկեցի ընդ Նօուտիօ նաւապետին ։ Բոլորն միանգամայն էին վեշտասան բեռինք ։

Մետասան բեռինք ՂՇ․ Գ․ Կ ։ թի․ 1—11․ պատրաստական դրամով ։

| | | |
|---|---|---|
| Պղինձ 500, լիտր ։ Առ մի լիտր 4, ՂՇ․ . . . . . . . | 2000 ։ — | |
| Բևեռ 10, տակառք ։ Առ մին՝ 180, ՂՇ․ . . . . . . . | 1800 ։ — | |
| | ՂՇ․ | 3800 ։ — |

Ծախք ։

| | | |
|---|---|---|
| Վարձք նաւու Նօուտիօ նաւապետին . . . . . . . | ՂՇ․ 110 ։ — | |
| Մաքս վասն մետասան բեռանցս . . . . . . . . | 70 ։ — | |
| Բեռնակիր, Նաւակ, և այլն . . . . . . . . . | 30 ։ — | |
| Արկեղք 'ի զետեղել զմթերսն . . . . . . . . . | 88 ։ — | |
| | ՂՇ․ | 298 ։ — |
| | ՂՇ․ | 4098 ։ — |
| Իրաւունք Հասից՝ 2 առ % . . . . . . . . . . . . . . | | 82 ։ — |

Հինգ բեռինք ՂՇ․ Կ․ Գ ։ թի․ 12—16․ վերյանձնեալ պայմանաւ 'ի վճարումն ։

| | | |
|---|---|---|
| Ընտիր Թուղթ 400, պրակք ։ Առ մին՝ 8, ՂՇ․ . . . . . | 3200 ։ — | |
| Շուխայ 10, ծրարք ։ Առ մին՝ 200, ՂՇ․ . . . . . . . | 2000 ։ — | |
| | ՂՇ․ | 5200 ։ — |

Ծախք ։

| | | |
|---|---|---|
| Վարձք նաւու Նօուտիօ նաւապետին . . . . . . . . . | ՂՇ․ 50 ։ — | |
| Մաքս վասն հնգից բեռանցս . . . . . . . . . . | 30 ։ — | |
| Բեռնակիր, Նաւակ, և այլն . . . . . . . . . | 18 ։ — | |
| Արկեղք 'ի զետեղել զբեռինսն . . . . . . . . . | 40 ։ — | |
| | ՂՇ․ | 138 ։ — |
| | ՂՇ․ | 5338 ։ — |
| Իրաւունք Հասից՝ 2 առ % . . . . . . . . . . . . . . | | 106 ։ 15 |

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

4 · Յունիսի · 1820 ։

Ճ · (*) Արժէք և Նաւեք գնոյ առեալ մթերիցն վասն Արտաշխի Կիպրացւոյ, զորս յուղարկեցի առ նա ընդ Ադոլֆօ նաւապետին ։ Նաւուղեայ այսոցիկ մթերից վճարելի են 'ի նոյն իսկ յԱրտաշխէ · ըստ յայտարարութեան Բեռնագրոյն (1) ։

(*) Խնձերորդ՝ որպէս և յաջորդս Տասներորդ առաջարկութիւնք կարեն նորավարժից լինել օրինակք ցուցակի և հաշուի, զոր գործադիրն յանձնարարութեանց առվոր է առաքել առ յանձնողն ։ Որք ոչ այլ ինչ են՝ բայց եթէ գաղափարք յիշատակագրութեանց նշանակելոց յօժանդակագիրն անուանեալ Մատեան Յանձնարարութեանց · զոր իտալացիք Fattura · ֆաթթուրա, անուանեն · զորմէ տես 'ի թիւն ( ՅԺԳ ) ։

Ճ · (1) ԲԵՌՆԱԳԻՐ կոչի թուղթ յայտարարութեանն, զոր նաւապետն 'ի բեռնաւորել անդ զմթերսն 'ի նաւ, տայ 'ի ձեռս վաճառականին · յորում առվորութիւն է ծանուցանել զթիւ և զնշանագիր բեռանցն, զանձն և զքաղաք, ուստի առնու զբեռինսն · զանուն վաճառականին և զքաղաքն յոր հանդերձեալ իցէ ուղևորել · միանգամայն և զչափ վարձուց նաւուն, զոր ունի ընդունել 'ի ժամանելն 'ի դէմ եղեալ տեղին ։ Զայս թուղթ յայտարարութեան, որ է իբր մուրհակագիր յանձնեալ բեռանց, իտալացիք անուանեն · Polizza di Carico ։ փօլիչա դի Գարիգօ · այն է գաշնագիր բեռնաւորութեան, զորոյ զօրինակն տես զկնի ։

Գիտելի · Ընթացս գործոյս ուրանօր յիշատակեալ կայցէ անուանս Բեռն, պարտ է իմանալ զգանգուած ինչ ծանրութեան, զոր 'ի թուրք լեզու Եուք անուանեն, և իտալացիք Գօլլօ · որք անխտիր առվոր են և առ Նոսա վարել վասն ամենայն բեռանց, սակայն մարթ է 'ի մեզ ըստ նիւթոյ վաճառացն՝ զորս սովորութիւն է ամփոփել կամ զետեղել 'ի զանազան տեսակս ամանոց, այլևայլ անուամբ յորջորջել զամանսն, որպիսի են՝ Խուրձ · Բուրձ · Պարկ · Զամբիւղ · Կողով · Սակառ · Արկղ · Սնդուկ · Տակառ · Կարաս · Տիկ · և այլն ։

## ՕՐԻՆԱԿ ԲԵՌՆԱԳՐՈՑ



Ամսաթիւ 5 · Յուլիօ · 1824 · ԶՄԻՒՌՆԻԱ ։

Յանուն Այ և 'ի բարեյաջող ուղևորութիւն բեռնաւորեաց միանգամ ևեթ յայսմ նաւահանգստի Արթուր Գիւէյտուն, Հգուդ Հինտերյեն Տէրրոբէան · 'ի հաշիւ և 'ի վտանգ իւր · · · · · · · · · · · · · · · · · · · ·

ընդ յարկաւ Եթէնյաշեան Նաւուն անուանելոյ Սոֆիա · որոյ Նաւապետ Գէորգէն Նէրսէսեան Հինտէն դերլունեա · · · · · · · · · · · · · · · · · · · ·

'ի տանել և 'ի յանձնել յայսմ առաջիկայ ուղևորութեան իւրում 'ի Տէրգեա առ Գորին Բուլղարա Եղանեան · · · · · · · · · · · · · · · · · · · ·

զներքոյ յիշատակեալ և գծագրեալ վաճառսն՝ անարատս և ամբողջս ըստ թուոյ և յանդիմանակաց նշանացն ։ Այսպէս խոստանայ և նա ինքն Նաւապետ, զի 'ի ժամանելն ողջամբ, հասուցէ զնոսին ։ իսկ վասն Նաւուղէի հատուցին նմա Գուրուշ եօթանասունեօթ, յառաջ 'ի նոյն և եօթն առ հարիւր ճան Գուրուշ, ( որ է ծախս առաջադրեալ ) · · · · · · · · · · · · · · · · · · · ·

Եւ 'ի հաւաստութիւն ճշմարտութեան լցի առաջիկայ գիրս, որպէս և այլ հաւասար օրինակք սորին՝ հաստատեալ և ստորագրեալ 'ի նոյն Նաւապետէ · որ թէ անհնարու իցէ գրչութեան, փոխան նորա ստորագրեսցի յայլմէ · և 'ի յանգ ելանել միոյն, այլ օրինակքն համարեսցին անվաւերք ։ Տէր ուղեկից լիցի 'ի յաջողութիւն ։

Ա · Գ · Եօթն Արկղ Կետեյ՝ բարեյարդարեալ ։ Արժէք ճաճանչն, ՂՇ · 5040 ։

ՃԺ · 1 · 2 ։

Նաւապետ Գէորգէն Նէրսէսեան ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

4. Յունիսի. 1820։

Մեկամսեայ պայմանաւ վճարելի մուրհակ 'ի վերայ Բեռլինոյ։ ղր. Ա. Կ։ թղ. 1—6։

| | | |
|---|---|---|
| Զուխայ՝ 5, ծրար ։ Առ մին՝ 200. ղր. . . . . . . . . . | 1000 ։ — | |
| Համեմք ( այն է Պահարեղէն ) 200, լիտր . . . . . . . | 4800 ։ — | |
| | ղր. | 5800 ։ — |

Ծախք ։

| | | |
|---|---|---|
| Մաքս՝ վասն նոցին բեռանց վեցից . . . . . . . . . . | 60 ։ — | |
| Արկեղք 'ի զետեղել զմթերսն . . . . . . . . . . . | 48 ։ — | |
| Բեռնակիր, նաւակ, և այլն . . . . . . . . . . . . | 36 ։ — | |
| | ղր. | 144 ։ — |
| | ղր. | 5944 ։ — |
| Իրաւունք Հասիցս՝ 2 առ % . . . . . . . . . . . . . . . | | 118 ։ 17 |

5. Նորին ։

ԺԱ. Առաքէս Կիպրացի 'ի յանձնելն զԶուխայն և զՀամեմսն խնդրեաց յինէն, զի յուղարկել առն գնողին՝ տաց ապահովագրել. զոր և արարի այսօր 'ի ձեռն Ամբատայ միջնորդի. գնելով գինս 'ի վերայ մթերիցն ղր., 8000, և դաշամբ վարձուց 2 առ %. որոց բոլորագումարն արար ղր., 160 ։

(1) ՕՐՀԱՇԻՒ

1820. 'Ի Վենետիկ ։

| | | ղր. | փր. |
|---|---|---|---|
| | 14. Ապրիլ ։ | | |
| —1 / 2— | Մթերք Յանձնարարութեանց ‖ Առ Դրամարկղ՝ ղր., 3800. վասն մթերիցն զորս գնոյ առի յԱրշամայ. և առօրին վճարեցի ընտիր դրամովք . . . . . . . . . . . . . . . . . . . | 3800 | — |
| | 17. Նորին ։ | | |
| —1 / 3— | Նոյնն ‖ Առ Նրուաղ՝ ղր., 3200. վասն վաճառամթերիցն զորս գնոյ առի 'ի նմանէ ։ Հատուցանելի է ընտիր դրամովք զկնի վեց ամսոց . . . . . . . . . . . . . . . . . . . | 3200 | — |
| | 20. Նորին ։ | | |
| —1 / 4— | Նոյնն ‖ Առ Անիրաղ՝ ղր., 3000. վասն վաճառամթերիցն զորս գնոյ առի 'ի նմանէ ։ Հատուցանելի է ընտիր դրամովք զկնի վեց ամսոց . . . . . . . . . . . . . . . . . . . | 3000 | — |
| | 28. Նորին ։ | | |
| —1 / 5— | Նոյնն ‖ Առ Առամ՝ ղր., 4800. վասն յանձնեալ մթերիցն զորս գնոյ առի 'ի նմանէ, դաշամբ զկնի վեց ամսոց վճարելոյ նմա՝ ընտիր դրամովք . . . . . . . . . . . . . . . . . . . | 4800 | — |

1820. Ի Վենետիկ:

| Margin | | Ֆ | [illegible] |
|---|---|---|---|
| | **18. Մայիսի:** | | |
| 1 / 6 | Մթերք Յանձնարարութեանց ∥ Առ Ծախս Տուրևառութեան՝ Ֆ, 336. որք են ծախք 16, բեռանց յուղարկելոց առ Գեղամ Կրետացի ընդ Նօռտիօ նաւապետին:<br>Վարձ նաւու Նօռտիօ նաւապետին . . . . Ֆ. 160 : —<br>Արկեղք 'ի զետեղել զմթերսն . . . . . . 128 : —<br>Բեռնակիր, նաւակ, և այլն . . . . . . . 48 : — | 336 | — |
| | **19. Նորին:** | | |
| 1 / 2 | Նոյնն ∥ Առ Դրամարկղ՝ Ֆ, 100. վճարեցաւ Մաքս վասն 16, մթերաբեռանց յուղարկելոց 'ի Կրետէ ընդ Նօռտիօ նաւապետին. | 100 | — |
| | **26. Նորին:** | | |
| 1 / 6 | Նոյնն ∥ Առ Ծախս Տուրևառութեան՝ Ֆ, 84. ծախք վասն 6, բեռանց յուղարկելոց 'ի Կիպրոս ընդ Աստոլֆօ նաւապետին, որոյ 'ի հասուցանել զմթերսն 'ի ձեռս Արտաշէսի, ունի առնուլ զվարձս նաւուն 'ի նմանէ:<br>Արկեղք 'ի զետեղել զմթերսն . . . . . . . . . 48 : —<br>Բեռնակիր, նաւակ, և այլն . . . . . . . . . . 36 : — | 84 | — |
| | **27. Նորին:** | | |
| 1 / 2 | Նոյնն ∥ Առ Դրամարկղ՝ Ֆ, 60. որ է Մաքս վճարեալ վասն 6, վաճառաբեռանց յուղարկելոց 'ի Կիպրոս ընդ Աստոլֆօ նաւապետին . . . . . . . . . . . . . . . . . | 60 | — |
| | **29. Նորին:** | | |
| 7 / 1 | Գեղամ Կրետացի ∥ Առ Մթերս Յանձնարարութեանց՝ Ֆ, 4098. վասն 11, վաճառաբեռանց, զոր 'ի յանձնարարութենէ նորա գնոյ առեալ յուղարկեցի ընդ Նօռտիօ նաւապետին, վճարեցաւ պատրաստական դրամովք. որպէս յայտ է 'ի ցուցակէ հաշուին, զոր առաքեցի առ նա . . . . . . . . . . . . . . | 4098 | — |
| 7 / 8 | Նոյնն ∥ Առ Հաշիւ Հասից՝ Ֆ, 82. որք են իրաւունք հասից 2, առ %, վասն գնելոյս և յուղարկելոյս զվաճառամթերսն 11, բեռանց եղելոց 'ի Ճանապարհ ընդ Նօռտիօ նաւապետին, որպէս յայտ է 'ի հաշուէ անտի, զոր առաքեցի. . . . . . . . . . . . | 82 | — |
| 7 / 1 | Նոյնն ∥ Առ Մթերս Յանձնարարութեանց՝ Ֆ, 5338. վասն 5, վաճառաբեռանց, զորս 'ի յանձնարարութենէ նորա գնոյ առեալ յուղարկեցի ընդ Նօռտիօ նաւապետին: Վճարելի է զգին վեց ամսոց. որպէս յայտ է 'ի ցուցակէ հաշուին, զոր առաքեցի առ նա . . | 5338 | — |

(3)

# ՕՐՀԱՇԻՒ

1820 . 'Ի Վենետիկ :

| | | ղ̃շ | փր̃ |
|---|---|---|---|
| | 29 . Մայիսի : | | |
| —7<br>8— | Գեղամ Կրետացի ‖ Առ Հաշիւ Հասից՝ ղ̃շ, 106 . 15 . որ է իմ հասս 2, առ %, վասն գնելոյ և յուղարկելոյ զվաճառամթերս 5, բեռանց, զոր եդի 'ի ճանապարհ ընդ Լօուտիօ նաւապետին : Վճարելի յետ վեց ամսոց, որպէս յայտ է 'ի ցուցակէ հաշուին, զոր առաքեցի առ նա . . . . . . . . . . . . . . . . . . . . . . | 106 | 15 |
| | 4 . Յունիսի : | | |
| —9<br>1— | Արտաշէս Կիպրացի ‖ Առ Մթերս Յանձնարարութեանց՝ ղ̃շ, 5944 . վասն 6, վաճառաբեռանց՝ զորս 'ի յանձնարարութենէ նորա գնոյ առեալ յուղարկեցի ընդ Ռստօլֆօ նաւապետին, վճարելի յետ վեց ամսոց . որպէս յայտ է 'ի հաշուէն, զոր առաքեցի առ նա . . . | 5944 | — |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| 1 | ՄԹԵՐՔ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղ̃շ | փր̃ |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | | |
| Ապրիլ . 14 | Առ Դրամարկղ՝ ղ̃շ, 3800 . գնուած մթերից պատրաստական դրամովք . . . . . . . . . . . . . . . . | 1 | 2 | 3800 | — |
| 17 | Առ Նորուազ՝ ղ̃շ, 3200 . վաճառեաց ինձ վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն . . . . . . . . . . . . . | 1 | 3 | 3200 | — |
| 20 | Առ Անիբաղ՝ ղ̃շ, 3000 . ըստ նախագրելոյդ . . . . . . | 1 | 4 | 3000 | — |
| 28 | Առ Արամ՝ ղ̃շ, 4800 . ըստ նախագրելոյդ . . . . . . | 1 | 5 | 4800 | — |
| Մայիս . 18 | Առ Ծախս Տուրևառութեան՝ ղ̃շ, 336 . կարևոր ծախք . | 2 | 6 | 336 | — |
| 19 | Առ Դրամարկղ՝ ղ̃շ, 100 . վճարեալ մաքս . . . . . . | 2 | 2 | 100 | — |
| 26 | Առ Ծախս Տուրևառութեան՝ ղ̃շ, 84 . կարևոր ծախք . . | 2 | 6 | 84 | — |
| 27 | Առ Դրամարկղ՝ ղ̃շ, 60 . վճարեալ մաքս . . . . . . | 2 | 2 | 60 | — |

| 2 | ԴՐԱՄԱՐԿՂ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղ̃շ | փր̃ |
|---|---|---|---|---|---|
| | ( Համարեալ՝ թէ ունիցի ղ̃շ ) . . . . . . . . . . . | — | — | 10000 | — |

| 3 | ԵՐՈՒԱԶ | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղ̃շ | փր̃ |
|---|---|---|---|---|---|

# ՕՐՀԱՇԻՒ

1820. 'Ի Վենետիկ ։

| Folio | | ղր. | փր. |
|---|---|---|---|
| | **4. Յունիսի ։** | | |
| —9 / 8— | Արտաշէս Կիպրացի ‖ Տու. Հաշիւ Հասից՝ ղր., 118. 17. որ է իմ հաս 2 առ %, վասն գնելոյս և յուղարկելոյս զկէց վաճառաբեռինն ընդ Ռոտոլֆո նաւապետին ։ Մ Ճարելի յետ 6, ամսոց. որպէս յայտ է 'ի ցուցակէ հաշուին, զոր առաքեցի առ նա . . . . . . . . | 118 | 17 |
| | **5. Նորին ։** | | |
| —9 / 10— | Նոյնն ‖ Տու. Սմբատ՝ ղր., 160. վարձք ապահովագրութեան նաւախայիշտակեալ բեռանց, որոց արժէք եղաւ ղր., 8000. դաշամբ վարձուց 2 առ %. 'ի ձեռն Սմբատայ միջնորդի. . . . . . . | 160 | — |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| 1820 | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղր. | փր. | 1 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մայիս. | 29 | 'Ի Գեղամայ Կրետացւոյ՝ ղր., 4098. յուղարկեալ մթերք պատրաստական դրամովք . . . . . . . . . . . | 2 | 7 | 4098 | — | |
| | | 'Ի Նմանէ՝ ղր., 5338. յուղարկեալ մթերք վեցամսեայ պայմանաւ 'ի վճարումն . . . . . . . . . . . | 2 | 7 | 5338 | — | |
| Յունիս. | 4 | Յարտաշիսէ Կիպրացւոյ՝ ղր., 5944. յուղարկեալ մթերք ամսապայման ժամանակաւ . . . . . . . . . . | 3 | 9 | 5944 | — | |

| 1820 | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղր. | փր. | 2 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ապրիլ. | 14 | 'Ի Մթերից Յանձնարարութեանց՝ ղր., 3800, գնուած պատրաստական դրամով . . . . . . . . . . . | 1 | 1 | 3800 | — | |
| Մայիս. | 19 | 'Ի Նմանէ՝ ղր., 100. վճարեալ վասն Մաքսի . . . . . | 2 | 1 | 100 | — | |
| | 27 | 'Ի Նմանէ՝ ղր., 60. նոյնպէս վասն Մաքսի . . . . . . | 2 | 1 | 60 | — | |

| 1820 | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղր. | փր. | 3 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ապրիլ. | 17 | 'Ի Մթերից Յանձնարարութեանց՝ ղր., 3200. վեցամսեայ պայմանաւ . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | 3200 | — | |

| | | Օ | Մ | ՊԱՐՏԻՔ ղր. | փրէ |
|---|---|---|---|---|---|
| 4 | ԱՆՆԻԲԱՂ | | | | |
| 5 | ԱՏՈՄ | | | | |
| 6 | ԾԱԽՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆ | | | | |
| 7 | ԳԵՂԱՄ ԿՐԵՏԱՑԻ | | | | |
| 1820 Մայիս . 29 | Առ Մ՛Թերս Յանձնարարութեանց՝ ղր. 4098 . վճարելի փութով . . . . . . . . . . . . . . . . | 2 | 1 | 4098 | — |
| | Առ Հաշիւ Հասից՝ ղր. 82 . Հաս նախագրելոցդ . . . | 2 | 8 | 82 | — |
| | Առ Մ՛Թերս Յանձնարարութեանց՝ ղր. 5338 . վճարելի յետ վեց ամսոց . . . . . . . . . . . . . . . | 2 | 1 | 5338 | — |
| | Առ Հաշիւ Հասից՝ ղր. 106 . 15 . Հաս վասն նախագրելոցդ . . . . . . . . . . . . . . . . . | 3 | 8 | 106 | 15 |
| 8 | ՀԱՇԻՒ ՀԱՍԻՑ | | | | |
| 9 | ԱՐՏԱՇԷՍ ԿԻՊՐԱՑԻ | | | | |
| 1820 Յունիս . 4 | Առ Մ՛Թերս Յանձնարարութեանց՝ ղր. 5944 . վճարելի յետ վեց ամսոց . . . . . . . . . . . . . . . | 3 | 1 | 5944 | — |
| | Առ Հաշիւ Հասից՝ ղր. 118 . 17 . Հաս վասն նախագրելոցդ . . . . . . . . . . . . . . . . . | 4 | 8 | 118 | 17 |
| 5 | Առ Ամբար՝ ղր. 160 . վասն ապահովագրութեան նոյն մթերից . . . . . . . . . . . . . . . . . | 4 | 10 | 160 | — |
| 10 | ՍՄԲԱՏ ՄԻՋՆՈՐԴ | | | | |

# ՄԱՅՐՀԱՇԻՒ

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Ապրիլ. | 20 | Ի Մթերից Յանձնարարութեանց՝ ղշ, 3000. վեցամսեայ պայմանաւ. . . . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | 3000 | — | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 5 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Ապրիլ. | 28 | Ի Մթերից Յանձնարարութեանց՝ ղշ, 4800. վեցամսեայ պայմանաւ. . . . . . . . . . . . . . . . . | 1 | 1 | 4800 | — | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 6 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Մայիս. | 18 | Ի Մթերից Յանձնարարութեանց՝ ղշ, 336. կարևոր ծախք. | 2 | 1 | 336 | — | |
| | 26 | Ի Նմանէ՝ ղշ, 84. նոյնպէս. . . . . . . . . . | 2 | 1 | 84 | — | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 7 |
|---|---|---|---|---|---|---|---|

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Մայիս. | 29 | Ի Գեղամայ Կրետացւոյ՝ ղշ, 82. Հաս առ նա յուղարկեալ մթերիցն. . . . . . . . . . . . . . . | 2 | 7 | 82 | — | |
| | | Ի Նմանէ՝ ղշ, 106. 15. նոյնպէս. . . . . . . . | 3 | 7 | 106 | 15 | |
| Յունիս. | 4 | Յարտաշիսէ Կիպրացւոյ՝ ղշ, 118. 17. նոյնպէս. . . . | 4 | 9 | 118 | 17 | |

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|

| | | | Օ | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1820 Յունիս. | 5 | Յարտաշիսէ Կիպրացւոյ՝ ղշ, 160. վասն եղեալ ապահովագրութեան. . . . . . . . . . . . . . | 4 | 9 | 160 | — | |

Մխդ. Ապառամթերք 'ի յանձնարարութենէ այլոց գնոյ առեալք՝ թէպէտև իցեն բազմատեսակք, ամենեքին առ հասարակ համարելի են իբր զմիատեսակ մթերս. զի կատարիչն յանձնարարութեանց ունի առնուլ 'ի նոցանէ միայն զվարձս աշխատութեանն, այսինքն է զշահն. որ ոչ չափի 'ի յոլովութենէ յոգնասեռ մթերից, այլ յառաւելութենէ դրամագումարի գնոյ առելոցն. վասն որոյ զամենայն յանձնարարութիւնս առ հասարակ պարտ է նշանակել 'ի մի հաշուեմասն մակագրեալ, ՄԹԵՐՔ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ. ըստ որում տեսանես 'ի նախընթաց օրինակդ հաշուեմատենի:

Մխե. Ի գնելն զմթերս յանձնարարութեանց չէ պարտ յայտնել վաճառողաց, թէ գնոյ առեալքդ իցեն 'ի պէտս օտարի և յուղարկելիք այլուր. այլ մանաւանդ օրէն է վարիլ՝ որպէս թէ դու ինքն ես որ գնես զնոսին վասն քո. ըստ որում ունիս յիշատակագրել 'ի քում հաշուեմատենի. նմին իրի զարժէս գնոյ առեալ մթերիցդ նշանակեսջիր 'ի պարտիս հաշուեմասին Մթերից Յանձնարարութեանց, և 'ի պահանջս Դրամարկեղ՝ եթէ իցեն գնեալք պատրաստական դրամովք. իսկ եթէ իցեն վճարելիք ամսապայման ժամանակաւ, նշանակելի է 'ի պահանջս վաճառողացն (ծը. 4). ըստ որում տեսանես յՕրհաշուին 'ի դասաւորութիւնս առաջարկութեանցն Ա. Բ. Գ. Դ:

Նոյնն կանոնաւ վարելի է և 'ի ծախսն, որք լինին 'ի պատճառս գնոյ առեալ մթերիցն, նշանակելով զնոսին 'ի պարտիս Մթերից Յանձնարարութեանց, և 'ի պահանջս իւրացն և տեղեաց՝ յորոց ելեալ իցեն դրամք ծախուց (մծթ. մխդ). որպէս յայտ է յՕրհաշուին 'ի դասաւորութիւնս առաջարկութեանցն Ե. Զ. Է. Ը:

Արդ՝ յետ պատրաստելոյ զյանձնեալ մթերսն՝ 'ի կամիլն յուղարկել, պարտ է յայնժամ որոշել 'ի միմեանց և բացայայտ նշանակել, թէ ո՛յք 'ի նոցունց պատրաստական դրամով գնոյ առեալք իցեն, և ո՛յք ամսապայման դաշամբ 'ի վճարումն. թէպէտև զերկոսին ևս օրէն է նշանակել 'ի պարտիս յանձնողացն, և 'ի պահանջս Մթերից Յանձնարարութեանց. (ծը. 4): Միանգամայն պարտական գրելի է յանձնողն և վասն Շահից, որ քեզ անկք իցեն (մծը). ըստ որում տեսանես նշանակեալ 'ի Թ, առաջարկութեան: Իսկ Ժ, առաջարկութիւնն չունի պէտս բաժանման, զի համուցումն դրամոյ բովանդակ մթերից գնոյ առելոց՝ ամսապայման դաշամբ է: Յետին ԺԱ, առաջարկութիւնն յայտ առնէ, թէ Արտաշէս Աւետրացի փափաքելով անփոյթ մնալ 'ի վտանգէ կորստեան յուղարկելի մթերիցն՝ յանձնեալ է ապահովագրել զայնս 'ի գնելն յուղի. և քանզի կատարեալ ես զխնդիրն 'ի ձեռն Սմբատայ միջնորդի, զինս գնելով մթերիցն 8000, դահեկանս, և խոստանալով վարձս 2 առ %, նմին իրի նա ինքն Արտաշէս նշանակեցաւ պարտական, և Սմբատ պարտատէր 160, դահեկանաց. որ է վարձք ապահովագրութեանն.
(մգ. և այլն):

Մխզ. Ի նախակարգեալ Մայրհաշուին՝ եթէ հայեսցիս 'ի հաշուեմասն Մթերից Յանձնարարութեանց, գտանես զպարտիս նորա ամենայնիւ հաւասարեալս պահանջիցն. զի որովհետև սակաւ են վաճառամթերքն, և հաղորդակցութիւն տուրևառութեանն ընդ երկուս անձինս եղեւ, վասն որոյ դիւրին է և անաշխատ զատելն զծախս իւրաքանչիւրոցն, և փոխադրել յիւրեանց տեղի. սակայն եթէ լինիցին բազմութիւնք յանձնողաց և յաճախութիւնք յուղարկելի մթերից, կարի դժուարին է և տաժանելի անվրէպ բաժանումն ծախուց առ մթերս իւրաքանչիւր անձանց, մինչև ստէպ սովոր է սպրդիլ բազմադիմի վրիպակաց՝ 'ի մէջս վաճառականին, որ կատարէ զյանձնարարութիւնսն: Յայսպիսի դիպուածս եթէ լինիցին վրիպակք անգտանելիք, առ խորշելոյ 'ի տատամնութենէ՝ պարտ է դարմանել զվնասն 'ի ձեռն հաշուեմասին Շահուց և Վնասուց (Ճղը):

Մխէ. Հնար է հանդիպիլ, զի 'ի կատարելի յանձնարարութիւնս վաճառաց կայցեն և մթերք ինչ, զոր դու ինքն ունիցիս և կամիցիս վաճառել, յայնժամ փոխանակ գնելոյ յայլոց, կարես զքոյդ յուղարկել, ըստ արժէիցն որով վաճառի յայլոց. և զգումար գնոյ նորա նշանակել 'ի պարտիս Մթերից Յանձնարարութեանց, և 'ի պահանջս յուղարկեալ մթերիցդ:

## Յաղագս Հաշուի Հաղորդակցութեան ։

մխէ․ Հաշիւ Հաղորդակցութեան [1] կոչի, յորժամ երկու վաճառականք միաբանին 'ի տուրևառութիւն իրաց ինչ՝ դաշամբ հաւասարաբաժին մասնակցութեան շահու և վնասու այնր մթերից․ ըստ որում սովոր է սահել հանդիպիլ 'ի կատարելս յանձնարարութեանց․ որոց 'ի յուղարկելն զվաճառամթերս յանձնեալս յումեք, խնդրեն մնալ 'ի կցորդութիւն տուրևառութեան յուղարկեալ վաճառացն ։ Միաբանութիւն ընկերութեանս մասնական է, և ոչ բոլորական, զի տևէ ցվաճառումն այնր դաշնադրեալ մթերից և եթ․ յետ որոյ դադարի դաշն ընկերութեան ։ Այսպիսի դիպուածք թէ զիարդ նշանակելիք իցեն 'ի հաշուեմատենի, կարգեսցուք յառաջիկայդ ։

Գիտասցուք թէ միաբանեալ քո ընդ Արշաւրայ՝ կամեցար դու ինքն գնոյ առնուլ զՄետաքսամթերս, այսու դաշամբ, զի և Արշաւիր վճարեսցէ զկէս արժէիցն, և լիցի հաղորդ հաւասարաբաժին շահու և վնասուն, որ 'ի մթերից անտի ։ Արդ՝ 'ի գնելն զմետաքսն պարտ է 'ի հաշուեմատենիդ կարգել վասն նորա զառանձին հաշուեմատն մակագրութեամբս․ ՄԵՏԱՔՍԱՄԹԵՐՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ ԱՐՇԱՒՐԱՅ ։ Յայսմ հաշուեմատին զատելի է բաժինն, որ քեզ անկանի՝ և որ Արշաւրայ ( ծր․ 2 )․ զգումար արժէից այնր բաժնին, որ քեզ է անկաւոր՝ ունիս նշանակել 'ի պարտիս նոյն հաշուեմատին՝ պարտատէր առնելով զվաճառող մետաքսին, եթէ մթերքն իցեն գնոյ առեալք ամսապայման ժամանակաւ 'ի վճարումն․ ապա թէ առօրին վճարեալ իցես զգինն, պարտատէր լինի Դրամարկղն կամ այն մթերք, յորոց վճարեցաւն ( ծր․ 4 ) ։ Իսկ զգումար արժէից երկրորդ բաժնին նշանակելի է 'ի պարտիս Արշաւրայ, և 'ի պահանջս վաճառողին, կամ այնր տեղւոյ և մթերից, յորոց վճարեալ իցէ․ ըստ նախագրելոյդ ( ծր․ 4 ) ։ Նոյնպէս և կարևոր ծախքն որ 'ի պէտս նաւակի, բեռնակրաց, կշռոց, միջնորդի, և այլն, առ հասարակ նշանակելի են 'ի պարտիս մետաքսին, և 'ի պահանջս այնոցիկ, յորոց ծախեալք իցեն ( մժթ ) ։ Իսկ թէ Արշաւիր հատուսցէ քեզ զգումար դրամոց բաժնի իւրոյ, օրէն է յայնժամ պարտական նշանակել զԴրամարկղն, և պարտատէր զԱրշաւիր ( ծր․ 4 ) ։

մխթ․ Ի վաճառելն զմետաքսամթերսն օրէն է միշտ պարտատէր նշանակել զհաշուեմատն Մետաքսամթերից Ընկերութեամբ Արշաւրայ․ և եթէ գնողն առօրին վճարեալ իցէ զարժէսն՝ դրամովք կամ այլով մթերիւք վաճառաց, յայնժամ պարտական նշանակելի է տուեալն նորա 'ի հատուցումն գնոյ առեալ մետաքսին ( ծր․ 4 )․ իսկ եթէ ամսապայման ժամանակաւ ունիցի վճարել, պարտական նշանակելի է նոյն ինքն գնողն, յաւելլով առընթեր նորին անուանն, թէ * Վասն կիսոյ մասին դաշնակից է Արշաւրայ | ( մկ․ մէ ) ։

մծ․ Յաւարտիլ տուրևառութեանս՝ քանզի դադարի վախճան հաշուեմատինն մակագրելոյ * Մետաքսամթերք Ընկերութեամբ Արշաւրայ |, պարտ է փակել զայն․ հանելով նախ զծախսն յամբողջ գումարէ անտի դրամոց վաճառեալ մետաքսին, և ապա զկէս մնացեալ մաքուր դրամոյն նշանակեսցես 'ի պարտիս նոյն հաշուեմատին՝ պարտատէր առնելով զԱրշաւիր ։ Յետ յիշատակագրութեանցս քննեսցես եթէ պարտիք և պահանջք այնր հաշուեմատին զինչ զանազանութիւնս ունիցին 'ի միմեանց․ որով մարթասցիս 'ի միտ առնուլ զշահ կամ զվնասն՝ որ 'ի մթերից անտի, և փոխադրել 'ի հաշուեմատն նոցին ( մ ) ։ Իսկ թէ 'ի յիշատակագրութիւնն գտցի նշան ինչ յայտարար պայմանի հատուցման դրամոց վաճառեալ մթերիցն, (ըստ որում յայտ առնէ յաւելուած բանին առընթեր անուան գնողին, թէ * վասն կիսոյ մասին դաշնակից է Արշաւրայ |)․ յայնժամ օրէն է զԱրշաւիր պարտական նշանակել այնմ կիսաբաժնի, պարտատէր առնելով զհաշուեմատն մակագրեալ ՊԱՅՄԱՆԱՓԱԿ ՀԱՇԻՒ ԱՐՇԱՒՐԱՅ․ Արդ՝ նշանակելով ըստ ասացելոցս՝ ոչինչ այլայլութիւն լինի առանձնական հաշուեմատին Արշաւրայ ( ծր․ 5 )․ ինքնին 'ի յայտ գալով, թէ պահանջք նորա կարեն 'ի գլուխ ելանել, եթէ գնող մետաքսին հատուսցէ զդրամսն ։ Վասն որոյ 'ի հատուցանել անդ՝ օրէն է նախ պարտական նշանակել զԴրամարկղն, պարտատէր առնելով զգնողն վասն տուեալ դրամոցն․ և յետոյ պարտական գրելի է Պայմանափակ Հաշիւ Արշաւրայ, պարտատէր առնելով այնց դրամոց զառանձնական հաշուեմատն Արշաւրայ․ որով ստուգի հաշիւն այն, որ երբեմն ընդ երկբայութեամբ էր ( մկ ) ։

մխէ․ (1) ՀԱՇԻՒ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ։ Իտալ․ Conto in Participazione․ Գոնթօ ին փառթիչիփացիօնէ ։ Այսինքն՝ հաշիւ այնպիսի մթերից, յորում գտանի մասնակցութիւն ընդ ումեք՝ իբր հաշուընկեր և հաղորդակից լինել տուրևառութեան ։

մծա. Դիցուք և զայլ դիպուած ընդ հակառակս նախագրելոցդ. իբր զի՛ զոր վերագոյնդ համարեցաք, եթէ գնող մթերիցն դու ինքն էիր, և Արշաւիր եղև քո բաժանակից՝ վճարելով զկէս դրամոցն. արդ համարեսցուք՝ թէ նա ինքն Արշաւիր իցէ գնող, և դու կամեցցիս լինել նորին հաշուընկեր՝ վճարելով զկէս դրամոցն, նմանօրինակ դաշամբ հաւասարաբաժին մասնակցութեան շահու կամ վնասու՝ որ 'ի մթերից անտի: Յայս վիճակ դիպուածոյ պահելի է կարգս առաջնկայ: 'Ի հատուցանելդ Արշաւրայ զքո բաժին դրամոց՝ (զոր համարեսցուք 40000, դահեկանս). նշանակեսցես զԱրշաւիր՝ պարտապան տուեալ գումարին, պարտատէր առնելով զԴրամարկղդ (ծզ. 4). Յետոյ 'ի վաճառել Արշաւրայ զմթերսն, և 'ի հանել քեզ զբաժին շահուն, (զոր դիցուք թէ իցէ 3000, դահեկան), նոյն շահք նշանակելի են 'ի պահանջս վաճառմանց (մ), և 'ի պարտիս Արշաւրայ, որպէս և յայտ է:

մծբ. Յետին դիպուածս մարթի լինել և այլազգ, որ առաւել պարզ է և ընտրելագոյն քան զնախասացեալն: Յաւանդելդ 'ի ձեռս Արշաւրայ զգումար 40000, դահեկանացն կարգեսցես 'ի հաշուեմատենիդ զառանձնական հաշուեմասն ինչ այսպիսի վերնագրով. ՄԹՏԱՔՍԱՄԹԵՐՔ ԱՌ ԱՐՇԱՒՐԱՅ ՆՈՐԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ. և 'ի պարտիս այսր հաշուեմասին նշանակեսցես զգումար 40000, դահեկանացդ, պարտատէր առնելով զԴրամարկղդ (ծզ. 4): 'Ի գործադրութեան կանոնիս՝ յիշատակագրութիւն Օրհաշուին նշանակելի է այսպէս. * Մտաքսամթերք առ Արշաւրայ նորին ընկերութեամբ ‖ Առ Դրամարկղն՝ պղ, 40000. որք տուան նմա, զի և ինքն Արշաւիր դնելով զնոյնաչափ գումարս դրամոց, գնոյ առցէ զմտաքս՝ և վաճառեսցէ 'ի հաշիւ ընկերութեանս |: Արդ՝ 'ի վաճառել Արշաւրայ զմտաքսն, և 'ի տալ զքո բաժին 43000, դահեկանաց՝ ըստ նախագրելոցդ, Արշաւիր լինի պարտապան այնմ գումարի. պարտատէր լինելով հաշուեմասին մտաքսամթերիցդ (ծզ. 4). վասն որոյ յիշատակագրելի է յՕրհաշուին այսպէս. * Արշաւիր ‖ Առ Մտաքսամթերս որ առ Արշաւրայ նորին ընկերութեամբ՝ պղ, 43000, որ է իմ բաժին մաքուր 'ի ծախուց՝ վաճառմամբ մտաքսին ընդ ձեռն նորա |: Յետ այնորիկ 'ի կամիլն փակել զայն հաշուեմասն վաճառեալ մթերից, որովհետև նշանակեալ կայ պարտապան 40000, դահեկանաց, և պարտատէր՝ 43000, դահեկանաց, պարտ է զյաւելեալ 3000, դահեկանսն՝ որք կան 'ի պահանջս նորա, նշանակել և 'ի պարտիսն, պարտատէր առնելով զհաշիւ վաճառմանց (մ): 'Ի բացայայտութիւն իրացս՝ յիշատակագրութիւն Օրհաշուին նշանակելի է այսպէս. * Մտաքսամթերք առ Արշաւրայ նորին ընկերութեամբ ‖ Առ Հաշիւ Վաճառմանց պղ, 3000. որ է բաժինս 'ի շահուց մտաքսին |:

Ա.Ժ. Օրինակ:

մծգ. Դիցուք թէ առաքեցեր առ Տիգրան 'ի Պրուսա՝ 30000, դահեկանս, այսու պայմանաւ, զի և ինքն Տիգրան դնելով զնոյնաչափ գումար դրամոց, գնոյ առցէ զմթերս ինչ, և յուղարկեսցէ առ քեզ վաճառել 'ի հաշիւ ընկերութեան: Յընդունիլ Տիգրանայ զառաքեալ դրամսդ, վաղվաղակի եդ 'ի ճանապարհ 2000, լտերս մտաքսի, որոց բոլորագումար արժէիցն էր 62000, դահեկան: Զայս դիպուած բաժանեալ նախ 'ի պարզ մասունս իւր (ծզ. 2). պարտապան նշանակելի է Տիգրան 30000, դահեկանաց. պարտատէր առնելով զԴրամարկղն. յետոյ որովհետև առաքեալ դրամքդ հանդերձ վերայաւելեալ շահու այնր մտաքսին ժամանեն 'ի գումար 31000, դահեկանաց, օրէն է այսմ գումարի պարտապան առնել զհաշուեմասնդ մակագրեալ. ՄԹՏԱՔՍԱՄԹԵՐՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ ՏԻԳՐԱՆԱՅ ՊՐՈՒՍԱՑԻՈՅ. պարտատէր առնելով զնոյն ինքն զՏիգրան (ծզ. 4): Արդ 'ի վաճառել անդ զամբողջ մթերսն՝ պատրաստական դրամով, կամ ամսապայման ժամանակաւ, պարտ է պահել զնոյն կարգ և կանոն, զոր աւանդեցաք յաղագս նախընթաց դիպուածոյն (մխթ):

մծդ. Զնախագրեալ դիպուածդ կարգեսցուք այլով կերպարանաւ. համարելով թէ Տիգրան Պրուսացի առաքեալ իցէ առ քեզ զգումար 40000, դահեկանաց, զի և քո յաւելլով 'ի նա զնոյնաչափ գումար դրամոց, գնոյ առցես զմտաքսամթերս և յուղարկեսցես առ նա վաճառել 'ի հաշիւ ընկերութեան: 'Ի ժամանել դրամոցն Տիգրանայ 'ի ձեռս քո, նշանակեսցես զայն 'ի պարտիս Դրամարկեղ, և 'ի պահանջս Տիգրանայ (ծզ. 4). Իսկ 'ի գնելն և յուղարկել առ նա զմտաքսամթերսն 80000, դահեկանաց, պարտատէր նշանակեսցես զվաճառոցն մթերից, եթէ ամսապայման ժամանակաւ վճարելի իցեն դրամքն. և կամ զԴրամարկղն, եթէ առօրին վճարեալ իցես զդրամսն. որոց 40000, դահեկանքն նշանակելի են 'ի պարտիս Տիգրանայ, և մնացեալ

40000 , դահեկանք 'ի պարտիս հաշուեմասին մակագրելոյ ՄԵՏԱՔՍԱՄԹԵՐՔ ԱՌ ՏԻԳՐԱՆԱՅ ՆՈՐԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ ։

Աւելոր է համդիպիլ, զի յուղարկելի վաճառամթերքն առ ժամանակ ինչ կացցեն 'ի մթերա֊նոցդ՝ մինչև գյաջողութիւն առթի գնելոյ 'ի ճանապարհ ։ Այսպիսի դիպուածս օրէն է 'ի գնել անդ զմթերսն կարգել 'ի հաշուեմատենիդ զառժամանակեայ հաշուեմասն ինչ, այսպիսի մակա֊գրութեամբ · ՄԵՏԱՔՍԱՄԹԵՐՔ ՅՈՒՂԱՐԿԵԼԻՔ Ի ՊՐՈՒՍԱ, և 'ի պարտիս այսր հաշուե֊մասին նշանակելի են 80000 , դահեկանք արժէից նորա , պարտատէր առնելով զդրամարկղն և կամ զվաճառող մթերիցն ըստ նախագրելոցս ։ Զայս հաշուեմասն պարտ է փակել 'ի ժամ յու֊ղարկելոյ զմթերսն 'ի Պրուսա · պարտատէր առնելով զնոյն հաշուեմասն 40000 , դահեկանաց , և պարտապան զՏիգրան ։ Յետոյ պարտապան նշանակելի է և ս 40000 , դահեկանաց հաշուեմասն մակագրեալ ՄԵՏԱՔՍԱՄԹԵՐՔ ԱՌ ՏԻԳՐԱՆԱՅ ՆՈՐԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ ։

մծե · Ի վաճառել Տիգրանայ զյուղարկեալ մթերսդ , և 'ի ծանուցանել քեզ զբաժինդ մա֊քուր 'ի ծախուց դահեկանս՝ 45000 , օրէն է նշանակել զՏիգրան՝ պարտապան այնր գումարի՝ պարտատէր առնելով զհաշուեմասն մակագրեալ , * Մետաքսամթերք առ Տիգրանայ՝ նորին ըն֊կերութեամբ | ( մծը ) · և յետոյ պարտ է փակել զնոյն հաշուեմասն · և քանզի 'ի պահանջս նորա զտանին առաւելեալ 5000 , դահեկանք , օրէն է զայն գումար յաւելուլ և 'ի պարտիս նորա · պարտատէր առնելով այնմ զՀաշիւ Վաճառմանց ( մծը ) ։

## Յաղագս Վճարից ։

մծզ · Վճարք կոչի՝ ոչ միայն հատուցումն բոլորական պարտեաց , այլև երբեմն հաճելով զկամս պարտատեառն մասամբ ինչ զեղչելն 'ի պարտուց , կամ նուազելն զվճարելի գումար պարտեաց ։ Զորօրինակ՝ եդեալ թէ ունիցիս Աբգարայ պարտիս ինչ՝ 10280 , դահեկանաց · 'ի հատուցանել անդ զդրամսն՝ պատճառաւ ինչ հաճեցուցեալ զմիտս նորա , ետուր 10000 , դահեկանս և եթ · յոր դիպուած նուազելն կամ հատանել 'ի բոլորական գումարէ անտի դահեկանս 280 , Վճարք անուանի , զոր Իտալացիք Աբբուօնօ ասեն · ըստ որում պարտատէրն շա֊տացեալ ընդունելութեամբ 10000 , դահեկանաց , վճարեալ համարի և զզեղչեալ 280 , դահե֊կանսն ։ Արդ՝ զայսպիսի հատուածեալ դրամս , որք կանխաւ համարին նշանակեալ 'ի հաշուեմա֊սին պարտատեառն , օրէն է բառնալ 'ի հաշուէ նորա , և յաւելուլ 'ի Դրամարկղուդ ։ Զոր֊օրինակ՝ զդրամսն 280 , դահեկանաց , զորս հատեր յԱբգարայ՝ առ բառնալոյ 'ի պահանջից ան֊տի նորա , որ է 10280 , դահեկան , պարտ է զհատեալն զայն 280 , դհկ , նշանակել 'ի պարտիս նորին Աբգարայ՝ պարտապան առնելով զնա ինքն զԱբգար , և պարտատէր զԴրամարկղուդ , յոր յա֊ւելան հատեալ դրամքն ։ Այլ քանզի դրամարկղուս վաճառականին բաժանեալ կայ 'ի զանազան հաշուեմասունս իւրաց , նմին իրի պարտ է և վասն այսորիկ զեղչեալ դրամոց 'ի հաշուեմատենին կարգել զառանձին հաշուեմասն՝ մակագրութեամբս ՀԱՇԻՒ ՎՃԱՐԻՑ , որ համարի մասն ինչ դրամարկղոյ՝ յաւելեալ կամ նուազեալ 'ի պակաս հատուցմանէ պարտեաց ։

Եթէ փոխան Աբգարայ դու ինքն լինիցիս պարտատէր , 'ի շնորհել նմա զդրամսն 280 , դա֊հեկանաց , օրէն է զայն գումար նշանակել 'ի պարտիս Հաշուի Վճարից , և 'ի պահանջս Աբգա֊րայ , որով հաշուեմասն այն լինի իբր դրամատեղի շահուց և վնասուց , յորմէ 'ի հատուցանել ու֊մեք դրամս՝ առաւելու · և յընդունելն յայլոց զայսպիսի զեղչեալ հատուցումն՝ սովոր է պակասել ։

## Յաղագս Բաշխից ։

մծէ · Բաշխ (1) ասի հատուցումն , որ սովոր է լինել 'ի մէջ վաճառականաց՝ յորժամ ակամայ և անկարծելի դիպուածով վրիպակ ինչ սպրդեալ իցէ 'ի տուրևառու֊թիւնս մթերից ։ Զորօրինակ՝ եդեալ թէ վաճառեցեր Տիգրանայ զմթերս Գահվէի արժողու֊թեամբ 5200 , դահեկանաց · զորոյ և զկարևոր յիշատակագրութիւնս նշանակեցեր 'ի հաշուեմա֊տենիդ · և յետ աւուրց ինչ եկեալ առ քեզ Տիգրանայ ծանուցանէ զվրիպակն , զոր գտեալ է 'ի

մծէ · (1) ԲԱՇԽ , որ է տուրք , պարգև , շնորհք ։ Իտ · Bonificazione · Պօնիֆիգացիօնէ ։ Գծ · Պագշիշ · պաղշշ֊լամիշ ։ Հատուցումն իբր պարգև համարի · սակայն ըն֊րալէս ուղղագրութիւն վրիպակի է ։

կշիռս դատարկ (2) արկեղաց գահվէին. զի զծանրութիւն նոցին փոխանակ հաշուելոյ 152, լիտր՝ եղեալ է 102. վասն որոյ հարկ է բաշխել և հորդհել նմին զարժէս 50, լիտր գահվէին, որ առնէ դահեկանս 175։ Արդ ուղղելոյ զայսպիսի վրիպակս պարտ է նախ քննել, թէ վաճառեալ գահվէն իցէ քո սեփական մթերք, թէ յանձնարարութիւն ինչ այլոց. և թէ յետ վաճառելոյ զայն՝ փակեալ իցես զհաշուեմատն, թէ տակաւին բաց կայ։ Սակայն որպէս և իցէ՝ Տիգրան անպատճառ նշանակելի է պարտատէր 175, դահեկանաց, պարտապան լինելով մթերից գահվէին՝ եթէ չիցէ փակեալ հաշուեմատն նորա. իսկ եթէ փակեալ է, և մթերքն քո իցեն, պարտապան նշանակելի է Հաշիւ Վաճառմանց, ուր փոխադրեալ կան շահք կամ վնասք 'ի մթերից անտի գահվէին (Տղ ը. ժ)։ Իսկ թէ վաճառեալն՝ յանձնարարութիւն իցէ օտարի, յայնժամ պարտապան գրելի է հաշուեմատն այնր անձին, որոյ իցեն մթերքն. զի հարկաւ անդր փոխադրեալ ես զգրամս վաճառելոյն (մ҃ը)։

մծը. Հնար է թէ և դու ինքն առնուցուս յայլոց բաշխս 'ի պատճառս գնոյ առեալ մթերից. յայնժամ պարտ է պահել զնոյն կանոնն ներհական կարգաւ. այսինքն՝ պարտապան նշանակելով զվաճառողն մթերից, և պարտատէր՝ զայն տեղի կամ զդրամարկղն, զոր ցուցանէ դիպուածն։

## Յաղագս Շահատուութեանց և Շահառուութեանց։

մծթ. Շահատուութիւն և Շահառութիւն (1) դրամոց սովորական ինչ է 'ի վաճառականս, որք ըստ դէպս իրաց կարօտեալ ձեռնտուութեան միմեանց՝ դրամս տան և առնուն, օրինաւոր դաշամբ շահավճար լինելոյ։ Զտուչութիւն և զընդունելութիւն շահուց, թէ զիարդ պարտ իցէ նշանակել 'ի հաշուեմատենի, ցուցցուք յառաջիկայդ։

Դիցուք թէ վստահացեալ քո 'ի հաւատարմութիւն Գեղամայ՝ ետուր 'ի ձեռս նորա դահեկանս՝ 100000, այսու դաշամբ, զի ցորչափ ժամանակս կացցեն դրամքն առ նմա, ամ ըստ ամէ հատուսցէ քեզ շահս 6 առ %։ Արդ՝ սակս այսր Շահառութեան պարտ է 'ի հաշուեմատենիդ կարգել զառանձին հաշուեմատն մակագրեալ ԳԵՂԱՄ ՀԱՇԻՒ ՇԱՀԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ։ Յայս հաշուեմատն չէ օրէն խառնել զհաշիւս այլոց իրողութեանց, զորս հնար է քեզ ունել ընդ Գեղամայ. այլ նշանակելի են այնոքիկ յիւրում սեփական հաշուեմատին։ Իսկ կարգ յիշատակագրութեանց Շահառութեանս դասաւորելի են այսպէս։ 'Ի տալդ նմա զգումար 100000, դահեկանաց, օրէն է նշանակել զայն 'ի պարտիս Գեղամայ Հաշիւ Շահատուութեանն. պարտատէր առնելով զԴրամարկղդ (ծ҃գ. կ)։ Յետոյ 'ի լրանալ երկոտասան ամսոց՝ Գեղամ պարտապան լինի քեզ 6000, դահեկանաց 'ի պատճառս լրացեալ տարեկան շահուն. և զի այն դրամք տակաւին չեն անցեալ 'ի հաշիւն իբր պարտիք Գեղամայ. վասն որոյ 'ի կամիլն նշանակել և զայն 'ի հաշուեմատենի, հարկ է գտանել զպարտատէր ոք ընդ որում կապեսցին պարտիքն Գեղամայ՝ 6000, դահեկանաց. արդ՝ յայսպիսի դիպուածս պարտատէր նշանակելի է Դրամագլուխդ, յոր ունին յաւելուլ ընկալեալ դրամքդ։ 'Ի նշանակ յայտարարութեան դրամագլխոյդ կարգեսցես 'ի հաշուեմատենիդ զնոր հաշուեմատն ինչ մակագրութեամբս ՀԱՇԻՒ ՇԱՀԱՌՈՒԹԵԱՆՑ. որ է ասել՝ Դրամագլուխ ինչ ստացեալ 'ի ձեռն շահու դրամոց։ Արդ՝ 'ի նշանակելդ զՀաշիւ Շահատուութեան Գեղամայ պարտապան 6000, դահեկանաց, պարտատէր արասցես զՀաշիւ Շահառութեանցդ։ Յետ այնորիկ 'ի հատուցանել քեզ Գեղամայ զդրամսն 6000, դահեկանաց, պարտապան նշանակեսցես զԴրամարկղդ, և պարտատէր զՀաշիւ Շահատուութեան Գեղամայ (ծ҃գ. կ)։ Եթէ այսու կարգաւ լինիցին յիշատակագրութիւնք, Գեղամ մնայ միշտ պարտապան վասն ընկալեալ դրամոցն 100000, դահեկանաց, և եղծանին միւս պարտիք 6000, դահեկանաց վասն շահուն, պարտատէր լինելով նորին իսկ Գեղամայ վասն վճարելոյ զդրամսն 6000, դահեկանաց. զորս թէ չհատուցանէր, մնայր պարտապան՝ ոչ միայն գլխոյ առեալ դրամոցն, այլ և տարեկան շահու նորա։

մծէ. (2) Չափ ծանրութեան դատարկ ամանոց վաճառեալ իրաց՝ առ իտալացիս կոչի Tara. Թարա. յորմէ և առ Թուրքս Տարա. որպէս և 'ի մեզ Տարայ. որ ըստ բուն նշանակութեանն յայտարար է ամանոյ։

մծթ. (1) Շահատուութիւն և Շահառութիւն յընդունելութենէ և 'ի տուչութենէ դրամոց պայմանաւ շահու, սովոր է յիտալացւոց՝ Censo. Չենսօ անուանիլ. որ է իբր դաշն ընկերական, որով դրամատուն լինի մասնակից պաղոյ՝ կամ շահու դրամոցն 'ի ձեռն աշխատութեան ընդունողին, որ զդրամսն վարէ 'ի գործ։ Իսկ տուչութիւնն որպէս և ընդունելութիւնն սովորաբար և անխտիր կոչի Prestanza. փռէսթանցա, որ է փոխ. տ҃ս. Նշանեն։

ՃԿ. Այսն կամիմք պահելի են՝ եթէ հարկ լինիցի և քեզ գումարս ինչ դրամոց առնուլ յումեքէ շահավճար պայմանաւ։ Օրինակ՝ եղեալ թէ փառնակ տուեալ իցէ քեզ 50000, դահեկանս, դաշամբ ամ ըստ ամէ շահավճար լինելոյ 6 առ %։ Յընդունիլ անդ զդրամն պարտապան նշանակեսցես զԴրամարկղդ 50000, դահեկանաց, պարտատէր առնելով զհաշուեմանդ մակագրեալ * Հաշիւ Շահաւութեան փառնակայ |։ Յետոյ 'ի լնանալ երկոտասան ամսոց օրէն է զհաշուեմանդ՝ զոր ունիս ընդ մակագրութեամբս * Հաշիւ Շահատութեան |, պարտապան գրել 3000, դահեկանաց, պարտատէր առնելով զՀաշիւ Շահաւութեան փառնակայ։ Հուսկ յետոյ 'ի վճարելդ զշահ 3000, դահեկանացն՝ պարտապան նշանակեսջիր զփառնակ, պարտատէր առնելով զԴրամարկղդ։

## Յաղագս Շահարժէից կամ Դրամաշահոյ։

ՃԿԱ. Շահարժէք կամ Դրամաշահք [1] անուանեմք զօգուտն կամ զշահ, որ լինի յարժէից դրամոյ։ Օրինակ՝ եղեալ թէ ոք ունիցի զոսկեդրամն ինչ կամ զարծաթադրամն, որք քան զներքին և զիսկական արժէսն առաւելագոյն գնով վաճառեսցին կամ փոխանակեսցին. արդ՝ շահն այն վերայաւելեալ արժէից դրամոյն կոչի Շահարժէք, զոր յարդ դրամոցն ինքնին ստանայ. և երբեմն ևս նուազելով գնոյն կորուսանէ։ Նմանօրինակ շահք սովորաբար լինին 'ի դրամն Սեղանոյ փոխանակութեան, և 'ի Դրամաթուղթս (ՃԺԸ. ՃԻԷ. ՃԸ). զորոց զկարեւոր տեղեկութիւնս՝ քանզի չեղև մեզ կարգել առ նոսին, ասասցուք աստանօր թէ զիարդ յիշատակագրելիք իցեն 'ի հաշուեմատենի։

Դնիցուք թէ գնոյ առեր 100, լիրայս Սեղանոյ փոխանակութեան՝ վճարելով 8000, դահեկանս, և յետոյ յաջողեցաւ քեզ վաճառել զայն 8400, դահեկանաւ, յորմէ շահեցար 400, դահեկանս։ Արդ՝ յայսմ գործառնութեան պարտ է քեզ զդրամն Սեղանոյ փոխանակութեան համարիլ իբր զմթերս ինչ, որոց 'ի վաճառելն խաղառ՝ զօրօրինակ հարկ է փակել զհաշուեմատունս նոցա, և զօգուտ կամ զվնաս որ 'ի մթերից անտի՝ փոխադրել 'ի հաշուեմատն Վաճառմանց (ԺԲ), նմանապէս և 'ի Սեղան փոխանակութեան 'ի վաճառելն զոր ունիսդ անդ, պտղաբերեալն 'ի նոցանէ շահ կամ վնաս՝ փոխադրելի է յառանձնական հաշուեմատն ինչ մակագրեալ՝ ՇԱՀԱՐԺԷՔ. որ յայտ առնէ զաճումն կամ զնուազումն Դրամագլխոյդ 'ի պատճառս առաւելութեան և նուազութեան գնոյ փոխանակեալ դրամոցն. վասն որոյ նոյն կարգ և կանոն պահելի է 'ի սմա, որինչ միանգամ աւանդեցաւ յաղագս վաճառմանց (ԺԲ)։ Զոր ասացաքս վասն Սեղանոյ փոխանակութեան՝ ունիս իմանալ և յաղագս դրամաթղթոց՝ որպէս և փոխանակագրոց։

ՃԿԲ. Նա տեղեաւս յայտ առնեմք, զի 'ի պատճառս գնելոյ և վաճառելոյ զնախադրեալ արժողութիւնս դրամոց՝ սովորութիւն է մտանել և միջնորդի, (ըստ որում լինի և 'ի գործադրութիւնս փոխանակագրոց). վասն որոյ հարկ է տալ նմա միջնորդչէքայ զնման ինչ դրամոյ, կամ բաժին մի 'ի հարիւրոյ։ Արդ՝ եթէ դիպեսցի քեզ կատարել զայն գործառնութիւն վասն բարեկամիդ, զմիջնորդչէքայն նշանակեսցես 'ի պարտիս նորա. և 'ի պահանջս միջնորդին (ԾԳ. Կ). իսկ եթէ գործառնութիւնն քո իցէ՝ պարտատէր նշանակելի է Միջնորդն, և պարտապան հաշուեմատն Շահարժէից. զի 'ի պատճառս նորա եղեն ծախքն։

ՃԿԳ. Հարժանելի աշխատութիւն է վաճառականաց յիշատակագրութիւնք միջնորդչէից, յորժամ խուռն յաճախեն գործառնութիւնք 'ի պատճառս Շահարժէից, փոխանակագրոց և այլոց սոցին նմանեաց, յորս սովոր են մտանել և միջնորդք. արդ՝ 'ի դիւրութիւն աշխատութեանս և յանդիմաթ կատարումն՝ պահելի է կարգս առաջիկայ։ Ի կատարելդ զգործառնութիւնսն՝ վաղվաղակի զատեսցես զոր առ քեզ, և զոր այլում անկք իցեն միջնորդչէայք. զառ քեզ պատշաճեալսն թողլով անյիշատակս, նշանակեսցես միայն զօտարացն՝ պարտապանս առնելով զնոսին, և պարտատէր զհաշուեմատն Շահարժէից։ Յետոյ 'ի բերել առ քեզ միջնորդին զհաշիւ պահանջից իւրոց՝ այն է միջնորդչէիցն. առանց քննելոյ թէ որչափ ինչ 'ի քո համարի իցէ, և զինչ օտարի, բոլորեցուն միանգամայն առնելով զմի յիշատակագրութիւն, պարտապան գրեսջիր զհաշուեմատն Շահարժէից, և պարտատէր զՄիջնորդն։ Այսու յիշատակագրութեամբ ամե-

ՃԿԱ. (1) ՇԱՀԱՐԺԷՔ կամ ԴՐԱՄԱՇԱՀ. Իտալ. Aggio della Valuta. Աճճիօ տէլլա Վալուդա։ Այն է աճումն և յաւելուած քան զներքին արժէս դրամոց, յորմէ լինի օգուտ փոխանակողին։ Սովորական է շահս 'ի ձեռն քաղաքս առեւտրութեանց։

նեքին առ հասարակ լինին պարտապանք միջնորդչեկին նոցին անկ եղելոց. և զի կանխաւ օտարքն նշանակեալ կան պարտապանք առ հաշուեմանն Շահարժէկից, վասն որոյ յաւելեալն 'ի նոցանէ, որ է քո բաժին, միայ պարտք Շահարժէկից. և միջնորդն միով յիշատակագրութեամբ լինի պարտատէր իւրոց իրաւանց կամ հասից աշխատութեանն։

## Առանձին փոխելիք յաղագս Դրամոց (1)։

մկզ. Ըստ անվրէպ համարակալութիւն դրամոցն, որոց արժէք չեն հաստատուն՝ այլ սովոր են երբեմն նուազիլ, և երբեմն առաւելուլ, կարեւոր է վաճառականին համարիլ զայնս իբր մթերս վաճառաց, և առ մի մի 'ի նոցանէ որոշել զառանձին հաշուեմասունս, առ 'ի ճանաչել նոքօք, թէ մեք 'ի նոցունց առաւել շահաբերք իցեն, և մեք փնասաբերք։ Յաճախութիւնք հաշուեմասանցս թէպէտ կարի տաղտկալիք են և ծանր բեռնաւորութիւն հաշուեմատենից, սակայն և կարեւորք յոյժ, մանաւանդ 'ի սակս տուրեւառութիւնս այնպիսի դրամոց։ Օրինակ իմն՝ դիցուք թէ Անիբաղ 'ի վճար 3200, դահեկան պարտուցն տուեալ իցէ քեզ զերիս տեսակս դրամոց, այսինքն՝ Ոսկի Վենետիկեան, 100, 'ի գին 1500, դահեկանաց. Արծաթագրոշմ արծաթիս՝ 150, 'ի գին 1000, դահեկանաց. Սինադրոշմ արծաթիս՝ 100, 'ի գին 700, դահեկանաց. որոց բոլորագումարն առնէ 3200, դահեկան։ Արդ վասն ընկալեալ դրամոցս այսոցիկ կամելով քո 'ի հաշուեմատենիդ պարտատէր նշանակել զԱնիբաղ, հարկ է առնել զերրեակ յիշատակագրութիւնս, որովք նախ պարտապան նշանակեսցի հաշուեմասն Ոսկւոյ. յետոյ Արծաթադրոշմ արծաթի. և ապա Սինադրոշմի. և թէ հատուցումն Անիբաղայ եղեալ էր առաւելագոյն եւս տեսակաւ դրամոց, օրէն էր ըստ թուոյ տեսակի նոցա առնել և զառանձին յիշատակագրութիւնս։ Արդ թէ այսմ աշխատութեան հեղգասիրտ լինելով վաճառականին՝ եթէ զբոլորագումարն 3200, դահեկանաց միանգամայն միով յիշատակագրութեամբ կամեսցի նշանակել՝ պարտապան առնելով զԴրամարկղն, և պարտատէր զԱնիբաղ, վրիպակ մեծ գործէ. քանզի հնար է՝ թէ յետ ամսոց ինչ պակասելով գնոյ ընկալեալ դրամոցն, վարեսցին այնոքիկ 'ի տեղի 3000, դահեկանաց. և զի Դրամարկղն կանխաւ նշանակեալ կայ պարտապան 3200, դահեկանաց, 'ի պակասիլն անտի 3000, դահեկանացն՝ կարծի թէ տակաւին 'ի Դրամարկղն կայցեն 200, դահեկանք, որ է սուտ։ Արդ՝ վաճառականն կանխատես գոլով այսմ գիպուածոյ 'ի տալն կամ յընդունիլ զայնպիսի դրամս, եթէ կարասցէ գտանել հնարս ինչ անփոփոխ պահպանութեան գնոյ դրամոցն հաւաքելոց 'ի դրամարկեղ, զերծանի յամենայն դժուարութեանց, և հաշիւքն լինին անսխալք։

մկէ. Հնարք միօրինակ պահպանութեան գնոյ դրամոցն 'ի Դրամարկեղ, կարէ լինել այսպիսի։ Դիցուք թէ Աբգար ետ քեզ զոսկի մի Վենետիկեան՝ 'ի գին 17, դահեկանաց. և զմի Սինադրոշմ արծաթի՝ 8, դահեկանաւ. արդ՝ յընդունիլ անդ զդրամսդ, առեալ զգումար երկոցունց միանգամայն՝ նշանակեսջիր միով յիշատակագրութեամբ դհ̅, 25. պարտապան առնելով զԴրամարկղդ, և պարտատէր զԱբգար (ծզ. 4)։ Յետոյ զընկալեալ ոսկիդ կամելով յարմարել 'ի գին 15, դահեկանաց, որպէս և զՍինադրոշմի 'ի դահեկան 7. (համարեալ թէ նոքին իցեն իսկական արժէքն), օրէն է վերստին զնոյն Դրամարկղ նշանակել պարտատէր 3, դահեկանաց. և զի չէ հնար լինել պարտատեառն առանց պարտապանի (ծզ. 1). վասն որոյ պարտապան նշանակելի է այնմ զհաշուեմասն Շահարժէկից (մկա). որով փնաս դրամոյ 3, դահեկանացն բեռնաւորի 'ի Դրամագլուխն, որոյ երեւեցուցիչ է հաշուեմասն շահարժէկից (մկզ)։ Ի ձեռն այսր յետին յիշատակագրութեան պարտիք Դրամարկեղ՝ որ էր 25, դահեկան, պակասի և մնայ 22, դհ̅։ Յետ այնորիկ եթէ զնոյն ոսկի՝ որպէս և զսինադրոշմի արծաթի դրամ դիպեսցի քեզ վարել 22, դահեկանաւ, 'ի նշանակելն պարտապան զառեալ մթերսդ, և պարտատէր զԴրամարկղն վասն 22, դահեկանաց, արտաքոյ մնան 3, դահեկանքն ևեթ՝ նշանակեալք 'ի պարտիս Շահար-

մկզ. (1) ԴՐԱՄԴ անուն՝ հասարակ է ամենայն փողոյ՝ մեծի և փոքու. եթէ յարծաթոյ իցէ և թէ յոսկւոյ կամ 'ի պղնձոյ. զոր խոսլացիք հանրական անուամբ կոչեն Moneta. Մոնէթա, առեալ 'ի բառէն Moneo. Մոնէօ, որ է ազդել, յայտնել, ցուցանել, յիշատակել. ըստ որում դրամն ծանուցանէ զթագաւորն, յորոյ անուն դրոշմեալ կայ, և է յայտարար իւրոց արժէից։

Իսկ առ մեզ՝ Դրամն, որովհետև անուն է և կշռոյ կամ ծանրութեան. մարթ է համարել՝ թէ 'ի սահմանեալ չափոյ անտի և կշռոյ որով զփողսն հատանէին, կոչեցաւ Դրամ. այսինքն՝ 'ի Տրամոյ ծանրութեան նորին. ըստ որում յայտ առնեն և բառքս Երկդրամեան. Չորեքդրամեան, որ է կրկինն և չորեքկինն միոյ դրամոյ։

ժեից, որով խմանաս զկորուստ 3, դաՀեկանացն ։ Իսկ եթէ ըստ ընկալեալ արժէիցդ 25, դաՀեկանաւ վարեսցես զայն դրամն, օրէն է յայնժամ նախ առաջին զգնոյ առեալդ պարտական նշանակել առ Գրամարկղն, և ապա յաւելուլ զպարտիս ինչ 3, դաՀեկանաց 'ի վերայ նորին Գրամարկեղ, պարտատէր առնելով զՀաշուեմամն Շահարժէից. որով եղծանին նախանշանակեալ պարտիքն, որք եղան 'ի վերայ նորա. և լինիս Հասու՝ թէ 'ի տուրևառդ ոչ շաՀ ունիս, և ոչ վնաս ։

Կարէ ևս պատաՀել՝ զի ընկալեալ դրամքդ առաւելագոյն գնով քան զառեալդ վարեսցին. զորօրինակ՝ Համարեալ թէ ոսկին և սփռնադրոշմ արծաթին առեալքն 25, դաՀեկանաւ, վարեցան 27, դաՀեկանօք. յայնժամ զգնոյ առեալ մթերոյդ 'ի նշանակելն պարտական, զԳրամարկղն արասցես պարտատէր. յետոյ վասն 2, վերյաւելեալ դաՀեկանացն պարտական նշանակեսցես զնոյն Գրամարկղն՝ պարտատէր առնելով զՀաշուեմամն Շահարժէից. որով եղծանին ոչ միայն նախընթաց պարտիք 3, դաՀեկանացն, այլև Գրամարկղն լինի պարտատէր յաւելեալ 2, դաՀեկանացն, որք շաՀեալ եղեն 'ի նոյն դրամոց ։

մկդ. Ի նախագրելոցդ ինքնին գուշակի, թէ յընդունիլ ուրուք զդրամն ըստ ներքին և իսկական արժեից՝ չէ օրէն առնել յիշատակագրութիւնս ինչ. զի յայնպիսի դիպուածս ընդունող դրամոցն փոխանակէ զարծաթ ընդ ոսկւոյ, կամ զոսկի ընդ արծաթոյ ։ Սակայն եթէ առնուցու առաւելագոյն գնով քան զարժէս դրամոցն, որովՀետև նուազ ընդունի, և շատ վճարէ, պարտատէր նշանակելի է Գրամարկղն, յորմէ ելանէ վերյաւելեալն. և պարտական՝ Հաշուեմամն Շահարժէից, որում անկ է լնուլ զվնաս պակասութեան այնպիսի դրամոց ։ Զորօրինակ՝ եղեալ թէ իսկական արժէք Վենետիկեան ոսկւոյ իցեն 15, դՀք. եթէ ոք նովին գնով առնուցու զայն, չէ պարտ առանձին յիշատակագրութիւն առնել. զի առեալ ոսկին Համազօր է ընդ տուեալ արծաթոյն. Իսկ եթէ առցէ 'ի գին 17, դաՀեկանաց, օրէն է զառաւելեալ 2, դաՀեկանսն նշանակել 'ի պարտիս Շահարժէից, և 'ի պաՀանջս Գրամարկեղ ։ Այսպէս յայտ է յասացելոցս, զի թէ ոք առնուցու զոսկին 15, դաՀեկանաւ, և վարեսցէ 'ի տեղի 17, դաՀեկանաց, Հարկ է զյաւելեալ 2, դաՀեկանսն նշանակել 'ի պարտիս Գրամարկեղ և 'ի պաՀանջս Հաշուեմատենին Շահարժէից, որում անկ է գրաւել զշաՀս, որք լինին 'ի դրամոց ։

## Յաղագս Տանց Բնակութեան ։

մկե. ՇաՀեկանութիւն բնակարանաց նմանն է այլոց վաճառաց. զի օգուտք և վնասք զինչ և իցէ մթերից սովոր են 'ի յայտ գալ, յորժամ իսպառ վաճառեսցին մթերքն. բայց պտղաբերութիւնք տանց բնակութեան երևին փութով 'ի տալն զնոսին 'ի վարձու ։ Եթէ վաճառական ոք գնոյ առնուցու զտուն առ 'ի վերստին վաճառել, պարտ է զայն տուն Համարել իբր զվաճառամթերս ինչ. և վարել նովին կանոնաւ, զոր աւանդեցաք յաղագս Գնուածոց և Վաճառմանց ։ Իսկ եթէ գնեսցէ առ 'ի տալ 'ի վարձու, պարտ է նմա յիւրում Հաշուեմատենին կարգել զառանձին Հաշուեմամն ինչ՝ մակագրութեամբս ՀԱՇԻՒ ՎԱՐՁԱՏԱՆՑ. յորում մարթասցի տեսանել զշաՀ և զվնաս 'ի տանէ անտի, ըստ յիշատակագրութեանցն, զոր ցուցցուք յառաջիկայդ ։

մկզ. Դիցուք թէ 'ի թաղն նորաշէն՝ գնոյ առեր զտուն բնակութեան. որոյ արժէք եղեն քեզ 25000, դաՀեկան, յետոյ ետուր զայն 'ի վարձու Ատամոյ՝ դաշամբ ամըստ ամէ վճարելոյ քեզ 1800, դաՀեկանս 'ի վարձ ։ Արդ՝ 'ի գնել զտունն պարտ է նախ՝ զգումար 25000, դաՀեկանացն նշանակել 'ի պարտիս Հաշուեմատենին մակագրելոյ ՏՈՒՆ 'Ի ՆՈՐԱՇԷՆ ԹԱՂՆ. պարտատէր առնելով նմին զԳրամարկղդ, յորմէ բարձան վճարեալ դրամքն (ծք. 4) ։ Յետոյ 'ի լրանալ երկոտասան ամսոց՝ պարտական նշանակելի է Ատամ վասն միամեայ վարձուց տանն. և զի պարտիք Ատամոյ ունի կապել ընդ ումեք պարտատեան, վասն որոյ պարտատէր լինի մասնաւոր Հաշուեմամն՝ մակագրեալ ՀԱՇԻՒ ՎԱՐՁԱՏԱՆՑ. որ և Համարի իբր դրամագլուխ. որոյ աճումն՝ սովոր է լինել 'ի վարձուց տանն, և նուազումն՝ 'ի ծախուց որ 'ի պէտս շինուածոյ տան ։ Արդ՝ 'ի Հատուցանել քեզ Ատամոյ զվարձս տանն՝ 1800, դաՀեկանս, նշանակեսցես զնա ինքն զԱտամ պարտատէր տուեալ դրամոցն, պարտական առնելով զԳրամարկղն, յոր եղան ընկալեալ դրամքն ։

մկը. Ամենայն ծախք, որք ՀետզՀետէ սովոր են լինել 'ի նորոգութիւն շինուածոյն, չէ օրէն նշանակել 'ի Հաշուեմամն այնր Տան, ապա թէ ոչ՝ արժէք նորա ծանրանան քան զչափն առաւելեալ. այլ պարտ է յիշատակագրել 'ի Հաշուեմամն Վարձատանց. պարտական առնելով զայն,

և պարտատէր զՊրամարկղն · որով 'ի յայտ գայ՝ եթէ վարձք տանն մըչափ առաւելուն քան ըզծախսն, և կամ ծախքն քան զվարձս նորա ։

## Յաղագս Նաւուց ։

մհ. Ի նախընթաց հատուածդ զորինչ միանգամ աւանդեցաք յաղագս տանց, զնոյն պարտ է իմանալ և վասն նաւուց · զորս ստանայ ոք առ 'ի շահել նոքօք ։ Օրինակ՝ եղեալ թէ գնոյ առեր զնաւ մի Մուկաւէտ անուն՝ 228000, դահեկանաւ, և վաղվաղակի ուղևորեցեր զայն ընդ Լոմպառտօ նաւապետին՝ խոստանալով նմա վարձս ամըստ ամէ 3600, դահեկանս, և ըստանձնելով 'ի քեզ զամենայն ծախս նաւուն և զնաւաստեացն ։ Արդ՝ 'ի ստանալդ զնաւն՝ օրէն է 'ի հաշուեմատենիդ կարգել վասն նորա զատանձին հաշուեմատն, մակագրութեամբս, ՆԱՒՆ ՄՈՒԿԱՒԷՏ, յորոյ 'ի պարտիսն նշանակեսցես զգումար 228000, դահեկանացն, զոր ետուր 'ի գին նորա, պարտատէր առնելով զՊրամարկղդ, յորմէ ելին այն դրամք (ծր. 4)։ Յետոյ պարտ է կարգել և զայլ հաշուեմատն ընդ մակագրութեամբ ՀԱՇԻՒ ՆԱՒՈՂՉԷԻՑ · որոյ 'ի պարտիսն նշանակելի են ամենայն ծախք նաւուն և նաւաստեացն, պարտատէր առնելով զայն տեղւոյն, յորոց ելեալ իցեն դրամք ծախուցն ։ Յետ այնորիկ ամըստ ամէ 'ի լրանալ երկոտասան ամսոց՝ Նաւապետն նշանակելի է պարտատէր 3600, դահեկանացն խոստացելոց նմա 'ի վարձս, պարտապան առնելով զՀաշիւ Նաւողչէից · նոյնպէս և զՆաւապետն օրէն է նշանակել պարտապան դրամոց նաւողչէիցն, զորս հաւաքեալ իցէ յընթացս ուղևորութեան տարւոյն, պարտատէր առնելով զնոյն Հաշիւ Նաւողչէից · սակայն 'ի հատուցանել նաւապետին զհաւաքեալ նաւողչէայսն 'ի ձեռս քո, պարտապան նշանակելի է Պրամարկղն, և պարտատէր Նաւապետն վասն տուեալ դրամոցն ։

## Յաղագս Հաշուեդարձից ։

մհա. Հաշուեդարձ [1] կոչի յիշատակագրութիւնն սակս վարելոյ 'ի հաշուեմատեանս, որ ըստ դէպս իրաց սովոր է լինել 'ի հաշուեմատեանն ուրուք, առ 'ի զպարտիս նորա կամ զպահանջմն դարձուցանել և շրջել յայլոյ վերայ ։ Օրինակ՝ եղեալ թէ Յովսէփ ունիցի 'ի քէն պահանջս 1000, դահեկանաց, և յանձնէ քեզ տալ զայն 'ի ձեռս Բարսեղի յիւր հաշիւ, իսկ Բարսեղ՝ գոլով քեզ պարտապան բազմաթիւ դրամոց, կամակար հաճի, զի զայն 1000, դահեկանսն կալցես առ քեզ 'ի նուազումն պարտեաց իւրոց ։ Ահա յայսպիսի դիպուածս հարկ է վարել զյիշատակագրութիւնն Հաշուեդարձ անուանեալ, որով Յովսէփ նշանակելի է պարտապան իբր ընդունող դրամոցն առ 'ի քէն · և Բարսեղ պարտատէր իբր վճարող դրամոցն 1000, դահեկանաց (ծր. 4)։ Դարձեալ՝ դիցուք թէ հրաման ընկալար յԱշոտոյ 'ի հաշուէ իւրմէ հատուցանել Տրդատայ 3000, դահեկանս · արդ՝ յիշատակագրութիւնն որով զԱշոտ պարտատէր առնես այնմ գումարի, և զՏրդատ պարտապան, ասի Հաշուեդարձ կամ Հաշուեշրջան, որով հաշիւքն անցանեն 'ի միոջէ յայլ ։

## Յաղագս փոխադրութեան [1] Հաշուեմատեանց ։

մհբ. Ի Մայրհաշիւ մատեանս օրէնք են համարակալաց, զի յինչ և իցէ հաշուեմատեանս՝ եթէ մարդոյ և թէ մթերից, յորժամ մին յերկոցունց երեսացն ծագէ 'ի ծագ լցցի յիշատակագրութեամբք, չէ պարտ սպասել միւսոյ կողմանն դատարկ մնացելոյ, այլ զհաշիւ երեսացն այնոցիկ օրէն է փակել՝ և տեղափոխել այլուր 'ի նոր երեսս ։ Փակումն հաշուեմատին լինի հաւասարելով ընդ միմեանս զգումարս հաշուի երկոցունց երեսացն (ժ) · որ և դիւրաբար յաջողի՝ եթէ զպարտիս որպէս և զպահանջս երկաքանչիւր երեսացն՝ առանձինն գումարեալ, հայես-

մհա. (1) ՀԱՇՈՒԵԴԱՐՁ · Իտալ. Giro di Partita · Ճիրօ տի փառթիթա ։ Այն է Շրջան Հաշուեմատեին, կամ փոխանցումն հաշուի ։

մհբ. (1) ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆՑ · Իտալ. Trasporto di Partita · Թռասփօռթօ տի փառթիթա ։ Այն է՝ տեղափոխութիւն հաշուեմատին ։

ցիս թէ զինչ զանազանութիւն կայցէ 'ի նոսա. զի թէ գումարք երկոցունց անուանիւ նման եղիցեն միմեանց, ինքնին լինի՝ խնդրեալ հաւասարութիւնն. ապա թէ մին յերկոցունց առաւելուցու քան զմիւսն, առցես զաճումն կամ զառաւելութիւն բազմաթիւ գումարին, և յաւելցես 'ի պակասեալն, որով փոքր գումարն հաւասարի մեծին։ Յետոյ զայն յաւելուած տարեալ նշանակեսցես 'ի միում 'ի նոր երեսաց անտի, յոր ունիս փոխադրել զհաշիւն. իսկ թէ յոր երես նշանակելի իցէ, կալցես քեզ կանոն հանրական. զի յոր երեսաց բառնաս զյաւելուածն, մի՛ դիցես յայն երես, այլ 'ի հանդիպակողմն նորին. զորօրինակ՝ եթէ յաւելուածն պարտակողմանն իցէ, 'ի փոխադրելն զայն՝ նշանակեսցես 'ի պահանջակողմն նոր երեսաց։ Յայսմ փոխադրութեան դիտելի է և այն, զի յետին յիշատակագրութիւն փակելի հաշուեմատենին յոր ամիս և 'ի թիւ ամսաւուրց նշանակեալ կայցէ, գաղափարելի է նոյն ամսաթիւն՝ և նովաւ յիշատակագրելի է 'ի նոր երեսս։

Ասացելոցս օրինակ լիցի յետագայ դիպուածդ։

մհգ. Դիցուք թէ 'ի 4. փետրվարի, 1819, լցաւ մին յերկոցունց երեսաց հաշուեմատենին Պորամարկեղ, որ զետեղեալ կայր 'ի 1, երես Մայրհաշուին, և կամելովքս փոխադրել զայն 'ի 17, երես, մատեար 'ի քննութիւն գումարացն պարտեաց և պահանջից, յորս գտեր զի պարտիքն ժամանեն 'ի 80000, դահեկանս, իսկ պահանջքն 'ի 60000։ Արդ՝ 'ի հաւասարել զերկոսին զայսոսիկ գումարսն ընդ միմեանս, հարկ է առնել յաւելուածս 'ի վերայ նուազաթիւ գումարին. և այն յաւելուած ինքնին գտանի, եթէ զփոքր գումար 60000, դահեկանացն հանցես 'ի մեծէ անտի 80000, դահեկանաց, որով ելանէ յաւելուած 20000, դահեկանաց. զայդ գումար յաւելուածոյ դիցես 'ի ներքոյ պահանջից Պորամարկեղ, այսուիկ յիշատակագրութեամբ. * 1819. փետրվարի, 4. Ինքն յիւրմէ՝ դհ, 20000. որք նշանակին աստանօր 'ի փակել զառաջիկայ հաշուեմատեանս. և 'ի փոխադրել զայն յերես . . 17 . . դհ, 20000 |։ Յետ նշանակելոյ զյիշատակագրութիւնս՝ ձգեսցես գիծս 'ի ներքոյ դրամագաւազանացն երկաքանչիւր կողման, և գումարեսցես զհաշիւս դահեկանաց որպէս և զմանրափողոցն առ ոտս գաւազանաց, որով գտանես զգումար պարտեացն 80000, դահեկան, որպէս և էրն. իսկ զգումար պահանջիցն, որ էր 60000, յաւելմամբ 'ի նա 20000, դահեկանացն, հաւասարեալ ընդ առաջնոյն, լինի և այն 80000։ Ի հաւասարութիւն երկոցունց գումարացն պարտակողման և պահանջակողման սովորութիւն է 'ի հաշուեմատեանս յայտնել զուգագծիւ՝ այսպէս ═══, զոր պարտ է գծել 'ի ներքոյ հաւաքեալ գումարացն, որով յայտնի լինի թէ հաշուեմատեան Պորամարկեղ աւարտեալ փակեալ կայ 'ի նոյն երես։ Իսկ թէ զիարդ փոխադրելի իցէ յերես 17. կարդասցուք յառաջիկայդ։

Բացցես 'ի Մայրհաշուին զթղթահամարն 17, և անդ 'ի պարտակողմն նշանակեսցես զայս յիշատակագրութիւն. * 1819. փետրվարի, 4. Նորին առ ինքն՝ դհ, 20000, որք նշանակեցան 'ի փակել զհին հաշուեմատեան, և 'ի փոխադրել այսր . . երես. 1. դհ, 20000 |։ Յասացելոցս ակներև տեսանի, թէ նոյն գումար 20000, դահեկանաց, որք զառաջինն յերես՝ 1, եդան 'ի պահանջակողմն, և աստանօր յերես՝ 17, զետեղեցան 'ի պարտակողմն, ոչինչ այլայլութիւն կամ շփոթութիւն 'ի ներքս ածեն հաշուի Պորամարկեղ, զի որպէս յառաջինն՝ նոյնպէս և յերկրորդին մնայ ինքն միշտ պարտական 20000, դահեկանաց. որ է զանազանութիւնն ընդ մէջ 60000, պահանջիցն, և 80000, պարտեաց նորին Պորամարկեղ (ձհ. 5)։

մհդ. Ի տեղափոխութիւնս հաշուեմատենից վաճառամթերից փակելի են ոչ միայն հաշիւք դրամոց, այլև գումարք չափուց և կշռոյն նշանակեալք 'ի նոսա։ Սակայն յայսպիսի փոխադրութիւնս սովոր են պատահել կրկին դիպուածք, նախ՝ զի 'ի մի և 'ի նոյն երես, յորում դրամք կամ արժէք մթերիցն սակաւագումարք իցեն, հարկաւ նուազագումար ելանեն և չափք կամ կշիռք մթերիցն։ Երկրորդ՝ հնար է դիպել, զի 'ի մի կողմն հաշուեմատենին գումարք դրամոց, և 'ի միւս կողմն չափք մթերից լիցին պակասագումարք, զորս 'ի հաւասարել ընդ միմեանս՝ ցուցցեն օրինակքդ առաջիկայ։

մհե. Յորժամ զանազանութիւնք գումարի դրամոցն և չափու մթերիցն իցեն 'ի մի և 'ի նոյն երես հաշուեմատենին, պահելի է կանոնս։ Դիցուք թէ 'ի 14, Մարտի՝ լցաւ մին յերեսաց հաշուեմատենին մթերից Գահվէի, որ էր 'ի 10, երես Մայրհաշուին, և կամիս փոխադրել զայն 'ի 40, թղթահամարն. տեսանես՝ զի գումար պարտեացն ժամանէ 'ի դահեկանս 12480. և գումար կշռոյն 2300, լիտր. իսկ գումար պահանջիցն ելանէ 6400, դահեկան. և գումար կշռոյն 1300, լիտր։ Այսպիսի դիպուածք թէպէտ կարօտին կրկին յիշատակագրութեան, մի՝ 'ի հաւասարել զգումար կշռոյն, և միւս ևս 'ի հաւասարութիւն գումարի դրամոցն, բայց մարթ է կատարել զայնս և միով յիշատակագրութեամբ, յայտ առնելով 'ի նմին զզանազանութիւնսն կշռոյ և զդրամոցն. վասն որոյ դիր 'ի ներքոյ պահանջից գահվէին զայս յիշատակագրութիւն.

* Մարտ. 14 ։ Ինքն յիւրմէ՝ ԹՎ, 6080. որք նշանակլին աստ 'ի փակել զհաշուեմանս և 'ի փոխադրել.. յերես. 40 .. լիտր. 1000 .. ԹՎ, 6080 ։ — | ։ Յետոյ յերկոսին երեսս միանգամայն ձգեալ 'ի ներքոյ գաւազանաց զուղորական գիծս առ 'ի գումարել զհաշիւսն, եթէ կշռոց և թէ դրամոց, որով տեսանես՝ զի գումար կշռոց գահվէժին ելանէ 2300, լիտր, և գումար դրամոցն՝ 12480, դահեկան, հաւասար և համեմատ գումարաց պարտակողման. զորս յետոյ օրէն է փակել ձգելով զուգագիծս 'ի ներքոյ գումարացն (մհդ) ։ Յետ փակելոյ զայն ըստ նախագրելոցդ, կամելով փոխադրել 'ի նոր երեսն 40. գրեսցես 'ի պարտակողմն նորին զյիշատակագրութիւնս.
* Մարտ. 14 ։ Նոյնն առ ինքն՝ ԹՎ, 6080. որք նշանակեցան 'ի փակել զհին հաշուեմանն, և փոխադրել այսր .. երես. 10 .. լիտր. 1000 .. ԹՎ, 6080 ։ — | ։

մհդ. Դիցուք և զայլ օրինակ ինչ առ այն, թէ զխարդ հաւասարելի և փոխադրելի իցէ հաշուեմանն, յորժամ գումար կշռոց 'ի միում կողմն, և գումար դրամոց 'ի միւսումն՝ փոքր իցէ և սակաւաթիւ ։ Օրօրինակ՝ եդեալ թէ 'ի 12, Ապրիլի՝ կամեցար զհաշուեմանն Զուխային 'ի 28, թղթահամարոյն փոխադրել 'ի 31 ։ Արդ՝ հայեցեալ 'ի գումարս հաշուի նորա, գտեր՝ զի պարտիքն ժամանեն 'ի գումար 4500, դահեկանաց, և գումար չափու կանգնոցն, 230 ։ Իսկ պահանջքն ելանեն 5000, դահեկանք, և թիւ կանգնոցն 220 ։ 'Ի կամիլն հաւասարել զերկոսին երեսսն ընդ միմեանս, հարկ է 'ի պարտակողմն յաւելուլ դահեկանս 500. և 'ի պահանջակողմն առաւելուլ կանգունս 10. որպէս զի գումարք երկոցունց երեսացն հաւասարեսցին միմեանց. վասն որոյ նախ առաջին 'ի պարտակողմն հաշուեմանսին նշանակեսջիր այսպէս. * Ապրիլ. 12 ։ Նոյնն առ ինքն՝ ԹՎ, 500, որ նշանակի աստանօր 'ի փակել զհաշուեմանս և փոխադրել.. յերես. 31 .. կանգուն —— ԹՎ, 500 ։ — | ։ Յետոյ գրեսցես և 'ի պահանջակողմն՝ այսպէս. * Ապրիլ. 12 ։ Ինքն յիւրմէ՝ կանգուն 10, որ նշանակի աստանօր 'ի փակել զհաշուեմանս և փոխադրել յերես, 31 .. կանգուն. 10 .. ԹՎ —— | ։ Արդ՝ երկոքին զանազանութիւնքն դրամոց և կանգնոց յորժամ ըստ կարգի զետեղին յիւրաքանչիւր պատշաճեալ տեղիս, ինքնին ելանէ հաւասարութիւն գումարացն, եթէ կանգնաչափուց և թէ դրամոցն, որով և փակի հաշուեմանն ։ Յետոյ զերկոսին զայսոսիկ յիշատակագրութիւնս կամելով փոխադրել 'ի նոր հաշուեմանն, յերես, 31, դիցես 'ի պահանջակողմն զգումար 500, դահեկանաց. և 'ի պարտակողմն զգումար 10, կանգնոց, նշանակելով նախ 'ի պահանջակողմն այսպէս. * Ապրիլ. 12 ։ Ինքն յիւրմէ՝ ԹՎ, 500. որ նշանակեցաւ 'ի փակել զհին հաշուեմանն, և փոխադրել այսր .. երես. 28 .. Կանգուն —— ԹՎ, 500 ։ — | ։ Ապա գրեսցես և 'ի պարտակողմն՝ այսպէս. * Ապրիլ. 12 ։ Նոյնն առ ինքն՝ Կանգուն. 10. որ նշանակեցաւ 'ի փակել զհին հաշուեմանն, և 'ի փոխադրել այսր .. երես. 28 .. Կանգուն, 10 .. ԹՎ —— ։

մհե. Նախայիշատակեալ կրկին դիպուածոց ներքոյ անկանին և հաշուեմասունք Մեղանոյ փոխանակութեան, որպէս և վաճառակցացն այնոցիկ, ընդ որս լինի համարակալութիւն օտարազգի դրամովք. զի մարթ է հանդիպել, թէ նշանակեալքն 'ի մի երես՝ անհամեմատ գտցին հանդիպակողման ։ Ամենայն դիպուածք այսպիսիք ուղղելի են նովին կանոնաւ, զոր վերագոյնդ աւանդեցաք, և փոխադրելիք տեղւոջէ 'ի տեղի՝ հաւասարելով միմեանց զթիւ և զգումար նշանակեալ դրամոցն ։

մհզ. Յիշատակագրութիւնք Մայրհաշուին թէպէտև քաղելիք են յՕրհաշիւ մատենէ, (Ժ. ԽԶ.) սակայն փոխադրութիւնք հաշուեմասանց Մայրհաշուին չունին զատեղի յՕրհաշուին. վասն որոյ զայսպիսի փոխադրութիւնս չէ օրէն ընաւ նշանակել յՕրհաշիւն. զի փոխադրութիւնն ոչ վաճառել է, և ոչ գնոյ առնուլ. այլ տեղափոխութիւն յիշատակագրութեանց յերեսաց յերես առանց այլայլութեան գումարին կանխաւ նշանակելոյ 'ի մատեան Օրհաշուին ։ Բայց սակայն զգուշաւոր արթնութեան պէտք են, զի յիշատակագրութիւնն՝ որով 'ի փոխադրութեան նշանակի յաւելուած ինչ 'ի պարտիս կամ 'ի պահանջս հաշուեմասին, պարտի լինել ամենայնիւ պարզ և բացայայտ՝ չունելով ինչ տեղի երկբայութեան. սորին վասն չէ օրէն կրճատել 'ի սմա զբանսն առ ամփոփելոյ 'ի մի տող (խէ). այլ մանաւանդ ընդարձակելի է յերկուս տողս, ոչ միայն 'ի բացայայտութիւն բանիցն, այլև ընդարձակագրութեամբն ակներև լինելոյ՝ թէ 'ի պատճառս փոխադրութեան հաշուեմասին է յաւելեալ յիշատակագրութիւնն այն ։ Սորին սակս օրէն է յիւրաքանչիւր երեսս Մայրհաշուին անգիր թողուլ քանի մի տողս, ուր նշանակեսցին փոխադրութիւնք հաշուեմասանց ։

մհէ. Ըստ կանխագրելոցս է իմանալ և զփոխադրութիւնս, որք լինին մատենից 'ի մատեանս. իբր զի՝ 'ի լրանալ հաշուեմատենին ծագէ 'ի ծագ գրութեամբ, կամելով սկզբնաւորել զայլ նոր մատեան, չէ օրէն սակս այնր փոխադրութեան առնել յիշատակագրութիւն յՕրհաշի-

մատենին , այլ ըստ պահանջելոյ իրացն և տեղւոյն լինի կոչումն առաջին հաշուեմատենին , նշանակելով զԹուականս մատենին և զԹղԹահամարս հաշուեմասանց նորա ( ժգ ) ։ Զի որովհետև 'ի սկզբնաւորելն զնոր մատեան Մայրհաշուին՝ հարկ է զյաւելուածս հաշուեմասանց նախընԹաց մատենին փոխադրել 'ի նորն , գումարք փոխադրեալ հաշուից այնպէս նշանակելի են 'ի հին և 'ի նոր մատեանն , զի ծանիցի՝ Թէ փոխադրուԹիւնն ոչ միայն է 'ի ԹղԹահամարոյ յայլ ԹղԹահամար , այլև 'ի միոյ մատենէ յայլ մատեան . զոր 'ի խելամուտ առնել նորավարժից՝ կարգեսցուք զառաջիկայ օրինակդ ։

Դնիցուք Թէ 'ի 1820 . յՕգոստոսի , 16 , կամիս առնել փոխադրուԹիւն հաշուից 'ի միոյ մատենէ յայլ նոր մատեան . և տեսեալ Թէ 'ի Ա . Հատոր Մայրհաշուին հաշուեմասն Վահրամայ , որ 'ի 17 , ԹղԹահամար՝ ունի միայն պարտս 3000 , դահեկանաց . զայդ հաշուեմասն կամելով փոխադրել 'ի նոր մատեան Մայրհաշուին Հատոր , Բ . յերես , 14 . նախ առաջին պարտ է 'ի Ա . Հատոր Մայրհաշուին փակել զնոյն հաշուեմասն Վահրամայ յիշատակագրելով 'ի պահանջակողմն նորա այսպէս . * Ինքն յիւրմէ՝ դպ , 3000 . որք նշանակին աստ 'ի փակել զհաշուեմասս , և փոխադրել 'ի նոր մատեան Մայրհաշուի , Բ . երես , 14 . . դպ , 3000 ։ — | ։ 'Ի ձեռն յիշատակագրուԹեանս երկոքին երեսք այնր հաշուեմասին լինին հաւասարագումարք ընդ միմեանս . զորս օրէն է փակել 'ի ձեռն սովորական զուգագծից ( մհէ ) ։ Յետ փակելոյ զայն 'ի Ա . Հատոր Մայրհաշուին , նոյն յիշատակագրուԹիւնն փոխադրելի է և 'ի նոր մատեան Բ . Մայրհաշուին՝ 'ի 14 . ԹղԹահամարն , ուր կամեցար զետեղել զհաշուեմասն Վահրամայ . վասն որոյ 'ի պարտակողմն նորա նշանակեսցես այսպէս . * 1820 . Օգոստոս , 16 ։ Նոյնն առ ինքն՝ դպ , 3000 . որք նշանակեցան 'ի Ա . Հատոր Մայրհաշուին 'ի փակել զհին հաշուեմասն , և 'ի փոխադրել այսր . . երես . 17 . . դպ , 3000 ։ — | ։ Որով պարտիք Վահրամայ առանց ինչ շփոԹուԹեան փոխադրին մատենէ 'ի մատեան . նովին օրինակաւ վարելի է և յայլ բազում հատորս մատենից , եԹէ 'ի տեւել տուրևառուԹեանն առաւելուցուն հետզհետէ ։

### Յաղագս Կշռոյ [1] փակելոյ հաշուեմատենի ։

ՃԶ . Ի դադարել վախճանին , վասն որոյ կարգեցաւ հաշուեմասն , օրէնք են փակել զայն աւարտելով զհաշիւ նորա ։ ԵԹէ հաշուեմասն իցէ առանձնաւորի ուրուք , 'ի տեսանել անդ Թէ պարտիք նորա հաւասարեալ գտանին պահանջիցն՝ ինքնին փակի հաշուեմասն այն , չկարօտեալ այլում իմիք աշխատուԹեան , բայց եԹէ գումարել զերկոսին երեսսն , և զուգագծել ընդ նոքօք ( մհէ ) ։ Իսկ եԹէ գումարք պարտեաց և պահանջիցն այլևայլ գոլով՝ անհաւասար գտցին միմեանց . յայնժամ 'ի փակել զայն հաշուեմասն , պարտ է պահել զկանոնն , զոր աւանդեցաք յաղագս վճարից ( մծգ ) ։ ԵԹէ հաշուեմասն իցէ վաճառամԹերից , և մԹերքն 'ի քո համարի , յայնժամ 'ի փակել զայն հաշուեմասն՝ օրէն է առնուլ զզանազանուԹիւնն , որ ընդ մէջ պարտեաց և պահանջից նորա , և փոխադրել զայն 'ի հաշուեմասն Վաճառամանց ( ճղէ — ճ ) ։ Իսկ եԹէ մԹերքն օտարի իցեն , հարկ է զհաւաքեալ դրամն մաքուր 'ի ծախուց՝ տանել 'ի նորին հաշուեմասն ( ճլ — մլգ ) ։ Ապա Թէ վաճառամԹերքն իցեն ընկերուԹեան , պահելի է կանոնն զոր աւանդեցաք կանխաւ ( մխը — մծէ ) ։ Հաշուեմասունքն դրամոց , որպիսի են Սեղանոյ փոխանակուԹեան , ԴրամաԹղԹոց , և այլոց այսպիսեաց , հաւասարելի են փոխադրուԹեամբ զանազանուԹեան կամ տարբերուԹեան պարտեաց և պահանջիցն՝ 'ի հաշուեմասն Շահարժէից ( մկա ) ։ Հաշուեմասն Դրամարկեղ անփակելի է , բայց եԹէ ժամանելով վաճառատեառն յայսպիսի վիճակ , յորում դրամարկղն մնացէ խոպան դատարկացեալ ։ Հաշուեմասունք փոխաբերականք [2] , որպիսի են հաշիւք Վաճառամանց , ԱպահովագրուԹեան , Հասից և այլոց այսպիսեաց , չունին փակել մինչև ցժամ Կշռոյ հաշուեմատենին , զի յայնժամ եւեԹ դադարի վախճան նոցա , ըստ որում է տեսանել 'ի չորրորդ մասին գրոցս ։

ՃԶ . (1) Կշռումն հաշուի ուրուք և փակումն կամ աւարտ տուրևառին մասին նորա , սովոր է յիտալացւոց անուանել Saldo della Partita . Սալտօ տէլլա փառԹիԹա ։ Որ է ամբողջ հատուցումն հաշուի . զոր 'ի Թուրք լեզու Գեօր էտմէք կոչեն , և 'ի մեզ մարԹի ասել Հաշուեփակ ։

(2) ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ . Իտ . Metaforica . ՄէԹաֆօրիգա ։ Այսպէս անուանին հաշուեմասունքն , որք են իբր մասունք և յաւարարք Դրամագլխոյն , զորոյ զփոխանորդուԹիւնն ունին մասնական հաշուիւ ։

## Յաղագս Ներքնահաշուի Մասնամթերից ։

մձա. Ներքնահաշիւ [1] կոչի համառօտ յիշատակագրութիւնն յայտարար ներքին եւ թագուն վիճակի մթերից ինչ, որոց մնալով 'ի մթերանոցս՝ սովոր են անձիլ կամ նուազիլ. որպիսի է ցորեանն, որ առնու զաճումն. եւ ընդհակառակս՝ եգիպտացորեան, որպէս եւ այլ ընդեղէնք կծկին եւ պակասին ։ Յիշատակագրութիւնս՝ յայտարար առաւելութեան եւ նուազութեան մթերից, լինի միայն 'ի Մայրհաշիւ մատենի, իսկ թէ զկնի նշանակելի իցէ կարգեւցուք աստանօր ։

Եդեալ թէ ամբարեցեր 'ի մթերանոցդ զցորեան 100, գրուանչափ, եւ յետ վեց ամսոց կամելով վաճառել զայն, գտեր 106, գրուանչափ. արդ՝ 'ի հաւասարել զհաշուեմասն ցորենոյս, չեն բաւական կանոնքն աւանդեալք վասն այլոց մթերից (ձղը — ձէ). այլ որովհետեւ 'ի պարտս նորա նշանակեալ կան 100, գրուանչափք. իսկ 'ի պահանջմն, 106, հարկ է զնոյն մթերսն վերստին պարտապան առնել 6, գրուանչափու, որով գտցէ հաւասարութիւն. վասն որոյ յաւուր վաճառման պարտ է յաւելուլ 'ի Մայրհաշիւն եւեթ՝ զայսպիսի յիշատակագրութիւն. * 'Ի պատճառս աճմանն առաւելեալ.. գրուանչափ. 6.. ՊԾ —— | ։ Յայտ է թէ յիշատակագրութիւնս առանց ինչ վնասու հաշուիցն կանխաւ նշանակելոց 'ի նմա, յայտ առնէ միայն զաճումն ցորենոյն ։ Զնոյն կանոն ընդհակառակն մերձեցո եւ առ նուազումն եգիպտական ցորենոյ, եւ այլոց ընդեղինաց, նշանակելով 'ի պահանջս նոցա այսպէս. * 'Ի պատճառս կծկելոյ պակասեալ.. գրուանչափ — ՊԾ — | ։

## Յաղագս Հաւաքական Հաշուեմասանց ։

մձբ. Հաւաքական [1] կոչին հաշուեմասունքն, յորս փակին բազմատեսակ մթերք վաճառաց. որպիսի է հաշուեմասն Մթերից Յանձնարարութեանց (մխ — մխէ). եւ այն՝ զոր ոմանք 'ի վաճառականաց արձանագրեն 'ի հաշուեմատենի ընդ անուամբս, ԶԱՆԱԶԱՆ ՄԻՋՆՈՐԴՉԵԱՑՔ, յորում սովոր են բովանդակել զամենայն տեսակս միջնորդչէից վճարելոց յինչ եւ իցէ առիթս տուրեւառութեան ։ Արդ՝ այսպիսի հաւաքական հաշուեմասունք եթէ վարեսցին միայն 'ի մանրամթերս վաճառաց, բարւոք են եւ թեթեւութիւն աշխատութեան, զի որովհետեւ մթերք յանձնարարութեանց՝ (մանաւանդ, եթէ իցեն բազմատեսակք՝ եւ կամիցի ոք զնուբաքանչիւրսն առանձնաբար զատել 'ի հաշուեմասունս,) կարօտին ընդարձակ տեղւոյ եւ բազմաթերթ մատենի. սակայն նշանակելով զնոսին 'ի հաւաքական հաշուեմասին, սակաւատող յիշատակագրութեամբ ամփոփին 'ի դիւրին վայրի ։ Իսկ յորժամ հաշուեմասնս հաւաքական՝ վարեսցի 'ի պէտս անձանց կամ միջնորդաց, առ 'ի զհաշիւս բազմաց 'ի մի ամփոփել, յոլով շփոթութեան եւ տաժանելի աշխատութեան պատճառ լինի. քանզի սովոր է ստէպ պատահել, թէ ոք 'ի միջնորդաց եկեալ խնդրեսցէ դերհաշիւ առնուլ դրամն, եւ կամ առ փոքր փոքր ընկալեալ դրամոցն պահանջեսցէ զհաշիւն. յայսպիսի առիթս հարկ լինի ծանր աշխատութեամբ որոնել եւ հաւաքել զգումար պահանջից նորա, եւ զի հաշիւ նորա խառնեալ կայ ընդ հաշիւս այլոց բազմաթիւ անձանց, հնար է թէ վրիպակաւ հաշիւ ընդ հաշուի փոխանակեսցի, որով լինի շփոթութիւն հաշուեմատենին եւ աշխատութիւն անբերելի ։ Միակ լաւութիւն հաւաքական հաշուեմասինս այն է, յորմէ ոմանք 'ի վաճառականաց յորդորին կարգել զայն 'ի հաշուեմատեանս իւրեանց, զի ընդ հայելն յայն, երեւի միանգամայն թէ որչափ ինչ միջնորդչէայք ընդ ամն ողջոյն տուեալ իցեն 'ի տուրեւառութիւնս. սակայն անկարանայ ցուցանել, թէ զինչ ինչ իւրաքանչիւրումն 'ի միջնորդաց առանձինն տուեալք իցեն, զորս առ 'ի խմանալ պէտք են կրկին աշխատութեան՝ ժողովելոյ զիւրաքանչիւրսն առանձին, եւ տեսանելոյ թէ զինչ զանազանութիւն կայցէ 'ի նոսա ։ Առ զերծանելոյ 'ի ծանր աշխատութենէս՝ լաւագոյն է չառնել զհաւաքական հաշուեմասն վասն մարդկան. այլ միայն վասն մանր վաճառամթերից, որք չունին զայնպիսի աշխատութիւն. թէպէտեւ այն վաճառամթերք պարտին լինել սակաւաքանակք, որոց վասն չիցէ արժան կարգել զառանձին հաշուեմասն ։

մձա. (1) ՆԵՐՔՆԱՀԱՇԻՒ, զոր խառնուլիք անուանեն, Partita Interna. փառթիթա ինթէռնա ։ Այն է՝ ներքին հաշուեմասն ։

մձբ. (1) ՀԱՒԱՔԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՄԱՍՆ ։ Իտալ. Partita Collettiva. փառթիթա գօլլէթթիվա ։ Զոր մարթ է եւ անուանել Հաւաքահաշիւ. այն է՝ հաւաքեալ հաշիւ զանազան մթերից ։

## Յաղագս Մանրհաշիւ Դիտողութեանց ։

մճզ. Մանրհաշիւ Դիտողութիւնք [1] կոչին զննութիւնքն 'ի տուրեւառութիւնս վաճառամթերից, թէ զիարդ գնոյ առեալ եւ վաճառեալ իցեն մթերքը, զինչ ինչ օգուտս կամ վնաս 'ի ներքս բերեալ. յորոց սկզբանց կամ յոր սեաւ գլխոց վերածելիք իցեն շահքն եւ կամ վնասք ։ Քանզի վաճառականն, որ վարէ զկարգաւորեալ հաշուեմատեան, յորժամ 'ի հաշուեմատն ինչ վաճառեալ մթերից տեսանէ զօգուտ կամ զվնաս, չէ պարտ համարիլ՝ եթէ ամենայն շահ իցէ, կամ բովանդակն զեան. այլ ուշադիր միտք ունի քննել, թէ յայնմ օգուտ կամ 'ի վնասու մրգեօք կայցեն իրողութիւնք ինչ, որով վիճակ շահուցն կամ վնասուց այլայլեալ կերպարանափոխ լիցին. իբր զի անկ է խորհիլ ոչ միայն զեղեալ ծախսն, այլեւ զլինելիսն, որք զիպուածով իւիք ոչ եղեն. եւ թէ յայնմ շահու կամ 'ի վնասու քանի՛ դահեկանքն համարելի իցեն 'ի վաճառեալ մթերից, եւ որչափ ինչ յայլմէ իմէքէ յառաջագայեալ ։ Օրինակ՝ եղեալ թէ յանձնեցեր Վահրամայ Արեւտացւոյ առաքել առ քեզ զքանի մի տիկս Ձիթոյ. եւ չկամելով առնել ծախս 500, դահեկանաց՝ յապահովագրութիւն ուղեւորութեան մթերիցն, դու ինքն յօժարեցար ըստանձնել զվտանգ կորստեան ։ Արդ՝ զանցառութիւնս ապահովագրութեան, թէպէտ 'ի բազում վաճառականաց յոչինչ գրի, եւ ոչ իսկ նշանակի 'ի հաշուեմատենի, սակայն կարօտի զգուշաւոր քննութեան եւ յիշատակագրութեան՝ զի է մի 'ի գլխաւոր օգտաբուղխ աղբերաց վաճառականին, որ զմթերսն ապահովելիս չկամելով առնել ընդ ձեռն օտարի, ինքնին լինի ապահովիչ իւրոց մթերից ։ Վասն որոյ զայն մթերս ձիթոյ բաց 'ի դրամոյ արժէից նորա՝ օրէն է եւս պարտաւորն առնել 500, դահեկանաց, պարտատէր նշանակելով զՀաշիւ Ապահովագրութեան. զի որպէս 'ի վտանգաւորիլ մթերիցն 'ի ճանապարհի, պարտաւոր նշանակելի էր նոյն Հաշիւ Ապահովագրութեան, պարտատէր լինելով Մթերից Ձիթոյ, նոյնպէս եւս յանվտանգ ժամանել ձիթոյն 'ի ձեռս քո՝ շահեր զգրամն 500, դահեկանաց. ոչ 'ի բերել տալոյդ զձէթն, այլ 'ի լինելոյդ ապահովիչ մթերիցդ. իսկ եթէ վտանգաւորէր 'ի ծովու, լինէր քեզ վնաս՝ ոչ 'ի մթերից ձիթոյն, այլ յապահովիչ լինելոյդ ։ Արդ՝ եթէ առանց այսպիսի մանր դիտողութեան վաճառելով զմթերս ձիթոյն համարեսցիս շահեալ 3500, դահեկանս, պարտ է քեզ խելամուտ լինել, թէ տիրապէս օգուտդ 'ի վերայ այնր մթերից՝ են 3000, դահեկանք եւեթ. զի 500, դահեկանն համարելի է 'ի հաշիւ օգտի Ապահովագրութեան ։

մճէ. Կիրառութիւն մանրահաշիւ դիտողութեանցս մարթի լինել՝ ոչ միայն 'ի վաճառամթերս յուղարկելիս քաղաքէ 'ի քաղաք, կամ 'ի դիպուածս ապահովագրութեան, այլեւ յամենայն իրողութիւնս վաճառականին, եթէ 'ի տուրեւառութեան իցէ, եւ թէ յիւր պէտս վարելի իրաց ։ Օրինակ՝ Տունն յոր բնակիս, թէպէտեւ իցէ քո սեփական ստացուած, օրէն է քեզ ամ ըստ ամէ մանրհաշիւ դիտողութեամբ զհաշուեմատն Տնական ծախուց (միզ) պարտաւոր նշանակել վասն վարձուց բնակութեան տանդ, պարտատէր առնելով զՀաշիւ Վարձատանց (մկէ. մկը. մկթ) ։ Եթէ գնոյ առեր զնաւ 'ի գործածութիւն, հարկ է ամ ըստ ամէ զծախս նորա նշանակել 'ի պարտիս հաշուեմատին Նաւողչեից, եւ 'ի պահանջս այնր Նաւուն (մհ) ։ Եթէ զմթերս գահվէի փոխանակեսցես ընդ մեղրամոմոյ, որ քան զսովորական գինսն իցէ աւելեալ 1000, դահեկանաւ, պարտ է բաց 'ի կարեւոր յիշատակագրութեանց անտի մթերից գահվէին, յաւելուլ 'ի նա եւ զայլ պարտիս ինչ 1000, դահեկանաց. պարտատէր առնելով զհաշուեմատն մեղրամոմոյ, յորմէ անցեալ են 'ի հաշիւ գահվէին (ծդ. կ) ։

մճը. Եթէ վաճառականն անփոյթ լինիցի եւ զանցառու այսոցիկ մանրահաշիւ դիտողութեանց, առ փոքր փոքր վէր 'ի վայր տապալին ընթացք տուրեւառութեանն. եւ ինքն անկարանայ հասու լինել սկզբանց կամ պատճառացն վնասու, որովք սովոր են խանգարիլ տուրեւառք. զի 'ի ձեռն դիտողութեանս 'ի յայտ գան աղբերակունք շահու եւ վնասու ։ Եւ յայս սակս բազմափորձ հմտութիւնք վաճառականաց հիմնեցին 'ի հաշուեմատեանս զփոխաբերական հաշուեմատունս (մծ) Վաճառմանց, Ապահովագրութեան, Հասից, եւ այլն, որք թէպէտ առհասարակ յայտարարք են՝ աճման եւ նուազման դրամագլխոյ վաճառականին, սակայն այլեւայլ շաւղօք եւ պէսպէս օրինակաւ ։

մճզ. (1) ՄԱՆՐՀԱՇԻՒ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ. իտ. Partita Speculativa. փառթիթա ըսփէգուլաթիվա ։ Այն է Հաշուեմատն Դիտողական. կամ Հաշիւ մանրազննին տեսութեան եւ քննութեան ։

## Յաղագս Ենթադրական (1) Հաշուեմասանց:

մձզ. Ենթադրական հաշիւ ասին յիշատակագրութիւնք ինչ նշանակեալք 'ի հաշուեմասին, որք յայտ առնեն զտուչութիւն և զընդունելութիւն դրամոց յումեքէ, համարելով որպէս թէ մթերս ինչ գնոյ առեալ կամ վաճառեալ իցէ. սակայն տիրապէս ոչ եթէ 'ի պատճառս առևտրութեան լեալ է տուչութիւնն և ընդունելութիւն դրամոցն, այլ վասն այլոյ իրիք պատճառի: Զօրօրինակ՝ եղեալ թէ միջնորդ լինելով Սմբատայ վաճառեցեր 1000, լիտր գահվէ, 'ի գին 3000, դահեկանայ, յետոյ եկեալ խնդրեաց առ 'ի քէն, զի փոխան միջնորդչէի, որ է 60, դահեկան, տացի նմա 20, լիտր գահվէ: Արդ՝ 'ի հաճել զկամս Սմբատայ՝ եթէ տացին խնդրեալքն, զիարդ նշանակելի իցէ 'ի հաշուեմատենին ցուցցուք յառաջիկայդ:

Եթէ Սմբատ 'ի պատճառս միջնորդութեանն ունիցի կանխաւ 'ի հաշուեմատենիդ զիւր առանձին հաշուեմասն, օրէն է զնախագրեալ դիպուածդ բաժանել 'ի պարզ մասունս իւր (ծզ. 2); և ամփոփել յայս առաջարկութիւն: Սմբատ 'ի պատճառս վաճառման գահվէին ունի յինէն պահանջս 60, դահեկանաց 'ի հաշիւ միջնորդչէի. և ես ինքն 'ի հատուցումն այնր պահանջից տուի նմա գահվէ լիտր 20: Զայս եղեալ՝ պարտ է յՕրհաշուին նախ պարտապան նշանակել զՄթերս Գահվէին, պարտատէր առնելով զՍմբատ վասն միջնորդչէի իւրոյ 60, դահեկանաց (միզ). յետոյ պարտապան նշանակելի է Սմբատ 60, դահեկանաց, պարտատէր առնելով ըզմթերս գահվէին վասն 20, լտերացն, որ տուաւ նմա (ծզ. 4): Այս կարգ դիւրին է և կանոնաւոր՝ եթէ Սմբատ ըստ ասացելումն՝ ունիցի զիւր հաշուեմասն. իսկ եթէ չունիցի, և վասն դուզնաքեայ իրողութեանս չիցէ արժան կարգել զառանձին հաշուեմասն, յայնժամ պարտ է ձեռնարկել 'ի հաշիւ ենթադրական, այսպէս:

Համարեա՛ թէ ետուր Սմբատայ 60, դահեկան 'ի հատուցումն միջնորդչէին, որ նմա անկ էր. իսկ նա ընկալեալ դրամովքն առ օրին գնեաց 'ի քէն 20, լիտր գահվէ: Այս այսպիսի ենթադրական խորհրդով յիշատակագրելի է 'ի հաշուեմատենին, նախ՝ պարտապան նշանակելով զմթերս գահվէին, որում պարտատէր լինի Դրամարկղն վասն 60, դահեկանաց, որք համարին վճարեալք 'ի նմանէ (միզ). յետոյ պարտապան նշանակելի է Դրամարկղն, պարտատէր լինելով Մթերից Գահվէին վասն 60, դահեկանացն որք եդան 'ի դրամարկղն իբր 'ի գնոյ վաճառեալ գահվէին (ձհզ):

մձէ. Այս բարւոք խելամտութիւն ենթադրական հաշուիս՝ առաջի արասցուք և զայլ օրինակ: Համարեա՛ թէ 'ի հաշիւ Սահրամայ Արեւացւոյ ունիս ուղղել 'ի Զմիւռնիա զքարշեալ փոխանակագիր մի 1000, դահեկանաց, և 'ի նոյն աւուրս կամիս առաքել Ես յԼոնդոնիա առ ոմն 'ի բարեկամացդ զփոխանակագիր մի նոյնպէս 1000, դահեկանաց. արդ՝ զայս յետին փոխանակագիր առաքելի յԼոնդոնիա՝ ընդունիս յՌշտոյ 'ի Պօլիս, և նմին փոխարէն տաս 'ի ձեռս նորա զառաջին փոխանակագիրն 1000, դահեկանաց, զոր ունիս քարշել 'ի Զմիւռնիոյ: Այս գործառնութիւն եթէ նշանակեսցի 'ի հաշուեմատենին առանց ենթադրական հաշուի, կարծիս տայ՝ որպէս թէ 'ի հաշիւ Սահրամայ Արեւացւոյ քարշի փոխանակագիրն 1000, դահեկանաց, և նովին դրամով առաքի յԼոնդոնիա փոխանակագիրն 1000, դահեկանաց, որով Սահրամ Արեւացի համարեալ լինի պարտապան և պարտատէր այնց դրամոց (ձլզ — ձխա). որ է սուտ և վրիպակ հաշուեմատենի. զի փոխանակագիր Սահրամայ է վասն առանձնական հաշուի իւրոյ, որ ընդ քեզ. իսկ փոխանակագիրն զոր կամիս առաքել յԼոնդոնիա, է 'ի քո հաշիւ առանձնական, յորում Սահրամ չունի մասն և բաժին: Արդ՝ 'ի բառնալ զաւիթ շփոթութեանն պարտ է յայսպիսի դիպուածս վարել ենթադրական հաշուիւ, համարելով թէ յորժամ 'ի Պօլիս Ռշտոյ տայ 'ի ձեռս քո զփոխանակագիրն առաքելի յԼոնդոնիա, դու ինքն առօրին հատուցանես նմա զգումար դրամոյ 1000, դահեկանաց. և ես թէ զփոխանակագիրն քարշելի 'ի Զմիւռնիոյ տալով 'ի ձեռս Ռշտոյ, նա ինքն անդէն առ նմին հատուցանէ քեզ զդրամսն 1000, դահեկանաց: Այս այսպիսի կարգ ենթադրական հաշուի դնելով զդիպուածն, դիւրաբար և անշփոթ բացայայտի կրկնակի ևեթ յիշատակագրութեամբ այսպէս. նախ նշանակեսցես զԴրամարկղն պարտապան 1000, դահեկանաց վասն փոխանակագրոյն քարշելոյ 'ի Զմիւռնիոյ, պարտատէր առնելով զՍահրամ Արե-

մձզ. (1) ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՄԱՍՆ: Իտ. Partita di Supposizione. Փառթիթա տի Սուփփօզիցիօնէ: Այն է վիճակ ինչ հաշուի և համարոյ, զոր միայն կերպարանեն 'ի դիւրութիւն յիշատակագրութեան հաշուեմատենին, զլինելի դիպուածն՝ իբրև եղեալ համարելով և անցուցանելով 'ի հաշիւ:

տայի (ՃԼԸ). յետոյ զնոյն Աստրամ Արետացի նշանակեսցես պարտապան 1000, դահեկանաց, պարտատէր առնելով զՆորամարկղն վասն փոխանակագրոյն որ առաքեցաւ յՕրդոկիա (ՃԻ):

Եթէ տուեալ փոխանակագիրդ 'ի ձեռս Աշոտոյ՝ իցէ 1000, դահեկանաց, իսկ առեալդ 'ի նմանէ 1200, դահեկանաց, հարկ լինի քեզ յետս դարձուցանել առ նա զյաւելեալ 200, դահեկանն: Նաև յայս գիտուած վարելով զկանոն ենթադրական հաշուի, զգումար 1000, դահեկանացն գիցես 'ի պարտիս Նորամարկեղ, և 'ի պահանջս Աստրամայ Արետացւոյ. յետոյ զգումար 1200, դահեկանացն նշանակեա 'ի պարտիս Աստրամայ և 'ի պահանջս Նորամարկեղ, որով Նորամարկղն լինի պարտատէր 200, դահեկանաց, իսկ Աստրամ պարտապան այնմ որ վճարեցաւ 'ի հաշիւ նորա:

## Յաղագս Կրկնարժէք (1) Հաշուոյ:

մճը. Կրկնարժէք կոչի հաշիւն որպէս և հաշուեմատն, յորում բաց 'ի սովորական դաւազանաց դահեկանի և մանրափողոյ՝ գնի առընթեր նոցա և այլ դաւազան օտարազգի դրամոց, առ 'ի տեսանել և իմանալ նովաւ զպէսպիսութիւն օգտի կամ վնասու գնոյ առեալ և վաճառեալ մթերից 'ի ձեռն հաշուի օտար դրամոց: Օրինակ՝ եղեալ թէ այսօր հասին առ քեզ 'ի Ֆլորենտիոյ քանի մի արկեղք ապակեղինաց՝ արժողութեամբ 1000, ֆիօրինի, զորս 'ի յանձնարարութենէ քումմէ յուղարկեալ էր Բարեկեն: Յաւուր ժամանելոյ մթերիցն 'ի ձեռս քո՝ գիտեմք թէ արժողութիւն ֆիօրինին էր 3, դահեկան. վասն որոյ 1000, ֆիօրինն առնէր 3000, դահեկան. բայց հնար է թէ յետ ամսոց ինչ 'ի ժամ վճարելոյ դրամոյն արժէք ֆիօրինին այլայլեալ առաւելուցու կամ նուազեսցի քան զգին այնր ժամուն, յորում ընկալար զմթերսն: Արդ՝ այս փոփոխութիւն արժէից ֆիօրինին ոչինչ վնաս կամ օգուտ բերէ առ Բարեկէն յուղարկուն ապակեղինաց, զի նա ինքն սպասէ առնուլ 'ի քէն զխր 1000, ֆիօրինսն. վասն որոյ զինչ և վնաս կամ օգուտ լինիցի յառաւելութենէ և 'ի նուազութենէ արժէից ֆիօրինին, բովանդակն քո է: Ապա՝ գիտելով զայս, 'ի նշանակելդ զՄթերս Ապակեղինաց պարտապան 3000, դահեկանաց (ըստ արժողութեան այնր աւուր), պարտ է ևս վասն Բարեկենի սահմանել զառանձին հաշուեմատն ինչ Կրկնարժէք հաշուի. յորում 'ի նշանակելդ զԲարեկեն պարտատէր 3000, դահեկանացն, գիցես առ նմա և զթիւ 1000, ֆիօրինիցն: Ապա 'ի ժամանել պայմանեալ աւուր հատուցման դրամոց՝ Կրկնարժէք հաշուեմատն Բարեկենի ազդ առնէ քեզ, թէ հաշիւ և հատուցումն նորա պարտի լինել ֆիօրինիւ, և ոչ դահեկանաւ. վասն որոյ 'ի կամիլն վճարել նմա, հարկ լինի յղել առ նա զփոխանակագիր 1000, ֆիօրինից, որք թերևս 'ի ժամ յղելոյ մարթին արժել 3000, կամ 2900, և կամ 3200, դահեկանս ըստ ընթացից փոխանակութեան աւուրն: Որպէս զիարդ և իցէ յայնժամ արժէք ֆիօրինի՝ օրէն է միշտ պարտապան նշանակել զԲարեկէն, և պարտատէր զՆորամարկղն վասն վճարեալ դրամոցդ (ծը. 4), 'ի նոյն պարտիսն Բարեկէնի նշանակելի է և թիւ 1000, ֆիօրինին, որպէս զի հաւասարեսցի ընդ եղելոյն 'ի պահանջս նորուն, և ծանիցի թէ հատուցան պարտիքն:

Արդ՝ յետ վճարելոյ նմա զպարտսդ 'ի դադարել վախճանի այնր հաշուեմատին, օրէն է փակել զայն այսպէս: Եթէ զյղեալ փոխանակագիրդ 1000, ֆիօրինի, առեալ իցես 'ի գին 3000, դահեկանաց, դիւրին է և անաշխատ փակումն այնր հաշուեմատին. շատ է թէ զհաշիւս դահեկանացն և զֆիօրինից երկոցունց երեսացն հաւաքեալ գումարեսցես առ ոտս դաւազանացն, որով ինքնին հաւասարի հաշիւն (մձ): Իսկ եթէ զփոխանակագիրն 1000, ֆիօրինի՝ առեալ իցես 'ի գին 2900, դահեկանաց, յայնժամ պարտ է հաւասարել զայն ընդ 3000, դահեկանին, պարտապան նշանակելով զԲարեկէն 100, դահեկանաց, և պարտատէր զհաշուեմատն Շահարժէից (մկա): Ապա թէ փոխանակագիրն եղեալ իցէ քեզ թանկագին՝ 3200, դահեկանաց. օրէն է հաւասարել զայն ընդ 3000, դահեկանին, պարտատէր առնելով զԲարեկէն 200, դահեկանաց, և պարտապան զհաշուեմատն Շահարժէից (մկա): Պատճառ զայսօրինակ յիշատակագրութեանցս է, զի յորժամ մթերք ապակեղինաց հասին 'ի ձեռս քո, արժէք 1000, ֆիօրինին էին 3000, դահեկանք, իսկ 'ի ժամ հատուցմանն էին 3200, և կամ 2900. վասն որոյ 200, դահեկանքն յաւելեալք, որք համարին քեզ 'ի վնաս, և կամ պակասեալ 100, դահեկանքն, որք համարին օգուտ, յառաջ

մճը. (1) ԿՐԿՆԱՐԺԷՔ ՀԱՇԻՒ. զոր իտալացիք կոչեն Partita in Doppia Valuta. փաւթիթա ին Տօփփիա Վալութա: Այն է հաշուեմատն 'ի կրկին արժողութիւնս, կամ 'ի կրկնատեսակ դրամս:

եկին 'ի պատճառս փոխանակագրոյն՝ վասն առաւելեալ և պակասեալ գնոյ Ֆիօրինին. արդ՝ այսպիսի յաւելուածք կամ պակասութիւնք յառաջ եկեալք յարժէից դրամոց՝ փոխադրելիք են 'ի հաշուեմատն Հաշարժէից ։

մՃԹ. Եթէ Նարկէն ունիցի ընդ քեզ և զոյլ տեսակս տուրևառութեան, որ ոչ կարօտի Կրկնարժէք հաշուի, պարտ է զատանել զայն յատանձին հաշուեմատն ։ Որք կարօտին կրկնարժէք հաշուի՝ հաշուեմատն նոցա մակագրելի է յաւելուածով բառիցս, ԲԱՐԿԷՆ՝ ՀԱՇԻՒ ՓՕՐԽՆԻ, կամ ՍԻՒՆԱԴՐՈՇՄ ԱՐԾԱԹՈՅ, և այլն ։ Իսկ վասն այլոց պարզ հաշուից կարէ մակագրիլ լոկ անուամն՝ այսպէս. ԲԱՐԿԷՆ ։ Իսկ թէ ուր, զիարդ և երբ վարելի իցեն պարզ և կամ կրկնարժէք հաշիւք, ուշադիր աչալրջութիւն վաճառականին կարող է ուսուցանել, և զկանոնս կիրառութեանն գտանել 'ի նախաւանդեալ օրինակն ։

## Յաղագս Անյուսալի (1) Պահանջից ։

ՃԺ. Դնիցուք թէ Անանիկ, որ պարտապան էր քեզ 8000, դահեկանս, և դու ինքն անյոյս էիր կորզելոյ զպահանջսդ 'ի նմանէ, յոյր սակս իսկ մակագրեալ էիր 'ի հաշուեմատն նորա զբառդ. ԹԵՐԱՅՈՅՍ (կԴ. կԵ), գտեալ գյաջողութիւն՝ վճարեաց քեզ զպարտս իւր, կամ ըստ բոլորին, և կամ ըստ մասին ։ Յընդունիլդ 'ի նմանէ զվճարեալ դրամն, օրէն է պարտապան նշանակել զԴրամարկղդ, պարտատէր առնելով զնոյն ինքն զԱնանիկ (ծԴ. Կ) ։ Յետոյ զայն գումար վճարեալ դրամոյն պարտ է հանել 'ի հաշուեմատնէ անտի ԹԵՐԱՅՈՅՍ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ, և 'ի ձեռն Հաշուեդարձ կանոնի (մՀԶ) փոխադրել 'ի հաշուեմատն ՈՂՋ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ ։

Վասն այսպիսի դիպուածոց պարտ է 'ի հաշուեմատենին կարգել զատանձին հաշուեմատն ինչ մակագրութեամբս, ԿՈՐԶԱԾՔ (2) 'Ի ԹԵՐԱՅՈՅՍ ՊԱՀԱՆՋԻՑ. որ և համարի մասն ինչ և յայտարար ողջ դրամագլխոց. ուրանօր նշանակելի են այն ամենայն դրամք 'ի ձեռս բերեալք յայսպիսի թերայոյս պահանջից ։ Յայսմ հաշուեմատին ունի երևիլ, թէ Անանիկն, որ յիւրում առանձնական հաշուեմատին * Թերայոյս Պարտապանն էր |, վճարելով զդրամն՝ եղև պարտատէր և պահանջող 'ի Դրամարկեղէ. որով և կենդանացան անյուսալի պահանջք նորին դրամարկեղ ։

ՃԺԱ. Կարէ լինել՝ թէ Անանիկն պարտապան 8000, դահեկանաց. օրինակաւ իւիք հաճեցուցէ զքեզ քո 'ի գումարէ անտի պարտուց իւրոց շնորհել նմա 3000, դահեկանս, խոստանալով առօրին վճարել քեզ զմնացեալ 5000, դահեկանսն ։ Յայս դիպուած յընդունիլ անդ զ5000, դահեկանսն՝ օրէն է առնել զնախաւանդեալ կրկին յիշատակագրութիւնն վասն ընկալեալ դրամոյն. յետոյ սակս կորուսեալ 3000, դահեկանաց, որք էին 'ի թերայոյս դրամագլխոց անտի, պարտ է նշանակել զայնոսիկ 'ի պարտիս այնր դրամագլխոյ, պարտատէր առնելով զԱնանիկն, որով կորուստ այնր դրամոյ անկանի 'ի վերայ Թերայոյս Դրամագլխոյ ։

ՃԺ. (1) ԹԵՐԱՅՈՅՍ ՊԱՀԱՆՋՔ. Իտ. Crediti di poca Speranza. Գաղղիերէն տի փօգա Ըսփէռանցա ։ Այսպէս կոչին պահանջքն դժուարակորզելիք 'ի ձեռանէ պարտապանաց ։

(2) Իտալացիք զկորզածս դրամոց կամ զԹափելն 'ի թերայոյս պահանջից, սովոր են անուանել Riscossione. Ռիսգոսիօնէ ։



# ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Կարեւորքն եւ պիտանիք 'ի գիտութիւն ուսմանց հաշուեմատենի աւանդեցան լիով 'ի նախընթաց մասին. Ժամ է արդ անցանել 'ի կանոնս Կշռոյ նորա. որով 'ի յայտ գան օգուտք եւ վնասք վաճառականին, եւ որով չափին ուղղութիւնք եւ վրիպակք հաշուեմատենից։ 'Ի սմա վաճառականն ունի տեսանել եւ վայելել զարդիւնս վաստակոցն, յոր քրտնաջան ձգամբ տքնեցաւ քննել եւ գրել զհաշիւս ընդերկար տուրեւառութեան իւրոյ, զի 'ի սմա ունի հանդիսանալ վիճակ ձոխութեանն զոր ստացեալ իցէ, որպէս եւ վնասուց՝ թէ ուրեք երբեք անյաջողութեամբ կորուսեալ ինչ իցէ։

### Յաղագս Կշռոյ։

մղբ. Կշիռ (1) կոչի համագումար բովանդակութիւնն հաշուեմատեանց Մայրհաշիւ մատենին, յորում իբր 'ի հայելւոջ տեսանի համօրէն վիճակ ստացուածոց՝ շահու եւ վնասու տուրեւառութեան վաճառականին։ Քանզի օրէնք են պարապելոյն 'ի վաճառաշահութիւնս՝ ամ ըստ ամէ՝ կամ գէթ յերկուս ամս միանգամ, մատչիլ 'ի քննութիւն տուրեւառիկ գործողութեանցն, տեսանել թէ զինչ ինչ օգուտս կամ վնասս ունիցին յընթացս բազմամեայ տուրեւառութեան, հաւաքելով 'ի մի զամենայն հաշիւս պարտեաց եւ զպահանջիցն, եւ դէմ ընդ դէմ կարգելով զնոսին համեմատել, եւ որպէս թէ կշռել զպարտիս ընդ պահանջից եւ ընդ դրամոցն, զոր ունի յարկեղ. որով 'ի յայտ գան՝ թէ զինչ ձոխութիւնք իցեն վաճառականին, զինչ ինչ պարտիք եւ որչափ ինչ պահանջք։

մղգ. Կարգ եւ կանոն կշռոյ թէպէտ միօրինակ է յամենայն տեսակս տուրեւառութեան, եթէ միայնակ իցէ վաճառականն՝ եւ թէ հաշուընկերօք, սակայն գտանին եւ ինչ ինչ մասնաւոր գիտելիք, որք իւրաքանչիւրոցն են սեփականք, արդ՝ 'ի խնայմունս առնել զնորավարժս ամենայն կարեւորաց, կարգեսցուք նախ զօրինակ կշռոյ հաշուեմատենի առանձին վաճառականի ուրուք, որ միայնակ պարապելով 'ի տուրեւառութիւն, կամեսցի Կշիռ առնել իւրոց տարեկան հաշուից. եւ յետ այնորիկ առանձին հատուածովք դիցուք կանոնս ինչ 'ի պէտս այնոցիկ, որք ունիցին հաշուընկերս տուրեւառութեան։

### Օրինակ Կշռոյ Հաշուեմատենի 'ի պէտս ուրուք, որ առանձինն պարապի 'ի Տուրեւառութիւն։

մղդ. Որովհետեւ կշիռն սովոր է լինել 'ի մայրհաշիւ մատենի եւեթ, վասն որոյ առ 'ի դիւրահաս ուսումն աւանդելի կանոնացս կարգեսցուք նախ զօրինակ ինչ լոկ Մայրհաշուի, եւ ապա քննութիւն առնելով 'ի վերայ իւրաքանչիւր հաշուեմատեանց նորա, ծանուսցուք զկարեւոր գիտելիսն, որով ուսցին նորավարժք՝ թէ զինչ ինչ գործողութիւնք ունին լինել 'ի հաշ-

մղբ. (1) ԿՇԻՌ։ Իտ. Bilancio. Պիլանչիօ։ Տճ. Թէրազի. Միզան։ Զոր համարակալք սովոր են նմանութեամբ վարել 'ի վերայ հաշուի առ 'ի գիտել զծանրութիւն շահու եւ կամ վնասու տուրեւառութեան։

ուեմասունս առ փակելոյ զնոսին՝ և ժողովելոյ 'ի Կշռահաշիւն ։ Իսկ որպէս զի առանց շփոթութեան հասու լինիցին կարգի Մայրհաշուին, յորդորեմք զուսանողսն, զի յառաջ քան զանհարկումն յիւրս նախակարգեալ Մայրհաշուին, մինչ դիցեն ընթեռնուլ գլխագիր ծանուցումն այնր հաշուեմասին, զոր խնդրեն քննել և իմանալ. ապա թէ ոչ՝ հայելով լոկ 'ի Մայրհաշիւն առանց առաջնորդութեան յետագիր ծանուցման, յաւէտ շփոթին քան թէ ուսանին ։ Օրօրինակ՝ կամելով քննել զհաշուեմասն Ողջ Դրամագլխոյ, որ է 'ի 1. Թղթահամար Մայրհաշուին, նախ քան զհայիլդ յայն՝ բացեալ ընթերցջիր զբանս ծանուցմանն (մղէ. գ.). յորում աւանդի կանոն ամփոփելոյ զհաշիւն. զոր առեալ 'ի միտ՝ դարձ 'ի հայիլ և 'ի քննել զայն հաշուեմասն, և քեզէն առնել զկանոնադրեալն. այսինքն՝ ամփոփել զհաշիւն 'ի մի գումար 'ի ձեռն յաւելուածոյ, ըստ որում նշանակեալ կայ 'ի ծանուցման անդ ։ Ըստ նմին օրինակի՝ կամելով քննել զհաշուեմասն Խերայոյս Դրամագլխոյ, որ է 'ի 2. Թղթահամար Մայրհաշուին, բաց զծանուցումն (մղէ. դ.). և ընթերցեալ զայն հատուած բանի, դարձ 'ի Մայրհաշիւն տեսանել զնոյն հաշուեմասն, և նովին կանոնիւ յարմարել զայն ըստ ատացելոցս վերադրոյն հաւաքելով 'ի մի գումար, որպէս աւանդեցաւ յաղագս Ողջ Դրամագլխոյ ։ Ըստ այսոցիկ կրկին օրինակացս արասցես և զայլսն հետզհետէ. ընթերցեալ նախ զծանօթութիւնս իւրաքանչիւր հաշուեմասանցն, և ապա հայելով քննել և առնել ըստ աւանդեալ կանոնացն, որով լիցի անաշխատ իմանալ, թէ 'ի պատճառս կշռոյ զինչ ինչ պարտ իցէ նշանակել 'ի հաշուեմասունսն. Թէպէտ և մեք ունիմք առնել զայն յետոյ, կարգելով վերստին զնոյն Մայրհաշիւ, և փակելով զհաշուեմասունսն դասաւորել 'ի հաշուեկշիռն ։



## ՄԱՅՐՀԱՂԻՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՈՒՐՈՒՔ․ ՈՐ ԱՌԱՆՁԻՆՆ ՊԱՐԱՊԻ Ի ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԻՒՆ։

| 1 | | ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՈՂՋ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | ՂՂ | փէ |
| Յունիս․ | 2 | Առ Ինազու՝ ՂՂ, 7592 · զոր պարտիմ նմա . . . . . . . | 18 | 7592 | — |

| 2 | | ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԹԵՐԱՑՈՑ | Մ | ՊԱՐՏԻՔ | |
|---|---|---|---|---|---|
| 1820 | | | | ՂՂ | փէ |
| Սեպտ. | 16 | Ի Մթերից Չուխայի առ Գէորգեայ 'ի Օմիւռնիա՝ ՂՇ, 148. | 41 | 148 | — | |
| Դեկտ. | 10 | Ի Մետաքսադիպակաց առ Նորուազայ 'ի Կիպրոս՝ ՂՇ, 79. . | 42 | 79 | — | |
| | 20 | Ի Մթերից Մետաքսին Օարէհի Թեսաղոնիկեցւոյ՝ ՂՇ, 254. | 48 | 254 | — | |
| | 22 | Ի Մթերից Գահվէին առ Յարեթի Ալեքոկիա՝ ընկերութեամբ նորա՝ ՂՇ, 96. . . . . . . . . . . . | 45 | 96 | — | |
| | | Ի Բամբակամթերից առ Ղորակայ Ալեքոկիա ընկերութեամբ նորա՝ ՂՇ, 94. . . . . . . . . . . . | 46 | 94 | — | |
| | 24 | Ի Մթերից Չուխայի Յարեթի Ալեքոկիացւոյ՝ ՂՇ, 252. . | 47 | 252 | — | |
| | 31 | Ի Մթերից Գահվէի՝ ընկերութեամբ Ղազարու՝ ՂՇ, 158. | 43 | 158 | — | |
| | | Ի Հաշուէ Շահոյ և Վնասոյ՝ ՂՇ, 1660 ։ 108. ծախք փոխ-յայտոր . . . . . . . . . . . . . . . . . . | 61 | 1660 | 108 | |
| | | | | 5411 | — | |

| 1820 | | | Մ | ԳԱՀԱՆՋՔ ՂՇ | փող | 58 |
|---|---|---|---|---|---|---|
| Դեկտ. | 31 | Ի Թնուանկայ՝ ՂՇ, 1240. երկոտասանամսեայ վարձք տան . . | 5 | 1240 | — | |

| 59 | ՀԱՇԻՒ ՆԱՒՈՂՉԻՑ | Մ | ՊԱՐՏԻՔ ՂՇ | փարէ |
|---|---|---|---|---|
| 1820 | | | | |
| Սեպտ". 4 | Առ Դրամարկղն ՂՇ, 3580. ծախք վասն Արշակ անուանեալ նաւուն . . . . . . . . . . . . . . . . | 38 | 3580 | — |
| Դեկտ". 31 | Առ Լոռտիօ նաւապետ ՂՇ, 3600. տարեկան վարձք նորա . | 23 | 3600 | — |
| | Առ Հաշիւ Շահուց և Վնասուց ՂՇ, 4540. շահ պաշտաբերելոյ . | 61 | 4540 | — |
| | | | 11720 | — |

| 60 | ՄԱՆԷՃ ԹԵՐԱՑՈՅՑ ՊԱՐՏԱՊԱՆ | Մ | ՊԱՐՏԻՔ ՂՇ | փարէ |
|---|---|---|---|---|
| 1820 | | | | |
| Դեկտ". 31 | Առ Մանէճ ՂՇ, 7500. որ եղև թերացոյց . . . . . . . | 29 | 7500 | — |

| 61 | ՀԱՇԻՒ ՇԱՀՈՒՑ ԵՒ ՎՆԱՍՈՒՑ | Մ | ՊԱՐՏԻՔ ՂՇ | փարէ |
|---|---|---|---|---|
| 1820 | | | | |
| Դեկտ". 31 | Առ Հաշիւ Ապահովագրութեան ՂՇ, 2296. կորուստ 'ի նմա . . . | 52 | 2296 | — |
| | Առ Հաշիւ Տնական ծախուց ՂՇ, 8068 114. եղեալ ծախք . . . | 56 | 8068 | 114 |
| | Առ Հաշիւ ծախուց Տուրևառութեան ՂՇ, 1660 8. նոյնպէս . . | 57 | 1660 | 8 |
| | Առ Թերացոյց Դրամագլխոյն ՂՇ, 7500. էէր կորուսեալ . . . . | 2 | 7500 | — |
| | Առ Ողջ Դրամագլխոյն ՂՇ, 30827 116. փոխանցումն մնացորդ շահոյ . | 1 | 30827 | 116 |
| | | | 50352 | 118 |

| | | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|
| 1820 | | | | 59 |
| Դեկտ". 30 | 'Ի Նօտարիօ նաւապետն՝ ղշ, 11720. նաւողղեայք 'ի Վէնէտ-կոյ և այսր. . . . . . . . . . . . . . . . . . . | 23 | 11720 | — |

| | | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|
| | | | | 60 |

| | | Մ | ՊԱՀԱՆՋՔ ղշ | փրէ |
|---|---|---|---|---|
| 1820 | | | | 61 |
| Դեկտ". 31 | 'Ի Կորզուածոյ Թերայոյս Դրամագլխոյ՝ ղշ, 11300. . . . . | 49 | 11300 | — |
| | 'Ի Հաշուէ Վաճառմանց՝ ղշ, 22697 ։ 6. չափ պարզաբերեալ. . . | 50 | 22697 | 6 |
| | 'Ի Հաշուէ Հասից՝ ղշ, 2337. նոյնպէս. . . . . . . . | 51 | 2337 | — |
| | 'Ի Հաշուէ Վճարից՝ ղշ, 272. նոյնպէս. . . . . . . . | 53 | 272 | — |
| | 'Ի Հաշուէ Ապահովութեան՝ ղշ, 400. նոյնպէս. . . . . . | 54 | 400 | — |
| | 'Ի Հաշուէ Ապարժէից՝ ղշ, 7731 ։ 112. նոյնպէս. . . . . . | 55 | 7731 | 112 |
| | 'Ի Հաշուէ Վարձատանց՝ ղշ, 1075. նոյնպէս. . . . . . . | 58 | 1075 | — |
| | 'Ի Հաշուէ Նաւաւլէից՝ ղշ, 4540. նոյնպէս. . . . . . . . | 59 | 4540 | — |
| | | | 50352 | 118 |

մդ. Այս քան զծանուցանելն թէ զիարդ քաղելի իցէ Աշխարհաչափն 'ի յետին Մարզահաշուէ անտի, գիցուք աստանօր զկարևոր գիտելիս ինչ 'ի խելամտութիւն կանոնացն, որովք կարգաւորեցաւ Մարզահաշիւս ։

Եթէ կամիցիս գիտել զգումար զրամոցն որով ձեռնամուխ եղեր 'ի տուրևառութիւն, անաշխատ կարես հասու լինել՝ հայելով 'ի հաշուեմատն Գրամագլխոյ ևեթ, յորում տեսանես՝ զի 'ի սկզբնաւորութեանդ կային 'ի ձեռս քո՝ 357169, դահեկանք, և 16, մանրափողք ։

Եթէ փափաքիս իմանալ զգումար շահուց տուրևառութեանդ, կարող ես տեսանել 'ի պահանջականին նորին Գրամագլխոյ. որոյ պահանջք ժամանեն 'ի գումար՝ 30827, դահեկանաց և 16, մանրափողոց ։ Իսկ թէ շահքն այնքիկ յորոց իրաց իցեն պտղաբերեալք, ցուցցէ քեզ հաշուեմատն Շահուց և Վնասուց. ուր գտանես՝ ա. զի 'ի Թևրայոյս պահանջից կոչեցեալ ես դահեկանս՝ 11300 ։ բ. 'Ի հաշուէ Մաճառմանց՝ դհս, 22697, 6 ։ գ. 'Ի հաշուէ Հասից՝ դհս, 2337 ։ դ. 'Ի հաշուէ Մճարից՝ դհս, 272 ։ ե. 'Ի հաշուէ Ռահաւութեան՝ դհս, 400 ։ զ. 'Ի հաշուէ Ռահարժէից՝ դհս, 7731 .ա12 ։ է. 'Ի հաշուէ Մարձատանց՝ դհս, 1075 ։ ը. 'Ի հաշուէ Լաւողէից՝ դհս, 4540 ։ Արդ՝ զայդ ամենայն հաւաքելով 'ի մի, թէպէտև գումարն բոլորական ժամանէ 'ի 50352, դահեկանս, և 'ի 18, մանրափողս. սակայն հանելով 'ի դուրս զծախսն և զվնասս, մնան դահեկանք 30827 .ա16 ։ Քանզի 'ի հաշիւ Ապահովագրութեան կորուսեալ են դհք, 2296 ։ 'Ի հաշիւ առանձին պիտոյից ծախեալ են դհք, 8068 .ա14 ։ 'Ի հաշիւ ծախուց տուրևառութեան դհք, 1660.8, Բայց 'ի սոցանէ՝ 7500, դահեկանք ես, որք համարեալ էին Մղջք, գրեցան ընդ Թևրայոյս պահանջս ։

մե. Եթէ երկբայելի թուեսցին քեզ շահքն 'ի վաճառեալ իրացդ, կարես ստուգել զնոսին՝ հայելով 'ի հաշուեմատն վաճառմանց. ուր գտանես՝ ա. զի 'ի վաճառմանէ Խմոլթին և Մթերանոցին շահեալ ես դհս, 1479 ։ բ. 'Ի վաճառմանէ Շաքարին՝ դհս, 1782 ։ գ. 'Ի Մաճառմանէ Գահվէին՝ դհս, 3232 ։ դ. 'Ի հաշուէ Յանձնարարութեանց՝ դհս, 50. 110 ։ 'Ի հաշուէ Մետաքսամթերից՝ դհս, 6606. 16 ։ զ. 'Ի հաշուէ մթերից Զուխային առ Պետրոսեան 'ի Օժմտառնիա՝ դհս, 1536 ։ է. 'Ի հաշուէ մթերից Գահվէին Արզարու՝ դհս, 5061 ։ ը. 'Ի հաշուէ մթերից Գահվէին առ Յարեթի Ալեգոկիա՝ դհս, 3202 ։ Որոց ամենեցուն գումարն թէպէտ առնէ դահեկանս՝ 22949. 6, սակայն հանելով անտի զկորուստ 252, դահեկանացն որ 'ի մթերս Զուխային, ըստ որում նշանակեալ կայ անդանօր, մնան շահքն դհք, 22697. 6 ։ Այս ըստ օրինակի նախագրելոցդ մարթ է քննել և հասու լինել ստուգութեան շահու կամ վնասու և այլոց հաշուեմատանց, որք են հաշիւք Հասից, Մճարից, Ռահաւութեան, և այլն ։

Յառաջելոցս յայտ է՝ թէ վաճառականն որ վարէ զհաշուեմատեան, եթէ ամ ըստ ամէ արարեալ իցէ զկշիռ տուրևառութեանն, կարէ անաշխատ գտանել զհաւաստի վիճակ իւրոց գործառնութեանց, թէ յառաջնում ամի 'ի սկզբնաւորել անդ զվաճառականութիւն՝ որչափ ինչ գումարս զրամոց եդեալ իցէ 'ի շահավաճառութիւն. զինչ ինչ օգուտ և քանի վնաս կրեալ իցէ յայնմ ամի, նոյնպէս և յերկրորդումն և յերրորդումն հետզհետէ մինչև ցյետին ամն. յորմէ երևի օգուտ և պիտանութիւն հաշուեմատենին, զոր անձանձրոյթ մտօք պարտ է ուսանիլ և վարել 'ի գործ. զի վաճառականն տեսանէ 'ի նմա զվիճակ ստացուածոց իւրոց, և 'ի կարգի դնէ զամենայն արարսն ։

մզ. Առ տեղեաւս պատշաճ համարիմ կարգել զպատճառ կանոնադրութեանն, զոր ասացուցաք 'ի թիւն (մ), թէ պարտ է վաճառականին ունել զառանձին հաշուեմատն ինչ ընդ մակագրութեամբս՝ ՀԱՇԻՒ ՎԱՃԱՌՄԱՆՑ. յորում նշանակեսցին շահք և վնասք 'ի վաճառմանէ մթերից. թէպէտ բազումք զայս հաշուեմատն նոյնացուցանեն ընդ հաշուի Շահուց և Վնասուց ։ Բայց գիտել արժան է, զի հաշուեմատն Շահուց և Վնասուց ըստ ասացելոցս 'ի թիւն (մը. իթ.). համարի իբր կոյտ առ հասարակ ամենայն օգտից և վնասուց. յորմէ վաճառականն թէպէտ կարէ իմանալ, թէ որչափ ինչ շահեալ կամ կորուսեալ իցէ 'ի հաշիւս Ապահովագրութե, Մճարից, Հասից, և այլոց փոխաբերական հաշուեմատանց, որպէս յայտ է 'ի նախագրելոցդ (մե). սակայն անյայտ մնան նմա օգուտք և վնասք 'ի վաճառմանէ մթերից. վասն որոյ կարևոր է առանձին հաշուեմատն ինչ, յորում նշանակեսցին շահք և վնասք, որք լինին 'ի վաճառելոյ զմթերս ։ Քանզի թէ ոք փոխան այսր կամեսցի վարել զհաշուեմատն Շահուց և Վնասուց, անկարանայ հասու լինել օգտի և վնասու տուրևառութեան վաճառաց, մինչև ոչ հաւաքեսցէ 'ի նոյն հաշուեմատնէ անտի միառմի զամենայն օգուտ և զվնասս նշանակեալս յայլևայլ ամիս և 'ի ժամանակս. որ է աշխատութիւն ծանր և անբերելի, զոր 'ի թեթևացուցանել և 'ի մի հաշիւ բովանդակել զամենայն պտղաբերութիւնս վաճառմանց՝ կարևոր է կիրառութիւն այսր հաշուե-

մասին։ Թող և զայն, զի հաշուեմասն Շահուց և Վնասուց սովոր է լինել միայն 'ի ժամ Կշռոյ. վասն որոյ յընթացս տարեւորութեան մինչև ցկշռաժամն հարկ է լինել հաշուեմասին ինչ, յորում յիշատակագրեսցին պտղաբերութիւնք 'ի վաճառմանէ մթերից։

մլթ. Ի ժամ կշռոյ հաշուեմատենին 'ի փակելն զհաշուեմասունս, եթէ 'ի նոյն երեսս չիցէ բաւական տեղի գրելոյ զնոր հաշիւն, հարկ է փոխադրել յայլ նոր երես. զորոյ թէպէտ մեք 'ի նախակարգեալ օրինակդ զանց արարաք առ 'ի ընդվայր չերկարացուցանելոյ զտեղի. սակայն 'ի բուն հաշուեմատեանս վաճառականաց պարտ է անպատճառ տանիլ 'ի նոր երես։

մխ. Յետ փակելոյ զամենայն հաշուեմասունս ըստ նախակարգելոցդ, 'ի յետոյն Մայրհաշուին՝ բովանդակի Կշռահաշիւն, վասն որոյ չմնայ զայլ ինչ առնել, բայց միայն հաւաքել զգումարս նոցին 'ի վերայ առանձին թղթաթերթի, մակագրելով 'ի ճակատն այսպէս. ԿՇԻՌ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆՍ ՊՕԼՍՈՅ. յետոյ առ փոքր մի 'ի խոնարհ ընդ ձախակողմն նշանակելի են ստորական բառքն՝ ՊԱՐՏԻՔ, որպէս և յաջակողմնկոյս՝ ՊԱՀԱՆՋՔ. և ընդ սոքօք գրելի են յիշատակագրութիւնք հաշուեմասանց փակեալ Մայրհաշուին, ըստ որում ունիս տեսանել 'ի յետագայ օրինակդ։ Միայն պարտ է գիտել, զի այն յիշատակագրութիւնք՝ որք 'ի հաշուեմասունս Մայրհաշուին նշանակեալ կան 'ի պարտակողմն, 'ի սմա նշանակելի են 'ի պահանջակողմն, և որք 'ի պահանջակողմն են՝ գրելի են 'ի պարտակողմն։ Զորօրինակ՝ եղեալ թէ 'ի Մայրհաշուին նշանակեալ կայ եթէ Բեգար պարտիս ունի, 'ի Կշռահաշիւն նշանակելի է պահանջ յԲեգարայ. նոյնպէս եթէ 'ի Մայրհաշիւն գրեալ իցէ՝ թէ Գոմեր պահանջս ունի, 'ի Կշռահաշուին նշանակելի է պարտիք առ Գոմեր։ Զի սովորութիւն է Մայրհաշուին յանդիման առնել զմարդիկ կամ զմթերսն իբր պարտապանս կամ պարտատէարս միմեանց. իսկ Կշռահաշիւն ցուցանէ զնոյն ինքն զվաճառատէրն կամ զվիճակ տուրեւառութեանն, յորում ունի յերևան ելանել, թէ զինչ պարտիս ունի, և որչափ ինչ պահանջս։

մխա. Ի Կշռահաշիւն գումարք պարտուց և պահանջից հարկաւ ունին ելանել հաւասարք միմեանց (ճդ. 6). ըստ որում տեսանի յօրինակդ զկնի. որ թէպէտ պարտապան է 567413, դահեկանաց, և 18, մանրափողոց. սակայն ունի և պահանջս՝ 567413, դահեկանաց, և 18, մանրափողոց։ Զի թէ չլինէր այդ հաւասարութիւն, և երևէին 'ի նոսա տարբերութիւնք ինչ եթէ դահեկանաց և թէ մանրափողոց, յայտնի լինէր, թէ վրիպակ ինչ սպրդեալ կայցէ 'ի նոսա։ Իսկ թէ զայնպիսի վրիպակս զիարդ պարտ իցէ գտանել և ուղղել, ասասցուք զկնի (մխէ)։

մխբ. Ի ժամ Կշռահաշուի պարտ է 'ի գործ դնել զամենայն կարգ և զկանոնսն, զոր միանգամ աւանդեցաք վերագոյնդ. և թէպէտ աւանդեալ կանոնքն պատշաճին յայլևայլ տեսակս յիշատակագրութեանց, սակայն զամենեսին առ հասարակ մարթ է վերածել յերկուս սեռս. յառաջնումն համարելի են յիշատակագրութիւնք Յաւելուած անուանեալք. որով մնացորդք միոյ հաշուեմասին փոխադրին 'ի նոր հաշուեմասն. իսկ յերկրորդումն համարելի են այն յիշատակագրութիւնք կամ նոր ծանօթութիւնք, որք նշանակին և յաւելեալ լինին 'ի հաշիւս այլևայլ նիւթոց։ Յիշատակագրութիւնք առաջնոյն նշանակելի են միայն 'ի Մայրհաշիւն (մհբ. և այլն). իսկ երկրորդին՝ հարկ է նշանակել և յերկոսին մատեանս, այսինքն՝ թէ յՕրհաշուին, և թէ 'ի Մայրհաշիւն։

մխգ. Ի Կշռահաշիւն դասաւորութիւնք իրաց՝ եթէ մարդկան և թէ վաճառամթերից, թէպէտև ըստ կամս կարեն լինել զինչ և իցէ կարգաւ, սակայն յուսումն հետաքննին նորավարժից դիցուք յառաջիկայդ զնոր օրինակ ինչ դասաւորութեան և կարգի, որ առաւելապէս 'ի զարդ և 'ի վայելչատեսութիւն, քան 'ի կարևորութիւն իրաց պատշաճի։

Են բազումք, որք զթղթերեսս Կշռահաշուին գծանիշ զատանեն ընդ լայնութիւն, 'ի ձախմէ ընդ աջակողմն առնելով զայնչափ բաժինս, որչափ ինչ տեսակս իրաց ունիցին նշանակել 'ի նոսա. յետոյ յիւրաքանչիւր խորշս նախ քան զյիշատակագրութիւնսն արձանագրեն զվերնագիրս յանկաւորս յիշատակագրելի նիւթոց. իբր զի՝ յառաջին խորշն մակագրեն այսպէս. ՄՏԱՑՈՒԱԾՔ ՎԱՃԱՌԱՄԹԵՐՔ ՅԻՄՈՒՄ ՁԵՌԻՆ. ընդ որով յիշատակագրեն զմթերսն, որք կան 'ի ձեռն, ընդ նովաւ՝ դնեն վերնագիր Մթերանոցի՝ կամ 'ի Խանութն։ Յետ այնր 'ի յաջորդ բաժնին որ ընդ նովաւ՝ մակագրեն այսպէս. ՄՏԱՑՈՒԱԾՔՍ ՈՐՔ ԿԱՆ 'Ի ՁԵՌՍ ԱՅԼՈՑ. ընդ որով նշանակեն զմթերսն, զորս առաքեալ են, կամ յուղարկեալ են այլում 'ի վաճառել։ Զկնի այնր յերրորդ բաժնին յաւելուն տուեալ կամ յուղարկեալ են այլում 'ի վաճառել։ Զկնի այնր յերրորդ բաժնին ընդ որով նշանակեն ընդ զայլ վերնագիր այսպէս. ՄՏԱՑՈՒԱԾՔ ԱՅԼՈՑ ՅԻՄՈՒՄ ՁԵՌԻՍ. ընդ որով նշանակեն զայլ մթերսն, զորս այլք առաքեալ են, կամ տուեալ նմա 'ի վաճառել։ Ըստ այսոցիկ և զայլ մնացեալն հետզհետէ, որ կարի դիւրացուցիչ է 'ի գտանել զոր ինչ և խնդրեսցէ ոք։

| | ՏՈՒՐԵՒԱՌՔ ՊՕԼՍՈՅ | Մ | ԳԱՐՏԻՔ Ֆ | Կ |
|---|---|---|---|---|
| 1820 Դեկտ". 31 | Առ Դրամագլուխն, վասն Մտացուածոցս զոր ունիմ . . . | 1 | 387997 | 112 |
| | Առ Թերայոյս Դրամագլուխն, վասն դժուարակորզելի պահանջից . . . . . . . . . . . . . . . . . | 2 | 12000 | — |
| | Առ Աբգար Զմիւռնացի . . . . . . . . . . . . | 25 | 54477 | 4 |
| | Առ Նոյնն Հաշիւ Պայմանափակ . . . . . . . . . . | 27 | 65280 | — |
| | Առ Աստղիկ Միհննացի 'ի հաշիւ Փիօրինի . . . . . . | 32 | 11111 | 2 |
| | Առ Մեթերս Զուխային Յարեթի Նուգոկիացւոյ . . . . . | 47 | 36548 | — |
| | Ֆ . | | 567413 | 118 |

| | | Մ | ՊԱՀԱՆՋՔ | |
|---|---|---|---|---|
| 1820 | | | ֆ | սնթ |
| Դեկտ". 31 | Ի Տանէ անտի, որ 'ի նորաշէն Թաղն | 15 | 27276 | — |
| | Ի Նաւէ անտի Արշակ անուանելոյ | 16 | 30276 | — |
| | Ի Տիգրանայ | 17 | 24018 | 116 |
| | Ի Բագուայ | 18 | 4208 | — |
| | Յարշաւրայ Տարօնացւոյ | 19 | 15912 | — |
| | Յարտակայ Եւդոկիացւոյ | 20 | 6200 | — |
| | Յալէքսէ՝ հաշիւ Ճահատուութեան նորա | 21 | 6200 | — |
| | Յարեթէ Եւդոկիացւոյ | 22 | 22000 | — |
| | Ի Նօտարիօ Նաւապետէ | 23 | 8120 | — |
| | Ի Բիւրատայ | 24 | 1440 | 6 |
| | Ի Գամերայ, որ է Գնաշնակից Արգարու Օմուռնացւոյ | 26 | 65280 | — |
| | Յանանիկէ՝ որ է Խերայոյս Պարտապան | 28 | 4500 | — |
| | Ի Մանէճէ՝ որ է նոյնպէս Խերայոյս Պարտապան | 60 | 7500 | — |
| | Յարշաւրայ Տարօնացւոյ՝ 'ի հաշիւ Արծուականք դրամոյ | 30 | 20100 | — |
| | Ի Գեհրանայ Օմուռնացւոյ՝ 'ի հաշիւ Արծուականք դրամոյ | 31 | 6200 | — |
| | Ի Սեղանոյ փոխանակութեան | 33 | 14200 | — |
| | Ի Գրամաթղթոց Փիօրէնի | 34 | 5431 | 112 |
| | Ի փոխանակագրոց | 35 | 10100 | — |
| | Ի Գրամարկեղէ | 38 | 179751 | 4 |
| | Ի Հաշուէ Յանձնարարութեանց | 36 | 8900 | — |
| | Ի Նոմլաղերծ Մթերից | 37 | 1012 | — |
| | Ի Մեսաքսամթերից | 39 | 8635 | — |
| | Ի Մթերից Զուխային | 40 | 28200 | — |
| | Ի Մթերից Զուխային առ Գեհրանայ 'ի Օմուռնիա | 41 | 4664 | — |
| | Ի Մեսաքսագիպակաց առ Եփրուագայ 'ի Կիպրոս | 42 | 18643 | — |
| | Ի Մթերից Գահվէին՝ ընկերութեամբ Արգարու Օմուռնացւոյ | 43 | 20600 | — |
| | Ի Մթերից Զուխային՝ ընկերութեամբ Տիգրանայ | 44 | 5200 | — |
| | Ի Մթերից Գահվէին առ Յարեթի Եւդոկիա և ընկերութեամբ նորա | 45 | 6298 | — |
| | Ի Մթերից Բամպակին առ Արտակայ Եւդոկիա, և ընկերութեամբ նորա | 46 | 6294 | — |
| | Ի Մթերից Մեսաքսին, որ է Օարեհի Թեսաղոնիկեցւոյ | 48 | 254 | — |
| | ֆ. | | 567413 | 118 |

## Օրինակ Կշռահաշուի Միաձայնակից ընկերաց:

ԼԴ. Որ միանգամ աւանդեցաք յաղագս Կշռոյ 'ի պէտս առանձին և անընկեր վաճառականի, գրեթէ նոյն կարգ և կանոն պահելի է և 'ի կշռահաշուս բազմութեան վաճառականաց. վասն որոյ գործադրելի են այն ամենայն ծանօթութիւնք կանոնաց, զորս ասացաք 'ի թիւսն (տե՛ս. Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. ԺԸ. ԺԹ. Ի. ԻԱ. ԻԲ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. ԻԶ. ԻԷ. ԻԸ), մինչև ցժամանել յայն սահման, յորում փակելի իցէ հաշուեմատն Շահուց և Վնասուց (ԻԹ). ուրանօր պարտ է հայել 'ի չափ զանազանութեան՝ որ ընդ մէջ պարտեաց և պահանջից այնր հաշուեմատին, և զայն յաւելուած պէտի բաժանել 'ի վերայ հաշուընկերաց՝ (եթէ ամենեքին միօրինակ հաղորդակիցք իցեն շահու և վնասու տուրևառութեանն). պարտական նշանակելով զնոյն հաշուեմատն առ իւրաքանչիւր անձինս. և պարտատէր զԴրամագլուխս նոցա, (եթէ կայցէ շահ 'ի տուրևառութենէն). ապա թէ ոչ՝ ամենեքին առ հասարակ պարտապանք գրելի են վնասուն եղելոյ:

ԼԵ. Վաճառականն՝ եթէ միայնակ իցէ, և թէ հաշուընկերօք, ամենայն տեսակք փոխաբերական հաշուեմատեանց նորա պարտին լինել միակք և ոչ բազմաթիւք. այսինքն՝ մի հաշուեմատն եւեթ վասն Հասից. մի՝ վասն Ապահովագրութեան. մի՝ վասն Տնական ծախուց. մի՝ վասն ծախուց Տուրևառութեան. նոյնպէս և վասն այլոց: Բայց այսոցիկ կարգելի է միակ հաշուեմատն եւեթ վասն Թերայոյս Դրամագլխոյ, թէպէտև բազում իցեն հաշուընկերք. զի մարթ է այնմ զումարի թերայոյս դրամոց նուազիլ, եթէ ոք յանյուսալի պարտապանաց վճարեսցէ զմասն ինչ 'ի պարտուց (տե՛ս). և հնար է ևս աճիլ, եթէ յողջ պարտապանաց անտի դիպուածով ինչ մնակասցի ոք (տե՛ս. ԻԹ):

ԼԶ. Պարտ է վաճառականաց բաց 'ի հաշուեմատենէ անտի համօրէն Դրամագլխոյ ընկերութեան՝ ունել և զիւրեանց առանձնական հաշուեմատեանս, յորս նշանակեսցեն Դրամագլուխք իւրաքանչիւրոցն. զի հնար է՝ թէ մին յընկերաց 'ի պէտս իւրոյ առանձին գործածութեան առցէ դրամս յարկեղէ հասարակաց, զոր 'ի նշանակել 'ի հաշուեմատենի՝ հարկ է զընդունող դրամոցն կամ զԴրամագլուխս նորա գրել պարտական առեալ դրամոցն. և զԴրամարկղ հասարակաց՝ յորմէ ընկալան, պարտատէր (տե՛ս. Կ): Մարթ է ևս՝ զի ընդունող դրամոցն ունիցի դաշն ընդ ընկերս իւր առ 'ի կարող լինելոյ զգումար ինչ դրամոց յարկեղէ հասարակաց վարելոյ 'ի պէտս իւր. և կամ առնլոյ զդրամս և հատուցանելոյ զշահ առ Դրամարկղն հասարակաց: Յայսպիսի դիպուածս 'ի ժամ Կշռահաշուի պարտ է փակել զհաշիւն զայն, ըստ ընկալեալ դրամոցն պարտական գրելով զԴրամագլուխ նորին, և 'ի ձեռն հաշուեդարձ կանոնի փոխադրելով տեղւոջէ 'ի տեղի (տե՛ս): Իսկ եթէ շահու առեալ իցէ զդրամսն, նախ քան զփակել հաշուին՝ օրէն է պարտական առնել շահու ընկալեալ դրամոցն, պարտատէր գրելով նմին զՀաշիւ Շահառութեանց (տե՛ս). և ապա փակել զհաշիւն:

ԼԷ. Եթէ հաշուընկերք բնակակիցք իցեն 'ի միում տան, հաշիւ տնական ծախուց նոցա փակելի է 'ի ձեռն հաշուեմատին Շահուց և Վնասուց (տե՛ս): Իսկ եթէ զատեալք 'ի միմեանց յորիշ բնակութիւնս, այնուհետև չիք այլ տեղի յիշատակագրութեան հաշուեմատին տնական ծախուց. այլ իւրաքանչիւր հաշուընկերք նշանակելի են պարտապանք դրամոցն, զորս առնուն 'ի Դրամարկեղէ վասն ծախուց տան իւրեանց:

## Օրինակ Կշռոյ Հաշուեմատենի առանձին, որոյ հաշուընկերք բնակեն 'ի հեռաւոր երկիր, ուր վարեն զգլխաւոր Դրամարկղն և զհաշուեմատեան ընկերութեան, յորում նշանակեալ կան Դրամագլուխք իւրաքանչիւրոցն:

ԼԸ. Վաճառականն՝ որոյ հաշուընկերք բնակեն 'ի հեռաւոր քաղաքի, և առ իւրեանս ունին զգլխաւոր Դրամարկղ տուրևառութեան, եթէ կամիցի Կշիռ առնել իւրոյ առանձնական հաշուեմատենի, պարտի պահել զայն ամենայն կանոնս և զկարգ՝ զոր աւանդեցաք յաղագս միոյ ուրուք (ԼԴ), մինչև ցփակումն հաշուեմատին Շահուց և Վնասուց: Եւ զի ասացաք անդ՝ թէ զգումար կամ զօրքանութիւն զանազանութեան երկոցունց երեսացն, այսինքն՝ զպարտակողման և զպահանջակողման, պարտ է փոխադրել 'ի հաշուեմատն Դրամագլխոյ (տե՛ս. ԻԹ). որ յայս դիպուած անկարանայ լինել, զի հաշիւք դրամագլխոյ (ըստ որում համարեցաք), նշանակեալ կան 'ի հաշուեմատեան ընկերացն (Ճղ — Ճը). վասն որոյ նոյն զանազանու-

թիւն գումարին փոխադրելի է 'ի հաշուեմասն տուրևառութեան վաճառակից ընկերաց. որոց անկ է յետոյ զատել զբաժինս իւրաքանչիւրոցն, և բաշխել 'ի հաշուեմասունս նոցա. եթէ շահ իցէ և թէ վնաս ։

յթ. Ի հաշուեմատեան վաճառականին՝ որ հեռի է 'ի հաշուընկերաց իւրոց, պարտի նշանակել հաշուեմասն Տերայոս Դրամագլխոց, թէպէտև չիցեն նշանակեալ Այլ Դրամագլուխք. զի և այն համարի 'ի կարգս փոխաբերական հաշուեմասանց, որպիսի են հաշիւք Առաջնորդութեանց, Հասից, Վաճառմանց, և այլն (յե) ։

յժ. Վաճառականն՝ որոյ հաշուընկերք իցեն յօտար երկիր, կարէ յիւրում մատենի ըզհաշուեմասն նոցա յիշատակագրել միատեսակ դրամով. զօրօրինակ՝ եղեալ թէ դու իցես բնակիս 'ի Տրեստ, և վաճառակից ընկերքդ 'ի Զմիւռնիա. յուղարկել նոցա առ քեզ զվաճառամթերս ինչ 'ի հաշիւ դահեկանաց, կարող ես դու առանց յիշատակելոյ զդահեկանսն, պարտատէր գրել զնոսին 'ի հաշիւ ֆիօրինի. հայելով յընթացս արժէից փոխանակութեան աւուրն, յորում ընկալար զմթերսն ։ Այս կարգ կիրառութեան հաշուեմատենի թէպէտև լինի քեզ կարի պարզ և դիւրին, սակայն անյայտք մնան 'ի նմա շահք և վնասք 'ի փոփոխութենէ արժէից դրամոց. որք միայն կարեն երևիլ 'ի հաշուեմատեան ընկերացդ եղելոց 'ի Զմիւռնիա ։

յժա. Դիցուք թէ մի ոմն 'ի վաճառակցաց ուղևորեալ յԱղեքսանդրիա 'ի տուրևառութիւն վասն ընկերութեան, մնալով հաշուընկերացն 'ի Պօլիս. ծախք տանն և անձին ուղևորելոյն յԱղեքսանդրիա՝ կամ ըստ բոլորին ունի անկանիլ 'ի վերայ համօրէն ընկերութեան, կամ դաշնադրեալ իցեն ամ ըստ ամէ տալ գումարս ինչ դրամոց 'ի պէտս դարմանոյ անձին, և կամ բովանդակ ծախքն ունին ելանել 'ի քսակէ անտի երթելոյն յԱղեքսանդրիա ։ Արդ՝ որպիսի օրինակաւ և իցէ, ամենայն ծախք այսպիսիք նշանակելի են միշտ 'ի պարտիս հաշուեմասին Տնական ծախուց, պարտատէր առնելով զԴրամարկղն կամ զայն ինչ, յորմէ ելեալ իցեն դրամք ծախուցն. (մկէ) ։ Բայց 'ի ժամ կշռոյ՝ եթէ ծախքն ըստ բոլորին իցեն 'ի վերայ ընկերութեան, հաշուեմասն Տնական ծախուց նորա պարտի փակիլ՝ փոխադրելով զբովանդակութիւն զանազանութեան պարտեաց և պահանջից 'ի հաշուեմասն Շահուց և Վնասուց (մկէ. խթ) ։ Իսկ եթէ ամ ըստ ամէ որոշեալ իցէ մատակարարել նմին զգումար ինչ դրամոց, յայնժամ փակելի է նոյն հաշուեմասն տանելով միայն զորոշեալ գումարն զայն 'ի հաշուեմասն Շահուց և Վնասուց. իսկ զյաւելուածն 'ի ծախուց անտի պարտ է անցուցանել 'ի հաշուեմասն վաճառակից ընկերաց իւրոց, զի նոքա յետոյ նշանակեսցեն զայն յիւր հաշիւ ։ Այլ թէ ամենայն ծախք անձնականք համարելի իցեն 'ի հաշիւ երթելոյն, յայնժամ հաշուեմասն ծախուց նորա փակելի է տանելով զգումար ամենայն ծախուցն 'ի պարտիս վաճառակցացն, որք յետոյ մարթասցեն պարտական նշանակել զԴրամագլուխ երթելոյն յԱղեքսանդրիա, պարտատէր առնելով զտուրևառութիւնն, զոր վարէ գնացեալն յԱղեքսանդրիա ։

յժբ. Վաճառակից ոք հեռաբնակ զոր ինչ մթերս յուղարկէ առ հաշուընկերս իւր 'ի վաճառումն, զամենեսին առ հասարակ ունի նշանակել 'ի հաշիւ ընկերաց իւրոց ։ Զօրօրինակ՝ եղեալ թէ ուղևորեալդ յԱղեքսանդրիա 'ի տուրևառութիւն՝ յուղարկեսցէ 'ի Պօլիս առ հաշուընկերս քո զհինգ բեռինս Որդան Կարմրոյ. չէ պարտ վասն այդորիկ առաքեալ մթերիցդ սահմանել զառանձին հաշուեմասն, ըստ որում սովորութիւն է առնել յայլ դիպուածս (ճղդ. և այլն). այլ 'ի պարտատէր առնելդ զԴրամարկղն վասն տուեալ դրամոցդ, պարտական նշանակելի է հաշուեմասն Տուրևառութեան Պօլսոյ ։ Սմին նման պարտ է առնել, եթէ հաշուընկերքդ 'ի Պօլսոյ յուղարկեսցեն առ քեզ մթերս ինչ 'ի վաճառել. Զօրօրինակ՝ եղեալ թէ յուղարկեսցեն Բամբակաբեռինս 'ի վաճառումն, չէ օրէն զառանձին հաշուեմասն կարգել յանուն նոցա վասն այնց մթերից Բամբակին, ըստ որում աւանդեցաւ յաղագս մթերից օտարաց (մը). այլ զբովանդակն պարտ է յիշատակագրել 'ի հաշուեմասն Բամբակին, զոր ունիցդ 'ի հաշուեմատենի ։

յժգ. Հեռաբնակ վաճառակիցն՝ յուղարկել անդ զմթերս առ հաշուընկերս իւր կամ 'ի կատարելն զծառայութիւնս նոցա, կարէ պահանջել հասս 'ի վաճառակցաց իւրոց, նոյնպէս և հաշուընկերք նորա կարեն զնոյն պահանջել 'ի նմանէ, եթէ կարօտասցի ծառայութեան նոցա. սակայն առ բարեկարգութիւն ընթացից տուրևառութեան, որպէս և միաբանութեան ընկերացն՝ լաւագոյն է 'ի սկզբան անդ դաշնակից լինել ընդ միմեանս, կամ միշտ պահանջելոյ, և կամ իսպառ զանցառութեան այսպիսի իրաց. որպէս զի ընթացք հաշուեմատենի երկոցունց կողմանց համաձայն գտցին միմեանց ։

# ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

՚Ի բովանդակութիւն կարեւորաց յուսումն Հաշուեմատենին յաւելումք համառօտ զհինգերորդ զայս մասն. յորում մնայ մեզ աւանդել նախ՝ թէ զիարդ կարգաւորելի իցեն հաշուեմատեանք 'ի կամիլ վաճառակցացն զատանիլ յընկերութենէ միմեանց. Երկրորդ՝ առ անվթար եւ ըստ կարգի յառաջատութիւն հաշուեմատենից՝ որպիսում եւ որչափ այլոց մատենից կարօտի վաճառականն, զորս սովորութիւն հասարակաց Օժանդակագիրս անուանէ. Երրորդ՝ առ ուղղութիւն վրիպակաց, որք 'ի մարդկային տկարութենէ սովոր են սպրդիլ 'ի հաշուեմատեանս, զինչ ինչ դարմանս օրէն իցէ 'ի գործ դնել.

Օրինակ զատանելոյ ընկերութեան վաճառականաց, յորում բաժանելով զմթերսն, զդրամս, զպարտիս եւ զպահանջսն՝ իւրաքանչիւրն յընկերաց առնու զիւր բաժին 'ի նորին դրամագլխոյն եդելոյ.

յժդ. Դնիցուք թէ Սահրամ եւ Խոսրով՝ յետ ընդերկար ժամանակս միաբան ընկերութեամբ տուրեւառութեան, կամիցին զատանիլ 'ի միմեանց՝ բաժանելով յիւրեանս զպարտիս, զպահանջսն, զդրամս, եւ զոր ինչ այլ գտանի 'ի վաճառամթերից. Արդ՝ 'ի Կշռահաշուէ անտի նոցա երեւի՝ թէ Դրամագլուխք իւրաքանչիւրոց համդերձ շահուքն ժամանեն 'ի գումար՝ 50000, դահեկանաց. զի 'ի Դրամարկղն կան պատրաստական դրամք՝ 20000, դդ. 'Ի Դրամաթուղթս փիօրինի՝ 20000, դդ. 'Ի Մթերս Մետաքսի՝ 20000, դդ. 'Ի Մթերս Չուխայի՝ 20000, դդ. 'Ի Մթերս Մեղրամոմոյ առ Տրդատայ 'ի Զմիւռնիա՝ 20000, դդ. Գումար ինչ պահանջից յԱրշակայ՝ 20000, դդ. Եւ գումար ինչ պարտեաց առ Գնէլ՝ 20000, դդ. Արդ՝ 'ի բաժանել զայդ ամենայն նշանակեալսն 'ի հաշուեմատեան ընկերութեան նոցա, հարկ է կազմել եւ զայլ երկու առանձնական մատեանս, զմին վասն Սահրամայ, եւ զերկրորդն վասն Խոսրովու, յորս նշանակեսցին բաժինք իւրաքանչիւրոցն. 'Ի կամիլ անդ բաժանել զստացուածն, պարտ է նախ առաջին սկիզբն առնել 'ի դրամոց, զկէսն տալով Սահրամայ, եւ զկէսն Խոսրովու, յետոյ բաժանելի են Դրամաթուղթքն. ապա Մթերքն Մետաքսի, Չուխայի, եւ Մեղրամոմոյ՝ որ առ Տրդատայ 'ի Զմիւռնիա. նոյնպէս բաշխելի են եւ պահանջքն՝ որ 'ի վերայ Արշակայ, որպէս եւ պարտիքն առ Գնէլ.

յժե. Յետ այնորիկ առեալ 'ի ձեռին զՀաշուեմատեան ընկերութեան՝ նշանակելի են 10000, դահեկանք 'ի պարտիս Դրամագլխոյն Սահրամայ, եւ 10000, դահեկանք 'ի պարտիս Խոսրովու, պարտատէր առնելով զԴրամարկղն. Նոյնպէս եւ յայլսն ամենեսին Դրամագլուխք երկոցունց նոցա միօրինակ պարտապանս նշանակելի են տասնական հազար դահեկանաց, պարտատէր լինելով հաշուի Դրամաթղթոց, Մետաքսամթերից, Չուխայի, Մեղրամոմոյ՝ որ առ Տրդատայ 'ի Զմիւռնիա, որպէս եւ հաշուեմատին Արշակայ. Յետոյ պարտ է յաւելուլ դարձեալ 'ի պարտիս իւրաքանչիւր Դրամագլխոյ նոցա տասնական հազար դահեկանս՝ պարտատէր առնելով զԳնէլ.

յժզ. Արդ՝ յետ փակելոյ զամենայն հաշուեմատեանս (մՃ) մատենի ընկերութեան, պարտ է ձեռնամուխ լինել 'ի նոր մատեանսն, զորս Սահրամ եւ Խոսրով առանձնաբար ունին սկզբնաւորել. յորոց վերայ պահելի են կանոնքն, զորս աւանդեցաք (ծե) վասն առանձնաւորի ուրուք որ միայնակ պարապի 'ի տուրեւառութիւն. սակս որոյ 'ի հաշուեմատենին Սահրամայ՝ պարտատէր առնելով միշտ զԴրամագլուխ նորին, պարտապան նշանակելի է Դրամարկղն 10000, դա-

հեկանաց ։ Հաշիւ Դրամաթղթոյն՝ 10000, դահեկանաց ։ Մթերք Մետաքսին՝ 10000, դահեկանաց ։ Մթերք Չուխային՝ 10000, դահեկանաց ։ Մթերք Մեղրամանց առ Տրդատայ 'ի Զմիւռնիա՝ 10000, դահեկանաց ։ Հաշիւ Արշակայ՝ 10000, դահեկանաց ։ Յետոյ 'ի պարտիս նոյն Դրամագլխոյ նշանակելի են 10000, դահեկանք, պարտատէր առնելով զԳնել ։ Նախագծելոյդ յար և նման յիշատակագրելի է և հաշուեմատեան Խոսրովու, որպէս և յայտ է ։

Օրինակ լուծանելոյ ընկերութեան, յորում բաժանելով զդրամն եւեթ՝ հատցեն դատն 'ի հաղորդընկերաց յանձնել վաճառելի մթերսն, ժողովել պահանջից և վճարումն պարտեաց. այսու դաշամբ՝ զի յետ աւարտելոյ զամենայն, զայսն նոյա հաշուեան, և վճարեսցէ իւրաքանչիւրում զիւր բաժին, համ պարտաւորեալ առնուցու 'ի նոցանէ առ ժամկէտ հաշուէոյ հրաժարական ժամէն ընկերութեան ։

ժէ. Եթէ ընկերութիւն ինչ բազմամեայ վաճառականութեամբ պատաղեալ 'ի խառնիխուռն տուրևառութիւնս իրաց, կարօտասցի բարեկարգ օրինօք մաքրել և ուղղել զընթացս տուրևառութեանն, հարկ է նմա նախ առաջին դադարումն տալ նորոց իրաց ձեռնարկութեան, և բաժանելով զդրամն դտեալս 'ի Դրամարկեղ, զայլ ամենայն գործառնութիւնս յանձնել 'ի ձեռս միոյ ուրուք յընկերացն, զի նա ինքն առ սակաւ սակաւ ամփոփեսցէ զտարածեալ վիճակ տուրևառութեան իւրեանց ։ Զօրօրինակ՝ եղեալ թէ երկոքին հաշուընկերքն Վահրամ և Խոսրով յետ կատարելոյ զկշռահաշիւ տուրևառութեանն. և զպտղաբերութիւն շահուն յաւելլոյ 'ի Դրամագլուխս իւրեանց՝ (ժդ), տեսին զի գումարք իւրաքանչիւրոցն ժամանեն 'ի յիսնական հազար դահեկանս. որոց համագումար բովանդակութիւնն առնէ [illegible], 100000 ։ Արդ գումարի 40000, դահեկանն՝ համարեալ թէ իցէ դրամ պատրաստական, բաժանեցին յինքեանս քսանական հազար դահեկան. իսկ մնացեալ 60000, դահեկանքն են մթերք վաճառելիք. պարտիք հատուցանելիք, և պահանջք կորզելիք. որք յանձնեցան 'ի Վահրամ գնել զամենայնն 'ի կարգի. այսինքն՝ վաճառել զմթերսն, վճարել զպարտիս, կորզել զպահանջսն, և ապա ըստ ժամանակին աւարտել զհաշիւ ընկերութեանն ընդ Խոսրովու ։ Արդ՝ 'ի բաժանելն զդրամն, նախ առաջին պարտ է 'ի հաշուեմատեան ընկերութեան իւրեանց նշանակել զգումար 20000, դահեկանացն 'ի պարտիս իւրաքանչիւր Դրամագլխոյ նոցա. և 'ի պահանջս Դրամարկեղն՝ յորմէ ընկալան (ծդ. 4) ։ Յետոյ զնոյն ընկալեալ դրամն անկ է նոցա նշանակել և յիւրաքանչիւր առանձին հաշուեմատեանս իւրեանց, պարտական առնելով զԴրամարկեղն, և պարտատէր զԴրամագլուխն (ծթ) ։

ժը. Որովհետև ամենայն հոգք գործառնութեանց յանձնեցան 'ի Վահրամ, հարկ է և հաշուեմատենի ընկերութեանն մնալ 'ի ձեռս նորա՝ առ 'ի կարող լինելոյ ըստ յաջողելոյ իրացն նշանակել 'ի նմա զվաճառեալսն, և զկորզածս 'ի պահանջից, որպէս և զվճարումն պարտեաց ընկերութեան ։ Հուսկ յետոյ առ 'ի տալ Խոսրովու զհամար տնտեսութեան իւրոյ և աւարտել զհաշիւ բաժանմանն յընկերութենէ, պարտ է Վահրամայ ըստ յառաջատութեան գործոյն հետզհետէ 'ի նոյն հաշուեմատենի պարտական նշանակել զԴրամագլուխս իւրեանց, հաւասարաչափ բաժանմամբ պարտատէր առնելով նոցա զմթերսն, զպահանջս և զպարտիս, որք առ փոքր փոքր պակասին (ծդ. 4) ։ Իսկ յառանձնական հաշուեմատեանս իւրեանց պարտին իւրաքանչիւրքն 'ի նոցանէ պարտատէր նշանակել զԴրամագլուխս իւրեանց. պարտական առնելով զայնոսիկ, յորս զետեղեալ իցեն զդրամսն (ծե) ։

ժթ. Եթէ Վահրամ յետ բազմամենայ աշխատութեան անկարասցի կորզել զամենայն պահանջս ընկերութեան. պարտ է զկէս նոյին դարձուցանել անդրէն 'ի Խոսրով ։ Բայց յայսպիսի դիպուածս հնար է թէ մին յընկերաց անտի յօժարեսցի յինքն ընդունել զամենայն պահանջս. կամ թէ երկոքին միաբան հաճութեամբ յանձն առնուցուն սպասել. և առ սակաւ սակաւ զկորզեալսն բաժանել յինքեանս ։ Որով օրինակաւ և միաբանեսցին, ոչինչ փոխէ կարգի և կանոնաց հաշուեմատենին, շատ է թէ լինիցի գաղտնակցութեամբ արդար օրինաց, որով դիւրին լինի նոցա գտանել, թէ զինչ ինչ յիշատակագրութիւնք նշանակելիք իցեն յայնպիսի դիպուածս ։

Օրինակ շարադրելոյ ընկերութեան, յորում մին ոմն 'ի հաշուընկերացն կամիցի անջատիլ․ ծառայել այլոցն 'ի նմին ընկերութեան ։

յն․ Դնիցուք թէ Աբշաւիր գոլով հաշուընկեր Բաբկէնի և Գեղամայ՝ կամի ինքն միայն զատանիլ 'ի նոցանէ, մնալով երկոցունցն 'ի նոյն ընկերութեան ։ Արդ՝ 'ի կշռոյ ամոի հաշուեմատենի իւրեանց եկն 'ի յայտ, զի Գործագլուխ Աբշաւրայ ժամանէ 'ի գումար՝ 40000, դահեկանաց․ զորս կամելով նորա հանել յընկերութենէն, յանձն էառ ընդունիլ պատրաստական դրամս 20000, դահեկան․ իսկ վասն մնացեալ 20000, դահեկանացն յօժարեցաւ առնուլ 'ի նոցանէ զՄեղրամա՝ 10000, դահեկանաց․ ևս և զգումար ինչ պահանջից նոյնպէս 10000, դահեկանաց, որ էր առ Տիգրանայ ։ Արդ՝ 'ի հաստուցանել ընկերացն զխնդրեալսն յԱբշաւրայ, պարտ է 'ի հաշուեմատենի ընկերութեան զԳործագլուխ նորա նշանակել պարտապան, պարտատեարս առնելով զԳործարկղն, զՄթերս Մեղրամայ, և զՏիգրան, ըստ կանոնին՝ որ 'ի թիւն (ծը․ 4) ։

յնա․ Յետ բաժանելոյ Աբշաւրայ՝ միաբանեալքն յընկերութեան Բաբկէն և Գեղամ կարող են զհաշիւս իւրեանց առնել 'ի վերայ նոյն իսկ հաշուեմատենին, զոր երբեմն երեքեան 'ի միասին վարէին․ քանզի հաշուեմատն Գործագլխոյն Աբշաւրայ փակեալ և աւարտեալ գոլով, ոչինչ առնանէ յաւաջատութեան հաշուի մնացելոյն ։ Բայց Աբշաւիր եթէ կամեսցի ձեռնամուխ լինել առանձին տուրևառութեան, հարկ է նմա սկզբնաւորել զնոր հաշուեմատեան․ յորում 'ի նշանակելն զիւր Գործագլուխ պարտատէր 20000, դահեկանաց, ունի պարտապան առնել զԳործարկղն այնմ գումարի ։ Նոյնպէս օրէն է պարտապանս տասնական հազար դահեկանաց առ Գործագլուխն նշանակել զՄթերս Մեղրամայ, և զհաշուեմատն Տիգրանայ զորս յինքն ընկալաւ․ (ծէ) ։

յնբ․ Ի զատանիլ Աբշաւրայ՝ մնալով տուրևառութեանն 'ի ձեռս Բաբկէնի և Գեղամայ, այնուհետև ամենայն շահք և վնասք թէպէտ համարելի են երկոցունց նեթ, սակայն յանյաջողութենէ զխպուածոց եթէ անկարասցին կորզել զգումարս ինչ յըստանձնեալ պահանջից, որպէս և Աբշաւիր անձեռնհաս լիցի յընդունիլ 'ի Տիգրանայ զիւր պահանջսն 10000, դահեկանաց, նախ քան զյիշատակագրելն ինչ 'ի հաշուեմատեանս իւրեանց, պարտին հայիլ և քննել զդաշինս զոր արարեալ իցեն 'ի զատանիլն յընկերութենէ, զի թէ կամակար մտօք անխտիր յանձն առեալ իցեն զկորուստ և զկորզումն պահանջից, յայնժամ պարտ է սպասել մինչև ցժամ Կշռոյ․ յորում զանկորզելի պահանջսն հանեալ 'ի գումարէ ամոի Ողջ Գործագլխոյ, պարտին փոխադրել զայնս 'ի հաշուեմատն Թերայոյս Գործագլխոյ (մղէ․ ժԱ) ։ Իսկ եթէ կայցեն դաշնադրութիւնք և երաշխաւորութիւնք միմեանց, պարտ է զյիշատակագրութիւնս հաշուեմատենին յարմարել ըստ դաշանց իւրեանց ։

Օրինակ շարադրելոյ ընկերութեան, յորում մին 'ի հաշուընկերաց ոմն կամիցի բաժանիլ, յանձն առնու հոգացանել և զՄ՚ան ինչ 'ի Գործագլխոյ իւրմէ, մինչ դեռ չէ տուեալ նմա մասունս դրամոց ։

յնգ․ Դնիցուք թէ Կամսար խնդրէ բաժանիլ 'ի Մուշեղայ և 'ի Գուրգենայ 'ի հաշուընկերաց ամոի տուրևառութեան․ բայց երկոքին յետինքս կամին մնալ յընկերութեան, և վարել զնոյն վաճառականութիւն ։ Արդ՝ 'ի Կշռահաշուէ նոցա եկն 'ի յայտ՝ թէ Գործագլուխ Կամսարայ ժամանէ 'ի գումար 50000, դահեկանաց․ յորոց յանձն առնու նա ինքն կորուսանել զգումար 10000, դահեկանաց․ եթէ տացին նմա 40000, մաքուր դահեկանք՝ առանց ինչ պարտեաց և պահանջից ։ Զայդ դաշն ընդունելով հաշուընկերաց նորա, եթէ վճարեսցեն նմին 40000, դահեկանս, պարտին նշանակել զնոսին 'ի պահանջս Գործարկեղ, և 'ի պարտիս Գործագլխոյն Կամսարայ (ծը․ 4) ։ Իսկ զգումար 10000, դահեկանացն ունին նշանակել 'ի պահանջս հաշուեմասին Ճարից, և 'ի պարտիս Գործագլխոյ նորին Կամսարայ, յորմէ մնացին այն դրամք (մծը) ։

յնդ․ Յետ աւարտելոյ և փակելոյ զհաշիւ Կամսարայ՝ Մուշեղ և Գուրգէն կարեն ըստ առաջին կարգի իւրեանց վարել զնոյն հաշուեմատեան․ բայց Կամսար՝ եթէ կամեսցի սկզբնաւորել զտուրևառութիւն, պարտի ձեռնարկել 'ի նոր հաշուեմատեան․ յորում զայն ընկալեալ գումար 40000, դահեկանաց ունի նշանակել 'ի պարտիս Գործարկեղ, և 'ի պահանջս հաշուեմասին Գործագլխոյ իւրոյ (ծը․ ծէ) ։

# ՕԺԱՆԴԱԿԱԳԻՐՔ

Յաղագս Մատենից՝ որք հարկաւոր են վաճառականաց առ բարւոք վարելոյ շահավաճառութեան իւրեանց ։

յիե. Մատեանք նպաստամատոյցք ուղղակարգ յառաջատութեան Հաշուեմատենին, են տոմարք ինչ սակաւաթերթք, յորոց իւրաքանչիւրումն առանձնաբար նշանակելի են ամենայն տեսակք իրաց գտելոց 'ի տուրեւառութեան վաճառականին ։ Զայսոսիկ մատեանս իտալացիք Օժանդակագիրս (1) անուանեն. ըստ որում ձեռնտու լինին դիւրութեան և ուղղութեան Օրհաշուի և Մայրհաշուի մատենից ։ Շատութիւն և չափ Թանձրութեան տոմարացս կշռելի են 'ի յոլովութենէ ձեռնարկեալ իրողութեանցն և մթերից վաճառաց, որք որչափ շատք իցեն և բազմատեսակք, այնչափ առաւելագոյն մատենից կարօտին 'ի յիշատակագրութիւն. այլ մեք զկարեւորսն եթէ՝ որք հասարակ են և սովորականք առ ամենայն վաճառականս, կարգեսցուք յառաջիկայդ ։

յիզ. Օժանդակագիրք վերածին յերկուս կարգս, ոմանք գլխաւորք են, յորոց իմանայ վաճառականն զառօրեայ իրողութիւնս, և քաղէ 'ի նոցունց զյիշատակագրելին 'ի հաշուեմատենի. իսկ այլքն երկրորդականք են, որք զհաշուեմատեանն պահեն 'ի կանոնաւորեալ կարգի յուղղութեան իւրում և յանվրիպութեան ։

յիէ. Գլխաւորքն յօժանդակագիրս են ա. Մատեան Դրամարկեղ (1), յորում սովորութիւն է առանձնաբար նշանակել զընդունելութիւնս և զտուչութիւնս դրամոց ։ բ. Մատեան Սեղանոյ փոխանակութեան (2). յորում նշանակին շրջանք կամ փոխանցմունք դրամոյն, որ լինին 'ի սեղան փոխանակութեան ։ գ. Մատեան Վաճառմանց (3), յորում նշանակին վաճառեալ մթերքն ։ դ. Մատեան Գնուածոց (4), յորում նշանակին գնոյ առեալքն ։ ե. Մատեան Յանձնարարութեանց (5). յորում նշանակին ցուցակք վաճառամթերից յուղարկելոց առ այլս ։ զ. Մատեան Քաղուածոյ Նամակաց (6), յորում նշանակին ծանուցմունք և ազդարարութիւնք այլոց առ վաճառականն 'ի հատուցանել ումեք, և 'ի պահանջել դրամս յումեքէ ։ է. Մատեան Ապահովագրութեան (7). յորում նշանակին պատշաճեալքն առ զինչ և իցէ հաշիւս ապահովութեան ։ ը. Մատեան Տնական ծախուց (8). յորում նշանակին այն ամենայն դրամք՝ որք վարին 'ի պէտս առ տնին ծախուց ։ թ. Մատեան Ծախուց Տուրեւառութեան (9). յորում յիշատակագրին ծախք, որ 'ի պատճառս տուրեւառութեան ։

յիը. Երկրորդական օժանդակագիրք կոչին, ա. Մատեան Մթերանոցի (1), յորում նշանակին աղխամաղեք կամ մթերք եդեալք 'ի մթերանոցն, և որք բառնին անտի ։ բ. Մատեան Պայմանաժամուց (2), յորում նշանակին յանգք պայմանեալ ժամուց 'ի վճարել զպարտիս, և 'ի խնդրել զպահանջս ։ գ. Մատեան Մնացորդաց (3), յորում նշանակին թերակատար մնացեալքն 'ի պարտուց և 'ի պահանջից, որք չիցեն վճարեալք ըստ ժամանակին ։ դ. Մատեան փոխանակագրոց (4), յորում նշանակին ամենայն տեսակք յղելի և քարշելի փոխանակագրոց ։ ե. Մատեան Ցանկի Հաշուեմատենին (5), յորում այբուբենական կարգաւ նշանակելի են ամենայն անձինք, մթերք վաճառաց և հաշիւք, որք 'ի Մայրհաշուի անդ ունին զիւրեանց առանձին հաշուեմատունս, նշանակելով 'ի նմա որոշաբար զթիւ երեսացն կամ զթղթահամարս, որպէս և զհատորս մատենիցն՝ առ 'ի կարող լինելոյ դիւրաւ և անվրէպ գտանել զամենայն ։

յիե. (1) ՕԺԱՆԴԱԿԱԳԻՐՔ ։ Իտալ. Libri Ausiliari. Լիպրի Աուզիլիարի, կամ Sussidiarj, Սուսսիտիարի. որ է նպաստիչ, կամ Օժանդակ ։

յիէ. (1) Մատեան Դրամարկեղ ։ Իտ. Libro Cassa. Լիպրօ Գասսա ։ (2) Մատեան Սեղանոյ ։ Իտ. Libro Banco. Լիպրօ Պանգօ ։ (3) Մատեան Վաճառմանց ։ Իտ. Libro Véndite. Լիպրօ Վէնտիթէ ։ (4) Մատեան Գնուածոց ։ Իտ. Libro Cómpere. Լիպրօ Գօմբէրէ ։ (5) Մատեան Յանձնարարութեանց ։ Իտ. Libro Fattúre. Լիպրօ Ֆաթթուրէ. որ է առել, գիրք ցուցակի յանձնեալ վաճառաց ։ (6) Մատեան քաղուածոյ նամակաց ։ Իտ. Libro Carteggio. Լիպրօ Գարթէճճօ ։ (7) Մատեան Ապահովագրութեան ։ Իտ. Libro Sicurtà. Լիպրօ Սիգուրթա ։ (8) Մատեան Տնական ծախուց ։ Իտ. Libro Spese di Casa. Լիպրօ Սբէզէ տի Գազա ։ (9) Մատեան ծախուց Տուրեւառութեան ։ Իտ. Libro Spese di Negozio. Լիպրօ Սբէզէ տի Նէկօցիօ ։

յիը. (1) Մատեան Մթերանոցի ։ Իտ. Libro Magazzini. Լիպրօ Մակացցինի ։ (2) Մատեան Պայմանաժամուց ։ Իտ. Libro Scadénze. Լիպրօ Սգատէնցէ ։ (3) Մատեան Մնացորդաց ։ Իտ. Libro Resti. Լիպրօ Ռէսթի ։ (4) Մատեան փոխանակագրոց ։ Իտ. Libro Tratte e Rimesse. Լիպրօ Թռաթթէ է Ռիմէսսէ ։ (5) Մատեան Ցանկի ։ Իտ. Libro Alfabeto. Լիպրօ Ալֆապէթօ ։

ճխթ. ՄԱՏԵԱՆ ԴՐԱՄԱՐԿՂ՝ կարևորագոյն և գլխաւոր յօժանդակագիրս վաճառականին, չկարօտի բազմաթերթ հատորոյ, այլ չափաւոր թանձրութեան։ Երկոքին երեսք մատենիս վարելի են ըստ ձևոյ օրինակի մայրհաշուին՝ թուանշանեալք միով թղթահամարաւ։ Եւ քանզի այս մատեան ունի բովանդակել յինքն զառեալ և զտուեալ դրամս, կամ որ նոյն է՝ զպարտիս և զպահանջս դրամոց վաճառականին. վասն որոյ 'ի ձախակողման երեսն նշանակելի են առեալքն կամ մտեալքն յարկղ. իսկ յաջակողմեանն՝ ելեալքն անտի. կամ լաւ ևս ասել՝ հաւաքեալ դրամքն համարելի են իբր պարտիք, և հանեալքն 'ի դուրս՝ իբր պահանջք։

Յիշատակագրութիւնք մատենիս պարտին լինել որոշք, պարզք և բացայայտք. 'ի լուսանցս իւրաքանչիւր հատուածոց բանից նշանակելի է թուական տարւոյն և ամսաթիւն, յետ որոյ լինին մանրամասն յիշատակագրութիւնք իրաց ըստ ամենայն պարագայից ընդունելութեան և տուչութեան դրամոցն, յանուանէ նշանակելով ոչ միայն զանձինսն՝ յորոց ընկալեալ լինին, և որոց տուեալք, այլև ծանուցանելի է, թէ ընդունելութիւն և տուչութիւն դրամոց՝ յինչ պէտս և վասն որոյ լինի. առ 'ի կարող լինելոյ յետոյ դիւրաւ և անվրէպ քաղել անտի զյիշատակագրելսն յօրհաշիւ մատեանն. որպէս և 'ի դիպուածս սպրդեալ վրիպակաց օրհաշուի կամ մայրհաշուի մատենիցն ստուգել նովաւ։

Ամենայն պարտիք և պահանջք նշանակեալք 'ի մատենիս՝ յամսոյ ամիս գումարելիք են և համեմատելիք միմեանց, քննելով թէ չափ զանազանութեան նոցա յարմարիցի դրամոցն, որք կայցեն յարկեղ. զի թէ անհամեմատ գտցի, յայտ է թէ վրիպակ սպրդեալ կայ յայն ամսական հաշիւ, զոր պարտ է որոնել, և անյապաղ ուղղագրել։

Կարևորութիւն կիրառութեան մատենիս՝ ոչ է լոկ վասն գիտելոյ զել և զմուտ դրամոց, այլև 'ի ձեռն սորա պարտի վաճառականն խնամով միտ դնել, զի դրամարկղն մի գտցի երբէք պակասեալ 'ի դրամոց, որոց պէտս ունի տուրևառութիւնն վասն ո և իցէ անակնունելի դիպուածոց։

Եթէ հարկն պահանջեսցէ որոշակի բացայայտել զտեսակս առեալ և տուեալ դրամոցն, պիտի յաւելուլ և զայլ գաւազանս, յորում նշանակեսցին թիւք, տեսակք և արժէք օտարազգի դրամոց, և զկնի նոցին յիւրում տեղւոջ գրեսցի և գումար բովանդակութեան արժէիցն ըստ սովորական դրամոց քաղաքին։

Եթէ մին յերկոցունց երեսաց այսր մատենի ծագէ 'ի ծագ լցցի գրութեամբ, պարտ է գումարել զդրամսն առ սոս գաւազանաց, և համեմատելով զերկոսին երեսսն ընդ միմեանս, զյաւելուած պարտեացն փոխադրել 'ի յաջորդ երես։

Յիշատակագրութիւնք այսր մատենի օր ըստ օրէ ըստ կարգի ամսաթուոյն փոխադրելի են յօրհաշիւ մատեանն, և զամենայն փոխադրեալ հատուածսն նշանաւ իւիք յայտ առնել, զի մի վրիպակաւ անդրէն կրկնեսցի, և կամ խոպան մնասցի կարևոր հատուած ինչ յիշատակագրութեան։

ճծ. ՄԱՏԵԱՆ ՍԵՂԱՆՈՑ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ։ Կարևոր է սա առաւելապէս յայն քաղաքս, յորս կայցեն հաստատեալ այսպիսի Սեղանք, մանաւանդ եթէ իցեն և քաղաքական օրէնք ինչ, որպիսի էին երբեմն 'ի Վենետիկ, զի 'ի ժողովատեղի վաճառականաց օր ըստ օրէ ամենայն փոխանակագիրք վճարելիք Սեղանով փոխանակութեան՝ սովոր էին համեմատիլ ընդ դրամագլխոյ պարտատեարցն՝ որոց անկ էր հատուցանել զգումար փոխանակագրոյն, զի մի վրիպակ կամ գաւաճանութիւն ինչ մնասցէ 'ի հաշիւս Սեղանոյ։ Սակս այսր զգուշաւոր քննութեան սահմանեցաւ և յաւելուած աւուրց վեցից յետ լրանալոյ պայմանեալ ժամադրութեան 'ի հատուցման փոխանակագրոց։

Այս մատեան պարտի լինել չափաւոր դրից մեծութեան, և հաշիւք նշանակելի են 'ի նմա ըստ կարգի պարտեաց և պահանջից հանդէպ միմեանց, յիշատակագրելով զշրջանսն կամ զփոխանցմունս դրամոցն, որք լինին 'ի նոյն Սեղան. որոշակի յայտ առնելով զորինչ յայլմէ յինքն վերագրի, և կամ յիւրմէ առ այլս։ Իւրաքանչիւր երեսք յաջմէ և յահեկէ բաժանելի են 'ի զանազան գաւազանս՝ ըստ օրինակի Դրամարկեղ մատենին (ճխթ). և նովին կարգաւ և կանոնիւ վարելիք 'ի գործ։ Նշանակելի են 'ի նմա ոչ միայն թիւք և արժէք, որպէս և գումարք դրամոց Սեղանոյ Փոխանակութեան, որք սովոր են աճիլ և նուազիլ, այլև հաշիւք արժէից նոցա ըստ սովորական դրամոց քաղաքին։

Ի ձախակողման երեսս, որք ցուցանեն զպարտիս Սեղանոյ փոխանակութեան, նշանակելի են ամենայն գումարք դրամոց՝ զորս ունիցի ոք 'ի նոյն Սեղան։ Իսկ յաջակողմանն, որք են պահանջք նորա, գրելի են ամենայն դրամք, զորս փոխանցէ ոք յայլս 'ի ձեռն այնր Սեղանոյ։ Այս մատեան յամսոյ ամիս կարօտի քննութեան 'ի ստուգել զճշգրիտ ընկալեալ և վճարեալ փոխանակութեանց, զի մի վրիպակ ինչ սպրդեսցի։

գլ. ը. ՄԱՏԵԱՆ ՎԱՃԱՌՄԱՆՑ։ Կիրառութիւն մատենիս է՝ ըստ աւուրց ամսոյն մի- միանց զկնի նշանակել կարգաւ զվաճառեալ մթերսն, թէ առանձնականք իցեն, և թէ օտարից կամ ընկերութեան, յայտ առնելով և զօրինակ վաճառմանն՝ եթէ իցէ պատրաստական դրամովք, կամ փոխանակութեամբ և կամ պայմանաւ ժամանակի։ Յիւրաքանչիւր տեսակս վաճառաց պարտ է յաւելուլ և զծախս նոցին, զպատրաստութեան բեռանց, զբեռնակրաց, զմաքսի, և զորինչ միանգամ ծախին 'ի հաշիւ գնողին։ Առ ամենայն գլուխս բանից մակագրելի են և թուանշանք վաճառեալ մթերիցն նշանակելոց 'ի մատեան Մթերանոցի (գլ. է)։ Ի դիպուածս տուրևառութեան զորինչ վաճառէ ոք, կարևոր է տալ 'ի ձեռս գնողին զպիտակ կամ զօրինակ հաշուի վաճառեալ մթերից, զոր իտալացիք կոչեն Գօնթօ Գօնէ. այն է՝ հաշուօրինակ կամ հաշուեցուցակ. յորում սովորութիւն է նշանակել զտեսակ վաճառեալ իրացն, զչափ, զգին և զճշգրիտ գումարն վճարելի դրամոցն։ Յետոյ առեալ զհաւասար օրինակ այնր հաշուի՝ գաղափարելի է յայս մատեան վաճառմանց։

գլ. թ. ՄԱՏԵԱՆ ԳՆՈՒԱԾՈՑ, զոր ոմանք կոչեն Մատեան Արժէից Վաճառաց։ Յայսմ մատենի նշանակելի են ամենայն մթերք վաճառաց, զորս գնոյ առնու վաճառականն. և եթէ ընկալեալ իցէ 'ի վաճառողէն զօրինակ հաշուի կամ զհաշուեցուցակ, պարտ է թուանշանել զայն և յայտ առնել 'ի յիշատակագրութիւնս այսր մատենի։ Իսկ զհաշուեցուցակ թերթն սովորութիւն է պահել 'ի տրցակս, զոր իտալացիք Քօլլի անուանեն, այն է՝ խուրձ, շոր, կապոց. յորում ամփոփին կարևոր թերթք վաճառական թղթոց։

Առընթեր իւրաքանչիւր յիշատակագրութեանց նշանակելի է նախ ամսաթիւն, յորում առեալ իցէ զմթերսն. և ապա անուն վաճառողին, արժէք վաճառացն, և վասն որոյ առեալք իցեն։

Եթէ գնոյ առեալ մթերքն իցեն յօտար սահմանաց տէրութեան, որոց չափք և կշիռք՝ որպէս և դրամք սովոր են լինել այլազանք քան զորս վարեն 'ի քաղաքի անդ՝ յորում բնակի վաճառականն, պարտ է և զնոսին որոշակի բացայայտել 'ի մատենիս, յորմէ կարասցէ յետոյ վերածել 'ի չափ և 'ի կշիռ՝ որպէս և 'ի դրամս տեղւոյն, ուր կամիցի վաճառել։

Ի գումար գնուածոյ արժէից վաճառացն պարտ է յաւելուլ և զամենայն ծախսն եղեալս մինչև ցզետեղել 'ի մթերանոց. և ապա զամբողջական բովանդակութիւն այնր գումարի համարել տիրապէս արժէք ստացեալ մթերիցն, և ըստ այնմ վաճառել։

գլ. ժ. ՄԱՏԵԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ։ Յայս մատեան ընդօրինակելի են ամենայն ցուցակք և հաշիւք վաճառացն, որք 'ի յանձնարարութենէ հեռաբնակ անձանց յուղարկին առ նոսա։ Հաշուեցուցակքս ըստ կարգի յանձնարարութեանց հետզհետէ միմեանց զկնի նշանակելի են 'ի սմա՝ բացայայտութեամբ ամենայն հանգամանացն՝ հանդերձ իւրաքանչիւր ամսաթուովք ըստ դիպելոյ աւուրցն։ Երեսք մատենիս բաժանելի են 'ի սովորական գաւազանս լուսանցից և 'ի գաւազանս դահեկանաց և փողոց իբրև զայլ մատեանսն։

Ոմանք 'ի վաճառականաց սովոր են զմատեանս զայս վարել կրկին երեսօք, առ իւրաքանչիւր հատուածս յանձնարարութեանց սահմանելով զկրկին երեսս, յորոց 'ի միումն գրեն զպատուիրեալսն, և յերկրորդին զկատարեալսն. գաղափարելով և զօրինակ ցուցակի յանձնարարութեանցն՝ զոր ընկալան, և զոր առաքեն առ յանձնողն. վասն որոյ այսմ մատենի սեփական անուն կոչեն Գիրք Ապսպրանաց, այն է կատարելի յանձնարարութեանց, որ յիտալացւոց անուանի Լիպրօ Օրտինի. յորում նշանակին լոկ յանձնարարութիւնք այլոց՝ եղեալք առ վաճառականն։ Իսկ զյանձնարարութիւնսն՝ որք լինին 'ի վաճառականէն առ այլս, զատեն յառանձին մատեան, որում և անուն կոչեն Լիպրօ Ֆաթթուրէ. որ է իբր ցուցակ իրաց յանձնելոց առ այլս 'ի կատարումն։ Ընդունելի է և այս կարգ, միանգամայն արկեալ 'ի գործ առ բազմազբաղ վաճառականս. բայց սովորական գործածութիւնն է զերկոսին ևս 'ի մի հատոր անխտիր նշանակել։

գլ. ժա. ՄԱՏԵԱՆ ՔԱՂՈՒԱԾՈՑ ՆԱՄԱԿԱՑ։ Յայսմ մատենի ընդօրինակելի են ամենայն հատուածք նամակագրոց եկելոց առ վաճառականն, յորս յիշատակին տուչութիւնք և կամ ընդունելութիւնք դրամոց յումեքէ 'ի հաշիւ նորին իսկ վաճառականին։ Քաղուածս ունի բովանդակել 'ի համառօտ յայտարարութիւն կարևորաց եւեթ. գաղափարելի է թուական տարւոյն և ամսաթիւ նամակին, անուն գրողին, պատճառ դրամատուութեան կամ ընդունելութեանն.

և գումար Դրամոյն ։ Օրինակ իմն՝ եղեալ թէ Մուշեղ գրէ առ քեզ 'ի Կարնոյ, զի վասն կարգադրութեանդ՝ զոր կանխաւ արարեալ էիր առ նա, տուեալ է Սմբատայ Կարնեցւոյ դաՀեկանս, 3800 ։ Զայդ գրուած 'ի Համառօտն բովանդակելով՝ նշանակելի է 'ի քաղուածանամակին այսպէս. * 'Ի Յուլիսի 20. Մուշեղ տուեալ է Սմբատայ ըստ կարգադրութեանս ... դՀ. 3800 ։ — |.

Արտաքոյ այսր մատենի է և Գիրք Պատճէնամակաց անուանեալ, զոր իտալացիք կոչեն Գօփփիա Լէթթէրէ. պիտանի ոչ միայն վաճառականաց, այլև ամենեցուն նոցա՝ որք թղթակցութիւնս առնեն ընդ Հեռաւորս ։ Զի զօրօրինակ զգուշութեամբ պաՀելի են ամենայն նամականիք եկեալք առ վաճառականն, նոյնպէս և առաքեալքն 'ի նմանէ իբր պատասխանիք նոցին նամակաց. յորոց 'ի յայտ գան կարևոր տեղեկութիւնք և ստուգութիւնք երկբայութեանց՝ մանաւանդ յաւիթս Հակառակութեան ։

ԺԵ. ՄԱՍԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆՑ ։ Յայսմ մատենի նշանակելի են Հետզհետէ ամենայն դիպուածք և Հաշիւք, որք լինին ընդ ձեռն վաճառականին յապաՀովագրութիւն մթերից իւրոց և կամ այլոց 'ի խնդրոյ նոցա ։ Ի յիշատակագրութեան մատենիս ծանուցանելի է Համառօտիւ անուն նաւուն և նաւապետին, Հանգամանք ուղևորութեան, արժէք յուղարկեալ վաճառացն, գաՀն վճարելի վարձուց ապաՀովագրութեան. յայտարարութիւն անուան միջնորդին, որոյ ձեռօքն եղեալ իցէ դաշնագրութիւնն, որպէս և զանուն անձին, որոյ վասն լինի ապաՀովագրութիւնն. նշանակելով զաւր և զամսաթիւ՝ յորում աւուր արարան դաշինքն ։

'Ի Հաճել զՀետաքննին Համբակս՝ 'ի վախճան գործոյս տացուք և զօրինակ կամ զձև բանից դաշնագրութեան և զխոստման, զոր սովոր են վարել ապաՀովագիրք ։

ԺԶ. ՄԱՍԵԱՆ ՏՆԱԿԱՆ ԾԱԽՈՒՑ ։ Յայս մատեան նշանակելի են Համօրէն ծախք՝ օր ըստ օրէ եղեալք առ տնէն ։ Յիշատակագրութիւնք մատենիս կարեն լինել այլ և այլ օրինակաւ. իբր զի՝ կամ մանրամասն յայտարարութեամբ մի առ մի նշանակելով զամենայն, և կամ զբովանդակ ծախս աւուրն՝ որպէս և զամբողջ շաբաթածախսն 'ի մի գումար և 'ի մի յիշատակագրութիւն բովանդակելով ։ Սակայն պարտ է յամսոյ ամիս Հաւաքել, և ամփոփելով 'ի մի գումար՝ փոխադրել 'ի մատեան օրՀաշուին իբր պաՀանջք դրամարկեղ ։ Զայս մատեան միացուցանեն ոմանք ընդ մատենի ծախուց տուրևառութեան, անխտիր յիշատակագրելով 'ի սմա և զերկոսին ծախսն. բայց զատանելն բարւոք է, մանաւանդ թէ և կարևոր իսկ՝ առ գիտելոյ որոշակի զչափ զանազան ծախուցս այսոցիկ ։

ԺԷ. ՄԱՍԵԱՆ ԾԱԽՈՒՑ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆ ։ Յայսմ մատենի նշանակելի են ամենայն ծախք, որք լինին 'ի տուրևառութեան վասն զինչ և իցէ մթերից, եթէ 'ի Հաշիւ վաճառականին, և թէ յայլոց պէտս ։ Զկարգ և զկանոն յիշատակագրութեանց այսր Հաշուետումարի՝ որպէս և նախընթաց տնական ծախուց, մարթ է ուսանել 'ի խրատուց անտի և յօրինակաց, զոր կարգեցաք 'ի թիւն (մթ. և այլն. յերես, 123, և 124) ։

## Կերպարանութիւն Երկրորդ Մատենից ։

ԺԸ. ՄԱՍԵԱՆ ՄԹԵՐԱՆՈՑԻ ։ Յայս տումար նշանակելի են ամենայն աղխամաղխք վաճառելիք, որք մթերեալ զետեղին 'ի շտեմարանս, և որք բառնին անտի ։ Յիշատակագրութիւնք մատենիս լինին 'ի կրկին երեսս ըստ ձևոյ մայրՀաշուի գրոց. 'ի ձախակողմեան երեսն նշանակելի են մտեալքն կամ եդեալքն 'ի մթերանոց, իսկ յաջակողմեանն՝ ելեալքն կամ Հանեալք անտի. որք և պարտին նշանակիլ Հանդէպ միմեանց, զի մտեալքն և ելեալք միանգամայն երևեսցին ։ Ոմանք 'ի վաճառականաց՝ այսմ Հատորոյ անուն կոչեն Մատեան Քնուոց. որ ըստ իտալացւոց աւի Լիպրօ Մագազինօ. զի որովՀետև վաճառքն զետեղելիք 'ի մթերանոցս սովոր են թուանշանիլ առ որոշելոյ 'ի միմեանց, և ապաՀովելոյ յամենայն կասկածելի խարդախութենէ սպասաւորաց, զթուանշանն զայնոսիկ անցուցանեն յայս մատեան, յիշատակագրելով ոչ միայն զթիւ բեռանցն, զկշիռ ծանրութեանն, զորքանութիւն ծրարիցն, և զկանգնաչափս նոցին, այլև սեփականեն միում միում առանձին զթուանշանս, սկսեալ 'ի միոյ մինչև ցթիւն՝ յոր ժամանեն մթերք վաճառաց ։ Նոյն թուանշանք յիշատակագրելի են և 'ի Հանելն զվաճառսն 'ի մթերանոցէ. որով ծանիցեն Հաւաստութիւնք և զանազանութիւնք մուծելոցն և 'ի դուրս Հանելոց ։

Առ ասացելովքս ծանիցեն նորավարժք և զայն, զի գտանին բազում մթերք վաճառաց, որք ընդերկար մնալով 'ի շտեմարանս սովոր են աճել և կամ նուազել. վասն որոյ պարտ է և զկշռառութեանն՝ որպէս և զպակասման նոցին նշանակել յայսմ մատենի, որով կարասցէ վաճառականն ըստ Հնարաւորութեան գտանել զանվրէպ Հաշիւս նոցա ։

ՅԼԹ. ՄԱՏԵԱՆ ՊԱՏՄԱՆԱԺԱՄՈՒՑ։ Յայս մատեան նշանակելի են ամենայն պարտք և պահանջք, որք 'ի պայմանեալ ժամու ըստ աւուրց ամսոյն հատուցանելիք և կամ պահանջելիք իցեն։ 'Ի ձախակողմեան երեսս մատենիս յիշատակագրելի են վճարելի դրամք. իսկ յաջակողմեանն՝ կորզելիք։ Առ իւրաքանչիւր ամիս տարւոյն որոշելի են առանձին երեսք, զի ընդ բանիլ մատենին՝ տեսցի միանգամայն, թէ յայնմ ամսեան զինչ ինչ կան հատուցանելիք և պահանջելիք։

'Ի վճարելն ումեք՝ կամ յընդունելն յայլոց զամբողջ գումար դրամոյն, անյապաղ ջնջելի է յիշատակագրութիւնն որ վասն նոցին իրաց. իսկ եթէ հատուցումն կամ ընդունելութիւն դրամոյն լինիցի թերի, կամ թէ խափանի անվճար. պարտ է յայնժամ 'ի լրանալ պայմանադրեալ ժամուն՝ եղծանել զյիշատակագրութիւնն զայն, և փոխադրել 'ի մատեանն Մնացորդաց, զորմէ ասասցուք զկնի։

Ամենք 'ի վաճառականաց յայս հատոր գրոց սովոր են նշանակել և զփոխանակագիրսն, որոց դրամք 'ի պայմանեալ ժամու հատուցանելիք են, և կամ կորզելիք. այլ քանզի տուրևառք փոխանակագրոց ունին զիւրեանց սեփական և առանձին հանգամանս, լաւ ևս է զատել զհատոր մատենի նոցա։

ՅԽ. ՄԱՏԵԱՆ ՄՆԱՑՈՐԴԱՑ։ Յայս մատեան նշանակելի են թերի մնացեալքն 'ի պարտեաց և 'ի պահանջից, որք ըստ ժամանակին չիցեն վճարեալք. փոխադրելով զնոսին 'ի մատենէ անտի պայմանաժամուց։ 'Ի սովորութենէ վաճառականաց մարթ է յայսմ մատենի անխտիր 'ի ձախակողմեան որպէս և յաջակողմեան երեսն նշանակել զհատուցանելի և զպահանջելի դրամսն։ Իսկ յիշատակագրութիւնք 'ի սմա ջնջելի են յընդունելութեան և 'ի հատուցման դրամոցն՝ որք եթէ տակաւին թերատք լինիցին, փոխադրելի են դարձեալ յայլ տեղի 'ի նոյն մատեան։

ՅԽԱ. ՄԱՏԵԱՆ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ։ Յայսմ մատենի նշանակելի են ամենայն փոխանակագիրք, զորս վաճառականն ընդունի կամ առաքէ և փոխանցէ յայլս։ Ամենք շատ համարին քաղելով ևեթ նշանակել զամի, զամսաթիւ, զառաքող փոխանակագրոյն և զգումար դրամոյն որ 'ի նմա։ Իսկ այլք սովոր են ամբողջ գաղափարել զհաւասար օրինակն, զի թէ դիպուածով իւիք կորիցէ սկզբնագիրն, մարթասցին դարմանել զպակասութեան նորա։

Զայս մատեան բաղումք 'ի վաճառականաց սովոր են վարել կրկին երեսօք ըստ ձևոյ մայրհաշուին. 'ի պարտակողմն նշանակեն զայն փոխանակագիրս, որք ժամանեն առ ինքեանս 'ի հատուցանել զդրամսն. իսկ 'ի պահանջակողմն նշանակեն զայնոսիկ, որոց դրամք կորզելի են յայլոց։ 'Ի նշանակել անդ զժամանեալսն՝ յիշատակագրելի է և կանխագդեցիկ ծանօթութիւնն, զոր ընկալեալ իցէ ոք 'ի վաճառակցէ իւրմէ. զի նովաւ ևեթ մարթ է անկասկած ընդունիլ և աներկիւղ ստորագրել փոխանակագրոյ։ Նա ևս յընդունելութեան և 'ի ստորագրութեան փոխանակագրոց՝ եթէ կորզելիք իցեն և թէ հատուցանելիք, 'ի լուսանցս յիշատակագրութեան իւրաքանչիւրոցն նշանակելի են և աւուրք ստորագրութեանն որպէս և հատուցմանն։

Եթէ դէպ լիցի իրաւացի պատճառօք մերժել զփոխանակագիր ինչ, կամ հարկն ստիպեսցէ իրաւաբողոք առնել վասն անվճար մնալոյ փոխանակագրոյն, պարտ է նշանակել և զայն 'ի լուսանցս յիշատակագրութեան նոյա, որով որոշեսցին յայլոց։ Իսկ թէ զկարգ լինիցի իրաւաբողոք յայտարարութիւնն 'ի պատճառս անընդունելի լինելոյ՝ կամ անվճար մնալոյ փոխանակագրոյ, կարգեսցուք զկնի գրոյս։

Գիտելի։ Օրէնք են հասարակաց դնել թուագիր փոխանակագրոց 'ի ձախակողման վերին ծագն՝ նշանակելով զթիւ օրինակի նոցա. զի որովհետև ամենայն փոխանակագիրք սովոր են լինել երրեակ հաւասար օրինակօք, 'ի նախկինն գրելի է Առաջին. 'ի յաջորդն՝ Երկրորդ. և 'ի յետինն՝ Երրորդ. զի 'ի կորնչել առաջնոյն՝ յաջորդքն լուցուն զտեղի նորա։ Նոյնպէս և 'ի ստորին ծայրն սովորութիւն է վաճառականաց արձանագրել զքաներորդն փոխանակագրոյն, զոր յընթացս տարւոյն կամ տուրևառութեանն արարեալ իցէ։ Զօրինակ և զտեղի գրութեան թուանշանացս տես 'ի տախտակին՝ յերես. 82։

ՅԽԲ. ՄԱՏԵԱՆ ՑԱՆԿԻ։ Այս հատոր գրոց առ իտալացիս Ռուբրիկ կոչի, զի այբբենական կարգաւ բովանդակելի են 'ի սմա ամենայն անձինք՝ ոչ միայն ըստ անուանցն, այլև ըստ մականուանց, որպէս և համօրէն մթերք վաճառաց, որոց կայցեն հաշուեմատունք 'ի մայրհաշւին։ Զօրօրինակ՝ 'ի կամիլ նշանակել զԱրշակ Կամսարական, չէ բաւական կարգել ընդ Այբ գրով զանունս Արշակ Կամսարական, այլև ընդ Կեն գրով նշանակելի է Կամսարական Արշակ. կարգելով զթղթահամար մայրհաշուին յերկաքանչիւր տեղւոջ յայնոսիկ՝ առ 'ի դիւրաւ գտանել զխնդրեալն։

Այս մատեան որովհետեւ սահմանեալ է լինել ցուցակ իրաց պարունակելոց 'ի մայրհաշւին, օրէն է կազմել ըստ դրից նորա . իսկ զթերթս թղթոյն մարթ է առնել ըստ թուոյ այբուբենից . որք և նշանակելի են կարգաւ յեղերս թղթոյն՝ վերուստ 'ի վայր հատանելով զնոսին աստիճանաբար՝ զի ընդ բանիլ արտաքին պահարանին կամ կողին, միանգամայն 'ի մի հայեցուած աչաց երեւեսցի կարգ գլխագրոց . որոց խոշորութիւն ունի համեմատիլ մեծութեան դրից մատենին ։

յիդ . Ի կարգս նախաճառեալ օժանդակագրոցդ սովոր են ոմանք յաւելուլ և զայլ քանի մի հատորս մատենից . յորոց առաջին կոչի Ցուցակ . զոր Իտալացիք անուանեն Ինվէնթարիօ ։ Յորում նշանակին ամենայն ինչք և ստացուածք՝ որպէս և պարտիք վաճառականին առ 'ի հասու լինել ճոխութեան և վիճակին, յորում գտանի . զորոյ զօրինակն ունիս տեսանել յերկրորդ մասին գործոյս՝ յերես 28 . 35 . և 42 ։ Այս մատեան ցուցակի պատշաճական է ամենայն մարդոյ առանձինն, զոր չէ օրէն խառնել ընդ մատեանս վաճառականութեան . զի 'ի տուրեւառութիւնս սովորութիւն է նշանակել զայն աղխամաղխս եւեթ, որք մտանեն 'ի վաճառաշահութիւն . որպէս և յընկերական տուրեւառութեան նշանակելի են այն ստացուածք միայն, որք իբր դրամագլուխ դնին 'ի հաշիւս ընկերութեան, և ոչ զորս առանձնաբար ունիցին իւրաքանչիւր հաշուընկերք ։

յիե . Երկրորդ հատոր գրոց այն է, զոր Իտալացիք կոչեն Սքարթաֆաչչիօ կամ Սքուառա-չէօ, որ է Պիտակ կամ տումար հարեւանցի գրուածոց, զոր ոմանք յարմարագոյն եւս անուանեն Մէմօռիալէ . այսինքն Յիշատակարան . որ է մատեան խուռն և անխտիր գրուածոց զինչ և իցէ իրաց գիպելոց և պատշաճելոց առ տուրեւառութիւն ։ Համարի սա հիմն կամ սկզբնագիծ օրինակ և նախագաղափար օրհաշիւ մատենին, որպէս և այլ ամենայն հաշուետումարաց . զի է իբր դարան համօրէն դիպուածոց տուրեւառութեան ։ Յիշատակագրութիւնք 'ի սմա պարտին լինել ընդարձակ բանիւք, մանրամասն պարզաբանելով զամենայն դիպուածս տուրեւառութեան ընդ ում և իցէ . նշանակելով զանուն, զմականուն, զքաղաք և զվիճակ գնողաց և վաճառողաց . զպայմանս և զորպիսութիւն վաճառացն, զգին նոցա և զժամանակ հատուցմանն, զկշիռ և զչափս նոցին, զմիջնորդ տուրեւառութեան՝ թէ կայցէ . զտեսակ և զթիւ վճարեալ և ընկալեալ դրամոց, որք թէ իցեն օտարազգիք՝ վերածելի են 'ի սովորական դրամ քաղաքին ։ Այս մատեան որովհետեւ նոյնանայ ընդ օրհաշիւ մատենին, զանց արարաք դասել 'ի կարգս օժանդակագրոց . բայց համարիմք անհրկեայ, թէ ամենայն վաճառականք ունին զայսպիսի առձեռն մատեան կամ տումար 'ի նշանակել անխտիր զհամօրէն դիպուածս տուրեւառութեան՝ իբր յիշատակարան 'ի չմոռանալ զօր ըստ օրէ պատահեալսն . յորմէ կարասցեն յետոյ անցուցանել 'ի մատեան օրհաշուին ։ Օգուտս այսր տումարի կատարեն առաջարկութիւնքն, զորս մեք եդաք 'ի սկիզբն իւրաքանչիւր օրհաշուի, յորոց քաղեցան յիշատակագրութիւնք նորա ։

յիզ . Այլ և երրորդ հատոր գրոց՝ պիտանացու այնոցիկ, որք ունին գործարանս ձեռակերտաց, և վարեն զաշխատաւորս ընդ ձեռամբ ։ Կարգ և դասաւորութիւն յիշատակագրութեան մատենիս պարտի լինել ըստ օրինակի մայրհաշուին . առ իւրաքանչիւր աշխատաւորս ըստ անուանց նոցա սահմանելի են առանձին հաշուեմասունք կրկին երեսօք պարտեաց և պահանջից ։ Ի պարտակողմն նշանակելի են ոչ միայն տուեալ դրամքն, այլ և նիւթք և պէտք յաշխատութիւն ձեռագործաց . իսկ 'ի պահանջակողմն վարձք աշխատութեան նոցա, և լրացեալ ձեռագործք, որք ընկալեալ լինին 'ի նոցանէ ։ Այսմ մատենի իտալացիք անուն կոչեն Լիպրօ փակէ՝ Լավօռանթի ։ Այն է գիրք աշխատաւորաց ։

յիէ . Կամին և այլ բազմադիմի տումարք և տոմսակք, որպիսի են նամակածախուց, վճարելի և վճարեալ հաշուեցուցակաց, նաւուց և նաւաստեաց . որպէս և այլ մանրամասն գրուածոց հաշուի, հնարեալք 'ի պէտս առանձնական դիւրութեան իւրաքանչիւր վաճառականաց . այլ քանզի չեն 'ի հասարակ գործածութեան, զանց առնեմք յիշատակել . շատ համարելով զկարեւորսն և զսովորականսն, զորս կարգեցաք . քանզի և 'ի յիշատակելոց աստի մարթ է որոց կամիցին առնուլ օրինակ 'ի կազմել զինչ և իցէ գիրս ըստ կամի և ըստ պէտս իրացն՝ յորս պարապիցին ։

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՎՐԻՊԱԿԱՑ ՀԱՇՈՒԵՄԱՏԵՆԻՑ

ճխէ. Համարակալ վաճառականութեան՝ թէպէտև ամենայնիւ հմուտ իցէ կանոնաց հաշուեմատենի, և քաջավարժ 'ի հաշիւս. սակայն և այնպէս յոլովակի մարդկային տկարութեամբ կարէ վրիպիլ կամ 'ի թուագրութիւնս, կամ 'ի հաշիւս, կամ 'ի գումարս, կամ 'ի չափս կշռոյ մթերից, և կամ յայլայլութիւնս անուան պարտապանաց և պարտատերց, վասն որոյ կարևոր է գիտել և զկանոնսն՝ որովք 'ի յայտ գան վրիպակք, և որովք հնար է ուղղագրել զնոսին.

Վրիպակք 'ի հաշուեմատեանս սովոր են կրկնօրինակ կերպարանիլ. ոմանք յայտնի և բացերևք են. զորս մարթ է յառընթեր եղելոց իրացն գուշակել՝ թէ վրիպումն կայ. իսկ այլք թագուն և անյայտք են, զորս չէ հնար իմանալ կամ գուշակել մինչև ցժամ Կշռահաշուի, յորում ևեթ սովոր է հարկաւ 'ի յայտ գալ, զի ընդդէմ կանոնաց հաշուեմատենի ( ճա ) գումարք պարտեաց և պահանջից անհաւասար ելանեն միմեանց, որով յայտնի լինի, թէ վրիպակ ինչ զանխուլ սպրդեալ կայցէ 'ի հաշիւսն. Զկանոնս ուղղագրութեան երկոցունց սոցա կարգեսցուք յառաջիկայդ.

### Ուղղագրութիւն Յայտնի Վրիպակաց.

ճխը. Կանխեսցուք վերադրովդ՝ թէ յայտնի վրիպակք դիւրաբար ճանաչին, կամ դիպուածով իւիք անկանին ընդ տեսութեամբ. Արդ՝ այսպիսի վրիպակք մարթին լինել սպրդեալ 'ի մատեան օրհաշուին, և 'ի նմանէ փոխանցեալք 'ի մայրհաշիւն. և կամ անսխալ գոլով յօրհաշուին, 'ի փոխագրութեան անդ սպրդեալ իցեն 'ի մայրհաշիւն.

ճխթ. Վրիպակք Օրհաշուին փոխանցեալք 'ի Մայրհաշիւն՝ կարեն լինել կամ 'ի գումարս դրամոցն, զի փոխանակ գնելոյ 1200, դահեկան, գրեալ կայցէ 1000. Կամ յայլայլութիւնս անուան պարտապանաց. իբր զի փոխան Վահրամայ գրեալ իցէ Սմբատ պարտապան. Կամ յանուանս պարտատերց, զի փոխանակ պարտատէր գրելոյ զԱշոտ, եդեալ կայցէ Արշաւիր. Եւ կամ այլայլութիւն անուանն իցէ ընդ մէջ պարտապանի և պարտատեառն. որպիսի սովոր է հանդիպել, եթէ պարտապան գրեսցի Գրամարկղն, և պարտատէր Նարկէն, որք ընդ հակառակս՝ ունէին նշանակիլ Գրամարկղն պարտատէր, և Նարկէն պարտապան.

ճծ. Եթէ 'ի յայտ եկեսցէ՝ զի փոխանակ նշանակելոյ 1200, դահեկան 'ի պարտիս Գրամարկեղ և 'ի պահանջս Սեղանոյ փոխանակութեան, վրիպակաւ նշանակեալ իցէ 1000, դահեկան ևեթ. մարթ է մեղմաբար քերելով ուղղագրել զայն՝ թէ 'ի մատեան Օրհաշուին, և թէ 'ի Մայրհաշիւն. Իսկ եթէ ոք կամեսցի առանց քերելոյ ուղղել, օրէն է յայնժամ զԳրամարկղն գրել պարտապան 200, դահեկանաց, պարտատէր առնելով զՍեղան փոխանակութեան. յորում պարտ է միանգամայն ծանուցանել, թէ յիշատակագրութիւնս նշանակի յուղղագրութիւն վրիպակին եղելոյ կանխաւ ('ի 5. յունվարի. կամ մարտի, կամ յոր ամիս և իցէ) ուր պարտ էր նշանակել 1200, դահեկան, և ոչ 1000.

ճծա. Եթէ յերևան եկեսցէ՝ զի 'ի յիշատակագրութիւնս Օրհաշուին փոխանակ պարտապան առնելոյ զԱրամ 1000, դահեկանի, և պարտատէր զԳրամարկղն, 'ի տեղի Արամայ վրիպակաւ գրեալ իցէ Աբգար, և այնպէս փոխագրեալ 'ի Մայրհաշիւն. Յուղղագրութիւն վրիպակիս պարտ է նշանակել 1000, դահեկան 'ի պարտիս Արամայ, և 'ի պահանջս Աբգարու, որով պարտիք 1000, դահեկանացն վրիպակաւ նշանակեալ 'ի վերայ Աբգարու, անցանեն յԱրամ, և ուղղի հաշիւն.

ճծբ. Դարձեալ՝ դիցուք թէ յՕրհաշուին փոխանակ Կադմոսի վրիպակաւ նշանակեալ կայցէ Փառնակ պարտատէր 1000, դահեկանաց. յուղղագրութիւն վրիպակիս պարտ է ըստ կանխագրելոյս՝ զայն 1000, դահեկանն նշանակել 'ի պարտիս Կադմոսի և 'ի պահանջս Փառնակայ. որով գումարն 1000, դահեկանաց անցանէ 'ի հաշուէ միոյն առ միւսն.

ճծգ. Եթէ ծանիցի՝ զի վրիպակն սպրդեալ 'ի մատեանս օրհաշուին և մայրհաշուին՝ իցէ ընդ մէջ պարտապանի և պարտատեառն, որպէս թէ 1000, դահեկան պարտիք Գրամարկեղ և պահանջք Նարկէնի՝ ընդհակառակս իցեն նշանակեալք. պարտատէր առնելով զԳրամարկղն,

և պարտապան զՐաբէկէն ։ Յայսպիսի վրիպակս օրէն է առնել զկրկին յիշատակագրութիւնս. յորոց 'ի միումն 1000, դահեկանքն նշանակելի են 'ի պահանջս Րաբէկէնի և 'ի պարտիս Դրամարկեղ, որով ուղղի վրիպակն. իսկ յերկրորդումն նոյնպէս՝ վերստին Դրամարկղն նշանակելի է պարտապան 1000, դահեկանաց՝ պարտատէր առնելով զՐաբէկէն. 'ի լրումն յիշատակագրութեան զոր պարտ էր առնել, եթէ վրիպակ ինչ չէր հանդիպեալ ։

յծդ. Վրիպակք սպրդեալք 'ի Մայրհաշւին եւեթ՝ կարեն լինել կամ 'ի մոռացութենէ փոխադրելոյ անդր զյիշատակագրութիւն ինչ Օրհաշուին, կամ 'ի սխալ տեղւոջ նշանակելով. կամ զգումար ինչ հաշուի ուրուք վրիպագրելով. կամ փոխանակ գրելոյ 1000, վրիպակաւ նշանակեալ իցէ 100. կամ փոխան նշանակելոյ 'ի պարտիս, գրեալ իցէ 'ի պահանջակողմն, կամ ընդհակառակն. և կամ առանց ուշադրութեան նշանակեալ իցէ յայն երես և 'ի թղթահամար, ուր ոչ էր գրելի ։

յծե. Եթէ իմասցի՝ զի յիշատակագրութիւն ինչ Օրհաշուին չիցէ փոխադրեալ 'ի Մայրհաշւին, պարտ է անյապաղ անցուցանել զայն յիւր վայր և ժամանեալ իցէ. յայտ առնելով զվրիպակն, թէ առ մոռացութեան չիցէ յիշատակագրեալ յիւրում տեղւոջ ։

յծզ. Եթէ 'ի Մայրհաշւին գտցի վրիպակ գումարի. յորում թիւ ինչ աւելի կամ պակաս նշանակեալ իցէ, պարտ է մեղմով քերել և ուղղագրել զայն ։

յծէ. Ի Մայրհաշւին եթէ վրիպակաւ պարտապան նշանակեալ իցէ ոք, որ պարտատէր է, կամ ընդհակառակս՝ պարտապանն պարտատէր, օրէն է 'ի հանդիպակողմն առնել ծանուցումն ինչ յուղղագրութիւն վրիպակին եղելոյ ։ Յետ այնորիկ՝ նոյն ծանուցումն և յիշատակագրութիւն նշանակելի է ևս յայնմ տեղւոջ. յորում պարտ էր գրել, եթէ չէր հանդիպեալ այնր վրիպակի ։

յծը. Եթէ 'ի Մայրհաշւին յիշատակագրութիւն ինչ վրիպակաւ նշանակեալ իցէ յայնպիսի երես՝ որ չիցէ նորին. ուղղագրի վրիպակն՝ փոխադրելով զայն յիւր սեփական տեղի, և յետոյ 'ի հանդիպակողմն սխալեալ երեսին նշանակելի է ուղղագրութիւն վրիպակին, ծանուցանելով անդ՝ թէ յիշատակագրութիւնս լինի վասն վրիպակին դիպելոյ ( յայս նիշ աւուր և ամսեան ) ։

## Ուղղագրութիւն Նշոյր Կշռահաշւոյ ։

յծթ. Ի Կշռահաշւին եթէ գումարք պարտեաց և պահանջից անհաւասար գտցին միմեանց, աներկբայելի է՝ թէ վրիպակ կայ 'ի հաշիւսն, և թէ այնմ վրիպակի հարկ է լինել 'ի մատեան Մայրհաշուին. վասն որոյ քննելի է՝ թէ յորոց իրաց յառաջ գայցէ. արդեօք 'ի սխալ փոխադրութենէ յիշատակագրութեանց ինչ Օրհաշուին, թէ 'ի վրիպակ հաշուէ ինչ գումարաց ։

յկ. Առ ստուգելոյ թէ վրիպակն չիցէ 'ի փոխադրութենէ յիշատակագրութեանց Օրհաշուին, պարտ է մի առ մի մատչիլ 'ի քննութիւն ամենայն յիշատակագրութեանց, համեմատելով թէ նշանակեալքն յՕրհաշուին համաձայնք իցեն ընդ եղելոցն 'ի Մայրհաշուին. և 'ի ժամ քննութեան զանկէտ համաձայնեալսն միմեանց պարտ է կէտադրել (1) 'ի լուսանցսն, որով որոշեսցին համեմատեալքն յանբաղդատ մնացելոց ։

յկա. Եթէ 'ի համեմատութենէ յիշատակագրութեանց Օրհաշուին և Մայրհաշուին յերևան եկեսցէ վրիպակն, ուղղագրելի է 'ի ձեռն նախակարգեալ կանոնացս ( յխթ. յծ. յծա ). իսկ եթէ անյայտ մնասցէ, աներկբայելի է թէ վրիպակն գաղեալ կայ 'ի հաշիւս գումարաց, զորս պարտ է վերստին հետազօտել, և 'ի գտանել անդ՝ ուղղագրելի է ըստ կանոնին աւանդելոյ 'ի թիւն ( յծզ ) ։

յկբ. Անհաւասարութիւն գումարաց պարտակողմն և պահանջակողմն 'ի Կշռահաշւին՝ թէպէտ նշան է վրիպակի սպրդելոյ 'ի հաշիւն, բայց կարէ ևս հանդիպիլ զի գումարքն համեմատ գտցին միմեանց, և տակաւին կայցէ վրիպակ 'ի հաշուի անդ ։ Օրինակ՝ եդեալ թէ կշռագումարքն հաւասարք իցեն, բայց 'ի թուել անդ զգրամ արկեղն, գտանին 'ի նմա 9000, դահեկանք, որք ըստ հաշուի Դրամարկեղ նշանակելոց 'ի պարտիս նորա, ( որպէս և յաւանձին մատենի անդ

յկ. (1) Կէտադրել. զոր Իտալացիք անուանեն՝ Puntare la Scrittura. փունթառէ լա սքրիթթուրա ։ Այսինքն է՝ կէտադրել զհաշուեմատեան. որ է մի 'ի գլխաւոր և 'ի տաժանելի աշխատութեանց համարակալութեան առ ստուգելոյ զուղղութիւն հաշուից. և խնդրէ զանզբաղութիւն մտաց, և զհանդարտութիւն սրտի ։

դրամոց) . ունէին լինել 8000, դահեկանք ևեթ. վասն որոյ հաշիւ Գրամարկեղ անհաւասար գտանի դրամոյն որ 'ի նմա. զի 1000, դահեկանք առաւելուն քան զնշանակեալսն 'ի հաշուեմատենին, որոց չէր պարտ առաւելուլ, եթէ անյայտ վրիպակ ինչ չլինէր 'ի նմա. բայց քանզի կշռագումարքն հաւասարք են միմեանց, և հաշիւք մատենին ամենայն զգուշաւոր արթնութեամբ հաւաքեալք, չէ օրէն վերստին տառապիլ 'ի խնդիր պատճառի այնր զանազանութեան: Զի վրիպակք այսպիսիք մարթին յառաջ գալ, յորժամ 'ի մատեան Օրհաշուին նշանակեալ կայցէ ոք պարտատէր. և ապա 'ի փոխադրել անդ 'ի Մայրհաշիւն, փոխանակ գնելոյ զայն յիւրում սեփական հաշուեմասին, վրիպակաւ տարցի 'ի հաշուեմասն Գրամարկեղ, առնելով զնա պարտատէր 1000, դահեկանի: Այս վրիպակ ոչինչ այլայլութիւն 'ի ներքս ածէ հաւասարութեան կշռահաշուին, վասն որոյ և անյայտ մնայ:

յկգ. Եթէ 'ի փոխադրել անդ յՕրհաշուէ 'ի Մայրհաշիւն՝ վրիպակաւ նշանակեալ իցեն 1000, դահեկանք 'ի պահանջս Գրամարկեղ, որք ունէին նշանակիլ 'ի պահանջս այլոյ ուրուք հաշուեմասին, ջան է որոնել զայն 'ի պահանջս Գրամարկեղ, քննելով միայն զգումարսն նշանակեալս 1000, դահեկան, և համեմատել զնոսին ընդ յիշատակագրութիւնս պահանջից Օրհաշուին:

յկդ. Եթէ յՕրհաշիւ մատենին կամելով պարտապան նշանակել զԳրամարկղն 500, դահեկանաց, և պարտատէր զայլ ոք, ընդհակառակն նշանակեալ իցես, պարտ է 'ի Մայրհաշուին քննել զպահանջս նորին Գրամարկեղ, հայելով յայն գումարսն ևեթ, որք ժամանեն 'ի 500, դահեկան:

յկե. Առ 'ի կարող լինելոյ իմանալ, թէ ընկալեալ իցես յումեքէ 1000, դահեկանս, և մոռացեալ 'ի յիշատակագրել, պարտ է զննել և որոնել յառանձին մատենի Գրամարկեղ զհաւաքեալսն 'ի յետին ամսեան, զի հաւաքմունք նախընթաց ամսոյն համարին բաղդատեալք ընդ դրամս արկեղն (յխթ), վասն որոյ հարկ է վրիպակին լինել 'ի յետին ամսեան:

յկզ. Եթէ 'ի յիշատակագրութիւնս ընկալեալ կամ վճարեալ դրամոց վրիպակաւ նշանակեալ իցես զԳրամարկղն պարտապան փոքր գումարի, և կամ պարտատէր բազմաթիւ գումարի քան զոր ընկալեալ և վճարեալ իցես, պարտ է 'ի Մայրհաշուին զպարտիս և զպահանջս Գրամարկեղն համեմատել ընդ յիշատակագրութիւնս առանձին Մատենի նորին Գրամարկեղ, որով 'ի յայտ գան սպրդեալ վրիպակք:

յկէ. Յետ ըստ կարգի հաւասարութեան գումարաց 'ի Կշռահաշիւն, եթէ թուելով զդրամս արկեղ գտցես 'ի նմա զպակասութիւն դահեկանաց՝ անհամեմատ կշռագումարի, պարտ է վարել զնոյն կանոնս քննութեան, որք աւանդեցան 'ի թիւսն, (յծթ–յկ. յկա): Յաղագս առաւելութեան գտեալ դրամոց: Նոյն կանոնք վարելի են ոչ միայն յայլայլութիւնս դրամոց՝ այլև 'ի վերայ վաճառաց, յորժամ գտեալքն 'ի Մթերանոցի ոչ համեմատեսցին յիշատակագրութեանց հաշուեմատենին:

յկը. Եդեալ թէ 'ի կշռահաշիւն պարտիք և պահանջք հաւասարեսցին միմեանց, նոյնպէս և դրամք արկեղն, որպէս և վաճառք 'ի Մթերանոցն համաչափ և համեմատք եղիցին գումարաց Մայրհաշուին. սակայն և այնպէս հնար է թէ սպրդեալ կայցէ վրիպակ ինչ այլայլութեան անձանց. պարտապան կամ պարտատէր գրելով զոք փոխանակ այլոյ: Ի գիւտ և 'ի դարման այսպիսի անյայտ վրիպակաց՝ պարտ է զհամառօտութիւն հաշուին առաքել առ հաշուընկերս իւր, եթէ կայցեն յօտար քաղաքս, զի և նոցա զննելով համեմատեսցեն ընդ հաշուեմատեանս իւրեանց, որով 'ի յայտ ելանէ վրիպակն:

Սովոր է երբեմն 'ի յայտ գալ վրիպակաց, յորժամ 'ի բերել առթին կամելով ուրուք աւարտել զհաշիւ իւր ընդ ումեք, եթէ կայցեն դրամք կամ մթերք ինչ ընկալեալք 'ի նմանէ, զորս ընդունողն մոռացութեամբ չիցէ նշանակեալ 'ի հաշուեմատենի, 'ի յիշատակել անդ տուողին, լինի հայեցումն և քննութիւն հաշուեմատենին, որով 'ի դուրս իմացեալ զանմթիւ վճարումն, զի փոխանակ Պետրոսի նշանակեալ կայ Պօղոս. որոյ ելանէ վրիպակ այլայլութեան անուանն, ուղղագրութիւնն աւանդեցաւ 'ի թիւն (յխը):

յկթ. Ի լրումն կանոնաց ուղղագրութեան յայտ առնեմք և զայն, զի յինչ և իցէ կշռահաշիւս եթէ գումար պարտեաց դոյզն թուովք տարբերութիւն ունիցի 'ի գումարէ անտի պահանջիցն՝ աւելորդ թուի աշխատութիւնն 'ի հետազօտել զպատճառ պէսպիսութեանն: Եթէ յաւելուածն 'ի պարտագումարն իցէ, կրելի է վնասն. իսկ եթէ 'ի պահանջագումարն՝ համարելի է իբր շահ ինչ դուզնաքեայ. զի չէ արժան յուղղագրութիւն ճգնելն իբրաց կարգել զնորանոր յիշատակագրութիւնս 'ի հաշուեմատենին. այլ պարտ է նախ քան զփակել հաշուեմասին Տահուց և Սնա-

ռուց յաւելուլ 'ի նմա զյիշատակագրութիւն ինչ իբր պարտիք այնր հաշուեմասին, եթէ յաւելուածն իցէ 'ի պարտակողմն կշռահաշուին. իսկ եթէ 'ի պահանջակողմն՝ նշանակելի է իբր պահանջք նորա. յիշատակագրելով այսպէս. *Կոյնն ‖ Առ ինքն. կամ Յինքենէ . . . ℱ —. զոր նշանակեմ յուղղագրութիւն Կշռահաշուի այսր աւուր |:

## ՎԵՐՋԱԲԱՆ

ՅՀ. Ի վախճան գործոյս յօժարիմք յուշ ածել ուսումնասէր համբակաց զմիայն պիտանին 'ի յառաջադիմութիւն կենցաղօգուտ արուեստիս, կամ որպէս բանիս կարգ է ասել, զառաջին և զյետին կարևորն 'ի գործադրութիւն կանոնաց և ուղղագրութեան սորա, զկրաւադատ կշռութիւն գործոց տուրևառութեան, յորում հիմնելի են ընթացք առ հասարակ ամենայն հաշուեմատենից. ունելով նպատակ զարդարութիւն, և առաջնորդ զհետազօտութիւն ճշմարտութեան. յոր թէ ոք յենուցու իբր 'ի սիւն հաստատուն, և արկցէ զիւր խարիսխ յատակս ալէսաստ ծովուս վաճառականութեան, աներկմիտ յաջողեսցի նմա ոչ միայն դիւրաւ և անաշխատ հասու լինել սպրդեալ վրիպակաց, այլև չանկանել երբէք 'ի վրիպակս: Թիւրեն զընթացս գրչութեան մատունք դողդոջունք, զնոյն ներգործեն և 'ի գործս արուեստից՝ որոց չցենն մատունք հոգւոյ ամրացեալ 'ի հաստահիմն օրէնս արդարութեան: Վասն որոյ յիրաւի արդեօք անզուգական գովութեան արժանիս համարեցաւ Դիմոսթենէս՝ զորս ոչինչ նախապատիւ վարկանէր քան զարդարութեան օգուտ: Զի հնար է ամենայն ումեք ինչս ստանալ, սակայն զփառս արդարութեան չէ մարթ ընչիւք 'ի ձեռս բերել: Առ նոյն օրէնս ուղղութեան յորդորէ և սուրբն Ներսէս Կլայեցի 'ի գրեւն առ համօրէն հայազգի վաճառականս և արուեստաւորս (*):

Յաջողութիւնք և ձախորդութիւնք զուգընթացք են և ուղեկիցք միմեանց. առաջինն սովոր է 'ի յանդգնութիւն ձգել զմարդիկ. իսկ երկրորդն 'ի լքումն և 'ի յուսահատութիւն. առ խորշելոյ յերկոցունց աստի ծայրայեղ կրից՝ խոհական արթնութեան պէտք են և անվեհեր արիութեան, ոչինչ բարձրամտել 'ի յաջողութիւնս, և աննկուն մնալ 'ի ձախորդութիւնս: Զգուշաւորութիւն և արիութիւն՝ թէպէտև 'ի բնէ ազգակիցք միմեանց, այլ դժուարագիւտք 'ի մահկանացուս. եթէ չիցեն ձեռնտուք վաճառականին, գործել գործէ մեծամեծս՝ բայց ոչ արժանաւորս գովութեան: Որոց սկիզբն և ընթացք շաւղաց անհամեմատ գտցին վախճանի, ունայնաձեռն ելանեն 'ի գլուխ գործոյն:

Չիք այնպէս ամրափակ դուռն ճոխութեանց, զոր ոչն կարասցէ բանալ յաջողութիւն բաղդի, ասէ Դիմոկրիտէս. և չիք ընթացք առատահոս հեղեղաց, զոր ոչ ցամաքեցուսցեն երաշտութիւնք օդոց: Ապաքէն բազմածին է վաստակ տուրևառութեան, այլ ծնունդքն մահկանացուք. զոր ստացաւ ոք 'ի բազում ամս, կարէ կորուսանել 'ի սակաւ աւուրս: Կայ նորա և ամլութիւն, որ զաշխատութիւն կենաց 'ի զուր ջանս, և յանօգուտ վաստակս գրէ. այլ զօրօրինակ բազմաբերութեանն չիք վստահութիւն, նոյնպէս և ոչ յամլութենէ նորա առիթ վհատութեան. զի ըստ առածին՝ եթէ լիութիւնք աւուրց սովոր են զամս ստերջս մնուցանել, ապա և ամլութիւնք ամաց խոհական տնտեսութեամբ ունին զաւուրս տածել: Չէ օրէն առատութեան զանհոգութիւն 'ի

Թուղթ առ վաճառականս:

ՅՀ. (*) « Պատուէր տամք և քաղաքայնոցդ և որք 'ի վաճառափողոցս նստիք՝ գնել և վաճառել, և առ արուեստաւորդ՝ զի ուղղութեամբ տանիցիք զկեանս ձեր՝ և անարատ քաղաքավարութեամբ: Եւ մի ոք խաբէութեամբ և նենգութեամբ վաճառեսցէ զստացուածս իւր անմեղ գնողաց. մանաւանդ ստախօսութեամբ և սուտ երդմամբ զռամիկն և զանգէտն խաբելով. զի 'ի դատաստանին աւուր ընդ գողս և ընդ յափշտակողս դատելոց է այնպիսին. և առնու Ած զբարեգործութիւնն իւր՝ և տայ զրկելոյն 'ի նմանէ: Եւ մի եղիցի առ ձեզ կշիռ մեծ և փոքր՝ և չափ կրկին. զի պիղծ են երկոքեանն առաջի Տն՝ որպէս ասաց Սողոմոն. այլ արդարութեամբ և ուղղութեամբ վաճառեսջիք զգործս ձեռաց ձերոց՝ և զնիւթ վաճառաց ձերոց. զի մի անէծք զրկելոյն այրեսցէ զտունս ձեր. այլ օրհնութիւնն Այ մնասցէ 'ի տունս ձեր: Եւ մի արհամարհէք զշինականն իբրև յաղագս պարզամտութեանն իւրեանց. քանզի առաւել սիրէ Ած զպարզամիտ կեանս նոցա՝ քան զպատուաւորս և զհպարտս 'ի մարդկանէ:

« Մի տայք զարծաթ ձեր 'ի վարձու՝ ըստ մարգարէին՝ այնոցիկ որք նեղին 'ի բռնութենէ իշխողաց. և ուտէք զաղքատութեան վաստակս նոցա՝ 'ի շահս վաշխիցն. այլ որպէս եղբարք՝ կարեկցիք և օգնականք լերուք միմեանց: Եւ զոր տայք նոցա փոխ՝ զնոյն միայն պահանջեսջիք 'ի նոցանէ. և շահիցիք զվարձս յԱյ բազմապատիկ՝ յանանց կեանսն. որպէս և հրամայէ Քս ոչ միայն առանց վաշխից տալ, այլ թէ տուք այնոցիկ յորոց ակն ոչ ունիցիք առնուլ:

« Այլև յամենայն գոյից ձերոց տուք ողորմութիւն կարօտելոց և աղքատաց, զի այնիւ սրբեսցի ամենայն ինչ ձեր՝ և առնուցուք զփոխարէնն 'ի Քէ յաւուրն դատաստանի »: Թուղթ ընդհանրական:

ներքս ածել, և ոչ նուաղութեան զլքումն, զի միօրինակ խոչընդոտք են ընթացից տուրևառութեան:

Տեսեալ Պլինկլինեայ զայր աշխոյժ 'ի գործս աշխատութեան, ասէ. քաջընտիր համբարս ժողովէս ծերութեան. զի պտուղ վաստակոյ՝ հաստարան է և պարէն ծանրացեալ հասակի, զոր թէ 'ի բաց լքցեն մարդիկ, աներկբայ 'ի թշուառութիւն մատնի ծերութիւն վերահաս: Դառն են արմատք ծառոց, այլ անուշահամ ընծայեն պտուղս. նոյնպէս և արուեստից աշխատութիւն՝ խիստ է և անախորժ, սակայն քաղցրաճաշակք են բերք վաստակոց նոցա: Անհնար է մարդկան գործել ինչ պանծալի և փառաւոր առանց ծանր աշխատութեան, սակայն զհետ գայ այնմ՝ հանգիստ և բազմադէմ բարեօք խաղաղութիւն, ասէ Արիստոտէլ: Արժան է՝ որ անքուն հսկէ որսալ զառիթս օգտի. զրաժան է, որում չէ ինչ փոյթ կորուսանել զառիթս օգտի: Առիթ յաջողութեան բաղդի կարի 'ի դէպ օրինակեցաւ յառաջնոյն կուրացեալ կերպարանաց հողմավար և անուաթաւիչ ձեպընթաց ուղևորի, հերարձակ 'ի ճակատու՝ և գերծեալ յետևուստ. որ միանգամ արթուն մտօք ձեռնհաս գտաւ զառաջոն ունել, բուռն հարեալ զվարսից ճակատուն, նորա են բարեդէպ յաջողութիւնք. իսկ յետամնացն և հեղգասիրտ եղելոց չիք տեղի ձեռնհարութեան, զի անմարս է և սրընթաց 'ի փախուստ:

Նման է արժանընկալ 'ի դպրոցս աւանդեալ յԱրիստոտէլէ, առ խնդիր հարցողացն, թէ իւ մարթ իցէ քաջ զարգանալ աշակերտաց. յառաջադէմքն (ասէ) յուսմունս ուշի ուշով և անձանձրոյթ հետևեսցին. իսկ յետնորդք ոչ հեղգասցին 'ի մտադրութիւն: Զօրացեալքն 'ի ստացուածս, և հաստարմատքն 'ի հմտութիւնս տուրևառութեան կարօտին զգաստութեան և զգուշաւորութեան, զի մի կասեսցին յընթացից, և 'ի զուր վատնեսցին քրտունք վաստակոց. քանզի և ժամացոյց քաջարուեստ դադարի յընթացից 'ի դոյզն շիւղոյ. իսկ նորատունկք և թարմարմատքն 'ի վաճառականութեան՝ պէտս ունին պատսպարութեան, անձնապահ լինելով 'ի սաստիկ հողմոց. ամփոփ պահելով զգործառնութիւնս, և մի անխորհուրդ տարածել զոստսն 'ի վտանգ հողմահարութեան:

Զուարճալի է արուեստս՝ օգտաւէտ մարդկային կենաց, և ազնուական վիճակեալ պատւոյ. չամօթ է թէ ուսցի ոք ըստ կարգի և կանոնի վարել զայն 'ի գործ: Որ ուսանի՝ թէպէտ և անստացուած ոք իցէ, ոչ պակասի նմա կերակուր 'ի ձեռն սորա. զի այս արգասիք են արուեստից՝ պատուական համարեալք քան զամենայն ինչս առ 'ի պէտս կենդանութեան. արգոյ և սիրելի ընծայել զմարդ յաչս աշխարհի, առնել անկարօտ գոյից պիտոյից, պատրաստելով նմին զկարևորն և զպիտանացուն 'ի կեանս: Զայլ ստացուածս՝ արկածք մարմնի և փոփոխութեանց կենցաղոյս սովոր են սպառել, միայն հմտութիւն արուեստի մնայ անկապուտ ընդ ամրափակ պաշտպանութեամբ մտաց: Պիտոյածոյ են տուրք՝ անհմուտ մարդոյ բարեբաղդութեան ժամանել, ասէր Սոկրատէս. և ճոխացեալն ստացուածով 'ի ձեռն բաղդի, նման է առն վաստակաբեկ և ուժաթափ եղելոյ, յորոյ վերայ բեռինս ծանունս կուտեսցեն. զի չիք հմտութիւն 'ի յարգել, ճարտարութիւն 'ի պահպանել, և սիրտ անդորր 'ի վայելել, որով հարկ լինի ընդ ծանրութեամբ բեռինն տագնապիլ և տնանկանալ: Փութապէս ցրուին ստացեալքն առանց քրտանց, զի երկուոք ցաւոց են որք մեծարգի առնեն զննունդն, և յորդորեն 'ի խնամս պաշտպանութեան նորա:

Գործադրութիւն արուեստիս և շաւիղ ընթացից սորա՝ վասն նորութեանն և անսովոր լինելոյն, թերևս օտարոտի ինն և դժուարին համարեսցի բազմաց. մանաւանդ կրկնագրութիւնն և հատուածումն տուրևառութեան 'ի զանազան մասունս, որք են գլխաւոր պայմանք հաշուեմատենի, ստէպ պատուիրեալքն 'ի կանոնս համարակալութեան: Սակայն ծանիցեն նորավարժք, զի առ օգտաւէտ վաճառականութիւն պահանջի անդրաղ ուշադրութիւն ելից և մտից ձեռնարկեալ գործոյն. յորինչ այնպէս մտադիւր պարապեալ, որպէս 'ի գործն առաջարկեալ. վասն որոյ տարագրելի են 'ի վաճառականէն ձանձրութիւն, հեղգութիւն, թմրութիւն, անհոգութիւն, և որ ինչ միանգամ կարէ վնասել զընթացս վաճառականութեան: Սեփական ձիրք վաճառականաց ունին լինել զգաստութիւն, զգուշաւորութիւն, արթնութիւն, անխոնջ աշխատասիրութիւն, և անպակաս մտադրութիւն 'ի մատեանս հաշուի և համարոյ ստացուածոյն զոր ունի:

'Ի խրատ նորուս հանճարոյ՝ և 'ի նիւք երկասիրութեանս, անկաւոր համարիմ յիշել աստանօր զխորհրդաւոր առածս բանից Անթիստենեայ փիլիսոփայի, առ որ 'ի մատչել երբեմն պատանեւոյ ուրուք յաշակերտութիւն, եհարց ցիմաստասէրն՝ թէ իմ իւիք պէտս ունիցի պատանին 'ի զարգացումն, ետ պատասխանի, *Նոր գրոց, նոր ոճոյ, և նոր թղթոյ‖. յայտ արարեալ՝ թէ որոց խնդրիցեն աշակերտիլ նոր ուսման, հարկ է դատարկանալ 'ի վրիպակ գիտութեանց մտօք, զոր կանխաւ ստացեալ ունիցին. մոռանալ զնախնի ընթացս և զեղանակ ուսման, զհետ երթա-

լով կարգի և կանոնաց, զոր առաջիկայր ուսումն վարդապետէ. լինել մտադիր 'ի ջանս վարժու-
թեան՝ գծագրելով 'ի միտսն իւր 'ի թուղթ անգիր և մաքուր՝ զոր լսէին, և զորս հանդեր-
ձեալ էին ուսանել առ նոյն վարդապետին: Քանզի եթէ ոք օտար ուսմամբ և պաշարեալ խոր-
հրդով առ վարդապետսն մատչիցի, ոչինչ ուսանի: Վասն որոյ յորդորեմք զօգտախնդիր հետա-
մուտս վաճառականութեան՝ մտադիւր սրտիւ պարապել 'ի կենցաղօգուտ ուսումնս, զոր կամա-
կար մօք՝ թէպէտև տարժամանակիր աշխատութեամբ, ջգնեցաք յերևան ածել. ցուցանելով շա-
ւիղ ընդ որ կարասցեն անսայթաք ընթանալ փափաքողք տուրևառութեան. լուցանելով իբր
զառկայծեալ ջրագ 'ի գտանել զհետս անմոլար ընթացից վաճառաշահութեան. զկարևորն
ևեթ ամփոփելով 'ի սմա. զառաւելագոյնն թողեալ 'ի ջանս գործադիր եղելոցն արհեստիս. 'ի
դոյն լուսոյ աստի՝ ջահս պայծառս հանդիսացուցանել. առիթս տալով լրագունին երկասիրու-
թեան քան զաշխատասիրեալս առ 'ի մէնջ: Ակնունիմք և մեք հանդիպել սոքա կարեկցութեան
բարեսէր ուսումնասիրաց, որոց բազմամեայ յօժարութեանն խնամ կալաք դոյն երկօք լինել կա-
տակատար. արկանելով զառաջինն հիմն նորոյ գիտութեանս պակասելոյ յազգիս. յորոյ վերայ
մարթասցեն այլք շինուածս կանգնել ընդարձակս և մեծագործս՝ օժանդակութեամբ գործադրու-
թեան. որով կատարելագործի և մերս հիմնարկութիւն՝ պտղաբեր լինելով քրտանց աշխատու-
թեանս, զոր ընծայեցաք սիրով յօգուտ ազգայնոց՝ 'ի փառս Ա.Ծ.:



# ՕՐԻՆԱԿ Ա։

Հետագայ Օրհաշիւղ՝ որ սովորական է բազում համարակալաց ժամանակիս, մերձաւոր գտանի օրինակին, զոր աւանդեցաք յառաջին մասին գործոյս։ Զանազանութիւնն է յամսաթիւն, զոր կարգէ 'ի գաւազանս առընթեր յիշատակագրութեանց. որպէս և զյիշատակագրութիւնն ոչ զատանէ գծիւք 'ի միմեանց՝ առ չկորուսանելոյ վայրապար տեղի։ Բարւոք է և դիւրին վարժ եղելոցն 'ի համարակալութիւն. այլ ոչ նոյնպէս և նորավարժից, զի հնար է սոցա շփոթիլ՝ անհրահանգ գոլով ընթացից հաշուեմատենին։

Հիմնարկութիւն օրհաշուիս ըստ սովորութեանն սկսանի 'ի ցուցակէ անտի ստացուածոցն և պարտեաց, զորս ունի վաճառականն. և ապա բաժանելով զնոսին 'ի կրկին վիճակս, կարգէ յառաջ զշահառիթսն, որք են կալուածք, դրամք, վաճառամթերք, պահանջք, յորոց առնու շահս, կամ ընդունի զպտղաբերութիւն։ Եւ ապա կարգէն զվնասառիթքն, որք են պարտիք հատուցանելիք առ այլևայլ անձինս։ Յետ սոցա սկիզբն լինի օրհաշուին ըստ կարգի կանխաճառելոցս յառաջին մասին։

## 1. ՅՈՒՆՎԱՐԻ 1824.

### Ցուցակ Ստացուածոց և Պարտեաց Ն.յս անուն անձին, որ այսօր սկիզբն առնէ Հաշուեմատենիս Տուրևառութեան ։

| | | |
|---|---|---|
| Կալուածք սեփականք, որք են տունք և ագարակք . | 50500 ։ — | |
| Դրամք պատրաստականք . . . . . . . . . . | 30000 ։ — | |
| Փոխանակագիրք . . . . . . . . . . . | 15000 ։ — | |
| Ընկերական տուրևառութեան դրամագլուխ . . | 10000 ։ — | 155500 ։ — |
| Վաճառամթերք զանազանք . . . . . . . . | 22000 ։ — | |
| Պահանջք յայլևայլ անձանց . . . . . . . . | 12000 ։ — | |
| Պարտիք առ զանազանս . . . . . . . . . | 16000 ։ — | |

| | Յունվար | ՕՐԱՀԱՇԻՒ. 1824 ։ | | ղռ | փր |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | Ներքոյգրեալքն . — Առ Վիճակ շահառութ ստացուածոց՝ որպէս յայտ է 'ի ցուցակէ ընդէրս ։ | | | |
| 2 | | Կալուածք ագարակի և այգեստանեայց . . . . . | 25000 ։ — | | |
| 3 | | Տունք և Մթերանոցք . . . . . . . . . . | 25500 ։ — | | |
| 4 | | Դրամք պատրաստականք յարկեղ . . . . . . . | 30000 ։ — | | |
| 5 | | Փոխանակագիրք յերկս Թուղթս . . . . . . . | 15000 ։ — | | |
| 6 | | Ընկերական Տուրևառութիւն ընդ (Ն.յս անուն անձին) . . . . . . . | 10000 ։ — | | |
| 7 | | Վաճառամթերք . Գահվէ 3000, լիտր . . . . . | 8000 ։ — | 139500 | — |
| 8 | | Շաքար . 4000, լիտր . . | 5000 ։ — | | |
| 9 | | Լեղակ . 200, լիտր . . . | 4000 ։ — | | |
| 10 | | Որդան կարմիր . 180, լիտր . | 3000 ։ — | | |
| 11 | | Մետաքս . 400, լիտր . . . | 2000 ։ — | | |
| 12 | | Պարտապանք . . . . Ն.յս անուն . ղռ, 6000 ։ — | | | |
| 13 | | Ն.յս անուն . . 4000 ։ — | 12000 ։ — | | |
| 13 | | Ն.յս անուն . . 2000 ։ — | | | |
| 1 | | Վիճակ վնասառութ պարտուց — Առ ներքոյգրեալսն, որպէս յայտ է 'ի նոյն ցուցակէ ընդէրս ։ | | | |
| 15 | | Կադմոս Կեղեցի 'ի հաշիւ Որդան կարմրոյ . . . . | 2000 ։ — | | |
| 16 | | Գեղամ Վանեցի 'ի հաշիւ Գահվէի . . . . . . | 6000 ։ — | | |
| 17 | | Արշաւիր Կամսարական 'ի հաշիւ Լեղակի . . . . | 3000 ։ — | 16000 | — |
| 18 | | Գնել Գնունի 'ի հաշիւ Շաքարի . . . . . . | 4000 ։ — | | |
| 19 | | Վահան Արծրունի 'ի հաշիւ Մետաքսի . . . . . . | 1000 ։ — | | |
| 20/4 | 3 | Սմբատ Մշոյ . . . — Առ Դրամարկղն՝ վասն 1000, լտերաց զորս գնեցի, առ մի լիտր, ղռ, 4. ընդ ամենայն վճարեալ . . . . . . . | | 4000 | — |
| | | Գումար . ղռ . | | 159500 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Յունուար | | | Գումար նախընթաց. ղշ. | 159500 | — |
| 4/12 | | 10 | Գրամարկղ. . . — | Առ այս ամսոյ վասն վճարելոյ նորա դերհաշիւ. . . . . . . . . . | 500 | — |
| 5/4 | | 20 | Փոխանակագիրք. . — | Առ Գրամարկղն՝ վասն ստանալոյ զփոխանակագիր մի 'ի հաշիւ 310, ֆիօրինի. Առ մի ֆիօրին, ղշ, 4. . . . . . | 1240 | — |
| 30/5 | | 30 | Խաչատուր Մսեցի. . — | Առ փոխանակագիրս, զի կանխիկ առաքեաց առ նա նախագրեալ փոխանակագիրն 'ի հաշիւ նոր ընկերութեանն, զոր կալայ ընդ նմա. և զի առաքումն եղև ընդ Եգիպտոս, արժէք ֆիօրինի եհաս 'ի ղշ, 4 : 15. . . . . . . | 1278 | 90 |
| 11/4 | Փետրուար | 3 | Մետաքսամթերք. . — | Առ Գրամարկղն՝ վասն 500. լտերաց մետաքսի, զոր գնեցի, առ մի լիտր՝ ղշ, 5. ընդ ամենայն վճարեալ. . . | 2500 | — |
| 4/14 | | 9 | Գրամարկղ. . . — | Առ Ներքոյգրեալսն՝ որք վճարեցին. . Առյս ամսոյ 'ի հաշիւ պարտուց փոխառութեան. . . . . . . . . | 200 | — |
| 13 | | | | Առյս ամսոյ 'ի հաշիւ երեքամսեայ վարձուց տանն յորում բնակի. . . . | 300 | — |
| 6/31 | | 22 | Ընկերական Տուրև". — | Առ Մուշեղ Տարօնացի վասն վաճառամթերից յուղարկելոց առ մեզ. . | 2400 | — |
| 33/4 | Մարտ | 6 | Տիրան գործակալ. . — | Առ Գրամարկղն՝ զի 'ի պէտս ծախուց տանն ընկալաւ դերհաշիւ. . . . . | 3500 | — |
| 3/4 | | 13 | Կալուածք տան. . . — | Առ Նոյնն՝ վասն ծախուց նորոգութեան. . . . . . . . . . | 105 | — |
| 4/8 | | 20 | Գրամարկղ. . . — | Առ Մթերս Շաքարի, յորմէ վաճառեցան 400, լտերք. առ մին՝ ղշ, 3 : 60. | 1400 | — |
| 4/7 | | 29 | Նոյնն. . . . . . — | Առ Մթերս Գահուէի, զի վաճառեցաւ 500, լիտր. առ մին՝ ղշ, 4. . . . | 2000 | — |
| 4/9 | | | Նոյնն. . . . . . — | Առ Մթերս Լեղակի, յորմէ վաճառեցաւ 100, լիտր. առ մին՝ ղշ, 10 : 30. | 1025 | — |
| 16/4 | Ապրիլ | 7 | Գեղամ Մանեցի. . — | Առ Գրամարկղն, զի վճարեցաւ 'ի դերհաշիւ պահանջիցն. . . . . . . | 5000 | — |
| 15/4 | | 15 | Կադմոս Կեղեցի. . — | Առ Նոյնն՝ զի վճարեցան ամենայն պահանջք նորա. . . . . . . . | 2000 | — |
| 17/4 | | 20 | Արշաւիր Կամսար". — | Առ Նոյն՝ վճարեցաւ 'ի դերհաշիւ պահանջիցն. . . . . . . . . | 1000 | — |
| 2/4 | | 25 | Կալուածք ագար". . — | Առ Նոյնն՝ զի 'ի պէտս ծախուց մշակութեան և տնկագործութեան վճարեցաւ. | 150 | — |
| 4/2 | Մայիս | 4 | Գրամարկղ. . . — | Առ Կալուածս Աշարակի, որ է գին վաճառեալ արդեանց նորա. . . . | 230 | — |
| 4/10 | | 8 | Նոյնն. . . . . . — | Առ Մթերս Որդան Կարմրոյ՝ վաճառելոյ իսպառ. . . . . . . . | 2500 | — |
| 34/6 | | 16 | Մուշեղ Տարօն". . — | Առ Ընկերական տուրևառութիւնն, զի 'ի հաշիւ մթերիցն յուղարկելոց 'ի նմանէ՝ առաքեցաւ առ նա փոխանակագիր. | 2000 | — |
| 6/4 | Յունիս | 2 | Ընկերական տուրև". — | Առ Գրամարկղն վասն վարձուց մթերանոցին. . . . . . . . . | 60 | — |
| 37/4 | | 7 | Բամբակամթերք. . — | Առ Նոյնն, զի գնեցան 10, բեռինք Կիպրոսեան բամբակի ղշ. Յ. Փ : ՖԶ. 13 — 23 : Կշիռ բոլորեցուն՝ 12000, լիտր : Առ մին՝ ղշ 1½. ընդ ամէնն. . | 18000 | — |
| | | | | Գումար. ղշ. | 206888 | 90 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գումար նախընթաց · ղշ · | 206888 | 90 |
| 9/4 | Յունիս | 14 | Մթերք եղակի · · — | Ի Դրամարկղն, զի գնեցան 200, լիտր եղակ, առ մի լիտր՝ ղշ, 8 · ընդ ամէնն · | 1600 | — |
| 4/2 | Յուլիս | 1 | Դրամարկղ · · · — | Ի Կալուածս ագարակաց՝ վասն 15, քոռ ցորենոյ, որք վաճառեցան · առ մի քոռ ղշ, 30 · · · · · · · · | 450 | — |
| 4/2 | | 3 | Նոյնն · · · · · — | Ի Նոյնն՝ վասն 5, քուրձ բակլայի, որք վաճառեցան, առ մի քուրձ՝ ղշ, 10 · | 50 | — |
| 4/20 | | 9 | Նոյնն · · · · · — | Ի Մանածս Մշոյ՝ վաճառեալ լիտր՝ 500, առ մին՝ ղշ, 5 · · · · · · | 2500 | — |
| 40/4 | | 14 | Արշակ · · · · · — | Ի Դրամարկղն՝ զի տուան նմա 'ի փոխ միամսեայ պայմանաւ՝ և շահու 4, առ % · | 800 | — |
| 7/4 | | 20 | Մթերք Դահլէի · · — | Ի Նոյնն, զի գնեցաւ 1000, լիտր · առ մին՝ ղշ, 5 · · · · · · · · | 5000 | — |
| 7/4 | | | Նոյնն · · · · · — | Ի Նոյնն, ծախք մաքսի և բեռնակրաց · · · · · · · · · · · | 75 | — |
| 33/4 | | 26 | Տիրան գործակալ · · — | Ի Նոյնն, 'ի պէտս ծախուց տան ընկալաւ դերհաշիւ · · · · · · · | 2000 | — |
| 4/7 | | 30 | Դրամարկղ · · · — | Ի Մթերս Դահլէի, զի վաճառեցաւ անտի 500, լիտր · առ մին՝ ղշ, 6 · · · | 3000 | — |
| 42/7 | Օգոստոս | 7 | Արտակ · · · · · — | Ի Նոյն մթերս, զի վաճառեցան նմա 200, լիտր · դաշամբ հատուցանելոյ յետ ամսոց վեցից · · · · · · · | 1200 | — |
| 43/4 | | 8 | Կտաւ անեփ · · · — | Ի Դրամարկղն, զի վճարեցաւ 'ի լուանալ և յապխտակացուցանել 1500, կանգուն · առ մին 6, ստակ · · · · | 75 | — |
| 4/ | | 16 | Դրամարկղ · · · — | Ի Ներքսգրեալսն, որք վճարեցին · · | | |
| /45 | | | | Այս անուն 'ի հաշիւ չորեքամսեայ վարձուց տանն՝ յորում բնակի · · · · | 400 | — |
| /46 | | | | Այս անուն 'ի հաշիւ պարտուց Շահատուութեան · · · · · · · · · | 200 | — |
| /2 | | | | Կալուածք ագարակի վասն վաճառեալ արմտեաց · · · · · · · · · · | 143 | — |
| 5/4 | | 22 | Փոխանակագիրք · · — | Ի Դրամարկղն՝ վասն առնալոյ զփոխանակագիր մի 'ի հաշիւ Ֆիօրինի, գումար՝ 500 ։ Առ մի ֆիօրին համարեալ ղշ, 4 ։ — · · · · · · · · · · | 2000 | — |
| 30/4 | | 25 | Խաթուլ Սսեցի · · — | Ի Նոյնն, զի 'ի հաշիւ ընկերութեան առաքեցան առ նա յեգիպտոս, ընդ Գէւկամին նաւապետին՝ ներքոյ գրեալքս, զորոց զնաւողչեայն ունի նա ինքն վճարել ։ | | |
| | | | | 2000, Տախտակք · · · · ղշ, 1700 | | |
| | | | | 1000, Գերանք մայրիք · · · 2000 | 4700 | — |
| | | | | Բեւեռք երկու տակառք · · · 1000 | | |
| 4/2 | | 30 | Դրամարկղ · · · — | Ի կալուածս ագարակի՝ վասն ներքոյ գրեալ արմտեացս վաճառելոց ։ | | |
| | | | | 100 · Քոռ ցորենոյ, առ մին՝ ղշ · 40 · | 4000 | — |
| | | | | 50 · Քոռ գարւոյ, առ մին՝ ղշ · 25 · · | 1250 | — |
| | | | | 25 · Այլ խոտոյ, առ մին՝ ղշ · 16 · · | 400 | — |
| | | | | Գումար · ղշ · | 236731 | 90 |

# ՕՐԻՆԱԿ Բ.

Հետագայ Օրհաշիւս բաժանի 'ի կրկին երեսս՝ ըստ ձեւոյ Մայրհաշիւ Մատենից, յորոց 'ի ձախակողմեանն նշանակելի են հաշիւք պարտեաց, և յաջակողմն՝ հաշիւք պահանջից։ Յառաջին գաւազանս իւրաքանչիւր երեսայն նշանակին թիւք հատուածոց բանից պարունակելոց 'ի նոյն երեսս։ Յերկրորդ գաւազանն առընթեր նոյին արձանագրին ամսաթիւք։ Իսկ յերրորդ գաւազանն առ իւրաքանչիւր հատուածս բանից յիշատակագրելոց նշանակին բառքս Պարտիք և Պահանջք։ 'Ի լայնարձակ միջավայրս երեսայն արձանագրին տուրեւառիկ գործողութիւնք ըստ դիպուածոց աւուրն, եթէ պարտիք իցեն՝ կամ առեալ դրամք, 'ի ձախակողմն. իսկ եթէ պահանջք՝ կամ տուեալ դրամք յաջակողմեան երեսն։ Յետ յիշատակագրութեանց ընդ առաջ եկանեն գաւազանքն, յորս սովորութիւն է նշանակել զթղթահամարս Մայրհաշուին և զթիւս հատուածոց բանիցն, որ 'ի նմա։ Եւ յոյցիկ զհետ գան գաւազանք դահեկանաց և մանրափողոց, յորս նշանակելի են դհք, և ստակք։ Յաւարտել կամ 'ի լնանել ամբողջ երեսայն՝ պարտ է վերուստ 'ի վայր գումարել առ սոս գաւազանացն զդրամսն և փոխադրել 'ի յաջորդ երեսս։

Հիմնարկութիւն Օրհաշուիս լինի 'ի ձեռն սովորական կարգի դասաւորութեան ընչից վաճառականին, զոր մեք ստանօր թողումք 'ի բաց, գաղափարելով զկրկին երեսս եւեթ յամսագիր ընթացից օրհաշիւ մատենին։

| Եղելոց համարութիւն | Ամսաթիւ | | | | Թղթադրամք և համառօտագրութիւն | | ղռ | փր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Յունվ. | 1 | Կիրակէ | Տէր Ոսկեան Ոսկնեցի. որ հատոյց ինձ զգինս 12, ծրար կտաւոյն, զոր ամսօք յառաջ 'ի 1. Դեկտ. 1819, առեալ էր յինէն, առ մի ծրար՝ ղռ, 6. տակ. 21. . . . . . . . . | ա. | 1 | 1270 | 35 |
| 2 | | 5 | Կիրակէ | Տէր Արշակ Սաեցի, որ առաքեաց առ իս զփոխանակագիր՝ 1500, ֆիորինի՝ յերկուս Թուղթս. վճարելի Յայս ամսոյ անցնել. զոր և ընկալայ այսօր. | ա. | 2 | 6000 | — |
| 3 | | 26 | Կիրակէ | Ընկալայ զգումար միամեայ վարձուց տանն, որ 'ի Նորաշէն Թաղն, յորում բնակի Արշաւիր Կամսարական ընդ Գնէլայ. . . . . . . . . | բ. | 3 | 1700 | — |
| 4 | Փետրվ. | 7 | Կիրակէ | Զորեքամենայ եկամուտ կալուածոյ ագարակաց, որ 'ի լեռնակողմն, զոր եբեր և հատոյց ինձ նոյն ինքն Սարգան հողագործն. . . . . . | բ. | 1 | 2000 | — |
| 5 | | 13 | Կիրակէ | Յընկերական տուրևառութենէն տուան ինձ դերհաշիւ վասն անձնական ծախուցս, և նորոգութեան բնակարանիս. . . . . . . . . | գ. | 4 | 1321 | 20 |
| 6 | | 22 | Կիրակէ | Փոխանակ Ղուրեցի 'ի լումն 5000, ղռ, պարտեացն, զորոյ 4499: 102, վճարեալ էր 'ի 3, Դեկտեմբ. անցելոյ ամի, այժմ ետ զմնացեալն. | գ. | 2 | 500 | 18 |
| 7 | | 25 | Կիրակէ | Վաճառեցի 10, Պրուծ Բամբակս Կիպրոսի՝ ընդ ղռ, Ա. Ե. ֆէ. 12 — 22: Կշիռ բոլորեցուն 6000. լիտր: Արար ղռ ընդ ամենն. . . | ժա. | 1 | 9000 | — |
| 8 | Մարտ. | 9 | Կիրակէ | Շահ հաշուի հաղորդակցութեան մթերից Արգան Նարմրոյ, զոր ետ ինձ Աստմ Գնունի 'ի վաճառել անդ զբոլորն. . . . . . . . . . | է. | 2 | 123 | — |
| 9 | | 15 | Կիրակէ | Ներկամենայ շահ դրամատուութեանս Սահանայ, զոր այսօր ընկալայ 'ի նմանէ. . . . . | թ. | 4 | 300 | — |
| 10 | | 16 | Կիրակէ | Գին 50, լտերաց գաշխէին, զորս այսօր վաճառեցի Տիգրանայ. առ մին, 5. ղռ. . . . . | ժբ. | 3 | 250 | — |
| 11 | Ապրիլ. | 1 | Կիրակէ | Տէր Բարգամ Ղափեցի, որ ետ ինձ զգինս 100. գրուաց վաճառեալ ցորենոյս. . . . . | ը. | 1 | 300 | — |
| 12 | | 7 | Կիրակէ | Տէր Գասպար Մոկացի, որ գնոյ առ յինէն զերկուս ծրարս Զուխայի 400, գաշեկմնաւ, զորոյ զկէսն հատոյց 50. լիտր Շաքարով, և զկէսն պատրաստական դրամովք. . . . . . . . . | լա. | 2 | 200 | — |
| 13 | | 9 | Կիրակէ | Տէր Յուսիկ Կարնեցի. յորմէ ընկալայ զվեցամենայ շահ 10000, ղռ, դրամոցն, զոր տուեալ էի նմա 'ի 1. Հոկտ. անցեալ տարւոյն, հաշուեալ 5, առ %. . . . . . . . . . . . . . | իէ. | 1 | 500 | — |
| | | | | Գումար. ղռ. | | | 23464 | 73 |

| Հատուածաթիւք բանից | Ամսաթիւ | | | | Թղթահամարք եւ հատուածաթիւք Մայրհաշուին | Ղ | փրէ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Յունվ. | 1 | Պահանջ | Գնոյ առի զմթերանոցն երկդստիկոն 'ի Թաղն անկելանոցի վասն պահելոյ 'ի նմա զարմտիս այգւոյ եւ պարտիզին, զոր ունիմ 'ի ձեռս Գալուստ հողագործ մշակին. . . . . . . . . . | ժդ. 1 | 300 | 40 |
| 2 | | 7 | Պահանջ | Արտակ Մոկացի ընկալաւ յինէն զգումար դրամոց Շահատուութեան պայմանաւ 4, առ %. | Թ. 5 | 7500 | — |
| 3 | | 24 | Պահանջ | Նոտու փոխ առանց շահու առ ներքոյգրեալսդ:<br>Արքեկնի . . . . Ղ, 100 : —<br>Վահրամայ . . . . 150 : —<br>Տիրատրոյ . . . . 70 : —<br>Գեղամայ . . . . . 200 : —<br>Գալստեան . . . . 30 : — | ժԵ. 4 | 550 | — |
| 4 | Փետրվ. | 8 | Պահանջ | Առաքեցի զփոխանակագիր 'ի Մարսիլիա առ Արշամ Հնձեցի. 'ի հաշիւ 621, ֆռանգի եւ $\frac{80}{100}$, վասն առ իս յուղարկելի վաճառաց նորա. | ա. 4 | 1243 | 30 |
| 5 | | 18 | Պահանջ | Ծախք վասն տնկագործութեան եւ մշակութեան ագարակին եւ այգեստանւոյն, որ 'ի Լեռնակողմն, 'ի ձեռն Վարդանայ հողագործին. . | Է. 2 | 321 | — |
| 6 | | 28 | Պահանջ | Տնական ծախք Յունվար եւ Փետրվար ամսոց:<br>Զգեստուց . . . . . Ղ, 370 : 15<br>Կերակրեղինաց . . . . 890 : —<br>Ողորմութիւն աղքատաց . . 30 : —<br>Բարեձիրք ծառայից . . . 50 : — | Ի. 1 | 1340 | 15 |
| 7 | Մարտ. | 19 | Պահանջ | Նոտու 'ի հաշիւ հաղորդակցութեան մթերից լեզակի, զոր գնոյ առաք ընդ Ատովմայ Գնունւոյ՝ պայմանաւ հաւասարաբաժին շահու. . . . . | Է. 4 | 2000 | — |
| 8 | | 22 | Պահանջ | Գնեցի 216, լիտր Մեղրամոմ 'ի Տիրանայ Վանեցւոյ. առ մի լիտր՝ Ղ, 3. ազատ 'ի ծախուց մաքսի, եւ բեռնակրի. . . . . . . . . | ԻԵ. 1 | 648 | — |
| 9 | Ապրիլ. | 1 | Պահանջ | 'Ի Մթերից Չուխայի, զի 'ի Նիկօլ Բանայեաթէն գնեցի զտասն ծրար չուխայ. վճարելով վասն ամենեցուն միանգամայն. . . . . . . . | ԼԱ. 4 | 2000 | — |
| 10 | | 7 | Պահանջ | Յարշամայ Վանանդեցւոյ՝ զի գնոյ առի 'ի նմանէ 100, լիտր Որդան կարմրոյ, առ մի լիտր դաշնադրելով Ղ 10, յոր յաւելան յետոյ եւ ծախք ինչ մանունք, վասն որոց վճարեցի միանգամայն. | Է. 7 | 1005 | 10 |
| | | | | Գումար. Ղ. | | 16907 | 95 |

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԽԻՂԱՐԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

# ՕՐԻՆԱԿ Գ։

Առաջիկայ Օրհաշիւդ նմանաձև է ընդ նախընթաց Բ. օրինակին, և ամփոփ քան զայն. զի բովանդակեալքն 'ի նմա յերկուս երեսս, 'ի սմա պարագրին 'ի մի երես. բաժանեալ զայն յերկուս էջս. յորոց 'ի միումն նշանակին Պարտիք, և յերկրորդումն Պահանջք։ Կարգ դասաւորութեան հատուածաթուոց և թղթահամարոց Մայրհաշուին՝ նոյն է ընդ առաջնոյն. բայց ամսաթիւք նշանակին 'ի սկիզբն իւրաքանչիւր բանից յիշատակագրութեան։

## 1820. ԵՐԵՍ. 1։

*Թղթահամարք ձեռնարկի և Հատուածաթիւք Մայրհաշուին*

1 Ի. 7 — Յունվար. 7։ Պարտիք առ Ամբակում՝ որ ետ ինձ զփոխանակագիր 500, ֆիօրինի 'ի հաշիւ գնոյ առեալ վաճառացն։ Օրժէս փոխանակագրոյն վճարեաց ինձ Սալոն վաճառական, ղշ, 2000։ —

2 Ը. 3 — Յունվար. 9։ Պարտիք առ Մուշեղ Աստանացի՝ որ յուղարկեաց առ իս զչորս բեռինս Բամբակի. ղշ, 1500։ —

3 ԺԱ. 1 — Յունվար. 10։ Պարտիք առ Կոստանդին, որ ետ մուրհակ վճարելոյ յետ վեց ամսոց զգումար դրամոցս՝ ղշ, 2000։ —

4 Ե. 5 — Յունվար. 14։ Պարտիք առ Հեթում Ամդեցի, որ յինէն գնոյ եառ 200, լտերս Մետաքսի և ետ զարժէնն՝ ղշ, 1000։ —

5 Թ. 7 — Յունվար. 16։ Պարտիք առ Կալուածս Ագարակին, որ 'ի ձորամէջն, յորմէ առի եկամուտ, ղշ, 800։ —

6 Է. 1 — Յունվար. 19։ Պարտիք առ վարձաւոր տանն որ 'ի Նորագիւղ, յորմէ ընկալայ զվեցամսեայ վարձն, ղշ, 150։ —

7 ԺԵ. 4 — Յունվար. 20։ Պարտիք առ Լևոն, որ ետ ինձ զշահ 7000, ղշ, դրամոցս, զոր տուեալ էի նմա 'ի 20. Օգոստ. անցելոյ ամի. 'ի հաշիւ 4. առ %։ ղշ, 280։ —

*Թղթահամարք ձեռնարկի և Հատուածաթիւք Մայրհաշուին*

1 ԼԱ. 3 — Յունվար. 5։ Պահանջք 'ի Տապանէն, որում ետու դրամս 'ի շահ 4, առ %, ղշ, 1000։ —

2 ԿԷ. 16 — Յունվար. 11։ Պահանջք 'ի Սմբատայ Նարեկցւոյ, որում 'ի նպաստ կարօտութեանն՝ ետու իբր դրամագլուխ մանր տուրևառութեան, ղշ. 500։ —

3 Թ. 9 — Յունվար. 13։ Պահանջք 'ի հաշուէ Կալուածոց ագարակին. զոր 'ի տնկագործել՝ արարի ծախս ղշ. 67։ —

4 Խ. 8 — Յունվար. 17։ Պահանջք 'ի մթերից գահվէին, զոր գնոյ առի յԱրշամայ՝ լտերս 1000, առ մի լիտր ղշ, 3. ընդ ամէնն՝ ղշ, 3000։ —

5 Խ. 9 — Յունվար. 18։ Պահանջք 'ի հաշուէ ծախուց տուրևառութեան, զի ետու վասն արկեղաց, կշռոյ և բեռնակրաց գնոյ առեալ Գահվէին. ղշ, 78։ —

6 ԽԵ. 4 — Յունվար. 23։ Պահանջք 'ի հաշուէ տնական ծախուցս ընդ ամիս ողջոյն։

| | |
|---|---|
| Վասն Զգեստուց. ղշ, | 430։ — |
| Կերակրեղինաց . . . | 620։ — |
| Լուսեղինաց . . . | 200։ — |
| Դիպուածական ծախք. | 100։ — |
| Պարգև ծառայից . . . | 60։ — |
| Ողորմութիւն աղքատաց. | 45։ — |
| ղշ. | 1455։ — |

# ՕՐԻՆԱԿ Դ.

Հետագայ Օրհաշիւս՝ Ճարտարահնար գիւտ Անգղիացւոյ ուրումն, թէպէտև կարօտի առանձին գրոց և վարդապետութեան յուսումն և 'ի վարժութիւն, զոր մին յաջողելով յուսամք 'ի լոյս ընծայել՝ հանդերձ իւրով հետաքննին Մայրհաշիւ Մատենիւն. սակայն առ-տամօր 'ի տեղեկութիւն զանազան տեսակաց Օրհաշուի յաւելցուք զմի մասն ևեթ, գաղափարելով զամիսն Յունվար. յորում 'ի կարգէ անտի դասաւորութեան գաւազանացն, և 'ի համառօտագիծ յիշատակագրութեանց մարթ է գուշակել զընթացս համարակալութեան այսր տեսակի։

Նմանայն երեք Օրհաշուիս բաժանին յերիս կարգս գաւազանաց. կարգն ձախակողման բովանդակէ զՊարտեաց՝ բաժանելի է 'ի գաւազան դաշնականաց, մանրափողոց, գրանշանաց, և թղթահամարոյ Մայրհաշուին։ Կարգն աջակողման՝ ներքինն, որ է պարագրիչ Պարտեաց և Պահանջից միանգամայն, բաժանելի է 'ի գաւազան դաշնականաց և մանրափողոց ևեթ։ Իսկ կարգն արտաքին յաջակողմնկոյս՝ բաժանելի է 'ի չորս գաւազանս ըստ կարգի պարտակողման, յորս նշանակելի են թղթահամարք Մայրհաշուին, գրանշանաց, դաշնականք և մանրափողք։ Նմանթիւք կարգելի են 'ի սկիզբն յիշատակագրութեանց առանձին գաւազանաւ։

Նորաձևութիւն Օրհաշուիս բաց 'ի կարգէ դասաւորութեան գաւազանացն՝ ունի իւր սեփական զգիւտ գրանշանաց. զի առ իւրաքանչիւր յիշատակագրելի անձինս և նիւթս սահմանեալ կան Այբուբենք, որք ընդ թղթահամարոյ Մայրհաշուին յայտ առնեն զտեղին և զհաշուեմասունս իւրաքանչիւրոց 'ի Մայրհաշւին։

# ՕՐՀԱՇԻՒ

| ՊԱՐՏԻՔ | | | | ԱՄԻՍ | | ՊԱՐՏՈՒՑ ՊԱՀԱՆՋՔ | | ՊԱՀԱՆՋՔ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՂՐ | Մ. | Գծ. | Երես | | ՏԱՐՍՈՆ · ՅՈՒՆՎԱՐ · 1820 : | ՂՐ | Մ. | Երես | Գծ. | ՂՐ | Մ. |
| | | | | 1 | Պահանջք · Թադնիկ Տարսոնացի վասն իւրոյ Դրամագլխոյն · | 36000 | — | 1 | Ա | 36000 | — |
| | | | | | " Հեթում Տարսոնացի, նոյնպէս · | 36000 | — | 1 | Բ | 36000 | — |
| 72000 | — | Գ | 1 | | Պարտք · Դրամարկղն վասն ընկալեալ դրամոյ · | 72000 | — | | | | |
| | | | | 2 | Պահանջք · Աթիկ Սսեցի, 40 · կարաս գինի Կիպրոսի, առ մին 600, ՂՐ · | 24000 | — | 1 | Զ | 24000 | — |
| | | | | | " Փոխանակագիրք վճարելիք " Քարշեալն Աթիկին ստորագրեցաւ, որ է արժէք գինւոյ նորա՝ վճարելի 'ի 1 · Սեպտեմբերի · | 24000 | — | 1 | Է | 24000 | — |
| 24000 | — | Զ | 1 | | Պարտք · Աթիկ Սսեցի վասն փոխանակագրոյն ստորագրելոյ · | 24000 | — | | | | |
| | | | | | Պահանջք · Դրամարկղն վասն ծախուց Նաւուղէի, Մաքսի, և այլն, 40 · կարաս գինւոյն, ըստ հաշուի մուրհակացն · | 18000 | — | 1 | Գ | 18000 | — |
| | | | | | " Զենոն Մարաշեցի՝ վասն 500, ծրար կտաւոյ : Առ մին՝ 33 : 60 · | 16800 | — | 1 | Ը | 16800 | — |
| | | | | | " Եղնիկ Կարնեցի՝ վասն 1000 · կանգ''. Չուխայի : Առ մին՝ 18 · | 18000 | — | 2 | Թ | 18000 | — |
| | | | | | " Մուշեղ Լամբրոնացի՝ վասն 1000, կանգ''. բեհեզոյ : Առ մին՝ 9 · | 9000 | — | 2 | Ժ | 9000 | — |
| | | | | | " Դրամարկղն՝ վասն ծախուց փոխագրութեան վաճառացս · | 492 | — | 1 | Գ | 492 | — |
| 420 | — | Դ | 2 | 3 | Պարտք · Տիրան Տարսոնացի՝ վասն 20, կանգ''. Չուխ'' : Առ մին, 20 · | 420 | — | | | | |
| 210 | — | Ե | 2 | | " Դանան Տարսոնացի՝ վասն 10 · կանգ''. չուխ''. նոյնպէս · 21 · | 210 | — | | | | |
| 600 | — | Լ | 3 | | " Բենիկ Տարսոնացի՝ վասն 20, կանգ''. չուխ''. նոյնպէս · 21 · | { 420 | — | | | | |
| | | | | | " Նոյնն՝ վասն 5, ծրար կտաւոյ, Առ մին՝ ՂՐ, 36 · | 180 | — | | | | |
| 1200 | — | Ի | 3 | 8 | " Արգար Տարսոնացի՝ վասն 1, կարաս գինւոյ · | 1200 | — | | | | |
| 1614 | — | Խ | 4 | 10 | " Բիւրատ Տարսոնացի՝ վասն 1, կարաս գինւոյ · | { 1200 | — | | | | |
| | | | | | " Նոյնն՝ վասն 20, կանգ''. չուխ'' : Առ մին՝ ՂՐ · 20 : 70 · | 414 | — | | | | |
| 420 | — | Ծ | 4 | | " Մեղրիկ Կեսարացի՝ վասն 20, կանգ''. չուխ'' : Առ մին՝ 21 · | 420 | — | | | | |
| 1035 | — | Կ | 4 | 12 | " Զարեհ Տարսոնացի՝ վասն 50, կանգ''. չուխ''. 20 : 70 · | 1035 | — | | | | |
| 840 | — | Մ | 5 | | " Բաբիկ Տարսոնացի՝ վասն 40, կանգ''. չուխ''. 21 · | 840 | — | | | | |
| 420 | — | Հ | 4 | | " Արամ Տարսոնացի՝ վասն 20, կանգ''. չուխ''. 21 · | 420 | — | | | | |
| 630 | — | Ձ | 4 | 15 | " Գեղամ Տարսոնացի՝ վասն 30, կանգ''. չուխ''. 21 · | 630 | — | | | | |
| 420 | — | Ղ | 5 | | " Զենոբ Տարսոնացի՝ վասն 20, կանգ''. չուխ''. 21 · | 420 | — | | | | |
| 828 | — | Յ | 5 | | " Աղէքս Այասեցի՝ 40 · կանգ''. չուխ''. առ մին 20 : 70 · | 828 | — | | | | |
| | | | | 17 | Պահանջք · Արգար Տարսոնացի՝ վասն տալոյ 200, Թալեռս · | 1200 | — | 2 | Ի | 1200 | — |
| 1200 | — | Գ | 1 | | Պարտք · Դրամարկղն՝ վասն դրամոյ յԱրգարէ Տարսոնացւոյ · | 1200 | — | | | | |
| 240 | — | Դ | 2 | 18 | " Տիրան Տարսոնացի՝ վասն 20, կանգ''. բեհեզոյ · 12 · | 240 | — | | | | |
| 114 | — | Ե | 2 | | " Դանան Տարսոնացի՝ վասն 10 · կանգ''. նոյնպէս · 11 : 40 · | 114 | — | | | | |
| 228 | — | Լ | 3 | | " Բենիկ Տարսոնացի՝ վասն 20 · կանգ''. նոյնպէս · 11 : 40 · | 228 | — | | | | |
| | | | | 21 | Պահանջք · Բիւրատ Տարսոնացի՝ վասն տալոյ զդրամս գինւոյ · | 1200 | — | 2 | Խ | 1200 | — |
| 1200 | — | Գ | 1 | | Պարտք · Դրամարկղն՝ վասն դրամոյն որ 'ի Բիւրատայ · | 1200 | — | | | | |
| 222 | — | Ծ | 4 | | " Մեղրիկ Կեսարացի՝ վասն 20, կանգ''. բեհեզոյ · 11 : 10 · | 222 | — | | | | |
| 222 | — | Խ | 4 | 25 | " Բիւրատ Տարսոնացի՝ վասն 20, կանգ''. նոյնպէս · 11 : 10 · | 222 | — | | | | |
| 540 | — | Կ | 4 | | " Զարեհ Տարսոնացի՝ վասն 50, կանգ''. նոյնպէս · 10 : 80 · | 540 | — | | | | |
| 456 | — | Մ | 5 | | " Բաբիկ Տարսոնացի՝ վասն 40 · կանգ''. նոյնպէս · 11 : 40 · | 456 | — | | | | |
| 228 | — | Հ | 4 | 27 | " Արամ Տարսոնացի՝ վասն 20, կանգ''. նոյնպէս · 11 : 40 · | 228 | — | | | | |
| 333 | — | Ձ | 4 | | " Գեղամ Տարսոնացի՝ վասն 20 · կանգ''. նոյնպէս · 11 : 10 · | 333 | — | | | | |
| 228 | — | Ղ | 5 | | " Զենոբ Տարսոնացի՝ վասն 20 · կանգ''. նոյնպէս · 11 : 40 · | 228 | — | | | | |
| 444 | — | Յ | 5 | 29 | " Աղէքս Այասեցի՝ վասն 40, կանգ''. նոյնպէս · 11 : 10 · | 444 | — | | | | |
| 110292 | — | | | | | | | | | | |
| 75702 | — | Ց | 3 | 31 | Պարտք · Անվաճառ Մնացուածք 'ի Մթերանոցս : { 38 · կարաս գինի · · 1050 : — | 39900 | — | | | | |
| | | | | | 710 · կանգուն բեհեզ · 9 : — | 6390 | — | | | | |
| | | | | | 710 · կանգ''. Չուխայ · 18 : — | 12780 | — | | | | |
| | | | | | 945 · կանգ''. կտաւ · · 33 : 60 | 16632 | — | | | | |
| 185994 | | | | | | 370686 | — | | | 184692 | — |
| | | | | | Շահ տուրեւառութեան ամսոյս · · | · · · | · | | | 1302 | — |
| | | | | | | | | | | 185994 | — |

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

Որովհետեւ յընթացս հաշուեմատենիս ուրեք ուրեք յիշատակութիւնք եղեն զանազան դաշնագրութեանց, պատշաճ համարեցաք 'ի վախճան գործոյս յաւելուլ զօրինակս ինչ առ 'ի տալ նորավարժից զընդհանրական գաղափարս ձեւոյ եւ կարգի բանից դաշնագրելի պայմանաց ։

## Օրինակ Գրոյ Ապահովագրութեան ։

Պայմանք ապահովագրութեան՝ եթէ առանձնական դաշնագրութեամբ լիցին, եւ թէ հրապարակական նօտարաւ, արձանագրելի են 'ի թուղթս. նշանակելով 'ի նմա զամն, զամսաթիւ, եւ զժամ աւուրն (թէ հնար է), յորում երկոքին կողմանք միաբան հաճութեամբ ստորագրեալ իցեն դաշանցն կուելոց ։ Երկոք թղթոյն պարտին լինել լի եւ անթերի գրուածովք առանց պարապ տողից՝ կամ սպիտակ թղթոյ, զի մի՛ դաւ ինչ եւ նենգութիւն տեղի գտցեն 'ի դաշինսն ։ Նմանք արձանագրութեանն ունին յայտնել զանուն եւ զտեղի բնակութեան ապահովագրել տուողին. զհանգամանս վիճակի նորա, զոր օրինակ՝ թէ իցէ ինքն իսկ վաճառատէրն, եւ կամ այլ ոք գործադիր յանձնառութեան. զանուն եւ զտեսակ նաւուն, զկոչումն անուան նաւապետին, զտեղին՝ ուստի օր իցեն վաճառքն, եւ կամ ուստի բեռնաւորելիք, զնաւահանգիստն՝ յորմէ նաւն մեկնեալ իցէ, կամ ունիցի ելանել 'ի ճանապարհ. զքաղաքն կամ զնաւահանգիստ յորում ունի բեռնաւորել, կամ թափել զբեռինսն, զինչութիւն, զորքանութիւն, եւ զգին ապահովագրելի վաճառաց. զկէտ ժամանակին՝ յորում սկզբնաւորելի եւ դադարելի իցէ դաշն ապահովագրութեան. զվարձս եւ զծախս դաշնագրեալ երաշխաւորութեան ։ Ընդ որս մարթ է յաւելուլ եւ զհաւանողական հաճութիւն երկոցունց կողմանց առ դատաստան անձանցն ընտրելոց 'ի նոցունց 'ի դիպուածս հակառակութեան, (եթէ հարկն ստիպեսցէ) ։ Եւ ընդհանրապէս նշանակելի են այն ամենայն պայմանք, զորս միաբան հաճութեամբ կուեալ իցեն երկոքին կողմանք ։ Որոց օրինակ լիցի առաջիկայ համառօտ բովանդակութիւնս քաղեալ 'ի դաշնագրոյ անտի Վէնէտկեան ապահովագրաց ։

Պայման. Ա ։ 'Ի փոյս եւ 'ի տուգանս ապահովագրաց են ամենայն ձախորդ պատահարք ծովու, այսինքն՝ նաւաբեկութիւնք, հրդեհք, նիստ եւ խրումն նաւու 'ի ցամաք, կողոպուտք հինից եւ ասպատակաւորաց, նենգութիւնք, փախուստ նաւատեառն, կամ նաւուղղին, եւ այլ որպիսի եւ իցէ դիպուած կորստեան բովանդակ մթերիցն ապահովագրելոց ։

Պայման. Բ ։ Ազատ են ապահովագիրք 'ի հատուցանելոյ զտուգանս երաշխաւորեալ վաճառաց, եթէ մթերքն ինքնին ցնդմամբ, կամ լուծմամբ, կամ հեղմամբ, կամ անկարգ զետեղմամբ, որպէս եւ արտաքոյ նաւուն 'ի մաքսատան վնասեսցին, կամ թէ ապականութիւն առցեն 'ի բնութենէ իւրեանց, եւ կամ անդրատին 'ի բնէ յոռիք իցեն եւ անպիտանք ։ Նոյնպէս ազատ լիցին 'ի հատուցմանէ տանելոյ, եթէ 'ի մթերից անտի ապահովագրելոց գողասցի նաւապետն կամ նաւաստիք, կամ ընդ առաջ ելցեն ծախք 'ի պատճառս անյաջողութեան ինչ նաւուն ։ 'Ի սոյն կարգ դասելի են եւ դիպուածքն որպէս եւ ծախք, որք յընթացս ուղեւորութեան սովոր են հանդիպել, եթէ նաւապետն ստիպեսցի թափել ուրեք զբեռինսն վասն նորոգութեան նաւուն՝ առ 'ի կարող լինելոյ անվտանգ կատարել զմնացեալ ուղին ապահովագրեալ մթերից ։ Հուսկ յետոյ ազատ են ապահովագիրք յայն ամենայն վնասուց առթելոց կամ եղելոց 'ի պատճառս նոցին իսկ վաճառատեարց, կամ գործակալաց նոցին ։

Պայման. Գ ։ Վաւեր եւ անեղծ կացցէ երաշխաւորութիւն վաճառաց ուղեւորելոց ընդ ծով՝ եթէ 'ի դաշնագրութեան գտցի զանցառութիւն անուան նաւապետին. շատ է թէ նշանակեալ կայցեն անուանք բեռնաւորողին, եւ առ որ ուղղեալ իցեն բեռինքն ։ Նոյնպէս վաւեր է դաշն երաշխաւորութեան, եթէ գտցի 'ի նմա վրիպակ, կամ այլայլութիւն անուան նաւապետին, զի մարթ է՝ թէ յընթացս ուղեւորութեան վախճանեալ իցէ, եւ կամ օրինաւոր պատճառաւ իւիք փոխանակեալ այլոյ ուրուք 'ի տեղի նորա. միայն թէ դիպուածքս հաւաստի ստուգութեամբ հաստատելի են յերաշխաւորելոյն ։

Պայման. Դ ։ Հաստատուն եւ վաւեր համարեսցի դաշն ապահովագրութեան, եթէ նաւապետն ըստ բերելոյ առթին եւ ըստ թելադրելոյ արուեստին կալեալ իցէ զընթացս ուղեւորու-

թեան նաւուն, յածելով 'ի ծովու, դիմելով 'ի խորս՝ կամ քերելով զափամբ, մնանելով 'ի նաւահանգիստ ըստ պահանջելոյ հարկին յանկարծ վտանգ ուղեւորութիւն : Նոյնպէս անեղծ կացցէ դաշնագրութիւնս, եթէ յընթացս ուղեւորութեան դէպ լիցի նաւապետին առնուլ կամ թափել ուրեք զբեռինս, կամ ընուլ զպէտս կարօտութեան նաւուն, առանց խոտորելոյ 'ի դէմ եղեալ ճանապարհէն, և կամ անագանելոյ զընթացսն քան զսահմանեալ ժամանակն : Հաստատուն մնասցեն դաշինք երաշխաւորութեան և 'ի դիպուածսն, յորս նաւն գրաւեսցի 'ի ծառայութիւն և 'ի պաշտ գործոց տէրութեան :

Պայման. Ե : Արձք ապահովագրութեան հատուսցին զկնի երից ամսոց, սկսեալ 'ի ժամէ անտի ստորագրութեան և հաստատութեան դաշանցն. որ և պարտի լինել անբեկանելի դրամ՝ ոսկւոյ կամ արծաթոյ, և ոչ այլ ինչ : Երաշխաւորութիւնն և ըստանձնումն վտանգից ունի սկիզբն առնուլ 'ի լինել նաւուն առ դուրս նաւահանգստին. իսկ 'ի դիպուածսն՝ յորս նաւն բեռնաւորելի իցէ յայլում քաղաքի, կամ թէ ելեալ իցէ 'ի ճանապարհ, և կամ ուղղեալ յայլ նաւահանգիստ, վտանգն սկսեալ համարեսցի՝ յորժամ վաճառքն բեռնաւորեալ իցեն 'ի նաւ. և վախճան առնուցու յետ քսան և չորից ժամուց խարսխելոյ նաւուն 'ի դէմ եղեալ տեղին :

Պայման. Զ : Ապահովագրեալ մթերք ըստ զննութեանն և ըստ չափու քանակին պարտին բացայայտիլ 'ի ստորական բեռնագիր նաւուն, կամ այլով համազօր մուրհակաւ. իսկ արժէք նոցին հաշուելի են ըստ գնոյն՝ զոր միաբան հաճութեամբ որոշեսցեն դաշնադիրք, որ և բացայայտ նշանակելի է 'ի գիր դաշնակցութեան :

Պայման. Է : Զապահովագրեալ մթերսն մի կարասցէ վաճառատէրն թողուլ կամ լքանել յապահովագիրս՝ նախ քան զսկզբնաւորել ուղեւորութեան նաւուն : Իսկ 'ի դիպուածսն՝ յորս օրէն իցէ լքանել 'ի տուգանս ապահովագրաց, պարտ է վաճառատեառն կամ գործակալի նորա յայտնել զլուր ձախորդութեանն՝ զոր ընկալեալ իցէ. և այդ ծանուցումն ունի լինել 'ի մէջ երից աւուրց, կամ կանուխ ևս քան զայդ՝ եթէ հնար է :

Պայման. Ը : Լքումն վտանգաւորեալ մթերից 'ի տուգանս ապահովագրաց՝ ունի սահման վեցամսեայ ժամանակի, սկսեալ յօրէ անտի ծանուցման առ նոսա, մատուցանելով զամենայն վաւերական յայտարարութիւնս և զվկայագիրսն հարկաւ պահանջեալս 'ի ստուգութիւն եղեալ վտանգին. ապա թէ ոչ լքումն չհամարի օրինաւոր :

Պայման. Թ : 'Ի դիպուածս նաւաբեկութեան կամ ցամաքընկեցութեան նաւուն՝ վաճառատէրն կամ գործակալ նորին եթէ իցեն ձեռնհասք, պարտին օժանդակել ազատութեան ապահովագրեալ մթերից՝ առանց կորուսանելոյ զիրաւունս լքման ըստ ժամանակին. և որ ինչ ծախք լինիցին ընդ ձեռն նոցա 'ի պատճառս զերծուցանելոյ զմթերսն, հատուսցին յապահովագրաց անտի :

Պայման. Ժ : 'Ի դիպուածս ասպատակութեան հինից, կամ գրաւելոյ 'ի տէրութենէ իմեքէ, յընդունել անդ զլուր ձերբակալութեանն մի կարասցէ վաճառատէրն լքանել զմթերսն, բայց եթէ զկնի վճռոյ սեփականութեան և գրաւելոյ յարքունիս. և կամ զկնի վեց ամսոց՝ եթէ վաճառքն իցեն նիւթք անեղծանելիք. իսկ եթէ դիւրեղծանելի իրք իցեն, կարէ լքանել յետ երից ամսոց : Բայց ստիպի վաճառատէրն առաջի առնել ապահովագրաց զիրաւացի պատճառս իւր 'ի լքանել զմթերսն, և զհաւաստի յայտարարութիւն եղեալ դիպուածոյն, ըստ Է, պայմանին : Միանգամայն յայսպիսի դիպուածս պարտի և վաճառատէրն յընթացս սահմանեալ ժամանակին լքման՝ օժանդակել ըստ կարի յազատութիւն գրաւեալ մթերիցն. որոյ աշխատութիւնն և ծախք ոչ մնասցեն անվճարք 'ի կողմանէ երաշխաւորաց ըստ Թ, պայմանին :

Պայման. ԺԱ : Վաճառատէրն կարէ լքանել զմթերսն 'ի տուգանս ապահովագրաց, եթէ սկսեալ յօրէ անտի մեկնելոյ նաւուն 'ի նաւահանգստէ, կամ յօրէ անտի ընդունելոյ զյետին ծանօթութիւնն վասն նորա, ցամ մի ողջոյն չառնուցու լուր զնմանէ, թէպէտև չունիցի 'ի ձեռին զհաւաստի վկայագիր կորստեան նաւուն : Սակայն յետ ընդունելոյ զարժէս ապահովագրեալ մթերից, եթէ յաջողեսցի անագան ուրեմն ժամանել նաւուն, և վաճառքն անվնաս ելցեն 'ի ցամաք, լքումն մթերից համարեսցի իբրև չեղեալ, և մնասցեն 'ի հաշիւ վաճառատեառն, թէպէտև հատուցումն տուգանաց կանխաւ եղեալ իցէ. բայց հարկ է վաճառատեառն անդրէն հատուցանել զընկալեալ դրամսն հանդերձ շահու՝ կէս առ հարիւր. ըստ թուոյ ամսոցն՝ յորս դրամն մնացեալ իցէ առ վաճառատէրն :

Պայման. ԺԲ : Անվաւեր լիցին ապահովագրութիւնք դաշնադրեալք, եթէ վաճառատէրն նախ քան զստորագրութիւն դաշանց՝ յայտնի կամ ընդ կասկածանօք գիտակ ինչ իցէ կորստեան մթերիցն. որպէս և ապահովագիրք տեղեակք իցեն անվտանգ ժամանելոյ նաւուն 'ի դէմ եդեալ տեղին : Սակայն ընդունելի և հաստատուն համարեսցի, եթէ յայտնելով զկասկա-

ծանս միմեանց՝ կռեսցեն դաշինք ապահովագրութեանն ։

Հոդուած. ծէ ։ 'Ի դիպուածսն՝ յորս կամ 'ի հաւանութենէ երկոցունց կողմանց, և կամ 'ի հարկէ իմեքէ ստիպեալ յետս կասեսցին 'ի դաշնագրեալ ապահովագրութենէ, անպատճառ հատուսցի կէս առ հարիւր 'ի վարձուց ապահովագրութեան ։

Հոդուած. ծը ։ 'Ի ստուգիւ կորստեան մթերիցն ստիպեսցին ապահովագիրք հատուցանել զգումար դրամոցն վասն որոց յանձն առեալ իցեն զերաշխաւորութիւն. վճարելով զաներկբայելի դրամս ոսկւոյ կամ արծաթոյ, որք սովորականք իցեն 'ի տուրևառութիւնս քաղաքին ։ Իսկ այդ հատուցումն պարտի լինել յետ երից ամսոց, սկսեալ յօրէ անտի հրաժեշտ տալոյն 'ի մթերիցն կորուսելոց. մարթ է և առ օրին հատուցանել, եթէ յանձն առցէ վաճառատէրն զզեղչումն վճարելի դրամոց 3, կամ 4, առ %, ըստ հաճութեան ապահովագրին ։ Միանգամայն 'ի ժամ հատուցման տուգանացն՝ եթէ երաշխաւորեալն չիցէ տակաւին վճարեալ զվարձս ապահովագրութեան, պարտ է անպատճառ հատանել զայն 'ի գումարէ անտի վճարելի դրամոց. զի են իրաւունք ապահովագրին ։

Հոդուած. ծթ ։ 'Ի դիպուածս հակառակութեան պարտ է ապահովագրաց հատուցանել նախ ըզտուգանսն, և ապա մտանել 'ի դատ ընդ երաշխաւորեալն. սակայն 'ի յաղթել ապահովագրաց և 'ի ստանալ զիրաւունս անտոյժ մնալոյ, կարող լիցին անդրէն առնուլ յետս զտուեալ դրամսն հանդերձ վերայաւելեալ շահուք տասն առ հարիւր, բաց յամենայն շահէ անտի կէս առ հարիւր ըստ սովորութեան ։ Իսկ եթէ երաշխաւորեալն անհաւան գտցի այսմ պայմանի, ոչ կարասցէ յետոյ պահանջել յապահովագրաց զայլ հատուցումն ընդ անուամբ վնասու, կամ կորուսեալ շահու մթերիցն. այլ տացին նմա արժէք կորուսեալ իրացն ևեթ ։

'Ի վախճան այսոցիկ պայմանաց ապահովագրութեան սովորութիւն է յաւելուլ և զայն, թէ պայմանք դաշնագրութեանս յօրինեալ և կարգաւորեալ են յօրինական մատենից արդի վաճառականութեան. յորոց մարթ է լիովին հասու լինել այնմ ամենայնի, որ 'ի նախակարգեալ գլուխս բանից չիցէ մեկին բացայայտեալ ։

Արդ՝ յետ միաբանական հաճութեամբ կռելոյ զդաշինսն, պարտ է ապահովագրին իւրով ձեռամբ ստորագրել 'ի ներքոյ արձանագրեալ դաշանց, նշանակելով զգումար դրամոցն՝ որոց եղեն երաշխաւոր, յայտ առնելով և զչափ դաշնագրեալ վարձուց, հանդերձ թուականաւ տարւոյն և ամսոյն, ըստ առաջիկայ ձևոյ բանիցս, յարմարեալ իբր 'ի վերայ վաճառաց բեռնագրոյն, զոր եդաք յերես, 143 ։

ՂԾ. 5040 ։ — Ես Համբարձում Ալբինեան ապահովագրեմ դահեկանս հինգ հազար և քառասուն, վարձք վճարոյ 2, առ %։ Ընդ ամենայն ՂԾ, 100. տասն 100 ։ — 'Ի 6. Յունիսի. 1824 ։

Յետ ստորագրութեան ապահովագրին՝ պարտ է և միջնորդ եղելոյն քաղելով զբանս յայտարարութեան բեռնագրոյն՝ նշանակել 'ի վերջոյ կամ 'ի թիկանց կուսէ արձանագրեալ թղթոյ դաշնագրութեան, ըստ առաջիկայ օրինակի ։

1824

Պարոն Բաղդասարայ Սերոպեան ընդունի
Պարոն Առաքել Պօնէլեան գործակալ յանձնարարութեանց 'ի Նորդրոյ զթիւր ապահովութեան: Օր երեկոյեան նաւն Մարկոսեան անուանեալ, որոյ նաւապետ Պետրոս Մեղուեան զթիւրս ապահովութեան: Հնդկաստանուց ապրանքն 'ի Օձեսիոյ 'ի Տերոն, տանելով անդր ... Հնդիկ ... Ա. Գ. ։ ..., 1 . 2 . բեռնաւորեալ 'ի յետ Պարոն Առաքելոյ Պօնէլեան, և հատուցանելոյ առ Պարոն Բաղդասար Սերոպեան, ... հատուցմամբ հինգհազար և քառասուն դահեկանս, ըստ արդեան ... Տէր հովանի լիցի նմին ։ ծնոցն և թէ ..., ըստ ամենայն ... յառաջիկայ գէրս դաշնագրութեան ։

Ապահովագրեալ 'ի Թղթահամարն, 36 ։

Բաղդասար և Սիմոն Վէնետ
ծովային ապահովագրութեանց ։

Պետրոսեան Հրամանատար 'ի Թեսն, 56 ։

Օրինակ բանից Երաշխաւորի Յայտարարութեան 'ի դիպուածս անընդունելի լինելոյ և չափ անճար ձեռաց փոխանակագրոց ։

Բողոքումն առ իրաւունս սովոր է լինել գրաւոր յայտարարութեամբ 'ի ձեռն հրապարակական նոտարի ըստ առեւտրական օրինաց վաճառականութեան. որով խնդրէ ոք անեղծ պահել զամենայն իրաւունս իւր 'ի պատճառս անընդունելի լինելոյ, կամ անվճար մնալոյ փոխանակագրոյն, զոր ունի 'ի ձեռին ։ Իսկ այս առեւտրական բողոքումն լինի ընդդէմ նոցա՝ որոց անուանք նշանակեալ կայցեն 'ի փոխանակագիրն ։ Յայտարարութիւնս այս կամ բողոքումն պարտի լինել 'ի տեղւոջն կամ 'ի քաղաքին յայնմիկ, ուր հանդերձեալ իցէ լինել հատուցումն դրամոց փոխանակագրոյն ։

'Ի գլուխ բանից յայտարարութեան պարտ է կարգել զամբողջ օրինակ փոխանակագրոյն՝ համդերձ ստորագրութեամբ ընդունելութեանն (թէ եղեալ իցէ). որպէս և ընդօրինակութեամբ շրջմանցն կամ փոխանցմանց՝ թէ կայցեն 'ի թիկանց կուսէ ։ Իսկ բանք յայտարարութեան ունին բովանդակել զերաւացի պահանջումն գումարի դրամոց փոխանակագրոյն. և զխնդրել անձին՝ որում անկ էր հատուցանել զայն ։ Միանգամայն սոյն յայտարարութեամբ բողոքէ առնուլ ոչ միայն զգումար նշանակեալ դրամոյն, այլև պահանջէ զփոխարինութիւն վնասուց և ծախուց, որպէս և զգարգեալ շահուց. ըստ որում ունիս տեսանել յառաջիկայ օրինակդ իրաւաբողոք ծանուցման, որպէս թէ եղեալ 'ի ձեռն հրապարակական նոտարի, իբր 'ի դիմաց Ամբատայ Պոռնեցւոյ՝ ընդդէմ Տիգրանայ Կարնեցւոյ, և Արշակայ Գնելեան, և Մուշեղայ Մամիկոնեան նշանակելոցն 'ի փոխանակագրին. (զոր գտցես. յերես. 82 ։)

» Յամի՝ 1820. Յուլիսի, 26. ՅԵՒԴՈԿԻԱ ։

» Պարոն Ամբատ Պոռնեցի վաճառական ծանուցեալ 'ի տեղւոջս Յեդոկիա, բնակեալ 'ի Բաղի (այս անուն) նո-
» տարս իմ ներկայութեամբ հրապարակական նոտարիս բերէ եղելոյ յայս տեղւոջ՝ զփոխանակագիրն՝ որ ունէր օրինակ զայս ։

(Առաջին) 'Ի Կոստանդնուպօլիս. 22. Մայիսի. 1820 ։ ղշ, 1063 ։ Առ մին 40. փարայ ։

Յերեսներորդ աւուր 'ի տեսութենէդ վճարեսցես վասն այսր Միակօրինակ փոխանակագրոյս (միանգամ և եթ) ըստ կարգաւորութեան Պարոն Տիգրանայ Կարնեցւոյ զգումար դրամոցս ղշ, Հազար վաթսուն և երեք. առ մին քառասնական փարայ արժողութեամբ ։ Որոյ փոխարէնն ընկալեալ եղև յինէն. և անցուսցես 'ի հաշիւ ըստ ծանուցանելոյս. Ողջ լեր ։

Մուշեղ Մամիկոնեան ։

Առ Պարոն Արշակ Գնելեան՝
Յեւդոկիա ։

(թ՚. 25)

Ընկալեալ 'ի 25. Յունիսի.
Արշակ Գնելեան ։

Առնելով 'ի ներքոյ կոչեալ և պատասխանատու այսպիսի. * Իսկ վասն իմ վճարեսցի ըստ կարգադրութեան Ամբատայ Պոռնեցւոյ, յորմէ ընկալայ զարժէսն ։ 'Ի Յուլիսի. 1 ։ Տիգրան ։

Արդ ըստ խնդրոյ նախայիշատակեալ առաջարկութեան գնացեալ իմ 'ի բնակարան Տիգրանայ Կարնեցւոյ 'ի Բաղի (այս անուն), ըստ 'ի նմանէ, թէ այդ գումար դրամոց վճարելի է յԱրշակայ Գնելեան և ոչ յինէն. վասն որոյ եկեալ անդի գնացի առ Պարոն Արշակ Գնելեան 'ի Բաղի (այս անուն) և հարցմամբ տեղեկացայ 'ի նմանէ, ըի վասն անծանօթութեան և անստուգութեան լինելոյ (կամ վասն այս ինչ պատճառի և այլն). անկարանայ՝ չափ չկամի հատուցանել զգումար դրամոց փոխանակագրոյս ։ Օգտաւորական նորա համբերել հրաժեշտ հատուցման, յայս առնեմ զբողոք ընդդէմ որոց վերագրեալ բազմանշանեալ իցեն զփոխանակագիրդ, պահանջելով զամենայն վնասս, զփոխանակութիւնս, զփոխարինութիւնս, զշահս և զծախս ։

Առաջինկայ յայտարարութիւնս եղև 'ի տեղւոջ բնակութեան նորա, յանդիման ներկայութեամբ ծանօթ և հաւատարիմ վկայից բնակելոց 'ի տեղւոջս. որք միաբան ընդ նոտարիս ցնան ետին ստորագրոյս և կրկնակ օրինակաց սորին ։

{ Այս վկայ (այս անուն) հաւատարիմ ։
{ Այս վկայ (այս անուն) հաւատարիմ ։

Արժէք յայտարարական թղթոյս, ղշ. 8 ։ 60 ։

Նոտար հրապարակական
(այս անուն) ։

## Օրինակ Մուրհակի ընդունելութեան դրամոց յամենէ :

'Ի Կարին . 28 . Հոկտեմբերի . 1824 :

'Ի Պարոն Հմայեկայ Կամսարեանց ընկալայ այսօր դաշեկանս վեցհազար, որոց վասն պարտապան եմ 'ի վեց ամսոյ 'ի վեց ամիս հատուցանել նմին շահս՝ հինգ առ հարիւր 'ի տարւոջն, համդերձ պայմանաւ անդրէն յետս դարձուցանելոյ նմա զընկալեալս գլուխ դրամոց 'ի շրջանս չորից ամաց . այսինքն 'ի 27 . Հոկտեմբերի, 1828 : Որք են Դշք . . . 6000 : —

Բաբկէն Արծրունի :

### Այլ Օրինակ :

'Ի Տիգրանակերտ . 23 . Յունվարի . 1825 :

'Ի Պարոն Վազգենէ Խոսրովեանց ընկալայ ես ներքոյգրեալս Դշ, չորս հազար, դաշամբ անդրէն հատուցանելոյ նմին զկնի երից ամաց սկսեալ յօրէ աստի ընդունելութեանս : Այլ պարտապան եմ վասն ընկալեալ դրամոցս հատուցանել նմա շահս՝ հինգ առ հարիւր 'ի տարւոջ . և զայն յերկուս նուագս յետավճար պայմանաւ, այսինքն՝ 'ի վերջին աւուրս Յուլիսի և Յունվարի իւրաքանչիւր տարւոյ . և 'ի կատարել երից ամաց պարտիմ անդրէն հատուցանել զընկալեալս գլուխ դրամոց՝ համդերձ յետին մասամբ շահուն, ընտիր դրամովք, որք են Դշք . . . . . . . . . . 4000 : —

Վարազդատ Արծրունի :

### Այլ օրինակ Մուրհակի հանդերձ գրաւով :

'Ի Կոստանդինուպօլիս . 28 . Հոկտ". 1824 :

'Ի Պարոն Համազասպայ Գաբեղեանց ընկալայ այսօր դաշեկանս վեցհազար, պայմանաւ անդրէն յետս դարձուցանելոյ նմա զընկալեալս գլուխ դրամոց 'ի շրջանս չորից ամաց . այսինքն՝ 'ի 27 . Հոկտեմբերի, 1828 . ընդունելով յետս 'ի նմանէ զներքոյնշանակեալ ինչսն Թողեալս առ նմա 'ի գրաւ պարտուցս, որ է Դշ, 6000 : —

Ոսկեղէն մի ականակապ 'ի տասն ադամանդից, որոց կշիռ ծանրութեան են քառասուն և երկու կերատք :

Երեսուն սկահակք արծաթիք, որոց կշիռ ծանրութեան են երկու հազար ութհարիւր Տրամք :

Ամբատ Բագրատունի :

## Օրինակ դաշնադրութեան ընդ նաւապետի յուղեւորութեան ծովու :

'Ի Կոստանդինուպօլիս . 20 . Օգոստ". 1824 :

Միակամ հաւանութեամբ հաստատեցաւ 'ի մէջ Պարոն Արշակայ Թորգոմեանց, և Պարոն Գուրգէն Նաւապետի Նեղոսեանց՝ առաջիկայ դաշինս Նաւողչի յաւիթս ուղեւորութեան 'ի Կոստանդնուպօլսոյ 'ի Թրիեստ :

Նախ՝ յանձն առնու և կամակար խոստանայ նա ինքն նաւապետն Գուրգէն զամբողջ սենեակ նաւուն տալ 'ի բնակութիւն Պարոն Արշակայ և երկուց ընկերացն Մարիբասայ և Փառնակայ համդերձ ամենայն անձնական բեռամբ իւրեանց՝ 'ի գին վարձուց 900, այսինքն՝ ինն հարիւր դաշեկանաց, զոր ունին հատուցանել յելս իւրեանց 'ի նաւէն, ժամանելոյն 'ի Թրիեստ :

Երկրորդ՝ եթէ յընթացս ուղեւորութեան 'ի ստիպել հարկին բռնադատեսցին ուղեւորքս ելանել 'ի նաւէն յայլ քաղաք կամ 'ի նաւահանգիստ՝ նախ քան զժամանելն 'ի Թրիեստ, հատուցումն նաւողչին հաւասարեսցի ընթացից ուղեւորութեան ճանապարհին, և վճարեսցի ըստ չափու արարեալ ուղւոյն :

Երրորդ՝ յանձն առնու Պարոն նաւապետն մատակարարել նոցա զջուր, զաղ և զլոյս ճրագի . որպէս և զիւր խահարար 'ի պատրաստել զպէտս կերակրոյ նոցա, ծախիւք նոցին իսկ ուղեւորաց՝ Պարոն Արշակայ և ընկերաց նորա :

Եթէ կերակրոյ մատակարարութիւնն իցէ 'ի վերայ նաւապետին, յետին դաշնադրութիւնս պարտի լինել այսպէս :

Յանձն առնու նաւապետն հոգալ զամենայն պէտս կերակրոյ նոցա, որ ըստ օրէ մատակարարելով ընդ առաւօտն զնախաճաշիկ . առ միջօրէիւ խորտիկս պատշաճականս վիճակի վաճառականաց . և ընդ երեկս զչափաւոր ընթրիս համդերձ ամենայն կարեւորօք . որոց վասն հատուսցին նաւապետին ըստ մարդաթուի դաշեկանք չորք . որոց գումար որ ըստ օրէ լինին դաշեկանք երկոտասան :

Առաջիկայ գիրս դաշնադրութեան եղև կրկին օրինակ, ստորագրեալ յերկոցունց կողմանց, համազօր 'ի վաւերութիւն մի և նոյն դաշանց :

Գուրգէն Նեղոսեանց
Նաւապետ :

Արշակ Թորգոմեանց
Վաճառական :

### Օրինակ Դաշնադրութեան ընդ բեռնատարս 'ի ցամաքային ուղևորութեան :

'Ի Զմիւռնիա . 'ի 14 . Օգոստոսի . 1824 :

Այսու առանձնական գրուածովս , որ ունի համարիլ և զօրել իբր եղեալ 'ի ձեռն հրապարակական նօտարի , միակամ հաւանութեամբ դաշնադրեն Պարոն Եղնիկ Տարոնացի վաճառական , և Պարոն Տրդատ Կարաւանապետ Ամդեցի 'ի վերայ հետագայ պայմանացս բեռնատարութեան 'ի Զմիւռնիոյ 'ի Կարին :

Նախ՝ Պարոն Տրդատ յանձն առնու և խոստանայ զբեռինս սպիտակ Թղթոյ՝ զզետեղեալսն 'ի տասն արկեղս ԵՏ . Վ. Կ : Թիւ . 1—10 , բառնալ 'ի քաղաքէս Զմիւռնիոյ և տանիլ 'ի Կարին՝ ամբողջս և անարատս :

Երկրորդ՝ Յանձն առնու նա ինքն Պարոն Տրդատ , և խոստանայ ելանել 'ի ճանապարհ 'ի 16 , ամսոյս, և 'ի 10 , Սեպտեմբերի անպատճառ հասուցանել զբեռինսն 'ի Կարին առ Պարոն Վարազդատ Կեղեցի :

Երրորդ՝ Եթէ յընթացս ուղևորութեան ընդ առաջ ելցեն ծախք անակնկալք , որպիսի են սատակմունք երիվարաց կամ ջորւոց . անցք հեղեղաց և գետոց , և այլ զինչ և իցէ ծախք ճանապարհի՝ բովանդակն լիցի 'ի վերայ Պարոն Տրդատայ կարաւանապետի :

Չորրորդ՝ Վարձք ուղևորութեան և տանելոյ զնախայիշատակեալ տասն բեռինս սպիտակ Թղթոյ 'ի Զմիւռնիոյ մինչև ցԿարին՝ միաբան հաճութեամբ երկոցունց կողմանց որոշեցան ընդ ամենն դահեկանք 400 , այսինքն՝ չորեքհարիւր , հատուցանելիք 'ի կրկին նուագս . նախ՝ 'ի Զմիւռնիա յաւուր ելից 'ի քաղաքէն՝ դհ̅ք, 200 : — Երկրորդ՝ 'ի Կարին 'ի յանձնել զբեռինսն ամբողջս և անարատս 'ի ձեռս Պարոն Վարազդատայ Կեղեցւոյ՝ դհ̅ք , 200 : —

Հինգերորդ՝ Եթէ Պարոն Տրդատ Կարաւանապետ պակասեսցի յիմիք 'ի նախաճառեալ դաշանց . կարող լիցի Պարոն Վարազդատ յապաղել զվճարումն յետին վարձուց՝ մինչև ցբոլորումն իրաւանց յօրինաւոր ատենի :

Առաջիկայ դաշնադրութիւնքս եղեն կրկին օրինակք ստորագրեալք յերկոցունց կողմանց՝ 'ի պահել առ իւրեանս մէն մի օրինակ :

Եղնիկ Տարոնացի Վաճառական :

Տրդատ Ամդեցի Կարաւանապետ :

Ես ( այս անուն ) եղէ վկայ :
Ես ( այս անուն ) եղէ վկայ :

Զօրինակ ձևոյ բանից դաշնադրութեան 'ի բեռնաւորելն զվաճառս 'ի նաւ . տես 'ի Բեռնագիրն . յերես . 143 :

## ԵՐԵՒԵԼԻ ՔԱՂԱՔՔ ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԵԱՆՑ

Վաճառականութիւնն անդստին 'ի սկզբանէ դարուց 'ի դարս վիճակեալ բազմադիմի շրջանաց փոփոխութեան՝ չեղև երբէք հաստատուն 'ի միում տեղւոջ և յառանձնական քաղաքի , այլ անընդհատ պարբերութեամբ սովորեցաւ յածիլ յազգաց յազգս և գաւառաց 'ի գաւառս : Բայց ընդհանրապէս 'ի քննութիւն առեալ զվիճակ տուրևառութեան, գտանեմք զի որ գաւառք և աշխարհք բարեբեր իցեն և արգաւանդահողք 'ի բնութենէ , որպէս և բնակիչք տեղեացն աշխատասէրք և մտադիրք 'ի ձեռագործս, նոցին վաճառականութիւն ծաղկեալ է միշտ և անպակաս . ընդ նոսին յաջողեալ է և ճոխութիւն քաղաքացն հաղորդակից եղելոյ տուրևառութեան նոցին սահմանաց : Յայնպիսեաց սակի են յոլովք 'ի բազմավաճառ քաղաքաց՝ համարեալքն իբր ամբարանոցք , յորս սովոր են հաւաքիլ մթերք վաճառաց , և 'ի նոցանց բաշխիլ յայլևայլ տեղիս . որպիսի են գրեթէ ամենայն նաւահանգիստք մերձաւորք արգաւանդահող գաւառաց : Այլք 'ի քաղաքաց քրտնաջան աշխատութեամբ ձեռագործ արուեստից ունին զիւրեանց պայծառութիւն և զյաջողութիւն տուրևառութեան : Են և քաղաքք՝ որք 'ի պատճառս նախադասութեան և մարդաշատ լինելոյ ունին զյաճախութիւն տուրևառութեանց , որպիսի են արքայանիստք և ամենայն երևելի մայրաքաղաքք՝ յորս վաճառականութիւնն հարկաւ յոտին կայ 'ի լնուլ զպէտս կարօտութեան բնակչացն , և զբազմածախ արքունեաց : Իսկ թէ ոյք իցեն այնպիսի քաղաքք և ուրանօր՝ զսակաւս և զծանօթագոյնն 'ի բազմաց ցուցցէ առաջիկայ համառօտագրութիւնդ :

Անուանք աշխարհագրականք քաղաքաց վաճառականութեան՝ ըստ կարգի այբուբենից ։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. արաբ. Իսքէնտէրի ։ իտալ. Alessandria ։ Քաղաք բազմահարուստ և նաւահանգիստ մեծ 'ի հիւսիսային ծովեզերս Ափրիկոյ 'ի վերայ միջերկրական ծովուն ։ Այս քաղաք՝ դուռն համարեալ տուրևառութեանն Եգիպտոսի, 'ի նախնի դարս յառաջ քան զգիւտն իւր Բարեյոյս գլխոյ՝ միակ վաճառատեղի էր ամենայն հնդկային մթերից. իսկ այժմ՝ թէպէտև կարի նուազեալ 'ի նախնի պայծառութենէ, տակաւին սակս յաջողակութեան դրից տեղւոյն՝ բարեշէն է, և մի յերևելի քաղաքաց տուրևառութեան. ուր գրեթէ ամենայն եւրոպեան տէրութիւնք ունին հիւպատոս և գործակալս 'ի խնամակալութիւն վաճառականաց իւրեանց ։

Եւրոպեան վաճառք՝ որք մտանեն 'ի քաղաքս, են Զուխայք բազմատեսակք. դիպակք մետաքսեայք. պղպեղ. ընկոյզ հնդկային. մեխակ. կինամոն կամ դարիճենիկ. ներկափայտք. անագ. երկաթ. պղինձ, գործեալ և անգործ. թուղթ, և այլ այսպիսիք ։

Իսկ վաճառք, որք հաւաքին անդր 'ի ներքին կողմանց Եգիպտոսի, և ելանեն 'ի քաղաքէս՝ են բազմատեսակ նիւթք բժշկական դեղոց. քրքում. խունկ. զմուռս. փղոսկր. ընտիր ղահվէ մօգայի. բամբակ. մետաքս. մարգարիտ. կանաչաներկ կաշի. կտաւ. վուշ. կանեփ. խէժ արաբիոյ. անուշադր. և այլ բազում բերք արմտեաց երկրին Եգիպտոսի ։ Հեռի է յԵգիպտոս քաղաքէ՝ 30. լեգուա ։ 'Ի Կոստանդնուպօլսոյ՝ 170 ։ 'Ի փարիզէ՝ 854 ։

ԱՄԲՈՒՐԿ, կամ Համպուրկ. իտ. Amburgo ։ Քաղաք բազմավաճառ, ճոխ և բարեշէն 'ի ստորին Սաքսոնիա՝ առ Էլպա գետով, յորում ունի զիւր նաւահանգիստ. և է 18, լեգուա հեռի 'ի Պալդիկ ծովէ ։ Կան 'ի նմա բազում հրապարակական դպրոցք արհեստի ձեռակերտաց. որպէս և առանձին ուսումնարան 'ի վարժութիւն արհեստի վաճառականութեան, կանգնեալ յամի տն, 1768, յորում ձրի և ամենայն խնամով կրթին մանկունք 'ի գիտութիւն այսր կենցաղօգուտ ուսման. վասն որոյ առաւելագոյն մասն բնակչաց քաղաքիս վաճառականք են, և կարի հմուտք 'ի տուրևառութիւն ։ Առ ամենայն սեռս վաճառաց և ընդ ամենայն կողմն աշխարհի ձգէր երբեմն վաճառականութիւն քաղաքիս՝ սակս ճոխութեան դրամոցն և յաջողակութեան դրից տեղւոյն, որով 'ի վերջոյ կալեալ ունէր գրեթէ զամենայն գործարանս գերմանիոյ, կանխիկ մատակարարելով նոցա նիւթս և դրամս յաշխատութիւն ձեռագործաց իւրեանց. զորս յետոյ ընկալեալ 'ի նոցանէ սփռէր ընդ ամենայն տեղիս ։ Իսկ այժմ թէպէտև 'ի պատճառս յետին խռովութեանց եւրոպիոյ, և բազմադիմի տուգանացն զոր կրեցին բնակիչք քաղաքիս՝ նուազեալ գտանի յառաջին պայծառութենէ, սակայն և այնպէս դասի ընդ բազմահարուստ քաղաքս եւրոպիոյ ։ Ունի 150. գործարանս 'ի մաքրել և 'ի զտել զշաքարս. են և այլ բազում գործարանք կտաւոյ, կերպասուց, ասուեղինաց, թղթոյ, և արծաթի անօթոց ։ Կարի համբաւաւոր է և 'ի ձեռագործս ոսկերաց Պալէնա կիտին, որ սեփական է այսմ քաղաքի ։ Ճոխութիւնք վաճառականաց և յաճախութիւնք տուրևառութեան նոցա ստիպեցին կանգնել 'ի քաղաքիս զՍեղան փոխանակութեան. յամի տն, 1610 ։ Հեռի է 'ի Վիեննայէ՝ 175, լեգուա. 'ի փարիզէ՝ 260 ։ 'Ի Կոստանդնուպօլսոյ՝ իբր 455 ։

ԱՄՍԹԷՐՏԱՄ, կամ Ամստերդամ. իտալ. Amsterdam ։ Քաղաք մեծ և նախագահ ստորին նահանգացն Հոլլանդիոյ. ականաւոր տեղի վաճառականութեան. որ ունի նաւահանգիստ լայնարձակ և պատուական, յոր յաճախեն նաւք ամենայն ազգաց 'ի տուրևառութիւն ։ Առիթ նախնի ճոխութեան վաճառականաց քաղաքիս եղև արևելեան հնդկային ընկերութիւնն, որով յինքեանս սեփականեալ էին զտուրևառութիւն կինամոնի Ցէյլոնէ, Մեխակի և Հնդկային ընկուզի ընդ բոլանդակ եւրոպիա. այնչափ առաւելեալք 'ի ճոխութիւն՝ մինչև եղեն սեղանաւորք ամենայն օտարազգի վաճառականաց՝ եւս և տէրութեանց եւրոպիոյ ։ Համբաւաւոր են բնակիչք քաղաքիս յընտիր ձեռագործս արհեստից. ունելով զզանազան գործարանս չուխայից, ազնիւ կտաւոց, ընտիր թղթոյ. և առանձնաբար գովեալ են 'ի ճարտար արհեստս կազմութեան սրբատաշ բազմադիմի ադամանդից, որպէս և 'ի գաղտնի հնարս մաքրութեան և զտելոյ զՔեաֆուր խէժն (այն է քեաֆիրի). որ սեփական է միայնոյ այսմ քաղաքի ։ Հեռի է 'ի Լոնտոնայէ՝ 70. լեգուա ։ 'Ի փարիզէ՝ 105 ։ 'Ի Վիեննայէ՝ 225 ։ 'Ի Հռովմայ՝ 375 ։ 'Ի Կոստանդնուպօլսոյ՝ իբր 505 ։

ԱՔԷՄ. իտալ. Achem ։ Քաղաք արքայանիստ համանուն թագաւորութեան 'ի հիւսիսային կողմն Սումատրա կղզւոյն յարևելեան հնդիկս ։ Բազմահարուստ վաճառականութիւն քաղաքիս է պղպեղ և ոսկի ընտիր որ ելանէ 'ի հանքաց նորա, որպէս և զանազան կերպասք նկարէնք՝ կտաւք և բեհեզք. յոյր սակս դիմեն անդր բազումք յօտարազգի վաճառականաց 'ի գնել և 'ի փոխանակել ընդ այլ վաճառս ։

ԲԱԲԻԼՈՆ. այն է Պաղտատ. Իտ. Bagdad։ Քաղաք մեծ յափն յարևելեան գետեզերս Տիգրիսի, համբաւեալ տեղի վաճառականութեան, որ 100, լեւքային հեռի է 'ի Պասրայէ. 60, 'ի Մուսուլէ։ Ա՛յլ է սա 'ի հնոյն բաբիլոնէ որ առ Եփրատաւ։

ԲԵՐԻԱ. թրք. Հալէպ. Իտ. Aleppo։ Քաղաք մեծ և ճոխ յերկրին Ասորւոց. մի է յականաւոր քաղաքաց Օսմանեան տէրութեան յետ Կոստանդնուպօլսոյ և Եգիպտոսի. քսանեւութ լեւքային հեռի 'ի փոքր Աղեքսանդրիոյ. որ է իբր նաւահանգիստ և վաճառատեղի նորա։ Տուրևառութիւն քաղաքիս կարի չէն է և արդիւնաշատ 'ի պատճառս վաճառացն հաւաքելոց անդր յասիոյ և յափրիկոյ. որք են Մետաքս, բամբակ, ստև ուղտուց և այլ մորթք կենդանեաց. մեղրամոմ. գխտոր. խէժ. ռաւէնտ. ափիոն. և այլ նիւթք բժշկական դեղոց. պաղլեղ. սար. քըքում. գորգք. մանածք բամբակի. մարգարիտ. ոսկի ձոյլ և մանրամաղ, զորս ածեն անդր կարաւանօք, և անտի սփռի յեւրոպիա և յայլ տեղիս։ Իսկ վաճառք զորս եւրոպեանք տանին անդր ընդ նաւահանգիստն փոքուն Աղեքսանդրիոյ են զանազան տեսակք չուխայից. մետաքսագործ դիպակք. համեմք. ձէթ, և ձեռագործք հրահալելեաց։ Հեռի է 'ի Դամասկոսէ՝ 70. լեւքային։

ԴԱՆԶԻԳԱ, կամ Տանձքա. Իտ. Danzica։ Գլխաւոր քաղաք Պռուշի 'ի գաւառին Պօմէրանիոյ, բազմամարդ ճոխ և բազմավաճառ առ Վիսդուլօ գետով. 4 մղոնաւ հեռի 'ի Պալթիկ ծովէ, ունի նաւահանգիստ մեծ և ընդարձակ ուր յաճախեն բազմութիւնք նաւուց վաճառականաց։

ԵԳԻՊՏՈՍ. թրք. Մըսըրի գահիրէ, զոր իտալացիք, Caïro Գայրօ կոչեն։ Մայրաքաղաք յԱփրիկէ 'ի ցամաքակողմն ստորին եգիպտոսի, որոյ նաւահանգիստն և վաճառատեղի է Աղեքսանդրիա։ Տես անդ։ Հեռի է 'ի կոստանդնուպօլսոյ իբր 200. լեւքային։

ԶՄԻՒՌՆԻԱ. թրք. Իզմիր։ Իտալ. Smirne։ Համբաւաւոր քաղաք վաճառականութեան առ ծովեզերբ փոքուն ասիոյ՝ ունելով զընդարձակ նաւահանգիստ, յոր յաճախեն նաւք յամենայն կողմանց. զի է իբր միջերանոց Անատոլիոյ և Թուրքաստանի. ուր հաւաքին ամենայն տեսակք արևելեան վաճառաց, որք են Մետաքս. բամբակ. կանաչաներկ կաշի. ստև ուղտու. սար Կիլիկիոյ. ափիոն. սաթ. ձէթ. գխտոր. պաղլեղ. արջասպ. կտաւք և Թաշկինակք բամբակի և մետաքսի. կապերտք և գորգք Թուրքաստանի և պարսկաստանի. ռաւէնտ. մուշկ. քըքում. և գահվէ Մօգայի։ Թող զբերս զանազան արմտեաց պտղաբերելոց 'ի մերձաւոր սահմանս նորա, որք են ցորեան. պաղատիտ. չամիչ. դեղին մեղրամոմ. սպունգ. և այլ բազում ինչ։ Իսկ վաճառքն զորս ընդունի յեւրոպեանց 'ի պէտս Թուրքաստանի և պարսից՝ են չուխայ. շայադ. դիպակք մետաքսի. Թուղթ գրելոյ. երկաթի տախտակք կամ Թանագք (ԲԷՆԷՏԷ). կապար. ժանգառ. զանազան իւղք հոտաւէտք. ժամացոյցք. ձեռագործք 'ի խեցեմորթից կրայի. համեմք. բուսոք. ամենայն տեսակք զանազան գործեաց և անօթոց 'ի պղնձոյ, յերկաթոյ և 'ի պողովատէ։ Հեռի է 'ի Կոստանդնուպօլսոյ 73. լեւքային։

ԷՐԶԻՐՈՒՄ. տե՛ս Կարին։

ԹԵՍԱՂՈՆԻԿԷ. տե՛ս Սէլանիկ։

ԹՐԻԷՍԹԷ. Իտ. Trieste։ Քաղաք վաճառականութեան և ազատ նաւահանգիստ 'ի ծայր ադրիական ծովուն, 'ի գաւառին Իստրիոյ. 8 լեւքային հեռի յԱքուիլէայէ. 29 'ի Վենետկոյ։

ԻԶՄԻՐ. տե՛ս Զմիւռնիա։

ԻՍԿԷՆՏԷՐԻ. տե՛ս Աղեքսանդրիա։

ԼԻՍՊՈՆԱ. Իտ. Lisbona։ Քաղաք նախագահ Թագաւորութեան Լուսիտանիոյ առ Թագո գետով. չորս լեւքային հեռի յովկիանոս ծովէ. ունի նաւահանգիստ մեծ և պատուական, ուր անընդհատ է յաճախութիւն բազմաթիւ նաւուց 'ի պատճառս վաճառականութեան. զի քաղաքս է իբր միջերանոց վաճառաց՝ յոր հաւաքին ամենայն բերք սահմանաց այնր տէրութեան. որք են Շաքար. բամբակ. գահվէ. քինա. գաքգաօ. ծխախոտ. կաշի. ներկափայտք. սափառինա. ոսկի. ադամանդք և այլ ականեղէնք 'ի Պռազիլէ. պտուղք. գինի. աղցորեան. ձէթ և այլ բերք սահմանաց նորա։ 'Ի ձեռն այսոցիկ վաճառաց բազմահարուստ է և տուրևառութիւնն, զոր առնէ ընդ արտաքին տէրութիւնս. ընդունի 'ի Ռուսաց, 'ի Շուեդաց և 'ի Դանեաց զկտաւս առագաստից. ըզպարանս. զվուշ. զկանեփ. զփայտս և զգերանս շինուածոց. զերկաթ. զԹնդանօթ. զռումբ. զխարխախս նաւու. զպողովատիկ. զտախտակս երկաթի (ԲԷՆԷՏԷ). զպղինձ. զպաղլեղ. զձիւթ և զնաւթ։ Յամպուռկ քաղաքէ՝ զզանազան տեսակս աղնիւ կտաւեղինաց. զմաղ Սլէզիոյ, որպէս և զայլ ձեռակերտս Սաքսոնիոյ և Պօյէմիոյ, որպիսի են ապակեղէնք. մոմք. արուեստակերտածք պղնձոյ, որպէս և տախտակք պղնձիք 'ի պէտս դրամահատութեան։ 'Ի Հոլլանդիոյ՝ զռունդս. զհաճար. զգարի. զկտաւ. զչուխայ. զԹուղթ. զպանիր. զկորակ և զվառօդ։ 'Ի Սպանիոյ՝ զասր, զերկաթ. և զայլ մանունս։ 'Ի Գաղղիոյ՝ զցորեան. զհաճար. զգարի. զալիւր. զռունդս. զԹուղթ. և զայլ ամենայն նո-

բաշնար զարդս և հետաքննինս 'ի վայելս քաղաքական կենաց ։ Յիտալիոյ՝ զմետաքսակերտ դիպակս և զկերպաս. զթուղթ, և զձեռնոցս մաշկենիւթս ։ Յանգղիոյ՝ զազնիւ չուխայս, զաւրախառն կտաւս. զֆլանելլայս. և զզանազան տեսակս զուլպայից. զանագ. զկապար. զթանագ (ԹԷՆԷՔԷ). զածուխ հանքային. զպողպատ. զլեղակ. զապակեղէնս, զժամացոյցս և զայլ ձեռագործս երկաթեղինաց, արծաթեղինաց և ոսկեղինաց ։ Հեռի է 'ի Մատրիտէ՝ 106. լեւքային ։ 'Ի Փարիզէ՝ 350 ։

ԼԻՎՕՌՆՕ. ԻՏ. Livorno. (որ և Լեկուռնա ասի ։) Քաղաք Իտալիոյ 'ի սահմանս դքսութեանն Թոսքանայի յարևմտակողմն Իտալիոյ 'ի վերայ միջերկրական ծովուն. քաղաք վայելուչ և ճոխ տեղի վաճառականութեան, որոյ ազատ տուրևառութիւնն յաճախել տայ անդր զբազում յազգաց օտարաց ։ Տեղի է տուրևառութեան կարմրաներկ բուստի (ՄԷՐՃԱՆԻ). զորս հաւաքեն 'ի ծովեզերացն Սառտենեայ և Գոռսիկայ կղզեաց, որպէս և աշխարհին բարբարոսաց, և ածեն անդր 'ի մաքրել և 'ի յարդարել. յոյր սակս ունի զանազան գործարանս և զբազմաթիւ գործաւորս. որք անընդհատ պարապին 'ի նոյն աշխատութիւն, և առաքեն յանգղիա և 'ի լիւսիտանիա, յորոց յետոյ սփռի 'ի հնդիկս և 'ի չին ։ Իսկ այլ վաճառք՝ որք 'ի ցամաքակողմանէ հաւաքին անդր, և ընդ ծով ելանեն 'ի քաղաքէս, են Մետաքս. ձէթ. տորտ. կանեփ. կաշի։ մարմարիոնք. և այլ բերք և ձեռագործք Թոսքանայի ։ Ունի տուրևառս ընդ Անգլիոյ, բայց յաճախութիւն վաճառականութեան քաղաքիս է ընդ Թուրքաստանի, ընդ Եգիպտոսի, ընդ աշխարհին բարբարոսաց և ընդ Մոռայի՝ յորոց ընդունի զցորեան, զբամբակ, զգխտոր, զքրքում, զխէժ, զտորոն, զփետուրս ջայլեմանց, զխունկ, զասր. զտոսախ. զափիոն. զառիկ. զշաքար. զգահվէ, զտև ուղտուց և զայլս այսպիսիս ։ Հեռի է 'ի Ֆիօրէնցայէ՝ 18. լեւքային ։ 'Ի Հռովմայ՝ 58 ։ 'Ի Փարիզէ՝ 317 ։

ԼԻՓՍԻԱ. ԻՏԱԼ. Lipsia ։ Մեծահամբաւ և բազմահարուստ քաղաք Գերմանիոյ 'ի վերին Սաքսոնիա 'ի Միսնիա գաւառին. վաճառականութիւն քաղաքիս կարի ճոխ է և բարելի, որոյ տօնավաճառքն աշխարհահռչակք են, որոյ տօնավաճառքն աշխարհածանօթք ամ բաստ, ամէ հաւաքեն անդր զվաճառականս յամենայն կողմանց 'ի տուրևառութիւն ։ Համբաւեալ են գործարանք բազմաթիւք արուեստակերտ վաճառաց նորա, յորս կազմին զանազան տեսակք կտաւոյ, դիպակի, թղթոյ, չուխայի, մոմոյ, երկաթեղէն գործեաց. և և ներկամոյ, երկաթեղէն գործեաց. նաև ներկագործութեան. խաղախորդութեան. տպագրագործութեան. ոսկերչութեան և ակնավաճառութեան, որք են գլխաւոր առիթք և աղբիւրք շահու և տուրևառութեան նորա ։ Հեռի է 'ի Վիեննայէ՝ 100, լեւքային. 'ի Կոստանդնուպօլսոյ՝ 380 ։

ԼԻՕՆ. որ և Լուկդոն. ԻՏ. Lione ։ Աղեմի և հռչակաւոր քաղաք գաղղիոյ 'ի վերայ Սաօնա գետոյն, 'ի տեղւոջ ուր գետս խառնի 'ի Ռօտանօ գետ ։ Նա զի միջնաւոր է և սահմանակից Իտալիոյ, զվիցցերիոյ, և գերմանիոյ, վասն որոյ ծաղկեալ վաճառականութեամբ տուրևառութեան ընդ նոսա, որպէս և ընդ այլ ամենայն տէրութիւնս աշխարհի ։ Ընտիր ձեռագործք արուեստից նորա են առիթք ճոխութեան բնակչացն, զի ելանեն անտի դիպակք մետաքսեայք՝ ոսկեզարդք և արծաթագործք. ժապաւէնք և վերջաւորք ծանրագինք յոսկւոյ և յարծաթոյ. թող զայլ ամենայն ընտիր և ազնուանիւթ ազանելիս ։ Հեռի է 'ի Ժնեւայէ 28. լեւքային ։ 'Ի Թուռինոյ, 60 ։ 'Ի Փարիզէ. 100 ։

ԼՕՆՏՕՆ, կամ Լօնտռա. ԻՏԱԼ. Londra. Մայրաքաղաք տէրութեան Անգղիոյ. մի 'ի բազմահարուստ քաղաքաց Եւրոպիոյ և համբաւաւոր տեղի վաճառականութեան առ Թամիսի, կամ Թէյմզ գետով ։ Ընտիր ձեռագործք բազմատեսակ արհեստից այսր քաղաքի թէպէտ 'ի յարգի են յոյժ առ ամենայն տէրութիւնս Եւրոպիոյ. սակայն հարուստ տուրևառութիւն նորա է ընդ արևելեան ազգս ևեթ ։ Հեռի է 'ի Փարիզէ 90, լեւքային ։ յԱմստրդամէ՝ 70 ։ 'Ի Վիեննայէ՝ 320 ։ 'Ի Կոստանդնուպօլսոյ՝ 580 ։

ԿԱՐԻՆ. ԹՐՔ. Էրզիրում. ԻՏ. Erzerom ։ Քաղաք մեծ և ամուր 'ի սահմանս մեծին Հայոց՝ յափս առ մասամբ եփրատ գետոյ ։ Համբաւաւոր տեղի տուրևառութեան. իբր մթերանոց պղնձոյ. մորթոց. ևս և հնդկային վաճառաց վասն Թուրքաստանի ։ Երևան և հինգ լեւքային հեռի է 'ի սեաւ ծովէ, և 80, լեւքային 'ի սահմանէ պարսից ։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ. ԻՏԱԼ. Costantinopoli. ԹՐՔ. Իստանպօլ. որ է մի 'ի վայելչագոյն և 'ի բազմահարուստ քաղաքացն Եւրոպիոյ, Մայրաքաղաք Թագաւորութեան Օսմանեանց, Մայրաքաղաք թագաւորութեան Օսմանեանց, ունի նաւահանգիստ լայնարձակ, ուր յաճախեն նաւք յամենայն լեզուաց 'ի տուրևառութիւն ։ Զօգուտ վաճառականութեան քաղաքիս առաւելապէս վայելեն անգղիացիք, գաղղիացիք, հոլլանդացիք, իտալացիք և գերմանացիք, որք անընդհատ ածեն անդր Չուխայս, ազգի ազգի կտաւս. զանազան կերպասս ասուիս և մետաքսեայս, դիպակս ծանրագինս ոսկեհուռն և արծաթագործ. համեմս. ներկս. և զզանազան տեսակս արուեստակերտ երկաթեղինաց և հրա

հալելեաց․ մեծագին ակնեղէնս, ժամացոյցս և զայլ ամենայն պատշաճեալսն 'ի վայելս հանգըստեան կենաց ։ Իսկ վաճառք որք ելանեն անտի՝ են բուրդ․ կանաչաներկ կաշի․ սև ուղտուց․ մետաքս․ դեղին մեղրամոմ․ մանած բամբակի ներկեալ և աններկ ։ Հեռի է 'ի Միլանայէ՝ 280․ լևքայիւ ։ 'Ի փարիզէ, 490 ։ 'Ի Լօնտոնայէ, 580 ։

ԿԱԼԿԱԹԱ․ տե՛ս Պէնկալա ։

ՀԱԼԷՊ․ տե՛ս Բէրիա ։

ՃԵԶԱՅԻՐ․ իտ․ Algeri ։ Քաղաք մեծ, ամուր, գեղեցիկ, ճոխ և բազմամարդ․ նախագահ է համանուն տէրութեանն 'ի հիւսիսակողմն ափրիկոյ առ միջերկրական ծովուն՝ ունելով նաւահանգիստ պատուական, ուր յաճախեն նաւք 'ի տուրևառութիւն ։ Եւրոպեանք ածեն անդր զզանազան տեսակս հրացան զինուց, վառօդս, կապար, զերկաթի շղթայս, որպէս և զայլ ամենայն տեսակս արուեստակերտ հրահալելեաց ։ Զչուխայս, զդիպակս, զկտաւ․ ըզթուղթ․ զծխախոտ․ զշաքար․ զգահվէ․ զգինի, զօղի, զպղպեղ և զայլ համեմս․ որոց փոխան առնուն անտի զասր․ զմոմ․ զձէթ․ ըզմորթ առիւծու և զվագեր․ զփետուր ջայլեմանց․ զզանազան ազգս դեղորէից․ զխէժ․ զպղինձ, և զցորեան ։

ՃԷՆՕՎԱ․ տճ․ Ճէնիվիզ ։ իտ․ Genova ։ Քաղաք վայելուչ և մեծահամբաւ 'ի վերին կողմն իտալիոյ առ լիկուրեան ծոցով միջերկրական ծովուն, յորոյ վերայ ունի զիւր նաւահանգիստ պատսպարեալ յերկուց պատուարաց առ բերանով նաւահանգստին ։ Այս քաղաք անուանի էր յոյժ 'ի վաճառականութեան նախ քան զյայտնիլ բարեյոյս գլխոյն ափրիկոյ․ որով ճոխացեալ բազմահարուստ մեծութեամբ՝ համարէր երբեմն իբր սեղանաւոր և փոխատու զանազան տէրութեանց և իշխանաւորաց եւրոպիոյ ։ Սակայն 'ի յետին ժամանակս 'ի պատճառս դառն պատերազմաց և փոփոխութեան նախնի վիճակին՝ անշքացաւ յառաջին պայծառութենէ․ բայց տակաւին համարեալ է 'ի դասս ճոխ և բազմավաճառ քաղաքացն եւրոպիոյ ։ Ունի գործարանս դիպակաց, չուխայից, կարմիր գտակաց 'ի պէտս արևելեայց, մետաքսեայ և ասուի զանկապանաց, թղթակազմութեան, որպէս և այլ արուեստակերտ ձեռագործաց ։ Հեռի է 'ի Միլանէ՝ 28․ լևքայիւ, 'Ի Ֆլորենցայէ՝ 45 ։ 'Ի Հռոմայ՝ 90 ։ 'Ի փարիզէ՝ 166 ։

ՃԻՆԷՎՐԱ․ իտ․ Ginevra ։ Ինքնիշխան մայրաքաղաք համանուն դքսութեան 'ի գաւառին Սավօյա առ Ռոտանօ գետով․ բազմահարուստ է և ծաղկեալ վաճառականութեամբ, գոլով ընդ մէջ գաղղիոյ, գերմանիոյ և իտալիոյ ։ Բնակիչք քաղաքիս ժրաջանք են յոյժ, և կարի ուշադիրք 'ի գործ վաճառաշահութեան․ ունին զզանազան և զբազմաթիւ գործարանս ասուի դիպակաց․ բազմատեսակ կտաւոց․ ապակեղինաց․ յախճապակեայ անօթոց․ բարակաման բամբակի ։ Կան և գործարանք երկաթեղինաց արուեստակերտելոց 'ի զանազան պէտս․ յորս երևելի է և շահաւորագոյն քան զայլսն տուրևառութիւն ժամացուցից, զորս շինեն անդ, և ամ ըստ ամէ աւելի քան զքսան հազար ժամացոյցս առաքեն յիտալիա․ 'ի գերմանիա․ 'ի ռուսաստան․ 'ի թուրքաստան և յամերիգա ։ Համբաւեալ է քաղաքս և ըստ արուեստի դրամափոխ սեղանաւորութեան, որով ունի հաղորդակցութիւն ընդ ամենայն երևելի քաղաքաց եւրոպիոյ ։ Հեռի է 'ի Թուրինոյ 54․ լևքայիւ ։ 'Ի փարիզէ․ 95 ։ 'Ի լիօնէ․ 28 ։

ՄԱՍՈՒԼԻՓԱԹԱՆ․ Քաղաք ճոխ և մարդաշատ յարևելեան հնդիկս առ ծովեզերբ Կորոմանտէլայ առ Կրիսնայ կամ Կիսթնա գետով․ վաճառատեղի է բամբականիւթ ազնիւ և բարականման կտաւոց, թաշկինակաց և նկարէն բեհեզաց, զորս գործեն անդ ։ Տուրևառութիւն վաճառացս է 'ի ձեռս Անգղիացւոց ևեթ ։ Հեռի է 'ի Կոլքօնտայէ 60․ լևքայիւ ։

ՄԱՏՐԱՍ․ իտալ․ Madras ։ Քաղաք շէն և բազմահարուստ յարևելեան հնդիկս 'ի Կորոմանտէլ առ ծովեզերբ Արգաթա կամ Կարնաթա նահանգին․ ուր սովոր են հաւաքիլ վաճառք մեծագին ակնեղինաց 'ի Կոլքօնտայէ, որպէս և այլ ազնիւ բարականման կտաւք և բեհեզք յամենայն կողմանց հնդկաստանի ։ Տուրևառութիւն քաղաքիս ազատ գոլով և անկապ յառանձնական ընկերութենէ՝ անխտիր է 'ի ձեռս վաճառականաց․ որք յաճախեն անդր յամենայն ազգաց ։ Ունի նաւահանգիստ, այլ ծովեզր է անպատսպար, ուր նաւք ոչ կարեն ձմերել, կամ մնալ ընդերկար ։

ՄԱՐՍԻԼԻԱ․ իտ․ Marsiglia ։ Քաղաք մեծ՝ նախնի և ականաւոր 'ի Փռօվանս գաւառի յաշխարհին Գաղղիոյ, առ ծովեզերս միջերկրական ծովուն, ունելով նաւահանգիստ լայն և ընդարձակ, յոր յաճախեն նաւք 'ի տուրևառութիւն ։ Վաճառականութիւն քաղաքիս ծաղկեալ է 'ի պատճառս ձեռակերտաց որք հաւաքին անդր 'ի հարաւակողմանց գաղղիոյ, որով առնէ տուրևառութիւն ընդ արևելս ։ Ունի զընկերութիւն ժողովոյ վաճառականաց, զոր կոչեն Կամերա տի Կօմմէրչիօ․ որպէս և դպրոց վաճառականութեան յուսումն և 'ի վարժութիւն արուեստի տուրևառութեան ։ Շահաւոր վաճառք նորա են ձեռակերտք գործարանաց հընդիկ կտաւոյ, ազնիւ գլխանոցաց, ոգելից հեղու-

նիւթոց, օճառի, պղպեղի, բորակի, ապակենիւթ մոխրոյ, մաքրութեան ծծմբոյ, խաղախորդութեան, դիպակագործութեան, 'ի մաքրել և 'ի յարդարել զբուստ (մըրճան)։ Թող և զայլ արգասիս պտղաբերութեան սահմանաց նորա, որք են գինի, օղի, չորացեալ պտուղք և ձէթ, զորս յուղարկէ 'ի ծովեզերս ափրիկոյ որպէս և յայլ տեղիս։ Ընդունի յարևելեան կողմանց զբուրդ, զբամբակ, զցորեան, զհամեմս և զդեղորայս։ Հեռի է 'ի փարիզէ՝ 198. լեքայիւ։

ՄԸՍԸՐ. որ և առի Գահիրէ. Գայրօ. տճ. Եգիպտոս։

ՄՕԳՒԱ. իտ. Moca։ Քաղաք մեծ և բազմավաճառ յերջանիկն Արաբիա, որ ունի նաւահանգիստ 'ի մօտս կարմիր ծովուն. հնգետասան լեքայիւ հեռի 'ի կրճէ անտի Պապիւլմանտէպայ։ Համարի քաղաքս իբր մթերանոց Արաբիոյ, ուր հաւաքին բերք և վաճառք նորա, որք են խունկ. զմուռս. զխոտր. խէժ ազնիւ և սատափ. բայց առաւել քան զամենայն գահվէ ընտիր և առատ. ուստի սփռի յայլեայլ կողմանս աշխարհի։ Իսկ վաճառք՝ զորս ընդունի յեւրոպեանց և յարտաքին գաւառաց, են երկաթ, անագ, կապար, արծաթ, չուխայ, բուստ, պղպեղ և այլ հնդկային համեմք, ծխախոտ և կտաւեղէնք։

ՆԷԱՊՈԼԻՍ. իտ. Napoli։ Մայրաքաղաք համանուն թագաւորութեան 'ի ստորին կողմն իտալիոյ և յարևմտեան ծովեզր նորա 'ի վերայ միջերկրական ծովուն. ունելով և ընդարձակ նաւահանգիստ պատուական և անվտանգ։ Քաղաքս ընդարձակ է բազմամարդ և գեղեցիկ լցեալ ամենայն իրաց առատութեամբ, համբաւաւոր վաճառատեղի զանազան արմտեաց և ձեռագործաց։ Ունի ցորեան, մետաքս, ասր, բամբակ, օղի, ձէթ, և գինի։ Դիպակք ասուիք և մետաքսեայք, չուխայ, կտաւք բազմատեսակք, չուանք, օճառ ընտիր, տորտ. և առաւել քան զամենայն դդմաճք, կամ խմորեղէնք (մաքարոնա)։ Վաճառք՝ զոր ընդունի յօտար տէրութեանց, են գահվէ. շաքար. կինամոն Տու-ւն. գագգաօ. պղպեղ. կաշի. և ափնեղէնք։ Հեռի է 'ի Հռովմայ՝ 43. լեքայիւ։ 'Ի փարիզէ՝ 474։ 'Ի Վենետիկոյ՝ 200։

ՊԱՂՏԱՏ. տճ. Բաբիլոն։

ՊԱՍՐԱ. իտ. Bassora կամ Balsora։ Քաղաք մեծ և բազմամարդ 'ի սահմանս արաբացւոց Իրաք անուանելոյ՝ առընթեր միացեալ գետոցն Եփրատայ և Տիգրիսի. երեք լեքայիւ հեռի 'ի պարսկային ծոցոյ։ Վաճառատեղի է ճոխ և հարուստ տուրևառութեան, զոր առաւելապէս վարեն Անգղիացիք՝ բերելով անդր բաց 'ի հնդկային վաճառաց՝ զերկաթ, զկապար, զչուխայս և զայլ ասուիս. որոց փոխարէն առնուն անտի զսեկ. զգորգս. զասր. զստև ուղտու. զխէժ արաբիոյ. զմուռս և զխունկ։ Հեռի է 'ի Բաբիլոնէ՝ 100. լեքայիւ։

ՊԵՆԿԱԼԱ. իտ. Bengala։ Ընդարձակ սահման թագաւորութեան 'ի հնդիկս առ համանուն ծովածոցով, որոյ նախագահ քաղաքն կոչի Տագա, և Կալկաթա կամ Կալկութթա առ Գանգէս գետով, բազմահարուստ է և մարդաշատ։ Վաճառականութիւն քաղաքիս երբեմն էր անխտիր 'ի ձեռս բնակչաց և օտարաց, իսկ այժմ է առաւելապէս 'ի ձեռս անգղիացւոց։ Տուրևառութիւն նորա կարի ճոխ է, և արդիւնաշատ պտղաբերութիւնքն՝ Շաքար. բրինձ. ցորեան. բամբակ. բորակ. լաքախէժ. ռաւէնտ, պղպեղ, լեղակ, մետաքս։ Ունի և գործարանս ազգի ազգի ազնիւ և բարակամանն կտաւուց. դիպակաց և բեհեզոյ, որք կարի յոյժ յարգի են առ եւրոպեանս։ Շահաւորագոյն քան զայլ ամենայն բերս երկրին է Ափիոնն, զոր չինեն անդ հիւթով սպիտակ կակաչի, և սփռի այն ընդ բովանդակ կղզիս արևելեան հնդկաց, սակայն տուրևառութիւն այսր վաճառի է այժմ 'ի ձեռս ընկերութեան Անգղիացւոց։

ՊԵՌԼԻՆ. իտ. Berlino։ Մայրաքաղաք թագաւորութեանն Պռանտէպուռկի և բովանդակ Պռուսիոյ. մի 'ի բազմամարդ և 'ի շքեղ քաղաքացն Եւրոպիոյ՝ առ Սփռէա գետով. հարուստ է և վաճառաճոխ, ունելով զզանազան գործարանս մետաքսի, բրդոյ, կտաւուց և յախճապակեայ անօթոց. վասն որոյ և յաճախեալ 'ի վաճառականաց վասն տուրևառութեան։ Վաճառք՝ զորս ընդունի յՈւնկարիոյ և 'ի Գերմանիոյ, են ցորեան. աղ. գինի և անդեայք։ Յիտալիոյ՝ զմետաքս։ 'Ի Սպանիոյ՝ զասր։ Եւ յարևելից՝ զբամբակ և զստև ուղտուց։ Հեռի է 'ի Պռանտէպուռկ քաղաքէ 10, լեքայիւք։ 'Ի Վիէննայէ. 120։

ՌԱԹԻՍՊՕՆԱ. իտ. Ratisbona, կամ ըստ գերմանացւոց Ռէկէնշպուռկ։ Ազատ քաղաք մեծ և վայելուչ. բազմահարուստ տեղի վաճառականութեան գերմանիոյ 'ի Պավիէռա, որոյ դիրք գոլով 'ի վերայ երից գետոց այն է՝ Նապ, Ռէկէն, և Տանուպ՝ ունի հաղորդակցութիւն ընդ բազում գաւառս և քաղաքս։ Վաճառք քաղաքիս են կտաւք, գուլպայք ասուիք և մետաքսեայք. սաեղն. կարթ ձկանց. հրացան զէնք. և մանր բաժակք 'ի պէտս արևելեայց. որովք առնէ բազմահարուստ տուրևառութիւն ընդ բովանդակ գերմանիա և 'ի Թուրքաստան։ Հեռի է 'ի Վիէննայէ՝ 70. լեքայիւ։

ՌՈՒԱՆ. իտ. Roano և Rouen։ Մի՛ 'ի բազմամարդ և ճոխ քաղաքաց գաղղիոյ՝ մայրաքաղաք Նորմանտիոյ։ Համբաւաւոր վասն գործարանաց չուխայի և դիպակաց։ Եւ զի շինեալ կայ քաղաքս առ Սէնա գետով, 'ի մակընթացութենէ ջուրց ծովու բարձրացեալ գետոյն նպաստէ մեծամեծ նաւուց մերձենալ 'ի քաղաքն։ Յաճախութիւնք հոյակապ գործարանաց նորա որ 'ի պէտս ճարտարարուեստ բազմատեսակ գործուածոյ ասուեղինաց, բամբակեղինաց և կտաւեղինաց անընդհատ ծաղկեալ պահեն զտուրեւառ վաճառաց նորա։ Հեռի է 'ի փարիզէ՝ 30, լէգայիւ։

ՌՈԹԸՌՏԱՄ. կամ Ռօթթէռտամ. իտալ. Roterdam։ Քաղաք մեծ և ականաւոր յաշխարհին Հոլանտացւոց առ բերանով Մօսա գետոյն, յորում ունի զիւր նաւահանգիստ. բազմահարուստ վաճառատեղի յետ Ամսթէրտամայ, յորմէ հեռի է 12, լէգայիւ։ Գլխաւոր և սեփական վաճառականութիւնք քաղաքիս են Տորոնաներկ և ցքի. զի տորոնն առատ է և ընտիր 'ի սահմանս նորա. իսկ ցքին կազմի առ նոսա 'ի գարւոյ և 'ի պտղոց գիհի ծառոյ, յորմէ սովոր է անուանիլ օղի գիհւոյ։ Են 'ի նմա և գործարանք աղի, շաքարի, արջասպի. անագի. սպիտակադեղոյ. օճառի. ծխախոտոյ և քթախոտոյ, որք են աղբիւրք շահու վաճառականութեան նորա։

ՌՈՇԷԼ. իտալ. Rocella։ Քաղաք հարուստ և բազմամարդ յաշխարհին գաղղիացւոց 'ի գաւառին Օնի առ ծովեզերս ովկիանոսի. ունի նաւահանգիստ ընդարձակ և է ծաղկեալ վաճառականութեամբ, յոր յաճախեն նաւք շվէտաց, դանեաց, անգղիացւոց, հոլանտացւոց և ամերիկեցւոց՝ գնոյ առնուլ զշաքարս զտեալս, քթախոտս, ապակիս, և ցքի, որք են արդասիք ժրաջան աշխատութեան բնակչաց քաղաքիս, ունելով գործարանս բազումս 'ի կազմութիւն այսոցիկ վաճառաց։ Հեռի է 'ի փարիզէ՝ 103. լէգայիւ։

ՍԷԼԱՆԻԿ. այն է Թեսաղոնիկէ. իտալ. Salonico։ Համբաւեալ քաղաք վաճառականութեան 'ի ներքին ծայր համանուն ծովածոցոյն. յեզր գաւառին մակեդոնիոյ՝ որոյ է նախագահ քաղաք։ Բազմահարուստ է տուրեւառութիւն նորա 'ի պատճառս յոգնատեսակ վաճառացն, որք 'ի յունաստանէ և 'ի մերձաւոր սահմանացն գան ժողովիլ յայս նաւահանգիստ. ուր առաւելապէս սովոր են յաճախել նաւք Գաղղիացւոց, Անգղիացւոց և Վենէտիկեցւոց։ Վաճառք, որք ամ ըստ ամէ ելանեն 'ի քաղաքէս՝ են Բամբակ. ցորեան. բուրդ. մետաքս. դեղնաներկ մանրահատ. ծխախոտ. մոմ. սունկ. փայտ. մորթք նապաստակաց և այլ զանազան կաշիք. բրդեղէն վերարկուք նաւավարաց Եգիպտոյ։ Իսկ վաճառքն՝ որք յարտաքին տէրութեանց սովոր են մտանել 'ի քաղաքս են՝ դահվէ, շաքար. լեղակ. որդան կարմիր. պղպեղ. հնդկային ընկոյզ. ոգելից ըմպելիք. դեղորէք. կինամոն Տարչին. կապար. անագ. գնտակք հրացանի. չուխայք. կտաւք բարակամանք. ապակեղէնք, բեւեռք երկաթի, և այլ ձեռագործք արհեստից. որք հաւաքեն անդր 'ի պէտս Յունաստանի։ Հեռի է 'ի Սօֆիա քաղաքէ 50. լէգայիւ. և 'ի Կոստանդնուպօլսոյ՝ 108. լէգայիւ։

ՍԻԿԻԼԻԱ. իտ. Sicilia։ Կղզի մեծ և ընդարձակ 'ի ծայր իտալիոյ, բարեբեր և արգաւանդ յոյժ՝ մինչև հռովմայեցւոց անուանել զայն շտեմարան իտալիոյ։ 'Ի լերինս իւր ունի զառատահանքս ոսկւոյ, արծաթոյ, պղնձոյ, երկաթոյ, կապարի, ծծմբոյ, և պաղլեղի։ Են նորա և քարեհանք պորփիւրի, ընտիր և ազնիւ մարմարինի. զմրխտոյ. յասպիսի և այլոց բազմատեսակ քարանց։ 'Ի ձորս նորա և 'ի դաշտս լինին առատ արմտիք. ցորեան. գինի. ձէթ. մեղր. նարինջ. թուրինջ. մաննա կամ մանանայ ծորեալ 'ի կեղեւոյ ծառոց. մետաքս. բամբակ. վուշ. կանեփ. շաքար. աղ. և այլ ամենայն պիտանացուք մարդկային կենաց. որք են նիւթք և առիթք վաճառականութեան բնակչաց կղզւոյն, զորս տան 'ի դուրս, և առնուն յիտալիոյ 'ի գաղղիոյ և յանգղիոյ զվաճառս արհեստակերտ աղխամաղխից, յորոց պակասեալ գտանին բնակիչք կղզւոյն։

ՍԻՆԷԱ. իտ. China։ թք. Չինումաչին։ Թագաւորութիւն մեծ յասիա՝ հարուստ և բազմավաճառ, ուր յաճախեն նաւք սակս տուրեւառութեան՝ ընդ արեւմտակողմն ճափօնայ։ Վաճառք նորա են, Թէյ կամ չայ. ընդեղէնք. ցորեան. բրինձ. ծխախոտ. աղ. շաքար. մուշկ. սաթ. կինամոն Տարչին, որ ընտրելագոյն է քան զՍէյլեան կղզւոյն։ Մետաքս. բամբակ. վուշ. ոսկի. մնդիկ. և այլ հրահալելիք։ Ճենիք պատուականք և մեծագինք. Եւս և ներկափայտք բազմատեսակք։ Իսկ վաճառքն, զորս ընդունի յայլոց ազգաց, են պղպեղ. դեղորէք. հանեմք. կերպասք ասուենիւթք. բուստ կարմիր և սեւագոյն. զէնք, և գայլախազ։

ՎԵՆԵՏԻԿ. իտ. Venezia։ Համբաւեալ քաղաք իտալիոյ՝ երբեմն նախագահ համանուն հասարակապետութեանն, իսկ այժմ գաւառական քաղաք Լօմպառտօ վէնէթօ անուանեալ Տէրութեանն Աւստրիոյ, 'ի վերին ծայր ադրիական ծովուն յարեւելակողմն իտալիոյ։ Ունի գործարանս Մետաքսեայ կերպասուց՝ դիպա-

կաց, չուխայի, թղթոյ. ապակեղինաց, հայելեաց. մոմոյ. ուլանց կամ հիլունից. որք են վաճառք արդի տուրևառութեան նորա: Հեռի է 'ի Հռովմայ՝ 90, լևքայիւ: 'Ի Ֆիօրէնցայէ՝ 46: 'Ի փարիզէ՝ 245: 'Ի Կոստանդնուպօլսոյ, 400:

ՎԻԷՆՆԱ. իտ. Vienna. գձ. Պէջ: Մայրաքաղաք կայսերութեան 'ի գաւառին Աւստրիոյ, համբաւաւոր տեղի վաճառականութեան: Առընթեր գոլով Տանուպ գետոյ ունի դիւրութիւն ճոխ և յաճախ տուրևառութեան ընդ Պավիերայի, Սվէվիայի, Իտալիոյ, Ունկարիոյ և Թուրքաստանի: Են 'ի նմա գործարանք Մետաքսեայ կերպասուց, կտաւոյ և բեհեզոյ. հայելեաց. ընտիր հողմանիւթ անօթոց. երկաթոյ պղնձոյ և ոսկերչութեան: Հեռի է 'ի Հռովմայ, 180. լևքայիւ: 'Ի Կոստանդնուպօլսոյ, 280: 'Ի փարիզէ՝ 250: 'Ի Լօնտրայէ՝ 290: 'Ի փէթռօպուռկէ՝ 310: 'Ի Մատրիտէ, 420:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. որ և Ամիդ. իտ. Diarbek. գձ. Տիարպեքիր: Քաղաք մեծ, բազմամարդ, հարուստ և համբաւաւոր տեղի վաճառականութեան 'ի միջագետս ասորւոց առ Տիգրիս գետով: Յաճախութիւնք վաճառացն են կարմիր կաշիք, և կտաւք բամբակի: Հեռի է 'ի բերիոյ՝ 63. լևքայիւ: 'Ի Մուսուլ քաղաքէ՝ 52:

ՏՐԱՊԻԶՈՆ. իտ. Trebisonda կամ Tarabezun: Սաղեմի և հռչակաւոր քաղաք Թուրքաստանի յԱնատօլիա 'ի գաւառին Ամասիոյ, որ ունի բերդ և նաւահանգիստ 'ի վերայ սեաւ ծովու: Բազմահարուստ տուրևառութիւն նորա է ընդ Ռուսաստանի, Անատոլիոյ, Պարսից և Վենետկոյ: Գլխաւոր վաճառք նորա են Կաշի և Պղինձ. թող զայլ բերս արմտեաց և պտղոց, որք լինին 'ի սահմանս նորա: Հեռի է 'ի Պօլսոյ 225, լևքայիւ. և 'ի Կարնոյ 32:

ՓԱՐԻԶ. իտ. Parigi: Արքայանիստ Մայրաքաղաք հանօրէն գաղղիոյ առ Սէննա գետով, բազմահարուստ և ճոխ յամենայն տեսակս ազնուանիւթ և հետաքննին իրաց վաճառականութեան: Յորս առաւել համբաւեալքն են գործածք բազմագունի և նկարէն կապերտից. խոշորահատուած տախտակք հայելեաց մինչև ցութ ոտնաչափ լայնութեամբ. ամենայն տեսակք փայտանիւթ ընտիր ձեռակերտաց. թող զայլ ամենայն պիտանացուս 'ի վայելս հանգստեան և զարդու մարդկային կենաց: Հեռի է 'ի Լօնտռայէ, 95. լևքայիւ: Յամսթէռտամէ, 270: 'Ի Միլանայէ. 280: 'Ի Մատրիտէ, 277: 'Ի Հռովմայ 214: 'Ի Պօլսոյ՝ 490: 'Ի Լիսպօնայէ՝ 350:

ՓԻԷԹՐՕՊՈՒՐԿ. իտ. Pietroburgo. Մայրաքաղաք թագաւորութեանն Ռուսաց առ ծոցով Ֆինլանտիոյ 'ի վերայ մանր կղզեացն՝ զորս գործէ Նէվա գետ 'ի Պալդիկ ծովու, հռչակաւոր տեղի է վաճառականութեան՝ և կարի ծաղկեալ 'ի ձեռն ժրաջան աշխատութեան օտարականաց պանդխտելոց անդ վասն տուրևառութեան: Յամառնային ժամանակս յաճախեն նաւք օտարազգիք ածել անդր գինի, ցքի, ձէթ, և զամենայն տեսակս ձեռագործ վաճառաց, որոց պէտս ունի երկիր Ռուսաց: Իսկ վաճառքն՝ զորս առնուն անտի 'ի տանիլ այլուր, են՝ Կանեփ. վուշ. չուան. երկաթ. մազ խոզից. ծխախոտ. կտաւ 'ի պէտս առագաստից նաւու: Են և վաճառք՝ որք ընդ ցամաք հասանեն անդր 'ի Սինէացւոց և 'ի Պարսից. որպիսի են՝ Կաշիք, սփրիդք, մետաքսք. ձիւթք. փայտք 'ի նաւակազմութիւն. մորթք և մուշտակք զանազան կենդանեաց, երկաթ և պղինձ: Հեռի է 'ի Մօսքայէ՝ 175. լևքայիւ: 'Ի Միլանայէ՝ 310: 'Ի փարիզէ. 500:

## ՅԱՂԱԳՍ ԿՇՌՈՑ

Առ փիլիսոփոս Կշիռ անուանի զօրութիւնն կամ ծանրութիւնն՝ որով մարմինք մղին 'ի խոնարհ: Արդ ըստ առաւել և նուազ խտութեան մասանց իւրաքանչիւր մարմնոց՝ մեղմ կամ ուժգին է վայրաբերութիւն նոցա: 'Ի կարծիս հասարակաց կշիռ և ծանրութիւն թէպէտ մի և նոյն համարեալք են անխտիր, սակայն օրէն է զանազանել զնոսին, ծանրութիւն կոչելով զընդաբոյս վայրահակ միտումն մարմնոց. իսկ կշիռ՝ զչափ վայրաբեր զօրութեանն, որով մարմինն հակի կամ ծանրի 'ի խոնարհ. յորմէ կշիռն սովոր է կոչիլ և ծանրոց:

'Ի տուրևառս վաճառականութեան կշիռ անուանի որոշեալ չափ ինչ ծանրութեան որ դնի 'ի թաթ կշռորդին և նովաւ չափի ծանրութիւն վաճառելի իրաց: Կշիռն կամ ծանրոց սովորաբար լինի 'ի մետաղաց (1), և դրոշմի արքունի կնքով յաներկմիտ ապահովութիւն տուրևառու-

(1) 'Ի բազում տեղիս արևելեան հնդկաց սովորութիւն է վարել զորոշեալ հատուած ինչ դայլախաղ վիմի՝ իբր չափ կշռոյ. որպէս և 'ի գաւառս ինչ զմնրահատս բակլայի կամ սիսեռն սահմանեալ թուով:

թեան, որով կարծին 'ի քաղաքական ընկերութենէ անիրաւութիւնք 'ի վաճառողս, և զրկանք 'ի գնողսն ։

Նմանայն տէրութիւնք և գաւառք որպէս և քաղաքք, յորս միանգամ ծաղկեալ է վաճառականութիւն, ունին զիւրեանց սեփական կշիռս զանազանեալս 'ի միմեանց, և է ուրեք՝ զի 'ի նոյն իսկ գաւառի և 'ի քաղաքի ըստ պէսպիսութեան վաճառելի իրացն՝ այլևայլ են և կշիռքն. զորօրինակ է տեսանել 'ի պօլիս, յորում թէպէտ սովորական կշիռն է Օգգա 400, տիրհէմի, զոր վարեն 'ի չափս ծանրութեան բազմապատիկ նիւթոց, սակայն ունին և զայլ կշիռս որոց ծանրութիւն անհամեմատ է օգգայի. որպիսի են Սըզըյ, որ է 60, տիրհէմ ։ Բըդըլ, որ է 720, տիրհէմ ։ Տէֆէ, որ է 610, տիրհէմ, և այլն. որք փակեն զայլևայլ չափս և թիւս տիրհէմի ։ Բաց այսոցիկ է տեսանել և յայլ բազում քաղաքս և 'ի գաւառս արևելեան և արևմտեան կողմանց ։

Արդ 'ի վաճառականութեան կարի դժուարին և տաժանելի աշխատութիւն է՝ գտանել զհամաձայնութիւն զանազանութեան կշռոց այլևայլ գաւառաց ընդ միմեանս, զորմէ կամելով նպաստ լինել դիւրութեան մատուցանել համբակաց, բովանդակեսցուք յառաջիկայդ զսովորական չափս կշռոց որք վարին 'ի ծանօթ տէրութիւնս ։

'Ի գաղղիական կշիռս սովորական է լիտրն փարիզեան, որ բաժանի յերկուս սեռս, առաջինն կոչի Մա՛ռ՝ որ փակէ զութ ունկիս. իսկ ունկին բովանդակէ զութ տրամս, և տրամն զ72, գարեհատս, կամ զհասարակ հասկահատս ցորենոյ ։ Իսկ երկրորդն որ պարզապէս կոչի լիտր, է 16 ունկի, և բաժանի յերկուս կիսալտերս. որպէս և կիսալիտրն յերկուս քառորդս, և քառորդն յերկուս կիսաքառորդս, և կիսաքառորդն յերկուս ունկիս. իսկ ունկին՝ յերկուս կիսունկիս ։

Առաջին լիտրն Մառ անուանեալ վարի 'ի կշիռս ոսկւոյ, արծաթոյ և այլոց պատուական և մեծագին վաճառաց ։ Իսկ երկրորդն վարի 'ի կշիռս դիւրագին իրաց ։

Սակայն լիտրն ոչ է նոյնաչափ և միօրինակ ընդ բովանդակ գաղղիա. զի 'ի Լիոն քաղաք լիտրն կշռէ 14, ունկի. որով 100, լիտր նորա առնէ 88, լիտր փարիզեան ։ Կայ և այլ լիտր վասն մետաքսի որ կշռէ 16, ունկիս ։

'Ի Թուլուս և 'ի վերինն Լանկըտօգ լիտրն է $13\frac{1}{2}$. ունկի ըստ փարիզեան կշռոյ ։ 'Ի Մառսէյլ և 'ի Փռօվանս՝ լիտրն է 13, ունկի և եթ ըստ փարիզեան կշռոյ ։ 'Ի Ռուան բաց 'ի սովորական լտերաց փարիզի՝ է և այլ կշիռ վիգօնթեան՝ որ է 16 ունկի և $\frac{1}{2}$ և $\frac{1}{6}$ փարիզեան կշռոյ ։

Անգղիական կշիռք տուրևառութեան յերկուս տեսակս լտերաց ամփոփին, առաջինն կոչի Թռօյուէյթ. իսկ երկրորդն Էվէռտիւփօյզ. որոց սկիզբն և ծագումն հաստատեալ կայ 'ի գարեհատ կամ 'ի ցորենահատ հանեալ 'ի միջոյ սովորական հասկին ։

Թռօյուէյթ անուանեալ կշռաչափուն, 24 գարեհատք՝ առնեն զմի Փէննիուէյթ, այսինքն՝ մանրակշիռ, իսկ 20 Փէննիուէյթ առնեն զմի ունկի. և 12 ունկիք առնեն զմի լիտր ։ Սովաւ կշռեն ոսկի, արծաթ, ակունք, սերմանք, և ոգելից հեղանիւթք ։ Կշիռ դեղավաճառաց ևս կոչի լիտր և ունկի, սակայն զանազանին յայլոց 'ի կիսաբաժինսն. զի ունկի նոցա բաժանի յութ տրամս, և տրամն յերիս դանկս, զոր իտալացիք Սգռուփօլօ կոչեն, որպէս և դանկն 'ի քսան ցորենահատս ։

Կշռաչափն Էվէռտիւփօյզ կոչեցեալ՝ փակէ 16 ունկիս. բայց ունկի սորա փոքր է իբր $\frac{1}{12}$, քան զունկին Թռօյ. զի յետինս փակէ յինքն 490, գարեհատս. իսկ առաջինն 448 ։ — Ունկին փակէ 16 տրամս, որով 80 ունկի Էվէռտիւփօյզ, հաւասարի 73, Թռօյեան ունկւոյ, որպէս և 17 լիտրն Թռօյ, համեմատի 14 լտերաց Էվէռտիւփօյզ անուանելոյ ։ 'Ի ձեռն այսր Էվէռտիւփօյզ կշռոյ վաճառին համեմք, մոգլիկ, նաւաստ հրահալելիք, ասր, ճարպ, կանեփ, հաց, և այլն ։ Արքունի փողերանոցք, սեղանաւորք, ակնավաճառք և մարգարտավաճառք ունին զիւրեանց առանձնական կշիռս ոսկւոյ և ականց, զոր կոչեն Գառաթ, (2) որով ոսկերիչք իմանան 24 գարեհատ. իսկ ակնավաճառք իմանան 4, գարեհատ և եթ ։ Չափ զանազանութեան Թռօյ կշռոյ 'ի Գաղղիական Մառ լտերէ համարի 31, առ %. զի 131, լիտր Թռօյ, հաւասարի 100, Մառ լտերաց Գաղղիոյ ։

(2) ԳԱՌԱԹ, որ և գըյրադ կամ Խըրաթ անուանեալն՝ ըստ ասելոյ ոմանց նախնի դրամ էր փոքրագին մաքուր և անխառն ոսկւոյ, զոր վճարէին 'ի հարկս արքունեաց ։ Ըստ այլոց՝ Գառաթ կոչի նշանն և կնիք՝ որով որոշէին աստիճանք մաքրութեան ոսկւոյ զոր կոչեմք Ցարդ. ըստ Թուրքաց Այար ։ Այլք համարին անուն լինել մանր կշռոյ, զոր վարէին նախնիք, առեալ 'ի յունական բառէն Քէռատիօն, որ է տեսակ ինչ մանրակշռոյ, կամ կուտի եղջերապտղոյ ։ Գառաթ անունն հասարակ է գրեթէ ամենայն ազգաց՝ մերձաւոր հնչմամբ, ըստ որոց և 'ի մեզ Կերատաւի, զոր անգղիացիք Փէննի ևս կոչեն ։ Իսկ Գառաթն կամ Խըրաթն ակնավաճառաց է կուտն եղջերապտղոյ, զոր բաժանեն 'ի 4, ցորենահատս ։

Կշիռքս 'ի համար արկեալք ընդ անուամբ Գաղղիոյ և Անգղիոյ, սովոր են վարիլ և յայլ բազում սահմանս Եւրոպիոյ, փոքու իւիք զանազանեալ յանուանս, 'ի բաժանմունս և 'ի համեմատութիւնս միմեանց ։ Սակայն ոչ պակասին և այլ առանձնական կշիռք սեփականեալք իւրաքանչիւր ազգի և գաւառի՝ որպէս և քաղաքի ։

Սպանիա ունի զիւր կշիռ Արռօպա անուանեալ, որ է 25 լիտր սպանիոյ, կամ $\frac{1}{4}$ սովորական կենդինարի ( գանթարէ ), այսինքն հարիւր լտերաց ։ Իսկ կենդինար մաքօ անուանեալն 'ի նոցանէ, կշռէ 150, լիտր, կամ 6, Արռօպա ։ Բաց 'ի սոցանէ կայ և Ատաւմէ անուանեալ, որ է $\frac{1}{16}$ ունկւոյ նոցա ։ Վասն ոսկւոյ ունի զառանձին կշիռ Գասթիլլանօ անուանեալ. որ է $\frac{1}{100}$, մասին միոյ լտեր ։ Իսկ Թօմին կոչեցեալ մանրակշիռն փակէ 12, գարեհատս, կամ $\frac{1}{8}$ մասն միոյ գասթիլլանոյի ։ Զափ զանազանութեան լտերաց սպանիոյ ընդ գաղղիականին համեմատի իբր 7, առ % ։ Զի 100, Մառ լիտր Գաղղիոյ՝ առնեն 107, լտերք Սպանիոյ ։ Նոյն կշիռք վարին և յարևմտեան հնդիկս իշխանութեան սպանիոյ ։

Լուսիտանիա վարէ զանուն կշռոյն Արռօպա, որ փակէ 32, լիտր Լիսպօնայի Արռաթէլի անուանելոյ ։ Լիտրս կրկնապատկեալ՝ կոչի Փառաթէլլէ. ունի և զկիսեալն որպէս և ըզՌըդլ, որ է իբր 12, լիտր ։ Իսկ վասն ոսկւոյ ունի կշիռ Մէկօ անուանեալ որ է 4, գառաթ ։ Զափ զանազանութեան կշռոցս ընդ գաղղիականին համեմատի իբր 12, առ %, զի 100, Մառ լիտր Գաղղիոյ կշռէ 112, լտերս Լիսպօնայի ։ Նոյն կշիռք վարին և յարևմտեան հնդիկս լուսիտանիոյ ։

Իտալիա՝ առաւելապէս վէնէտիկեան սահմանք ունին կշիռ Միլիառօ անուանեալ, որ փակէ յինքն զհազարս Միռռօ, և իւրաքանչիւր Միռռօ՝ 30, լիտր վէնէտիկեան ։ Իսկ լիտրն է կրկին՝ մեծ և փոքր կամ նուրբ. առաջինն կշռէ 12, ունկի. և իւրաքանչիւր ունկի 12, տրամ և 50, գարեհատ ։ Իսկ երկրորդն նոյնպէս 12, ունկի, բայց ունկի սորա է 8, տրամ և 50, գարեհատ ։ Կայ և այլ լիտր Սառգօ անուանեալ, որ է 8, ունկի. և իւրաքանչիւր ունկի, 9, տրամ և 50, գարեհատ ։ Գտանի և այլ չափ կշռոյ, որ կոչի Սաճճիօ կամ Սագգօ, որ է վեցերորդ մասն միոյ ունկւոյ ։ Զափ զանազանութեան կրկին լտերաց Վէնէտկոյ ընդ Գաղղիականին համեմատի այսպէս ։ Առ 100, Մառ լտերս Գաղղիոյ հաւասարին 102, մեծ լտերք. որպէս և 160, փոքր լտերք Վէնէտկոյ ։

Ջէնօվա ունի զհնգատեսակ չափս կշռոյ լիտր անուամբ. առաջինն ծանրակշիռ կոչեցեալ՝ որով կշռին վաճառք 'ի մաքսատունս ։ Երկրորդն դրամակշիռ, որով կշռին դահեկանք արծաթոյ և ոսկւոյ ։ Երրորդն կոչի Գանթարա կամ Կուինթալ, որ վարի 'ի կշիռս հասարակ և թանձրանիւթ վաճառաց ։ Չորրորդն անուանի լիտր մեծ որ վարի վասն անեփ և անպատրաստ մետաքսից ։ Հինգերորդն կոչի լիտր փոքր վասն ազնուանիւթ վաճառաց ։ Զափ զանազանութեան յետնոցս ընդ գաղղիականին համեմատի այսպէս ։ Առ 100, Մառ լտերս Գաղղիոյ հաւասարին 102, մեծ լտերք, և 150, փոքր լտերք Ջէնովայի ։

Սիկիլիա ունի կշիռ Ռօթթօլօ անուանեալ, որ է 32 $\frac{1}{2}$ լիտր Մէսինայի ։ Իսկ չափ զանազանութեան լտերն ընդ Գաղղիականին համեմատի այսպէս ։ Առ 100, Մառ լտերս Գաղղիոյ հաւասարին 154, լտերք երկոտասան ունկւոյ ։

Գերմանիա, Ֆիանտրա, Հոլլանտիա, Դաշնակից իշխանութիւնք, Շվէտք, Դանիք, Փօլօնիա կամ Լէհք, և որ շուրջ զնոքօք գաւառք՝ ունին զիւրեանց կշիռս, Շիփփօնտ անուանեալ, որ յայլևայլ քաղաքս այնց կողմանց կշռէ զանազան ծանրութեամբ, յոմանս 300, լիտր. յայլս 320, և 340. և յոմանս 400 ։ Ունին և կշիռ Լիսփօնտ անուանեալ, որոյ 20, կշռէ 15, լիտր ։

'Ի Մոսկովս կամ 'ի Ռուսաստան թանձրանիւթ վաճառքն կշռին Պէռխէվլիթ կամ Պէռքէօքթ անուանեալ կշռով, որ փակէ յինքն 400, լտերս Ռուսիոյ ։ Լիտր Ռուսիոյ տարբերի 'ի գաղղիականէն իբր 20, առ %. զի 119 $\frac{1}{2}$ լտերք Ռուսաց հաւասարին առ 100, Մառ լտերս Գաղղիոյ ։ Կայ և այլ կշիռ փօէթ կամ փօյէտ, որ և փուտ անուանեալ որ է 40, լիտր, կամ $\frac{1}{10}$, Պէռխէվլիթ կշռոյ ։

'Ի Թուրքաստան ընդ կողմն ասիոյ սովորական կշիռն է Պաթման, որ փակէ զվեց Օգգա. այն է 2400, տրամ Պօլսոյ, և կշռէ ըստ եւրոպեան կշռոց 3, լիտր և $\frac{4}{5}$, անգղիական ։ Կայ և այլ Պաթման փոքր, որ թէպէտ ասի լինել 6, օգգա. սակայն օգգա սորին փոքր է քան զառաջինն, և փակէ՝ 15, ունկի անգղիական կշռով ։ — Ունին և զայլ կշիռ Գանթար անուանեալ որ է 44, օգգա ։ Համեմատութիւն Պաթմանի և Օգգայի ընդ գաղղիական լտեր, այս է, զի 7 $\frac{3}{4}$, Պաթմանք, կամ 38 $\frac{1}{2}$, Օգգայք՝ առնեն 100, Մառ լիտր Գաղղիոյ ։

Եգիպտոս, Աղեքսանդրիա, 'ի Հալէպ, սովոր են վարել զկշռանունս Ռըդլ. որ յԵգիպտոս և 'ի սահմանս նորա է 144, տրամ, վասն որոյ 87, Ռըդլք համեմատին առ 100,

Մառ լտերս Գաղղիոյ ։ Ի Հալէպ երեք տեսակք են Ռոտլի . առաջինն կշռէ 720 , տրամ , որով վաճառին թանձրամնիւթ վաճառք ։ Երկրորդն կշռէ 624 , տրամ , որով վաճառին ամենայն տեսակք անեփ մետաքսից ։ Իսկ երրորդն կշռէ 700 , տրամ , որով միայն վաճառի սպիտակ մետաքսն ։

Ի Սէյտա Ռոտլն կշռէ 600 , տրամ ։ Իսկ այլ արևելեան նաւահանգիստք սովոր են վարել զմի 'ի նախակարգեալ կշռոց , այսինքն՝ Օգգա կամ Ռոտլ ։ Բայց 'ի կողմն յունաստանի սովորական է կիրառութիւն Օգգայի ըստ պօլսոյ , որ է 400 , տրամ ։

Սինեացիք՝ այն է Չինք , ունին կշիռս վասն թանձրամնիւթ վաճառաց զոր կոչեն Փիգս , և բաժանի 'ի 100 , կաթթիս , թէպէտ ոմանք համարին լինել 125 ։ Կաթթիսն բաժանի 'ի 16 , Թայէլ կամ Թալ . և իւրաքանչիւր Թայէլ համեմատի 1 1/3 , մասին միոյ անգղիական ունկւոյ . և փակէ յինքն զ10 , Մաս . որպէս և Մաս անուանեալն զ10 , Գոնտոյին ։ Արդ փիգան Չինաց հաւասարի 137 , լտերաց էվէռտիւփօյզ կշռոյ անգղիացւոց , իսկ կաթթիսն՝ 24 , ունկւոյ նոցա ։ — Կայ և այլ կշիռ Փիքօլ կամ Փեգգուլ անուանեալ վասն մետաքսամթերից , որ բաժանի 'ի 66 , կաթթիս և 3/4 ։ Իսկ Պախարիէ կամ Պահար , և կամ Պարս կոչեցեալն բովանդակէ 300 , կաթթիս ։ Նոյն կշիռք վարին և 'ի թագաւորութեանն Թոնքինի , որ է սահմանակից Չինաց ։

Ի Ֆիլիփփօն վարի լոկ կշիռն կաթթիս , որ ոչ է նոյն ընդ կաթթիսի Չինաց , զի բաժանի 'ի 20 , Թայէլ ։ Առ 100 , Մառ լտերս Գաղղիոյ հաւասարին 82 , կաթթիսք Ֆիլիփփօնի ։

Ի Սուրաթ , յԱկռա և 'ի սահմանս մեծին Մօղոլի՝ վարի կշռամունս Ման , որ է կրկնատեսակ . մին կոչի Ման արքունի , և միւսն լոկ Ման ։ Առաջինն վարի 'ի կշիռս պարենից և առձեռն իրաց , և փակէ յինքն զ40 , Սիրս կամ Սէյրս ։ Իսկ Սէյրն հաւասար է միոյ լտեր փարիզեան կշռոյ ։ Երկրորդն լոկ Ման անուանեալ , զոր վարեն 'ի կշիռս թանձրամնիւթ վաճառաց՝ որ թէպէտ բաժանի նոյնպէս 'ի 40 , Սէյր . բայց Սէյր սորա փոքր է քան զառաջնոյն 1/4 . և հաւասարի 12 , փարիզեան ունկւոյ ։

Ման կոչեցեալ կշիռն և անուն՝ սովորական է գրեթէ յամենայն սահմանս արևելեան հընդկաստանի , թէպէտ և դոյզն ինչ զանազանութեամբ հնչման , է ուրեք՝ զի անուանի Մաօ , կամ Մաօն , և է՝ զի կոչի Մօն կամ Մաւն , և կամ Մէյն ։ Իսկ Սէյր կամ Սէյրաս՝ սեփական և սովորական անուն է հնդկային լտեր , որ է 301 , տրամ կոստանդնուպօլսոյ ։ Ը նոյն մարթ է առել և վասն կշռամունացս Պահար , Թայէլ , և Կաթթիս , որոց կիրառութիւն յաճախ է 'ի հնդիկս ։

Ի թագաւորութեանն Շիամայ 'ի հնդիկս վարին կշռամունք Չինաց՝ այն է Փիքէ կամ Փիգ և Կաթթիս ։ Փիգն բաժանի յերկուս Կաթթիս . բայց Կաթթիսն Շիամացւոց է կէսն կաթթիսի Ֆիլիփփօնացւոց զի է 10 , Թայէլ ։ Թայէլ սոցա բաժանի 'ի 4 , Պաաթս կամ Թիգալ , որ է իբր մի ունկի փարիզեան ։ Իսկ Պաաթն բաժանի 'ի 4 , Սելինկ կամ Մայօնս . որպէս և Մայօնն յերկուս Ֆուանկս . Ֆուանկն 'ի 4 , Փայս . և Փայն յերկուս Գլամս ։ Յիշատակեալքս դրամմունք են առ նոսա՝ որք միօրինակ վարին և 'ի չափս կշռոց . զի ոսկի և արծաթ անխտիր համարեալ են առ նոսին իբր մթերս այլոց վաճառաց ։

Ի կղզին Եավա , և առաւելապէս 'ի Պանթամ՝ վարեն զկշռամունս Կանթան , որ է իբր 3 , լիտր Հոլլանդիոյ ։ Ի Կօլքօնտա 'ի Վիզափուր , և 'ի Կոա , ունին կշիռ Ֆուրաթէլ անուանեալ , որ է մի լիտր՝ կամ 14 , ունկի անգղիացւոց ։ Ունին և զկշիռ Մանկալլս կոչեցեալ՝ վասն ականց և գոհարաց , որ 'ի Կոա կշռէ 5 , գարեհատ , և 'ի Կօլքօնտա 5 1/2 ։ Կան և կշռամունքս Ռոտլ , Մէթրիգօլ , և Վալլ ։ Ռոտլն է 14 1/4 ունկի ։ Մէթրիգօլն՝ վեցերորդ մասն միոյ ունկւոյ ։ Վալլն վարի 'ի կշիռս դրամոց , և է 73 , մասն միոյ արքունական Մանի ։

Ի Պարսկաստան կրկին տեսակք են կշռամունս Ման կամ Պաթման . մին կոչի Շահի կամ Սէրայի կամ Ռէյի Ման , որ է կշիռ արքունի . և միւսն անուանի Գէվրիզի Ման , կամ Պաթման . առեալ զկոչումն յանուանէ Գավրէժ քաղաքի ։ Առաջինն կշռէ իբր 13 , լիտր և 10 , ունկի անգղիական . իսկ երկրորդն իբր 6 , լիտր և 3/4 ։ Մանրաբաժինք կշռոցս են Ռոտլ որ է վեշտասաներորդ մասն ։ Տիրհէմ , որ է յիսներորդ մասն ։ Մսգալ որ է կէս տրամ ։ Տանգ կամ Տէնկ , որ է վեշտասաներորդ մասն միոյ մսգալի . գոլով համազօր 6 , գարեհատից . որպէս և գարեհատն է չորեքտասաներորդ մասն միոյ Տէնկի , այն է Գանկ ։

Ունին Պարսիկք և զկշիռն Վագիյէ անուանեալ , որ դոյզն ինչ առաւելու քան զունկին անգղիական ։ Կայ և Սահքերայ , որ հաւասարի 1170 , երորդ մասին Տիրհէմի ։ Որպէս և Թումանն որ կշիռ է՝ միանգամայն և անգոյ դրամ անուն , վարի 'ի կշիռս բազմագումար դրամոց առանց մի առ մի թուելոյ , և բաժանի 'ի 50 , Ապպասի , կամ 'ի հարիւր Մահմուտի . կամ յերկերիւր Սահէս , կամ 'ի տասն հազար Տինարս , որ է Գենար ։

Յաղագս Ափրիկեան և Ամերիկեան կղզեաց չունիմք ասել ինչ աւելի քան զոր աւանդեցաք վերագոյնդ, զի Ամերիկեան կղզիք առհասարակ եւրոպականք են ըստ տէրութեանցն՝ ընդ որովք հպատակեալ կան։ Իսկ 'ի Փէրու կղզւոյն անունն Արուէ՝ կամ Արաու, որ թուի զանազանեալ յայլոց, է նոյն իսկ Արաօպա կշիռն սպանիոյ՝ գոյն ինչ պէսպիսութեամբ, զի 'ի սպանիա կշռէ 25, լիտր և 'ի Փէրու՝ 27։

Ափրիկակողմանք՝ բաց յեգիպտոսէ և 'ի ծովեզերաց անտի, զորս կանխագրեցաք, ուր ուրեմն վարեն կշիռս, զի չեք առ նոսա քաղաքական վիճակ տուրևառութեան ըստ մերոց գաւառաց։

Կղզին Մատակասգար ունի իւր առանձին կշիռս, որք չառաւելուն քան զդրամն, զոր և 'ի կիր առնուն վասն ոսկւոյ և արծաթոյ եւեթ։ Իսկ զայլ վաճառս երբեք ոչ կշռեն։

# ՅԱՂԱԳՍ ՉԱՓՈՒՑ

Չափ կոչի սահմանաւոր և որոշեալ տարածութիւն ինչ երկայնութեան և լայնութեան, որ սովոր է վարիլ 'ի տուրևառութիւնս վաճառաց։ Արդ՝ ըստ պէսպիսութեան կղզեաց զանազան քաղաքաց և գաւառաց՝ պէսպէս են և չափքն վարեալք 'ի տուրևառս․ զորոց կամելով տեղեակս առնել զընթերցողս, կարգեսցուք աստանօր զցակս 'ի բազմաց։

## Չափ Կտաւեղէն վաճառաց։

Առ Գաղղիացիս սովորական չափն կտաւանութեանց կոչի Օն՝ (զոր Անգղիացիք Էլլ անուանեն)․ և է 3, ոտնաչափ փարիզեան․ 7, բթաչափ, և 8, գծաչափ։ Ոտնաչափն փարիզեան բաժանի 'ի 12, բթաչափս կամ Ինչկս։ Բթաչափն բաժանի 'ի 12, գծաչափս։ Իսկ գծաչափ կոչի՝ մի գարեհատն։ Է և այլ մասնական բաժանումն ոտնաչափուց, ըստ որոյ Ոտնաչափն Փարիզեան, որոյ քառորդ մասն հաւասար է այսմ գծի,

| | | | |
|---|---|---|---|
| Բաժանի · · · · · | 'ի | 1440, | մասունս · |
| Անգղիացւոցն · · · | 'ի | 1350։ | |
| Վենետիկեանն · · · | 'ի | 1540 · ½։ | |
| Կոստանդնուպօլսոյ · · | 'ի | 3120։ | |

Օնն Գաղղիական բաժանի 'ի կէս, յերրորդ մասն, 'ի վեցերորդ, և յերկոտասաներորդ։ Նաև զարձեալ բաժանի 'ի քառորդս, 'ի կիսաքառորդս, և 'ի վեշտասաներորդս։ Այս տեսակ չափու սովորական է 'ի բազում տեղիս Գաղղիոյ, բաց 'ի գաւառացն Լիոնայէ, Շանփանեը, Ռոգ, Պուաէ, և 'ի մասնէ ինչ Փիգառտիոյ և Պուրկօնեըի, յորս չափ տարածութեան Օնի է 2, ոտնաչափ՝ 5, բթաչափ, և 1, գծաչափ փարիզեան։ Իսկ 'ի Պռէթայնեը է 4, ոտնաչափ․ 2, բթաչափ․ և 11, գծաչափ։ Որպէս և 'ի Պէռն 8, գծաչափով առաւելու քան զփարիզեանն։

'Ի Լանկըտօգ, 'ի Մառսէյլ, 'ի Թուլուզ, 'ի Փռօվանս․ որպէս և յայլ քանի մի տեղիս ունեն զկիրառութիւն եղէգնաչափու, զոր կոչեն Գան․ և է սովորաբար 5, ոտնաչափ․ 5, բթաչափ՝ և 6, գծաչափ փարիզեան, որ հաւասարի 1 ½, Օն չափու փարիզեան։ Գտանի այլուր և եղէգնաչափ, որ տարածի 'ի 6, ոտնաչափ և 'ի 9, գծաչափ․ և նոյնանայ ընդ 1 ⅔․ Օն չափու փարիզեան։

Առ Հոլլանդացիս, առ Ֆլանտրացիս և Շվէտացիս՝ որպէս և 'ի մեծագոյն մասն Գերմանիոյ, 'ի Գաշնակից քաղաքս, 'ի Տանձիգա, յԱմպուրգ, 'ի Ճինէվրա և 'ի մերձաւոր սահմանս նոցա՝ սովորաբար վարի անունս Օն չափուն․ սակայն զանազանի 'ի փարիզեան Օնէ։ Հոլլանդեանն տանի 1․ ոտնաչափ և 11․ բթաչափ փարիզեան։ Ֆլանտրեանն՝ 2, ոտնաչափ․ 1, բթաչափ և 5, գծաչափ փարիզեան, որում զուգաչափ են և Գերմանականն, որպէս և Պրապանթեանն։

Առ Անգղիացիս չափն կտաւանութ վաճառաց, կոչի Եարտ․ որ բաժանի 3, ոտնաչափ անգղիական, և հաւասարի 3, ոտնաչափուց փարիզեան, և $\frac{8}{12}$ · բթաչափուց․ կամ որ նոյն է $\frac{7}{9}$ մի Օն չափու փարիզեան։ Մանրաբաժինք Եարտի են Ոտնաչափ, Սփէննա, Նէյլ, Բըթաչափ և Գարեհատ։ Իսկ բազմապատկութիւնք նորա են՝ Քայլ, Ֆէթհըմ, Չողաչափ, Ֆըռլօնկ, Մղոն։ — Երեք բթաչափք առնեն զմի Թիզ։ 4, Նէյլք, 1 ½, Սփէննա։ 2, Սփէննա, 1 ½, Ոտնաչափ։ 3, Ոտնաչափք, 2, Բազկաչափ։ 3 ⅓, Բազկաչափն, 1 ⅔, Եարտ։ 2, Եարտ, 1 ⅕, Քայլ։ 3 $\frac{3}{10}$, Քայլ, 2 ¾, Ֆէթհըմ։ 110, Ֆէթհըմ, 40, Չողաչափ։ 320, Չողաչափք, 8, Ֆըռլօնկ․ որ է ¼ Մղոնի։



Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՒՂԵՈՐԻ ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻՃԵԱՆԻ 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

Առ Իտալացիս կանգնաչափն կոչի Պռաչ-ջիօ, որոյ երկայնութիւնն զանազանի ըստ այլ-եւայլ գաւառաց ։ 'Ի Վենետիկ և 'ի մօտաւոր սահմանակից գաւառս նորա՝ կանգունն ասի, 1. ոտնաչափն, 11, բթաչափ՝ և 3, գծաչափն փա-րիզեան, կամ որ նոյն է $\frac{8}{15}$ Օն չափու փարի-զեան ։ — 'Ի Լուգգա քաղաք և 'ի գաւառ՝ կանգունն փակէ 1, ոտնաչափ. 9, բթաչափ և 10, գծաչափ, և համեմատի կէս Օն չափու փարիզեան ։ — 'Ի Ֆիօրէնցա՝ կանգունն ասի 1, ոտնաչափն, 9, բթաչափ՝ և 4, գծաչափ փարի-զեան ։ — 'Ի Միլան՝ կանգունն մետաքսեղինաց է 1, ոտնաչափ. 7, բթաչափ, և 4, գծաչափ փարիզեան ։ Իսկ կանգունն կտաւոց և ասուից՝ է 1, ոտնաչափ, և 11, գծաչափ փարիզեան ։ 'Ի մերձաւոր գաւառս միլանի կանգունն կոչի 1, ոտնաչափն, 7, բթաչափ, և 6, գծաչափն. կամ որ նոյն է $\frac{5}{9}$, Օն չափուն փարիզեան ։ — 'Ի Նէապօլիս և 'ի Սիկիլիա սովորաբար վարի ե-ղէգնաչափն՝ Պաննա կոչեցեալ. և է 6, ոտնա-չափ. 10, բթաչափ, և 2. գծաչափ փարիզեան, որ հաւասարի 1 $\frac{15}{17}$, Օն չափու փարիզեան ։

Առ Սպանիացիս կանգնաչափն կոչի Վառա կամ Պառռա, որոյ երկայնութիւնն համեմատի $\frac{17}{14}$, մասին միոյ Օն չափու փարիզեան ։ Բայց կանգունն Պասթիլիոյ և Վալէնցիա գաւառաց, որ կոչի փան կամ Բափաննա, եւ և փալմօ, հաւասար է եղէգնաչափու ։ Իսկ յԱռակօնա գաւառ Սպանիոյ կանգնաչափն Վառա անուա-նեալ՝ հաւասար է 1 $\frac{1}{2}$ Օն չափու փարիզեան ։

Առ Լուսիտանացիս կանգնաչափն կոչի Պաս-վէտօս, որ է 2, ոտնաչափ, և 11, գծաչափ փարիզեան ։ Վարի առ նոսա և կանգնաչափն Վառա, որոյ 106, առնեն 100, Օն փարի-զեան ։

Առ Փլէմէնկեցիս կանգնաչափն կոչի Ասա, որ է 1, ոտնաչափ, 9, բթաչափ և 10, գծաչափ փարիզեան. և հաւասարի $\frac{1}{2}$, Օն չափու փարի-զեան ։

Առ Մոսկով կանգունն կոչի 1, ոտնաչափն, 4, բթաչափն՝ և 2, գծաչափն փարիզեան ։ Կա առ նոսա և այլ չափ Առշին անուանեալ, որոյ կրկինն հաւասարի երից կանգնոց նոցա. և 166, համեմատի 100, Պաղղիական Օն չափուն ։

'Ի Թուրքաստան և յարևելս կրկին է կանգ-նաչափն, որք են Էնտազէ և Արշուն. զորոց տես յԱշխարհագր". հտ. Ե. Եւրոպ". երես. 61 ։ Կայ և այլ կանգուն, զոր փիգգ կոչեն. և է 2, ոտնաչափ, 2, բթաչափ. և 2, գծաչափ փարիզեան, կամ որ նոյն է $\frac{3}{5}$. Օն չափու փա-րիզեան ։

Առ Պարսիկս կանգնաչափն Կէյզ կամ Կեզ կոչի. որ և 'ի կողմանս ինչ հայոց Կազ անուա-նի. և է կրկնատեսակ, առաջինն է արքունա-կան, որոյ երկայնութիւնն հաւասարի 2, ոտնա-չափուց, 10, բթաչափուց և 11, գծաչափուց փարիզեան ։ Երկրորդն է հասարակ. որ լոկ կեզ կոչի, և է կարճագոյն քան զառաջինն իբր $\frac{2}{3}$ մասամբ նորա ։

Առ Չինէացիս կամ Չինս կանգնաչափն կո-չի Պօպուէ. որոյ տասն երկայնութիւնք հաւա-սարին երից Օն չափուց փարիզեան ։

Առ Ամերիգացիս և 'ի կողմանս Հնդկաց կանգնաչափք վարին ըստ եւրոպական տէրու-թեանցն, որոց հպատակեալ կան. սակայն գը-տանին և գաւառք ինչ, որք ունին զառանձին կանգնաչափս ։ 'Ի Փէկու և յայլ սահմանս Հնդ-կաց է չափ ինչ կանգնոյ, որ կոչի Պանտօ. և է հաւասար Վենետիկեան կանգնաչափու ։ Նոյնպէս 'ի Կօա զկանգունն անուանեն Պան-տօ, որ կարի մեծ է քան զփէկուայն, և հաւա-սարի 17, կանգնաչափուց Փլանտրիոյ ։

## Չափք Հեղանիւթոց ։

Չափք հեղանիւթ իրաց սովորաբար ունին զծագումն 'ի կշռոց. որպէս յայտ է 'ի գործա-ծութենէ անտի ընդ. բովանդակ ազգս արևե-լեայց. որոց գրեթէ ամենայն չափք վերածին 'ի կշիռս Օգգայից և Տրամից ։

Յայսր հիման վերայ թուին հաստատեալք և չափք Անգղիացւոց, զի դուլաչափ մի գինւոյ ու-նի տանիլ զութ լտերս ցորենահատից Թրօյեան կշռով, թէպէտ այժմ 'ի սովորութեան վարի ծանրութեամբ Էվէռտիւփօյզ կշռոյ. և զայն դուլաչափ կոչեն Կէլլըն. յորմէ ելանեն մանրաբաժինք՝ որպէս և բազմապատկութիւնք այլ ամենայն չափուց հեղանիւթոց ։

Կէլլըն անուանեալ դուլաչափն, որ դրոշ-մեալ կայ արքունի կնքով, է կանոն չափուց գինւոյ, ցքոյ, ձիթոյ, և այլոց. համարի փակել յինքն 23, բթաչափ խորանարդս. յորոյ վերայ հիմնեալ կան և չափքս՝ փայնթ. Քուօրթ. Պէքքիլ. Թէրս. Հօկսհէտ. Փնչըն. Պութթ. Թըն [1]. որք են զանազան բաժանմունք և բազ-մապատկութիւնք Կէլլընի ։

(1) Թըն, կամ Թօն, և Թօննա, յորմէ Թօննէլատա՝ է անուն լայնափոր և անձկածագ կարասոյ կամ տակառի, որ վարի 'ի պէտս անօթոյ, և համարի չափ հեղանիւթոյ ։ Անգղիացւոյն տանի զչորս Հօկսհէտս, կամ 252, Կէլլըն. և սովորաբար կշռէ 2000. լտերս, կամ 20, Կէնդինարս, որ ըստ Էվէռտիւփօյզ կշռոյ Անգղիացւոց՝ լինին իբր 2440. լտերք ։ 'Ի ձեռն այսր Թօննէլատայի սովոր են Եւ-րոպեանք չափել զբեռնաւորութիւն նաւուց ։

Ի Փարէզ և 'ի մեծագոյն մասն Գաղղիոյ չափք հեղանիւթոց 'ի փոքունց սկսեալ այսոքիկ են. Փօօն. որ տանի գիծս ըթաչափ խորանարդ։ Երկլին փօօնք առնեն զմի Տըմի-Սըթիէ։ Երկու Տըմի-Սըթիէք առնեն զմի Սըթիէ. որ և կոչի Շօփին։ Երկլին Շօփինք առնեն զմի փէնթ։ Երկու փէնթք առնեն զմի քառորդ կամ Պօգալ, որ է փօ։ Չորք քառորդք առնեն զմի Կէլլըն Անգղիական, կամ զմի Սըթիէ ըստ յարգի. որոյ երեսուն և վեցքն առնեն զմի Միւի։ Իսկ Միւին բաժանի յերկուս կիսամիւս, 'ի չորս քառորդս, և յութ կէսքառորդս։

Ի փարիզեան քառորդէ անտի կազմի և չափն Լիթռօ անուանեալ, որ վարի յՕռլէան, և տանի զմի և կէս Միւի փարիզեան. կամ զ420, փէնթս։ Տակառն Պօթ կոչեցեալ՝ տանի զչորս Պառիլըս՝ կամ Պառիս, և հաւասարի երից Միւլից փարիզեան։ Կայ և փիփ անուանեալ չափ, որ հաւասարի երկուց Տըմի-Լիթռօ աստացեալ չափուց, կամ 1 1/2, Միւլին փարիզեան. Իսկ Մէղլեռօլ անուանեալն, որ վարի 'ի Փռօվանս գաւառ, տանի 66, փէնթս փարիզեան. Որպէս և փօէնսօն կոչեցեալ չափն հաւասար է կէս Պօթի։

Առ Հոլլանդացիս չափք հեղանիւթոց սկսեալ 'ի փոքունց՝ են այսոքիկ. Մէնկլ կամ Պօթթըլ, որ հաւասարի փօ կամ Պօգալ անուանեալ չափու Գաղղիացւոց, և տանի զերկուս լոերս և զչորս ունկիս։ Մէնկլն բաժանի յերկուս փէնթըս, 'ի չորս կիսափէնթս, յութ կիսամուսփէս, 'ի վեշտասան կիսամուսփէս. մինչև ցժամանել 760, Մէնկլ. որք առնեն զմի տակառ Պօթ անուանեալ։ Ունին և զանուն քառորդի Թէդի Ֆիւթըլ կոչեցեալ, որ է 5 1/6, Մէնկլ. Թէպէտ և քառորդաչափ գինւոյ է 6, Մէնկլ։ Կայ առ նոսա և Ըշթէքան կամ Ըշթէքայմէն որ տանի զ16, Մէնկլ։ Որպէս և Անքէռ անուանեալն տանի զ2, Ըշթէքան. իսկ 4, Անքէռ լինին մի Օմ։ Վասն ձիթոյ սովոր են վարել զՊօթթըլ, որ է 6, Օմ, և հաւասար 1600, փէնթից փարիզեան։

Առ Սպանիացիս անուանք չափուց հեղանիւթոց են Պօթա, Առռօպէ, Ազումպռա և Քուառթա, այն է քառորդ։ Պօթայն տանի 30, Առռօպէս, և իւրաքանչիւր Առռօպէ կշռէ 28, լոերս։ Առռօպէն բաժանի յութ Ազումպռա. որպէս և Ազումպռայն 'ի չորս քառորդս։ Կարի առ նոսա և անուն փիփ, որ է 18, Առռօպէ։

Առ Լուսիտանացիս չափք հեղանիւթոց են Պօթա, Ալմուտա, Գանատաս, և Քուառթա, որ է քառորդ։ Իսկ վասն ձիթոյ վարի չափանունն Ալքուէյռօ կամ Գանթառօ։ Պօթա սոյա դոյզն ինչ փոքր է քան զսպանիացւոյ իբր 10, առ 100։ Ալմուտայն բաժանի յերկոտասան Գանատաս. իսկ Գանատասն 'ի չորս քառորդս։ Վեց Գանատաք առնեն զմի Ալքուէյռօ կամ Գանթար, և երկու գանթարք զմի Ալմուտա. որպէս և 26, Ալմուտայք զմի Պօթա, այն է Տակառ։

Առ Իտալացիս զանազան են չափք հեղանիւթոց։ Ի Հռոմ և 'ի սահմանս նորա վարի Պօգալէ, որ տանի փոքր ինչ աւելի քան զփէնթն փարիզեան։ Եօթն և կէս Պօգգալք առնեն զմի Ռուպպօ. և 13 1/2, ռուպպօ լինին մի Պառէնթա. որ տանի 96, Պօգգալս։ Ի Ֆիօրէնցա՝ Բոթառօ կամ Բոթայիօ անուանեալ չափն հեղանիւթոց տանի զերիս Պառիլս, և Պառիլն զքսան ֆիասքիս հաւասարեալս միում 'ի փէնթից փարիզեան։ Ի Վէռօնա քաղաք վարի չափանունն Պասսա, որոյ 16, առնեն զմի Պառէնթա. որ է 96, Պօգգալ կամ 13 1/2, ռուպպօ Հռոմայ։ — Ի Վենետիկ չափ հեղանիւթոց է Ամֆօռա, որ տանի զերկու Պօթթա կամ տակառս. Պօթթայն փակէ զչորս Պիկօնջիա. իսկ Պիկօնջիայն զչորս քառորդս, որպէս և քառորդն զչորս Թիսսօֆէռա։ Իսկ և այլ բաժանումն Վենետիկեան Պօթթայի. զոր կոչեն Մօսթադքի. որոյ 26, լինին մի Ամֆօռա։ — Ի Ֆէռռառա սովոր է վարիլ չափանունն Մառթէլլօ, որ տանի զութ դոյլս. զոր կոչեն Սէգքիօ, այն է Պարդած։ — Ի կողմանս Իստրիոյ սովորական է անուն չափու Սէգքիօ, որոյ ութ առնեն զմի Ուռնա։ — Ի սահմանս Նէապօլսոյ, 'ի Գալաբրիա և 'ի Փուլիա՝ վարեն զչափանունս Փինիաթօլի, որ զուգաչափ է փարիզեան փէնթի. որոյ 32. առնեն զմի Բոթայիօ. և տասն Բոթայիօ լինի մի Սալմա։

Առ Գերմանացիս սովորական անուն չափու հեղանիւթոց է Ֆութթըռ. սակայն ըստ գաւառաց պէսպիսանան քանակութիւնք և մանրաբաժինք նորա։ Ֆութթըռ անուանեալն համաբերի բեռան միոյ սայլի, զոր կարեն վարել երկու երիվարք։ Երկու և կէս Ֆութթըռք առնեն զմի Սդէօռըռ։ Մի Ֆութթըռ է 6, Օմ. և 1, Օմ՝ 20, Ֆէռթըլ. իսկ 1, Ֆէռթըլ՝ 4, Մասէմ կամ Մօս։ — Ի Վիէննա Ֆութթըռն բաժանի 32, Էմըռ. որպէս և Էմըռն 'ի 32, Ախթըլինկ. իսկ Ախթըլինկ՝ 'ի 4, Սէյիթլին։

Առ Ծովեզերս ափրիկոյ յաշխարհին բարբարոսաց չափք հեղանիւթոց կանոնաւորին ծանրութեամբ Ըրդըլ կշռոյ, որոյ 32, առնեն զմի Մաթուլ։ — Ի Թունուզ 42, Ըրդըլք Թրապօլսոյ առնեն զմի Մաթարա։ Սոյին նման են և այլ կողմանք այնր աշխարհի։

Առ Շիամացի հնդիկս չափք հեղանիւթոց կոչին Գօգօս և Գանան. Գօգօսն, որ է (նաւակիլէ), կեղև է ձուաձև խոշոր նշապտղոյ. և զի ոչ ամենեքին միաչափք են մեծութեամբ, 'ի գտանել զկանոն հաւասարութեան չափու նոցա, սովոր են թուել զգումար ինչ մանրահատ խեցեմորթի, (զոր վարեն և 'ի պէտս դրամոց), և ընուլ զայն 'ի գօգօսն. յորոց ոմանք տանին 1000, խեցեմորթս, և ոմանք 500, և նոքօք չափեն զհեղանիւթս։ Իսկ Գանան անուանեալն է փոքր չափ ինչ, որ 'ի լուսիտանացւոց Քովի կոչի, և տանի իբր մի քառորդ փարիզեան։

## Չափք ցամաք Արմտեաց։

'Ի գաղղիա սովոր են վարել անուանք չափուցս. Լիթռոն. Պուասօ. Մինօ. Մին. Սըթիէ. Միւի. և Պօթ։ Լիթռոնն բաժանի յերկուս կիսալիթռոնս. և 'ի չորս քառորդալիթռոնս, և պարագրի 'ի 36, բթաչափ խորանարդ փարիզեան։ 'Ի քաղաքական օրինաց սահմանեալ է, զի չափ լայնութեան լիթռոնի պարտի լինել 3, բթաչափ և 10, գծաչափ. իսկ բարձրութիւնն $3\frac{1}{2}$, բթաչափ։ Լիթռոն աղի մեծագոյն է քան զարմտեաց, և բաժանի յերկուս կէսս և 'ի չորս քառորդս, յութ կիսաքառորդս, և 'ի վեշտասան մանրաչափս։ — Պուասօ անուանեալն՝ (զոր Անգղիացիք Պուշըլ կոչեն), այլևայլ է 'ի զանազան կողմանս Գաղղիոյ։ 'Ի փարէզ բաժանի 'ի կէս և 'ի քառորդս. որպէս և քառորդն յերկուս կիսաքառորդս, և կիսաքառորդն յերկուս լիթռոնս, որով 16, լիթռոնք լինին մի Պուասօ, որոյ տարածութիւնն կամ մեծութիւն ըստ օրինաց ունի լինել 8, բթաչափ, $2\frac{1}{2}$, գծաչափ բարձրութեամբ. և 10, բթաչափ լայնութեամբ։ — Մինօ անուանեալն տանի զերիս Պուասօս։ Իսկ Մին կոչեցեալն՝ զերկուս Մինօս կամ զվեց Պուասօ։ — Իսկ և Մօճճիօ կամ Միւի. որ է 12, Սըթիէ, կամ 144, պուասօ։ — Պուասօ վարսակի տանի զկրկինն այլոց արմտեաց. զի 24, պուասօ առնէ 1, Սըթիէ. և 284, առնեն 1, Միւի։ Միւին բաժանի 'ի չորս Ֆիքօթէնս. իսկ Ֆիքօթէնն տանի զերկուս քառորդս կամ զչորս Լիթռոնս։ — Պուասօ Ընդեղինաց բաժանի 'ի կէս, 'ի քառորդս և 'ի կիսաքառորդս։ 8, Պուասօ լինին 1, Մինօ։ 16, Պուասօ լինին 1, Մին։ 20, Մինք, որք են 320, Պուասօ. լինին 1, Մօճճիօ կամ Միւի, որ է մոդ։ — Ըզգաճն չափեն պուասօյիւ, որոյ 12, համարին 1, Սագ. (այն է Քոռ)։ 36, Սագ՝ լինին 1, Մօճճիօ։ Նոյնպէս և զկիրն սովորութիւն է չափել պուասօյիւ. որոյ 3, լինին 1, Մինօ. և 48, Մինօյք լինին 1, Մօճճիօ։ — Տարածութիւն Մինօ անուանեալ չափուն պարտի լինել 11, բթաչափ և 9, գծաչափ բարձրութեամբ. իսկ լայնութիւնն 14, բթաչափ և 8, գծաչափ։ Մինօ կոչին 3, պուասօ՝ կամ 16, լիթռոնք։ 4, Մինօ առնէ զմի Սըթիէ. իսկ 48, զմի Մօճճիօ։ — Մին անուանեալն ոչ է չափ իսկական, այլ լոկ անուն յայտարար զուգադրութեան այլոց չափուց. վասն որոյ 'ի փարէզ Մին կոչի վեց պուասօն. իսկ 'ի Ռուան քաղաք չորս պուասօն։ Սըթիէ չափն պէսպիսանայ յայլևայլ սահմանս Գաղղիոյ. 'ի փարէզ բովանդակէ զերկու Մին կամ զութ պուասօ. որով երկոտասան Սըթիէք լինին մի Մօճճիօ։ Իսկ 'ի Ռուան փակէ զերկոտասան պուասօ. որով երկոտասան Սըթիէք թէպէտ կոչին մի Մօճճիօ ըստ փարիզի, սակայն 12, Ռուանի հաւասարին 14, փարիզի։ 'Ի Թուլուս Սըթիէն փակէ $1\frac{1}{2}$, Մին, որոյ երեքն առնեն զմի Սըթիէ փարիզեան։

Մօճճիօ կամ Միւի փարիզեան տանի 12, Սըթիէ ցորենոյ. և բաժանի 'ի Մին, Մինօ, Լիթռոն եւս։ 'Ի սահմանս Օռլէանի Մօճճիօն թէպէտ բաժանի 'ի Մին, սակայն Մին նոցա տանի $7\frac{1}{2}$, Սըթիէ փարիզեան։ — Են քաղաքք, որք փոխանակ Մօճճիօյի վարեն զչափանունս Թօնն և Պօթ. որ տանի զտասն Սըթիէս, և կշռէ 3300, լիտր։ Երեք Պօթք առնեն 28, Սըթիէ փարիզեան։ — 'Ի Ռօշէլ քաղաք և 'ի սահմանս նորա Պօթն տանի 42, պուասօ. և կշռէ 2, առ 100, նուազ քան զնախընթացն։ — 'Ի Պռէ կամ Պռեսթ տանի 20, պուասօ՝ և է հաւասար 10, Սըթիէի փարիզեան. և կշռէ 2240, լիտր։

Առ Անգղիացիս չափ արմտեաց սկսեալ 'ի փոքունց՝ են այսոքիկ։ Սկիզբն չափուց համարի բթաչափ խորանարդն, որոյ $34\frac{1}{32}$, առնէ զմի Փայնթ. իսկ $272\frac{1}{4}$, առնեն 8, Փայնթ։ 16. Փայնթք առնեն 2, Կէլըն։ 8, Կէլըն, առնեն 4, Փէք։ 8, Փէք՝ առնեն 2, Պուշըլ։ 4, Պուշըլք առնեն 2, Ըսթռայք։ 4, ըսթռայք առնեն 2, Քում։ 12. Քումք առնեն 6, քառորդ։ 10, Քառորդք առնեն 12, Ուէյ, այն է լաէսթ կամ լէսթ։

Առ Հօլլանդացիս, Շվէտացիս, Լէհս, Փռուսիացիս և Մոսկովս սովորութիւն է չափել զարմտիս Լաէսթ անուանեալ չափով. որ և ըստ պէսպիսութեան հնչման գաւառացն կոչի լասթ, և լէսթ, և լէթ։ — 'Ի Հօլլանդիա լասթն հաւասար է 19, Սըթիէի փարիզեան, և կշռէ իբր 4560, լիտր։ Առ նոսա բաժանի լասթն 'ի 27, Մուծ. և Մուծն 'ի 4, Շէփէլ։ — Առ Լէհս լասթն է 40, ըսթայիօ. և կշռէ իբր 4800, լիտր փարիզեան։ — 'Ի Փռուսիա լասթն է

133, Սըթիէ փարիզեան ։ — Ի Շվէտս և 'ի Ստոկոլմ՝ լաւթն կրկին է, առաջինն կոչի մեծ, որ տանի զերկոտասան Պառիս․ իսկ երկրորդն փոքր․ որ է կէս առաջնոյն ։ Ն և այլ չափ առ Ստոկոլմ Շէֆֆօռտ անուանեալ, որ պէսպէսանայ ըստ զանազան քաղաքաց ։ Շէֆֆօռտ Նըքանձէլօ քաղաքին հաւասար է երից պուասօից Սուէան քաղաքին ։

Առ Իտալացիս չափք արմնեայ հաստատեալ են 'ի վերայ Ըսթայիօ չափուն, որ և Ըսթառօ անուանի ։ Վէնէտիկեանն կոչէ 128, լիտր փարիզի․ և բաժանի 'ի չորս քառորդս ։ 35 1/5, ըսթայիօ․ կամ 140, քառորդք և 4/5․ առնէն զմի լաւթ Հոլլանդիոյ ։ — Ի Լիվօռնօ քաղաք ըսթայիօն կոչէ 54, լիտր ։ Իսկ 112 7/8, ըսթայիօ հաւասարին լաւթ չափուն Հոլլանդիոյ ։ — Ի Լուգգա 119, ըսթայիօ՝ առնէն զմի լաւթ Հոլլանդիոյ ։

Ի Նէապօլիս և 'ի սահմանս նորա չափ արմնեայ է Թօմօլօ կամ Թօմալօ որ հաւասարի 1/3 Սըթիէի փարիզեան ։ 36 1/2, Թօմօլօ առնէն զմի Սալմ․ և 1 1/2, Սալմ՝ կամ 54, Թօմօլօք հաւասարին միում Հոլլանդեան լաւթին ։ — Ի Փալէռմօ՝ 16, Թօմօլօ առնէ զմի Սալմա․ որպէս և 4, Մօնտիլք զմի Թօմօլօ ։ 10 3/7, Սալմայք, կամ 171 3/7, Թօմօլօ՝ առնէն զմի լաւթ Հոլլանդիոյ ։

Հանվէռսա քաղաք և 'ի սահմանս նորա չափ արմնեայ կոչի Վէռթըլ․ որոյ 32 1/2, առնէն 19, Սըթիէ փարիզեան ։ — Համպուրկ քաղաք վարի չափս Շէֆֆէլ․ որոյ 90, առնէն 19, Սըթիէ փարիզեան ։

Առ Սպանիացիս և Լուսիտանացիս զանազան են չափք արմնեայ ։ Ի Կատիզէ քաղաք, 'ի Պիլպաօ, վարէն զչափն Փանէկա կոչեցեալ, որոյ 23, առնէն զմի Պօթ Գաղղիոյ, որ հաւասարի 9 1/2, Սըթիէի փարիզեան ։ — Ի Սևիլլիա վարի չափանունս Անակօռաս, որ տանի դուզն ինչ աւելի քան զՍ՛ին փարիզեան ։ 36, Անակօռասք առնէն 19, Սըթիէ փարիզեան ։ — Ի Պայօնա և յայլ սահմանս վարի անուն չափուն Գօնքա՝ (կոնք)․ որոյ 30, հաւասարի 9 1/2, Սըթիէի փարիզեան ։ Ի Լիսպօնա գտանի և փոքր չափս Ալքուէյռ․ որոյ 240, առնէն 19, Սըթիէ փարիզեան ։ Իսկ 60, Ալքուէյռք առնէն զմի Մօձձիօ Լիսպօնայի ։

Սակաւամանեայ տեղեկութիւնքս հաւաքեալք յօտարազգի գրոց՝ թէպէտև չունին տալ զբաւական լրումն կարօտութեան մերազգի վաճառականաց, սակայն նպաստեսցեն գէթ յընդհանրական ուսումն և 'ի յիշատակութիւն կարևորացն, որոց պէտս ունին 'ի գործս տուրևառութեան ։ Այլ որ փափաքելին է ինձ աշխատասիրիս, և յաւէտ օգտամատոյց հասարակաց, զի հատուկտիր հաւաքումս և թերակատար վաստակս՝ յորդոր մատուսցէ հեռաքննին ընթերցասիրաց 'ի փոյթ կատարելագործութեան սորին, և յաւելուածս պէսպէսս առնելոյ 'ի սմա, 'ի թեթևաբեռնել զծանրակիր աշխատութիւն յետին վաստակաւորաց, որով և մեր քրտունք հանդիստ առցեն՝ դիպաւոր առիթ ընծայեալ սովաւ օգտի հասարակաց ։

# ԴՐԱՄՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԵՒՐՈՊԻՈՅ

Ըստ արժէից և դրամանունանց՝ որ 'ի սահմանս նոցա, հանդերձ համեմատութեամբ ընդ Գաղղիական ֆռանգի և ընդ մանրորս նորա, որք են Չենթէզիմ՝ այսինքն, հարիւրորդ, և Միլլէզիմ՝ այսինքն, հազարորդ:



## ԱՄՊՈՒՐԿ

*Քաղաքս՝ որովհետև մի է 'ի դաշնակից իշխանութեանցն Գերմանիոյ, ունի առանձին փողերանոց, և կշիռն զոր վարէ 'ի դրամահատութիւնս, նման է չափու և կարգի այլոց դաշնակցաց, կամ Գերմանական փողերանոցաց, զոր տեսցես 'ի բառն Գերմանիա:

| Անուանք Դրամոց | Արժէք առ նոսա: Մառգ | | Համեմատութիւն: Ֆռանգ | 1/100 | 1/1000 |
|---|---|---|---|---|---|
| Տուգաթ. ոսկեդրամ | 7 | 1/2 | 11 | 71 | — |
| Տոփփլէ. նոյնպէս | 15 | — | 23 | 42 | — |
| Թալէր. արծաթադրամ | 3 | 1/4 | 5 | 75 | — |
| Ռիխսթալէր. դրամ համրական | 3 | — | 4 | 59 | 9 |
| Տալէր | 2 | — | 3 | 6 | 6 |
| Մառգ. դրամ համրական՝ արժէքով 16, մանրադրամոյ կամ Սօլտի լուպէքեանց | 1 | — | 1 | 53 | 3 |
| Սօլտ կռօշի կամ շիլինի, որոյ արժէքն է 6, սօլտ լուպս | — | — | — | 57 | 5 |
| Սօլտ լուպս, արժէք նորա 12, գենար լուպս | — | — | — | 9 | 6 |
| Գենար կռօշի, արժէք նորա 6, գենար լուպս | — | — | — | 4 | 8 |

Գիտելի. Դրամք սեղանոյ փոխանակութեան քաղաքիս առ համեմատութեամբ սովորական դրամոյ՝ հաշուելի են իբր 24, առ 100, վասն առաւելութեան և նուազութեան չահարժէից, մինչև Մառգ անուանեալ դրամն՝ 'ի սեղան փոխանակութեան կարէ անցնիլ 91, ֆռանգ և 90, հարիւրորդ: Որպէս և Ռիխսթալէրն 95, ֆռանգ և 70, հարիւրորդ:

## ԱՒՍՏՐԻԱ

Կշիռ փողերանոցի սորա՝ որ 'ի Վիէննա, Թէպէտ և մերձաւոր գտանի Գերմանական կշռոց, սակայն ունի և զանազանութիւն յայլոց փողերանոցաց:

Լիտր սորա է Մառգ անուանեալն, որ բաժանի յունկի 8: Ունկին 'ի լօթ 2: Լօթն 'ի քվինթէն 4: Քվինթէնն 'ի փէնինկս կամ 'ի գենար 4: Գենարն 'ի հալլէր 2: Հալլէան յԱսս 8 1/2: Ամբողջ լիտրն է գենար 256. կամ Հալլէր 512. կամ Ասս 4352: Համեմատին վէնէտիկեան գառաթից՝ 1355:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ. իսկ գառաթն՝ ցորեան 12: Յարգ զուտ արծաթոյ նորա է 16, լօթ. իսկ լօթն 18, գենար կամ փէնինկս:

Զսովորական դրամս նորա գտցես 'ի կարգս դրամոց Գերմանիոյ և Լոմպառտօ-Վէնէթօ սահմանացն:

## ԶՎԻՑՑԵՐԱ

Ռւյլեալ կուսակալութիւնք նահանգիս ունին զիւրեանց առանձին փողերանոցս, յորս վարին զանազան չափք մանրամասանց կշռոյ, Թէպէտ և ամենեցուն առ հասարակ նոյն է անուն կշռոյս լիտր, կամ լիպպրա Մառգ կոչեցեալ, որ բաժանի յունկի 8. որպէս և ունկին 'ի լօթ, 2: Իսկ լօթն Պազիլէա և Պէռնա նահանգաց բաժանի 'ի ցորեան, 238, որով ամբողջ մառգ լիտր նոցա է ցորեան 3808. և համեմատի վէնէտիկեան գառաթից՝ 1192. 1 1/24: Բայց 'ի նահանգսն Լուցեռնա, Սօլէվռէ և Ծուռիկօ՝ լօթն բաժանի 'ի քվինթէն 4. և քվինթէնն 'ի գենար 4. իսկ գենարն 'ի մանրամասունս 256: Ամբողջ մառգ լիտր սոցա է՝ 65536, մանրամասն. և համեմատի վէնէտիկեան գառաթից՝ 1128. 3:

Յարգ զուտ ոսկւոյ նոցա ամենեցուն միօրինակ է 24, գառաթ. իսկ գառաթն 24, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նոցա է 12, գենար. իսկ գենարն 24, ցորեան: Բայց ծուռիկեան նահանգն զյարգ արծաթոյ հաշուէ լօթ 16. և զլօթն համարի գենար 18:

| Անուանք դրամոց: | Արժէք առ նոսա: Պաց | | Համեմատութիւն: Ֆռանգ | 1/100 | 1/1000 |
|---|---|---|---|---|---|
| Ըսգուտ Պազիլեան | 30 | — | 4 | 44 | — |
| Ֆիօրին Պազիլեան | 15 | — | 2 | 22 | — |
| Ֆիօրին Պէռնեան | 10 | — | 1 | 52 | — |
| Ըսգուտ ծուռիկեան. որ է 2, ֆիօրին | — | — | 4 | 78 | — |
| Ֆիօրին ծուռիկեան. որ է 40 շիլին | — | — | 2 | 39 | — |

## ԹՈՒՌԻՆ: 'Ի Սավօյա:

Կշիռ փողերանոցի սորա է Մառգա. որ փակէ 8, ունկիս. իսկ ունկին գենարս 24, և գենարն ցորեանս 24. որպէս և ցորեանն՝ ցորենիկս 24: Ամբողջ մառգայն է 4608, ցորեան, և համեմատի վէնէտիկեան գառաթից՝ 1187:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ. իսկ գառաթն 24, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է 12, գենար. իսկ գենարն 24, ցորեան:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ նոսա: Լիռա | | Համեմատութիւն: Ֆռանգ | 1/100 | 1/1000 |
|---|---|---|---|---|---|
| Գառօլինօ. ոսկեդրամ | 120 | — | 140 | 44 | 4 |
| Կէս նորին. նոյնպէս | 60 | — | 70 | 22 | 2 |
| Քառատռուփլէ. նոյնպէս | 39 | — | 45 | 64 | — |
| Տօփփիա. նոյնպէս | 24 | — | 28 | 8 | — |
| Կէս նորին. նոյնպէս | 12 | — | 14 | 4 | — |
| Քառորդ նորին. նոյնպէս | 6 | — | 7 | 2 | — |
| Զէգքինօ. ոսկի համրական | 9 | 3/4 | 11 | 41 | — |
| Կէս նորին. նոյնպէս | 4 | 7/8 | 5 | 70 | 5 |
| Ըսգուտօ՝ նոր. արծաթադրամ | 6 | — | 7 | 9 | 3 |
| Կէս նորին. նոյնպէս | 3 | — | 3 | 54 | 6 |
| Ըսգուտօ՝ հին. նոյնպէս | 5 | 1/2 | 6 | 50 | — |
| Նոյնն՝ 1733, ամին | 5 | — | 5 | 88 | 6 |
| Լիռա. անգոյ դրամանուն է, արժէքով 20, մանրադրամոյ, որ կոչին Սօլտօ | 1 | — | 1 | 17 | 7 |
| Սօլտօ. արժէ 12, դենար | — | — | — | 5 | 9 |

## ԻՆԿԻԼԹԵՐՌԱ: Անգղիա:

Կշիռ փողերանոցի սորա է լիտր կամ լիպպրա Թռօյի, որ փակէ 12, ունկի մանրակշիռ, զոր կոչեն փէննի-ուէյթ, այն է 20, գենար. իսկ փէննի-ուէյթ կամ գենարն է 24, ցորեան: Ամբողջ լիտրն է 5760, ցորեան. և համեմատի վէնէտիկեան գառաթից՝ 1802. 2:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ. իսկ գառաթն 4, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է 12, գենար. իսկ գենարն 4, ցորեան:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ նոսա: Շիլինկ | | Համեմատութիւն: Ֆռանգ | 1/100 | 1/1000 |
|---|---|---|---|---|---|
| Կինի. ոսկեդրամ | 21 | — | 26 | 34 | — |
| Կէս նորին. նոյնպէս | 10 | 1/2 | 13 | 17 | — |
| Գուինթալը. հնգապատիկ նոյնպէս | 105 | — | 131 | 70 | — |
| Գրաուն. նոյնպէս | 5 | — | 6 | 14 | — |

| Անուանք Դրամոց Խինիմեառայի: | Արժէք առ հասա: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Շիլինկ | | Ֆրանք | 1/100 | 1/1000 |
| փաունտ Ըսթէռլինկ, (ներքին ան- գոյ դրամանան իսկ այժմ երանին) արդ արժէ է | 20 | — | 24 | 56 | — |
| Շիլինկ. արծաթադրամ | 1 | — | 1 | 22 | 8 |
| փէնի. արծաթ դենար | 1/12 | — | — | 10 | 2 |
| Ֆարթինկ | 4/12 | — | — | 40 | 8 |

## ԼԻՎՕՌՆՕ. 'Ի Թոսգանա:

Կշիռ փողերանոցի սորա է լիպրա, որ փակէ 12, ուն- կի: Ունկին՝ գենար 24. և Դենարն՝ ցորեան 24: Ամբողջ լիպրային. է 6912, ցորեան, և համեմատի վէնէտիկեան դառաթից՝ 1639:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, դառաթ. իսկ դառաթն՝ ցորեան 24: Յարգ զուտ արծաթոյ նորա է 12, ունկի. իսկ ունկին գենար 24:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ հասա: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Լիռա | | Ֆրանք | 1/100 | 1/1000 |
| Ռուսփոնէ, ոսկեդրամ | 40 | — | 35 | 55 | 9 |
| Տօփփիա. նոյնպէս | 23 | — | 19 | 57 | 5 |
| Ձէքինօ, նոյնպէս | 13 | 1/3 | 11 | 75 | 3 |
| Րուսպօ տ'օռօ. հնուն ոսկի | 7 | 1/2 | 6 | 41 | 5 |
| Տուգաթօ | 7 | — | 5 | 98 | 7 |
| Ֆռանչէսգօնէ. արծաթադրամ | 6 | 2/3 | 5 | 70 | 4 |
| Թալէռօ, հնատիպ. նոյնպէս | 6 | — | 5 | 13 | 2 |
| Ֆռանչէսքինօ. նոյնպէս | 3 | 1/3 | 2 | 85 | — |
| Թէսթօնէ. նոյնպէս | 2 | — | 1 | 71 | — |
| | Սոլտօ ման- րաֆոռ: | | | | |
| Ծիւլիօ, կամ Փաօլօ | 12 | 2/9 | — | 57 | — |
| Լիռա | 20 | — | — | 85 | 5 |
| Սօլտօ. որ է 12, դենար | 1 | — | — | 4 | 3 |
| Փէցցա տա օթթօ Ռէալի. (անգոյ դրամանան) որ 'ի վաճառականութեան վարի արժէիւք մանրադրամոց | 115 | — | 5 | 4 | 8 |

## ԼՕՄՊԱՌՏՕ—ՎԷՆԷԹՕ:

Կշիռ այժմեան փողերանոցի երկոցունց միացեալ սահմա- նացս է ըստ նոր հաշուի մետրոնական լսեր, որ բաժանի այսպէս. 10, Ցորեանք առնեն զմի գենար (Տէնառօ): 10. Դենարք, կամ հարիւր ցորեանք առնեն զմի կռօս: 10. Կռօսք կամ հազար ցորեանք առնեն զմի ունկի: 10. Ունկիք կամ տասն հազար ցորեանք առնեն զմի լիար Մետրոն:

Զյարգ զտութեան ոսկւոյ և արծաթոյ ըստ հին հաշուի իւրեանց՝ տես 'ի բառսն Միլանօ և Վէնէցիա: Իսկ ըստ նոր մետրոնական հաշուի գոցես զնէի 'ի կարգս դրամոցն, որք առեալ վարին յարևելեան տուրևառութիւնս:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ հասա: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Լիռա | 1/100 | Ֆրանք | 1/100 | 1/1000 |
| Ձէքինօ տոփփիօ. ոսկեդրամ հռո- մէական | 27 | — | 23 | 49 | — |
| Նոյնն. պարզ | 13 | 50 | 11 | 31 | — |
| Սովրանօ տ'օռօ. հնագոյն | 40 | — | 34 | 80 | — |
| Կէս նորին | 20 | — | 17 | 40 | — |
| Սովրանօ տ'օռօ. նորագոյն | 40 | — | 34 | 80 | — |
| Կէս նորին | 20 | — | 17 | 40 | — |
| Թալէռ Աւստրիական, որպէս և գոնվէնցիոնէ անուանեալ արծա- թագրամք | 6 | — | 5 | 22 | — |
| Կէս նորին. ֆիօրին անուանեալ | 3 | — | 2 | 60 | — |
| Կէս ֆիօրին | 1 | 50 | 1 | 30 | — |
| Փէցցօ, որ և լիռա աւստրիական. 20, կառանթան | 1 | — | — | 87 | — |

## ԾԷՆՕՎԱ. ԳԵՆՈՒԱ:

Կշիռ փողերանոցի սորա է լիպրա, որ փակէ 12, ուն- կի: Ունկին՝ 24, գենար. և Դենարն՝ 24, ցորեան: Ամ- բողջ լիպրային՝ 6912, ցորեան: Համեմատի վէնէտիկեան դառաթից՝ 1525, և 2, ցորեան:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է՝ 24, դառաթ. իսկ դառաթն՝ 24, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է՝ 12, ունկի. իսկ ունկին 24, գենար:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ հասա: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Լիռա ֆուօռի պանգօ | | Ֆրանք | 1/100 | 1/1000 |
| Տօփփիա. ոսկեդրամ | 90 | — | 78 | 74 | — |
| Կէս նորին. նոյնպէս | 48 | — | 39 | 37 | — |
| Քառորդ նորին. նոյնպէս | 24 | — | 19 | 58 | 5 |
| Ութերորդ նորին. նոյնպէս | 12 | — | 9 | 84 | 2 |
| Րուդուտօ. հնուն արծաթադրամ | 8 | — | 6 | 48 | — |
| Կէս նորին, նոյնպէս | 4 | — | 3 | 24 | — |
| Րուդուտօ տի դամպիօ, որ է ան- գոյ դրամանան ինչ վարեալ 'ի փոխա- նակութեան, արժէք նորա համարի | 4 | 3/5 | 3 | 98 | 6 |
| Լիռա ֆուօռի պանգօ. (անգոյ դրամանան), արժէն է | 1 | — | — | 85 | 6 |
| Սոլտօ. այն է մանրաքուղ, արժէիւք 12, դենարի | — | — | — | 4 | 3 |
| փէցցա. (անգոյ դրամանան) որոյ արժէք 'ի փոխանակութեան համարի 115, սոլտօ | — | — | 4 | 91 | 9 |

## ԾԷՌՄԱՆԻԱ. ԳԵՐՄԱՆԻԱ:

Կշիռ գերմանական փողերանոցաց է Մառգ Գօլօնիոյ: և է 8, ունկի: իսկ ունկին՝ 2, լօթ: և լօթն՝ 4, քվինթէն: իսկ քվինթէնն՝ 4, դենար: Ամբողջ Մառգն է 256, դե- նար. և համեմատի վէնէտիկեան դառաթից՝ 1128, և 2, ցորեան:

Յարգ զուտ ոսկւոյ նոցա է 24, դառաթ: իսկ դառաթն 12, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նոցա է՝ 16, լօթ. իսկ լօթն՝ 18, ցորեան:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ հասա: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Ֆիօրին | | Ֆրանք | 1/100 | 1/1000 |
| Սովրան, ոսկեդրամ | 12 | 2/5 | 34 | 89 | — |
| Գառօլին. նոյնպէս | 9 | 1/2 | 25 | 52 | — |
| Ֆէտէռիգ. նոյնպէս | 7 | 1/2 | 20 | 59 | 4 |
| Տուգաթէն, կամ Ձէքին, նոյնպ. | 4 | 1/6 | 11 | 64 | — |
| Թալէռ. արծաթ | 2 | — | 5 | 22 | 6 |
| Ռէխսթալէռ. դրամ ամենադարձ | 1 | 1/2 | 3 | 92 | — |
| Ֆիօրին. (անգոյ դրամանան ամե- նադարձ) արժէքն՝ Կռէյցէռ | 60 | — | 2 | 61 | 3 |
| Պաց Կռէյցէռ | 4 | — | — | 17 | 5 |
| Կռէյցէռ. որ է փէնինկ | 4 | — | — | 4 | 4 |

## ՄԻԼԱՆՕ. ՄԵԴԻՈԼԱՆ:

Կշիռ փողերանոցի սորա է Մառգա, որ է 8, ունկի: Ունկին՝ 24, գենար: իսկ Դենարն՝ 24, ցորեան: Ամբողջ Մառգային՝ է 4608, ցորեան: Համեմատի վէնէտիկեան դա- ռաթից՝ 1134. 2:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է դառաթ՝ 24. իսկ դառաթն՝ ցորեան 24: Յարգ զուտ արծաթոյ նորա է գենար 12. իսկ գենարն 24, ցորեան:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ հասա: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Լիռա | | Ֆրանք | 1/100 | 1/1000 |
| Տօփփիա. ոսկեդրամ | 25 | 15 | 19 | 77 | — |
| Ձէքինօ. նոյնպէս | 15 | 11 | 11 | 94 | — |
| Ըսգուտօ. արծաթ | 6 | — | 4 | 60 | — |
| Լիռա. դրամ ամենադարձ | 1 | 1 | — | 76 | 1/2 |

## ՆԱՓՕԼԻ՝ ՆԷԱՊՕԼԻՍ:

Կշիռ փողերանոցի սորա է լիպրա, որ փակէ 12, ունկի: Ունկին՝ 30, Թառափեզ: Թառափեզն՝ 20, Աչեչինս: Ամբողջ լիպրային է 7200, Աչեչինս. և համեմատի վենետիկեան գառաթից՝ 1549 $\frac{1}{2}$:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ, իսկ գառաթն՝ 24, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է ունկի 12. իսկ ունկին՝ ըսթեռլինօ 20:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ նոսա: Կառնա | | Համեմատութիւն: Ֆռանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
|---|---|---|---|---|---|
| Օնչիա. ոսկեդրամ | 300 | — | 12 | 80 | — |
| Տօփփիա. նոյնպէս | 460 | — | 19 | 66 | 4 |
| Ըսգուտօ. արծաթ | 120 | — | 5 | 9 | — |
| Տուգաթօ. նոյնպէս | 100 | — | 4 | 24 | — |
| Փաթագա | 50 | — | 2 | 12 | — |
| Թառռի | 20 | — | — | 84 | 8 |
| Գառլինօ | 10 | — | — | 42 | 4 |

## ՌՈՒՍՍԻԱ՝ ՄՈՍԿՈՎ:

Կշիռ փողերանոցի սորա՝ որ 'ի փիէթռպուրկ, և լիպ. րա՝ որ փակէ Լօթ 32: Իսկ լօթն է 3, Սօլօթնիքս: Ամ. բողջ լիպրային է 96, Սօլօթնիքս և համեմատի վենետի. կեան գառաթից՝ 1980:

Յարգ զուտ ոսկւոյ՝ որպէս և արծաթոյ նորա է 96, Սօ. լօթնիքս:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ նոսա: Գօփէք | | Համեմատութիւն: Ֆռանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
|---|---|---|---|---|---|
| Կայսերական ոսկեդրամ | 500 | — | 24 | 36 | 5 |
| Կրկինն նորին | 1000 | — | 48 | 73 | — |
| Տուգաթօ. ոսկեդրամ | 225 | — | 10 | 96 | 3 |
| Կրկինն նորին | 450 | — | 21 | 92 | 6 |
| Ըռուպլօ. ոսկի | 100 | — | 4 | 87 | 3 |
| Կէս նորին. նոյնպէս | 50 | — | 2 | 43 | 6 |
| Ըռուպլօ. արծաթ | 100 | — | 4 | 67 | 7 |
| Լիֆօնեան | 96 | — | 4 | 48 | 9 |
| Փօլթինաինք | 50 | — | 2 | 30 | — |
| Փօլուփօլթինիք | 25 | — | 1 | 15 | — |
| Լօվվէնտալեռ | 96 | — | 4 | 48 | 9 |
| Ըռիքստալեռ Ըռէվէլեան | 80 | — | 3 | 74 | — |
| Նոյնն Ըռիկեան | 85 | — | 3 | 96 | — |
| Թալեռ Ըռէվէլեան | 65 | — | 3 | 4 | — |
| Ֆիօրին Ըռիկեան | 28 | — | 1 | 30 | — |

## ՌՕՄԱ՝ ՀՌՈՎՄ:

Կշիռ փողերանոցի սորա է լիպրա. որ փակէ ունկի 12. իսկ ունկին է 24, դենար. և դենարն 24, ցորեան, Ամբողջ լիպրային է 6912, ցորեան, և համեմատի վենե. տիկեան գառաթից՝ 1658:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է գառաթ 24. իսկ գառաթն՝ ութ ութերորդ: Յարգ զուտ արծաթոյ նորա է ունկի 12. իսկ ունկին՝ դենար 24:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ նոսա: Պայօք | | Համեմատութիւն: Ֆռանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
|---|---|---|---|---|---|
| Տօփփիա. ոսկեդրամ | 315 | — | 16 | 75 | 8 |
| Կէս նորին. նոյնպէս | 157 | $\frac{1}{2}$ | 8 | 37 | 9 |
| Ձէքքինօ. ոսկի | 205 | — | 10 | 92 | — |
| Ըսգուտօ. արծաթ. 10, փաօլի | 100 | — | 5 | 32 | — |
| Տուգաթօնէ. արծաթ | 160 | — | 8 | 51 | 2 |
| Թէսթօնէ. նոյնպէս | 30 | — | 1 | 59 | 6 |
| Փաօլօ. նոյնպէս | 10 | — | — | 53 | 2 |
| Անգայ Դրամանոցաց: | | | | | |
| Ըսգուտօ ա՛ օռօ, ըսթամփա գօն աՃՃիօ | | | 8 | 22 | — |
| Ըսգուտօ ա՛ օռօ, ըսթամփա սէնցա աՃՃիօ | | | 8 | 10 | — |

Արժէք դրամանոցաց համեմատին ընդ խոխոջն ըսգուտօ արծաթի. այսպէս. 1525, ըսգուտօ՝ 10, ֆռանքան, առնէն 1000, ըսգուտօ փ'օռօ:

## ՍՊԱՆԻԱ:

Կշիռ փողերանոցի սորա է Մառգօ Գասթիլիայ, որ փա. կէ 8, ունկի: Իսկ Ունկին է 8, ութերորդ: Ութերորդն՝ 6, Թօմին. Իսկ Թօմին՝ ցորեան 12: Ամբողջ մառգօն է 4608, ցորեան, որք համեմատին վենետիկեան գառաթից, 1111:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24. գառաթ. իսկ գառաթն 4, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է 12, դենար. իսկ դենարն 24, ցորեան:

| Անուանք Դրամոց: | Արժէք առ նոսա. Ըռէալէ տէ վալօն | | Համեմատութիւն: Ֆռանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
|---|---|---|---|---|---|
| Գուատռուփլիգա. ոսկի՝ նախ քան զոհ., 1772 | 320 | — | 84 | 40 | — |
| Նոյնն. 1772, յետոյն. | 320 | — | 82 | 90 | — |
| Նոյնն. 1786, յետոյն. | 320 | — | 81 | — | — |
| Տօփփիա. ոսկի նախ քան զոհ 1772 | 80 | — | 21 | 10 | — |
| Նոյնն, 1772, յետոյն. | 80 | — | 20 | 72 | 5 |
| Տօպլօն | 75 | — | 19 | 62 | 6 |
| Կէս նորին | 37 | $\frac{1}{2}$ | 9 | 81 | 3 |
| Տօփփիա. որ է կրկինն փօղէնէ | 150 | — | 39 | 25 | 2 |
| Փէզզա տուռա, մինադրամ արծաթադրամ | 20 | — | 5 | 35 | — |
| Ըսգուտօ ա՛ օռօ, ոսկեդրամ | 20 | — | 5 | 23 | 7 |
| Ըսգուտօ | 10 | — | 2 | 67 | 5 |
| Փէզզէթթա | 4 | — | 1 | 7 | — |
| Ըռէալէ տէ վալօն | 1 | — | — | 26 | 7 |
| Քուառթօ. որ է պղինձ | — | $\frac{1}{17}$ | — | 1 | 3 |
| Անգայ դրամանոցաց խոխոջութեան առ աղանկայէ: | | | | | |
| Ըռէալէ տի փլաթա | 1 | $\frac{15}{17}$ | — | 47 | 6 |
| Փէզզա տի Գամպիօ | 15 | $\frac{1}{17}$ | 3 | 81 | — |
| Տօփփիա տի Գամպիօ | 60 | $\frac{4}{17}$ | 15 | 25 | — |
| Տօփփիա ա՛ օռօ | 75 | $\frac{5}{17}$ | 19 | — | 6 |
| Տուգաթօ տի Գամպիօ | 20 | $\frac{220}{289}$ | 5 | 26 | — |
| Լիռա Գաթալանա | 11 | $\frac{3}{7}$ | 2 | 72 | — |

Գիտելի: 17, Ըռէալէ տի փլաթա մնուաննեալն՝ համե. մատի 32, Ըռէալէ տի վալօն կոչեցեալ իսկական դրամոց:

## ՍՎԷՑԻԱ՝ ՇՎԷՏՔ:

Կշիռ փողերանոցի սորա է Մառգ, որ փակէ լօթ 16. և համեմատի վենետիկեան գառաթից՝ 1016 $\frac{257}{3792}$:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է գառաթ 24. իսկ գառաթն՝ ցորեան 12: Յարգ զուտ արծաթոյ նորա է լօթ 16. իսկ լօթն ցորեան 18:

| Անուանք Դրամոց: | Համեմատութիւն: Ֆռանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
|---|---|---|---|
| Ադօլֆօ. ոսկեդրամ | 13 | 67 | — |
| Տուգաթօ. նոյնպէս | 11 | 3 | — |
| Տուգաթօն | 6 | 34 | — |
| Ըիքստալեռ | 5 | 69 | — |
| Թալեռ | 5 | 55 | 2 |
| Գառօլին | 1 | 60 | 7 |
| Թալեռ սեղանոյ խոխոջութեան | 4 | — | — |
| Տուգաթօն | 6 | 26 | — |
| Գառօլին | 1 | 56 | 4 |
| Թալեռ գառօլին | 3 | 12 | 8 |

## ՎԷՆԷՑԻԱ՝ ՎԷՆԷՏԻԿ:

Կշիռ նախնի փողերանոցի սորա էր Մառգա, որ փա. կէր 8, ունկի. իսկ ունկին էր 144, գառաթ. և գառաթն ցորեան 4: Ամբողջ մառգային էր ցորեան՝ 4608: —

Յարգ զուտ ոսկւոյ նորա էր գառաթ 24: Յարգ զուտ արծաթոյ նորա էր գառաթ՝ 12:

| Անուանք Դրամոց Վէնէտկոյ: | Արժէք ըստ Նոտոյ: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Լիրա | Սօլտօ | Ֆրանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
| Ձէքքինօ. ոսկեդրամ (Նապոլէ). | 23 | 10 | 12 | 3 | — |
| Տուգաթօնէ, արծաթ. | 13 | 3 | 6 | 66 | — |
| Նոյնն, Ճիւսթինա. | 11 | 9 | 5 | 86 | — |

Այս դրամք ոչ են ի գործածութեան:

## ՏԱՆԻՄԱՐԳԱ՝ ԴԱՆԻՔ:

Կշիռ փողերանոցի սորա է Մառք, որ փակէ լօթ 16. իսկ Լօթն է 4, քվինթէն: Քվինթէնն 4, գէնար: Դէնարն 2, հէլլէռս: Ամբողջ մառքն է 256, գէնար, կամ 512, հէլլէռս. և համեմատի վիէնէտիկեան գառաթից՝ 1138 $\frac{55}{96}$.

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ. իսկ գառաթն 12, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է 16, լօթ. իսկ լօթն 18, ցորեան:

| Անուանք Դրամոց: | Արժէք ըստ Նոտոյ: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Մառք | | Ֆրանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
| Տուգաթ. ոսկի. | 15 | — | 11 | 71 | — |
| Նոյնն. հասարակ. | 12 | — | 8 | 81 | 6 |
| Նոյնն. նոխնի. | 11 | — | 8 | 16 | 3 |
| Գռօշ. | 8 | $\frac{1}{2}$ | 6 | 71 | 5 |
| Թալէռ. | 7 | — | 5 | 53 | — |
| Ռիքսթալէռ. | 6 | — | 4 | 59 | 9 |
| Տալէռ տանէզեան. | 4 | — | 3 | 6 | 6 |
| Մառք լուպս. | 2 | — | 1 | 53 | 3 |
| Մառք տանէզեան. | 1 | — | — | 76 | 7 |

## ՓՕՌԹՕԿԱԼԼՕ՝ ԼԻՒՍԻՏԱՆԻԱ:

Կշիռ փողերանոցի սորա է Մառքօ, որ փակէ 8, ունկի՝ իսկ ունկին՝ ութ ութերորդ: Ութերորդն 72, ցորեան Ամբողջ մառքօն է 4608, ցորեան, և համեմատի վիէնէտիկեան գառաթից՝ 1107. 2:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ. իսկ գառաթն 4, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է 12, գէնար. իսկ գէնարն՝ ցորեան 24:

| Անուանք Դրամոց: | Արժէք ըստ Նոտոյ: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Ռէյիս | | Ֆրանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
| Փօրթուկէզա. ոսկեդրամ. | 6400 | — | 45 | 2 | — |
| Լիսպօնինա. նոյնպէս. | 4800 | — | 33 | 76 | 5 |
| Գրուզատօ տ' օռօ նոյնպէս. | 480 | — | 2 | 96 | — |
| Գրուզատօ տի գամպիօ (անգոյ դրամանոյն). | 480 | — | 2 | 46 | 6 |

## ՖՌԱՆՁԻԱ՝ ԳԱՂՂԻԱ:

Կշիռ փողերանոցի սորա էր Մառ, որ փակէ 8, ունկի: Ունկին՝ կռօս, 8: Կռօսն՝ գէնար, 3: իսկ գէնարն 24, ցորեան: Ամբողջ մառն է 4608, ցորեան, և համեմատի վիէնէտիկեան գառաթից՝ 1182:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ. իսկ գառաթն 32, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է 12, գէնար. իսկ գէնարն 24, ցորեան:

| Անուանք Դրամոց: | Արժէք | |
|---|---|---|
| | Ֆրանք | $\frac{1}{100}$ |
| Լուի տ' օռ տուպլէ. ոսկեդրամ. | 47 | 20 |
| Նոյնն պարզ. նոյնպէս. | 23 | 55 |
| Կէս նորին. նոյնպէս. | 11 | 77 |
| Նափօլէօն. 40. ֆրանքի. ոսկի. | 40 | — |
| Նոյնն. 20. ֆրանքի. նոյնպէս. | 20 | — |
| Էքիւ. արծաթ վեցեան. | 6 | — |
| Կէս նորին. | 3 | — |

Կայ քառորդ, և ութերորդ նորին:

| Անուանք Դրամոց Գաղղիոյ: | Արժէք | |
|---|---|---|
| | Ֆրանք | $\frac{1}{100}$ |
| Նափօլէօն, 5. ֆրանքի. արծաթ. | 5 | — |
| Նոյնն. 2. ֆրանքի. նոյնպէս. | 2 | — |
| Լիվռը կամ ֆրանք. նոյնպէս. | 1 | — |
| Կէս նորին. նոյնպէս. | — | 50 |
| Քառորդ նորին. | — | 25 |

## ՕԼԱՆՏԱ՝ ՀՈԼԱՆԴԻԱ:

Կշիռ փողերանոցի սորա է Մառք. որ փակէ 8, ունկի: Ունկին՝ Էսքալինս կամ Էնկէլս 20: Էնկէլսն՝ Ասս 32: Ամբողջ մառքն է 3120, Ասս. և համեմատի վիէնէտիկեան գառաթից՝ 1187. 2:

Յարգ զուտ ոսկւոյ նորա է 24, գառաթ. իսկ գառաթն 12, ցորեան: Յարգ զուտ արծաթոյ նորա է 12, գէնար. իսկ գէնարն 24, ցորեան:

| Անուանք դրամոց: | Արժէք ըստ Նոտոյ: | | Համեմատութիւն | | |
|---|---|---|---|---|---|
| | Ֆիօրին | | Ֆրանք | $\frac{1}{100}$ | $\frac{1}{1000}$ |
| Ռույտըր. | 14 | — | 29 | 44 | — |
| Տուգաթ. | 5 | $\frac{1}{4}$ | 11 | 69 | — |
| | Ստիւվէր: | | | | |
| Տուգաթօնէ. | 63 | — | 6 | 61 | 5 |
| Ռիքսթալ. դրամ արծաթեան. | 50 | — | 5 | 25 | — |
| Գուլտ. | 40 | — | 4 | 20 | — |
| Տալէռ. | 30 | — | 3 | 15 | — |
| Ֆիօրին. ոսկի. | 28 | — | 2 | 94 | — |
| Ֆիօրին. դրամ արծաթեան. | 20 | — | 2 | 10 | — |

## ԴՐԱՄՔ ՀՆԴԿԱՑ

| Անուանք Դրամոց: | Ռուփի | Ֆանամ | Տօփօ |
|---|---|---|---|
| Ոսկի Մատրասու նոր, կիւլմօհիւր անուանեալ. | 15 | — | — |
| Կէս նորին. | 7 | 6 | 3 |
| Ոսկի Անգղիացւոց Հնդկային ընկերութե. | 15 | — | — |
| Այլ նորին ընկերութեան, կէս վերնոյն. | 7 | 6 | 3 |
| Այլ նորին, քառորդ վերնոյն. | 3 | 9 | — |
| Ոսկի Մալապարայ, որ է 2, փակօտ, կամ Հուն. | 7 | — | — |
| Կէս վերնոյն, որ է 1, փակօտ կամ Հուն. | 3 | 6 | 3 |
| Ոսկի Թիփօ Սուլթանի. | 4 | — | — |
| Նոյնն որդւոյ նորա. | 4 | — | — |
| Ոսկի Նակփատան անուանեալ. | 3 | 4 | — |
| Նոյնն Սիրինփաթան անուանեալ. | 2 | 3 | — |
| Այլ ոսկի Մալապարայ. | 5 | — | — |
| Ոսկի Ձինաց. | 5 | — | — |
| Ոսկի Մատրասու հին՝ կիւլմօհիւր անուանեալ. | 14<br>4 | — | — |
| Ոսկի Սէփօթ անուանեալ. | — | 5 | — |
| Ոսկի Մէրուինկան անուանեալ. | — | 5 | — |
| Ոսկի Սիրին փաթան անուանեալ. | — | 4 | — |
| Ոսկի Իքարիկ անուանեալ. | — | 4 | — |
| Ոսկի Խմամ Մասու անուանեալ. | — | 5 | — |
| Ոսկի Քէշտան կոտէրվլիս անուանեալ. | | | |
| Արծաթի դրամ կէս փակօտ. | 1 | 9 | 4 |
| Ռուփի. | 1 | — | — |
| Կէս նորին. | — | 6 | 3 |
| Քառորդ նորին. | — | 3 | $\frac{1}{2}$ |
| Արծաթի դրամ 2. ֆանամ արժէքիւ. | — | 2 | — |
| Կէս նորին, որ է ֆանամ. | — | 1 | — |
| Այլ դրամ արծաթի, որոյ 8, արժէ. | 1 | — | — |

Դրամք Եւրոպացւոց յաճախեալքն յարեւելեան վաճառականութեան՝ համեմատ ծանօթութեամբ յարգի, և կշռոյ ծանրութեան նոցին ։

| | ՈՍԿԻ ԴՐԱՄՔ | ՅԱՐԳ | ՅԱՐԳ Հազարորդ ։ | ԿՇԻՌ Դենար | ԿՇԻՌ 1/1000 |
|---|---|---|---|---|---|
| 1 | Կայսերական՝ Պարզ ոսկի, Չէքքին անուանեալ | 0 | 986 | 3 | 468 |
| 2 | Երեքպատիկն նորին՝ Սօվրան կոչեցեալ | 0 | 918 | 11 | 67 |
| | Կայսերականքս ծանօթք են արեւելեան աշխարհ, և անխափան վարին 'ի վաճառականութեան նոցա ։ | | | | |
| 3 | Կրկնոսկի Նափօլէոնեան՝ 'ի գին 40, լիվռէից, կամ ֆռանգաց | 0 | 900 | 12 | 903 |
| 4 | Նորին՝ պարզ, 'ի գին 20, լիրայից | 0 | | 6 | 452 |
| 5 | Կրկնոսկի Միլանի, Տօփփիա անուանեալ | 0 | 910 | 6 | 307 |
| 6 | Նորին՝ պարզ ոսկի, Չէքքինօ կոչեցեալ | 0 | 993 | 3 | 491 |
| 7 | Ոսկի Վենետկոյ, որ և Եալտըզ անուանեալ | 1 | — | 3 | 491 |
| | Այս ծանօթ է և մեծարգի յարեւելեան կողմանս, վասն որոյ և անխափան յաճախեալ 'ի վաճառականութեան յամենայն տեղիս ։ | | | | |
| 8 | Կրկնոսկի Պօլօնիոյ՝ Տօփփիա անուանեալ | 0 | 910 | 5 | 457 |
| 9 | Նորին՝ պարզ | 0 | 996 | 3 | 417 |
| 10 | Կրկնոսկի Ֆրանսիոյ՝ կամ Գաղղիական, Լուի տօ՛ պլէ անուանեն | 0 | 899 | 15 | 300 |
| 11 | Նորին՝ պարզ, որ կոչի Լուի տ՛օռ | 0 | 899 | 7 | 550 |
| | Ոսկեդրամքս Ֆրանսիոյ ծանօթք են արեւելեան աշխարհ, և յաճախեալք 'ի վաճառականութեան ։ | | | | |
| 12 | Կրկնոսկի Փառմայի, Տօփփիա կոչեցեալ | 0 | 875 | 7 | 140 |
| 13 | Կրկնոսկի Պիէմոնդայի՝ 'ի գին 96, լիրայից նոցա | 0 | 910 | 25 | 194 |
| 14 | Կրկնոսկի Սավօյիայի | 0 | 906 | 9 | 129 |
| 15 | Ոսկի Թոսքանայի կամ Ֆիօրէնցայի | 0 | 998 | 3 | 468 |
| 16 | Կրկնոսկի Հռովմայ | 0 | 910 | 5 | 457 |
| 17 | Նորին՝ պարզ | 0 | 996 | 3 | 417 |
| 18 | Ոսկի Պավիէրայի՝ Օնկառօ, այսինքն Մաճառ կոչեցեալ | 0 | 986 | 3 | 468 |
| 19 | Ոսկի Իշխանազանց՝ կամ Հոլլանդիոյ, որ նոյնպէս Օնկառօ ասի | 0 | 979 | 3 | 468 |
| | Ոսկեդրամքս Մաճառ անուանեալք՝ ծանօթք են արեւելեան աշխարհ, և անխափան վարեալք 'ի վաճառականութեան ։ | | | | |
| 20 | Ոսկի Փռուսիոյ, որ և Ֆետերիկեան անուանեալ | 0 | 899 | 6 | 650 |
| 21 | Ոսկի Սպանիոյ, որ կոչի Գուատռուփլա՝ և Տօպլօն | 0 | 875 | 27 | 001 |
| | Այս ծանուցեալ է յարեւելս, և սակաւ վարեալ 'ի վաճառականութեան ։ | | | | |

1.


1.
FRANC·D·G·R·I·S·A·GER·IER·REX
SPES MEA 1756 TU DOMINE
2.
FRANCISC·II·D·G·R·IMP·S·A·GE·HIE·HVN·BO·REX
M
ARCH·AVST·DVX·BVRG·LOT·HBRAB·COM·FLAN·1800
3.
NAPOLEONE IMPERATORE E RE
REGNO D'ITALIA
40 LIRE
4.
NAPOLEONE IMPERATORE E RE
1809
REGNO D'ITALIA
20 LIRE
5.
M·THERESIA·D·G·R·IMP·HV·BO·REG·A·A·
MEDIOLANI DVX 1770
6.
M·THERESIA·D·G·IMP·HV·REG·NA·A·N·
MEDIOLANI DVX 1770
7.
REGIS ISTE DUCA·SIT·T·XPE·DAT·Q·TV·
LUDOV MANIN
8.
APOSTOLOR PRINCEPS
FLORET IN DOMO DOMINI
1767
9.
PETRON·B· PROT· 1786
CLEM·XIII PONT·M·A·VIII
10.
LUD·XVI·D·G·FR· ET NAV·REX
1786 CHRS REGN VINC IMPER
A
11.
LUD·XVI·D·G·FR· ET NAV·REX
1786 CHRS REGN VINC IMPER
A
12.
FERDINANDVS IHSPANIAR·INFANS
DUX·1770 D·G·PARMÆ PLAC·ET VASTAL·
13.
ET REGE EOS 1796
L·96
DUX ET GUB REIP GENU
14.
VIC·AM·D·G·REX SARDINIAE
1786
DVX SABAVD PRINC PEDEM
15.
S·IOANNES BAPTISTA
1731
IOAN·GASTO·I·D·G·M·DUX ETR
16.
APOSTOL PRINCEPS
PIUS VII PON·M·A·III
17.
SUPFIRMAM TRAM
1776
CLEM·XIII PONT·M·A·VIII
18.
MAXIMILIAN·IOSEPH·KONIG·VON·BAIERN
FUR·GOTT UND VATERLAND
1807
19.
PARS·CRES·TRA CONCORDIA·RES
18 00
MO·ORD PROVIN BELGAD LECIMP
20.
18 A 00
21.
IN·UTROQ·FELIX AU SPICE·DEO
S C

| | ԱՐԾԱԹԻ ԴՐԱՄՔ | ՅԱՐԳ | ԿՇԻՌ | |
|---|---|---|---|---|
| | | Հազարորդ | Գրան | $\frac{1}{1000}$ |
| | Դահեկանք Գերմանիոյ, որք են դրամք դաշնակից իշխանութեանց նորա, և կոչին գօնվէնցիօն. Թէպէտ բազմատեսակք են յոյժ, սակայն յաճախեալքն յաւէտ և անխտիր վարեալքն 'ի տուրևառութիւնս՝ են երկոքին սոքա. Պավարէզ և Թալէռ. | | | |
| 1 | Դահեկան Պավիէրայի՝ և կոչի Պավարէզ . . . . . . . . . o | 872 | 29 | 475 |
| 2 | Դահեկան Աւստրիոյ՝ և կոչի Թալէռ . . . . . . . . . . o | 883 | 28 | 050 |
| 3 | Արծաթի դրամ, որ կոչի Զուանձիգ, և [illegible] Աւստրիոյ, որ է 20, գառանթան, կամ երրորդ մասն միոյ ֆիօրինի . . . . . o | 583 | 6 | 700 |
| 4 | Դահեկան Նափօլէօնեան, որ կոչի փէցցօ 5, լիրայից . . . . . o | 900 | 25 | — |
| 5 | Դահեկան Միլանի՝ Վահան անուանեալ . . . . . . . . . . o | 896 | 23 | 133 |
| | Նմանօրն է արևելեայց, և յաճախեալ 'ի տուրևառութիւնս : | | | |
| 6 | Դահեկան Դքսութեան Մօտէնայի, Հերքիւլեան . . . . . . . o | 910 | 27 | 693 |
| 7 | Դահեկան Վենետիկեան՝ որ կոչի Վահան խաչանիշ կամ Տուգաթօնէ . . . . . . . . . . . . . . . . . o | 948 | 31 | 620 |
| 8 | Դահեկան Ֆրանսիոյ՝ շուշանակնիք Վահան անուանեալ . . . . o | 906 | 29 | 478 |
| | Նմանօրն է յարևելս և չարէ յաճախեալ 'ի տուրևառութիւնս : | | | |
| 9 | Դահեկան Սավօյիայի՝ Վահան անուանեալ . . . . . . . . . o | 906 | 35 | 139 |
| 10 | Դահեկան Ճէնովայի՝ Վահան անուանեալ . . . . . . . . . o | 889 | 33 | 354 |
| | Նմանօրն է 'ի [illegible], և անխտիր վարեալ 'ի տուրևառութիւնս : | | | |
| 11 | Դահեկան Փառմայի՝ Տուգաթօ անուանեալ . . . . . . . . . o | 896 | 25 | 602 |
| 12 | Դահեկան Թոսգանայի՝ Ֆռանչէսքօնէ անուանեալ . . . . . . o | 913 | 27 | 234 |
| 13 | Դահեկան Հռովմայ՝ Վահան անուանեալ . . . . . . . . . o | 906 | 26 | 418 |
| | Նմանօրն է արևելեայց և յաճախեալ 'ի տուրևառութիւնս : | | | |
| 14 | Դահեկան Ֆիմոնտիոյ՝ Դուօջիօն անուանեալ . . . . . . . . o | 872 | 29 | 529 |
| | Սակայն չարէ յարևելս, և յաճախեալ 'ի տուրևառութիւնս : | | | |
| 15 | Դահեկան Սպանիոյ Միանագրոշմ՝ Գօլօննաթօ անուանեալ . . . o | 896 | 26 | 928 |
| | Նորէ ծանօթ է արևելեայց՝ և արժոյ առ ամենայն : | | | |

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԽԻԴ. ԱՐԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՕԳՈՍՏՈՍԻ 1929 ԹՈՒԻՆ

II.


1.
D·G·MAX·IOS·V·B·D·S·R·I·A·& ·EL·I·
PATRONA BAVARIAE
1762
2.
R·IMP·HU·BO·REG· M·THERESIA·D·G·
S·F·
1780·X· ARCH·ID·AVST·DUX·
BURG·CO·TYR
3.
AV·ST·IMPERATOR FRANCISCVS·I·D·G·
A
HVN·BOH·LOMB·ET·VEN
GAL·LOD·IL·REX·A·A·1819
20
4.
NAPOLEONE IMPERATORE E RE
1809
M
REGNO D'ITALIA
5. LIRE
M·THERESIA·D·G·R·IMP·HU·BO·REG·A·A·
5.
MEDIOLANI DUX 1777
ALOYSIVS·PISANI·DVX·VENETIAR
Z·F·
7.
6.
HERCVLES·III·D·G·MVT·REG·MIR·EC·DVX·
PROXIMA SOLI 1782
SANCTVS MARCVS VENET
140
8.
LVD·XV·D·G·FR· ET NAV·REX·
SIT NOMEN DOMINI BENEDICTVM 1750
V
VIC·AM·D·G·REX SAR·CYP·ET IER
1776
9.
DVX SABAVD·ET MONTISFER PRINC·PEDEM·
FERDINANDVS I·HISPAN·INFANS·
10.
NON SVRREXIT MAJOR 1795
DVX ET GVB·REIP·GENV
L. 8.
11.
D·G·PARM·E·PLAC·
ET VAST·DVX 1776
12.
FERDINANDVS III D·G·PR·HE·T·B·A·A·M·D·ETRVR·
LEX TVA VERITAS
PISIS 1792
13.
AVXILIVM DE SANCTO
1802
PIVS VII PON·M·AN·III·
PAX
14.
FRANC·II·D·G·R·I·S·A·GER·HIE·HVN·BOH·REX·
1792·ARCH·AVST·DVX·BVRG·LOT·BRA·B·COM·FLAN·
15.
CAROLVS·IIII·DEI GRATIA·
1772
HISPAN·ET IND·REX·E·B·R·III·

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԽԻՂԱԲԵՐ.
ՄԵՐՈՐԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆՑ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

508